ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

ԺՈՂՈՎԱԾՈՅ ԱՌԱԿԱՅ ՎԱՐԴԱՆԱՅ

Ա. ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՊԱՐԱՆՔ
(1 V=1 I)

Թագաւոր մի, որ տիրէր ամենայնի, արար երկու ապարանս գեղեցիկս եւ կարգեաց զաւրս .Ռ. դաս յապարանս իւր. զի կա[ց]ցեն 'ի հրամանս թագաւորին. եւ ոմանք 'ի զաւրաց թագաւորին հպարտացան եւ անկան 'ի փառաց. եւ 'ի միւս ապարանսն պահապանս կացուց, զի պահեսցեն. եւ եկեալ զաւրաց իշխանն առ միւս ապարանից պահապան եւ խաբեաց եւ եհան զնայ յապարանիցն. եւ իմացեալ զխաբէութիւնն իւր՝ պահապանն. եւ թագաւորն աքսորեաց զնայ եւ եհան յապարանիցն. եւ նայ, լալով ել եւ գնաց յաւտար աշխարհ. բաց ակն ունէր՝ թագաւորն իւր պէտ անէ: Բաց նոքա, որ 'ի զաւրացն անկան, հպարտացան եւ անզեղջ մնացին եւ գնացեալ շինեցին իւրեանց դադարս եւ զամենեսեան անդ տանէին յապարանս իւրեանց. եւ բազում ժամանակս զայս գործեաց հպարտ եւ անզեղջ իշխայն զաւրաւք իւրովք. եւ լցաւ ապարանք նորա. եւ ակն ունէին թագաւորէն, թէ գայ եւ ազատէ զամենեսեան 'ի գերողէն, զոր գերեալ էր եւ տարեալ յապարանս իւր, որ էր բանդ. եւ որ մտանէր, ոչ ելանէր. եւ էր խաւար եւ անլուս. թագաւորն ամենայնի ետես զբանդն լցեալ, էջ յաթոռուն եւ եղեւ 'ի կերպ ծառային, որ պահապան էրն ապարանիցն իւր, եւ շրջեալ 'ի վերայ երկրի .լ. ամ եւ գնաց 'ի բանդն, ուր գերեալք էին. կապեաց զիշխայն եւ զբանդն քակեաց եւ ազատեաց զգերեալսն 'ի խաւարային բանդէն, որ կային:

Ցուցանէ առակս յայտնի, որ թագաւորն ամենայնի Քրիստոս է. եւ բ. ապարանքն մէկ՝ հրըշտակաց տեղիքն է եւ մէկն՝ դրախտն, որ զԱդամ եդ, թէ պահէ. եւ հպարտ իշխայն սատանայ է, որ անկաւ 'ի փառացն եւ խաբեաց զԱդամ եւ եհան 'ի դրախտէն. եւ ելեալ Ադամ լալով եւ կոծելով եւ դառն արտասաւք անկաւ յաշխարհս. բաց ակն ունէր, որ թագաւորն խնդիր լինէր իւրն. եւ սատանայ եւ զաւրքն իւր անզեղջ մնացին եւ շինեցին ապարանք իւրեանց զդժոխն. եւ զմարդկային բնութիւնս գերեալ տանէին սատանայ[ք] անդ եւ այլ ոչ տային թուլ ելանել, մինչեւ եկն թագաւորն ամենայնի Քրիստոս եւ քակեաց զբանդն, որ է դժոխքն, եւ զԱդամ իւր ծնընդեաւքն ազատեաց, որպէս ասէ մարգարէն Դաւիթ ել 'ի բարձունս եւ գերեաց զգերութիւն. էառ աւար. բաշխեաց պարգեւս եւ ետ որդոց մարդկան:

Բ. ԱՅՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԲԺ. ՈՍԿԻ ԲԵՒԵՌՔ
(2 V=2 I)

Եւ արդ ահայ՝ այր մի երեւեցաւ յարեւելեան յոյժ ազնըւական եւ մեծազգի իմաստուն արուրստաւոր եւ հմուտ անեզրական գիտութեան. խորհեաց նայ եւ կազմեաց. ժբ. բեւեռս ոսկիս. եւ գլուխ բեւեռացն ականց պատուականաց. եւ եհար զնոսա զաւրութեամբ բազկին իւրոյ 'ի սիրտս. ժբ. ցանկալի ծառոց կաղնեաց եւ մէկ ծառն՝ գոսացաւ սիրտ նորա եւ եղեւ կերակուր հրոյ. եւ ժա. ծառն զարգացան եւ եղեն ծաղկաւէտ եւ զարմանալի.

Ցուցանէ առակս, թէ Քրիստոս է Որդին Աստուծոյ՝ ազնըւական այրն եւ արեւելեան. եւ նայ է տեղի ամենայն իմաստութեան եւ արուրստից եւ ժբ. բեւեռն պատառն է, զոր եդ 'ի բերան առաքելոցն. իսկ Ուդայի սիրտն չէր սրբեալ 'ի չարեացն, ընդ սատանայի բեւեռեցաւ եւ ել 'ի գնդէն սրբոց առաքելոցն. եւ այլ աշակերտքն, որ սուրբք էին, նայ 'ի Քրիստոս բեւեռեցան եւ եղեն լուսատուք տիեզերաց եւ տ[ն]կեցան 'ի տուն Աստուծոյ նորայտունկ ձիթենոյ պտղայլիցք եւ վարսաւորք:

Գ. ԱՌԻՒԾ ԵՒ ՈՐՍՈՐԴՔ
(3 V=3 I)

Առիւծ քարշէ զագին եւ խաղաղէ զհետ իւր որսորդաց:

Ցուցանէ առակս, թէ Քրիստոս մարմնով Աստուծոյ ծածկեաց զԱստուածութիւնն իւր, զի մի

գիտասցէ բանսարկուն. նոյնպէս արայ եւ դու, ո՞վ մարդ, եւ մի տար թուլ, որ սատանայ հպարտացուցանէ զքեզ 'ի բարի գործս քո. որպէս եւ Քրիստոս կոյ հրամայէ թէ մի գիտասցէ ձախ քո, թէ զինչ գործէ աչ քո:

Դ. ԱՌԻԻԾ ՍՈՒՏ ՀԻԱՆԴԱՑԵԱԼ
(4 V=4 I)

Առիւծն ծերացաւ եւ ոչ կարէր որսալ կերակուր. եւ եղեւ սուտ հիւանդ եւ եմուտ 'ի յայր մի եւ կացուց զուծն դռնայպան. եւ առաքեաց ուծն պատգամս, թէ հիւանդացաւ թագաւորն. եկայք ամենայն երայքդ 'ի տես. եւ ըսկըսան 'ի գալ. եւ որ մտանէր, այլ ոչ ելանէր. զի կեր լինէր առիւծոյն: Եկն եւ խոզն 'ի տեսանել զառիւծն. եւ բնութեամբ խոզն 'ի վար հայի եւ ետես զհետն,

որ զինչ մտեալ էր, այլ չէր ելեալ. եւ ասէր ուծն, թէ մուտ. ասէ խոզն. աստ մեռանիմ եւ ոչ մտանեմ. զի զինչ մտեալ է, այլ չէ ելեալ. եւ բարկացաւ դռնայպան եւ եհար զնայ. եւ խոզն բարձրացուց զբաշն եւ եհար ժանեաւքն. եւ յ .բ. կտրեաց զնայ եւ այնպէս յանդիմանեաց զստութիւն նոցա:

Ցուցանէ առակս, թէ առիւծն մահն է եւ քարարն գերեզմանն է եւ մեք անմիտք, որ քան զխոզն չեղաք, որ ածեմք զմտաւ, թէ որք մեռան, այլ ոչ կենդանացան. եւ հանապազ ագահիմք:

Դա. 110 ag Առիւծն մի 'ի քարայր մի մտաւ եւ ասաց. ամենայն կենդանիք 'ի յինքն 'ի տես գան. եւ զարջն դռնապան եդ 'ի դուռն քարայրին. գազանք եւ էրէք, որք մտանէին առ առիւծն, որ սուտ հիւանդացեալ էր, նա զամէնն ուտէր, եւ այլ ոչ ելանէին: Եկն խոզն. քանզի բնութեամբ 'ի վայր հայեցօղ է, կանգնեցաւ 'ի դրանն եւ ոչ մտանէր: Եւ ասէ դռնապանն. մուտ 'ի ներս. եւ ասէ. ո՛չ մտանեմ, քանզի որ մտեալ է, այլ չէ ելեալ. ահա երեւի հետն: Եւ էհար դռնապանն զխոզն. եւ խոզն բարկացեալ զբաշն լարեաց եւ էզարկ զարջն եւ ընդ երկուս կէս արար. եւ մեռաւ. եւ ամօթալից արար:

Ցուցանէ, թէ քարայրն դժոխքն է. եւ առիւծն սատանայ է. եւ արջն իւր զօրքն է: Եւ մեղաւոր, որ անդարձ է մեռեալ եւ 'ի դժոխքն է անկեալ, այլ ո՛չ կարէ ազատիլ: Եւ խոզն, որ դարձաւ եւ ոչ մտաւ, նա այն մեղաւորն է, որ զմեղսն եթող եւ դարձաւ եւ ոչ մտաւ 'ի դժոխքն. որպէս խոզն այն ոչ մտաւ 'ի քարայրն: Ապաշխարեաց մեղաւորն եւ ելաց. եւ այլ ոչ գործեաց մեղս. եւ ամօթ արար զսատանայ. որպէս արար խոզն զարջն:

Դբ. 9 C Առուծն ծերացեալ էր եւ ոչ կարէր որսալ. եւ եղեւ սուտ հիւանդ եւ գնաց եմուտ 'ի յար մի եւ կանկնեաց զինձն դռնայպան եւ առայգեցին պատգամս, թէ առիւծն՝ գազանաց թագաւորն՝ հիւանդ է. եկայք ամէն էրէք 'ի տես. եւ սկսան ամենեքեանն գալ 'ի տես. եւ որ մտանէր, գայր ինձն 'ի մէկ դիհէն եւ առուծն 'ի մէկ այլ դիհէն պատառէին եւ ուտէին. եկեալ խոզն, որ տեսանէր զառուծն, ետես զգազանաց յետքն. զարմացեալ էր. այլ 'ի դուրս չէր ելեալ. զի խոզի բնութիւն հանց է, որ 'ի վայր հայի. ասէ ինձն. հրամայէ եւ մուտ առ թագաւորն. եւ ասէ խոզն. աստ մեռանիմ եւ ոչ մտանեմ. զի կուտեսանեմ. ով որ տեսեալ, չէ ելեալ. եւ բարկացօ ինձն եւ եհար ժանաւքն զինձն եւ զերկուս բաժին կտրեաց եւ զաղիքսն 'ի վայր թափեցաւ եւ փախաւ:

Ցուցանէ առակս, թէ առիւծն մահն է եւ քարայրն գերեզմանն,

որ դնեն զմեզ. խոզն միտք ունէր. եւ մեք քան խոզն անմիտք եղայք եւ ոչ խորհիմք եւ ոչ քննեմք, թէ որք մեռան, այլ ոչ դարձան յետս. եւ ոչ խորհեմք, թէ ո՞ւր են նոքայ եւ կամ զի՞նչ պատահեաց նոցա. մեր ընկերքն մեռան եւ մեք ջանամք եւ առնեմք զրկանս հանց, թէ չեմք մեռանելոց:

Դգ. 70 F ԱՌԻԻԾՈՒՆ ԵՒ ԱՂԻԵՍՈՒՆ

Ծերացեալ եւ հիւանդացեալ առիւծն. եւ խնդիր արարեալ անասնոցն գալ 'ի տեսութիւն. եւ ամենեքեան գային եւ ոչ ելանէին. եկն աղուեսն եւ կանկնեցաւ 'ի վերայ վիմին. եւ ասէ առիւծն. ո՞վ նենկաժոտ աղուես. եկ 'ի վայր. եւ ասաց. ոչ գամ, վասն զի զհետ մտելոցն կուտեսանեմ եւ զելն ոչ. վասն զի զամենայն կուսատկեցուցանէր առիւծն:

Սոյնպէս են մարդիկ 'ի մեղս ընթանալով ընդ սատանայի անընտրողապէս եւ սատակեալ 'ի սատանայէ:

Ե. ԱՌԻԻԾ ՀԻԱՆԴԱՑԵԱԼ ԵԻ ԷԾ ԱՌԱՆՑ ՍՐՏԻ ԵԻ ԱԿԱՆՋԻՑ
(5 V=5 I)

Առիւծն հիւանդացաւ եւ եկեալ բժշկացն ու ասեն, թէ այս ցաւուս դեղն այն է, որ եփեն զսիրտ եւ զականջ իշոյն եւ զջուրն տան, որ խմէ առիւծն՝ ողջանայ. կոչեցին աղուէվսն եւ ասեն. արայ հնար եւ բեր էշ մի. ասէ. այոյ. իմ եղբար էշ մի կայ յայս անուն հովիտ՝ սաստիկ գէր. գայ աղուեսն եւ ասէ 'ի յէշն՝ ո՞վ բարի եղբար, երանի է քեզ. զի գտի զքոյ աւագ եղբարն. եւ ցանկայ տեսանել զքեզ. եւ է նայ թագաւոր, եւ դու ընդ նմայ թագաւորես. եւ հաւատաց էշն եւ եկ 'ի համբուրել զարիւծն. եւ կամէր առիւծն խեղդել զէշն. եւ էշն փախեաւ. եւ հասեալ նմայ աղուէսն եւ ասէ. ընդէ՞ր փաղչիս. եւ ասէ էշն. ցաւեցուց 'ի համբուրելն զփողոցսն իմ. եւ ասէ աղուէսն. այն 'ի սաստիկ սիրոյն է. ապայ թէ դու զնայ համբուրես, ուրախ լինիս. եւ դարձաւ էշն 'ի համբուրել զառիւծն. եւ կալեալ զփողոց նորա մեռուց զէշն եւ գնաց 'ի հանգչել. աղուեսն հանեալ սիրտն եւ զականջն եւ կերաւ. եւ ասէ. թէ դեղ է, նայ լաւ է ինձ քան առիւծուն. եւ գնաց առ բժիշկն եւ առիւծն եւ ասէ, թէ մեծ զարմանք է. զի էշն այն ոչ սիրտ ունի եւ ոչ ականջ. իբրեւ եկին տեսին. զի ոչ ունէր, զարմացան եւ ասէ աղուեսն. մի զարմանաք. զի թէ դայ սիրտն ունէր կամ ականջ, յեր լսեց զքու գոռալն եւ զերծաւ 'ի ձեռաց քոց, նայ չէր կրկին յետս դառնալ եւ անկանել 'ի ձեռս քո եւ մեռեալ. յիրաւացուց զբան:

Ցուցանէ առակս, թէ այսպէս անմիտ եւ յիմար եղաք ամենեքեան եւ կամաւ մատնեցաք զմեզ սատան[այ]ի, որ սպաննէ զհոգիս մեր. եւ զերծանիմք խոստովանութեամբ եւ դարձեալ մեղանչեմք. ահայ ոչ սիրտ ունիմք եւ ոչ ականջ եւ ոչ լսեմք զբան գրոց եւ զսպառնալիսն դժոխոց:

Եա. 107 ag Առիւծն հիւանդացաւ՝ եւ ուղարկեաց բժշկաց խնդիր. թերեւս արասցեն դեղ ցաւոյն: Եւ եկեալ բժշկապետացն եւ ասեն ընդ առիւծն, թէ քո ցաւոյդ այլ դեղ չկայ քան, որ զիշուն ականջսն կտրեն եւ զսիրտն հանեն եւ տան, որ ուտես եւ աղեկնաս: Ասէ առիւծն ընդ աղուեսն. եթէ կարես էշ մի գտանել եւ բերել: Եւ ասէ աղուեսն. խիստ շուտով կատարեմ զհրամանս քո, քանզի ունիմ ինձ եղբայր էշ մի. եւ է խիստ սաստիկ գէր. եւ է յայս անուն հովիտս եւ արածի: Եւ գնաց աղուեսն առ էշն եւ ասէ. ո՞ բարի եւ հեզ էշ, այժմ գիտացիր, զի մեծ փառաց կամիմ հասուցանել զքեզ. քանզի առիւծն, որ է թագաւոր գազանաց, հիւանդացեալ է եւ մօտ 'ի մահ է. եւ ուզէ, որ տեսանէ զքեզ եւ զթագաւորութիւնն 'ի քեզ տայ: Եւ հաւատաց էշն խաբողական բանիցն եւ եկն առ առիւծն. եւ 'ի համբուրել զառիւծն՝ առիւծն զբերանն էբաց եւ կամէր խեղդել զէշն. եւ իշուն փրթեալ փախեաւ: Եւ հասեալ աղուեսն իշուն եւ ասէ. ո՞ անմիտ,

ընդէ՞ր փախեար. եւ ասէ, եթէ 'ի համբուրելն կսկծեցոյց զիս. եւ ասէ աղուեսն, եթէ այն 'ի սաստիկ սիրոյն էր. դարձիր եւ մի փախչիր. եւ եկն էշն առ առիւծն. եւ աղուէսն կալեալ զփողք իշուն. հանեալ զսիրտ իշուն եւ զականջն կտրեալ կերաւ: Եւ ասէ. թէ դեղ է, նայ լաւ է ինձ, քան առիւծուն: Եւ գնաց աղուեսն առ բժշկապետսն եւ առ առիւծն եւ ասէ, եթէ եկէք՝ զարմացք եւ հիացման իրք տեսէք, զի այն էշն ոչ ականջ ունէր եւ ոչ սիրտ: Եւ եկեալ տեսին. եւ ասէ աղուեսն ցբժիշկն, եթէ ընդէ՞ր զարմանայք, եթէ սիրտ եւ ականջ չունի. թէ դա սիրտ եւ ականջ էր ունեցել, զի երբ յառաջն առ առիւծն եկն եւ զմոնչոյն լսել էր, նայ կրկնակի չեր դարձեալ: Եւ արդարացուցին զբանն աղուեսուն:

Վա՜յ մեզ. զի ականջ ունիմք՝ եւ ո՛չ լսեմք զսպառնալիս դժոխոցն. եւ սիրտ ունիմք՝ եւ ոչ իմանամք զխաբէութիւն սատանայի: Ամենայն մարդ, որ զմեղսն թողու եւ այլուի յայն մեղքն դառնայ, նա մեռանի 'ի ձեռն սատանայի, որպէս մեռաւ էշն 'ի ձեռն առիւծուն. առիւծն եւ աղուեսն են սատանայ. եւ էշն անդարձ մեղաւորն, որ ոչ դառնայ 'ի մեղաց:

Զ. ԿՌՈՒՆԿ՝ ԹԱԳԱՒՈՐ ԹՌՉՆՈՑ ԵԻ ԷԾ
(6 V=6 I)

Ժողովեցան թռչունքն եւ ասացին, թէ որոյ ձայն զաւրաւոր է, զայն դիցուք մեզ թագաւոր, որ կոչէ

զմեզ 'ի ժամ պատերազմին. եւ բարձրացաւ կռուկն յերկինս եւ գոչեաց. եւ հաճեցան եւ աւծին թագաւոր. գայ էշն եւ ասէ. ա՞յ թէ զիս 'ի նորա տեղին հանէք եւ ոտիցս տեղ շինէք, որ վերանամ, դուք լսէք, թէ յում ձայն է զաւրաւոր:

Ցուցանէ առակս, թէ որչափ տկար լինի մարդն եւ աղքատ, եւ ժողովուրդքն եւ զաւրքն հաւանին եւ դնեն թագաւոր կամ առաջնորդ, նայ կարէ վարել զիշխանութիւնն, զինչ 'ի վերայ գայ:

Է. ԾՈՎԱՅԻՆ ԳԱԶԱՆ ԵՒ ԱՆՈՒՇԱՀՈՏ ԲԵՐԱՆՆ
(7 V=7 I=45 ag)

Գազան մի կայ 'ի ծովն. յորժամ քաղցենայ, բանայ զբերան եւ հոտ անուշ գայ 'ի բերանէն. եւ գան ձկունք եւ մտանեն 'ի բերան նորա, եւ նայ փակէ զբերան իւր. եւ այն է կերակուր նորա:

Ցուցանէ առակս, թէ այսպէս բացեալ է սատանայ զբերան իւր, որպէս զվիշապ. եւ հոտ մեղաց գայ 'ի բերանէն. եւ քաղցրանայ 'ի քիմքս մարդկան. եւ մեր կամաւ երթամք զհետ մեղաց եւ ոչ դառնամք 'ի չարէն:

Ը. ՄԻԱՅՆԱԿԵԱՑ ԵՒ ԳԱՄԲՌ ՇՈՒՆ
(8 V=8 I=46 ag)

Էր մինայկեց մի 'ի սահման գեղջի միոյ. եւ ասդմամբ չարին անկաւ 'ի շնութիւն ոլով ժամանակս. եւ տանուտէր մի երեր շուն մի գամբռ եւ սաստիկ ուժեղ, որ բոլոր գիշերն զգեղն բոլոր պահէր 'ի գազանաց. գայր միայնայկեցն 'ի գիշերի շնալ եւ պատահեցաւ նմայ շունն այն յեզր գեղջին. գամփաց 'ի վերայ եւ էխած եւ վարեաց զնայ մինչեւ 'ի խուցն իւր եւ բազում վէրք հասուց 'ի նայ 'ի նեղութիւն. եւ նայ էմուտ 'ի խուցն իւր եւ փակեաց զդուռն. եւ զղջացաւ միայնայկեացն եւ ասէ լալով եւ հառաջանաւք. տէր իմ եւ Աստուած իմ, որ այս բազում ժամանակ է, որ ոչ երկեայ եւ ոչ զարհուրեցայ 'ի քէն՝ 'ի սպառնալեաց եւ 'ի տանջանաց դժոխոց եւ այս աւր 'ի գամբռ շանէն վախեցայ եւ երկեայ եւ փախուցեալ ոչ կարացի շնալ. արդ ողորմեայ ինձ Քրիստոս. եւ խլեայ զիս 'ի ձեռաց սատանայի. եւ 'ի նոյն ժամն էթող զնայ դեւն պոռնկութեան, որ զղջացաւ եւ ապայշաւեաց:

Ցուցանէ առակս, թէ շատ մարդիք ապրին 'ի մեղաց եւ 'ի դժոխոց 'ի յահէ [աւրի]նաց եւ յամաւթոյն եւ 'ի նախատանաց:

Ըա. 11 C Էր միակէց մի բնակեալ 'ի սահմանս՝ 'ի շէն գեղջ մի. եւ 'ի ազդմանէ չարին սատանայի սիրեաց աղջիկ մի 'ի շէնն եւ բազում ժամանակս շնայր պոռնկութեամբ. եւ ունէր տանուտէր մի 'ի գեղն գամփռ շուն մի. եւ էր պահող սաստիկ. զբոլոր գեղն պահեր. եկաւ միակեցն, որ շնայր գիշերն յետ այն կնոչն. եւ պատահեցօ նմայ շունն 'ի յեզր գեղջին եւ գամփռեաց 'ի վերայ նորայ եւ եխած զնա եւ արիւնն ճապաղ արար եւ բազում վէրք արար 'ի նայ եւ նեղութիւն եւ վայրեաց զինքն. եւ նայ դարձօ արունայթաթախ եւ լալով եմուտ 'ի խուցն. փակեաց զդուռն. զղջացօ եւ անկօ առաջի սրբութեանց Աստուծոյ. լայր եւ յառայջէր եւ կոծէր զգործքն եւ վայ տայր անձինն եւ ասէր. այս բազում ժամանակ է, որ շնացայ եւ չերկեայ 'ի յԱստուծոյ դատաստանացն եւ ոչ զարհուրեցայ 'ի դառն դժոխոցն եւ յայնոներելի տանջանացն. եւ այսօր 'ի գամփռ շանէ մի զարհուրեցայ եւ ոչ կարացի շնալ. արդ ողորմեայ ինձ Քրիստոս. եւ խլեայ զիս 'ի ձեռաց սատանայի վասն քո Աստուածութեանդ. եւ 'ի նուն ժամայն եթող զնա դեւն պոռնկութեան. զի զղջացաւ եւ դարձօ յԱստուած:

Ցուցանէ առակս, թէ շատ մարդիկ կապրին 'ի հետ մեղաց եւ 'ի դժոխոց՝ յահէ եւ սպառնալեաց թագաւորաց եւ առաջնորդաց եւ յամօթոյ մարդկան եւ 'ի նախատանաց. զի աստնորի ամօթս առձեռան է եւ Աստուծոյ ահն անտես է 'ի մարդկաց աչաց. զի մարդուն ահն ծածկէ զԱստուծոյն:

Ռ.

Իններրորդ այս աւրինակ V ձեռագրին խառնուրդ է՝ յերկուցն գոլով միաւորութիւն. զի ընդաւրինակեալ գրչին նախ զսկիզբն ԺԱV պատմութեանն, մանաւանդ ըստ գրեցելումն I Ոմն երթար

աղքատ 'ի գիւղ մի եւ հանդիպեցաւ եւ եթ, այնուհետեւ յաւել [անդաստա]նաց քոց եւ այլն, որ է վերջաբանութիւն ՃԿԱv առակին, ուր եւ տես 'ի տարբերութեանցն մէջ:

Ժ. ԴՐԱՑԻ ԵՒ ԼԵԶՈՒԱՀԱՏ ԵԶՆ
(10 V=95 ag=111 B=3 D)

Այր մի էհատ սրով զլեզու հորթոյ զդրացնոյն գաղտայբար. եւ յորժամ եղեւ եզն, գնաց առ դատաւորն եւ ասաց, թէ իմ է եզն այն 'ի տղայութենէ. եւ եկեալ տէրն եւ սնուցանողն մտան յիրաւունք. եւ նայ ասաց, թէ իմ հորթոյն լեզուն հատած էր, զոր կորուսի. եւ բացեալ զբերայն եզինն եւ տեսին զնշայն. եւ էառ զեզն. եւ միւս աւրն գնաց լծեաց եւ սկըսաւ վարել. եւ խոտան եզինքն. եւ նայ անկաւ առաջի խոփոյն եւ ցըցեցաւ խոփն 'ի փոր նորա թափանցիկ. եւ եզն առ զնայ եւ եկն 'ի դուռն տեառն իւրոյ. եւ ընդ առաջ ելեալ բազումք եւ ասէին, թէ գայ եւ բերէ սիրամն հարաւրովն:

Ցուցանէ առակս, թէ շատ արդար իրաւունք առնէ Քրիստոս յառաջ քան զդատաստան. որպէս յիմանայն մարդիք, թէ կայ հատուցումն գործոց մարդկան յաւրն վերջին:

Ժա. 10 I Այր մի եհատ սրով զլեզու հորթոյ դրացեաց իւրոց գաղտաբար, զի տէրն ոչ իմացաւ. եւ այնպէս սնաւ 'ի տան տեառն իւրոյ, մինչեւ մեծացօ եւ եղեւ եզն կատարեալ. յայնժամ ետես հատանողն լեզւին, զի հասեալ 'ի չափ հասակի եզն. գնաց առ դրացին, որ էր եզն իւր. ասաց նմա՛, թէ տուր զիմ եզն, որ գողացերես, այդչափ ժամանակ 'ի տան քում պահերես. եւ արարին կաք եւ կռիւ բազում, մինչեւ գնացին առ դատաւորն. եւ ասաց. ո՞վ իշխան, այս դրացիս զիմ հորդն գողացօ 'ի տղայութիւն եւ այժմ գտա՛ 'ի մօտն եւ ունիմ նշան 'ի յինքն. բերել տուր. թէ չես հաւատար. ապա եզան տէրն ոչ գիտէր զնշանն զայն քան ժամանակ, զի գաղտաբար էր արարեալ. եւ յորժամ բերին զեզն, եւ ասաց նենգաւոր դրացին, թէ տէր, հայեաց 'ի լեզուն, քանզի կտրեր եմ 'ի տղա՛ ժամանակին. եւ երբ տեսաւ դատաւորն, զի ասացեալն ստոյք է, նա՛ վճիռ երետ, թէ քո է ռզակն. եւ այնպէս նենգաբար առեալ տարաւ զեզն դրացնոյ իւրոյ, եւ տէրն յամօթով ել 'ի դատօրէն անիրաւ. յայն ժամ եզան տեառն զրկողն միւս օրն գնաց եւ լծեալ սկսօ վարել լուծ. յայն ժամ 'ի յազդմանէ դատաւորին Քրիստոսի խրտան եզինքն. եւ այն եզն անկաւ առաջի խոփոյն եւ ցըցեցաւ խոփն 'ի փոր նորա թափանցիկ. եւ եզն էառ զնա, եւ եկն 'ի դուռն սնուցող տեառն իւրոյ. զայն տեսեալ բազում մարդիկ եւ ասէին, թէ գայ բերէ սիր ամն հարորով.

Ցուցանէ առակս, թէ արդար իրաւունք առնէ Քրիստոս յառաջ, քան զդատաստանն, որպէս իմանան մարդիկքն, թէ կա՛ հատուցումն գործոց մարդկան յաւուրն վերջին:

ԺԱ. ԱՂՔԱՏ ՄՍԱԽՈՐՈՎ ԵՒ ԱՐԾԻՒ
(11 V=9 I=96 ag=112 B)

Այր մի աղքատ խորովէր սակաւ մի միս յանայպատի ուրեմն. եւ ահա արծիւն յանկարծակի եկն 'ի վերուստ եւ էառ զմիսն եւ վերացաւ: Իսկ աղքատն խեռաբարոյ էր, անկաւ 'ի վերայ մորենոյն եւ ձայնեաց ասելով. թէ այր ես եւ ունիս կարողութիւն, դու՝ ընթացիր, ուր ես եմ. զնոյն բանս եւ այժմ ասեն մարդիք 'ի կռիւս իւրեանց: Տարաւ արծիւն զմիսն եւ եդ 'ի բոյն իւր առաջի ձագուց իւրոց եւ ինքն գնաց: Եւ կած մի փակեալ էր 'ի միսն, այրեց զբունն եւ զձագս արծլուին:

Ցուցանէ առակս, թէ որ զրկէ զմարդն յանմեղուց՝ զմեղքն 'ի հետ զրկանաց յինքն առնու, որպէս ասէ Սողոմոն, թէ այն այրէ 'ի հուրն անշէջ ըստ յամն, որ ասէ, թէ առնէ տէր յիրաւունս զըրկելոց:

ԺԲ. ԱՅՐԻ ԵՒ ԳՈՂ ՏՂԱՅՆ
(12 V=38 ag)

Այրի կին մի ունէր զտղայ մի. եւ սկսաւ գողանալ միրք եւ բանջար. եւ մար նորա ուրախութեամբ ճաշակէր եւ ոչ խրատէր 'ի կամս Աստուծոյ. եւ սովորեցաւ տղայն եւ փոքր փոքր աճեցաւ 'ի գողութիւն.

եւ բերէր անասունս եւ այլ անօթս, եւ աճեալ եղեւ աւազակ 'ի լերինս եւ բազում չարիս առնէր. եւ կալեալ տարան 'ի կախել: Եւ նայ ասէ, թէ բերէք զմար իմ, զի համբուրեցից զնայ: Եւ իբրեւ բերին եւ նա խածեալ եհատ զքիթն մօրն: Եւ զայն իմացաւ թագաւորն եւ հրամայեաց արձակել եւ ասէ. ո՞վ դու, զինչ արարեր: Եւ նա ասէ. յիրաւի արարի. զի ոչ խրատեաց զիս 'ի տղայութենէս 'ի կամս Աստուծոյ. որ չէի յայս վիշտս անկեալ: Եւ թագաւորն հրամայեաց արձակել զնա. եւ կախեաց զմայր նորա. զի ոչ էր խրատ[ե]ալ զնա:

Ցուցանէ առակս, թէ ամենայն ծնող, որ ոչ խրատէ զորդին իւր մնալ 'ի կամս Աստուծոյ, նայ մեղք որդւոցն 'ի գլուխս ծնողացն յաւուր դատաստանի:

ԺԲա. 111 Մանուկ մի տաղա անհայր առնէր գողութիւն փոքր փոքր միրք եւ բանճար եւ այլ ինչ. եւ մայր նորա ուրախութեամբ ընդունէր եւ ճաշակէր եւ ոչ խրատէր դառնալ 'ի կամսն Աստուծոյ եւ սովորեաց տղայն 'ի մեծամեծ բանս եւ անօթս եւ եղեւ անուանի գող եւ աւազակ 'ի լերինս եւ բազում չարիս առնէր: Յաւուր միում ընբռնեցաւ 'ի գողութեան եւ կալեալ տարան զնա՛ իչանկալն սպանանել. եւ նայ ետ կոչել զմայր իՈւր. իբրեւ բերին զմայրն, ասէ ցնա. ով մար եկ, որ համբուրեցից զքեզ. զի կարօտ չմնա սիրտս. եւ յորժամ մերձեցաւ մայրն առ 'ի համբուրել, խածեաց զքիթն եւ եհատ մօրն. յայնժամ սաստեցին նմա, թէ ընդէ՞ր արարեր զայդպիսի անաւրէնութիւնդ ընդդէմ ծնաւղի քո. ասաց մանուկն, թէ դայ է ուսուցեր զիս 'ի գողութիւն. զի զոր ինչ բերէի 'ի մանուկ ժամանակիս, ուրախութեամբ ընդունէր եւ ճաշակէր խնդութեամբ. եւ զի ոչ խրատէր զիս 'ի կամս Աստուծոյ գնալ՝ 'ի բարեգործութիւն, յորժամ փոքր գողութիւն առնէի. վասն այդորիկ արարի զայդ. զի ընդ իս տանջեսցի եւ այլոց խրատ լիցի. զի ես առի վճիռ մահուան ըստ գործոց իմոց: Իբրեւ իմացաւ դատաւորն զայն, կալեալ զմայր մանկանն եւ վճիռ ետ կախել եւ զԻ մանուկն արձակեաց խաղաղութեամբ:

Ցուցանէ առակս, թէ ամենայն ծնօղք, որ ոչ խրատէ զորդին իւր գնալ աւրինօքն Աստուծոյ. նա՛ մեղքն որդւոց նոցա 'ի գլուխ ծնաւղացն է յաւուրն դատաստանին. եւս առաւել հոգեւոր առաջնորդաց, որք հայր են. զմեղաւորս զկաշառակերսն եւ զշահառոյսն եւ զբոզաւազսն եւ զարբեցողսն, այլ առնուն կաշառ 'ի նոցանէ եւ թողուն զնոսա 'ի կամս նոցա գնալ. նա՛ այնպիսի առաջնորդն ընդ նոսա տանջեսցին, որպէս ասէ Պաւղոս 'ի Հռոմ թխտին, թէ ոչ միայն, որ զայն առնեն, այլ եւ որ կամակից լինին գործոց նոցա՛:

ԺԲբ. 124 D Ասի 'ի պատմութեանց, թէ մանուկ ոմն առնէր գողութիւն փոքր. եւ հայր նորա ոչ խրատէր զնա, այլ առնոյր յինքն զգողութիւն. եւ ապա վստահացեալ 'ի մեծութեանն եղեւ անուանելի գող. եւ յաւուր միում ըմբռնեցաւ 'ի գողութեան. եւ տարան արկանել 'ի չանկալն. եւ նա ետ կոչել զհայր իւր. եւ նա ասէ. եկ համբուրեցից զքեզ, հայր իմ, զի կարօտով ոչ մեռանիմ. եւ յորժամ մերձեցաւ 'ի նայ հայրն իւր, եխած զքիթ հօրն եւ կտրեաց. եւ յորժամ սաստէին նմայ, թէ ընդէ՞ր արարեր զայդպիսի խայտառակութիւն հօրդ քո. եւ նա ասաց, թէ դա ուսոյց զիս 'ի գողութիւն. զի ոչ խրատեաց զիս, յորժամ փոքր գողութիւն առնէի. եւ իսկոյն կալեալ զհայրն եւ կախեցին:

Նշանակէ խրատս, թէ ամենայն ոք, որ չար օրինակ լինին, այլ եւս առաջնորդք, որ հոգեւոր հայր են ժողովրդեանն եւ [ոչ] խրատեն զժողովուրդս եւ զկաշա(ռա)կերսն եւ զշահառոյս եւ զբոզաւազս եւ զարբեցողս, այլ առնուն կաշառ 'ի նոցանէ եւ թողուն զնոսա 'ի մեղս իւրեանց, այնպիսի առաջնորդք ընդ նոսա տանջեսցին, որպէս ասէ Պօղոս 'ի Հռովմայեցոց թղթին. թէ ոչ միայն զայն առնեն, այլ եւ որ կամակիցք լինին գործոց նոցա:

ԺԳ. ԱՐՁ ԶՄԵՌՆԱՆԻՆՁ
(13 V=12 I)

Առջն լուանայ զյորովայն իւր եւ երթեալ ննջէ 'ի ծերպս վիմաց մինչեւ 'ի մուտս գարնանային ժամանակին. եւ թէ սակաւ մի կերակուր մնայ 'ի փոր նորայ, այն սպանանէ զնա:

Ցուցանէ առակս, թէ որ պահէ զմեղս եւ ոչ խոստովանի եւ անապաշխարի իջանէ 'ի գերեզմանն, նա՛ այն մեղքն աւր վերջի[ն] առաքէ զնա՛ հուրն անշէջ:

ԺԳա. 155 ag Ասի յառակաց ՝ թէ կայ կենդանի մի, որ լուանայ զորովայնն եւ երթայ ննջէ 'ի ծերպս վիմաց մինչեւ 'ի մուտ գարնանային ժամանակաց. եւ թէ սակաւ կերակուր մնայ, նեխի եւ սպանանէ զինքն:

Ցուցանէ առակս, թէ մարդ որ թէ սակաւ մեղք մնայ առ քեզ առանց խոստովանութեան եւ ապաշխարութեան եւ ընդ քեզ իջանէ 'ի գերեզմանն, նա յօրն վերջին 'ի հուրն առաքէ զքեզ՝ եւ տանջէ:

ԺԳբ. 201/192 D Առջն 'ի ձմեռն .խ. օր 'ի յարգելանոցն մտանէ. յառաջ կերթայ եւ խմէ շատ ջուր, որ կծտայ. եւ որչափ որ կերակուր կայ 'ի փորն, զամէնն արտաքս ընկենու եւ սրբէ զփորն 'ի կերակրոց եւ երթայ մտանէ յարգելանոցն եւ զթաթն ծծէ եւ կերակուր ոչ ուտէ այն .խ. օրն. ապա թէ մտեալ լինի 'ի փորն կերակուր, քան զգարոյ հատ մի, նա սպանանէ զինքն:

Ցուցանէ, թէ մարդն, որ երթայ առ խոստովանահայրն եւ խոստովանի զյանցանքն եւ սակաւ մի մեղք պահէ եւ ոչ յայտնէ, նա մեռուցանէ զհոգին յաւիտենական մահուամբ. քանզի Դաւիթ մարգարէն ասէ, թէ խոստովանութիւն մեծ վայելչութիւն է. ապա մարդն, որ զմեղքն փոքր համարի եւ ոչ խոստովանի, նա յաւուրն դատաստանի պատասխան պիտի տայ եւ խայտառակի 'ի մէջ հանդէս հրապարակին. զոր օրինակ կրակ ձգեն 'ի յարդն, որ այրի. նոյնպէս մեղաւոր մարդն առանց խոստովանութեան 'ի հուրն անշէջ անկանի. ապա թէ ուղիղ խոստովանի եւ ոչ թաքուցանէ, նա խոստովանութիւնն այն զմեղքն այրէ, որպէս հուր զյարդն, եւ մարդն մնա մաքուր. եւ լինի որդի յարքայութեան. զի յորժամ զմարմին ջրով լուանայ եւ սրբի, նա շուտով ցամաքի եւ մաքրի յաղտէն մարմինն. ապա պարտ է, որ զհոգին լուանալ արտասուօք եւ խոստովանութեամբ. զի մաքրի հոգին 'ի մեղաց եւ արդարանայ. եւ լինի որդի Աստուծոյ եւ ժառանգ յարքայութեան:

ԺԴ. ԻՄԱՍՏՈՒՆ ԱՒԱԳԷԾ
(14 V=13 I)

Էշք բազումք երթային 'ի գործ արքունի. եւ էր 'ի միջի նոցա էշ մի աւագ՝ իմաստուն եւ մեծայգուն քան զայլ էշքն. ամենեքեան որպէս զհայր եւ զառաջնորդ պատուէին զնայ. եւ ահայ ելանէին 'ի սար մի. եւ նայ խառանչեց եւ զոռաց սաստիկ ահագին եւ յետոյ կողմանէն ճաթմունս մեծայմեծս արձակէր. զան այլ էշքն եւ ասեն. ո՞վ պատուական հայր, առաջին ձայնդ հասարակաց էր. ապայ այդ ահագին ճաթմունդ, որ յետոյ կողմանէ քումէ ելանէր, զի՞նչ էր. ասայ մեզ, աղաչեմք զքեզ. եւ նա ասէ. ով որդեաք իմ. առաջի ձեր սուտ ոչ երդունում ձեզ եւ ճշմարիտ ասեմ. զի առաջի ձայնիս զաւրութեան բնաւ ոչ կարեմ յիմանալ, թէ այլ ինչ ձայն եւ ճաթմունք ելանէ յետոյ կողմանէ իմէ:

Ցուցանէ առակս, թէ այնպէս յիմարեցաք եւ անմտացաք ամենայն ազգ մարդկան եւ արբեցաք 'ի մեղաց եւ 'ի սիրոյ աշխարհիս, որ սաստիկ ցանկութեան եւ սիրոյ մեղաց եւ 'ի փառայսիրութեան եւ ագահութեան եւ այլ մեղաց, զոր առաջի աջաց կոկեալ եմք եւ գործեմք փափաքանաւք. զայն. որ յետոյ յայս կեանցս կայ մեզ պահեալ՝ զահագին տանջանս դժոխոցն բնաւ ոչ յիշեմք եւ ոչ ածեմք մտաւ:

ԺԵ. ԷՇԱՌԻԾ
(15 V)

Էշ մի էր 'ի Ներքին Հնդիկս եւ ունէր ձայն զաւրաւոր նման փողուն Գաբրիէլի. եւ գտեալ մեռած առիւծ մի եւ հանեալ զմորթ առիւծոյն զգեցաւ. եւ երեւեցաւ առիւծայնման կերպարանաւք. եւ ելեալ գայ անդի 'ի միջայսահմանս աշխարհի մեր հպարտ մտաւք՝ յատնել զինքն աշխարհին. եւ ել համբաւ նորա 'ի բազում տեղիս, թէ գայ ահայ նոր զարմանալի գազան մի, որ կոչի իշառիւծ. զի կերպարանքն առիւծ է եւ ձայն իշու է. եւ լուան զհամբաւ նորա ամենայն կենդանիքն եւ փախեալ թագեան 'ի ծերպս վիմաց եւ 'ի խորայձորս. եւ ել նայ 'ի վերայ բարձր լերին միոյ եւ խառընչեաց որոտալով նման ամբոց. եւ զարհուրեցան աշխարհս. եւ ահայ ել յանկարծակի հողմն սաստիկ. եւ կորզեալ եհան 'ի նմանէ զմորթ

առիւծին. եւ երեւեցաւ էշ բնութեամբ եւ կերպարանօք. եւ զան տեսեալ ամենայն կենդանեացն եկեալ ժողովեցան 'ի վերայ նորա եւ չար չար հարին զնայ եւ սատակեցին եւ ասեն. այս 'ի մէնջ քեզ հատուցումն. զոր ոչ էիր դու, ձեւացար եւ զարհուրեցուցեր զմեզ:

Ցուցանէ առակս յայտնայպէս զմեկնութիւն իւր. զի ահայ ել համբաւ իմ 'ի բազում գաւառս. եւ բազումք երանեն ինձ եւ ցանկան տեսանել զիս. զի գոչեմ, որպէս զառիւծ, այսինքն կարգովս եւ անուամբս. եւ եմ կեղծաւոր եւ խաբեմ զտրգետ մարդիք. իսկ յորժամ գայ աւրն ահագին՝ սաստիկ հողմ արդար իրաւանց, նայ 'ի բաց կորզէ յինէն զկարգս եւ զգիտութիւն. եւ լինիմ խայտառակ գլխայկորեալ եւ պապանձիմ ամաւթով:

ԺԵա. 68 F ԻՇՈՒՆ ԵՒ ԱՌԻՒԾՈՒՆ

Էշ մի գտեալ 'ի ճանապարհն սատակած առիւծ մի եւ առեալ զմորթն զգեցաւ եւ Էլեալ յանապատ գոչէր. եւ էրէոցն տեսեալ զարմացան. եւ ասացին առիւծուն, թէ կենդանի մէ [մ'է] Էկեալ, որ մորթն առիւծու է եւ ձայն իշու. եւ կասէ, թէ ես եմ թագաւոր անասնոցն. եւ Էկեալ առիւծուն եւ սկսեալ իշուն փախչել. եւ հողմն Էլեալ մերկացուց զառիւծենին. եւ հասեալ առիւծուն սատակեաց զնայ:

Սոյնպէս եւ ամենայն ոք, որ առիւծ ձեւանայ:

ԺԶ. ԳԱՌՆ ԵՒ ՓՈՂԱՀԱՐ ԳԱՅԼ
(16 V=14 I=8 A)

Գառ մի ցանկալի կար 'ի փարախ մի. եւ ահայ էմուտ գալն, առ զնայ, զի կերիցէ. եւ նայ անկաւ յոտս նորա [եւ] ասէ. Աստուած ետ զիս 'ի հրամանս քո. ապայ ողորմեայ ինձ եւ հար զփողս քոյ. եւ լսեմ, զի լցցի ցանկութիւնս իմ. քանզի լուայ 'ի հարց իմոց, թէ սաստիկ փողայհարքն են ազգն գալոց. եւ նայ հաւատաց անդէպ բանին եւ կնկզեցաւ եւ մի բերան գոչեաց. եւ ահայ զարթեալ շունքն եւ խածատեցին. եւ փախեալ եւ ելեալ նստաւ նայ 'ի բլուր մի. լալով կոծէր զանձն իւր եւ ասէր, թէ արժան եմ ես այս վիշտացս. եւ արդ ո՞յ արար զիս փողայհար. զի ես հանապազ մսայգործ էի:

Ցուցանէ առակս, թէ շատ իմաստուն մարդիք խաբուին եւ լսեն անդէպ բանից եւ յետոյ ապայշաւեն, որպէս գալն, եւ շատ ձեռն արկեն 'ի գործ եւ 'ի բան, որ չէ իւրեանց նման՝ պատշաճ. եւ անկանին 'ի նեղութիւն:

ԺԷ. ԺԻԺԻՔ ԵՒ ՄԵՂՈՒՔ ԵՒ ՄՐՋԻՄՆ
(17 V=15 I)

Ժիժիքն գան առ մեղուքն եւ առ մրջիմն 'ի ժամանակս ձմրան եւ ասեն. տուք մեզ կերակուր, զի մեռանիմք 'ի սովոյ: Եւ նոքա ասեն. դուք ինչ գործէիք յամառն. եւ նոքա ասեն, թէ 'ի վարսաւոր ծառս հանչքէաք եւ անուշ երգով զճանապարհորդս ուղարկէաք. եւ նոքա ասեն. ապա յիրաւի սատակիք 'ի սովոյ եւ ոչ էր պարտ առնել ձեզ ողորմութիւն:

Ցուցանէ առակս, թէ յիմար կուսանքն խնդրեն եւ իմաստունք ոչ տան. զի ժամանակն ոչ է ողորմելոյ, այլ իրաւունք առնելոյ: Ապա պարտ է յայս կեանքն ժողովել, որ է ամառն, իմաստութեամբ եւ աշխատութեամբ զհոգեւոր կերակուր, զի դատաստանին աւրն սովամահ 'ի դժոխս ոչ առնեն զմեզ:

ԺԷա. 199/190 D Ժիժին առ մրջիմն գնաց եւ ասէ. տուր ինձ կերակուր, զի մեռանիմ 'ի սովոյ. եւ ասէ մրջիմն, թէ ինչ գործ առնէիր, որ կերակուր չունիս. եւ ասէ ժիժին. թէ 'ի վարսաւոր ծառս եւ 'ի տերեւ նստէի եւ քաղցրաձայն երգէի. եւ զճանապարհորդս զուարճացուցանէի. եւ ասէ մրջիմն. յիրաւի մեռանիս 'ի սովուն. զի կերակուր ոչ վաստակեցար քեզ. այլ ձայն վայրապար ածեր, ուստի ոչ շահեցար. եւ ոչ ետ մրջիմն կերակուր. եւ ժիժին մաշէր 'ի սովոյն:

Ցուցանէ, որ ժիժին մեղաւորքն են եւ մրջիմն արդարքն. զի յաւուր դատաստանին երթան մեղաւորքն առ արդարքն եւ խնդրեն կերակուր եւ հանգիստ. եւ ոչ տան արդարքն. եւ մեղաւորն հալի եւ

մաշի իւր չար գործովքն. զի արդարութիւն ոչ վաստակեցաւ. եւ ոչ բարի գործՈՎՔ. այլ աշխարհիս քաղցրութիւնն շահեցաւ, որ է մեղք եւ անօրէնութիւնք. որպէս ասէ Սողոմոն, թէ ո՞վ վատ, զնաս առ մրջիմն եւ տես, զի կերակուր վաստակի. եւ դու ոչ վաստակիս արդարութեամբ:

ԺԸ. ԿՈՂԵՌՆ ԵՒ ՅԱՒԱՆԱԿ ԵՒ ԽՈՂՔ
(18 V=16 I)

Գոզեռն ուղտոյ եւ աւանակն իշուն լային սովեալ եւ ասէին առ ծնողսն իւրեանց, թէ վայ մեզ սովելոցս. զի հերձիմք 'ի նախանձու. զի բազում զարիս տան խոզիցն. եւ զմեզ 'ի բաց վարեն. եւ ասեն ծնողքն նոցա. թէ համբերեցէք. զի գայ ժամանակ, որ ողորմիք նոցա եւ հասան ժամանակ ձմեռնային եւ սկըսան զենուլ զխոզսն. եւ նոքա լուան զահագին ճինճսն եւ զդողալ նոցա եւ հարցին առ ծնողսն, թէ զինչ է աղաղակ նոցա. եւ նոքա տարեալ նուցին նոցա զմորթեալ խոզսն. եւ նոքա վերացուցին զկոճակս իւրեանց եւ ասեն. վայ, տեսէք եւ 'ի բաց առէք, թէ հատ գարոյ փակեալ է 'ի յոտս մեր:

Ցուցանէ առակս, թէ նախանձեն արդարքն եւ աղքատքն ընդ փարթամութիւն եւ ընդ հանգիստ մեծայտանցն եւ մեղաւորացն. որպէս Դաւիթ ասէ, թէ նախանձեցայ ես ընդ խաղաղութիւն մեղաւորաց. եւ սուրբ գիրք քաջայլերեն եւ ասեն, թէ համբերեցէք սակաւիկ մի եւ ողորմիք ամենայն հեշտասէր մեղաւորացն եւ մեծայտանցն, որ զմարմինս բտեն կերակուր որդանցն. եւ յորժամ գայ աւր դատաստանին, տեսանեն սուրբքն զմեղաւորքն տանջեալ. յանժամ ասեն. ավաղ, ընդէ՞ր ոչ խաչեցաք վասն Քրիստոսի եւ սպանաք զմարմինս մեր այլ խստայգոյն, որ վարձս առնէաք 'ի յԱստուծոյ:

ԺԸա. 36 C Թագաւոր մի արկ 'ի բութ. ճ. խոզ. զի գիրասցեն. եւ կային 'ի մէջ նոցայ քուռակ մի իշու եւ կոզեռն մի ուխտոյ եւ ոչ տային նոցայ սպասաւորքն 'ի կերակրոցն նոցայ. ծեծէին նոցայ եւ 'ի բաց վարէին. եւ գային ծնողք 'ի տուն 'ի նոյն սրահ, ուր բութէին զխոզսն, երեկուն 'ի գործոյն, ուր եւ լինէին. եւ նոքայ լալով գային ընդդէմ առաջի մարց իւրեանց եւ ասեն. վայ մեզ, ով բարի ծնողք մեր. զի չարչարեն զմեզ 'ի գործ եւ 'ի վաստակ եւ մեք սովայմահ կորնչիմք եւ 'ի կերակրոցն խոզուցն արգելեն զմեզ. եւ մայրքն ումէկէին զնոսայ ասելով. համբերեցէք որդեակք մեր, զի գայ ժամանակ, որ վայ տաք խոզիցն, յորժամ զվճարն առնեն 'ի նոցանէ. եւ նոքայ ասեն, թէ 'ի մօտ երթամք. հատ մի գարի ոչ տան մեզ, այլ հարկանեն. եւ 'ի բաց վարեն եւ մարքն դարձեալ մխիթարէին զնոսայ. եւ ահա եկն ժամանակ զենման նոցայ. եւ սկսան գոռալ եւ ճչել ահագին ձայնիւ. եւ ասեն ծնողք նոցա ցնոսայ. լսէ՞ք զայն ձայնն. եւ նոքայ ասեն. այոյ. զի՞նչ է այն. եւ նոքայ ասեն. զգարին եւ զբութն կուզեն. եւ նոքայ վայ գոչեցին եւ անկան առաջի մարցն եւ ասեն. տեսէք վասն Աստուծոյ, թէ հատ մի գարի կամ կորեկ կպեալ է յոտս մեր մի, առէք 'ի զատ, որ զմեզ չառնեն զքան զնոքայ:

Նոյնպէս արդարք եւ սուրբք ընտրեալք Աստուծոյ. յաղամայ մինչեւ օր վերջին զարմացեալ ընդ համբերութիւն Աստուծոյ. զի դասք մեղաւորացն հանգչին ուտելով եւ ըմբելով եւ փափկանան 'ի յայս կեանքս եւ դասք սրբոցն սովամահ չարչարին եւ նեղին մեծաւ տագնայպանօք եւ վշտօք եւ ամենայն Աստուածայշունչ գիրք խրատեն զմեզ եւ ասեն. համբերեցէք. մի նախանձիք ընդ չարս. զի այս կեանքս անհաւատիցն է եւ անդարձ մեղօորացն է տեղի հանգստեան. իսկ սրբոցն եւ հաւատացելոցն տեղի չարչարանաց եւ մահուան է. զի այն կեանքն է հանգիստ նոցա. եւ աւրն ահագին յահեղ ատենին արդարքն լսեն զչարչարանս եւ զկոծ եւ զաղաղակ եւ զգոչումն ձայնից ձախակողման եւ զարհուրին եւ դողան յահէն եւ քննեն զխորհուրդս իւրեանց եւ ասեն. վա թէ մնացեալ է մեզ սակաւ մեղք, որ զան եւ տանին զմեզ 'ի մեղօորաց դասքն եւ հրեշտակք դողան յօրն ահագին, թող թէ մարդիկ. վասն որոյ աղաչեմ զձեզ, ով որդեակ իմ, յայս կեանս, որ մարմնով 'ի կամս ձեր կայք, մտէք 'ի խորհուրդս ձեր եւ 'ի լոյս բերէք զխաւարային մեղս ձեր զփոքրն եւ զմեծն եւ ձգեցէք զնայ յերեսս սատանայի եւ զերծիք 'ի սատանայէ եւ Քրիստոս թողու. զի քաղցր է. ապայ թէ անզեղջ եւ անդարձ մեռանիք, դուք նման խոզիցն էք. գոչէք եւ աղաղակէք եւ դատեալք ընդ ամբարիշտսն, որպէս եւ քաջ գիտէք եւ լսէք 'ի պատուիրանաց Աստուծոյ:

ԺԸբ. 111ag Այր ոմն հազար խոզ էած 'ի մի տեղի՝ եւ զպարիսպ էած շուրջ. եւ իշօք կորեկ եւ գարի բերէին եւ բտէին զխոզսն: Նա իշուանքն 'ի բանէն երբ գային. եւ քուռկնին երթային մօտ 'ի խոզերն, թէ

ուտեն 'ի կորեկէն կամ 'ի գարւոյն. եւ պահապանքն ոչ թողուին, այլ 'ի կառափն հարկանէին: Եւ յորժամ իշուանքն գային, նա քուռկնին գանգատէին մօրերուն եւ ասէին, թէ խոզերուն անխնայ կուտան, թէ կերէք. եւ մեք սովամահ կու լինիմք: Եւ ասեն իշուանքն ընդ քուռկնին, թէ համբերեցէք. այն խոզերն, որ կուտեն, նա պիտի՝ որ վճարեն զամէն, զինչ կերեալ են: Եւ անցին աւուրք ինչ. եւ ահա եկն թագաւորն՝ նստաւ 'ի վերայ պարսպին. եւ հրամայեաց, որ զամէն խոզերն կապեն եւ ընդ մէջ կտրեն: Եւ սկսան կապել եւ կտրել ընդ մէջ: Եւ սկսան խոզքն բողոք հարկանել եւ ճիչ բառնալ. եւ ճչէին առաւել քան զայլ կենդանիս. եւ ասեն քուռկնին ընդ իշուանին. թէ այն ինչ ձայն է. եւ ասեն, թէ կու վճարուին 'ի խոզերոյն, զոր կերեալ են. եւ տեսեալ քուռկնոյն զտանջանս խոզիցն դողային: Եւ կանչեցին եւ անկան յոտս իշոցն եւ ասեն, թէ վասն Աստուծոյ տեսէք, թէ գարէ հատիկ ճղակմիջերս է կպեալ կամ կորեկ հատ 'ի կռնակիս. եւ ասեն մայրերն ընդ քուռկնին, թէ մի վախէք. ով կերեալ է, նայ այն վճարէ. դուք մի հոգայք:

Ցուցանէ, որ խոզքն մարմնասէր մարդիկքն են եւ փափկասերք եւ անզեղջ եւ անդարձ մեղաւորքն եւ իշխանքն. եւ քուռկնին աղքատքն: Եւ այն, որ ծեծէին եւ ոչ տային թոյլ ուտելոյ. որ եւ մեղաւորն հարկանէ զաղքատն եւ ոչ առնէ զողորմութիւն եւ ընդ անձն ասէ, թէ կեր եւ խմէ, որ չհիւանդանաս: Եւ թագաւորն Աստուած է, որ եւ յաւուր դատաստանին ասէ վասն մեղաւորացն, թէ կտրեցէք ընդ մէջ եւ հանէք 'ի խաւարն արտաքին. ուր լալ աչացն է եւ կրճել ատամանցն:

ԺԸգ. 127D Ասի յոլոմբիական, թէ այր մի կրէր գրաստով մի գարի 'ի կալէն 'ի տունն. եւ քուռակ իւր հետ մօրն գնայր եւ դառնայր: Իսկ 'ի տունն, յորում զգարի կրէին, կապեալ կայր խոզ մի 'ի բտոց. եւ գարին անպակաս 'ի մօտն էր, զի ուտէր եւ գիրանայր. եւ ասէ քուռակն ցմայր իւր. զի՞ է, զի խոզն այն առանց աշխատանաց զգարին կուտէ. եւ զոր մեք մեծ աշխատանօք կրեցաք. եւ մեզ, յոր չարչարեալ եմք, յօրն մի անգամ կուտան: Ասէ մայրն. լուր որդեակ. եւ շաբաթ մի այլ համբերեա. ապա թէ տաց քեզ պատասխանի. եւ քո աչօքդ տեսանես. եւ յետ շաբաթուն գային էշն եւ քուռակն բեռամբ 'ի տուն. եւ քուռակն յառաջ երթայր քան զմայրն. եւ լուաւ ձայն ահագին խռնչալոյ. զի զխոզն զենուին. եւ խրտաւ քուռակն եւ յետ փախեաւ դէպ 'ի մայրն. եւ ասէ մայրն. զի՞ է քեզ որդեակ, զի սոսկաս. մի երկնչիր 'ի խոզէն. քանզի գարոյ հասապն կու խնդրեն յիւրմէ. եւ դարձեալ եկին 'ի կալն. կրէին զգարին. եւ յորժամ բարձեալ դարձան 'ի տուն, կալեալ 'ի վերայ քուռակն սմպակն ոտից եւ ասէ ցմայրն. ո՞վ մայր, տես. զի գարոյ հատ փակեալ չլինի 'ի յոտս. որ զհաշիւն խնդրեն յինէն, որպէս 'ի խոզէն:

Ցուցանէ առակս, թէ իւրաքանչիւր ոք, որ ուտէ ձրի զայլոց վաստակն, որպէս զխոզն, եւ գիրանա, նա աստ մարմնաւոր դատաւորաց վճարի մահուամբ, յետոյ 'ի հանդերձելումն ահագին ատենին հոգով եւ մարմնով պատասխան տայ:

ԺԹ. ԵՐԿՈՒ ԱՔԼՈՐ
(19 V=17 I=159 ag=9 A=1 C=1C)

Երկու աքլոր կռվէին 'ի մէջ փողոցին. եւ մին յաղթեաց ընկերին եւ ընկեց զնա եւ հպարտացեալ թըռաւ եւ ելեալ բարձրագոյն տեղիս եւ սկսաւ ճեմել եւ գագայել եւ բարձրվէզել վասն յաղթութեան նորա 'ի պարծանս անձին համարեալ իւրն: Եւ ահա արծիւ մի 'ի վերուստ յանկարծակի եւ առեալ վերացաւ զնայ յաւթն:

Ցուցանէ առակս, թէ որ խնդայ 'ի կորուստ թշնամոյն կամ ուրախանայ հպարտութեամբ, թէ յաղթեցի թշնամոյն, զայ 'ի վերայ նորա յանկարծակի նեղութիւն եւ չարչարանք, որ վայ տայ անձին իւրոյ. եւ աւրն ահագին հուրն է բաժին. զի այսպէս գրեաց Դաւիթ եւ Սողոմոն, թէ փորեցին առաջի իմ խորխորատ եւ անկան ինքեանք 'ի նոյն:

Ի. ԽՆԱՄԵԽԱԻՍ ԱՔԻՍ
(20 V=18 I)

Աքիստն մտաւ 'ի սենակ թագաւորին եւ եկեր բազում բարիս եւ հպարտացաւ 'ի գիրութենէն. եւ

գնաց առ ձին եւ առ ուղտն եւ առ գոմէշն կարգաւ եւ առ լուսաւորս երկնից, թէ լերուք ինձ խնամի. զի դուստր իմ կարգելու է. եւ նոքա յիմացան զիպարտութիւն նորա. եւ առաքեցին զնայ զնալ 'ի յամբն. եւ ամբն ասաց. ես 'ի հող[մ]ոյն հալածիմ. գնաց առ հողմն. եւ հողմն ասաց, թէ կայ աշտարակ մի 'ի վերայ լերին միոյ յարեւելս, որ զօրաւոր է քան զիս. ես զնայ հարկանեմ. եւ նայ կայ անխախտ. եւ գնաց աքիսն առ աշտարակն այն եւ ասէ. արեկ՝ որ խնամանենք. եւ նայ ասէ. ես տկար եմ. զի ահա կան 'ի հիմունս իմ կենդանիք, որ ծակոտեալ պատառեն զիս. եւ ես ոչ կարացի յաղթել նոցա. եւ դու երթ առ նոսայ. եւ նայ գնաց. նայ աքիս մաքիս մկունք էին՝ իւր նմանի, որպէս զինքն. եւ ասաց նոցա, թէ եկայք խնամենանք. եւ խնամեցան:

Ցուցանէ առակս, թէ ամենայն մարդ շրջի, մինչեւ գտցէ իւր նմանի, որն բարի եւ որն չար. իսկ աւրն ահագին անզեղջ մեղաւորքն երթան եւ գտանեն զնմանիս իւրեանց՝ զդեւքն եւ զամենայն չարայգործսն. եւ արդարքն գտանեն զիրըշտակսն եւ զդասս բարէգործացն սրբոցն, որ կան առաջի Աստուծոյ. եւ զիս զմեղօորս յիշեայ առ Քրիստոս Աստուածն մեր:

ԻԱ. ՄՈՒԿՆ ԵՒ ՈՒՂՏ
(21 V=19 I)

Մուկ մի հպարտացաւ. եւ էմուտ հպարտութիւն 'ի սիրտ նորա. եւ բարձաւ 'ի նմանէ իմաստութիւնն. գայ առ ուղտն եւ ասէ. տուր ինձ հրաման, որ 'ի կղճակ ոտից քոց դնեմ զբոյն իմ եւ առնեմ ին[ձ] դաղարք. եւ ասէ ուղտն. արիւն քո 'ի գլուխ քո. մի խորհել զմահու գործդ զայդ. եւ նայ ասէ. կակուղ է սնպակ քո եւ ոչ վնասէ զիս. եւ ետ զբուն 'ի հետս ոտին ըղտուն. եւ յաւուր միոյ գնաց ուղտն ծանդր բեռամբ եւ կոխեաց զնայ. եւ նայ ճիճու եղեւ եւ վազեաց ճրագոյն ընդ յետոյս նորա. եւ զան տեսեալ ուղտն եւ ասէ. ահա եղբար՝ այդ նեղէր զքեզ, մինչեւ ելաւ 'ի քենէ:

Ցուցանէ առակս, թէ շատ 'ի հարստութենէ հպարտանայն. եւ այլ 'ի փառաց աշխարհիս, որ գայ նոցա, եւ այ[լ]ք 'ի գիտութենէ. իսկ որ խելք ունի, նայ յորժամ որ փառք աշխարհիս գայ, նայ յանժամ խոնարհի եւ հեզ լինի, որ զովի 'ի յԱստուծոյ եւ 'ի մարդկանէ:

ԻԱա. 206/195D Մուկ մի ըղտին մօտ գընաց եւ ասէ ցնա. տուր ինձ հրաման. որ տեղ որ դու անցնիս, ես 'ի քո ոտաց ներքեւն բոյն դնեմ. եւ ասէ ուղտն. վնաս լինի քեզ. քանզի յանկարծակի կոխեմ զքեզ եւ մեռանիս. ասէ մուկն. կակուղ է սմպակդ. ասէ ուղտն. արիւն քո 'ի գլուխ քո. եւ շինեաց մուկն բոյն, որ ուղտն անցանէր. եւ եկեալ ըղտոյն եւ էր բարձած յոյժ. յանկարծակի կոխեաց զմուկն, որ փսխեցաւ. եւ հայեցաւ ուղտն եւ ետես, զի ճրագու մկանն ելեր էր 'ի փորէն 'ի դուրս. զի էր գէր. եւ ասէ ուղտն. այդ կայր 'ի փորտ, ո՞վ եղկելի, որ նեղէր զքեզ:

Ցուցանէ առակս, թէ ամենայն մարդ, [որ] հպարտանայ, նման է մկան. եւ ուղտն սատանայ է, որ կոխէ զիպարտն. զի այն հպարտութիւնն եւ գիտութիւնն յորովայն մտանէ. եւ անկանի 'ի խորս անդնդոց, որպէս անկաւ սատանայ:

ԻԲ. ՃՈՀԻ
(22 V=20 I=152 D)

Ճոհի մի ծաղր առնէր եւ ուրախացուցանէր զմարդիք. եւ ահայ մեծազգի այր մի եւ փարթամ վաղճանեցաւ. եւ կոչեցին զնայ քահանաքն եւ տանուտէրքն եւ ասեն. ճոհի, տանք քեզի .ժ. մոթ ցորեն. մի գայր 'ի ժողովն ծաղր առներ. եւ ասէ ճոհին. ձեր հրամանքն է. իսկ իբրեւ ժողովեցան 'ի հանդէս բազում ժողովուրդքն. եւ ճուհին կարեաց փոքրիկ կտաւէ մանտիք մի եւ ձգեաց 'ի վերայ քրձոյ միոյ. գայ յատեանն եւ ասէ. ես այլ ձեզ ժողով չեմ կարեր գտանել. եւ արդ դուք (տուք) զցորեան իմ, զոր խոստացաք. եւս առաւել ծիծաղեցուց զնոսա:

Ասայ առակս, յորժամ կարիք ինչ կենայ քեզ. եւ ապայ գաս 'ի ժողովն. եւ ապայ թէ դու քարոզել կամիս, ասայ 'ի ժողովն զառակս զայս:

ԻԲա. 27C Կայր խիստ շէն գօղ մի, եւ կայր 'ի յայն գեղն ջուհի մի եւ խիստ ծաղր առնէր զայն գեղացիքն եւ ուրախանային իւրմովն: Հանդիպեցաւ՝ աւր մի մեռաւ 'ի յայն գեղին խիստ ազնուական տանուտէր մի. ժողովեցան քահանայք եւ տանուտէրք առ ջուհին եւ ասեն. հազար վասն Աստուծոյ. այս օր մեզ յերեւան մի գալ. այս օր ամէն երկիրս առ մեզ պիտի գայն. մի զմեզ այս օր խաղք առնէր. ծիծաղինք եւ ամօթ լինիմք 'ի ժողովրդենէն. մեք տանք քեզ .ժ. մունթ ցորեան: Իսկ իբրեւ ժողովեցան երկիրն ամէն 'ի հանդէսն բազումք ժողովուրդք եւ կային նստած գլխիբայց, գնաց ջուհին կարեց կտօէ մանդիկ մի փոքրիկ եւ ձգեաց 'ի վերայ գափռ եւ կոյր շան մի եւ էառ գնաց 'ի հանդէսն, մտաւ յատեանի. ետես զնա հարկեւոր տանուտէր մի, ընդ դէմ վազեաց եւ ասէ. մի գայր վասն Աստուծոյ. եւ նա պնդեց զոտն 'ի տեղն եւ ասէ. ա՞յ եղբայրք, է՞ր էք յիմար մարդիք. ես այլ յերբ տեսնում զձեզ 'ի մեկ տեղ, որ զիմ ցուրեան առնում. տուք զիմ ցուրեանն եւ ապայ երթամ 'ի ձեզնէ. ծիծաղեցոյց զամենքն եւ խաղք արար. ոչ ելօ, մինչեւ էառ զցորեանն:

ԻԳ. ԿՐԻԱՅՔ ԵԻ ԽԵՑԳԵՏԻՆՔ ԵԻ ԱՐԾԻՒ
(23V=21 I)

Ժողովեցան կիրիաքն եւ խեցգետինքն. եւ գնացին առ արծիւն եւ ասեն. [ուս]ոյ մեզ թռչիլ. ապայ թէ ոչ՝ մեռցուք առաջի քո. եւ ասեն. ընդէ՞ր է, որ կէսդ թռչուն էք, կէսդ սրընթացք. եւ մեք տկարք եւ ողորմելիք. եւ ասէ արծիւն. արիւն ձեր 'ի գլուխ ձեր. զի ես տամ, զոր հացէք. զի յիմացաւ, որ հպարտութիւն տարաւ զխելս նոցա. ձայն արար արծիւն. եւ ժողովեցան առ նայ ամենայն թռչունքն. եւ նայ տարաւ զնոսա 'ի ծայրս վիմի մի բարձրայգունի, որ էր ողորկ. եւ 'ի յոտս նորա խորայձոր եւ քարայկառկառ եւ շարեաց .ա. ընդ մէջ կիրիայն եւ զթռչունս. արծիւ վերացաւ եւ արար ձայն՝ զնշան թռչելոյն, զոր յառաջ պայման էր եղեալ նոցա. եւ ահայ վերացան թռչունքն յաւթս ըստ սովորութեան իւրեանց. եւ զան տեսեալ կիրայիցն՝ ձայն ետուն միմեանց. եւ ամենայնք գոչեցին զաւրութեամբ եւ ամենայն կարողութեամբ վազեցին զհետ թռչնոցն. եւ ահայ մեծաւ աղաղակաւ եւ որոտմամբ իջին յատակս վիմին եւ մանդրեալ փշրեցան 'ի քարայկառկառ խորայձորն եւ եղեն զէշ թռչնոցն:

Ցուցանէ առակս .բ. միտք .ա. այս է, զի ամենայն մարդ, որ հպարտանայ եւ յան բանն եւ գործն ձեռն արկանէ, որ չէ իւր լայեխ եւ յարմար եւ 'ի վեր է քան զիւր կարողութիւնն, նայ սատակի որպէս զկիրիայքն. եւ ա. այս է, զի յաւրն դատաստանին ոսկրոտ ծանդրայմարմին անզեղջ մեղաւորքն իջանեն 'ի դժոխս, որպէս կապարն իջանէ յատակս ծովուն. եւ արդարքն եւ ապաշխարեալ մեղաւորքն վերանայն 'ի հանդիպումն տեառն Քրիստոսի եւ մտանեն 'ի յառագաստն հայրական:

ԻԴ. ԳԱՅԼԱԳՌԱԻ ՊԱՆԻՐ Ի ԿՏՈՒՑՆ ԵԻ ԱՂՈՒԵՍ
(24 V=22 I)

Գայլագռաւն քաղցեաւ մերձ 'ի մահ եւ գնաց գողացաւ սակաւ մի պանիր 'ի հողայգործի միոյ եւ առեալ գայ նստի 'ի վերայ բարձրայգոյն վիմի միոյ, զի կերիցէ զնայ. եւ ահայ կար յոստս վիմին աղուէս մի եւ ետես զագռաւն եւ զպանիրն 'ի բերայն. սկսաւ գովել զագռաւն եւ ասել, թէ փառք Աստուծոյ կենդանոյ, ուստի գայ պայծառ արեգակն այս, որ գեղեցիկ է եւ է նման լուսնի. անձն սուրբ եւ փետուր դորայ փայլեն որպէս զաստեղս. եւ թէ գիտէի զձայն սորայ՝ զաւրաւոր էր, ես թագաւոր աւծէի զդայ տիեզերաց. եւ ագռաւին խելքն գնաց եւ հպարտացաւ 'ի սուտ գովութիւնն. մոռացաւ զպանիրն. եւ ասէ ընդ միտս իւր. թէ այսպէս գեղեցիկ եմ ես, եւ է ձայն իմ զաւրաւոր. եւ տարածեալ զթեւս իւր. եւ մեկ մի բարձր ձայնեաց. եւ զերծեաւ պանիրն եւ անկաւ առաջի աղուէսուն. ասէ աղուէսն ընդ ագռաւն, թէ ձայնդ աղեկ է՝ այոյ. զամենայն տեղիքդ յաւել ունիս թագաւորութեան. ապայ խելք բնաւ ոչ ունիս դու .ա. շերտ պանիր ոչ կարացիր պահել դու, զի արդ կարես պահել զթագաւորութիւնն:

Ցուցանէ առակս, թէ զամենայն կերպ թագաւորութեան ետ մեզ Աստուած իւր գալստեամբն. ապայ խելաց զաւրութիւն բնաւ ոչ ունինք. զի հանապազ լսեմք եւ հաւանիմք սուտ եւ խաբող բանիցն սատանայի, որ զստութիւն կենցաղուս տայ մեզ սիրել. եւ հպարտանամք 'ի փառս եւ 'ի սուտ

գովութիւնս. եւ զայլ մեղս ցանկալիս մեզ երեւեցուցանէ. եւ զոր ունիմք առ մեզ շնորհք սուրբ աւազանին եւ զպատուիրան Քրիստոսի, զայն 'ի բաց հանէ 'ի մէնջ պատրանաւք եւ զմեզ ողորմելիս առնէ եւ աղքատ 'ի սուրբ մեծութենէն:

ԻԴա. 33ag Ագռաւ մի պանիր ունէր 'ի բերանն եւ նստէր 'ի բարձրաւանդակ տեղւոջ: Իսկ աղուէսն փորձ առնոյր 'ի նմանէ հանել զպանիրն: Եւ մատուցեալ մօտ անդր եւ զակն 'ի նա հարեալ. երանի տայր բնութեանն. զի սեւաթոյր գունով եւ գիշերոյ մանուկ վայելէ քեզ ծաղկիլ 'ի գունոյդ. այլ եւ զօրութիւնդ քո 'ի քեզ, որչափ որ այլում, բայց եւ իմաստութիւնդ. եւ ոչինչ եւս արգել ունէր զթագաւորութիւն, զարծուով զանց արարեալ ամենեւին. եւ թագաւոր հաւուց, եթէ ձայն գոյր եւ ոչ ամենեւին կարօտ գտեալ էիր յիրիդ: Դրդուեցաւ 'ի գովութենէն ագռաւն եւ զմեծաձայնութիւն ցուցանել կամեցեալ՝ եբաց զբերանն եւ գոչեաց յոյժ մեծ. եւ պանիրն 'ի վայր անկեալ՝ որս լինէր աղուեսուն: Եւ նա առլցեալ կերակրովն՝ ձայն քո 'ի քեզ, ասէ, կարի քաջ, ո՞վ ագռաւ, բայց 'ի մտաց պակաս ես:

Զայս առասպելս գիտելով մի երբէք պատրիցիս 'ի սուտակասպաս գովութենէ:

ԻԴբ. 38C Ագռաւն գտաւ կոշտ մի թարխնայ եւ 'ի խնդալոյն ունելով զնայ 'ի կտուցն նստէր յայսր յանտր. եւ էր օրն կիրակի. եւ կամէր ճաշակել. եւ էր այգոցն. եւ յայնժամ արձակ չէր 'ի ճաշակել. եւ տեսեալ աղուէսն՝ ընթացեալ զհետ նորայ եւ հասեալ ագռաւուն. ոստ մի ծառոց հանգչէր 'ի ճաշակել. եւ մատուցեալ աղուէսն՝ ասէ. աւրս ուրբաթ է եւ չէ պատեհ ուտել քեզ զթարխինայդ. կամելով խաբել զնայ, զի խօսեսցի, միթէ բանայ զբերանսն եւ ընկնի թարխնայն 'ի նայ. եւ նայ պատասխանի ոչ ետուր. եւ դարձեալ յայլ հնար մտեալ աղուէսուն եւ ասէ. ո՞վ գեղեցիկ 'ի հաւերտ, երնիկ ականջին, որ լսէ զբարի բարբառ քո, զի լուեալ եմ 'ի հարցն մերոց, թէ անտանելի ձայն է ազգտ ձեր. եւ աղաչեմ զքեզ՝ հայես 'ի պաղատանս իմ եւ մէկ բերան գոչես այդ աղւոր ձայնիւդ. եւ խաբեաց զագռօն 'ի սուտ բաներ նորա. գոչեաց մեծ ձայնիւ կա՛ղ եւ անկաւ թարխինայն 'ի բերանէն 'ի վայր. եւ էառ աղուէսն. եւ ասէ. խաբեցիր զիս եւ առիր զկերակուրտ իմ. դու գիտես ու Աստուած. ասէ աղուէսն. ձայն աղէկ ունիս, ապայ 'ի խելացդ պակաս ես:

Աղուէսն սատանայի աւրինակի, որպէս բազում ասացաք եւ ագռօն մարդուն, որ ունի սակաւ առաքինութիւն 'ի յանձն իւր եւ սատանայի մտեալ յամենայն հնարս նենգութեան, մինչեւ խաբեալ եւ հանեալ 'ի նմանէ զայն սակօ առաքինութիւն. բայց որ իմաստունքն եւ զգաստքն՝ ոչ խաբին, որպէս բազումս տեսանեմք. զի պահաւք եւ աղօթիւք յաղթեցին բանսարկուին. որոց եւ զմեզ արժանի արասցէ երկն[ա]օր թագաւորն հետեւելով շօղՈՒաց սրբոցն եւ լսել զբարբառն, որ ասէ. եկայք աւրհնեալք հաւր իմոյ՝ ժառանգեցէք զպատրաստեալն:

ԻԴգ. 66F ԱԳՌԱՒՈՒՆ ԵՒ ԱՂԻԵՍՈՒՆ

Ագռաւ մի 'ի ծառն էր եւ կտոր մի պանիր 'ի բերանն. եւ տեսեալ աղուեսուն եւ ասաց. զարմացեալ եմ, ո՞վ ագռաւ, թէ հանց գեղեցիկ գլուխ եւ ճիրանունք եւ փետուր եւ ծիրանի գուն, թէ ինչ է պատճառն, որ հաւանց թագաւոր չես դրած. լինի թէ ձայն չունիս. եւ հպարտացեալ էթող զպանիրն եւ ձայնեալ. եւ անգաւ պանիրն. եւ առեալ աղուեսուն եւ ասաց, թէ ձայնտ այլ աղւոր է, բայց 'ի խելացտ պակաս ես:

Սոյնպէս եւ մարդ, որ հպարտ լինի:

ԻԴդ. 202/193 D Առակ օգտակարագոյն:

Նա եւ առակ մի այլ ասի
Վասն ագռաւոյ մի անմըտի:
Զոր էր քաղցեալ անպատմելի,
Մինչ զի հազիւ էր կենդանի
Ելեալ գընայր մէջ օրէի.

Տարաշրջէր վասն կերակրի:
Սակաւ պանրի նա պատահի.
Որ էր անկեալ անդ 'ի յերկրի.
Ուրախութեամբ առեալ տանի.
'Ի բարձր ծառ մի նա բազմի:
Զսակաւ պանիրն ճաշել կամի.
Թերեւս այնու առողջ մնասցի:
Այլ նենգաւոր աղուեսուկ մի
Խեղճ ագռաւուն հետամըտի.
Գնացեալ ներքեւ ծառոյն կանգնի.
Զնորա պանիրն առնուլ խորհի:

Ըսկսաւ գովել ազգի ազգի
Զխեղճ ագռաւուկն ողորմելի:
Թէ ուստի գա՛ այս գովելի
Թըռչունս նըման թագաւորի.
Փետուրք սորա փայլեալ լինի.
Զերթ ճառագայթն արեգակի.
Թէ ձայն սորա քաղցըր լիցի.
Զսա թագաւոր ես կարգէի:
Իսկ ագռաւուկն ողորմելի
Հպարտանայ 'ի յիւր մըտի:
Գովք աղուեսուն զխելքն տանի.
Թողեալ զպանիրն ղա՛ռ ղա՛ռ հընչի:
Աղուեսն սուեալ զպանիրն տանի.
Ուրախութեամբ նա ճաշակի.
Ո՞վ ագռաւուկ, ասէ զերի.
Զայնդ աղէկ է. խելք նուազի:

203D Մեկնութիւն առակիս:

Աղուեսն է նման սատանայի
Եւ թամայ նենգաւորի.
Որ միշտ ընդ մարդ պատերազմի.
Պէսպէս հընարիւք խաբել խաբի:
Հըպարտութեամբ զխելքն տանի.
Զսէր աշխարհիս նման ցուցանի.

Զբարիսն ամէն, մարդ զոր ունի,
Կորուսանել ջանալ կամի:
Իսկ որ մըտօքն զգաստ լինի,
Զառակս 'ի միտն առեալ պահի.
Սնոտի իրաց ոչ հետեւի.
Նա ըստացող բարեաց լինի:

ԻԵ. ԻՄԱՍՏՈՒՆ ԲԺԻՇԿ ԵՒ ԱԳԻ ԻՇՈՅ
(25 V=23 I=10 A)

Իմաստուն բժիշկ մի 'ի քաղաք մի հռչակաւոր եւ հարեալ զփողն իւր եւ ժողովեցան բազումք առ նայ. եւ նայ ասէր բարձրայգոյն ձայնիւ, թէ գիտեմ ես զ[պ]ա[տ]ճառս ամենայն ցաւոց. եւ սեալ եմ զդեղ եւ զսպաղանիս նոցա. գայ այր մի եւ ասէ. ա՞յ բարի հաքիմ, գալառ իշոյ դեղ գիտես. եւ նայ ասէ. այոյ. գնայ՝ կարի քաջ. բեր, որ տեսանեմ եւ դնեմ ազգի ազգի մլհամ եւ սպեղանեմ զնայ. եւ նա եհան 'ի ծոցուն ագի մի իշու, որ չորացեալ էր, եւ ասէ. ողջացոյ զսայ. զի կամէր ծաղր առնել զհաքիմն. եւ ասէ հաքիմն. ով դու, այր փառօոր, անհնարայ է, թէ ողջանայ դայ 'ի բժշկաց. զի իշուն ագին միայն կայ. ապայ թէ Աստուած խոնարհի եւ յանձն առնէ. նայ միայն է կարող եւ բժշկել եւ ողջացուցանել զդայ՝ ամենայկարող զաւրութեամբն իւրով, լնուլ եւ կատարել զպակասութիւն անդամոց դորայ՝ զգլուխ եւ զփորոտին եւ զամենայն անդամքն ոսկերաւքն եւ մսաւքն եւ մորթաւքն եւ ջլաւքն.

Ցուցանէ առակս, թէ կայ մեզ ամենեցուն, ով եղբարք, յայտնապէս, թէ այս պէս եղաք ամենայնք. զի առ մեզ միայն անուն կարգիս մնաց եւ գիտութիւնս եւ զհաւատս եւ յայլ բարեաց աւտարացաք, եւ այս ոչ է մեզ աւգուտ առաջի Աստուծոյ. զի ասէ Քրիստոս. ոչ ճանաչեմ զձեզ նենգաւոր մշակք. 'ի բաց կացէք յինէն. զի առ ձեզ միայն մնաց անուն քրիստոնէութեան. եւ ամենայն մեղք բազմացան 'ի մէնջ մարդկան եւ հաւատք առանց գործոց մեռեալ է: Ապայ գիտասջիք. զի աւրէնք եւ սուրբք ոչ կարեն բժշկել զմեզ եւ զձեզ. ապայ թէ Աստուած յանձն առնուր եւ գար կրկին մեզ 'ի խնդիր, նայ կարող է բժշկել եւ նորոգել եւ ազատել զմեզ:

Իեա. 108ag Եկեալ բժշկապետ մի 'ի քաղաք մի. ձայնէր եւ ասէր ընդ մարդիկք, թէ խիստ բժիշկ եմ. եւ ամենայն ցաւոց դեղ ունիմ. եւ զհիւանդն ողջ առնեմ: Եւ այր մի կամէր ծաղր առնել զհաքիմն. եւ առեալ իշու ագի մի. եւ պահեաց զնա ընդ հանդերձովն, եւ ասէ ընդ հաքիմն. ով իմաստուն բժիշկ, գայլն խածեալ է զիմ իշուկն. կարես զիմ իշուն դեղ առնել՝ որ ողջանայ: Եւ ասէ հաքիմն. խիստ քաջ. գնա՛ բեր դեկան մի, որ տամ սեւ մլհամի եւ սպիտակ, որ ողջանայ. եւ այրն զիշու ագին եցոյց եւ ասէ. այսօր կարես դեղ առնել. եւ նա ասէ՝ ո՞վ այր, այդոր Աստուած կարէ դեղ առնել՝ որ ստեղծիչ է, ես զի արդ կարեմ իշուն ագին, որ է նշան է իշուն, զէշ առնել.

Վա՛յ մեզ. զի նշան է մնացէալ 'ի մեզ քրիստոնէութեան, որպէս այն 'ի շուն ագին. անուամբ միայն եմք քրիստոնեայք՝ եւ ո՛չ գործովք: Ասէ՝ հաւատք առանց գործոց մեռեալ են. եւ հաւատ առանց գործոց դատարկ է. մարմին առանց հոգւոյ մեռեալ է, նոյնպէս եւ հաւատ առանց գործոց:

ԻԶ. ԱՐՏՈՒՏ ԹԱԳԱՒՈՐ ԹՌՉՆՈՑ
(26 V=24 I=156 ag=92B=114B=2C=2C=25D)

Ժողովեցան թռչունքն եւ ածին զարտուտն իւրեանց թագաւոր. զի չէ գիշայկէր. եւ է արթուն եւ սաղմոսասաց կարգաւոր. եւ սահմանեաց միայբանութիւն եւ կարգեաց զիշխանս եւ զաւրայվարս. եւ սկսան գնալ եւ գան 'ի գեղջի մի սահման. եւ տղաքն եդեալն էին որոգայթ վասն ձագուց. եւ պատահեցաւ որոգայթն առաջի արտուտին. եւ նայ էառ զհատ ցորենոյն. եւ բախտերքն անկաւ 'ի պարանոց նորա. եւ նայ անշնչացաւ. եւ եկեալ զաւրացն հանին զբախտերքն 'ի պարանոցէն եւ ասեն. ով բարի թագաւոր եւ իմաստուն կարգաւոր՝ սաղմոսասաց արթուն. զի այս՝ որ պատահեցաւ քեզ՝ ինչ էր. եւ նայ ասէ. ով բարի զաւրք իմ, որ ագահութիւն եւ յորովայնայմոլութիւնն տարաւ զխելքս իմ եւ զիմաստութիւնս. զի խորհեցայ ծածկայբար ուտել զհատ ցորենոյն վասն սովուս իմոյ. զի մի տեսցէ ոք 'ի զաւրաց իմոց:

Ցուցանէ առակս, թէ բազում սուրբ կարգաւորք եւ առաջնորդք կորընչին 'ի դժոխս վասն ագահութեան եւ յորովայնայմոլութեան, որով գայթակղեցուցանեն զտգէտսն եւ լինին ողորմելիք առաջի Քրիստոսի:

ԻԷ. ՍԻՐԱՄԱՐԳ՝ ԹԱԳԱՒՈՐ ԹՌՉՆՈՑ

(27 V=25 I=97 ag=93 B)

Ժողովեցան թռչունք եւ ընդրեցին զսիրայմարքն վասն գեղեցկութեան իւրոյ. աւծին զնայ թագաւոր. գայ աղաւնին եւ ասէ. ով բարի թագաւոր, եթէ նեղեն զմեզ արծիւքն, դու զինչ աւգնութիւն կարես առնել մեզ:

Ցուցանէ առակս, թէ թագաւորին ոչ միայն գեղեցկութիւն (վայելէ), այլ եւ քաչութիւն եւ պատերազմական զաւրութիւն եւ բազմահնար իմաստութիւն յամենայն կողմանց:

ԻԸ. ԱՒՏԱՐԱՓԵՏՈՒՐ ՃԱՅԵԿ
(28 V=26 I)

Ժողովեցան արայմազդ թռչունքն եւ լուացուեցան յեզեր ծովուն, զի դիցեն զգեղեցիկն իւրեանց թագաւոր. եւ ճայեկն սեւայգոյն է. քաղեաց զպայծառ փետուրն, որ թափեցաւ 'ի լուանալն, եւ յինքն շարեաց եւ պայծառ երեւեցաւ. եւ զան տեսեալ արամազդքն աւծին զնայ թագաւոր. իսկ յորժամ թռայն, յանժամ թափեցան 'ի նմանէ աւտար փետուրքն. եւ մնաց սեւ, որպէս էրն բնութեամբն:

Ցուցանէ առակս, թէ ամենայն մարդ, որ կեղծայվորի եւ ձեւանայ, որ չէ, եւ զաւտար իրքն ժողովէ եւ առնու, յաւրն դատաստանին տայ 'ի տէրն եւ ինքն մնայ, որպէս եւ է. եւ աւտար իրքն թափին 'ի նմանէ եւ երթան առ տէրն իւրեանց, որպէս եւ թափեցան թեպուրքն 'ի ճայեկէն:

ԻԸա. 67F ՃԱՅԻՆ ԵՒ ՀԱՒՈՒՅՆ

Արամաստ չաստուածն ասաց, թէ հաւքտ ամենայն Էկեալ 'ի յայս անուն ոփ լակցիք (լվա՞ցիք) եւ սանդրվեցէք. եւ ես գամ տԷսանեմ. եւ որն որ գեղէցիկ թւի, զայն հաւանց թագաւոր դնեմ. եւ Էկեալ՝ ամԷնԷքեան զարդարեալքն. Էկեալ յետոյ ճայն եւ յամԷնեցուն փետրէն առեալ՝ զանձամբն շարեալ եւ զարդարեալ առաւել քան զամենայն. եւ տեսեալ հաւքն զարմացան եւ ասացին, թէ այլ սոյնպէս գեղեցիկ հաւ չենք 'ի տԷսել. եւ սաքն էր արթուն հաւ. Էկեալ'ի մօտ տէսեալ զիւր փետուրն ճանաչեաց եւ ամԷնԷքեան զիւեանց առին. եւ մնաց ճան (այսպէս) սեւաթոր (այսպէս) մի:

Այսպէս է ամենայն մարդ, որ այլոց ընչիւք եւ կամ գիտութեամբ պարծենայ:

ԻԹ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ԽԵՑԳԵՏԻՆ
(29 V=27 I=39 ag=101 B)

Աղուեսն եւ խեցգետին եղբարք եղան, ցանեցին եւ քաղեցին արտս եւ կասեցին եւ շեղջեցին. եւ ասէ աղուէսն. ելցուք 'ի բլուրն. եւ որ շուտ գայ 'ի կալն, առցէ զցորենն. եւ իբրեւ ելին 'ի բլուրն, ասէ խեցգետին. արայ ինձ սէր եւ յոր ժամ կամիս վազել դու, զարկ զագիդ քո 'ի վերայ իմ, որ յիմանամ եւ գամ զհետ քո. եւ եբաց խեցգետին զմկրտն իւր. եւ իբրեւ եզարկ աղուէսն զագին եւ վազեաց. խեցգետին փակեալ յագին աղ[ու]էսուն. եւ իբրեւ հասաւ աղուէսն 'ի շեղջն եւ դարձաւ հետս տեսանել, թէ ուր իցէ խեցգետին. եւ խեցգետին անկաւ 'ի վերայ շեղջին եւ ասէ. յանուն Աստուծոյ, այս ինձ .գ. մոթ եւ կէս. զարմացաւ աղուէսն եւ ասէ. ով դու չար, եբ եկիր աստ:

[Ց]ուցանէ առակս. շատ բան եւ գործ առնեն նենգաւոր մարդիք, որ 'ի կորուստ լինի անձանց նոցա. եւ տկարքն յաղթեն նոցա: Դարձեալ զայս ցուցանէ առակս, թէ շատ մեղաւորք այս տկար եւ ողորմելի մարմնովս ջանայն եւ յաղթեն սատանայի 'ի ձեռն իմաստութեան եւ խոնարհութեան եւ հեզութեան եւ արտասուաւք զան 'ի մեղայ եւ ապաշխարութիւն:

ԻԹա. 37C Աղուէսն եւ խէչփառն բարեկամացան մէկ մէկի եւ եղան [եղբարք] եւ սկսան եւ արին ցանք 'ի միասին եւ 'ի ժամ հնձելոյ աշխատեցան 'ի մէկ, որպէս աւրէն է հողագործացն. եւ արարին շեղջ ցորենոյ. եւ ասէ աղուէսն խէչափառին. շախնայն եւ 'ի գեղչիս տանուտէրքն պատեհ են տեսել, որ դու մին բաժին առնուս եւ ես երկուս. եւ խոժոռեցաւ խէչափառն 'ի վերայ բանիցն եւ յերկարեցաւ կռիւն 'ի միջուին եւ սկսան ասել եւ լսել եւ տարակուսած կային: Ասէ խէչափառն ընդ աղուէսին. արեկ՝ երթիցուք

'ի հեռաւոր տեղի եւ վազենք. եւ ով յառաջն հասնի 'ի շեղջս քան զընկերն, նայ առնու զերկու բաժինն 'ի ցորենոյն. եւ զայն լուեալ՝ աղուէսն յոյժ ուրախացօ. եւ գնացին հեռացան 'ի կալէն. խէչափառն յառաջ կացուց զաղուէսն եւ ասէ. վազէ յառաջ քան զիս. եւ խէչափառն բռնեց 'ի աղուէսուն 'ի ծայրի այգոյն. գնաց զյետ նորա, զոր 'ի բազում խնդութենէն աղուէսն ոչ կարաց իմանալ. իբրեւ եհաս առաջի կայլոյն, ասէ աղուէսն 'ի միտս իւր. դառնամ եւ տեսնում զիէչափառն, թէ 'ի գալէ. եւ 'ի դառնալ հասաւ 'ի ծայր այգոյն 'ի վերայ շեղջոյն. եւ առեալ խեցգետինն զչափն սկսաւ չափել եւ ասել 'ի յարապ լեզուէն. ,բրսմիլայ ուահեթե որ թարգմանի հայերէն ,մէկե. եւ տեսեալ խէչփառն աղուէսն 'ի վերայ շեղջին զարմացաւ եւ ասէ. զսուր ընթացութիւնդ թո՛ղ գիտացիր. զարապ լեզուտ ով ուսուց քեզ. եւ այսպիսի իմաստութեամբ յաղթ[ե]աց խեցգետինն աղուէսուն եւ էառ զերկու բաժին ցորենոյն:

Առակս խրատէ զմեզ իմաստութեամբ խորհել առ հոգեւորսն եւ հրամայէ Սողոմոն, թէ իմաստութիւն յելս ճանապարհաց գովի եւ իմաստութեամբ գիտասջիք առ հոգեւորսն, առաքեալն հրամայէ. եւ ահա իրօի աղուէսն խեռ է եւ իմաստուն կենդանի եւ հեռութեամբն սատանայի աւրինակի. բայց խէչափառն յաղթեաց իմաստութեամբ աղուեսուն. այսպէս պարտէ մեզ իմաստութեամբ զբարի ճանապարհն բուռն հարկանել. խաբելով զսատանայ՝ մտանեն արքայութիւն Աստուծոյ եւ առնուն զվարձս 'ի տեառնէ եւ առնուն, զոր խէչափառն էառ. եւ երանին յանստուէր ուրախութիւնսն:

Լ. ՄԵԾԱՏՈՒՆ ԵՒ ՔԵՌՈՐԴԻՆ
(30 V=28 I=98 ag=3 C=3 C=161 D)

Էր մեծայտուն մի, որ ունէր ժառանկ տան իւրոյ զորդիս քուրոչ իւր. հիւանդացաւ եւ կոչեաց զժառանգն, զի խրատեսցէ զնայ. եւ եկեալ նստաւ եւ էած զգլուխն 'ի ծոց իւր եւ ասէ մեծայտուն. ո՞վ որդեակ, ջանայ 'ի բարին եւ մի հեշտանար 'ի սուտ կեանքս յայս. զի անցաւոր է. հանապազ յիշէ զաւր մահուն եւ զահագին դատաստայն. խոնար եւ անոխակալ լեր. եւ զմեղս քո մի պահեր առ քեզ. եւ ձանդրացաւ 'ի խրատելն. ասէ. որդեակ, լուա՞ր, զոր ասացի քեզ, եւ կամ աւկտեցար ինչ. եւ նայ հանեալ զգլուխն 'ի ծոցոյն եւ ասէ. ա՜յ քեռի, ինչ հրամայեցեր. ապայ դու լսէ, որպէս պատմեմ ես քեզ գործ մի զարմանալի. զի ահայ կայ 'ի փորի իմում երակ. ժբ. ամէն 'ի պորտս երթայ եւ իջեալ միայբանին 'ի յարանգս իմ. եւ ասէ մեծայտուն. վայ քեզ, ժառանգ անմիտ եւ հայրենայկորուստ. զի ես քեզ զաւրէնս Աստուծոյ քարոզեմ. եւ դու զերակ փորոյդ 'ի թիւ արկանես. յայսմհետէ ելցես 'ի ժառանգութենէ իմէ:

Ցուցանէ առակս, թէ այսպէս անմտացաք եւ 'ի բաց թողաք զպատուիրան Աստուծոյ եւ զսպառնալիսն դժոխոցն. եւ թաղեցաք զգլուխս մեր, որ է միտ մեր 'ի մէնջ ծոցոյ մեղաց եւ աղտեղութեան. եւ թուեմք զերակս փորուս մեր՝ զշնութիւն եւ զարբեցութիւն եւ զայլ տեսակս մեղաց եւ զան խորհիմք անդադար, թէ որպէս զրկեմք եւ արբենամք եւ շնամք. եւ զայլ մեղս գործեմք. այս են երակ փորոյն եւ այս հանէ զմեզ յԱստուծոյ ժառանգութենէն եւ ողորմելի առնէ:

ԼԱ. ԱՅԾՔ ԵՒ ԳԱՅԼՔ
(31 V=29 I=11 A=162 D)

Ժողովեցան այծք ամենայն եւ առաքեցին պատգամս առ ազգն գայլոց եւ ասացին, թէ ընդէ՞ր ունիք [ընդ] մեզ անհաշտ խռովութիւն եւ աղաչեմք զձեզ, որ առնէք խաղաղութիւն ընդ մեզ, որպէս եւ առնեն թագաւորք ազգաց. եւ գայլքն ժողովեցան. եւ ուրախացան ուրախութիւն մեծ. եւ առաքեցին պատգամս մեծ նամակաւ եւ բազում ընձաւք առ ազգս այծեաց. եւ ասեն. լուաք զբարի խորհուրդս ձեր եւ գոհացաք զԱստուծոյ. զի մեծ խնդութիւն է եւ խաղաղութիւն. եւ գիտացնեմք ձեր իմաստութեանդ. զի պա[տ]ճառն եւ զսկզբն խռուութեան եւ կռվոյ մերոյ հովիւն է եւ շուն է. եւ թէ վսն[զն՞ս=զնոսա] բառնաք 'ի միջոյ, փութով լինի հաշտութիւն. եւ զայս լուան ածքն. եւ 'ի բաց վարեցին զհովիքն եւ զշուն. եւ արարին թուխտ երդման եւ հաստատութեան. եւ ելեալ ածքն տարածեցան անհոք 'ի լերինս եւ 'ի խորայձորս եւ սկըսան արածիլ եւ գոհանալ զԱստուծոյ եւ համբերեցին գայլքն զաւրս .ժ. եւ ժողովեցան 'ի վերայ նոցա եւ հեղձուցին զածս զամենայն:

Ցուցանէ առակս .բ. միտք .ա. այս է, որ բնութեամբ ամրացեալ է սիրտ մարդոյն 'ի թշնամութիւն՝ 'ի

յատելութիւն ազգի առ ազգ եւ տոհմի առ տոհմ եւ մարդոյ առ մարդ. նայ դժուարաւ կարէ հաստատել սէր եւ խաղաղութիւն 'ի մէնջ նոցա. որպէս տեսանեմք 'ի մեծայտուն եւ յաղքատն: Եւ միւս միտքն այս է, զի 'ի բաց վարեցաք այսաւր 'ի յանձանց մերոց յամենայն ազգ մարդկան զհովիւն, որ է Քրիստոս եւ սուրբք նորա, եւ շուն, որ է արիութիւն 'ի մեզ եւ բարկութիւն ընդ մեղաց. եւ արարաք խաղաղութիւն եւ սէր ընդ սատանայի եւ ընդ դեւս նորա. զի ամենայն մարդ, որ ոխայկալ է եւ հպարտ, արբեցող եւ զրկող, լեզուանի եւ կախարդ եւ կամ այլ մեղաց գործաւոր. նայ իւր կամաւն սէր եւ հաշտութիւն ունի առ սատանայ եւ ոչ կարէ յիմանալ:

ԼԱա. 30C Ամենայն այծք ժողովեցան 'ի միասին եւ գրեցին թուխթ առ ասգս գայլոց, թէ արարէք ընդ մեզ եւ ընդ ձեզ խաղաղութիւն եւ կտրեցէք 'ի վերայ մեր ձեզ հարկ 'ի տարին .ռ. լիտր եղ եւ ռ. լիտր պանիր անոշայոտ. ժողովեցան գալքն 'ի միասին, կարդացին թուխթն եւ ուրախացան ընդ այն աղէկ զրուցն եւ գրեցին աղւոր պատասխանի, թէ երանի է ձեզ, ով իմաստուն այծեր. զի դուք ուրախ առնէք զմարդիք բազում բարութեամբ ձերով եւ ստուգ առ ձեզ կատարեցաւ բանն աւետարանի, որ ասէ. երանի խաղաղարարաց. զի նոքայ որդիք Աստուծոյ կոչեսցին. եւ մեք 'ի ձեզնէ հայրկ վասն յԱստուծոյ առնեմք. զի Քրիստոս զսէրն եւ զմիայբանութիւն պատուիրեաց ամենեցուն. ապայ իրք մի այլ կայ, որ լսէք 'ի մէնջ. քանզի առաջինքն մեզ ասացին եւ պատուիրեցին, թէ շուն հովիւն հաստատեն զանհաշտ խռովութիւն [ընդ] մեզ եւ ընդ ձեզ. եւ լուեալ զայս այծիցն հաստատեցին նոցայ եւ ասեն. ապայ իրաւի են գալքն, որ զմեզ սպանանեն. զի հովիւքն եւ շունքն զիւրեանքն 'ի մեզանէ հալածեն. եւ երդնուն եւ արարին ղուլ, որ. ճ. տարի անխախտելի սիրով լինէին. եւ այծքն ցրուեցան 'ի լերինս եւ դաշտս եւ սկսան ուրախ լինել եւ ցնծալ եւ խաղալ. զի արածէին յամեն աղւոր տեղեր եւ աղէկ խոտեր եւ 'ի պաղ ջրեր խմէին եւ խնդային եւ վազվազէին եւ տային փառս Աստուծոյ. որ բարի ժամանակ հասան. եւ գայլքն համբերեցին. ճ. աւր. ճ. տարուն եւ ժողովեցան դաս դաս, անկան 'ի վերայ այծիցն եւ կերան. ահա խաղաղութիւն, որ չար է քան զխռովութիւն:

Նունպէս քահանայք եւ ժողովուրդք, որ նման են յիմար այծիցն, սէր եւ խաղաղութիւն առնեմք ընդ չար դեւքն եւ ընդ կատաղի իշխանս նոցայ եւ թուխտ միայբանութեան գրեմք նոցա 'ի ձեռն անաւրէն եւ չար գործոցն, զոր գործեմք. վասն զի զմեզս գործել թղթին գրելն է. զի դեւք իբրեւ զթուխթ առեալ զմեզս մեր տանին առ Բելիար. որ է շուն կատաղի. եւ նայ պահէ իւր զանձատունն, որպէս եւ պահեաց զմեզս Ադամայ, զոր ասեն, թէ 'ի ձեռայգիր եդ Ադամ սատանայի, իսկ յորժամ նախատանաւք եւ արեամբն իւրով բանն Աստուած 'ի վերայ խաչին ջնջեաց զձեռայգիրս եւ զմեզս Ադամայ լուաց, այն կատաղին, որ է Բազու, կոչեաց զչար իշխանն եւ զվատկերպ դեւքն եւ ասէ. եկաք լացէք եւ վայ տուք անձին իմոյ. զի նշան մեծ սիրոյ եւ միայբանութեան ունէի յԱդամայ առ Աստուած եւ պահԵԱՑ զնա, որպէս զոսկէգիր թուխթ 'ի վերայ սրտի իմոյ. եւ ահա կորեաւ հանկարծակի նշան եւ պայման սիրոն. եւ ոչ գիտեմ, ուր եդի զնայ. զի մէնջ հրեշտակք եւ մարգարէք ջանացան առնուլ եւ ոչ կարացին 'ի ձեռաց իմոց. եւ աս է զարմանք, որ իսկ զկերպ եւ զնմամութիւն նշանին չկարեմ յիշել, որ ետ ցիս Ադամ եւ ոչ կարեմ ածել զմտաւ, թէ որպէս. ահայ քրիստոնեայք եւ աստուածայպահ ժողովուրդք, յորժամ զմեզս մեր խոստովանիմք եւ ապաշխարեմք. նայ յայնհետ լինի եւ ջնջի եւ սատանայ մոռանայ եւ չ'յիշել զմեզս մեր եւ Աստուած ուրախանայ. իսկ յորժամ զայս լսէք, իմացիք, որ սատանայ զմեր մեղքն կամք ունի եւ պահէ. վասն որոյ աղաչեմք զձեզ, ով եղբայրք, լերուք սիրողք Աստուծոյ եւ իւր բաժինն հանեք [զհոգիս] ձեր եւ զմարմին. զի դուք քաջ գիտէք եւ լսէք զամենայն, զոր կրեաց վասն մեր. եղերուք բարի գործօք. զի ստեղծ զմեզ. զի փառս տացուք նմայ եւ թշնամութիւն գրեցէք յետ սատանայի պահուք եւ աղօթուք եւ արտասուօք:

ԼԱբ. 14G Ասի առակաց, թէ գալերն յո[ւ]ղարկեցին առ ոչխարք պատգամս եւ ասեն, թէ ով ոչխարք, մենք բնականք եղբայրք եմք եղեալ. նա աւր մի կռվեր են մեր հարքն ընդ ձեր հարքն. եւ խռովեալ գնացին 'ի լերինս շրջել եւ 'ի շատ 'ի դուրս կենալուն մեր բուրդն խոշորցեր է եւ մազ է դարձեր: Եւ 'ի գոյն մեր 'ի արեգական այրոյն եւ 'ի շողոյն եւ 'ի ցրտոյն այլ ազգ է դարձեր. եւ զայս ամենայն թշնամութիւնս 'ի մեր մէջս եւ 'ի ձերդ այդ շներդ եւ մարդիք կու առնեն, որ տարին 'ի բուն ձեզ մորթեն եւ կթեն եւ ձեր բուրթն կտրեն եւ ձեր գառներն խորովեն. թէ կուզէք, որ այս ամէն չարչարանացդ ազատիք, նա՛ այդ մարդկանցդ

եւ հովնուդ եւ շներուդ պատասխանի առնէք, որ երթան իրենց բանն, եւ մենք եւ դուք զառաջին եղբայրութեան սէրն լինինք եւ երթամք 'ի մէկ տեղ կենամք. եւ հետ իրաց արածեմք, որ այլ ոչ մարդիք զձեզ կթեն, եւ ոչ շներն զմեզ խածնեն. եւ այլ չար կամ մեր եւ ձեր մէջն չի մտնէ: Եւ հաւատացին ոչխարք, վարեցին հովիւք եւ շներն, եւ իւրեանք մնացեալ մակաղեցան 'ի լերինն եւ անհոգ արածէին. եւ զայն տեսեալ գայլոցն, զի ոչ ունէին հովիւ եւ ոչ շուն, յոր սգաստացնէր, յարձակեալ 'ի վերայ ոչխարացն՝ կոտորեցին զամենեսեան անխնայ:

ԼԱգ. 13G Ասի առակաց, թէ գայլն ծերացաւ եւ այլ ոչ կարէր որս առնել. գնաց առ ոչխարքն եւ ասաց, թէ՝ ով ոչխարք, ես ծերացայ եւ շատ մեղանչեր հետ ձեզ, զորն պատառեր եմ, զորն կերեր եմ, զորոյ դմակն եմ քաշեր, զորոյ գառներն եմ կերեր. հիմա 'ի դուռ մահու եմ հասեր, ձեզ մեղայ, ինձ թողութիւն արարէք, եւ զինչ 'ի ձեզանէ կերեր եմ, ինձ հալալ արէք. յաստից 'ի վեր երդուիմ, որ զայս սակաւ ժամանակս, որ ապրիմ, նա ծառա կենամ եւ ձեր գառներն արածեմ. եւ այլ ոչ թողում. որ մարդիք զձեզ կթեն, կամ ձեր գառն զենեն. եւ չթողում, որ այլ գայլք գան զձեզ նեղացնեն. եւ գիշեր ցերեկ զձեզ 'ի լեռներն՝ 'ի մարգերն եւ յաղբերակունքն պահեմ. եւ ինձ կերակուր, որ տայք' մեռած լաշ լինի ամիսն հեղ մի կամ զերկու՝ հեղ մի, այնով ապրիմ եւ գնամք 'ի միասին կենամք: Եւ հաւատացեալ 'ի նա ոչխարք, յորժամ զգառինսն ծնան, ապսպրեցին 'ի գայլն. եւ նա տարեալ արածէր եւ բազում հոգաբարձութեամբ 'ի շուրջ ածէր. յորժամ սկսան մեծանալ գառինքն, սկսաւ ընդրել մեծադմակսն եւ մէկ մէկ ուտէր. եւ յորժամ գային մայրքն եւ խնդրէին զիւրեանց գառինս եւ ոչ գտանէին, հարցին ցգայլն, թէ ո՞ւր է մեր գառինքն. եւ ասէ գայլն. գնամ՝ 'ի շուրջ գամ, լինի թէ քրար կանեմ եղելի գառներուս՝ գտնում եւ բերեմ. եւ այնպէս գնացեալ ոչ դարձաւ:

ԼԲ. ՀՊԱՐՏ ՀԱՒԱՏԻՈՐ
(32 V=31 I=99 ag=163 D)

Կուս հաւատվոր մի 'ի քաղաք մի եւ հպարտացաւ 'ի միտս իւր 'ի դիւին զաւրութենէն. եւ ելեալ 'ի հրապարակս քաղաքին՝ ձայնեաց եւ ասէ, թէ լսեցէք ազգ եւ ազինք. զի Աստուած միայն է յերկինս անարատ եւ սուրբ եւ ես յերկրի. այլքդ խոտորեցաք Աստուծոյ. եւ ահայ շնութեան եւ պոռնկութեան դեւն 'ի նոյն ժամն լկեաց զնայ եւ ընկեց 'ի շնութիւն եւ 'ի պոռնկութիւն. եւ յղացաւ հաւատվորն եւ ելեալ 'ի բարձրայգուն տանիս մի՝ գոչեաց ասելով, թէ լուարուք ազգ մարդկան. զի Աստուած միայն մնայ անմեղ եւ անարատ. զի ես ընդ պատն վազեցի, նայ պատառեցաւ ըստորոտս մինչեւ յըստինքս:

Ցուցանէ առակս, թէ որ հպարտանայ, նայ դեւն այսպէս կործանէ զնայ. եւ թէ տեսանես, որ մարդ հպարտանայ 'ի վերայ ընկերին եւ խաւսի հպարտութիւն եւ զանձն սուրբ համարի, դու յանժամ ասայ զառակս զայս:

ԼԳ. ԾԱՌ Ի ՀՆԴԻԿՍ
(33 V=32 I)

Ծառ մի կայ 'ի Հնդիկս, որ կոչի Պորդոկսոն. եւ է ծառն այն մեծ եւ բազմճիւղ. եւ ամենայն թռչունք երթան եւ բնակին 'ի նմայ եւ 'ի հովանի նորա եւ կերակրին 'ի պտղոյ նորա. ապայ որ յարտակսն ելանէ 'ի հովանոյ նորա, նայ աւձք խարայմանիք հարեալ սպանցեն զնայ:

Ցուցանէ առակս, [թ]է Քրիստոսն է ծառն կենաց, տեղի եւ հանգիստ ամենայն հաւատացելոց 'ի նայ եւ կերակուր եւ ըմբելի հոգոց է, եւ կոչող եւ մխիթարիչ ամենայն մեղաւորաց. ապայ ով ելանէ 'ի հովանոյ նորա՝ 'ի պատուիրանացն եւ գործէ մեղս եւ անզեղջ մնայ, սատանայ՝ աւձն հարեալ սպանցէ զնայ եւ կորընչի:

ԼԳա. 114ag Է ծառ մի 'ի հնդկաց աշխարհն եւ ունի պտուղ գեղեցիկ եւ քաղցր. եւ է տերեւալից. եւ ունի շուք գեղեցիկ: Եւ է 'ի սահմանս նորա իժ օձ բազում. եթէ օձն 'ի մարդկանէ ոք 'ի ծառին տակն

գտանէ, չխայթէ. ապա թէ 'ի զատ գտանէ 'ի ծառէն, խայթէ:

Ցուցանէ: Ծառն Աստուած, եւ պտուղն եւ շուքն պատուիրանն Աստուծոյ. եւ օձն սատանայ. եթէ զոք գտանէ 'ի դուրս 'ի պատուիրանէն Աստուծոյ, նա խայթէ, որպէս օձն այն:

ԼԴ. ԿԱՔԱՒ ԵԻ ԱՒՏԱՐ ՁՈՒ
(34 V=33 I)

Կաքաւն գողացաւ զձու միւս կաքաւին եւ դնէ 'ի բուն իւր. եւ իբրեւ հանէ զձագերն իւր. եւ լսէ աւտար հաւկիթին ձագն զձայն մաւրն իւր, թողու զնայ, որ գողացաւ, եւ երթայ առ մարն իւր:

Ցուցանէ առակս, թէ սատանայ գողանայ զմարդն մեղաւք յԱստուծոյ 'ի տղայութիւն կամ 'ի ծերութիւն ուրացութեամբ կամ շնութեամբ կամ ամենայն չարչարաց մեղաւք եւ տանի 'ի դժոխս. իսկ յորժամ լսէ մեղաւորն զձայն Քրիստոսի արարչին իւրոյ, որ կոչէ զնայ 'ի յապաշխարութիւն. նա թողու զմեղս եւ զսատանայ եւ դժոխս. եւ երթայ ցնծութեամբ եւ ուրախութեամբ առ Քրիստոս յուսով, ապաշխարութեամբն եւ արտասուաւք եւ Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն:

ԼԵ. ՄԵԾԱՏՈՒՆ ԽԱՉԵՆԱՑԻ ԵԻ ՈՐԴԻՆ՝ ՔԱՀԱՆԱՅ ՔՐԻՍՏՈՍԱՏԵՍ
(35 V=34 I=164 D)

Ահայ ոմն փառայորայգուն էր 'ի Վերին Խաչենք. եւ որդի նորա ուսեալ եղեւ քահանայ սուրբ. եւ յաւուր միում ասէ ցհայրն իւր. ո՞վ ծեր փառաւորեալ, գիտացիր. զի ես յամենայն պատարագ զՔրիստոս տեսանեմ եւ զՀոգին Սուրբ. եւ ասէ հայրն. ողորմեայ ինձ, որդեակ եւ ցուց ինձ այլ, որ ես ալ տեսանեմ. եւ տարեալ զհայրն կացուց 'ի բեմ ընդ աջմէ իւրմէ եւ եդ նշան. զի տեսցէ հայրն իւր զՀոգին Սուրբ. կատարեաց զպատարագն իւր. եւ երթային 'ի տուն. զի արտաքոյ գեղջին էր եկեղեցին. եւ ասէ հայրն. ո՞վ որդեակ իմ, ընդէ՞ր ոչ ցուցեր ինձ զՀոգին Սուրբ. եւ որդին ասէ, թէ յորժամ ձեռամբս խթեցի 'ի թիկունս քո, եկն Հոգին Սուրբ. քանզի զայն նշան էր հաւրն տուեալ. եւ ասէ հայրն. ով որդեակ, ապայ լսէ, թէ յանժամն ուր էի մտաւքն. զի գնացեալ էի պազարն՝ 'ի վաճառ եւ քոյ մաւրն ծիրանի գլխադիր սիմէի կամէի գնել. եւ ասէ[ի], թէ զսուլտանին զմեծ ուղտն, զոր Պաւխտի կոչեն, թէ պաշարման տկճոր քարշէին զմորթ նորա, նայ գիտել պարտ էր ինձ, թէ քանի լիտր գինի տանէր նայ. եւ ասէ որդին. ո՞վ հայր, զարմացումն է, զի հուրն ոչ կիզեց զմեզ վասն քո անդէպ խորհրդոցդ. եւ Սուրբ Հոգին զիա՞րդ երեւէր քեզ:

Ցուցանէ առակս, թէ սուրբ հոգոյն շնորհքն ոչ կարէ մարդ տեսանել ցուցանելով, այլ բարի գործովք: Եւ դարձեալ ցուցանէ առակս, թէ ուղտն անսուրբ է եւ տկճորն արբեցութիւն եւ գլխայդիրն ցանկութիւն է եւ շնութիւն եւ պազարն բազմայտուն է. եւ գիտացիք, զի այսաւր [միտք] մեր զայս խորհին եւ աղտեղեն զհոգիս մեր զի ամենեքեան արբենայն եւ շնայն եւ պղծեն 'ի չարէն եւ զայս մեղս համբարձակ առնեմք, վասն որոյ եւ ոչ կարեմք տեսանել զՀոգին Սուրբ, որպէս եւ ոչ տեսաւ քահանայն սուրբ:

ԼԶ. ՄԻՄՈՍ ՁԻՍ ԵԻ ՎԱՃԱՐԱԿԱՆ
(36 V=35 I=165 D)

Միմոս մի էր բնակեալ 'ի դուռն քաղաքի մի. որ

ասի խաբող. եւ խաբէր զմարդիք, որ ոչ ժամանէին մտանել 'ի քաղաքն՝ 'ի մուտս արեւու. եւ ահայ եկ վաճառական մի. եւ փակեալ էր դուռն. եւ նայ տրտմեցաւ. եւ ասէ միմոսն. մի հոգար. զի ամենայն բարի պատրաստեալ կայ առ իս. եւ առեալ զվաճառականն 'ի պատառայտուն խցի եւ ուրախացուց զնայ. եւ ուրախացեալ վաճառական էհարց, թէ զինչ է անուն քո, որ թէ գաս 'ի սահմանքս մեր, ես հատուցանեմ քեզ փոխարէն. եւ ասէ միմոսն. ինձ Ձիս ասեն. եւ նայ ասէ. քոյ տղին ինչ ասեն. ասէ միմոսն. իմ տղին Ձերդքանզիս ասեն. եւ նայ ասէ. քոյ կնոչն ինչ ասեն. եւ ասէ միմոսն, թէ իմ կնոչն Այլառակքանզիսս. եւ միմոսն արբեցուց զնայ եւ մաքրեաց զմորուս եւ ս[եւ]ացուց զերես նորա. եւ առեալ

զինչն նորա՝ էմուտ 'ի քաղաքն ընդ գաղտ նեղ դուռն, եւ նայ 'ի ծագել արեւոյն զարթեաւ. եւ էր սառնացեալ. զի էր ձմեռն. եւ դողալով էմուտ 'ի քաղաքն. եւ կուտեցան մարդիք 'ի վերայ նորա. եւ նայ հայեալ տեսանէր զմիմոսն եւ ասէր ընդ մարդիքն. թէ Զիս տեսեր էք. եւ նոքա ասեն. ահայ տեսաք զքեզ. եւ նայ ետ զտղին անուն՝ Քանզիս տեսեր էք. եւ նոքա ասեն քան զքեզ ալ խաղք մարդ այլ ոչ ենք տեսեր. եւ նայ ասէ. Այլառակքանզիս տեսեր էք՝ զկնոջ անուն. եւ նոքա ասեն. քան զքեզ այլ առակ մարդ չենք տեսեր .բ. զմորուսդ. եւ ա. զգլուխդ մաքրած է եւ երեսդ սեւ է քսած. եւ գայ շահայպետ քաղաքին եւ ասէ. ես ընդ տիեզերս շրջեալ եմ եւ չեմ տեսեալ իբրեւ զքեզ կամ քան զքեզ կամ ալառակ քան զքեզ:

Ցուցանէ առակս, թէ քաղաքն աշխարհս եւ միմոսն սատանայ եւ դեւք նորա. վաճառականն մարդս է. եւ սատանայ արբեցուցանէ զմեզ ամենայն մեղաւք եւ խաբէ եւ տարայ գործեալ զսպանութիւն եւ զայլ մեղս եւ առնէ զմեզ մերկ եւ խայտառակ 'ի լուսեղէն փառացն. եւ այս է մեծ առակ, որ յԱստուծոյ փաղչիմք եւ առ սատանայ երթամք, որ կուրուսանէ զմեզ: Աւգնեայ մեզ Քրիստոս:

ԼԶա. 29 C Վաճառական ոմն գնացեալ 'ի քաղաք մի՝ բազում բեռինք ունէր եւ շատ գանձ եւ ոսկի եւ արծաթ. ոչ ժամանեց 'ի քաղաքն մտանել. զի արեւն 'ի մուտս էր եւ դրունքն փակեալ էին. եւ նստեալ էր Զիսառ տռառ մի մարդ մի 'ի դուռն քաղաքին՝ առ 'ի խաբել զմիամիտ զմարդիկսն եւ ելեալ ընդ յառաջ վաճառականին եւ ետ ողջոյն նմայ եւ ուրախացուց զնայ սուտ բանիւ. մի տրտմիր. լինի, զինչ քեզ պիտի. եւ իջոց զնայ ուրախութեամբ եւ երեր զամենայն բարութիւնս առաջի նորայ. եւ սկսաւ ուտել եւ ըմպել եւ տռառ խաբողն եւ որ ընդ նմայ էին եւ արբեցոյց զնա հին գինով. եւ ասէ վաճառականն. ասայ ինձ զանուն քո եւ զորդոյ քո եւ զկնոջ քո, որ քեզ աղեկի աղեկ առնեմ. զի դու ինձ [արարեր]. եւ ասէ խաբօղն. ինձ Զիս ասեն եւ իմ որդոյն Զերդզիս եւ իմ կնոջն Այլառակքանզիս. եւ վաճառականն խաբրեցօ եւ ինքն կուկուտէր զանունս նոցայ Զիս եւ [Զ]երթզիս եւ Այլառակքանզիս. եւ ննջեաց վաճառականն. եւ եղեւ իբրեւ զմեռեալ. եւ ելեալ այն տռառ մարդն 'ի գիշերի եւ տեսաւ զնայ իբրեւ զմեռեալ, մերկացուց զնայ. եւ զով որ յետն կայր, կտրեաց զմազն եւ զմորուսն, այրեաց եւ խառնեաց 'ի ձէթն եւ օծեաց այնով զերեսն եւ զամենայն մարմինն. եւ եղեւ սեւ, զերթ հնդիկ. եւ էառ զգանձն եւ զղումաշն եւ մտաւ գաղտայդուռն 'ի քաղաքն. եւ ձմեռն է. ցուրտն նեղեր զմարմինն. եւ չգիտէր. ուրէք է 'ի զօրութենէ գինոյն. բացին զդուռն քաղաքին եւ ետես զգանձն. զի չէր 'ի մաւտն. չէր 'ի գիտել, թէ մերկիկ խատառակ էր, եւ յարուցեալ եմուտ 'ի քաղաքն. զի տեսանիցէ զայն տռառ մարդն որ խաբեաց զինքն. տեսան զնայ այնպէս ձեւովն քաղաքն ամենայն, ժողովեցան եւ ասեն մէկ մէկի զնորայ արմացքն. եկէք տեսէք. զի սատանայ, որ խաբեաց զԱդամ եկեալ 'ի քաղաքս մեր. եւ տեսին ամենեքեան եւ հիացան. եւ հայեցեալ այն գերէվայրն 'ի դասս արանցն եւ հարցանէր զանուն միմոսին. ով եղբարք, Զիս տեսեք թէ ոչ. ասեն. լօ էր թէ չէայք տեսեալ զքեզ. դու ես սատանայ, որ խաբեցեր զԱդամ. հայեցօ 'ի դասս մանկանցն եւ ասէ. այ աղէկ մանկտիկ. զորդին միմոսին Զերթզիզ տեսեալ էք. եւ նոքայ ասեն. մարդ քան զքեզ այլառակ չենք տեսել. զի այլակէպ ես խիստ. եւ դարձեալ 'ի դասս կանանցն եւ ասէ. ով բարի կայնայք, Զայլառակքանզիս տեեալ էք. եւ նոքայ ասեն. չեւ է առակ եւ ոչ այլառակն քան զքեզ:

Եւ սատանայ ասպէս խաբէ զմեզ եւ մերկացուցանէ 'ի լուսուն:

ԼԷ. ԵՐԿՈՒ ՍՆՏԵԿՆՈՍ ԵՒ ԴԴՈՒՄ
(37 V=36 I=100 ag=94 B=4 C=4 C=31 D)

Ահայ երթային .բ. անդեկնոս 'ի վաճառ եւ ա. յիմացաւ, որ չարակնութեամբ հայէր 'ի յիքն սնտեկնոսն վասն սակաւ գանձուցն, որ ունէր. եւ եհաս աւթիլ նոցա 'ի վայրայբնակ տեղի նոցա. եւ նայ երկնչէր. եւ յարեաւ 'ի գիշերին գաղտ 'ի յընկերէն եւ ետ փայտս 'ի մահիճս իւր եւ դրդումի 'ի տեղի գլխոյն եւ ծածկեաց. եւ ինքն 'ի զատ նստաւ. եւ 'ի մէջ գիշերին յարեաւ ընկերն եւ էառ մեծ վէմի եւ եհար 'ի վերայ դրդմին՝ զգլուխ կարծելով նայ. եւ դրդումն փշրեցաւ մեծ ճաթմամբ. եւ ձայնեաց ընկերն. ահայ կնքայվոր, զհաւատս քո 'ի դրդումդ փորձեցիր. եւ փախեաւ 'ի նմանէ:

Ցուցանէ առակս, թէ Աստուած աւգնական է. բաց պատրաստիլն չէ ափոկ. զի Աստուած իմաստութիւն ետ 'ի միտս մարդկան. դարձեալ ցուցանէ, թէ զմարդն, որ փորձեալ ես, որ 'ի սակաւ իրքն՝

'ի բանն եւ 'ի գործն վնասայկար է եւ նենգաւոր, դու զանձնդ քո մի վստահանար 'ի նայ:

ԼԸ. ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԱՅՐ ԳՆԵԱԼ ԽԵՂՍ
(38 V=101 ag=166 D)

Էմուտ այր մի առ թագաւորն. եւ ետ. ճ. դահեկան եւ զնեաց զամենայն խեղս, որ էին 'ի գաւառ նորին. զի նմայ տացեն զհարկն. իբրեւ ել 'ի թագաւորէն, ետես՝ այր մի ճաղատ եւ միայկանի եւ քիթայիատ եւ խուլ եւ քարց եւ ձեռնատ եւ ձուանկ եւ ա. ոտքն կտրած. դարձաւ առ թագաւորն եւ ասէ. ո՞վ բարէպաշտ թագաւոր, զամենայն գաւառիս խեղս աստ գտայ ես. եւ հրամայեաց թագաւորն բերել զնայ. եւ իբրեւ ետես զնայ, զարմացաւ եւ փառս ետ Աստուծոյ:

Ցուցանէ առակս, թէ որ ունի խեղութիւն 'ի հոգին իւր, որ է մեղքն, գնել էր զնայ սատանայ. այս ինքն խաբեր է. իսկ որ բազում խեղութիւնս ունի. բազում մեղքս ունի յանձն իւր՝ զոխայկալութիւն, զհպարտութիւն, զշնութիւն, զզըրկանքն, զարբեցութիւն եւ զայլ ամենայն մեղս եւ ոչ դիմէ առ Քրիստոս եւ ոչ զոջանայ, նայ է հաստատուն ծառայ սատանայի եւ սաստիկ սիրելի սիրուն քան զայլ ամենայն մեղաւորսն:

ԼԹ. ԱՌԻԾ ԵՒ ԳԱՅԼ ԵՒ ԱՂՈՒԵՍ
(39 V=37 I=102 ag)

Առիւծն եւ գայլն եւ աղուէսն եղեն եղբարք եւ ելեալ յորս եւ գտան .ա. խոյ .ա. ոչխար, որ է մաքի. եւ ա. գառն. եւ 'ի ժամ ճաշուն ասէ առիւծն ընդ գայլն, թէ բաժանէ զոչխարսդ 'ի վերայ մեր՝ փորձելով զնայ: Ե[ւ] գայլն ասէ. ո՞վ թագաւոր, զայդ Աստուած է բաժաներ. խոյդ քեզ եւ մաքիդ ինձ եւ գառն աղուէսուն: Եւ առիւծն բարկացեալ եւ էհար ապտակ 'ի ծնաւտս գայլուն. եւ կրկովեցան աչք նորա. եւ նայ նստեալ լար դառնապէս. եւ դարձեալ ասէ առիւծն ընդ աղուէսն, թէ բաժանէ զոչխարդ 'ի վերայ մեր. եւ ասէ աղուէսն. ո՞վ թագաւոր, զայդ Աստուած է բաժաներ. խոյդ քեզ ճաշու. մաքիդ հրամենք եւ գառդ ընթրիս. եւ ասէ առիւծն. ով գերի աղուէսուկ, ո՞վ ուսուց զայդ արդարդ բաժանելդ. եւ ասէ աղուէս, թէ աչք գայլուն ուսուց զիս, որ յարտակս կործանեցան:

Ցուցանէ առակս, թէ բազում չարայգործ խրատին եւ թողուն զչարիս, յորժամ թագաւորք եւ իշխանք կախեն զգողս եւ զանիրաւս: Նոյնպէս եւ շատ մեղաւորք զոջանայն եւ թողուն զմեղս եւ երթան առ Քրիստոս ապաշխարութեամբն, յորժամ լսեն, թէ մեծայտուն 'ի դժոխսն 'ի հուրն եւ յիմար կուսանքն լային անշահ եւ 'ի հուրն անշէջ առաքեցան:

ԼԹա. 31 C Առուծն եւ գայլն եւ աղուեսն երդուան մէկ մէկի եւ եղան եղբարք եւ գնացին 'ի լեառն մի եւ գտան խոյ մի եւ մաքի մի եւ գառնիկ մի. իբրեւ եղեւ ճաշք, ասէ առուծն ցգայլն, թէ՝ քեռի, բաժան[ե]այ զսոսա զի կերեսցուք. եւ ասէ գայլն. բարի թագաւոր, զայդ Աստուած է բաժանեալ. խոյտ քեզ եւ մաքիս ինձ եւ գառն աղուեսուն. եւ բարկացեալ առուծ ած ապտակ յերեսս գայլուն. եւ երկու աչքն կոպքով 'ի դուրս վազեաց. եւ նայ ոչ իշխեաց վայելել եւ անկօ մեռած. դարձեալ ասէ առուծն ցաղուեսն. բաժանեայ զսոսա, զի կերեսցուք. աղուէսն ասէ. ով բարի թագաւոր, զայդ Աստուած է բաժանեալ. զխոյն ճաշ կեր եւ զմաքին հրամէնց եւ զգառն երեկոյն եւ զակռակտ սրբէ. եւ ասէ առուծն. ով նենգօոր աղուե՛ս, ով ուսուց քեզ այդպէս ողորդ բաժինդ. եւ նայ ասէ. ո՞վ փառաւոր առուծ, գայլու աչքն ուսուց, որ 'ի դուրս վազեաց. վախեցայ, որ զիս այլ հանց չառնես եւ մնամ գերի:

Ահայ որդեակք, 'ի միտ առէք զբանն առակիս, զի ոչ յիշեմք զաւրն ահայգին եւ ոչ զմեծայտունն, որ այրէր 'ի հուրն եւ ոչ զԱբրահամ, որ չարար նորա ողորմութիւն. եւ ոչ ածեմ զմտս զյիմար կուսանսն, որք դառնայպէս լացին եւ ոչ ողորմեցաւ նոցայ Քրիստոս եւ ոչ եբաց զարքայութիւն. զինչ առնեմք, ոչ յիշեմք զյարութեան օրն՝ զլալ աչացն եւ զկրճտել ատամանցն 'ի հանջէնջ գեհեանն եւ յանքուն որդունս, եւ մէկ մէկ կապեն 'ի խօարն արտայքին եւ ոչ թէ զայնն՝ ,գնացէք 'ի հուրն անիծեալքե. զի որպէս առուծն, որ խնդրեաց զերիյս կենդանիս իւր միան կերայկուրն, նոյնպէս եւ Աստուած խնդրէ զհոգի եւ զմարմին եւ

զմիտք անարատ իւր միան եւ ոչ դիվաց, զոր եւ առակն գայլ եւ աղուես կոչի. գայլն պատառող է եւ յափշտակող եւ աղուէսն արայտաւոր եւ նենգաւոր, վասն որոյ աղաչեմ զքեզ՝ տուք կերակուր Աստուծոյ զմիտս ձեր եւ սրբեցէք զնայ 'ի պիղծ եւ 'ի դիւական խորհրդոյն եւ տուք Աստուծոյ հանգիստ զհոգիս ձեր եւ մաքրեցէք 'ի չար բանից խօսեայց. 'ի յոխակալութենէ եւ 'ի հպարտութենէ եւ յայլոց չարութեանց. արարեք Աստուծոյ տաճար զմարմինս ձեր եւ սրբեցէք յամենայն աղտեղի գործոց մեղաց. զի հրամայեալ է Աստուած, թէ 'ի հեզս եւ 'ի խոնարհս հանգչեմ եւ յայնոսիկ, որ սուրբեն զանձինս իւրեանց եւ դողան 'ի սպառնալեաց իմոց. եւ սատանայ ասէ. ես 'ի նայ հանգչեմ, որ հպարտ է եւ ոխակալ եւ յայն, որ մնայն 'ի մեղս անզեղջ եւ շաղախէ զանձն իւր մեղաւք պղծութեան. ապա յիրաւի գրեցին սուրբ հարքն, թէ քահանայ եւ քրիստոնեայ, որ անդարձ մեղանչեն 'ի հաւրէ սատանայէ [ե]ն. եւ որք մեղօք են եւ խօստովանութեամբ սրբին, զարքայութիւն Աստուծոյ ժառանգեն:

Խ. ԳԱՅԼ ԵՒ ԷՇ
(40 V=38 I=103 ag)

Գալն էգիտ էշ մի գէր եւ կամեցաւ ուտել զնայ. եւ ասէ էշն. աղաչեմ զքեզ, ով գալ, հան զայս խոցս 'ի յիմ սրտէս եւ ապայ ուտես զիս. զի Աստուած ետ զիս 'ի ձեռս քո կերակուր. քանզի բեւեռ չար հասաւ յոտս իմ եւ տանջէ զիս: Եւ անցեալ գալն յետոյ կողմանէ, զի հանցէ զբեւեռն. եւ էշն ամենայն զամենայն զաւրութեամբն իւրով կիցս եհան եւ եհար զբերան գալուն. եւ ջախջախեցաւ խամծերք նորա. եւ գալն լար դառնապէս եւ ասէ. յիրաւի կրեցի զայս ամենայն վիշտս. զի ես [ի սկ]զբանէ մսայգործ էի. եւ արդ ո՞յ արար զիս պայթար:

Ցուցանէ առակս, թէ շատք լան եւ ապայշաւեն, որ ձեռնայմուտ 'ի գործ եւ յարուրբստ ինչ, զոր չեն ուսել եւ չէ 'ի դէպ ժամուն իւրեանց աւգ[տ]այկար:

ԽԱ. 34 C Գայլն երթայր ընդ լերամբն եւ 'ի գնալն եգիտ էշ մի կապեալ 'ի մարգի. եւ ասէ էշն. գոհանամ զԱստուծոյ, որ եբեր զքեզ առ իս. եւ ես ուրախ եմ. զի կերիցես զիս եւ զերծուցանես զիս 'ի յայս սուտ կենացս. զի նեղեալ եմ այս չարչարանացս. ապայ աղաչեմ զքեզ բազում պաղատանօք. ողորմեայ ինձ եւ հանես 'ի յետին ոտից զբեւեռն. զի այս տարի մի է ինձ, որ ոչ 'ի մահն եմ եւ ոչ 'ի կեանքն 'ի ձեռաց սորայ. եւ գայլն հաւատաց իշուն. անցաւ յետեւ իշոն, կուքաշէր զբեւեռն. եւ էշն էզարկ աքացովք եւ կոտրտեաց զատամունքն գայլին՝ ըստ գրեցելումն, թէ խորտակ[ե]աց տէր զժանիս առիւծոց. եւ ելեալ գնաց գայլն փախստական եւ նստեալ 'ի վերայ բլրի մի եւ ասաց ցայնձն իւր. ով անմիտ եւ խե՛ւ, ինչ մոռացար զխաբէութիւն եւ ստութիւն իշուն եւ տուիր խաբել զքեզ. քանզի արժանի ես, զոր կրեցեր, անխել եւ անբախտ. դու մսայգործ ես եւ մսայգործի որդի. ասա ինձ, ո՞վ արար զքեզ նալբանդ:

Ցուցանէ առակս, թէ մարդ, որ ոչ կարէ հասանել՝ եւ ձգտել անխելք է. եւ արուեստ, զոր չէ ուսեալ՝ եւ սկսանի առնել, շատ չարչարանք կրէ. զի անմտացաւ եւ ինքն զինքն անհարկ[ա]ցնէ եւ անարգէ, վասն զի չէ պատեհ փոթով հաւատալ ամենայն բանից եւ քննել եւ իմանալ զճշմարտութիւն:

ԽԱ. ՎԱՃԱՌԱԿԱՆ ԵՒ ՁԱԳ
(41 V=39 I)

Եկն վաճառական մի 'ի ժամ ընթրեացն եւ կալաւ էջեւան առ դրան մի եւ մտեալ, զի տեսցէ զայսպընջականն. եւ աւազակ մի գաղտ գար զհետ նորա եւ կապեաց ձագ մի 'ի վերայ բեռին եւ ինքն առեալ զգրաստն եւ փախեաւ. եւ ելեալ վաճառական ետես զձագն, զի վազէր 'ի յայս կուս եւ յայն կուս. եւ ասէ հեզութեամբ առ նայ. ո՞յ ողորմելի ձագ, բեռն աղեկ ունիս, թէ տանիլ կարես:

Ձեւացոյ զառակս, թէ ծանդր իրք կամիս ասել կամ ձեռն արկանես դու եւ կամ այլ մարդ ինչ 'ի գործ, որ ծանդր լինի քան զձեր կարաւղութիւնդ:

ԽԲ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ԿԱՔԱՒ
(42 V=40 I=104 ag)

Աղուէսն էառ կաքաւ մի 'ի բերանն եւ կամեր ուտել զնայ. եւ ասէ կաքաւն. աւրհնեալ է Աստուած, որ կոչեաց զիս յիւր արքայութիւն. զի զերծանիմ 'ի յայս չարեացս. եւ ապայ դու, աղվէս, գոհացիր զԱստուծոյ եւ ապայ ուտես զիս. քեզ մեծ վարձք է. եւ աղուէսն կկզեցաւ եւ հայեցեալ յերկինս եւ բացեալ զբերանն՝ ասէ. գոհանամ զքէն, Աստուած բարի, որ պատրաստեցեր ինձ սեղան բարութեան. եւ կաքաւն զերծաւ 'ի բերանոյն եւ թռաւ. եւ ասէ աղվէսն. ով անմիտս եւ յիմարս, յառաջն պարտ էր ինձ ուտել եւ ապայ գոհանալ զԱստուծոյ:

Ցուցանէ առակս, թէ զխոստացեալ իրքն մի համարիր քեզ եւ մի շնորհայկալ մարդոյ լինիս, մինչեւ առնուս. եւ թէ ջուր տան քեզ, 'ի նոյն ժամն 'ի գոգդ առ զինքն, զի շատք ասեն եւ ոչ տան զասացեալն իւրեանց, ով եղբար, եւ սուտ լինին:

ԽԳ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ՉԻՏ
(43 V=41 I=105 ag)

Աղուէսն առեալ չիտ մի 'ի բերայն եւ կամէր ուտել զնայ. եւ ասէ չիտն, թէ շատ աղաւթէ եւ ապայ ուտես զիս. զի ժամ էր ինձ ածել ձու քան զջալամու. ,հաւկիթ մի է, որ լինի անգինե: Արդ թող որ ածեմ քեզ. եւ ապայ կեր զիս: Եւ երդում, որ գամ 'ի կամս քո. իբրեւ եթող զնայ աղուվէսն. նայ թռաւ եւ նստաւ 'ի ճիղ մի ծառի բարձրայգոյն: Եւ ասէ աղուվէսն. արայ, զոր հրամայեցեր եւ եկ 'ի կամս իմ. եւ ասէ չիտն. ապայ քո նման անմիտ եմ ես, թէ այլ գամ 'ի կամս քո. եւ դու ընդէ՞ր աւատացար ինձ, թէ կարի սակաւ մի մարմնով անպիսի մարգարիտ ածել քեզ, որ ամէն մարմնովս չեմ իբրեւ զնայ: Ապայ լսէ, որ տամ քեզ .գ. բան խրատ, որ շատ աւգուտ լինի քեզ. եւ նայ ասէ, թէ ասայ. եւ ասէ չիտն. անդէպ բանից մի հաւատար եւ ընդ խախուտ որմով մի ննջեր եւ 'ի շնացող ծերէ եւ առաջնորդէ փախիր: Եւ ասէ աղո՞ւէսն, թէ դատելոց է զքեզ Աստուած. զի ստեցեր ինձ: Ասէ չիտն. կայ սուտ, որ վարձք կայ. զի սուտ ասելն, որ 'ի մեղաց եւ 'ի մահմանէ եւ յորոգայթէ ապրիլ եւ կամ զայլ մարդ փրկել՝ շատ վարձք տայ նմայ Աստուած: Ասէ աղուվէսն. ապայ ընդէ՞ր ասէ մարգարէն, թէ կորուսանէ տէր զայնոսիկ, որ խաւսին սուտ: Ասէ չիտն. ժամանակն եւ պատճառն գիտէ, թէ սուտ խաւսիս եւ 'ի վիշտաց եւ 'ի մեղաց փրկիս եւ զմարդ փրկես, նայ Աստուած ուրախանայ. եւ թէ սուտ խաւսիս եւ զմարդ գայթակղեցուցանես, նայ մեծ չար է: Ցայն ժամ աղո՞ւվէսն շողայթփեցաւ եւ կարծիս ետ՝ մաղասկաթ է կամ դիւայհար եւ փրկեցաւ 'ի վիշտաց եւ 'ի մահմանէ:

Ցուցանէ առակս, թէ իշխան մի բարկացեալ եւ կամէր սպանանել զծառաքն իւր. եւ ասէ ցգանձայպան իւր բարկութեամբ, թէ բեր զսուրն պողպատի, զոր ետու 'ի քեզ անցեալ աւրն. եւ նայ ուրացաւ եւ ստեաց եւ երդուաւ, թէ չեմ տեսեալ. եւ առ ժամայն անցաւ բարկութիւն իշխանին. եւ ահայ կայ սուտ, որ իրաւ արժէ: Եւ աղուվէսն զաղտ 'ի մաւտն գար եւ 'ի վեր վազեաց, զի առցէ զչիտն եւ չիտն ծրտեաց 'ի յաչքն աղուեսուն եւ ասէ. այ անմիտ, լսէ, որ այլ խրատ տամ քեզ. ուր ոչ հասնիս, մի ձկտիր, եւ 'ի մէնջ առն եւ կնոչ եւ 'ի մէջ եղբարց ահոկ մի խաւսիր, որ չէ ամաչես:

ԽԳա. 26 C Աղուեսն առեալ զճնճղուկն 'ի բերանն եւ կամէր ուտել զնայ. եւ ճնճղուկն 'ի խօսք եղեալ յԱստուծոյ հրամանաւն եւ ասէ .ռ. աւաղ, թէ ուտես զիս. զի ժամէր ինձ, որ ածէի լուսատու մարգարիտ մի՝ քան զջալապու ձու մի, որ ամէն արարածս գին չէ իւրն. ասէ աղուեսն. թէ թողում զքեզ, կու վախեմ, թէ այլ չգայս 'ի յիմ կամքս. եւ ասէ ճնճղուկն. երդնում քեզ, որ գամ 'ի քո կամքդ. իբրեւ եթող զնայ, թռօ ճնճղուկն եւ նստաւ 'ի բարձր ծառ մի. եւ ասէ աղուեսն. ջանա եւ ած եւ արեկ առ իս. եւ ասէ ճնճղուկն. ապայ քո նման անմիտ լինիմ, թէ գամ առ քեզ. է՛ ողորմելի եւ 'ի խելաց դատարկ, յերփ իմ անունս ճնճղուկ է. ջալապու(՛մու)ձուն, ուր պարտակէր փորս, դու կու հաւատայիր ինձ, որ ես այնպէս ձու ածէի. ապա թէ լսես ինձ, տամ քեզ խրատ, որքան ապրիս՝ չքաղցենաս. անհաւատ բանին մի հաւատալ եւ ընդ 'ի խախուտ որմով մի ննջիր, 'ի շնայցող ծերէ եւ 'ի հպարտ աղքատէ եւ 'ի ստայխօս առաջնորդէ եւ թագաւորէ 'ի բաց փայխիր. ասէ աղուեսն. դատի զքեզ Աստուած. որ ստեցեր ինձ. ասէ ճնճղուկն. կայ

սուտ, որ վարձք է. զի սուտ ասել եւ 'ի մեղաց եւ 'ի մահուանէ եւ յորոգաթէ ապրիլ կամ զմարդ փրկել, շատ վարձք է առ Աստուած. ասէ աղուեսն. ապա ընդէ՞ր մարգարէն Դաւիթ ասէ. կորուսանես զայնոսիկ, որ խօսին սուտ. ասէ ճնճղուկն. ժամանակն գիտէ. զի թէ սուտ խօսիս ազատիս 'ի մեզ 'ի մեղաց եւ զայլք փրկես, նայ Աստուած ուրախանայ. եւ թէ սուտ խօսիս եւ զընկերն զայթակղեցուցանես, այն է մեծ չար. յայնժամ աղուեսն զաղտ 'ի մուտ գայր եւ 'ի վեր վազեց, որ առնէր զճնճղուկն. եւ նայ ծռտեց 'ի դունչն յաղուեսին. եւ ճնճղուկն թռօ եւ ասէ. այ անմիտ, լսէ այլ խրատ 'ի միտ. ուր չ'հասանիս, մի ձկտալ. եւ զանցեալ իրաց մի ապաշաւէր եւ 'ի մէջ այր եւ կնոջ եւ եղբարց անաւգուտ բան մի խօսիր, որ յետեւ չամանչես:

ԽԴ. ԵՐԷՑ ԱՍՈՐԻ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ
(44 V=42 I=106 ag)

Էրէց մի այսորի բարի եւ իմաստուն եւ այր մի հայ կռուեցան վասն իրաց ինչ. եւ ասէր երիտասարդն ընդ յերէցն, թէ քարովն տամ 'ի բերանդ. որ լբ. ատամունքդ 'ի բերանդ լցւին. եւ երէցն զարմացաւ եւ զնաց փութով 'ի տուն իւր եւ ասէ 'ի կինն իւր. ալաւխ վասն Աստուծոյ վառեայ մոմ եւ եկ տես զատամունս իմ. թէ որ չափ է. եւ նայ թուեաց եւ ասէ. լբ. են ըստուգայպէս. եւ նայ գայ փութայպէս առ երիտասարդն եւ ասէ. ուստի գիտացեր զթիւ ատամանց իմոց. եւ կամ ով ասաց քեզ. եւ նայ ասաց. տէր յիմ ատամանցն զքոյդ գիտացի:

Ցուցանէ առակս, թէ յիմ ցաւուն զձեր ցօն գիտեմ, որդեակ իմ. զի հասարակաց է մեղքն եւ պատերազմն սատանայի եւ միայպէս կորուսանէ զմեզ եւ դժոխոց առնէ զամենայն մեղաւորն:

ԽԴա. 5 C Էրէց մի ասորի բարի եւ իմաստուն եւ մարդ մի հայ կռուէին 'ի հաշիւն, որ կայր 'ի միջի իւրեանցն. ասէ հայն. առնում զքարն եւ կոտրեմ զ. լբ. ատամունքդ. որ կայ 'ի բերանդ. զայրմացաւ այն էրէցն ընդ նորա ասելն. գնաց առ իրիցկինն. պարկեցо բորդ վեր եւ ասէ. օլաւխ, առ մոմեղէն, առ եկ տես 'ի բերանս. թէ քանի ակռակ կայ ինձ. էառ էրէցկինն զլուսն ու համրէց. նայ այն էր. զոր նայէր ասացեր. լբ. ակռակ. զոր նայէր ասացեալ. գայ շուտ մի առ հայն եւ ասէ. փառք Աստուծոյ, կամ յիմաստուն մարդ ես դուն կամ Սուրբ Հոգին 'ի քեզ բնակեալ է. դու զինչ գիտացեր, թէ իմ ատամունքս. լբ. էր. եւ նայ ասէ. յիմ ատամանցս գիտացի. եւ շուտ հաշտեցան:

Ցուցանէ առակս, թէ յիմ մարմնոյն զձերտ դիտացի, որդեակք իմ. զի հասարակած է մեղքն եւ պատերազմ սատանայի եւ միապէս կորուսանէ զամենայն մարդ՝ դժոխոցն առնէ:

ԽԵ. ԿԱՏՈՒ ԵՒ ՄԿՈՒՆՔ
(45 V=43 I=49 ag=58 B)

Կատուն փիլոն էած 'ի վրայն եւ եղեւ կարգաւոր. եւ պատուիրեաց մկանցն եւ ասեաց, թէ պեղծ է արիւնայհեղն. եւ ես այլ արիւն ոչ հեղում. զի կարգ առի. եւ ասեն մկունքն. թէ զբոլոր կարգն Անտոնի տեսանեմք 'ի վերայ քո եւ զաբայ Մարկոսի, նայ մեք քեզ ոչ հաւատամք եւ կեղծաւոր բարուց քոց: Եւ կատուն յետ այնորիկ եղեւ գերբն եւ անկաւ 'ի յալուրտուն. գան մկունքն եւ ասեն. ով դու չար, քո հաւատովդ դու գերբն ես: Եւ յետ այսորիկ եղեւ մեռեալ յանցս մկանցն. գան մկունքն եւ ասեն. ո՞ նենգաւոր, թէ պարկ լինի մորթ քո, ոչ հաւատամք քեզ. թէ թողուս դու զսովորական չարութիւնդ քո:

ԽԵ. ԿԱՏՈՒ ԵՒ ԱՔԻՍ
(45 V=43 I=50ag=59 B)

Դարձեալ զկատուն լուսայկալ դրին թագաւորին 'ի վերայ ոսկէկար բարձին: Նոյնպէս եւ արարին զաքիսն. եւ տային նոցա 'ի կերակրոյ թագաւորին եւ ասացին նոցա, թէ թողէք զբարս ձեր. եւ նոքա ասեն. թէ ոսկով եւ մարգարտով ծածկէք զմեզ. մեք ոչ կարեմք թողուլ զսովորական բարս մեր. զի կատուին

բնութիւն է. որ թէ տեսանէ զմուկն, նայ դողայ եւ ոչ կարէ համբերել. նոյնպէս եւ աքիսն ոչ կարէ թողուլ զքթմթալն:

Ցուցանէ առակս, թէ զոր փորձեալ ես, որ չէ բարքն անարատ. ալ նենգաւոր եւ չար է, թէպէտ եւ կեղծաւորի բարի գործել. բաց դու մի հաւատար նմայ. զի ոչ կարէ թողուլ զսովորական բարս. զի խիստ բարի մարդ պիտի եւ ապայ սանձայհարել կարէ զկամս եւ զբարս իւր:

Խեա. 6 C [Կ]ատուն էած փիլոն եւ եղեւ կարքօոր եւ ասաց ընդ մկներն. թէ Աստուած զդարձն կամի զմեղօորին. այլ չմնաց թէ այլ արունն հեղեմք. քան զի իմացայ, որ դատաստան կայ յիմ շլնքիս. ասացին մկներն. թէ զբոլոր կարքն Անտոնի տեսնումք 'ի վերայ քո, ոչ հաւատամք քեզ. գնաց եղեւ հիւանդ, յղարկեաց առ մկներն, թէ վասն Աստուծոյ եկայք. որ խոստովանիմ զիմ անցանքս յառաջ, որ չմեռանիմ. ասացին մկներն, թէ չ'հաւատամք քո կեղծաւորութեանդ. եւ գնաց 'ի խաչք ճանաարհի մի եւ եղեւ մեռեալ. գան մկներն եւ ասեն. ով նենգօոր, թէ պարկ լինիս լի ալրով. ոչ հաւատամք քեզ. թէ քո բարքդ յիստակ է 'ի հետ մեզ:

Իմացաւ զկատուի աղերսանքն թագաւոր մի. ողորմեցo նմայ եւ էառ արար զկատուն իւրն լուսնայկալ եւ կերակրեր զնայ իւր ապրանացն. աւր մի յանկարծակի մուկն մի ելo 'ի ծայկն. ետես կատուն եւ դողաց եւ չ'կարաց համբերել, ձգեաց զլուսնայկալն 'ի վերայ թագաւորին. եւ երէց ամենայն երեսն. ասէ թագաւորն. անհաւատ, քաղցած չեմ պահէլ զքեզ. զայտ է՞ր գործեցեր. ասէ կատուն. ով յիմար թագաւոր, թէ ոսկով կամ մարգարտով կազմես զիս, զիմ բարքս չկամիմ թողուլ:

Ցուցանէ առակս. տես զայն մարդն, որ իւր բանքն չէ անարատ, այլ նենգաւոր եւ չար, թէպէտ եւ սիրելի լինի քեզ, դու 'ի հաւատալ նմայ. զի կարէ թողուլ զսովորական բարս իւր. զի խիստ բարի մարդ կու պիտի, եւ ապա կարէ թողուլ զսովորական բարս իւր. զի ասէ աստուածայբանն, թէ սովորական բնութիւն լինի եւ ամրանայ 'ի մարդն եւ կորուսանէ զմարդն. վա՛յ հազար բերան:

ԽԶ. ՄԱՆՈՒԿ ԵՒ ՁԱԳՔ
(46 V=44 I=53ag=62 B=134 D)

Կին մի գնաց 'ի դրախտն իւր վասն մրգոյ եւ ասէ ցմանուկն իւր. ով որդեակ, ակն կալ 'ի վերայ եւ պահէ զմանդր ձագերն մինչեւ գամ ես. եւ յարեաւ մանուկն զհաւուն ձագերն ընդ միմեանս չուանով. եւ կապեաց զծար չուանին յոտս հաւին եւ ինքն ընդ խաղով եղեւ. եւ ահայ գայ 'ի վերուստ ցին այն, որ է ուրուրն, եւ վերացուց զմին 'ի ձագուցն. եւ գնաց 'ի հետ մայրն եւ ձագերն ամենայն:

Ցուցանէ առակս, թէ Քրիստոս յորժամ յերկինս համբարձաւ. նայ վստահացաւ զժող[ով]ուրդն 'ի թագաւորքն եւ յառաջնորդքն. եւ նոքա զբաղեցան 'ի հոքս եւ 'ի մեղս աշխարհիս եւ ոչ տարան խնամ հաւտին Քրիստոսի, եւ սատանայ զամենեսեան [լ]ցուց մեղաւք առ հասարակ եւ իջուց 'ի դժոխս զթագաւոր եւ զիշխան եւ զառաջնորդ եւ զժողովուրդ. զի ամենայնք խոտորեցաք 'ի միասին եւ անպիտանացաք. քանզի ժողովուրդն կապեալ կայ առ առաջնորդն եւ առաջնորդն 'ի թագաւորն:

ԽԷ. ՀԱՐՍՆ ԵՒ ՍԿԵՍՈՒՐ ԵՒ ՍԿԵՍՐԱՅՐ
(47 V=45 I=54ag=63 B=135 D)

Նոր հարս մի եղեւ խոնարհ եւ համբերող. եւ կամեցան փորձել զնայ սկեսուրն եւ սկեսրայր նորա. ասէ մին, թէ զդուռն փակէ. եւ միւսն ասէ. բաց. մին ասէ. ել փակէ զդուռն. հողմ է. եւ իբրեւ գնաց եւ փակեաց զդուռն. եւ միւսն ասէ. ել բաց զդուռն. զի ծուխ է. եւ սկըսան ասել. փակէ եւ բաց. եւ նայ սկսաւ փակել եւ բանալ կարգաւ եւ ասէ. քեզ փակեմ եւ դորայ բանամ. եւ յերկ[ա]րեաց եւ ոչ բարկացաւ:

Ցուցանէ առակս, թէ առաքեալն եւ մարգարէքն մեծ համբերութեամբ եւ հեզութեամբ քարոզեցին եւ մեծ սպառնալեաւք փակեցին զդժոխքն. զի մի մտցեն 'ի նայ. եւ բացին զարքայութիւն ողորմութեամբ Աստուծոյ եւ շնորհաւքն. զի մեղաւորք դիմեն եւ մտցեն 'ի նայ յուսով ապաշխարութեամբ. այս է փակելն եւ բանալն:

ԽԸ. ՄԻԱՅՆԱԿԵԱՑ ՇՈՒՆ ԵՒ ՍԱՂՄՈՍԱՍԱՑ ԵՒ ՍԱՏԱՆԱՅ
(48 V=46 I=47ag=28 C=28 C)

Էր մինայկեց մի, որ արար շնութիւն յոլով ժամանակս. եւ ունէր սովորութիւն մի բարի. զի յեր զար 'ի շնութենէն 'ի խուցն իւր, նայ ձգէր զկնկուղն եւ հանկրիճէր մոխիր 'ի վերայ գլխոյն իւր եւ սկըսանէր սաղմոսել եւ ծունդր դնելով լար հառաջանաւք եւ ջերմ արտասաւք. հարկանէր զերեսն եւ զկուրծսն եւ ճոխէր զմորուսն եւ թքանէր 'ի նայ. ձանրացաւ սատանայ յաղաւթից նորա. գայ սատանայ 'ի գիշերի մի եւ ասէ ցնայ. ա՞յ գարշելի պեղծ, քանի անհանգիստես զմեզ եւ նեղայցնես. զի գաս առնես զկամս մեր եւ շնաս եւ ուրախ առնես զմեզ. եւ դարձեալ տրտնջես զինէն. եւ առ Աստուած լաս եւ հառաչես եւ տըր[տ]մեցնես զմեզ. եւ ասէ միայնայկեացն. ով դու նզովեալ շուն, որ մեղաւք ոչ յայգիս այս խուցս դարբնոց է. գաս դու եւ կռանով հարկանես զգլուխ իմ. եւ ես յիմարիմ եւ գործեմ զմեղս. իսկ յորժամ զարթնում. եւ խելք իմ գայ. ես մեկ կռան քեզ հարկանեմ. զի Աստուած ողորմած է եւ ոչ թողու զիս 'ի ձեռս քո. եւ յանժամ շնորհաւքն Աստուծոյ հալածեցաւ դեւն պոռընկութեան 'ի նմանէ:

Ցուցանէ առակս, թէ կռան դիւին բորբոքումն եւ զաւրութիւն. զի անտես լինելով հնարիւք որսա զազգս մարդկան եւ տա՛ գործել զմեղս եւ այնու անապաշխարհ մարդիկ տանի 'ի դժոխս եւ անշէջ հուրն: Իսկ կռան միակեցին, թէ զեղջ գալով՝ ապաշաւեալ լալով եւ ապաշխարութեամբ եւ հառաչմամբ ջախջախեալ զգլուխն սատանայի զերծան[ի] 'ի ձեռաց սատանայի եւ լինի որդի արքայութեան եւ ժառանգ Աստուծոյ:

ԽԹ. ՄԻԱՅՆԱԿԵԱՑ ՇՈՒՆ ԵՒ ՀՈԳԵՏԵՍ ՎԱՆԱՀԱՅՐ
(49 V=47 I=48ag=12 C=12 C)

Էր միայկիացեաց մի ալ եւ արար շնութիւն գ. ամ. եւ հայր վանացն հոգէտես էր եւ ոչ կարեր իմանալ. եւ յաւուր միում յիմացաւ հայրն զչար գործս նորա. կոչեաց զնայ եւ ասէ. ասայ ինձ, թէ յուր էիր յայսմ գիշերի. եւ ընդ է՞ր բարկացուցեր զԱստուած. եւ անկաւ առ յոտս նորա եւ ասէ. մեղայ առաջի Աստուծոյ եւ այս .գ. ամ է. որ շնայի. եւ ասէ հայրն. զինչ գործ առնէիր, որ Աստուած յինէն ծածկէր զչարն քո. եւ նայ ասէ, թէ իմ սովորութիւն այն էր, որ յամէն գիշեր երթայի 'ի շնալ՝ զութ կանոն սաղմոսն եւ զապաշխարութեան շարականն լալով ասէի եւ հառաչանաւք 'ի գնալն. եւ յայսմ գիշերի ծուլացուց զիս չար դեւն եւ անյուսացուց, թէ չէ քո աղաւթքն ընդունելի եւ աւգուտ. եւ ես բնաւ զԱստուած ոչ յիշեցի եւ ոչ սաղմոս ասացի. եւ ասէ. աւրհնեալ է եւ աւրհնեալ է ողորմութիւն Աստուծոյ եւ քաղցրութիւն եւ ոչ կամի զկորուստ մարդոյ. եւ արդ որով հետեւ Աստուած ոչ յիշէր զշնութիւն քո. նոյնպէս եւ ես թողում յայսմ գիշերիս ողորմութեամբ Աստուծոյ. եւ նայ դարձաւ յԱստուած եւ եղեւ այր կատարեալ ապաշխարութեամբ եւ բարէգործութեամբ:

Ծ. ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՔ ԵՒ ԿԱՐՊԵՏ
(50 V=48 I=57 B)

Արք երկու երթային 'ի ճանապարհ եւ գտան կարպետ մի. եւ մեկն խեռայբարոյ էր եւ հնարեցաւ. զի կարպետն իւր միայն լիցի. ասէ յընկերն իւր. եկ գաս, որ բաժանեմք զկարպետն. եւ նայ ասէ. ա՞յոյ զամ. եւ նայ ասէ. տուր յիս .բ. դեկան եւ առ զկարպետն, որ զբանս ողորդ լինի. եւ ընկերն զարմացաւ ժամի. եւ ապայ եկն 'ի միտս իւր եւ սգաստացաւ եւ ասէ. ով եղբար, ես զինչ պարտէի քեզ, յեր չէաք գտեալ զկարպետս:

Ցուցանէ առակս, թէ ոք դնէ զրպարտութիւն 'ի վերայ քո եւ ջանայ խաբել զքեզ եւ յաւել իրք առնէ 'ի քէն, զոր ոչ պարտիս, մի նեղանաս. զոր առնեն միմոսք:

ԾԱ. ԽՆԱՄԵԽԱԻՍ ՄԵԾԱՏՈՒՆ ԵՒ ԿՈՅՍ

(51 V=49 I=56ag=65 B=136 D)

Այր մի մեծայտուն գնաց 'ի խնամէխաւսք որդոյ իւրում ըստ սովորութեան մարդկան. եւ զար կուսն, զոր ուզէր, նստաւ մերձ եւ ասէ. ով հայր, աւրհնեալ է գալուստ քո. ապայ թէ գաս, որ 'ի Հռոմ երթանք, բարիոք առնես. եւ անդի դառնամք յԵրուսաղէմ եւ ապայ ելանեմք 'ի Խոր Վիրապն. եւ ասէ այրն. ով որդեակ, ես եկի, որ զքեզ 'ի յիմ տուն տանիմ. եւ դու կամիս զիս զրկել 'ի տանէ իմէ:

Ցուցանէ առակս, թէ Քրիստոս եկն 'ի խնդիր մարդկան, նայ ամենայն ոք ընդ իւր կամացն երթայ եւ ոչ լսէ կոչմանն Քրիստոսի: Ասէ զառակս վարդապետն. յորժամ երթայ քարոզէ. եւ ոչ ոք գայ 'ի քարոզն:

ԾԲ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ՈՒՂՏ ՄԵՐՁ Ի ՄԱՀ

(52 V=50 I=57ag=66 B)

Աղուէսն եգիտ ուղտ մի մերձ 'ի մահ եւ նստաւ առ նմայ եւ ասէ ուղտն 'ի յաղուվէսն, թէ յինչ պէտս եկիր այստ. եւ ասէ աղուվեսն, թէ մեռանիս. որ ես ուտեմ զմիս քո. եւ ասէ ուղտն. ա՞յ զերի աղուվէս, ոչ կարես համբերել. զի պարանոց իմ յերկայն է եւ հոգիս իմ յուշ ելանէ. ասէ աղուէսն. բաց ես կարի համբերող եմ ազգաւ. թէ եւ 'ի .խ. աւր ալ յուշանաս 'ի մեռանելդ:

Ցուցանէ առակս, թէ պարտէ համբերել վարդապետին եւ հեզութեամբ աւկտեցուցանել ժողովրդեան. եւ քաղցրութեամբ կոչել զմեղաւորսն եւ զհեթանոսսն յապաշխարութիւն. քան զի այլ ոչ կայ բարութիւն, քան զհամբերութիւն. զի առաքեալքն եւ մարգարէքն եւ հայրայպետքն համբերութեամբ լուսաւորեցին զաշխարհս:

ԾԳ. ՄԻԱՅՆԱԿԵԱՑ ԵՒ ՏԱՃԻԿ ԻՇԽԱՆ

(53 V=51 I=67 B)

Միայկեաց մի եկ 'ի գիւղ մի քաղցեալ, եւ ոչ անկեալ նմայ հաց. եւ ել 'ի շէնէն եւ գտաւ զտաճիկ իշխանին ձին, որ էր 'ի գիւղն. եւ առնու զնայ եւ տանի 'ի միւս գիւղն. ետ եւ էառ հաց մի. հասաւ իշխայն եւ ասէ. ով միայկեաց, ընդ է՞ր կարի առատ տուէր զծանդրայգին ձին իմ 'ի մեկ հաց, իբրեւ զիմար. եւ նայ ասէ. ով բարի իշխան, մի ընդ վար շատայբաներ. զի Քրիստոս հրամայեաց, թէ ձրի առէք եւ ձրի տուէք.

Ցուցանէ առակս, թէ պարտ է զայս ասել առաջնորդին եւ վարդապետին առ ժողովրդին, թէ համբերեցէք եւ մեք տամք զաւրէն Աստուծոյ:

ԾԴ. ԳՈՂ ՔԱՀԱՆԱՅ ԵՒ ԱՅՐԻ

(54 V=52 I=58 ag=12 A=68 B)

Քահանայ մի գողացաւ զկով այրի կնոչ մի եւ էած 'ի յախոռն. եւ կին յիմացաւ. եւ ասէ առ քահանայն. տէր, ժամ է մահուան իմոյ. եկ յախոռն, որ խոստովանիմ. եւ յայն ժամ անցուց զկովն 'ի ներսի տուն եւ անդի 'ի ժամայտուն եւ անդի յեկեղեցին. եւ ասէ կին. տէր, առաջի բեմին պարտ է ասել զմահու խոստովանութիւն. եւ հանին զկովն 'ի բեմն եւ քարշեցին զվարայգուրն 'ի դէմ. իբրեւ մտան յեկեղեցին եւ նստան. յանժամ կին 'ի վեր կալաւ զվարայգուրն եւ ասէ ընդ կովն. ո՞վ գարշելի, զքեզ կով գիտէի. եւ արդ զքեզ պատարագաւղ ո՞վ արար. ասայ ինձ:

Ցուցանէ առակս, թէ այսպէս համբերութեամբ եւ իմաստութեամբ պարտ է առաջնորդին եւ վարդապետին զամենայն ինչ քննել. եւ ստուգել ամենայն քահանայս եւ յիմանալ զվարս նոցա. եւ որ չէ արժանի պատարագի, ծածկայբար յանդիմանել եւ ոչ տայլ թուլ կրկին խաչել զորդին Աստուծոյ անարժան պատարագաւն եւ հաղորդութեամբն. որ չէ բարի անարժանութիւն:

ԾԵ. ԱՅՐ ՄԱՐԴԱՍՊԱՆ

(55 V=53 I=59ag=69 B)

Եւ այր մի մարդայսպան փախեաւ եւ գնաց անցանել ընդ գետն, որ կոչի Նեղոս. եւ տեսեալ յեզր գետոյն առիւծ մի եւ փախեալ ել 'ի ծառ մի մեծ. եւ կար անդ բնակեալ ահայգին վիշապ մի. եւ նայ յահէն 'ի ծառէն 'ի վար անկաւ. եւ ահայ ել 'ի գետէն կոկորդիլոսն եւ եկուլ զնայ:

Ցուցանէ առակս, թէ ոչ կայ հնար, որ կարէ փաղչել մեղաւորն 'ի ձեռացն Աստուծոյ այն, որ ոչ զոչ[ան]այ եւ դիմէ 'ի Քրիստոս, խոստովանի եւ ապաշխարէ արտասուաւք զմեղս իւր եւ զանցանս քաւէ եւ սրբի եւ մաքրի 'ի չար գործոցն, զոր գործեալ է զամենայն մեղս, եւ ազատի 'ի մեղացն, նոքա յայս կեանքս եւ կամ յան կեանքն առնուն զհատուցումն գործոց իւրեանց, որպէս ասէ Յոբ, թէ որ չարն է, մի յուսասցի անպարտ լինել, եւս առաւել մարդայսպանք եւ զրկողք, որ զրկեն եւ առնեն զինչք մարդոյ:

ԾԶ. ԵՐԻՆՁՔ ԵՒ ԵԶԻՆՔ
(56 V=54 I=60 ag)

Երիճք խայտային եւ զեզինս նախատէին, թէ ոչ դադարէք 'ի հալածանաց եւ յաշխատելոյ. եւ ահայ եկն թագաւոր գաւառին. եւ ժողովեալ զերիճսն եւ սկըսան զենուլ զնոսա. զի ճաշ կազմեսցեն թագաւորին եւ զաւրաց նորա. եւ ասեն եզինքն. ահայ որդեաք մեր, վասն աւուրս այս պարապորդ հանքչէիք եւ գիրանայիք:

Ցուցանէ առակս, թէ այս պէս ասեն ամենայն սուրբք ընդ դասս ձախայկողմեանն, թէ ահայ որդեաք, այս կար ձեզ պահած, որ 'ի հուրն երթայիք. զի 'ի յան կեանքն բտէիք զմարմինս ձեր հանգիստեամբ եւ ամենայն մեղաւք. եւ զարդարսն, որ աշխատէին, դուք նախատէիք եւ ծաղր եւ այպն առնէիք:

ԾԷ. ՎԱՐԱԶ ԵՒ ԱՂՈՒԵՍ
(57 V=55 I=61ag=70 B)

Վարազն սրէր զատամուսն իւր մեծաւ աշխատութեամբ եւ ջանիւ. եւ գայ աղուվէսն եւ ասէ. ընդ է՞ր աշխատիս. զի առ ժամս ոչ կայ կասկած կռուոյ եւ պատերազմի. եւ ասէ վարազն ընդ աղուվէսն, թէ լռեայ դու զարշելի աղուէսուկ. զի դու չես հմուտ պատերազմի, եւ արդ ո՛յ կարէ յանժամն պարապիլ եւ զէն սրել. զէն յանժամն սրել պիտի, որ պարապ է:

Ցուցանէ առակս, թէ յայս կեանքս պարտ է ջանալ եւ զոչանալ եւ ապաշխարել զմեղս. զի յաւուր դատաստանին ոչ կայ հնար ներելոյ եւ կամ ողորմելոյ, որպէս ցուցանէ մեծայտուն եւ 'ի յիմար կուսանքն:

ԾԸ. ԱՅՐ ԵՒ ՄԵՂՐԱԿԱԹ ԾԱՌ
(58 V=56 I=121ag)

Ծառ մի բարձր յոյժ եւ տերեւքն նորա մեղր կաթեցուցանէին. եւ այր մի ելեալ 'ի նմայ լզէր զտերեւն. եւ մկունք բ. հատանէին զծառն. եւ կայր առաջի ծառոյն գուբ մի սոսկալի եւ ահագին վիշապ մի 'ի նմայ. եւ այրն այն ոչ երկնչէր եւ ոչ դադարէր 'ի լեզելոյ զտերեւն:

Ցուցանէ առակս, թէ ծառն ժամանակս եւ մեղրն 'ի նմայ մեղքն է կամ հեշտութիւն, զոր գործեմք լեզուաւք. եւ մկունքն տուն է եւ գիշերն, որ հատանեն զժամանակս մարդոյ. գուբն գերեզմայն է. եւ վիշապն մահն է. վայ մեզ. որ հեշտացեալ եմք 'ի մեղս եւ ոչ վախեմք յայսմանէ, որ կան առաջի մեր:

ԾԹ. ՈՒՂՏ ԵՒ ԳԱՅԼ ԵՒ ԱՂՈՒԵՍ
(59 V=57 I=75ag=86 B)

Ուղտն եւ գայն եւ աղուվէսն եղեն եղբարք եւ գնացին եւ գտան հաց մի մաքուր. եւ ասեն. որ 'ի մէնջ մեր աւագն է. նայ կերիցէ զհացս. ասէ գայն. ես այն գայուն որդին եմ, որ Նոյ 'ի տապան էառ. եւ ասէ աղուէսն. ով ողորմելի, դու իմ կսեր թոռին ընկերն ես. ուղտն առեալ զհացն կանկեցաւ եւ ասէ. ով

որդեակ, ապայ այս ջղերքս յերեկ է եղած: Եւ յառաջն անուն դրին ուղտոյն Բազոս եւ գալոյն Մարկոս. աղուէսուն Թոռոս. եւ կամեցաւ գալն ձկտիլ 'ի վեր. զի առցէ զհացն զյուղտէն, եւ նայ զգլուխ էառ 'ի ծկայմէջն. եւ սկսաւ գալն կըզկընծալ. նայ աղուէսն 'ի շուրջ գար. ասէր ձայնիւ եղանակաւ առակել. բարձր է Բազոսն. կըզնծայ Մարկոսն Մարկոսն եւ շուրջ գայ Թորոսն:

Ցուցանէ առակս, թէ չէ պարտ աղքատին ընդ մեծատան ձկտիլ եւ ոչ 'ի կռիւ մտանել. զի ոչ կարեն 'ի գլուխ ելանել. որպէս ասի 'ի բան առակաւոր, թէ խեցգետինն 'ի հետ աւձին ճպըլկտեցաւ. նայ կտրեցաւ. եւ թէ գրաստ. որ գանձ է բարձեալ, 'ի տիղմն ոչ անկանի. ապայ աւրն վերջին լինի արդար իրաւունք եւ դատաստան:

ԾԹա. 60 B Ուղտ եւ գայլ եւ աղուեսք եղբարք եղեն եւ 'ի ճանապարհին գտան .գ. սուրբ հաց. եւ ասեն ցմիմեանս. որ աւագ է, նա կերիցէ. սկսան ասել զտարիքս իւրեանց. ասէ աղուեսն. ես այն աղուեսն եմ, որ Ադամ անուն եդ ինձ. եւ գայլն ասէ. ես այն եմ, որ զիս Նոյ եմոյծ 'ի տապան: Եւ տեսեալ ըղտոյն. որ նոքա աւագ ելան քան զնա. եւ հացն կելէ ձեռացն. առեալ զհացն 'ի բերան յարոյց եւ բարձրացոյց ասելով. մի թէ ես երեկեայն աւուր տղայ եմ. որ այսչափ պոյ եմ մեծցուցել. եւ սկսաւ ուտել զհացն. եւ աղուեսն լայր եւ աղաղակէր ձաթկելով, մինչեւ կոխեալ սատակեաց զաղուեսն:

Ցուցանէ, թէ մեծատունք եւ առաջնորդք ծծեն զյղեղս ժողովրդեան. եւ շատք այն են, որ աղքատանան:

ԾԹբ. 39 C Ուղտ մի, գայլ մի եւ աղուէս մի գնացին 'ի մէկ ճանապարհ եւ գտին. բլիթ մի հաց, որ անկեալ էր ճանապարհորդացն. եւ ասեն ընդ միմեանս. զի՞նչ արասցուք զսայ. զի չէ բաւական. մեզ ամենեցուն. ասէ աղուէսն. սայ մէկի կերակուր է. եւ որ աւագն է 'ի մէնջ եւ աւուրքն հին, նայ կերիցէ զսայ. եւ հաւանեցան երեքինն բանին. հարցին ցգայլն. ասա՞ զթիւ ամաց քոց. եւ նայ ասէ. ես այն գայլն եմ, որ յաւուրս ջրհեղեղին Նոյ 'ի տապանն էառ զիս. եւ ասէ աղուէսն. իմ թոռին ընկեր ես. ես այն աղուէսն եմ, որ ստեղծ զիս Աստուած եւ տարաւ առաջի Ադամայ, որ անուանեաց զիս աղուէս: Եւ տարաւ ուղտն զբերանն եւ էառ զբլիթն եւ վերացուց 'ի յաւդս, սկսաւ ծամել եւ ասէ. երբ դուք այդ չափ էք, զայդ կու ասէք. ապայ այս սրօնքս, որ ես ունիմ, չէ յերեկի տղայ ելած. գայլն ու աղուէսն սկսան շուրջ զնովաւ գալ. չ'կարացին վնասել նմայ եւ 'ի բաց կացին 'ի նմանէ եւ փախան:

Ուղտն [նման է] ողորդ մարդոյ եւ աղուէսն ու գայլն անիրաւաց. որ կամեցան խաբել զուղտն որպէս խաբեբայ մարդիքն զայնմեղսն. այսպէս եւ սատանայ հնարի խաբել զարդարսն եւ զամբիծսն. բայց որ առաքինութեան եւ սրբութեան բարձր են քան զկարծիս սատանայի, ոչ հաղթին 'ի նմանէ որպէս ուղտն ոչ հաղթեցաւ 'ի նենգաւոր գազանացն՝ 'ի գայլոց եւ յաղուէսէն. որք են զուարթութիւնք սատանայի. զի աղուէսն քծնուի եւ խաբող եւ գայլն չար է եւ պատառող. որդին Աստուծոյ կործանէ զուարթութեամբ իւրով:

Կ. ԹԷ ՈՐՊԷՍ ՆՈՐՈԳԻ ԱՐԾԻՒ
(60 V=58 I=70 B=13 C=13 C)

Արծիւն յորժամ ծերանայ, յանժամ բարձրանայ մերձ 'ի յարեգակն եւ ջերմանայ եւ գայ 'ի վերուստ մեծաւ զաւրութեամբ եւ իջանէ 'ի ջուրց եւ 'ի սառն աղբիւր մկրտի եւ ելեալ թաթափի. եւ թափին 'ի նմանէ հնացեալ փետուրքն. եւ մանկանայ եւ նորոգէ ամենայնիւ:

Ցուցանէ առակս, թէ ով մարդ՝ որ ծերացար անաւրէն եւ չար գործովք, բարձրացիր հոգով առ Քրիստոս եւ ջերմացիր հրով սիրոյ նորայ եւ մկրտեայ զանձն քո 'ի ջերմ արտասուս եւ լուայ արտասաւք եւ հառաջանաւք զշարաւ մեղաց քոց մեծայյուսով եւ ապաշխարութեամբ. եւ ողորմութեամբ Աստուծոյ թափին 'ի քէն հնացեալ փետուրք մեղաց քոց. եւ ազատիս 'ի դժոխոցն եւ հասանիս բարեացն Աստուծոյ. որպէս ասէ մարգարէն, թէ լնու Աստուած 'ի բարութենէ զցանկութիւն քո. նորոգեսցի որպէս արծըւոյ զմանկութիւն քո:

Կա. 62ag Արծուին յորժամ ծերանայ. բարձրանայ մինչեւ 'ի տապ արեգականն, եւ ջերմանայ եւ գայ 'ի վերուստ մեծ լռութեամբ: Եւ իջեալ 'ի սառն աղբիւր մկրտի եւ ելեալ թաւալի եւ թափի 'ի նմանէ հնացեալ փետուրն նորա. եւ նա մանկանայ եւ նորոգի ամենեւին:

ԿԱ. ԲԺԻՇԿ ԹՌՉՈՒՆ
(61 V=59 I)

Թռչուն մի սուրբ եւ ցանկալի, որ կոչի քարայդր. որ թէ հիւանդանայ մարդն մահու, բնաւ ոչ հայի 'ի նայ. ապայ թէ հիւանդն ոչ է մահու, նայ երթայ մերձ հիւանդին ցնծալով եւ բերանով շոշափէ զնայ եւ հարկանէ թեւաւքն եւ զցաւն քարշէ եւ զհիւանդն ողջայցուցանէ:

Ցուցանէ առակս, թէ տր[տ]մի Քրիստոս, յորժամ տեսանէ զմեղաւորն, որ չունի կամք դառնալոյ 'ի մեղաց, եւ յանժամ դարձուցանէ զերեսն իւր 'ի նմանէ. ապայ որ զոջայ եւ դիմէ առ 'ի նայ, նայ ցնծայ Քրիստոս 'ի վերայ նորա եւ համբուրէ զնայ. եւ թեւք սուրբ հոգոյն հովանի լինի նմայ եւ պահէ զնայ:

ԿԱա. 112ag Է սպիտակ հաւ մի 'ի թագաւորաց տունն. եւ յորժամ մարդն հիւանդանայ, նա բերեն զհաւն մօտ 'ի հիւանդն: Թէ ունիցի հիւանդն դարձ, որ առողջանայ. նա հաւն քաղցրութեամբ հայի 'ի հիւանդն եւ գիրկ արկանէ եւ զհով հարու թեւովն: Ապա թէ մահու լինի, հաւն խոլոր հայի եւ դարձուցանէ զերեսն 'ի հիւանդէն եւ փախչի. եւ այն հաւովն կարեն գիտել մարդիկք զմեռանիլն եւ զապրիլն:

Ցուցանէ: Հաւն Աստուծոյ օրինակ է՝ եւ հիւանդն մեղաւորին. արարիչն Աստուած հայի 'ի մեղաւորն, որպէս հայի հաւն 'ի հիւանդն. եթէ կամք ունի, որ դառնայ եւ զոջանայ, նայ Աստուած քաղցրութեամբ 'ի մեղաւորն հայի եւ գիրկ արկանէ եւ համբուրէ. զի ոչ կամի զմահ մեղաւորին՝ այլ զդառնալն 'ի չար ճանապարհէն: Ապա թէ չունենայ կամք մեղաւորն դառնալ 'ի մեղաց, նա Աստուած դարձուցանէ զերեսն 'ի մեղաւորէն: Որպէս ասէ մարգարէն. դարձուցից զերեսս իմ 'ի նոցանէ՝ եւ ցուցից նոցա:

ԿԲ. ԼՈՒՍԻՆ ԵՒ ԱՐԵԳԱԿՆ
(62 V=60 I=90 ag=156 D)

Լուսին խաւարի եւ թերացեալ պակասի լուս նորա. եւ գայ հանդէպ արեգակայն եւ առնու 'ի նմանէ կրկին զլուս իւր:

Ցուցանէ առակս, թէ՝ ով մարդ, մեղար եւ խաւարեցօ լուսն սուրբ աւազանին, որ կար 'ի հոգի քո. եւ պակասեաց 'ի քէն շնորհքն. ձրի մի երկմտիր թերէհաւատութեամբ. այլ յուսայ 'ի Քրիստոս հաստատուն հաւատով եւ դիմէ առ նայ զոջ[մ]ամբ եւ արտասուաւք. եւ նայ ծագէ 'ի լուսոյ իւրոյ 'ի հոգի քո եւ սրբէ զանաւրէնութիւնս քո ողորմութեամբ:

ԿԳ. ՄՐՋՄՆԱՌԻԾ
(63 V=61 I=93 ag=14 C=14 C=159 D)

Ցանմարդայբնակ լեառն 'ի կայ մոջիմի մեծայգուն քան զոչխար մի. գայ առիւծն եւ խառնակէ ընդ նմայ. եւ ծնանի նոցա զաւակ, որ կէս անձին առիւծ է եւ կէսն մրջէման. եւ կոչեն զնայ մրջիմառիւծ. եւ յորժամ ծնանի դիմէ առ մայրն. զի կերիցէ հունդ. եւ ոչ կարէ ուտել. զի հայրն մսայկեր է. եւ դիմէ առ հայրն. զի կերիցէ միս. եւ ոչ կարէ ուտել. զի մայրն հնդակեր է. եւ այսպէս երթայ եւ գայ առ հայրն եւ առ մայրն. եւ 'ի սովոյն սատակի:

Ցուցանէ առակս, թէ յայտնայպէս վա՜յ ինձ զդասս անզեղջ մեղաւորացն. զի ծնունդ են Աստուծոյ արարչութեամբ եւ սուրբ աւազանաւն. եւ դարձեալ ծնանին 'ի սատանայէ մեղաւք եւ անաւրէնութեամբ. դիմեն առ Աստուած եւ հաւատան, որ կայ Աստուած. եւ գիտեն, որ դատաստան կայ. եւ ոչ կարեն ուտել զկերակուրն Աստուծոյ զսրբութիւն եւ զապաշխարութիւն եւ զամենայն գործս բարեաց. զի մեղաւք կապեալ կան 'ի սատանայէ. եւ դիմեն 'ի սատանայ մեղաւք. եւ ոչ կարեն ուրանալ զԱստուած. եւ

միայւորեալ են 'ի սատանայ անհաւատութեամբ եւ գիտեն, որ Աստուած կայ եւ յարութիւն. եւ այս պէս են կապեալ յԱստուած հաւատով եւ են կապեալ 'ի սատանայ չար գործով. եւ ոչ են կատարեալ բաժին սատանայի եւ ոչ Աստուծոյ. եւ այսպէս երթան առ Աստուած հաւատով եւ առ սատանայ մեղաւք եւ հեշտայսիրութեամբ. եւ կան .Բ. միտ եւ անհաստատ. եւ գայ մահն յանկարծակի եւ հանէ զնոսա յաշխարհէ. եւ լինին բաժին դժոխոց:

ԿԴ. ԱՐՁ ԵՒ ԽԱՂՈՂ
(64 V=62 I)

Գազանք եւ երաք ամենայն 'ի մի ժողովեցան վասն խնդրոյ ինչ իրաց եւ ասեն 'ի սպասաւորքն իւրեանց. գնացէք 'ի խնդիր կերակրոյ յամենայն ազգէ. զինչ եւ սահմանեալ է կերակուր նոցա. եւ յառաջ եկեալ առջն ասաց. վասն Աստուծոյ, որ ոչ մոռանաք, որ երթաք 'ի մի ոմն յայգին վասն խաղողի. եւ ասեն գործայկալքն, թէ դու երթ. զի հմուտ ես գործոյն. եւ նայ տրտընջէր եւ ասէր զգէլս տեսէք, որ զիս միայն առաքեն:

Ցուցանէ առակս, թէ՝ ով մարդիք, թէ զինչ գործէք եւ կամ զինչ խորհիք. թէ չար եւ թէ բարի, թէ փարթամանանք եւ թէ աղքատանանք. զայգին Քրիստոսի մի մոռանաք՝ զյոյսն եւ զապաշխարութիւն եւ զոչումն արտասաւք, որ է ողկոյզ քաղցրայճաշակ. որով Աստուած կերակրի եւ ցնծայ եւ ուրախանայ հանապազ: Դարձեալ ցուցանէ առակս այլ միտք, թէ պատահի, որ բան եւ գործն եւ իրքն մարդոյն 'ի պէտք լինի. բաց պատեհլի չէ, որ շուտով յանձն առնու, մինչեւ յոլով աղաչեն զնայ:

ԿԵ. ՁԿՆՈՐՍ ԳԱՅԼ ԵՒ ԱՂՈՒԵՍ
(65 V=63 I=65 ag=73 B=138 D)

Գալն եւ աղուէսն եղեն եղբարք եւ գնացին որսալ ձուկն. եւ ասէ աղուէսն ցգալն. արկ զազի քո 'ի գետն եւ ըմբռնեսցուք ձկունս. եւ էր ժամանակն ձմեռնային. եւ իբրեւ արկ գալն զազին 'ի ջուրն, նայ պաղեցաւ եւ փակեաւ ազին գալուն. եւ ասէ աղուէսն. ահայ եղբար, ամենայն զաւրութեամբ քո ցանձ տուր եւ քարշէ զազի քո. զի բազում ձկունք ըմբռնեցան. իբրեւ ցանցեաց, հատաւ ազին եւ նայ կըկզեալ վայէր զանձն իւր եւ լալով ասէր. վայ է ինձ, թափեցայ յազոյս եւ ձուկն ոչ ըմբռնեցի:

Ցուցանէ առակս, թէ այսպէս կապէ զմեզ սատանայ մեղաւք մինչեւ 'ի մահ եւ թափիմք յայս կենացս ու յայն կենացն. վա՞յ ու Ռ. վայ:

ԿԶ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ԹՂԹԱՏԱՐ ԳԱՅԼ
(66 V=64 I=67 ag=74 B=139 D)

Աղուէսն խաբեաց զգալն եւ ետ նմայ թուխտ տանել. զի տարցէ 'ի գեղին տանուտէրքն. եւ բերել կերակուր եւ իբրեւ գնաց գալն 'ի գիւղն, թափեցան 'ի վերայ նորա շունքն եւ խածատեալ վիրայվորեցին զնայ. եւ իբրեւ եկն ողորմելի կենաւք, ասէ աղուէսն. ընդէ՞ր ոչ ցուցեր զթուխտն. ասէ. այո՞յ ցուցի. բաց .Ռ. շուն կար, որ ոչ գիտէր զգիրն:

Ցուցանէ առակս, թէ մի վիճիր եւ մի անկանիր 'ի մէջ վիճողաց եւ բազում տգիտաց եւ աներկեղաց. այլ իմաստութեամբ փախիր 'ի դիւաց. եւ 'ի նոցին կամակատարաց եւ յանիրանաց:

ԿԶա. 66ag Ասի յառակաց, թէ աղուեսն գտեալ թուղթ մի գրեալ. եւ տարաւ առ գայլն եւ ասաց: Այս չափ ժամանակս աշխատեալ եմ եւ զմարդիկ բարեխօս եմ ձգեալ եւ 'ի պարնէն գիր եւ հուքմ եմ հանեալ. որ յամէն գեղ եւ յամէն գեհ՝ ուր հանդիպիս, ոչխար մի քեզ տան եւ յամէն տուն հաւ մի քեզ բաժին հանեն: Այլ ո՛չ շուն եւ ո՛չ մարդ քեզ զահմաթ չտան: Եւ այնպէս խաբեալ գայլուն գնաց զհետ աղուեսուն: Եւ յորժամ գնացին, ինքն աղուեսն եկաց 'ի վար բլրի միոյ՝ յեզր գեղջն. եւ յուղարկեաց զգայլն 'ի գեղն, թէ գնա, առ զքո ոլոփայն. եւ ես զթուղթս պահեմ. ով որ չտայ, նա ես ցուցանեմ, որ տան: Եւ գայլին

հաւատացեալ. մինչդեռ երթայր յեզր գեղջն. յայնժամ մարդիկք եւ շներն 'ի մէջ առեալ կամէին սատակել. իսկ գայլն ձայնեաց առ աղուեսն, թէ բեր զպարոնի հուքմն. որ տեսնուն այս մարդիկս եւ հաւատան. որ պարոնի հրամանաւն եմ եկեալ. իսկ աղուեսն պատասխանի տուեալ ասէ՝ ով գայլ, 'ի գեղջդ կարդացող չկայ՝ լսող չկայ՝ ի՞նչ կայ, որ թուղթ բերեմ. եւ այնպէս խաբեալ սատակեցին զգայլն:

ԿԷ. ԽԱՒՍՈՂ ԵՒ ԱՂՈՒԵՍ ԵՒ ՇՈՒՆ
(67 V=65 I)

Խաւսողն աղաղակելով աղաւթէր 'ի ծառ մի. գայ աղուէսն եւ ասէ, թէ հրամայէ եւ էջ առ մեզ. զի փիլիսոփայ չունինք. զի այսաւր մեծ Կարապետին տաւն է Յովանու. որ 'ի միասին տաւնեմք. եւ նայ ասէ. սակաւիկ մի համբերէ. մինչեւ եկեսցէ քեռին իմ, որ հանդիսիւ տաւնեմք զտաւնս: Իբրեւ առաւոտեաց, գայ քերծն եւ առնու 'ի փող աղուէսուն. եւ բազում այլ ընդ այլոյ ձայնս տարածէր աղուէսուն: Ասէ խոսաւղն. վա՜յ ինձ, թէ որպիսի գարշելի ձայնիւ կամէիր կատարել զտաւն մեծ Կարապետին Յովանու:

Ցուցանէ առակս, թէ որ նենգել ջանայ ընկերին իւր, ինքն անկցի 'ի յորոգայթն, զոր գործեաց. որպէս Քրիստոս հրամաէ եւ Դաւիթ եւ Սողոմոն:

ԿԷա. 160ag Ասի յառակաց՝ թէ աքլօրն օթեր էր 'ի ծառ մի. եւ 'ի մէջ գիշերին սկսաւ փառաբանել զԱստուած եւ աղաղակէր անտանելի ձայնիւ, լուեալ աղուեսն եւ գայ առ աքլօրն եւ ասէ. սուրբ քահանայ, էջ 'ի ծառէդ 'ի վայր. զի այսօր տօն է մեծի սուրբ Կարապետին. եւ փիլիսոփայ չունինք, որ կատարենք զտօնս: Ասէ աքլօրն. սակաւ մի համբերեա, մինչեւ գայ քեռին իմ, որ հանդիսիւ տօն առնեմք. եւ իբրեւ առաւօտ եղեւ, գայր շուն մի քերց յանկարծակի եւ բռնեց զաղուեսն. եւ նա այլ ընդ այլ ձայնէր եւ գոռայր: Ասէ խոսօղն. վայ ինձ, թէ այդպիսի գարշելի ձայնիւդ կամէիր կատարել զտօն մեծի սուրբ Կարապետին:

Ցուցանէ առակս, թէ որ ջանայ նենգել ընկերին իւրոյ, ինքն անկցի յորոգայթն, որպէս Քրիստոս հրամայէ եւ Սաղոմօն. որ փորէ:

ԿԸ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ԳԱՅԼ
(68 V=66 I=68 ag=77 B=15 C=15 C)

Աղուվէսն ետես զպանիրն յորոգաթն, երթայ առ գայն եւ ասէ. ո՞վ եղբար, եկ առ զպանիրն եւ կեր. զի ուրբաթ է,. եւ ես 'ի պաք եմ. եւ եկն գայն եւ ջանար առնուլ զպանիրն. եւ անկօ որոգաթն եւ թռաւ պանիրն եւ էառ աղուվէսն եւ սկսաւ ուտել: Ասէ գայն. վայ եղբար, մի ուտեր. ուրբաթ է աւրս, որ չէ բարկանայ քեզ Աստուած. եւ ասէ աղուէսն ցգայլն. թէ ուրբաթն այդ է, որ 'ի պարանոցդ անկաւ, եւ այտ է բարկութիւն Աստուծոյ. եւ սկսաւ գայն ցանձել յայս կուս եւ յան կուս. եւ աղուէսն ասէ. ընդ նոյնդ եւ ես ցանցեցի երբեմն եւ ոչ զերծայ. եւ ասէ գայն. վայ է ինձ. զի նեղիմ չարայչար. եւ ասէ աղուվէսն. ո՞վ եղբար, դու չես վա՜յ. մինչեւ գայ տէր որոգայթիդ:

Ցուցանէ առակս, թէ սգաստ լեր, որ չէ խաբիս 'ի սատանայէ եւ 'ի նենգօր մարդկանէ. զի կապէ սատանայ զմարդ 'ի մեղք եւ 'ի հեշտութիւն, եւ յանժամ տաս վա՜յ անձին քո, որ գայ Քրիստոս 'ի դատաստան:

ԿԸա. 75 F Տեսեալ աղվեսուն հոր մի եւ 'ի վերայ ականատ եւ կտոր մի պանիր 'ի վերայ եւ առեալ աղվուեսուն բռքար եւ նստաւ 'ի զատէն սուտ, թէ կուտեմ. եւ էկեալ գայուն տեսեալ եւ ասաց. ի՞նչ կու առնես. եւ ասաց, թէ հոր մի պանիր գտայ եւ առի. կտոր մի կուտեմ. եւ գնաց գայն, թէ ես այլ կու առնում. եւ անկաւ 'ի հորն. եւ պանիրն 'ի զատն ընկաւ. եւ առեալ աղուվեսուն պանիրն եւ գնայր 'ի դարն 'ի վեր. եւ ասէր գայն. վայ զանտէրս. եւ ասաց աղուէսն, թէ ես եմ յանտէր, որ 'ի դարս 'ի վեր կուերթամ, թէ չէ քեզ հիմա հազար տէր գայ:

ԿԹ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ՍԱԳՔ
(69 V=67 I)

Աղուէսն էմուտ առ սագերն ուտել զնոսա. եւ նոցա բնութիւն է, որ սղան ձայնիւ. եւ ասէ աղո՞ւվէսն, թէ դուք սուս էք, նայ ես կարի սուս եմ եւ սուս:

Ցուցանէ առակս, թէ մարդոյ որ կարիք լինի, նայ ոչ խաւսի յատեան. եւ ընդ քեզ ասէ, թէ մի խաւսիր վասն իմ, դու մի խաւսիր, որպէս աղո՞ւվէսն եւ սագն:

Հ. ԱՒԶ ԵՒ ՀՈՂԱԳՈՐԾ
(70 V=68 I=71 ag=142 D)

Աւձն եղեւ ընդեկնոս հողայգործի միոյ. եւ եկեալ 'ի գետ ինչ առեալ 'ի ծոց իւր զաւձն անցին ընդ գետն եւ աւձն ոչ կամեցաւ ելանել 'ի ծոցոյ նորա. եւ գնացին 'ի դատաստան բազում դատաւորս. եւ ոչ արարին դատ 'ի մէնջ նոցա. եւ եկեալ առ աղուէսն ասեն. արայ մեզ դատաստան. իմացաւ աղուվէսն զպաճառն եւ ասէ. միայկանի դատաստան ես ոչ կարեմ առնել. ել աւձ դու 'ի ծոցոյն եւ երես յերես ասացէք ինձ զբանս ձեր. եւ իբրեւ ել աւձն 'ի ծոցոյ նորա եւ գնաց կանկեցաւ, ակն արկեաց աղուէսն հողայգործին, թէ հար զնայ մասուսովդ, որ 'ի ձեռք է, եւ սպան. եւ նա հարեալ սատակեաց զաւձն եւ սկսաւ գալարել. գայ աղուէս եւ խաթովն ողորդէ զաւձն եւ ասէ, թէ սնդեկնոս ես, դու այսպէս ողորդ կացիր:

Ցուցանէ առակս, թէ պէս պատրաստ կացիր 'ի նենգաւոր մարդոյ. եւ մի շահիւ միաւորութիւն առներ ընդ նոսա: Դարձեալ եւ առակս այս ցուցանէ, թէ զչարն եւ զնենգաւոր մարդն ողորդէ դատաւորն եւ թագաւորն եւ ամենայն ոք, որ 'ի վերայ կացոյ լինի. եւ տանուտէրն եւ մեծայմեծքն:

Հա. 19 C Այր շինական մի էառ զլուծքն ու գնաց կուցելէր զարտն, եհան զչուխայն ու զհացն ու եդիր 'ի վերայ եւ արար զիւր բանն, մինչեւ քաղցեաւ եւ լուաց զերեսն եւ եկն առնուլ զհացն. եբաց զհացն եւ ետես օձ մի կտուտել, եթող եւ փախեաւ. ձայնեաց օձն եւ ասէ առ նայ. ա՜յ եղբայր, մի վախենայր. արեկ առ իս, որ լինենք սնդիկնոս, որ երդնում քեզ ու դու ինձ, որ նենգութիւն չ'լինի 'ի մեր մէջս. հաւատաց այրն. եւ երդուան մէկ մէկի հետ. ասէ այն մարդն, թէ հրամայեցէք, սնդիկնոս. որ երթամք 'ի մեր տունն. տես զիմ տղայքն եւ պատուեմ զքեզ կաթամբ. եւ գնացին. հանդիպեցաւ գետ մի. մտաւ մարդն, որ անցանէր. ասէ օձն. սնդիկնոս, առ 'ի գիրկտ զիս. դարձօ էառ զինքն 'ի գիրկն. սահեցաւ եւ մտաւ 'ի ծոցն, պատատեցաւ զանձամբն եւ էած 'ի յիրար. եւ այն մարդն մերձ է մեռանել. եկաց բազում ժամանակս եւ գնաց մարդն առ բազումս. եւ ոչ արարին դատաստանս. եւ եկեալ առ աղուէսն եւ ասէ. արայ դատաստան. իմացօ աղուէսն զպատճառն եւ ստեաց զմարդն եւ թովեաց զաւձն եւ ասէ. միականի դատաստան ոչ կարեմ առնել. ել 'ի ծոցոյդ եւ երես ընդ երես ասացէք ինձ զբանս ձեր. իբրեւ ելաւ աւձն 'ի ծոցոյն եւ կանգնեցաւ, աչաւք արար աղուէսն մարդոյն. եւ նայ եհար եւ սպան զաւձն մասուսովն, որ կայր 'ի ձեռին. եւ սկսաւ օձն գալարել. գայ աղուէսն եւ թաթովն մեկնեաց զօձն եւ ասէ. եթէ սնդիկնոս լինես, դու այսպէս ղողոդ կացիր:

Ցուցանէ առակս, թէ նենգաւոր եւ անիրաւ մարդէ 'ի զատ կաց եւ պատրաստ կաց. եւ այլ ցուցանէ, թէ մարդն քանի մանուկ է, 'ի հետ մեղաց շրջի. եւ յորժամ ծերանայ եւ յուժոյ պակասի, ոչ պահոց է եւ ոչ աղօթից, յայնժամ կուղորդի հետ Աստուծոյ:

ՀԱ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ԲՌԱՔԱՐ
(71 V=69 I=80 ag=149 D)

Աղուէս քաղցեաւ եւ ետես 'ի հոր մի բռայքար եւ կարծեաց, թէ պանիր է. անկաւ 'ի հորն եւ սկսաւ ուտել եւ ասէ. վա՜յ ինձ, զի ոչ համ ունի պանիրս եւ ոչ հոտ:

Ցուցանէ առակս, թէ՝ ով մարդ, մի անկանիր 'ի գուբ մեղաց. զի անշահ իրք է մեղքն եւ անոգուտ եւ յետոյ շատ ապշօեաս:

ՀԲ. ԱՂՈՒԵՍ ԳԵՏԱՏԱՐ
(72 V=70 I=81 ag=82 D)

Աղուէսն 'ի գետն անկաւ եւ եղեւ գետայտար եւ խոստացաւ Աստուծոյ մարազպան մի խուկն. զի ելանէ 'ի գետէն. եւ զերծաւ եւ ելաւ 'ի գետէն. եւ սկսաւ ճեմել եւ մոռացաւ զմարզպան խուկն, զոր խոստացo Աստուծոյ. խայտար 'ի յեզր գետին եւ ասէր, թէ Աստուած ինչ կարիք ունի. զծուխս խնկեն, որ յաւդս ցնդի. եւ ահայ շարժեցաւ դարափն գետին. եւ սկսo աղուէսն գալ 'ի դարափն 'ի վար 'ի գետն. եւ նայ լալով գոչեաց եւ ասէ. ո՞վ Աստուած, ես 'ի խնդիր ելայ մարզպան խնկին. որ բերեմ, զոր ուխտեցի քեզ:

Ցուցանէ առակս, թէ ոչ է պարտ մոռանալ զուխտն Աստուծոյ, զոր 'ի նեղութեան քո ուխտես. այլ հատոյ եւ կատարեայ եւ յիշեա զնեղութիւն քո եւ զհանդիպեալ նեղութիւն քո մի մոռանար:

ՀԲա. 104 B Աղվեսն մի 'ի գետն յանցաներ եւ ընկաւ 'ի պտոյտն. կանչէր եւ ասէր. է՞ սուրբ Գորգ, է՞ սուրբ Գորգ, հասիր ինձ եւ հան զիս այս յարկէս. ես քեզ մէկ մազմէն խունկ բերեմ. հասաւ իւր սուրբ Գորգ եւ եհան զինքն. ազատեցաւ 'ի գետոյն եւ 'ի յահէն եւ երթայր հետ դարփշոց մի. նստաւ տրտնջէր եւ ասէր. զգէշս եւ զառակս տեսէք, որ քանի յաշխարհս մարմնով կային սուրբքն, նա 'ի վերայ կառաց եւ 'ի վերայ ձիոց կային եւ զաշխարհս լացուցեալ էին .Ա. օր մն մարտիրոսացան, Աստուծոյ սիրելի եղեն. ամ հիմա կաշար կառնուն եւ ապա կուփրկեն զմարդն 'ի նեղութենէ. ուստի եւ աղուեսն զայս ասէր, յանկարծակի շարժեցաւ փուշ դառն եւ 'ի վրան կուբլչէր. կանչեց աղուեսն եւ ասէր. հասիր սուրբ Գորգ. ես մազմէն ու կէս բերեմ քեզ խունկ. ողորմեցաւ եւ հասաւ, օգնեց սուրբն Գորգ եւ ազատեց զնա. չի կեցաւ աղուեսն 'ի լուր. երթայր անհոգ տնտնջէր եւ ասէր. ահա այլառակ տեսէք. ո՞ւստի է ինձ խունկ, որ քեզ բերեմ, սուրբ Գորգ. ո՞վ եմ ես, պէզիրկան եմ թէ խանութպան. ո՞ւստի է ինձ խունկս. ոչ ես ունիմ, ոչ քեզ բերեմ. մինչդեռ զայս ասէր եւ տրտնջէր, յանկարծակի հանդիպեցան նմա որսորդք եւ թողին 'ի վերայ զքերծերն. նա աղուեսն վազէր եւ կանչէր. վա՛յ, վա՛յ սրբոց պարտականիս. է՞ սուրբ Գորգ, հասիր ինձ յօգնութիւն. ես 'ի խնդիր մազմանին եմ ելեալ. որ տանէի քեզ զխունկս. եւ զառն մի այլ բերեմ քեզ. նա չի հասաւ. կալան զնա շներն եւ 'ի տարէ տար տանէին. նա գայթէր եւ ասէր, թէ վա՛յ սրբոց պարտականիս. եւ կալեալ զնա կենդանի քերթեցին եւ թողին. ապա երեւեցաւ նմա սուրբն Գորգ եւ ասէ. է՛ շուն խաբուսիկ, արեամբ ես ներկեալ, բայց մարտիրոս ոչ լինիս. այլ պարտօք մեռանիս:

Այս այն մարդ է, որ Աստուծոյ խոստանայ կամ խաչի կամ եկեղեցոյ կամ սրբոց կամ մարդոյ եւ յետոյ խաբէ եւ չի տա. նա ինքն տեսնու, թէ ինչ բերէ վրան Յիսուս Քրիստոս կամ սուրբք նորա. վասն այն խոստումն տալ պիտի ըստ սաղմոսին, թէ ուխտ դիք եւ կատարեցէք. ապա թէ ոչ, յետոյ մեծ փաթերակի հանդիպի այնպիսի երդմնազանցն եւ սուտասացն:

ՀԲբ. 23 C Աղուեսն 'ի գետն անկաւ եւ եղեւ գետայտար եւ կուխեղդվեր. նա խոստացաւ Աստուծոյ մարզան մի խունկ եւ զերծաւ 'ի գետէն եւ սկսաւ խայտեալ եւ ճեմել եւ մոռացաւ զխունկն, զոր խոստացo. եւ ասէր, թէ Աստուած, ի՞նչ կարիք ունի իմ խնկին, որ 'ի յաւդս ցնդի. եւ ահա օր մի հանկածակի շվին դրին զինքն 'ի փախ .Է. էին եւ հաս ու հաս ածին զինքն. եւ նայ անտանելի ձայն ածէր եւ ասէր. ա՜յ Աստուած գիտեմ՝ 'ի վաճառ կու գնայի, որ զքո մարզան խունկն բերէի, զոր խոստացեալ եմ:

Ցուցանէ առակս, թէ չէ պարտ զխոստն մոռանալ, զոր Աստուծոյ ես խոստացեալ 'ի նեղութեան ժամանակին. այլ կատարեայ զուխտն եւ յիշեայ զնեղութիւնն:

ՀԳ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ՍԱՌՆ
(73 V=71 I=36 ag=82 ag=99 B=150 D)

Աղուվէս մի քաղցեալ ետես սառ եւ պաղ ցանկալի 'ի ձմեռնային աւուրքն եւ սկսաւ ուտել եւ ասէ.

վա՞յ ինձ, զի ահագին է գրգռտելոյս. զի աղաղակս է 'ի գլուխս եւ յատամունս իմ. եւ 'ի փորս իմ բնաւ իրք մի ոչ իջանէ:

Ցուցանէ առակս, թէ փառք եւ մեծութիւն աշխարհիս միայն զաղաղակն ունի եւ ըզբաղումն եւ յետոյ ոչ երեւի ուրէք. զի սուտ է եւ անցօոր եւ խաբող եւ չէ ոգուտ:

ՀԴ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ԶՐԵՀ
(74 V=72 I=83 ag=98 B=83 D)

Աղուվէսն էգիտ զըրեհ մի եւ կարծեաց, թէ Ադամայ պատմուճայն է, զոր կորուս. զի գրեալ էր, թէ լուսաւորէր. եւ զգեցաւ զնայ յամառնային ժամանակն. եւ զըրեհն ջերմացեալ այրէր զնայ. եւ զգեցաւ զնայ 'ի ձմեռնային ժամանակն. եւ մսէր. եւ հանեալ կանկեաց զնայ եւ սկսաւ ջուր արկանել 'ի նմայ. զի կարծեաց, թէ ջրոյ ման է. եւ ոչ լցաւ ջրով. եւ բարկացեալ էարկ զնայ 'ի ծով խորու եւ ասէ, թէ երթ 'ի կորուստ. զի կարի անպիտան ես. ոչ ես զգեստ ամռան եւ ոչ ձմռան եւ ոչ ման ջրոյ. ապայ կարծեմ, թէ փոր ես յորովայնայմոյ եւ արբեցող մարդոյ, որ անկուշտ լինի:

Ցուցանէ առակս, թէ այսպէս անոգուտ է փառք աշխարհիս. զի ոչ է աստ պիտանի եւ ոչ անդ. զի աստ մահն խափանէ. եւ ոչ անդ՝ նոր արարածք լինելոց է, այլ մեծ չար է մեղօորաց:

ՀԵ. ՀՊԱՐՏԱՑԵԱԼ ԿԻՆ ՄԵՐԿ ՅԱՂԱԻԹՍ
(75 V=73 I)

Կին մի մեծայհասակ եւ սաստիկ գերմակ եւ գէր մերկացաւ 'ի տուն իւր. եւ սկսաւ ծունդր դնել եւ աղաւթել մեծայհառաջանօք եւ լալով. եկեալ որդի նորա տեսեալ զնայ մերկ հիացաւ եւ ասէ. ո՞վ մայր իմ, յիմարեցար, խելայթափեցար. զի՞նչ է այդ խայտառակութիւնդ քո ամա[ւ]թալի. եւ նայ ասէ. ով որդեակ, բնաւ մի խաւսիր ընդ իս. զի յայտնեցին ինձ, որ սերոբէքն եւ քերոբէքն մերկ աղաւթէին առաջի Աստուածութեան. եւ ես ընդ նոսա նախանձեցայ եւ աղաւթեմ առ տէր Աստուած. եւ ասէ որդին. այո՞յ, մայր իմ, նմանեաց գաւակ քո 'ի սերոբէիցն կամ 'ի քերոբէիցն:

Ասէ զառակս, յորժամ ոք հպարտանայ եւ կամ պարծենայ կամ ձկտի 'ի վեր քան զկարաւղութիւն իւր:

Հեա. 86 D Կին մի մեծահասակ եւ գէր մերկացաւ զհանդերձն իւր՝ եւ աղօթէր 'ի տուն. եւ եկեալ որդին տեսաւ զնա մերկ. ասէ. ո՞վ յիմար մայր իմ, յիմարեցար. զի՞նչ է խայտառակութիւնդ քո. եւ ասէ. ո՞վ որդեակ, յայտնեաց ինձ Աստուած, որ սէրովբէքն եւ քերովբէքն մերկ աղաւթեն առաջի Աստուծոյ եւ ընդ նոցա նախանձեցայ. ասէ որդին. այո՞, մայր իմ. նմա՞ն է գաւակդ եւ ամօթդ սերովբէից եւ քերովբէիցն:

Յորժամ հպարտանայ ոք եւ անպատեհ բան առնէ քան զիւր կարողութիւն 'ի վեր, ասա զայս. եւ թէ մերկանան, զմեղք պիտի մերկանալ եւ ոչ զհանդերձն, զկամապաշտութիւնն եւ զամենայն չար բան եւ զայլն:

ՀԶ. ԷՇ ՄԵԾԱՐԵԱԼ
(76 V=74 I=86 ag=87 D)

Զէշն մեծարեցին եւ կոչեցին 'ի հարսանիս որդոյ թագաւորին. եւ ասէ էշն. ես ոչ փողայհար եմ եւ ոչ խաղայցող. ապայ վա՞յ ինձ. գիտեմ, որ ծանդր բեռ կայ ինձ պահած եւ կամ ջուր կրելոյ 'ի հարսանիսն:

Ասայ զառակս, յորժամ կոչեն զքեզ 'ի բան կամ 'ի գործ անդէպ եւ աննման, որ 'ի վեր է քան զկարողութիւն քո:

ՀԷ. ԻՇՈՑ ԾՆԱԻ ԹՈՌՆ
(77 V=75 I=87 ag=25 C=25 C)

Իշուն աւետիս մատուցին, թէ ցնծայ եւ ուրախ լեր եւ տուր մեզ ոժիտ. զի թոռ ծնաւ քեզ. եւ էշն ասէ. վայ ինձ, բարէկամք իմ. զի թէ հարուր թոռն լինի յերանաց իմոց, զծանդրութիւն բեռանցն ոչ թեթեւացուցանեն 'ի թիկնաց իմոց:

Ցուցանէ առակս, թէ ամենայն ոք ընդ յանձէ պարտի համարս տալ եւ զբեռն մեղաց իւրոց ինքն բառնայ: Դարձեալ ցուցանէ առակս, թէ մի վստահանար յորդիս քո եւ 'ի յորդիս որդոց քոց, թէ քաւեն զմեղս քո. այլ դու ջանայ, որ քան որ կարես՝ ապաշխարութեամբ եւ արտասուաւք:

ՀԷա. 88 D Իշուն աւետիս մատուցին, թէ քեզ որդի եղաւ. եւ ասէ ո՞վ բարեկամք իմ, թէ .Ռ. որդի լինի, զիմ բեռն 'ի վերնես ոչ վերացուցանէ:

Ցուցանէ առակս, թէ ամենայն մարդ զիւր մեղաց ծանրութիւնն ինքն բառնայ. եւ թէ ոչ, բայց կոչեն զնա 'ի դժոխքն եւ զծանր չարչարանքն նմա բառնան: Դարձեալ ցուցանէ. մի վստահանար յորդին քո, թէ քաւէ զմեղս քո. այլ դու ջանայ եւ քաւէ եւ ապաշխարեա արտասուօք. զի դու զքոյն չես քաւեր, զքո հորն ո՞նց կու քաւես:

ՀԸ. ԱՂՈՒԵՍ ՈՐՍՈՂ ՆՄԱՆ ԱՌԻԻԾՈՒ ԵՒ ԳԱՅԼ
(78 V=76 I=40 ag=85 B=22 C=22 C)

Առիւծն կալաւ սպասաւոր զաղուվէսն. եւ ետ նշան աղուվէսուն, թէ յորժամ տեսանես յաչս իմ արիւն, դու ինձ յիմաց արայ. զի այն է իմ որսոյն նշայն. եւ աղուէսն պիտի ասէր զնշայն: Եւ որսար առիւծն եւ ուրախանային եւ ուտէին երկոսեանն զորսն. եւ հպարտացաւ աղուվէսն եւ ել 'ի յառուծէն եւ առաւ սպասաւոր իւր զգալն. եւ ասէ աղուվէսն գալուն, թէ յերբ որ լինի յաչս իմ արիւն եւ թէ ոչ, յորժամ հարցանեմ, դու ասէ. այո՞յ, բազում արիւն կայ յաչս քո. եւ յորժամ ասաց աղուվէսն ցգալն, թէ հայեայ յաչս իմ, թէ արիւն կայ, զոր ուսեալ էր 'ի յառիւծէն. եւ ասէ գալն. այո՞յ, բազում արիւն է յաչս քո եւ թանձրայգուն է. եւ աղուվէսն ուրախացաւ եւ նստաւ յանցս եղանցն. եւ եկեալ եղունքն 'ի վերայ աղուէսուն. եւ նայ վազեաց յառաջ նոցա, որպէս ուսեալ էր յառիւծէն. եւ հարին եղու[ն]քն կղճակովն զգլուխն աղուէսուն, որ ջախջախեցաւ եւ անկաւ խելայգնայ. գայ գալն եւ ասէ. յոտն կաց, զի այժմն ստուգայպէ՞ս թանձրացաւ արիւն 'ի յաչս քո:

Ցուցանէ առակս, թէ ոչ վայել է մարդոյ յաւելի ձկտիլ քան զչափն եւ զկարն իւր հպարտութեամբ՝ ոչ 'ի հոգեւորն եւ ոչ 'ի մարմնաւորն. եթէ ձկտի, ոչ աջողէ, որպէս եղեւ աղուէսն. հայեաց 'ի յԱդամ եւ 'ի սատանայ. զի աստուածանալ ջանացին եւ զոր ունէին, զան ալ կորուսին եւ անկան 'ի փառաց:

ՀԹ. ԲԱԶՄԱՐՈՒԵՍՏ ԱՂՈՒԵՍ
(79 V=77 I)

Ասացին աղուէսուն, թէ քանի ցեղ արուրստ գիտես. եւ ասէ աղուէսն .Ճ. ցեղ արուէստ ագովս առնեմ առաջի շան. ապայ մեծ արուրստս այն է, որ ոչ ես զշուն տեսանեմ եւ ոչ շուն զիս:

Ցուցանէ առակս, թէ անթիւք են, որ ապաշխարեն զմեղս եւ Աստուծոյ հաճոյ լինին. ապայ այն է մարդ կատարեալ, որ ոչ մեղանչէ եւ պահէ զպատուիրան Աստուծոյ:

ՀԹա. 37ag Հարցին ընդ աղուեսն, թէ քանի ցեղ արուեստ գիտես. գնաց կկզեցաւ եւ ասէ. հազար ցեղ արուեստ գիտեմ. երեսուն ագւովս առաջի շանն՝ թող թէ քանի անձամբս. բայց մեծ արուեստս այն է, որ ո՛չ ես զշունն տեսնում եւ ո՛չ նա զիս:

Ցուցանէ, թէ անթիւք են, որք ապաշխարեն զմեզս եւ Աստուծոյ լինին. ապա նա է կատարեալ մարդ՝ որ ո՛չ մեղանչէ:

Զ. ԳԱԶԱՆ ՍՂՈՑԱԶԵԻ ԵՂԶԵՐԲ
(80 V=78 I=42 ag)

Գազան մի կայ 'ի յանմարդայբնակ տեղիս. եւ են եղջիւրք նորա սղոցայձեւ. մտանէ յանտառն եւ սկսանի խաղալ եղջիւրեաւքն ընդ ծայրս ծառոցն. եւ մորջքն բարակ պատատին եւ կապին յեղջիւրս նորա. եւ ոչ կարէ արձակել եւ սկսանի գոչել. լսեն որսորդքն եւ գան սպանանեն զնայ:

Ցուցանէ առակս, թէ մարդ որ կապի 'ի սէր աշխարհիս եւ 'ի փառս եւ հեշտանայ 'ի մեղս եւ 'ի ցանկութիւնս, նայ դիւրաւ գտանէ զնոսա սատանայ եւ սպանանէ մեղօք:

ԶԱ. ՀՐԱԿԵՐ ԳԱԶԱՆ
(81 V=79 I=43 ag)

Գազան մի կայ 'ի ծովն, որ հուր կոյտէ. գան որսորդք նորա եւ վառեն կրակ եւ առնեն կայծակունս յեզր ծովուն եւ ինքեանք թաքչին. եւ նայ գայ փափաքանաւք եւ լափէ զկայծակունս. եւ անկեալ թըմբրի 'ի զաւրութենէ հրոյն. եւ ելանեն որսորդքն եւ սպանանեն եւ առնուն զնայ. եւ այս են բանք նորա, որ թէ զմորթ նորա 'ի հուր արկանեն, նայ չի այրիր:

Ցուցանէ առակս, թէ մարդ որ բնակէ 'ի ծով մեղաց հեշտութեան եւ անզեղջ սրտիւ [գործէ] զմեղս 'ի ջերմացեալ հրով ցանկութենէ դիւացն եւ թըմբրեալ կայ 'ի մեղս մեծայմեծս. որսորդն սատանայ անաշխատ գայ [գտանէ] զհոգի նորա եւ որսայ եւ տանի 'ի դժոխքն:

ԶԲ. ՁՄԵՌՆ ԵԻ ԳԱՐՈՒՆ
(82 V=80 I=91 ag=157 D)

Ձմեռն չորանայ եւ տերեւք ծառոցն եւ բուսք եւ տունք. իսք գարնանային ժամանակն կրկին զարդարին եւ պայծառանայն ամենայն բուսք եւ տունք:

Ցուցանէ առակս բարի եւ լաւ, թէ՝ ո՞վ մարդ, ձմեռն մեղաց եկն 'ի վերայ քո եւ սառնացուց զքեզ չար հողմն հուսուսական մեղացն, որ գնացիր ընդ կամացն սատանայի. եւ գոսացար. եւ թափեցաւ 'ի քէն գեղեցկութիւն քո. մի անյուսիր, ո՞վ ողորմելի. այլ երթ սրտի մտաւք առ հոգեւոր գարուն Քրիստոս, որ կոչէ զքեզ քաղցրութեամբ. եւ նայ լուանայ շնորհաւք իւրով զանցանս քո եւ նորոգէ զքեզ յառաջին փառս քո:

ԶԳ. ԱՅՐ ԿԻԼԻԿ ԵԻ ԿԻՆ ԿԻԼԻՔ
(83 V=81 I)

Այր մի ըռամիկ, որ կոչէր Կիլիկ. եւ կին նորա կոչէր Կիլիք. եւ ասէ. ո՞վ այր դու, չար կարի շատ հասուցեր յանուանէ իմէ:

Ցուցանէ առակս, թէ յաւրն ահագին ասելոց է ընդ մեզ Աստուած, թէ՝ ո՞վ եղկելիք, կարի շատ հեռացաք յինէն եւ թողիք զաւրէնս իմ եւ զկամս եւ գնացիք 'ի հետս սատանայի:

ԶԴ. ԱՐԾԻՒ ԵԻ ՆԵՏ
(84 V=82 I=63 ag=71 B)

Արծիւն երթար յերկինս եւ հարին զնայ նետիւ. եւ նայ զարմացաւ, թէ ո՞վ զայս արար. հայեցաւ եւ ետես զնետն՝ զփետուրն իւր. եւ ասէ. վա՜յ ինձ. զի յինէն է ահայ պատճառ սպանման իմոյ:

Ցուցանէ առակս, թէ 'ի մէնջն է նիութն, որ սպանանէ սատանայ զհոգի մեր. զի նայ յորդորէ զմեզ 'ի չարն եւ մեք կամաւ եւ ոժարութեամբ երթամք զհետ կամաց նորա:

ՁԵ. ՁԵՐՄՈՏ ԵՒ ՈՒՐՈՒԿ
(85 V=83 I=64 ag=72 B=137 D)

Ջերմնոտ մի էր բազում աւրեայ եւ խրատեցին զնայ, թէ գնայ 'ի դուռն քաղաքին. եւ առաջին մարդն, զոր տեսանես, ասայ առ նայ, թէ քոյդ ինձ եւ իմս քեզ. եւ ահայ զար ուրուկ մի, որ շարաւն երթար 'ի յանձնէ նորա. եւ նայ դողաց յահէն եւ ասաց. ո՞վ եղբար, Բ. քոյդ քեզ եւ իմս ինձ .Ա. հայեաց յԱստուած:

Ցուցանէ առակս, թէ զայ սատանայ եւ սկսանի անյուսել քեզ 'ի մեղս եւ հեռացուցանէ զքեզ յԱստուծոյ. որպէս եւ ինքն եղեւ. դու յանժամ ասայ, թէ քո անհաւատութիւն քեզ. իսկ ես թէպէտ մեղաւոր եմ, բաց զԱստուած ոչ կարեմ ուրանալ. զի անդադար կոչէ զիս քաղցրութեամբ. եւ ես թողում զմեղս իմ եւ յուսով երթամ առ տէր Աստուած փրկիչն իմ:

ՁԶ. ԱՐԱՄԱԶԴ ԵՒ ԱՒԶ
(86 V=84 I)

Արամազդն արար հարսանիս որդոյ իւրոյ. եւ զային ամենայն կենդանիքն եւ բերէին ընձայ եւ ոժիտք. զայ աւձն եւ բերէ անուշայհոտ տերեւս գեղեցիկ՝ զվարդն տերեւովն. եւ նայ 'ի բաց վարեաց զաւձն եւ ասաց. ոչ է արժան առնուլ ինչ 'ի թունալից բերանոյ քումէ:

Ցուցանէ առակս, թէ ոչ է պարտ առնել 'ի պղծոյ եւ անզղջից, որ ոչ կամին դիմել առ Աստուած ապաշխարութեամբ եւ արտասուաք:

ՁԷ. ԹԱԳԱՒՈՐ ԾԱՌՈՑ
(87 V=85 I)

Ժողովեցան ծառքն դնեալ իւրեանց թագաւորն. կոչեցին եւ մեծարեցին կարգաւ ամենեքեան զխնձորին եւ զնրոնենին եւ զընկուզին եւ զնշենին եւ նոքա զայլ գեղեցիկ պղտայբերս. եւ նոքա ոչ առին յանձն եւ այլքն յիմարեցան. եւ կացուցին թագաւոր զդժնկին. զայ խնձորին եւ ասէ. ո՞վ ողորմելիք, հովանի չունի. որ զովացուցանէ զոք, որ մերձին առ նայ. եւ որ մերձի, խոցէ եւ վիրաւորէ զնայ եւ պտուղ ոչ բերէ:

Ցուցանէ առակս, թէ զբարէմիտն, զհեզն եւ զհամբերաւղն պարտ է կացուցանել առաջնորդ եւ թագաւոր, իշխան եւ դատաւոր. եւ ոչ զաներկեղն եւ զխիստն եւ զչարայբարոյն եւ զանզգամ:

ՁԸ. ԹԱԳԱՒՈՐ ՇԻՒՂ 'Ի ՄՈՐՈՒՍ ԵՒ ԾԱՌԱՅՆ
(88 V=86 I=3 ag=141 D)

Թագաւոր մի յարեւմուտս բազմեցաւ յաթոռ. եւ եկին բազում դեսպանք առաջի նորա. եւ ահայ շիւղ ինչ կար 'ի մորուս նորա. եւ սպասաւոր նորա ասէ. ո՞վ բարի թագաւոր, ահայ տեսանեմ զոսկի բազան՝ 'ի վերայ ոսկի ճղին է. եւ նայ ոչ իմացաւ զառակն. եւ գնաց առնուլ զշիւղն 'ի մորուացն. եւ նայ յա՞մյա՞մ արար ընդ դէմ նորա. եւ սպասաւոր նորա յերեսս նորա ասէ. գիտեմք մեք, եթէ հաւասար դու ամենայն աշխարհի թագաւոր ես եւ դու նման առջոյ կամիս լափել զմեզ. զոր քեզ ոչ վայելէ եւ յարմարի:

Ցուցանէ առակս, թէ յանդիմանել պիտի զթագաւորն եւ զառաջնորդն եւ զդատաւորն յերեսն, թէ ելանիցեն յիրաւանց եւ թիւրին յաւրինաց եւ 'ի կամացն տեառն:

ՁԹ. ՅԻՄԱՐ ԵՒ ՁՄԵՐՈՒԿ
(89 V=87 I=70 ag=79 B)

Այր մի անմիտ եւ յիմար ունէր դահեկան մի եւ առեալ զայն գնաց 'ի քաղաքն գնել էշ մի. շրջեցաւ 'ի քաղաքն եւ 'ի շուկայն եւ ոչ գտաւ միոյ դահեկանի էշ եւ եկն կրկին 'ի շուկայն. ետես մեծ ձմերուկ մի եւ ասէ հիացմամբ. զի՞նչ է այս. եւ յիմացան վաճառականք, թէ յիմար է. եւ ասեն, թէ հնդի իշու ձու է եւ հանէ

հնդացի իշու էշ մեծայգոյն. եւ նայ խնդալով ետ զդահեկան եւ էառ զնայ. եւ պնդեցին զնայ, թէ պատրաստ տար զձուս. որ չէ բեկի եւ էշն ելեալ փաղչի. եւ առեալ զձմերուկն սկսաւ գնալ զառ 'ի վար ճանապարհ. եւ ոտն նորա գայթակղեցաւ. եւ զերծաւ 'ի նմանէ ձմերուկն. եւ գլորեալ գնաց 'ի մէնջ թաւ անդառին. եւ նապաստակ մի վազեաց 'ի յանդառէն եւ սկսաւ փախչիլ. իսկ նայ կարծեաց, թէ բեկաւ ձուն եւ էշն ելեալ փաղչէր. եւ 'ի հետ մտեալ ձայնէր նապաստակին. ա՞յ էշ հնդացի, վայ ինձ. մի փաղչիր. եւ ձայնէր. քուռի', քուռի', ողորմեայ ինձ եւ դարձիր առ տէրս քո:

Ցուցանէ առակս, թէ այս պէս յիմարեցան թագաւորքն, քահանաքն եւ ժողովուրդքն. եւ թափեցաք ամենեքեան 'ի խելաց եւ 'ի մտաց եւ զհետ մտաք զսուտ եւ խաբող կենաց աշխարհիս այսորիկ. որ նման հողմոյ եւ փաղչի 'ի մէնջ եւ նման երազոյ պակասէ. եւ ջանամք ըմբռնել զհեշտութիւն եւ զմեղս աշխարհիս եւ զարշելի սիրով եւ ցանկութեամբ միայվորիմք 'ի մեղս աշխարհիս եւ լինիմք ողորմելիք հոգով եւ մարմնով:

Ղ. ԱՅՐԻ ԵԻ ԿՈՎՆ ԵԻ ԽՈՐԹ ԵԻ ԷՇՆ
(90 V=88 I=72 ag=80 B)

Կին մի այրի ունէր կով մի. եւ խորթ նորայ ունէր էշ մի. եւ զկերակուր կովոյն գողանար խորթն եւ տար իշուն. եւ կին աղաչէր զԱստուած. զի մեռցի էշն. եւ մեռաւ կովն. լար կին եւ ասէր. վա՛յ ինձ զի հակառակ եղեւ աղաւթս իմ. ո՞վ Աստուած, միթէ ոչ կարացիր ընդրել զէշն եւ զկովն 'ի միմեանց:

Ցուցանէ առակս, թէ մի աղաւթեր ընկերի քում չար հասանել. զի մի պատահին քեզ չար: Դարձեալ ցուցանէ առակս, թէ շատ աղաւթք կայ, որ Աստուած ընդ հակառակ կատարէ զնայ. որ ոչ լինի 'ի կամս Աստուծոյ. քանզի նայ գիտէ զաւգուտն անձանց մերոց:

ՂԱ. ԳԱՅԼ ԵԵ ԲՐՏԻ ՇՈՒՆ
(91 V=89 I=143 D)

Գալն ափշտակեաց անասուն մի. եւ ելին շունք զհետ նորա եւ տառապէին զնայ. յետոյ գայ շուն բրտին եւ սաստիկ նեղէր զնայ: Դարձաւ գալն եւ ասէ ցնայ. ով նզովեալ բրտի շուն, ասայ ինձ. թէ քեզ ինչ կու տանիմ՝ զդո՞ւրքն թէ քե՞ղոցն եւ թէ զքթե՞ն, որ կոյ կոկեն զպուտուկն:

Ցուցանէ առակս, թէ ոչ վայել է, որ ահոկ խաւսին, ընդ որ չունիս հաշիւ. թէպէտ եւ յառաջն թշնամի էր քո այլ ինքն. եւ կռու ընկերն ուղեն զհաշիւն, զոր ունին եւ դու խաղաղացոյ զնոսա. որ խաղաղութեամբ հրայժարին 'ի միմեա[ն]ց:

ՂԲ. ԹԱԳԱՒՈՐ ԵԻ ԿՈՒՌՔՆ
(92 V=90 I=144 D)

Թագաւոր մի հասաւ 'ի վերջին աղքատութիւն եւ ոլով ժամանակս ծառայեաց խնկաւք եւ ճրագաւք զկուռս հաւր իւրոյ. եւ աղաչէր զնայ. զի փարթամեսցի. իսկ նայ եւս քան զեւս աղքատանար. եւ նայ բարկացեալ յաւուր միում՝ եհար ուռամբ զգլուխ կռոցն. եւ հերձաւ գլուխն. եւ բազում գանձս հեղաւ 'ի գլխոյ կռոցն, զոր հարն նորա պահեալ էր:

Ցուցանէ առակս յայտնայպէս. որքան ծառայես զմարմինդ քո հեշտութեամբ եւ մեղաւք. դու եւս քան զեւս աղքատանաս հոգովդ եւ ողորմելի լինիս: Ապայ թէ տանջես զմարմինդ քո եւ չարչարես եւ սպանցես ամենայն բարէգործութեամբ. ապայ կարես փարթամանալ դու հոգովդ եւ փրկիս 'ի դժոխոց հուր գեհենոյն:

ՂԲա. 4ag Թագաւորի միոյ որդի էհաս 'ի վերջին աղքատութիւն. եւ յոլով ժամանակս ծառայեաց խնկօք եւ ճրագօք կռոց հօր իւրոյ: Եւ աղաչէր զնա՛. զի փարթամացուսցէ զնա. իսկ նա եւս քան զեւս աղքատանայր: Եւ նա բարկացեալ յաւուր միում եհար ուռամբ զգլուխ կռոցն. եւ հերձաւ. եւ բազում

զանձս հոսեցաւ 'ի գլխոյ կռոցն՝ զոր հայր նորա պահեալ էր:

Ո՞վ որդեակ՝ վայ ինձ ողորմելի մեղաւորիս. քանզի այսպէս ցուցանէ առակս, թէ որքան ծառայես մարմնոյ քոյ հեշտութեամբ եւ հանգստութեամբ եւ պարարտութեամբ եւ մեղօք. դու եւս քան զեւս աղքատանաս հոգւով եւ ողորմելի լինիս: Ապա թէ տանջես զմարմինդ, չարչարես եւ սպանես ամենայն բարեգործութեամբ, ապա կարես փարթամանալ հոգւով եւ փրկիլ 'ի դժոխոցն:

ՂԳ. ԱՐԾԻՒ ԵՒ ԿԱՔԱՒ ԵՒ ԲԶԵԶ
(93 V=91 I=102 B)

Արծիւն հալածէր զկաքաւն եւ նայ 'ի բզէզն ապաւինեցաւ եւ բերէր բարէխաւս. եւ արծիւն ոչ լուաւ աղաչանաց բզեզին. եւ բզէզն ոխացաւ եւ խպնեցաւ եւ ոխս մտեալ. եւ գնաց ելաւ 'ի բունս արծրւին եւ զձուս նորա գլորէր եւ կոտորէր եւ բազում ժամանակս անորդիս առնէր զարծիւն. եւ գնաց արծիւն ածեաց զձուն 'ի գոգն թագաւորին. եւ գ[ն]աց բզէզն 'ի ծայր երանաց նորա. եւ նայ 'ի վեր վազեաց 'ի կսկծոյն. եւ անկեալ բեկեցաւ ձուն արծրւուն:

Ցուցանէ առակս, թէ բնաւ ամենեւին մի առնէք ձեզ թշնամի զոք 'ի մարդկանէ. թէպէտ եւ կարի աղքատ եւ տկար լինի:

ՂԳա. 34ag Ասի յառակաց. արծուին եւ կաքաւն խիստ չարկամացան. եւ արծուին անդադար նեղէր զկաքաւն եւ անհանգիստ պահէր: Գնաց կաքաւն եւ եբեր իւրն բարեխօս, որ չափ թռչունք կայր, առ արծուին. եւ նա չէառ յանձն՝ եւ ո՛չ հաշտեցաւ հետ կաքաւուն. կաքաւն նստեալ կայր. լայր եւ հանէր արտասուս պղտոր: Եկն բզէզն՝ եւ ասաց կաքաւն զիւր գանգատն. եւ էառ տարաւ զբզէզն առ արծուին բարեխօս: Եւ արծուին ո՛չ լուաւ աղաչանաց բզէզին. դպնեցաւ բզէզն եւ ոխացաւ հետ արծուոյն. քանի արծուին զձուն հանէր, երթեալ բզէզն ելանէր 'ի բոյն արծուոյն եւ գլորէր եւ ձգէր 'ի վայր զձուն եւ կոտորէր: Եւ բազում ժամանակս անորդի առնէր զարծուին: Եւ գնացեալ արծուին էած զձուն իւր 'ի գոգ թագաւորին. եւ իմացեալ բզէզն եմուտ 'ի մէջ ոտից նորա եւ էխած զծայր երանաց նորա. եւ նա 'ի վեր վազեաց. եւ ընկեցեալ բեկաւ ձուն:

Ցուցանէ, որ թէ հնար իցէ բնաւ մի առներ քեզ թշնամի զոք 'ի մարդկանէ, թէպէտեւ աղքատ եւ տկար լինի:

ՂԴ. ՄՐՋԻՄՆ ԵՒ ԱՂԱՒՆԻ
(94 V=92 I)

Մրջիմն անկեալ 'ի ջուրն եւ հեղձէր. գայ աղաւնի եւ ձգէ ոստ մի 'ի ջուրն. եւ ելեալ մրջիմն 'ի յոստն եւ կենդանացաւ: Եւ ահայ 'ի նոյն ժամն հաւորսքն կանգ[ն]եաց զվարմն եւ կամէր առնել զաղաւնին. գայ մտանէ մրջիմն յերանքն նորա եւ էխած 'ի ծայր նորա. եւ նայ 'ի կսկծոյն յանկարծակի 'ի վեր թռաւ եւ մորմոքեցաւ. եւ շարժեցաւ եղեգն եւ վարմն. եւ աղաւնին թռաւ եւ ազատեցաւ:

Ցուցանէ առակս, թէ մահու չափ ճգնէ նմայ, որ յառաջ քեզ բարի արար. նայ եւ Քրիստոս յուսն մեր՝ եւ թշնամեաց հրամայէ բարի առնել: Դարձեալ ցուցանէ առակս, թէ այս պէս ամենայն մարդ բորբոքեցաւ 'ի ցանկութիւն զէշ ախտի պոռնկութեան եւ շնութեան եւ յալ մեղս եւ 'ի չար գործս. եւ իմացարուք, որ չար դեւքն կապեցին զմեզ մեղաւք 'ի յաշխարհիս եւ հանին 'ի յանձանց մերոց զկռուոյ զէնն մեր՝ զհամբերութիւն եւ զխոնարհութիւն եւ զսրբութիւն եւ զայլ բարէգործութիւն. եւ հարեալ սպանցեն զհոգիս մեր:

ՂԵ. ԱՌԻՒԾ ԵՒ ՄԱՐԴ
(95 V=93 I=73 ag=83 D)

Առիւծն ետես. զի ահագին փախստ[ակ]անք գային ամենայն կենդանիք ահիւ մեծաւ. եւ ասէ, թէ

յումէ զաք փախստականք. եւ նոքա ասեն, թէ 'ի մարդոյն. զի հալածեն զմեզ. եւ նայ ասէ, թէ զինչ է մարդն. կացիք աստ, մինչեւ եկեսցէ մարդն. եւ ահայ եկն էհաս մարդն. եւ ասէ առիւծն 'ի սպառնալեաւք, թէ դու ես մարդն, որ նեղես զամենայն կենդանիս. եւ նայ ասէ. ա՞յոյ. ասէ առիւծն. եւ ապայ թէ մարդն դու ես, արի եկ որ կռուինք. ես քեզ սպասեալ մնայի. եւ ասէ մարդն. չունիմ ես աստ նշան կռուոյն. ապայ թէ գաս, որ կապեմ զքեզ. որ ոչ փաղչիս. եւ ես գնամ առնում զնշան կռուոյն եւ գամ առ քեզ. եւ հաւանեցաւ առիւծն. եւ կապեաց զնայ մարդն եւ սկսաւ կաղնի մահակաւ հարկանել զնայ. եւ առիւծն ասէ. թէ մարդ ես, նայ սէրտ եւ անխնայ զարկ դու եւ հար զթիկունս իմ. զի այս խելացս այսպէս վայելէ ինձ:

Ցուցանէ առակս, թէ շատ զաւրաւոր մարդիք խաբուին 'ի տկարաց եւ տանջին եւ ինքեանք նախատեն զանձինս իւրեանց, որպէս առիւծն եղեւ:

Ղեա. 41 C Առուծ մի զօրաւոր նստեալ էր յանց ճանապարհին. եւ գային ընդ այն ճանապարհն այլ գազանք դողալով եւ փախստականք մի մի եւ անցանէին. եւ նայ հարցանէր, թէ ընդէ՞ր փախչիք եւ յումէ զարհուրեալ էք եւ փախչիք. նոքայ ասեն, թէ վայխեր եւ դու. զի ահայ գայ մարդն. եւ ասէ առուծն. ո՞վ է մարդն եւ զի՞նչ է նայ եւ զի՞նչ է ուժ նորայ եւ կերպարանք նորա, զի փախչիք 'ի նմանէ. եւ նոքայ ասեն. թէ գայ տեսնու զքեզ, վայ լինի քեզ. եւ ահայ գայ հողայգործ մարդ մի յանդէ իւրմէ. եւ ասէ առուծն. միթէ դու ես մարդն, որ փախուցանես զգազանս յանայպատէ. եւ նայ ասէ. այոյ, ես եմ. եւ ասէ առուծն. գաս, որ կռվենք, եւ նայ ասէ այոյ, բաց եկ, նախ կապեցից զքեզ. զի մի փախիցես, մինչեւ երթաց առից զլսէին իմ եւ կռուենք. եւ ասէ առուծն. երդնուս, որ գայս, ես լսեմ քեզ. եւ երդուաւ նմա. եւ ասէ առուծն. հան կապեայ զիս եւ գնայ շուտ ու դարձիր. եւ նայ հանէ զպարանն եւ կապեաց զառուծ պնդայկապ ընդ ծառովն եւ կտրեց 'ի ծառէն կաղնի բիր մի եւ սկսաւ զարկնուլ զառուծն. եւ առուծն գոչէր. արձայկէ զիս կամ առեր զքո լսեխն. եւ մարդն ասէ. ապայ քո խելքովտ եմ. եւ նայ գոռայր եւ ասէ. երդնում, որ չփայխչեմ. եւ նայ զարկէր զայս կողս, զայն կողն. եւ ասէ նայ. զի տխմայր գտայ ես եւ ծաղր ամենայն գազանաց:

Հակառակ եւ հետս ընդ դէմ՝ առակս ցուցանէ. զի առուծն մարդս է, որ պատկեր Աստուծոյ է եւ կայ 'ի ճանապարհս Աստուծոյ եւ չարն սատանայ, որ հալածէ զմարդն:

Ղեբ. 74 F Առիւծն տեսեալ զվայրի էրէքն. զի փախչէին. եւ ասաց. յի՞նչ կու փախչիք. եւ ասացին, թէ մարդ կու գայ. եւ ասաց առիւծն, թէ ի՞նչ կենդանի է մարդն. մէկ տուք, որ գայ, որ տեսնում. եւ եկեալ մարդուն ասաց առիւծն, թէ ի՞նչ կենդանի ես, որ ամէն կենդանիք կուվախեն. արեկ որ զիրար տեսնունք. եւ ասաց մարդն, թէ քո զէնքտ 'ի հետ են եւ իմն 'ի տունն է. հրաման տուր, որ երթամ բերեմ եւ գանք՝ զիրար տեսնունք. ապայ արեկ որ 'ի ծառս կապեմ, որ չփախչիս. եւ ասաց. արեկ կապէ. եւ փաթեց 'ի ծառն 'ի վեր եւ մտեալ 'ի մորին կտրեց դաստաչաք եւ սկսեալ 'ի յոտիցն մինչ 'ի գլուխն ջարդեց. եւ ասաց առիւծն, թէ մարդ ես եւ քեզ վայել է մարդութիւնն:

ՂԶ. ԱՌԻԻԾ ԵՒ ԱՂՈՒԵՍ ԵՒ ԱՐՋ
(96 V=94 I)

Առիւծն հիւանդացաւ եւ երաքն ամենայն գայ 'ի տես. եւ աղուվեսն յամեաց. եւ առչն չարայխաւսեաց զնայ. եւ յորժամ եկ աղուէսն, բարեկամք նոր[ա] ասացին զչարայխաւսութիւն արջոյն. եւ գնաց աղուէսն առ առիւծն. ասէ առիւծն ընդ աղուէսն. ոչ բարի գաս, գարշելի. ասաց ինձ. ընդէ՞ր յամեցար. եւ նայ ասէ. մի բարկանար ինձ, ով բարի թագաւոր. զի ահայ երդունմ 'ի գլուխ քո, որ աշխատութեամբ շրջեցայ ես յամենայն բժշկայպետս վասն քո եւ դեղ ուսայ հիւանդութեան քո. եւ ասէ առիւծն. բարի եկիր, իմաստուն կենդանի. եւ զի՞նչ է դեղն. եւ նայ ասէ. խիստ պիտանի է եւ դիւրին. ասացին բժշկայպետքն, թէ հանէք զմորթ արջոյն եւ տաք տաք արկէք 'ի վերայ առիւծոյն. եւ նայ փութով քարշէ զցաւն 'ի նմանէ. եւ հրամայեաց առիւծն եւ կալան զարչն եւ սկսան քարշել զմորթն. եւ նայ վայէր եւ մեծայմեծ գայթս արձակէր. եւ ասէ աղուէսն. այդ 'ի քոյ երեսդ եւ 'ի մորուսդ եւ 'ի նորայն, որ յեր 'ի յարքունիս մտանէ, նայ զայլ ոք չարայխաւսէ:

Ցուցանէ առակս, թէ բնաւ ոչ է պարտ չարայխաւսել զոք եւ ոչ բամբասել. այլ զքոյ հոգն հոգայ եւ զքոյ մեղքն տես առաջի քո. այն է բարի եւ լաւ:

ՂԶա. 74ag Առիւծն հիւանդացաւ. էրէքն գային 'ի տես. աղուեսն յամեաց. նա արջն չարախօսեաց զնմանէ: Եւ յորժամ եկն աղուէսն, ասացին զչարախօսութիւն արջոյն բարեկամք նորա: Եւ ասէ առիւծն. ո՛չ բարի գաս, գարշելի. ընդէ՞ր յամեցար: Ասէ աղուէսն. մի բարկանար, թագաւոր բարի. զի ահա երդնում 'ի գլուխ քո. զի աշխատութեամբ շրջեցայ յամենայն բժկապետսն եւ ուսայ հիւանդութեան քում դեղ: Եւ ասէ առիւծն. բարի եկիր, իմաստուն կենդանի. զի՞նչ է դեղն. եւ նա ասէ. պիտանի եւ դիւրին. հրամայեցին բժշկապետքն՝ թէ հանէք զմորթ արջուն տաք տաք եւ արկէք 'ի վերայ առիւծոյն. եւ նա փութով քաշէ զցաւն 'ի նմանէ: Եւ հրամայեաց առիւծն. եւ կալեալ զարջն սկսան քարշել զմորթ նորա. եւ նա վայէր եւ փուքս մեծամեծս արձակէր: Եւ աղուէսն ասէ. այդ յերեսդ քո եւ 'ի նորա, որ առ թագաւորն զմարդ չարախօսէ. եւ հանին զմորթն՝ եւ սատակեցաւ արջն:

Ցուցանէ, թէ չէ պարտ՝ որ մարդ 'ի թագաւորաց տուն եւ 'ի դատաւորաց մտանէ, նա զայլ ոք չարախօսէ կամ մատնէ. այլ մարդ զիւր հոգն հոգայ եւ զիւր մեղքն տեսնու առաջեւ իւր:

ՂԶբ 21 C Առիւծն հիւանդացաւ, ամէն էրէքն գնային 'ի տեսութիւն. երեկ արչն ու չարախօսէր զաղուեսն. աղուէսն 'ի դռնայմուտն լսէց եւ անկաւ առաջի առուծոյն ու թօալէր ու զլեզուն թափէր. ասաց առուծն. ոչ բարի եկիր, նենգօոր եւ գարշելի շուն. զքեզ ասէ ինձ. ընդ է՞ր յամեցար. եւ նայ ասէ. ո՞վ բարի թագաւոր, մի բարկանար ինձ. երդնում 'ի գլուխ քո, որպէս քանի օր է աշխատել եմ ու շուրջ եկէլ ու գտի խիստ աղէկ հաքիմ մի եւ իմաստուն եւ հարցայ, թէ մեր թագաւորն 'ի խիստ նեղած է. Աստուծոյ համար մեզ դեղ ասայ. թէ առողջանայ. մեք քեզ աղէկ շիջակ մի բերենք. եւ ասէ առուծն. բարի եկիր, իմաստուն կենդանի. եւ զի՞նչ ասաց քեզ. ասէ աղուէսն. հրամայեաց եւ ասաց, թէ բռնեցէք զառջն կենդանի եւ հանէք զմորթն եւ յայն պահն տաք տաք հագուցէք առուծուն. եւ նայ քրտնի եւ շուտ փարայտի ցաւն յիւրմէն. եւ հրամայեաց առուծն. կալան զառջն եւ սկսան ամենեքեան քարշել զմորթն առջուն. եւ նայ վայէր եւ գոռայր եւ փցլինքն փրփրայր եւ կսկծոյն եւ 'ի դուրս վազէր. ասէ աղուէսն. այտ 'ի քո յերեսդ եւ յայն մարդուն, որ երբ 'ի դատաստան մտանէ, զայլ ոք զչարայխօսէ:

Ցուցանէ առակս, թէ չէ պարտ չարայխօսել զոք եւ ոչ բամբասել. այլ զքեզ հոգալ եւ զքո մեղքդ:

ՂԶգ. 71 F ԱՐՋՈՒՆ ԵՒ ԱՂՈՒԵՍՈՒՆ

Առիւծն հիւանդացաւ. եւ զալ արջուն տեսանել եւ չարախօսեալ զաղուեսն. նոյնպէս եւ ամենեքեան գային 'ի տես. եւ ասէր առիւծն ցաղուեսն, թէ ամէնէքեան էկին 'ի տես զիս. եւ դու ոչ եկիր. եւ ասաց աղուեսն. վասն այն չեկի. զի որովհետեւ լվայ զհիւանդութիւն քո. 'ի հաքիմի շուրջ կու գայի եւ դեղ հարցանէի. եւ ասացին, թէ զարջուն մորթն քերթել մինչ 'ի ծնկվին եւ մինչ 'ի շլնիքն եւ արկանեն 'ի վերայ թագաւորին. եւ լաւնայ. եւ արարեալ այնպէս եւ խայտառակեալ արջուն՝ ելեալ գնայր. եւ ասէր աղուէսն. ո՞վ գագուռ գտակ եղբայր, որ գուրպանիտ մինչ 'ի ծնկուիտ է. յորժամ 'ի թագաւորն 'ի մօտ երթաս, զքո գանկատն մէն հասկցու:

Սոյնպէս լինին մարդիք խայտառակ առաջի իշխանաց եւ յահէ դատաստանին Քրիստոսի, որ զեղբայր իւր չարայխօսեսցէ:

ՂԷ. ԱՌԻԻԾ ԵՒ ԱՂՈՒԵՍ
(97 V=95 I)

Առիւծ մի կորիւն ծնաւ. եւ ժողովեցան կենդանիքն 'ի տես եւ յուրախութիւն. գայ աղուէսն 'ի մէնջ բազմամբոխին եւ մեծայհանդիսիւ նախատեաց զառիւծն յատեանն բարձր ձայնիւ եւ անարգեաց, թէ ա՞յդ է քոյ կարողութիւնդ. զի մի կորիւն ծնանիս եւ ոչ բազում. պատասխանի ետ առիւծն հանդարտայբար եւ ասէ. ա՞յոյ, մի կորիւն ծնանիմ, բաց առիւծ ծնանիմ եւ ոչ աղուէս քան զքեզ:

Ցուցանէ առակս, թէ առաջի Աստուծոյ լաւ է մի այր բարէգործ քանց հազար անզեղջ մեղաւոր. եւ

լաւ է մի աղքատ քանց, որ չէ դժոխոց. քան .Ռ. թագաւոր, որ դժոխոց լինի. եւ լաւ է մի որդի բարի քան .Ճ. որդի անաւրէն եւ չար:

ՂԸ. ԱՂՔԱՏ ԵՒ ՀՆԴԱՀԱՒ
(98 V=96 I)

Այր մի աղքատ ունէր բազում որդիս եւ պատրաստեաց նմայ Աստուած հաւ մի հնդի, որ յամէն աւր ածէր նմայ ձու մի ոսկի, որ յաւուրն բաւական լինէր նոցա յամենայն պէտս. եւ նայ ագահացաւ եւ ասէ. զենեցից զհաւն եւ առից զոսկի իշտեմարանս նորա եւ փարթամացայց. իբրեւ էզէի զհաւն, զտաւ 'ի փորն նորա իբրեւ զայլ հաւու եւ զրկեցաւ 'ի փոքր շահէն:

Ցուցանէ առակս, թէ որ ցանկայ անդէպ մեծութեան եւ աննման եւ ագահութեան ձեռն արկանէ, նայ եւ զոր ունի, զան կորուսանէ, որպէս պատահեցաւ Ադամայ [եւ] Եւայի:

ՂԹ. ՈՐՍՈՐԴ ԵՒ ԿԱՔԱՒ
(99 V=97 I=35 ag=87 B=46 D)

Որսորդ մի էառ կաքաւ մի եւ կամէր զենուլ զնայ. եւ ասէր կաքաւն լալով. մի զենուր զիս. եւ ես բախեցից քեզ բազում կաքաւս եւ ածից 'ի կամս քո. եւ ասէ որսորդն. այժմն մեռցիս 'ի ձեռաց իմոց. զի զսիրելիս քո եւ զազգս մատնես 'ի մահ:

Ցուցանէ առակս, թէ կազմես որոգայթ ազգի քո եւ սիրելոյ. եւ ոչ հաճի Աստուած 'ի գործս քո եւ քեզ պատրաստէ նոյն:

Ճ. ԷՇ ԵՒ ԱՒԱՆԱԿՆ
(100 V=98 I=84 ag)

Էշ մի էառ զաւանակն իւր եւ գնաց արածեր 'ի մարագ մի ցանկալի անմարդայբնակ տեղի. եւ ահայ գայ էշ մի որձ եւ հոտոտեաց 'ի յետոյս նորա. եւ նայ կիցս էհան զաւրութեամբ եւ եհար զնայ 'ի խամծերքն եւ ջախջախեաց. եւ նայ փախեաւ եւ գնաց անդի. եւ ասէ աւանակն, որ է քուռակն, լալով. վա՜յ մայր իմ. զի տառապիմք այստ միայն. զի բազում ահ կայ 'ի գազանաց. ասայ ինձ. ընդ է՞ր հարեր եւ վիրաւորեցեր զէշն, որ եկն առ մեզ. եւ ասէ մայրն. ո՞վ որդեակ իմ, մի երկնչիր. զի չէ յամելոց. քանզի յան տեղն որ հոտոտաց, որ թէ մինչեւ 'ի Ներքին Հնդիկն երթայ եւ կամ 'ի Խորասան, նայ փութով դառնայ առ մեզ:

Ցուցանէ առակս, թէ մարդ որ շնայ կամ զրկէ կամ գողանայ կամ սպանանէ եւ կամ զայլ մեղս որ գործէ, ոչ կարէ դիւրաւ զերծանիլ 'ի մեղաց. զի ցանկութիւն եւ հոտ մեղացն կապէ զնայ եւ քարշէ զնայ որպէս տոռամբ. զի մեղքն աւձն է, որ 'ի ծակն մտանէ եւ ոչ կարես 'ի յետս քարշել:

Ճա. 84 D Էշ մի էառ զաւանակն իւր՝ եւ արածէր յանմարդ տեղի մի. եւ եկն որձ էշ մի եւ էառ հոտ՝ 'ի յետուցն. քածն կիցս եհան եւ եհար աքցի զխամծէք կզակ որձ իշուն եւ ջարդեաց եւ փախեաւ գնաց. եւ ասէ մտրուքն. ընդ է՞ր զարկիր զնայ. զի մեզ ընկեր էր. այժմ գայլն զմեզ կուտէ. եւ ասէ. ո՞վ որդեակ, մի վախեր. 'ի հանց տեղաց հոտ առնու նա. որ թէ մէկ աւուր ճանապարհ երթայ, դարձեալ դառնայ եւ գայ:

Ցուցանէ առակս, թէ մարդ որ շնայ կամ զրկէ կամ գողանայ. յինք մեղք որ սովորի, որպէս շուն տոռամբ քարշեն. ամենայն մեղք զմարդն յինքն կու քարշեն, որպէս ասէ. տոռունք մեղաց պատեցան զինեւ. եւ օձի նման է մեղքն, որ 'ի ծակն սուր կումտանէ. եւ դուրս չեն կարել քարշել:

ՃԱ. ԹԱԳԱՒՈՐԱԶՆ ԱՅՐ ԵՒ ԼՈՒ
(101 V=99 I=5 ag=88 B=79 D)

Այր մի թագաւորազն սաստիկ նեղացաւ 'ի լուէ եւ տրուեստեաւ կալաւ զնայ. եւ լուն ասէ. աղաչեմ

զքեզ. մի սպանաներ զիս. զի փոքր է վնասդ, զոր արարի քեզ. եւ նայ ասէ. զոր կարացիր, արարիր:

Ցուցանէ առակս, թէ բնաւ մի առներ չար ումեք 'ի կեանս քո: Դարձեալ ցուցանէ առակս, թէ պարտ է իշխանաց եւ թագաւորաց եւ դատաւորաց՝ զփոքր չարայգործն հոգալ եւ տանջել. որ երկիցեն մեծայմեծ չարայգործն:

ՃԲ. ԿԱՊԻԿ ԵՒ ՁԿՆՈՐՍ
(102 V=100 I=76 ag=147 D)

Կապիկն, որ է ապուզն, այն սովորութիւն ունի. զոր ինչ եւ տեսցէ 'ի մարդն, զոր առնէ, զնոյն եւ ինքն առնէ. եւ ետես, զի ձկնորսն ձգել զուռկանսն 'ի վերայ ձկանցն եւ գնաց 'ի հաց. եւ իջեալ 'ի ծառէն կապիկն եւ էառ զուռկան եւ նման ձկնորսի ձգել 'ի վերայ ձկանցն կամեցաւ եւ ինքնն ըմբռնեցաւ 'ի նմայ եւ ասէ. յիրաւի ըմբռնեցայց. զի յան ձեռն արկի, որ չէի հմուտ:

Ցուցանէ առակս, թէ մի ձեռն արկեր եւ մի ցանկար գործոյ, որ չես հմուտ. չէ քեզ 'ի դէպ թէ մարմնաւոր, թէ հոգեւոր աստիճան, զի կորուստ լիցի եւ ոչ շահս քեզ հասնի. եւ ոչ ինչ լինիս:

ՃԳ. ԱԳՌԱՒ ԵՒ ՁԱԳՔՆ
(103 V=101 I=78 ag=148 D)

Ագռաւն ժողովեաց զձագս եւ խրատեաց զնոսա եւ ասելով. որդեաք իմ, մի լրբիք. պատրաստք եղերուք 'ի մարդկանէ եւ առաւել 'ի յայն ժամ, որ խոնարհի 'ի քար առնելն. եւ ասեն ձագերն նորա. ո՞վ մայր մեր, զինչ արասցուք, թէ յառաջայգոյն մարդն առեալ լինի զքարն 'ի ձեռքն իւր. ասէ մայրն. այժմն գիտացի, որ ապրելոց էք դուք:

Ցուցանէ առակս, թէ պարտէ անդադար պատրաստել 'ի հին որոգայթից սատանայից եւ 'ի նոր պատրանաց եւ նենգութեանց նորայ:

ՃԴ. ԵՂԵԳՆ ԵՒ ԾԱՌՔ
(104 V=102 I=24 C=24 C)

Թագաւորն հնդկաց ել 'ի զբաստանս շրջել 'ի լերինս եւ 'ի հովիտս. եւ ահայ ծառք մեծայմեծք բեկեալ եւ մանդրեալ են. եւ ահայ եղեգ մի կար 'ի կանկուն անարատ. եւ ասէ թագաւորն. ո՞վ եղեգն, ասայ ինձ. զի զարմանամ, թէ որպէս կաս հաստատուն եւ մեծայմեծք ծառքն մանդրեալ են. եւ նայ ասէ. ո՞վ բարի թագաւոր, 'ի գալ սաստիկ հողմոց ծառքն հպարտութեամբ հակառակին ընդ դէմ նոցայ, նայ բեկէ եւ ձգէ զնոսա. եւ իսկ ես խոնարհիմ 'ի կամս հողմոցն. նայ ոչ բեկեն զիս:

Ցուցանէ առակս, թէ պարտ է սիրել զխոնարհութիւն եւ զհեզութիւն եւ զհամբերութիւն եւ հաւանիլ. եւ շատք սատակեցան հպարտութեամբ:

ՃԵ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ՈՐՍՈՐԴՔ
(105 V=103 I=151 D)

Ձաղուէսքն տառապէին եւ նեղէին որսորդքն 'ի ձեռն շանց. եւ նայ դարձաւ եւ ասէ. աղաչեմ զձեզ, ասացէք ինձ, թէ յինչ պատճառս նեղէք զմեզ. եւ ասեն որսորդքն. զի հանցուք զմորթն քո. եւ նայ կանկեցաւ եւ ասէ. տէր Աստուած, զոհանամք զքէն, որ այս է խնդիր սոցա. ապայ ես գիտէի, թէ գաւառիս հաւի կցաւղ կամէին դնել կամ ճիտանոցի հայրապետ:

Ցուցանէ առակս, թէ ոչ կարէ հոգայցողն բարի առնել ամենեցուն. նոյնպէս եւ վանից հայրն ոչ է 'ի վանքն եւ ոչ 'ի գեղն, ոչ 'ի ներս եւ ոչ 'ի դուրս, լուր 'ի տանջանս կայ .Բ. մարդով յերեր կայ:

ՃԶ. ԷԾ ԵԻ ԹՐԻՔ
(106 V=104 I=85 ag)

Էշ մի անկաւ 'ի գետն եւ սկսաւ խեղդել եւ թրքեաց 'ի ջուրն. եւ եկն թրիքն 'ի վերայ ջրին եւ յառաջեաց քան զէշն. եւ ասէ էշն. ո՞վ պեղծ եւ չար 'ի յորովանէս ելար. ասայ ինձ, թէ զլողալդ 'ի յո՞ւր ուսար:

Ցուցանէ առակս, թէ կարի անպատշաճ է, յորժամ տղաք խրատ տան ծերոց եւ կամ տգէտքն գիտնականաց:

ՃԶա. 85 D Էշ մի անկաւ 'ի գետն եւ թրքեաց. եւ շուրջ գայր թրիքն 'ի վերայ ջրոյն. եւ ասէ էշն. ա՞յ չար՝ յորովայնէս դեւրս իջար. զլուդդ ուստի ուսար:

Ցուցանէ առակս, թէ կարի պէտ պատշաճ է, յորժամ տղայք խրատ տան ծերոց՝ եւ տգէտք գիտակաց եւ անմիտք իմաստնոց:

ՃԷ. ՓԱՅՏԱՀԱՏՔ ԵԻ ԾԱՌՔ
(107 V=105 I)

Փայտահարքն առին զփայտահատքն, որ է կացինն. եւ գնացին մտան 'ի մայրին եւ սկսան կոտորել զծառսն. եւ ծառքն ասեն. զի՞նչ է այս, զոր գործեն. եւ նոճին ասէ. վա՞յ մեզ, եղբարք, զի կոտքն 'ի մեզան[է] է, որ կոտորեն զմեզ:

Ցուցանէ առակս, թէ՝ մարդ, մի տար դու 'ի քէն զէն սատանայի. որ գայ եւ նովաւ սպանցէ զքեզ՝ քոյ մեղաւքն եւ ծուլութեամբ եւ հեշտութեամբդ եւ հեղգութեամբ: Որ ասի առակաւոր բան 'ի նոյն խորհուդս, թէ՝

ՃԷ. ՆԵՏ ԵԻ ԳԵՐԱՆ
(107 V=105 I)

Ի կռիւն հարին զնետն 'ի գերան. նայ ճանաչեց, զի յիւրմէն [էր] քերած. եւ ասէ. զարարեալ ձեռացս կերիցէ բերանս. եւ արժան եմ ես այսոր:

Նոյնպէս եւ մեք դիւացն աւգնութիւն եւ նիւթ տամք զմեր կամքն եւ զոժարութիւն եւ ծուլութիւն եւ զհեշտութիւն. եւ նոքա առեալ զմերն եւ զմեզ խոցեն եւ սպանանեն:

ՃԸ. ՎԷՄ ԵԻ ԿԱԹ
(108 V=106 I=152 D)

Բարձր վիմէ մի կաթեր ջուր բազում ժամանակս 'ի վերայ ապառաժ վիմի միոյ եւ փոս առնէր զվէմն:

Ցուցանէ առակս, թէ զաւրէնքն Աստուծոյ պարտ է լսել մեղաւորաց անդադար եւ բնաւ ոչ ձանդրանալ. եւ զի յորժամ լսէ անդադար, նայ սակաւ սակաւ տեղի առնէ եւ կակղայցնէ զսիրտն. զի բազումք ապրեցան 'ի լսելոյն եւ շատք կորեան. զի ոչ լսեցին. զի որ լսէ եւ ոչ առնէ, մեկ մեղք է. եւ որ ոչ կամի լսել, անբաւ կորուստ է. զի ոչ կամի լսել զաւրէնս արարչին իւրոյ:

ՃԸա. 89 D 'Ի բարձր վիմէ կաթէ ջուր բազում ժամանակս 'ի վերայ ապառաժ քարի եւ փոսացնէ զքարն:

Նոյնպէս եւ զօրէնքն Աստուծոյ եւ զքարոզն եւ զխրատ քահանայից պարտէ հանապազ լսել եւ ոչ ձանձրանալ եւ ոչ յուսահատիլ եւ ոչ վախել, թէ չեմ կարել առնել, զոր ասեն. ապա ոչ է պարտ, որ լսեմ: Զայն սատանայ 'ի միտքն կու ձգէ եւ յուսահատէ եւ կորուսանէ. զի յորժամ լսէ անդադար, նա սակաւ սակաւ տեղի առնէ եւ կակղէ զսիրտն. քանզիս բազում ապրեցան լսելով եւ կամ շատք կորեան. զի ոչ լսեցին. զի որ լսէ, չառնէ. մեկ մեղք է. եւ որ ոչ կամի լսել, անբաւ կորուստ է. զի ոչ կամի լսել զօրենքն Աստուծոյ:

ՃԹ. ԴԱՏԱՍՏԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌ ԱՂԲԵՐՔ
(109 V=107 I=88 ag=95 B=153 D)

Ճանապարհորդ մի հանկաւ յաղբիւր մի եւ գնաց. եւ անդ մոռացաւ .Ճ. դահեկան. եւ 'ի նոյն ժամն գայ ոմն խաչք անցանել եւ էառ զգանձն եւ փութով դարձաւ. եւ ապայ գայ այր ոմն իւր ճանապարհաւն. նայ կալաւ զնայ. եւ եկն 'ի տեղին եւ ասէ, թէ տուր զգանձն, զոր աստ թողի. զի այլ ոչ եկն աստ. եւ նայ երդնուր դառնայպէս, թէ չեմ տեսեալ. եւ տարաւ զնայ առ դատաւորն արքունի եւ չարչարեալ սպանին զնայ:

Եւ 'ի նոյն խորհուրդս մինն այս է եւ մինն այն է՝

Ցուցանէ առակս, թէ շատ պատահին այսպէս բանի, որ ալք կերիցեն զգանձս այլոց եւ է որ գողանալով եւ է որ շաթրութեամբ եւ մնան 'ի դատաստայն Աստուծոյ. եւ այլ ոք երթան վճարեն անմեղութեամբ:

ՃԹա. 10 ag Միայնակեց մի նստեալ 'ի վերայ վիմի միոյ եւ կայր յառաջեւն աղբիւր մի: Եկն առ աղբիւրն զօրական մի եւ նստաւ անդ. եկեր զհաց եւ ըմպեաց զջուր. եւ հինգ հարիւր սպիտակ 'ի տեղն եթող՝ եւ գնաց: Եկն մարդ մի այլ խմեաց ջուր՝ եւ էառ զդրամն եւ գնաց: Եւ զօրականն դարձաւ 'ի խնդիր դրամին եւ չգտաւ զդրամն. եւ մարդ մի այլ եկեալ էր 'ի ջուրն: Եւ իսպահին ասաց. տուր զիմ դրամն. եւ նա ոչ էր առեալ զդրամն. էզարկ եւ սպան զայն մարդ: Եւ միայնակեացն զարմացաւ, թէ այս ի՞նչ գործ էր, որ գործեցաւ. եւ 'ի զարմացմանէն 'ի քուն լեալ: Եկն հրեշտակ Աստուծոյ եւ ասաց, թէ այն իսպահու հայրն այն մարդոյ հօրն հինգ հարիւր սպիտակ պարտէր. նա զիւր պարտքն էառ եւ գնաց: Եւ այն մէկ այլ մարդոյ հայրն այն զօրականի հայրն սպանեալ էր. նա զիւր արիւն էառ եւ նա զիւր պարտքն. զի Քրիստոսի դատաստանն ճշմարիտ է աստ եւ 'ի հանդերձեալն:

ՃԺ. ՎԱՃԱՌԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԴԱՍՊԱՆ ԵՒ ՄՍԱԳՈՐԾ
(110 V=108 I=89 ag=13 A=96 B=154 D)

Վաճառական մի 'ի քաղաք մի եւ հանգեաւ. եւ յարեաւ շրջել 'ի քաղաքին եւ եկն 'ի մսայվաճառանոցն. եւ հասաւ նմայ պէտ արտաքին մարմնոյ. եւ էր ջրայտուն մերձ 'ի մսայվաճառանոցն եւ նայ եմուտ 'ի նմայ վճարել զպէտսն. եւ գող մի գար ծածկայբար զհետ նորայ վասն գանձին, զոր ունէր. եւ էմուտ փութով զհետ նորա եւ էհատ զգլուխ վաճառականին եւ էառ զգանձն եւ գնաց. եւ շատ էր աղմուկն եւ չէ իմացաւ ոք. եւ 'ի նոյն ժամն եկն մսայգործն 'ի ջրայտուն վճարել զպէտս մարմնոյն. եւ զան տեսեալ, վա՜յ գոչեաց ընդ անմեղութիւն իւր. եւ լուեալ մարդիքն կուտեցան 'ի վերայ. զի տեսին զնայ՝ խռկար եւ թաւալէր յարիւնն. զի դեռ էր սպանած. եւ տեսին զդանակ մսայգործին արիւնայթաթախ 'ի ձեռն իւր. եւ եկն դատաւորն 'ի յաղմուկն եւ հատուցին վիճիռ մահու 'ի վերայ մսայգործին եւ սպանին զնայ 'ի զուր:

Այս .Բ. առակս մի խորհ եւ մի միտք ունին. եւ շատք խաբին եւ այլ ընդ յայլ մեկնեն զսուտն. բայց այս է կատարեալ միտքն. զի շատ արդար մարդիք դատին եւ մեռանին անիրաւ եւ ընդվար. եւ դատաւորն ասէ 'ի միտս իւր եւ այ[լ]քն, թէ ուղիղ դատեցաք, զոր Աստուած սիրէ. եւ չէ զարմացումն. զի ոչ հրըշտակք է դատաւորն եւ ոչ մարգարէ. ոչ զայնյայտն եւ զծածուկն գիտէ նայ: Ապայ դատաւորին շատ պիտի, որ քննէ զբան եւ զվնասն եւ համբերել բազում աւուրս. նայ սակաւ սակաւ յայտնի ճշմարիտն. եւ միայկանի դատաստան չէ պարտ առնել. զի շատ վնաս լինի 'ի յայնմանէ. եւ կաշառաւք ոչ է պարտ թիւրել զիրաւունքն. զի անթողելի մեղք է առաջի Աստուծոյ: Վա՜յ է ինձ:

ՃԺԱ. ՇՈՒՆՔ ԵՒ ԿԱՇԻՆ ՅԱՂՈՅ

(111 V=109 I)

Թագաւորն ոմն կազմեաց զաւրաց իւրոց ճաշ վասն զի դեսպանք եկեալ էին. եւ առեալ մսայգործացն ժողովեալ զմորթն եւ զկաշին եդին յաղաղոցն 'ի մէջ շուկային եւ ինքեանք գնացին 'ի տունս իւրեանց. եւ 'ի մէջ գիշերին ժողովեցան շունք քաղաքին 'ի վերայ կաշեացն. զի կերիցեն. եւ ասէ աւագ շուն եւ մեծն 'ի նոցանէ, զոր իմաստուն կարծէին, թէ յառաջն զջուր աղոցիս արբցուք. զի արիւնայխառն է. եւ ապայ կերիցուք զկաշին. եւ սկսան լափել զջուրն արիւնայխառն եւ սաստիկ ուռուցեալ պատառեցան. զի կրայխառն էր աղոցին ջուրն. եւ ջուրն ոչ հատաւ եւ կաշին ոչ ժամանեցին:

Ցուցանէ առակս, թէ այսպէս ագահիմք եւ ջանամք որդիք մարդկան 'ի զրկել եւ 'ի յափշտակել, 'ի յուտել եւ 'ի յըմբել, 'ի յագահիլ եւ 'ի շնալ եւ յայլ մեղս. եւ պատառէ մահն զմեզ եւ ոչ կարեմք վայելել, զոր ագահութեամբ ժողովեցաք. ելանեմք յունայն յաշխարհէս. եւ դատայպարտութիւն մնայ 'ի վերայ մեր:

ՃԺԱ. 1 ag Թագաւոր մի կազմեաց սեղան դեսպանաց. եւ առեալ մսագործացն զկաշին եդին յաղոց 'ի մէջ շուկային: Եւ 'ի մէջ գիշերին ժողովեցան շունք քաղաքին յուտել զկաշին: Եւ ասէ մի ոմն 'ի նոցանէ, որ մեծն էր եւ իմաստուն. ասէ. եկայք նախ զջուրն լակեսցուք՝ եւ ապայ կերիցուք զկաշին. եւ սկսան լակել՝ եւ պատառեցան. եւ ո՛չ ժամանեցին յուտել զկաշին:

Այսպէս գայ մահն 'ի վերայ մեր եւ հեղձուցանէ զմեզ. զի ո՛չ կարեմք հասանիլ այն կենաց:

ՃԺԱԲ. 8 C Թագաւոր մի արար հարսնիս եւ շատ զուարակ եւ ոչխար զենեաց. եկեալ յանկարծակի դէսպան մի եւ կոչեաց զթագաւորն եւ առեալ մսայգործեացն զմորթերն եւ զկաշիքն եւ եդին յաղոց 'ի մէջ շուկային եւ գնացին 'ի տունս իւրեանց. եկին 'ի մէջ գիշերի եւ ժողովեցան շունքն, որ կայր 'ի քաղաքն. գամփռ շուն մի իւրեանց մեծն եւ էր կուր, ասաց ընդ այլ շներն, թէ յառաջ զաղջուրն խմենք. զի արունայխառն է եւ ապայ զկաշիս տանն ուտենք. սկսան 'ի լակել զջուրն արիւնայհամ եւ խիստ ջանք դրին. որ պարապէր. եւ ուռան ամէնն եւ պատռեցան եւ կաշիքն 'ի տեղն մնաց:

Ցուցանէ առակս. ագայհիմք զմարդկանց արիւնն եւ գայ յանկարծակի մահն եւ պատառէ զմեզ եւ ոչ կարեմք վայելել, զոր ագայութեամբ ժողովեցայք. ելանեմք դատարկ յաշխարհէս եւ մարդկանց մեղք եւ զրկանքն եւ դատայպարտութիւն մնայ 'ի վերայ մեր:

ՃԺԲ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ԱՒԶ

(112 V=110 I)

Աղուէսն եւ աւձն եղեն եղբարիք. գնացեալ առին գետի մի. եւ ասաց աւձն ընդ աղուէսն. ո՞վ եղբար, դու անցանիս զջուրն. եւ ես զի՞նչ անցանեմ. ասաց աղուէսն. եկ փաթուտեց 'ի վիզս. եւ յորժամ 'ի խորն գետին հասին. աւձն զերեսն 'ի յետ տարաւ եւ կամէր խայթել զաղուէսն. եւ աղուէսն յիմացաւ զայն եւ ասաց ընդ աւձն. ո՞վ եղբար. զերեսդ 'ի յետ ի՞նչ տարար յերեսէս. ասէ աւձն. կամիմ խայթել զքեզ, որ մեռանիս. ասէ աղուէսն. բեր համբուրեմ զերեսսդ. որ սիրոյ փափաքս անցանի հանց, որ խիստ սէր ունիմ ընդ քեզ. եւ կամեցաւ եւ եբեր զերեսսն. եւ աղուէսն էառ զվիզն 'ի բերայն եւ այլ ճար ոչ կար խայթելոյ. եւ յորժամ անցաւ աղուէսն յանկուս, սատակեցաւ աւձն. եւ ձգեաց զնայ 'ի գետին եւ թաթովն ողորդեաց զաւձն եւ ասէ. դեռ եղար ուղորդ, եղբար:

Ցուցանէ առակս, թէ զմարդն փորձել պիտի, որ նենգաւոր չէ լինի աւձուպէս եւ ապայ սիրելութիւն դնել 'ի հետն. զի սատանայ եւ նենգաւոր մարդն եւ չարն եւ անհաւատն եւ աներկիւղն մեկ է, որ խաբեն:

ՃԺԳ. ՇՈՒՆ ԵՒ ԽԱՒՍԱՒՂ ԵՒ ԱՂՈՒԵՍ

(113 V=111 I)

Շուն եւ խոսողն եղբարք եղեն եւ գնացին. եւ իբրեւ երեկոյ եղեւ, ել խաւսողն 'ի բարձր ծառ մի եւ թառեցաւ. անդ եւ շուն աւթեցաւ յիստորոտ վիմի միոյ, որ անդ կար մաւտ 'ի ծառն. եւ հաւայխաւսին խաւսեցաւ խաւսողն. եւ լսես աղուվէսն զձայն խաւսողին եւ եկն 'ի ծառին տակն եւ ոչ կարաց 'ի ծառն

ելանել. զի դժուարին էր. յանժամ ձայնեաց եւ ասէ. 'ի վար արեկ՝ գիշերս կանուխ է. որ յառաջն սաղմոս ասենք եւ ապայ զտէր եթէ շրթունքն ձայնիւ աւրհնեմք. զի այս գիշերս տաւն է. եւ ասաց նմայ խոսողն 'ի ծառէն 'ի վար, թէ ինձ մեկ ընկեր այլ կայ 'ի վիմին տակն. գնայ զարթոյ զնայ. եւ ես այլ իջանեմ եւ գանք միայբան աւրհնեմք զԱստուած. եւ յանժամ վազեաց աղուէսն կարծելով, թէ այլ խաւսող անդ կար եւ անկաւ 'ի վերայ շանն. եւ շուն էառ 'ի փողոցն եւ խեղթէր զնայ. եւ աղուէսն սկսաւ այլ ընդ այլ գոռալ եւ պեղծ ձայն ածէր. եւ ձայնեաց խօսողն 'ի ծառէն 'ի վայր եւ ասաց. ո՞վ աղուէս, այդ գարշելի ձաներդ, որ դու կոյ հանես, ոչ 'ի սաղմոսն կայ եւ ոչ 'ի շարակայն եւ ոչ յայլ գիրք. ատով տի աւրհնէիր զԱստուած. եւ շուն ոչ էթող զաղուէսն, մինչեւ խեղդեաց զնայ:

Ցուցանէ առակս, թէ զաղալ մարդն եւ զխալպն եւ զգողն եւ զայլ ամենայն չար մարդ հանդիպելոց գազան մարդկաց, որ զիւրեանք սատակեն եւ խեղդեն. որպէս շուն [ոչ] էթող զաղուէսն, մինչեւ խեղդեաց:

ՃԺԳ. ԳԱՅԼ ԵՒ ԱՂՈՒԵՍ ԵՒ ՋՈՐԻ
(114 V=112 I)

Գալն եւ աղուէսն եւ ջորին եղեն եղբարք եւ գնացին. եւ յորժամ քաղցեան եւ որս ոչ հանդիպեցաւ, ասացին. եկայք կերիցուք զայն, որ 'ի տարէց քիչ է. զայս ասացին գալն եւ աղուէսն. զի կամէին զջորին ուտել. եւ ասացին ընդ գալն, թէ որ տարոյ գալ ես. եւ նայ ասէ, թէ ես այն գալն եմ, որ Նոյ 'ի տապան էառ. Եւ գայ աղուէսն յառաջ եւ ասէ. ո՛ւ դու .Ժ. ազգաւ քան զիս փոքր ես. եւ ես ան աղուէսն եմ, որ Աստուած ըստեղծ: Եւ գայ ջորին. եւ էր նոր լուսնած. եւ ասէ. իմ թուական գրեալ կայ 'ի սըմբակս իմ. եկայք կարդացէք եւ տեսէք, թէ որ չափ տարոյ եմ. եւ կալեալ զոտքն 'ի վեր. աղուէսն ասէ ընդ գալն. գիտեմ, զի դու 'ի դպրոցի կացեալ ես. եկ կարդայ զգիրս. եւ գալն աւատաց եւ գնաց 'ի կարդալ. եւ ջորին ասաց. յառաջ ար եկ. գիրս մանդր է. եւ նայ այլ յառաջ գնաց. եւ նայ մեծ կարի զաւրութեամբ եհար զճակատ գալուն եւ ջախջախեաց. եւ երթար գալն կընձկըղալով: Եւ ասէ աղուէսն ընդ գլան, թէ եկ մանդր ալ կայ՝ տող մի, զան ալ կարդայ. ասէ գալն, թէ ես զգիրս ի՞նչ գիտէի. մեք յազգէ յազգ մսայգործ՝ մսայգործի որդիք ենք:

Ցուցանէ առակս, թէ ամենայն մարդ զիւր արուեստն թողու, որ սովորեր է եւ ուսէր, նայ թողու զայն եւ երթայ զայն անէ, որ չէ ուսէր եւ ոչ գիտէ, նայ ճակատն պիտի ջախջախի քան զգալուն. զի ամէն մարդ պիտի. որ զինչ որ ուսէր՝ զան անէ:

ՃԺԵ. ԽԱԻՍՈՂ ԵՒ ԹԱԳԱՒՈՐ
(115 V=113 I)

Զխաւսողն տարին 'ի դարպաս թագաւորին. զի գիշերն խաւսեսցի. եւ յորժամ ետես թագաւորն զխաւսողն, ասաց նայ, թէ զինչ պիտոյ է քեզ, ես տամ. դու սուրբ կացիր 'ի դարպասս: Եւ ետես թագաւորն, որ երթար զամենայն զէշ խառնէր ոտեաւքն եւ կտուցեաւքն. եւ թագաւորն ասէ. ո՞վ անմիտ, ոչ ասացի քեզ՝ սուրբ սուրբ կացիր. եւ դու հանապազ աղբ խառնես եւ 'ի դարպասս, ուր հանդիպի, կոխես եւ աղբոտես. ասէ. դժվարին է մարդոյ, որ զսովորական գործքն թողու:

Ցուցանէ առակս, թէ մարդ յոր գործ սնեալ է՝ թէ չար եւ թէ բարի, կարի դժուարին է մարդոյն, որ զհայրենական եւ զբնութիւն եւ զսովորական արուըստն թողու, որպէս զխաւսողն:

ՃԺԶ. ԱՅՐ ԵՒ ԼԵԶՈՒԱՆԻ ԿԻՆ
(116 V=114 I=122 ag)

Այր մի ունէր բարկայցաւղ եւ անզգամ կին մի լեզուանի, որ հանապազ անհանգիստ պահէր եւ տանջէր զայրն իւր. եւ յաւուր միում 'ի միտ էած այրն զան բանսն Պողոսի առաքելոյն, որ ասէ, թէ՝ լաւ է բնակել յանայպատի քան ընդ կնոչ անզգամի, լեզուանոյ եւ բարկացաւղի. եւ ասէ. ա՜յ կին, տուր ինձ

պարան. զի երթաց 'ի լեառն եւ բերից տանս փատ վառելոյ. զայս ասաց. զի երթար 'ի լեառն եւ անդ բնակէր. եւ կինն աղճատեաց եւ քաշմշեաց զայրն. եւ այրն գնաց լալով 'ի լեառն: Եւ իբրեւ գար 'ի լեառն 'ի շուրջ եւ եգիտ անդ 'ի լեառն դարտակ ջրհոր մի եւ ասէ ընդ միտս իւր. երթաց բերից զկինն իմ աստ. 'ի ջրհորս իջեցուցից եւ թողից աստ: Եւ գնաց առ կին եւ ասաց. ա՜յ կին, ես քեզ բան մի ասեմ եւ դու զան մարդոյ մի ասեր. եւ կին ասէ. ի՞նչ. եւ ասէ. գնացի 'ի լեառն եւ գտայ անդ ջրհոր մի դարտակ եւ իջի անդ եւ տեսի անդ ամանով կանացի զարթ ոսկեղէն եւ արծաթեղէն՝ ապառճան, մատանի, խալխանի, վզնոց եւ այլ բազում զարթ կանացի: Եւ ասէ կին ուրախութեամբ. երթանք հանենք զան եւ բերենք 'ի տունս մեր. եւ մարդ ոչ յիմանայ եւ ոչ տեսանէ: Եւ ելին եւ գնացին այրն եւ կինն. եւ իբրեւ գնացին 'ի բերան հորոյն, գնաց այրն, թէ իջանեմ 'ի հորն եւ դու բռնէ զպարայն. եւ կինն ասէ. ես իջանեմ. զի դու ոչ գիտես, թէ զինչ առնես. եւ այրն կալաւ զպարայն եւ իջուց զկինն 'ի հորն. եւ էհատ այրն զպարան եւ մնաց կինն 'ի հորն. եւ էբեր մեծ սալ քար մի եւ եդ 'ի վերայ հորոյ բերանին եւ գնաց 'ի տուն իւր. եւ էկաց աւուրս ինչ եւ ասաց, թէ երթաց տեսից զկին իմ, թէ զինչ եղեւ: Եւ յորժամ գնաց 'ի բերան հորոյն, ետես, զի դեւ մի կար անդ. եւ ասաց դեւն առ այրն այն, թէ՝ ո՞վ մարդ, աստ տար զսալն յետ, որ ելանեմ. եւ ես քեզ շատ բարութիւն առնեմ. այրն ասաց. զի՞նչ է քեզ. եւ դեւն ասաց. կին մի եկն աստ եւ անկաւ 'ի ջրհորս աստ. եւ անարգէր եւ քարշմշէր զայր մի. եւ ես ասացի, թէ քանի քաշմունք տաս, մեկ պահ քեզ դադար տուր. եւ նայ եթող զայրն զայն եւ վիճեցաւ ընդ իս. եւ փախուց եւ էհան 'ի բերան հորուս զիս. Աստուծոյ համար զիս ազատէ. եւ ասէ այրն. զի՞նչ խոստանաս ինձ. եւ նայ ասէ. երթամ եւ մտանեմ 'ի դուստր թագաւորին, որ քեզ տան: Յանժամ այրն ան երդում եդ դիւին եւ ծերպեաց զսալն. եւ ել դեւն եւ ասաց ընդ յայրն, թէ յորժամ գաս եւ առնուս զդուստր թագաւորին, ես երթամ եւ մտանեմ այլ թագաւորի դուստր. եւ դու անդ մի գար, թէ չէ՝ յայնմանէ կելանեմ եւ 'ի քեզ կոյ մտանեմ: Եւ ել դեւն եւ գնաց մտաւ 'ի դուստր թագաւորին եւ աղաղակէր 'ի բերանոյ աղչկայն, թէ զիս այս ինչ մարդոյ տուէք, որ ելանեմ. եւ յոր ժամ տարան զայրն զայն, ել դեւն եւ բժշկեցաւ. եւ տուին զնայ անոր եւ եղեւ թագաւորին փեսայ: Եւ յորժամ ել դեւն անդի, գնաց էմուտ յայլ մեծ թագաւորի աղչիկ մի եւ լկլէր զնայ չարայչար եւ անողորմ տանջէր. եւ թագաւորն այն լսեց, թէ թագաւորին փեսայն բժշկութիւն կոյ առնէ եւ դեւս հանէ: Յուղարկեաց թագաւորին բազում խիլախ եւ արմուղան, թէ ուղարկէ ցքոյ փեսայն, որ գայ զիմ դուստրն բժշկէ. եւ յիսնէ զինչ որ ոյզէ, տամ ես իւրն. եւ յայն ժամ աղաչեաց թագաւորն զփեսայն իւր, թէ գնայ. եւ նայ ել եւ գնաց. եւ յորժամ որ գնաց առ դուստր թագաւորին, ասաց դեւն, թէ ոչ ասացի անդ, թէ աստ մի գար եւ դու ընդէ՞ր եկիր: Յան ժամ փեսայ թագաւորին. ես եկից, զի քեզ յիմաց արարից. զի ան կին ելեալ է 'ի հորոյն եւ զքեզ կարի խիստ ուզէ. եւ ասէ դեւն, թէ ո՞ւր է. ասէ. աստ ահայ 'ի դուրս դարպասիս եկեալ է. եւ ասաց դեւն. Աստուծոյ համար եւ Աստուծոյ սիրոյն համար զնայ 'ի դուռն արգելէ մեկ պահ մի, որ ես 'ի յերթիքն 'ի վեր փաղչիմ եւ քեզի այլ շատ բարութիւն առնեմ. եւ այսպիսի բանիւ բժշկեաց զդուստրն թագաւորին. եւ ետ նմա թագաւորն բազում գանձս. եւ նայ առեալ գնաց:

Ցուցանէ առակս, թէ մարդ 'ի լեզւանի կնոչ հետ եւ անզգամի եւ բարկացողի ոչ ելանէ 'ի հուն. զի Պողոս առաքեալն կոյ հրամայէ, թէ լաւ է բնակիլ յանայպատի քան ընդ կնոչ անզգամի եւ բարկացողի եւ լեզւանոյ: Վա՜յ մեզ:

ՃԺԶա. 39 F Այր մի ունէր կին մի, որ խիստ անզգամ էր եւ լեզանի. եւ աղքատացաւ եւ ասաց կինն, թէ գնայ առ լուծք եւ տար քիչ մի կորեկ ցանէ, որ մեզ ապրանք լինի. եւ գնաց զարտն կու վարէր. եւ հոր մի բացաւ եւ շատ ոսկի կայր 'ի ներսնի. ասաց. արեկ զիս կախէ 'ի ներս, որ մտեմ հանեմ. ասաց կինն, թէ ես կու մտեմ. որ դու չմտես՝ զկէսն 'ի գտակտ լնուս եւ զկէսն 'ի ծոցտ պահես. եւ էր 'ի հորն դեւ մի երկաթած եւ կու ճչէր, թէ ով որ զիս 'ի հորուս հանէ, ես զինքն հարըստացնեմ. եւ նայ զդեւն կու լլկեր, մինչեւ գնաց այն մարդն ազատեց զդեւն. եւ ասաց դեւն, թէ քո աղէկուտ աղէկ. ես կերթամ մտեմ 'ի յայս անուն թագաւորի դուստրն եւ 'ի բերանոյ աղջկան պիտի ասեմ, թէ զայս անուն մարդ բերէք. որ ելնեմ. եւ երբ բերեն, դու առ .Գ. մազ 'ի գլխուն աղջկան եւ ձգէ 'ի վերայ կրակին եւ ծխէ յառջեւ քթին եւ ես պիտի փախչիմ. ապայ յայ[լ] մի գալ 'ի հետ, թէ չէ պիտի ելնեմ եւ 'ի քեզ մտեմ. եւ արար այնպէս. եւ ողջացաւ. եւ եղեւ թագաւորին փեսայ. եւ գնաց 'ի յայլ թագաւորի դուստր մտաւ. եւ էկին տանել, զի հանցէ. եւ գնաց յոչ կամայ եւ տէսեալ դիւին ասաց, թէ չաս[ա]ցի, թէ մի գալ. եւ ասացի մի գալ, եւ աս[ա]ց. չեմ էկել. որ հանեմ. այլ էկել եմ, թէ ի՞նչ առնենք. այն կինն ելեր է 'ի հորուն եւ զքեզ կու փնդռէ. էկել եմ՝ խապար կու

առնեմ. ասաց դեւն, թէ *վանց* Աստուծոյ բռնէ, մինչեւ ես փախչիմ. եւ այնպէս դուստր թագաւորին ազատեցաւ:

ՃԺԷ. ԱՅՐ ԲԱՐԻ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՔ ԵՒ ԴԵՒ ՈՐ Ի ՋՐՀՈՐ
(117 V=123 ag)

Այր մի բարի զատեալ յամենայն չարէ. եւ երթային ճանապարհորդք եւ վաճառականք յաշխարհէ յաշխարհ. եւ այս բարի այրս 'ի մէջ նոցա. եւ գնացին 'ի տեղ մի, որ ասէին, թէ .Գ. աւուր ճանապարհ ջուր ոչ կայ .Ա. ջրհոր կայ եւ անդի ընդ այն այլ .Գ. աւր ջուր ոչ գոյ. եւ յան ջրհորն բնակեալ կայր .Բ. դեւ. եւ զինչ որ մարդ անդ մտանէր, այլ ոչ ելանէր եւ գնաց քավրայն անդ. եւ ջուրն զոր ունէին, հատեալ էր. յանժամ կարուան այն ասացին, թէ ով որ առնու զիւր արեանն զինն եւ մտանէ 'ի ջրհորն եւ ջուր տայ. զի ով մտանէր 'ի ջրհորն եւ ջուր տար ամենայնի, յետինն որ զինքն 'ի վեր քարշէին, դեւ հատանէր զպարանն եւ զմարդն 'ի ջրհորն կորուսանէր. եւ ասէ ան մարդն, որ բարի էր, թէ ինձ տուէք զիմ արեան զինն. որ ես մտանեմ եւ տամ ջուր 'ի վեր. եւ առեալ զարեան զինն եւ մտաւ 'ի ջրհորն եւ ետ ջուր հաւասար ամենեցուն. եւ յորժամ զինքն կապէին, թէ 'ի վեր քարշեմք, դեւն էհատ զպարանն. եւ առեալ տարաւ զմարդն 'ի մաղազայն, որ անդ կար 'ի ջրհորն. եւ զի դեւն այն էր այլայկերպ եւ դժնիկ սեւայդէմ. եւ ասէ ընդ մարդն այն, թէ հաւանիս ինձ թէ ոչ. եւ ասէ մարդն այն, թէ փառք Աստուծոյ, որ զքեզ ըստեղծէր է եւ յաւրիներ՝ զատ քոյ կերպարանքդ, զայդ լուս երեսդ, զայդ ծովաչերդ. եւ սկսաւ գովել զամենայն տեղիք իւր մի ըստ միոչէ. եւ էր անդ ժահայիոտ գորտ մի. եւ ասաց դեւն այն ընդ յայրն յայն, թէ իմ գորտն ի՞նչ ազգ է. զի էր գորտն այն յոյժ աղտեղի. եւ այրն սկսաւ եւ գնայ գովել մի ըստ միոչէ զամենայն տեղիս գորտ այն. եւ յան ժամ ելեալ դեւն եւ գորտն մտին այլ ներսի մաղազայն եւ փոխեցան յայլ կերպարան լուսայփայլ եւ եկին առ յայրն յան եւ ասեն, թէ հիմի ի՞նչ տես ենք. զի մեկն կտրրճի կերպ եր լիալ եւ միուսն աղչրկան. եւ ասաց այրն այն, թէ գիտէի, որ դուք հանց գեղեցիկ էիք. նայ ես անոր համար յառաջն գովեցի: Եւ յանժամ առեալ դեւն զան եւ էմուտ 'ի ներսի մաղայզան. եւ էցուց նմայ զմարդիքն, զոր սպանեալ էր. եւ ասէ ընդ յայրն յայն, թէ սոքա ամենայնք ինձ չէ հաւանեցան. վասն այնորիկ սպանի: Եւ դու ինձ հաւանեցար եւ դու առ քեզ, որչափ որ կարես՝ մարգարիտ եւ ակունք, ոսկի եւ արծաթ եւ գնայ. զի դեւն ունէր շատ մաղազայն. եւ ասէ այրն այն. թէ ոչ կարեմ տանել. զի ջրհորս խոր է եւ ընկերք իմ գնացին: Յայն ժամ առեալ դիւին մազէ տոպրակ մի եւ էլից գնայ ոսկով եւ արծաթով եւ մարգարտով եւ ակաւք պատուականաւք եւ առեալ զինքն եւ զտոպրակն զանձովն եդ 'ի հորոյն բերայն եւ ասաց. գնայ: Եւ նայ գնացեալ էհաս կարուանին. եւ նոքա տեսին եւ զարմացան, թէ որպէս ազատեցաւ 'ի դիւէն այրն այն:

Ցուցանէ առակս, թէ բարի եւ խոնարհ մարդոյն Աստուած աւգնական է. եւ դեւք ոչ կարեն չար առնել նմայ. զի ասէ Սողոմոն, թէ արդարն որսողաց փրծանի. եւ փոխանակ նորա մատնի ամբարիշտն եւ ինքեանք անկցին:

ՃԺԸ. ԱՒԱԳԵՐԷՑ ԵՒ ՈՐԴԻՆ
(118 V=115 I=124 ag)

Ի քաղաք մի աւագ երէց մի ծեր կամեցաւ զորդին իւր քահանայ աւրհնել տալ. եւ ժողովեցան բազում քահանաք եւ եպիսկոպոսք եւ կանկեցան գիշերն 'ի հսկում. եւ յորժամ 'ի յաւրհնել կանկեցան զնորընծայն, յան ժամ 'ի տեսիլ տարան զնորընձայն: Զի էր բարձր սանդուխտ մի եւ 'ի սանդուխտին գլուխն էր զարմանալի դարպաս մի. եւ էր անդ բազմեալ թագաւոր մի եւ համարս առնէր 'ի քահան[այ]ցն, եւ բերին զծեր քահանայն 'ի սանդխտին տակն. եւ բերին զինչ կերեալ էր 'ի ժողովրդէն, եդին 'ի մի տեղ եւ կապեցին եւ բարձին ծեր քահանային, թէ առ եւ ել 'ի վեր եւ համար տուր թագաւորին. եւ նայ ոչ կարէր. զի բեռն ծանդր էր եւ սանդուխտն բարձր. եւ հրըշտակքն հրեղէն մաղթով մղէր զնայ 'ի յետեւանց եւ նայ ոչ կարէր ելանէր: Յանժամ մի 'ի լուսաւոր արանցն ասէ. թողէ՞ք զծերդ. զի զինչ որ առեալ է 'ի ժողովրդէն, որդոյն է կերցուցեալ. եւ ամենայն գիրք ասեն, թէ ով ուտէ, ան վճարէ: Եւ յանժամ բերին զնորընծայն եւ բարձին զբեռն նորընձային. եւ նայ ոչ կարէր հանել 'ի վերն եւ զհամարն տալ. եւ

հրըշտակքն որ մղէր զնայ յետեւանցն, կարի խիստ ցաւեցուց եւ նորընձայն 'ի ցաւուն զարթեաւ եւ փախեաւ եւ ոչ եղեւ քահանայ: Յայն ժամ ասաց եպիսկոպոսն, թէ ի՞նչ պատահեցաւ քեզ, որդեակ, որ չէ լինիս քահանայ. ասէ նորընձայն, թէ այն որ ինձ պատահեցաւ, թէ քեզ ալ էր պատահեալ յառաջն, դու ալ պիտի փաղչէիր յեպիսկոպոսութենէ:

Ցուցանէ առակս, թէ ով ուտէ, ան վճարէ եւ որ փոխ առնու, ան տայ 'ի տէրն. եւ զինչ մարդ որ ուտէ եւ ոչ վճարէ, ինքն տալոց է զհամարն առաջի թագաւորին Քրիստոսի, յորժամ գայցէ 'ի դատաստան:

ՃԺԹ. ԵՐԵՔ ԲԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ
(119 V=116 I=125 ag)

Էր իմաստնայսեր մի եւ ուսուցեալ էր զամենայն իմաստութիւն, զոր գիտէր, աշակերտին իւրոյ եւ .Գ. ոչ ուսուց. վասն այն զի կարի իմաստուն էր աշակերտն իւր եւ յորժամ ուսանէր, այլ ոչ կենար 'ի մաւտն. զի յոյժ սիրէր զնայ իմաստնայսէրն այն զաշակերտն վասն խոնարհութեան եւ ասէր. որդեակ, կաց առ իս մինչեւ 'ի վերջին աւրն իմ եւ զան .Գ. բան խրատն ուսուցանեմ եւ գնայ խաղաղութեամբ. այլ քեզ ինչ ոչ պակասեսցի. եւ նայ եկաց առ նայ մինչեւ 'ի մահուան աւրն. եւ յորժամ հիւանդացաւ զցաւ մահուն եւ գիտացաւ զմահն իւր, յայն ժամ ասաց աշակերտին, թէ եկ, որ ասեմ քեզ զան .Գ. բան խրատն. եւ ասաց ցնայ .Ա. զքու աղեկ աւրն վատու մի տար .Բ. յետնուցն 'ի վեր 'ի ճանապարհի մի երթար .Գ. զինչ որ աչաւքդ տեսանես, զան մարդոյ մի ասէր. եւ մեռաւ. եւ թաղեաց զնայ եւ ել գնաց 'ի քաղաք մի եւ ետես անդ բարձր մեծ դուռ մի եւ առաւաւտին աւելեաց զդուռն եւ ջուր ցանեաց եւ գնաց եւ Բ. աւր զայն արար. եւ Գ. աւր. եւ 'ի յաշ կացին եւ կալան զնայ եւ տարան առ դռան տէրն. զի էր պարոն. եւ ասէ պարոն. ո՞ւստի ես. եւ նայ զիրաւն ասաց. եւ ետես պարոն զտղայն. զի կարի գեղեցիկ էր եւ իմաստուն. եւ ասէ ցնայ. որդի, մեր թագաւորն որդի չունի եւ դու կամիս. զի տարաց զքեզ. զի որդէգիր եղիցես եւ ժառանգ աթոռոյն. եւ ասէ. դու գիտես, տէր իմ. եւ առեալ տարաւ զնայ առ թագաւորն եւ թագուհին. եւ արարին իւրեանց որդէգիր եւ եղեւ որդի թագաւորին: Եւ յաւուր միում ել թագաւորն գնաց յորս երէոց. եւ ունէր թագաւորն մատանի մի, որ աջողութեան տլիսմ կար 'ի վերայ ակին գրեալ. եւ զան մոռացեալ էր թագաւորն 'ի վերայ բարձին. եւ ասաց 'ի յորդէգիրն իւր, թէ գնայ՝ 'ի ներքեւ բարձին իմոյ մոռացայ զմատանին իմ. գնայ բեր զմատանին աջողութեան. եւ նայ ել յերէվայրն եւ գնաց. դռ գիշեր էր. 'ի մատանին առնել ետես, զի ննջեալ կայր նայիպ մի 'ի յանկողին թագուհուն. եւ նայ էառ զմատանին եւ գնաց եւ ոչ յումեք յայտնեաց զբանն: Եւ յանժամ խոհուրդ արարին նայիպն եւ թագուհին. զի յորժամ գայ թագաւորն, սպանանել տան զորդի թագաւորին. եւ 'ի գալ թագաւորին գնաց թագուհին յառաջ եւ 'ի զուր մատնեաց զանմեղ մանուկն, թէ յորժամ եկ գիշերն 'ի յառնել մատանուն, նայ դատայպատեաց զիս, որպէս կինն Պետափրեայ զՈվսէփ. եւ թագաւորն յամաչելոյ ոչ սպան զմանուկն յրռամկաց բամբասելոյ, այլ ուղարկեաց զնայ յայլում թագաւոր. զի ընդ իշխանութեամբ իւրով էր. եւ գրեաց առ նայ գիր այսպէս, թէ յոր ժամ գայ բերող թղթիս առ քեզ, դու զթղթին բերողին գլուխն կտրեցէք եւ առ իս ուղարկեցէք. եւ մատնայիարեցին զթուխտն արքունական մատանեաւն եւ ետուն յորդէգիր թագաւորին. եւ նայ առեալ զթուխտն եւ գնաց. եւ գրեալ էր 'ի մէջ թխտին այսպէս. թէ ասէ, թէ որդի եմ թագաւորին կամ նայիպ եմ կամ հաւասար իմն, մի լսէք՝ հատէք զգլուխ թխտին բերողին: Եւ առեալ զթուխտն եւ գնաց. եւ յորժամ յետինք եղեւ, մաւտ եղեւ 'ի գիւղ մի եւ յիշեաց զբանն իմաստնայսիրին, թէ յետնուց 'ի վեր 'ի ճանապարհ մի գնա. յան ժամ զտապլայպազն եհար. եւ ել ան նայիպն, որ ետես յանկողին թագուհոյն, եկն յառաջ եւ առաւ տարաւ զնայ 'ի տուն իւր եւ ասաց. հանկիր, կեր, արբ եւ ուրախ լեր եւ տուր զթուխտն 'ի յիս, որ տանիմ առ ան թագաւորն եւ քեզ խապար բերեմ. եւ նայ ետ զթուխտն 'ի նայիպն. եւ նայ առեալ գնաց. եւ հատին զնորա գլուխն, յորժամ կարդացին զթուխտն. եւ ետուն յայլում մարդ եւ էբեր 'ի գիւղն յայն առ որդի թագաւորին. եւ որդի թագաւորին առեալ տարաւ ետ 'ի հայրն. եւ տեսեալ զան զարմացաւ թագաւորն եւ գիտաց զբանն, որ յԱստուծոյ էր աջողումն. եւ որդեակ, ասէ թագաւորն, զի՞նչ գործեալ է քոյ. զի քեզ էր պատրաստեալ որոգայթս այս. եւ ասաց, թէ Դաւիթ ասէ. թագուցին ինձ որոգայթ եւ անկան ինքեանք 'ի նոյն:

Ցուցանէ առակս, թէ մարդ որ մարդոյ չար անէ կամ յորոգայթ ձգէ եւ որսայ, նայ ինքն պիտի անկանի յորոգաթն. եւ չար մարդոյն յինքն պիտի գայ չարն, որպէ՞ս ասէ Դաւիթ մարգարէն, թէ փորեցին առաջի

իմ խորխորատ եւ անկան ինքեանք 'ի նոյն: Եւ ասեն, թէ բարի արայ եւ չարի մի մնար. ասէ Սողոմոն. արդարն յորսողաց փրծանի եւ փոխանակ նորա մատնի ամբարիշտն. եւ թէ ոք զմարդոյ յայպն ծածկէ, որպէս զորդի թագաւորին, նայ բազում բարութեան տէր անէ զնայ Աստուած. եւ հրամայէ աւետարան, թէ մի դատիք եւ ոչ դատիցիք եւ ոչ պատժիցիք:

ՃԻ. ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ՔԵՌՈՐԴԻՆ ԵՒ ՆԱՅԻՊ
(120 V=31 ag)

Եւ էր թագաւոր մի եւ ոչ ունէր ժառանգ աթոռոյն իւրոյ՝ ոչ կտրիճ եւ ոչ աղչիկ. բաց քուրոչ որդի միմիայն ունէր եւ զնայ կամեցաւ ժառանգ առնել իւրոյ թագաւորութեան. զի թագաւորն զնայ յոյժ սիրէր. զի էր իմաստուն մանուկն այն եւ կարի յոյժ աղքատայսէր. եւ չարացաւ ընդ թագաւոր լինալոյն եւ ընդ բարութեան նորա մեծ նայիպ մի եւ հնարս իմացաւ, թէ որպէս չարայխաւսեսցէ զքուրոչ որդին առ թագաւորն. զի ինքն կալցէ զթագաւորութիւն յետոյ թագաւորին: Եւ աւր մի ասէ ընդ քուրոչ որդին թագաւորին, թէ բերան քո հոտեալ է, եւ դու ոչ գիտես, երթաս նստիս առ թագաւորն. եւ զէշ հոտն երթայ առ թագաւորն. եւ նայ բարկանայ քեզ. եւ քուրոչ որդին ասէ. ապայ ի՞նչ անեմ. ասէ նայիպն, թէ յորժամ երթաս նստիս, զերեսդ 'ի յալ դի դարձոյ. եւ ասաց. ա՜յոյ. երթայ նայիպն առ թագաւորն եւ չարայխաւսեսցէ եւ ասէ առ թագաւորն, թէ քուրոչ որդին չար խորհի քեզ. եւ ասէ. ի՞նչ գիտես. եւ նայ ասէ. յորժամ մաւտ քեզ նստի, զերեսն 'ի քէն պիտի դարձուցանէ. զի կամի զքոյ թագաւորութիւնդ առնել մինչեւ դեռ կենդանի ես: Եւ թագաւորն ըստ իւրում սովորութեան կոչեաց զքուրոչ որդին առ ինքն. եւ նայ ոչ գնաց վասն բերնին հոտոյն, զոր ասացեալ էր նայիպն. եւ իբրեւ իստիպեաց, գնաց նստաւ առ թագաւորն եւ զերեսն յալ դիի արար. եւ երկմիտ եղեւ թագաւորն եւ կամէր սպանանել զքուրոչ որդին եւ յայտնի ոչ կամէր. զի քո[ւ]րոչ որդի էր. այլ գիր ուղարկեաց առ այն վերայկացուն, որ երկաթիքանն էր. եւ գիրն այս էր գրեալ, թէ առաջին մարդն, որ առ ձեզ գայ, 'ի կրակն ձգեցէք. որ այրի. եւ ասէ թէ՝ ես թագաւորին քուրոչ որդին եմ կամ նայիպ եմ, մի լսէք՝ 'ի կրակն ձգեցէք. որ այրի. եւ ուղարկեցին զթագաւորին քուրոչ որդին 'ի յերկաթիքանն. զի արկցեն, որ այրի 'ի քուրայն: Եւ յորժամ երթար, եհաս երեկոյին ժամն 'ի մէջ լերինն յանմարդայբնակ տեղի. լսեց ժամայհարի ձայն եւ ասաց 'ի միտս, թէ Աստուած թագաւոր թագաւորաց է. Աստուծոյ հրամայն պարտ է կատարել յառաջն, ապայ թէ զիմ քեռոյն. եւ գնացեալ եկաց յաղաւթս եւ եկաց զգիշերն անդ եւ աղաւթեաց առ Աստուած. եւ ելեալ չարայխաւս նայիպն ձիովն 'ի վաղ եւ գնաց յերկաթի քան. թէ ոչ է ձգաց, զթագաւորին քուրոչ որդին 'ի կրակն՝ 'ի քուրայն նայ ինքն տայ ձգել: Յայն ժամ առին զինքն եւ արկին 'ի մէջ կրակին. եւ այրեցաւ. եւ յորժամ լուսացաւ, եկն քուրոչ որդին թագաւորին եւ տեսեալ զեղեալ գործն, յիմացաւ զսքանչելիսն Աստուծոյ, որ աղաւթքն իւր եղեն պահապան:

Ցուցանէ առակս, թէ աղաւթիւք ազատի ամենայն ոք 'ի չարէ, որպէս երեք մանկունքն 'ի հնոցին եւ Դանիէլ 'ի գուբ առիւծին. եւ զԵրեմիայ 'ի մէջ տղմին եւ զսուրբն Գրիգոր 'ի մէջ թիւնայվոր աւձիցն 'ի վիրապին. եւ զինչ աղաւթարար կայ, իւր աղաւթքն զինքն Աստուծոյ արժանի առնէ եւ յամենայն փորձանաց պահէ զինքն Քրիստոս Աստուած մեր. ամէն:

ՃԻԱ. ԱՂԱՒԹԱՍԷՐ ՊԱՏԱՆԻ ԵՒ ԿԱԽԱՐԴ
(121 V=117 I=126 ag)

Էր պատանի մի աղաւթայսեր, որ զամենայն աղաւթս իւր յայտնի կատարէր եւ այլ բազում աղաւթս առանձին մատուցանէր յԱստուծոյ. եւ սատանայ կամեցաւ զմանուկն զայն 'ի փորձ ձգել եւ յարուց կախարթ մի, որ ասաց ցպատանին, թէ արի եկ 'ի տունս իմ. եւ զոր ինչ խնդրես յինէն, տաց քեզ. եւ նայ գնաց անմեղութեամբ զհետ կախարդին. եւ կախարդն տարեալ զնայ 'ի տուն իւր եւ փակեաց զդուռն. եւ էմուծ զնայ այլ ներքսայգուն տուն եւ ասէ ցպատանին. կաց դու, մինչեւ ես եկից. եւ նայ եկաց անդ եւ կախարդն ելեալ գնաց եւ յուշացաւ մինչեւ յերեկոյն. եւ պատանին 'ի յաղաւթելոյն ոչ դադարէր. եւ յորժամ եկն կախարդն, գիշեր էր. յեւ ոտն խաղեալ էր. էբեր .Բ. ձի եւ ասաց. զմեկն դու հեծեր եւ զմեկն ես. եւ հեծան եւ գնացին. եւ պատանին ոչ գիտէր, թէ ուր տանէր զինքն. եւ գնացին յանհուն մեծ դաշտ

մի, որ լի էր էթոպացովք. եւ կար 'ի դաշտին մէջն սեւ բլուր մի եւ 'ի վերայ սեւ բլրին սեւ դարպաս մի եւ 'ի վերայ սեւ դարպասին սեւ չարտախ մի, որ սեւով էր զարդարեալ այն չարտախն. եւ 'ի մէջ սեւ չարտախին կար սեւ բազմայկան մի եւ 'ի վերայ սեւ բազմայկանին կայր բազմեալ սեւ թագաւոր մի. եւ գնաց կախարդն առ թագաւորն. եւ յայնժամ ասաց ան թագաւորն ընդ կախարդն, թէ իմ չարդատ մշակ, այսաւր ի՞նչ ես արարեր եւ զինչ ես վաստակեր. եւ ասաց կախարդն. զայս պատանիս բերի, որ քեզ երկիր պագանէ. եւ սեւ թագաւորն ասէ պատանոյն. ո՞վ պատանի, թէ երկիր պագանես ինձ դու, նայ քեզ հազարայպետ կարգեմ զաւրաց իմոց: Եւ յանժամ աղաւթքն 'ի միտքն անկաւ. զի մաւտ էր առաւոտն. յանժամ ասէ պատանին, թէ ես սովորեալ եմ յայսմն ժամու երկիր պագանել Քրիստոսի, որ խաչեցաւ վասն մեր եւ ազատեաց զմեզ 'ի ձեռաց սատան[այ]ի եւ 'ի դժոխոց եւ անկեալ երկիր էպագ ընդ յարեւելս եւ աւրհնեաց զԱստուած: Յան ժամ եղեւ ճաթմունք եւ որոտմունք եւ ցոլմունք եւ թընդմունք ահագին. եւ պատանին յուշայթափեալ անկաւ անդ եւ յորժամ յուշայբերեալ ել, 'ի վեր ոչ զոք ետես, բաց զինքն միայն 'ի մէջ անհուն դաշտին. եւ հրըշտակ եկեալ եցուց ճանապարհ պատանոյն, որ գնաց 'ի շէն եւ ասաց զեղեալ զգործն: Յան ժամ լուեալ թագաւորն եւ տարեալ զպատանին առ ինքն, եւ ասաց թագաւորն. ո՞վ բարի պատանի, ես յԵրուսաղէմ պիտի գնամ. եկ տանիմ զքեզ ընդ իս, որ երկիր պագանես Քրիստոսի սուրբ գերեզմանին եւ ամենայն տնաւրինականացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. եւ գնացեալ թագաւորն եւ էառ զպատանին 'ի հետ. եւ յորժամ երկիր պագին սուրբ տնաւրինականացն. եւ յոր ժամ գնացին երկիր պագանել թագաւորն եւ ինքն պատկերին Քրիստոսի, պատկեր խաւսեցաւ եւ ասէր. ո՞վ պատանի, միւս անգամ գալստեան իմոյ զքեզ բիւր հազարաց տէր առնեմ փոխանակ այնորիկ, որ առաջի զաւրացն դիւաց ինձ երկիր պագեցիր անահ եւ զիս Աստուած դաւանեցիր եւ հաւատացիր:

Ցուցանէ առակս, թէ Աստուած զաղաւթայսէրն յամենայն չարէ ազատէ եւ յամենայն փորձանաց դիւաց եւ յան կեանքն զփոխարէն հատուցանէ, որպէս հրամայէ աւետարան Քրիստոսի, թէ [ընդ] միոյ .Գ. եւ ընդ միոյ .Կ. եւ ընդ միոյ .Ճ. որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ:

ՃԻԲ. ԱՆԻՐԱՒ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԲԱՐԻ ՈՐԴԻՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ
(122 V=118 I=32 ag)

Էր թագաւոր մի անիրաւ, որ անիրաւութիւն առնէր եւ ունէր որդի մի բարի, որ ասէր եւ խրատէր զհայրն, թէ անիրաւութիւն մի առներ. եւ նայ ոչ լսէր որդոյ իւրոյ. եւ որդին ասէր առ հայրն իւր, թէ չէ երկնչի՞ս դու յԱստուծոյ անիրաւ դատաստան առնելոյ. զի աւետարան հրամայէ վասն թագաւորաց, թէ որով դատաստանաւ դատիք, դատելոց էք. եւ ամենայն Աստուածայշունչ գիրք զայս ասեն: Եւ յաւուր միում բարկացաւ նայ եւ աքսորեաց զորդին իւր եւ զկին որդոյն գնալ յաշխարհաւտար. եւ առեալ որդի թագաւորին զկին իւր եւ գնաց ոչ ինչ ունելով զհետ իւր. եւ երթեալ 'ի քաղաք մի, ետես զնայ ոմն իմաստնայսէր. զի գեղեցիկ էր տեսլեամբն. եւ ասէ 'ի միտս իւր, թէ սայ թագաւոր է կամ թագաւորի որդի. եւ գնաց յառաջ եւ մեծարեաց 'ի տուն իւր. եւ ասէ ցնայ. ուստի գաս եւ ում երթաս. եւ նայ զիրաւն ասաց. եւ նայ տուեալ նմայ մեծ դարպաս մի. զի կացցէ անդ, մինչեւ հայրն խնդիր արասցէ. եւ ոչ ինչ ունէր որդի թագաւորին. որ զպէտս տան իւրոյ գնէր. զի կարի դարտակ էր. եւ ելեալ գնաց 'ի տեղի մշակացն. զի կալցեն զնայ 'ի վարձու. եւ ոչ կալան զնայ 'ի վարձու: Եւ նայ գնաց 'ի հանգուցեալ եկեղեցի մի եւ անդ աղաւթեաց մինչեւ յերեկոյ եւ գնաց դարտակ 'ի տուն իւր. եւ ասաց կին իւր, թէ ո՞ւստի գաս. գիտէր, թէ կերակուր ունէր. եւ նայ ասաց, թէ այն որ զիս վարձու կալաւ, նայ ասաց. վաղն ալ ար եկ բանեց որ զ.Բ. աւուր վարձն մեկ տարպէ տամ. եւ նայ ասաց. բարի է. եւ գնաց վաղեաւն աւրն. եւ ոչ կալան զնայ 'ի վարձու. եւ նայ գնաց յեկեղեցին յայն եւ աղաւթեաց մինչեւ երեկոյ եւ յիրիկոյն եկն 'ի տուն իւր դարտակ. եւ կին համարէր, թէ կերակուր ունէր. զի. Բ աւր անաւթի էր. եւ ասաց այրն դարձեալ, թէ այն որ զիս 'ի վարձու կալաւ, նայ ասաց, թէ վաղն ալ երեկ բանեց եւ առ զ .Գ. աւուր վարձն եւ գնայ. եւ կին ասաց. բարի է. եւ վաղեայն աւրն ալ ոչ կալան 'ի վարձու. եւ նայ գնաց յեկեղեցին յայն եւ աղաւթեաց մինչեւ յերեկոյ: Եւ յորժամ ճաշք եղեւ, եկեալ լուսաւոր այր մի, որ է եկեղեցին այն, եւ եբեր .Գ. գեղեցիկ ակն պատուական առ կին զ .Գ. աւուր վարձն եւ ետ 'ի կինն եւ ասաց լուսաւոր այրն այն, թէ զմեկն ծախէ եւ զտան պետն տես՝ ասաց որդի թագաւորին եւ զերկուսն պահէ. զի ամէն ակն .Ճ. դեկան կարմի[ր] ածէր. եւ արար նոյնպէս, զոր պատուիրեաց լուսաւոր այրն: Եւ յորժան եկն որդի թագաւորին, ետես զկին. զի

.Բ. ակն երետ 'ի յինքն եւ զարմացումն կալաւ զնայ եւ ասաց. այս ի՞նչ է. եւ նայ ասաց. դու ուղարկեալ էիր լուսաւոր այր մի եւ ունէր .Գ. ակն զքու .Գ. աւուր վարձն. եւ զոր պատուիրեցեր ինձ դու, զայն արարի. եւ նոյն ժամայն գիտացաւ որդի թագաւորին զսքանչելիսն որ եղեւն. եւ ետ փառս Աստուծոյ ամենայկալին:

Ցուցանէ առակս, թէ՝ ով որ յաստուածայկուս կողմանէ լինի եւ համբերէ, նայ Աստուած զնայ 'ի բաց ոչ թողու, որպէս զԱբրահամ եւ զԻսահակ եւ զԱկոբ եւ զամենայն սուրբս, որք համբերեցին վասն անուան տեառն եւ պսակեցան 'ի յԱստուծոյ. նոյնպէս եւ ամենայն մարդ:

ՃԻԳ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ԱՐԾԻՒ
(123 V=119 I=127 ag)

Աղուէսն եւ արծիւն եղբարք եղեն եւ միայմտութիւն եւ երդումն արարին եւ դաշինք դրին ընդ միմեանս, թէ 'ի մեկ տեղ բերեն զորսն եւ ապայ ուտեն. եւ յորժամ աղուէսն որսար, գար արծիւն եւ 'ի մեկ տեղ ուտէին. եւ յորժամ արծիւն որսար, առնէր զորսն եւ երթար նստէր 'ի բարձր ծառս եւ 'ի բարձր վէմս, որ աղուէսն ոչ կարէր ելանէր անդ. եւ գիտաց աղուէսն զնենգութիւն արծւին եւ ասէ. ո՞վ եղբար, նենգաւոր եւ ագահ երեւիս եւ աւազակ:

Ցուցանէ առակս, թէ մարդ հետ ընկերոչ արդարութեամբ պիտի կենայ եւ ոչ նենգութեամբ եւ կեղծաւորութեամբ. զի մարդ որ հետ ընկերոչ ծուռ լինի, նայ նման է գողոց եւ աւազակաց եւ Ուդայի եւ Կայենի եւ մարդայսպանի:

ՃԻԴ. ԱՅՐ ՄԻ ԵՒ ԸՆԿՈՅԶ ԵՒ ՁՄԵՐՈՒԿ
(124 V=120 I=128 ag)

Այր մի ցանեալ էր յընկոյզի ծառի տակն պարտէզ ձմերուկ. եւ 'ի ժամ պտղին եկն ետես զձմերուկն մեծայմեծ. եւ հայեցաւ 'ի ծառն՝ ետես, զի ընկուզն մանդր էր, եւ ասաց. տէր Աստուած. զամենայն, զոր ըստեղծեր, 'ի կարգի է եւ նմանութեամբ. բայց այս .Բ. պտուղս անդէպ է եւ աննման: Եւ այրն պառկեալ կայր 'ի ծառին տակն եւ 'ի վեր հայէր 'ի ծառն. եւ հրամանաւն Աստուծոյ ընկուզ մի ոստեաւ 'ի ծառէն եւ կարի խիստ դիպաւ 'ի ճակատն. եւ պատառեցաւ եւ ել արիւն. եւ այրն ելեալ աղաղակէր առ Աստուած եւ ասէր. տէր Աստուած, զամենայն, զոր ինչ ըստեղծեր եւ արարէր, 'ի կարգի է եւ նմանութեամբ. եւ ով քու ըստեղծուածոյն ոչ հաւանի, նայ ճակատն քան զիմն պիտի լինի. եւ թէ ձմերուկն էր յընկուզին, զիս պիտի որ սպանանէր. զի այրն ասաց, թէ ձմերուկն 'ի ծառն պիտէր յընկուզուն տեղն եւ ընկուզն 'ի ձմերկին թուփն պիտէր:

Ցուցանէ առակս, թէ զամենայն, զոր արար Աստուած եւ ըստեղծ, բարի է ամենեւին 'ի կարգին եւ նմանութեամբ. եւ մարդ ոչ պիտի Աստուծոյ ըստեղծուածոյն բան ասէ կամ ոչ հաւանի եւ ասէ, թէ խոտան է կամ գէշ:

ՃԻԵ. ԹԷ ՈՐՊԵՍ ՄԵՌԱՆԻ ՄԵՂԱՒՈՐ ԵԿԵԱԼ Ի ՁՂՋՈՒՄՆ
(125 V=121 I=129 ag)

Այր մի զիւր ժամանակն 'ի մէջ մեղաց էր կացեալ էր ազգի ազգի չարեաւք եւ բնաւ ոչ էր հիւանդացեր. եւ գնաց ննջեաց առ հովանեաւ եկեղեցոյ միոյ. եւ եկն 'ի զոջումն եւ ել սկսաւ զեկեղեցին շինել. եւ յորժամ կատարեաց, հիւանդացաւ զցաւ մահուն եւ մեռանէր. եւ ասաց այրն այն. տէր Աստուած, այսքան ժամանակ 'ի մէջ մեղաց եւ 'ի մէջ չարեաց էի եւ ոչ հիւանդացայ. եւ յորժամ եկեղեցի շինեցի, հիւանդացայ եւ մեռանիմ. մի թէ իմ եկեղեցոյ շինելնս անընդունելի է: Եւ նոյն ժամայն պահապան հրըշտակքն ասաց նմայ. լինէր Աստուծոյ. զի Աստուած ողորմեցաւ. զամենայն մեղս, զոր գործեալ էիր, զոջացար, քեզ թողութիւն եղեւ. եւ քոյ եկեղեցոյ շինելն քան զամենայն բարի գործք առաւել է. Աստուած քեզ ողորմեցաւ:

Ցուցանէ առակս, թէ ով որ զոջանայ եւ 'ի մեղաց դառնայ, Աստուած զնորա մեղքն ոչ յիշէ. եւ Աստուած կամի, որ մարդն բարի գործէ եւ ապայ մեռանի. զոր իւրէն արժանի լինի. զի Աստուած ողորմած է:

ՃԻԶ. ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՋՐԱՂԱՑ
(126 V=130 ag)

Եկեղեցին պարծեցաւ 'ի սրբութիւն իւր եւ ասաց, թէ ես եմ տաճար Աստուծոյ եւ յիս զան քահանաք եւ ժողովուրդք յաղաւթս մատուցանել Աստուծոյ եւ պատարագ. եւ հաշտի Աստուած ընդ աշխարհիս. եւ մեղաց թողութիւն լինի: Յայն ժամ գայ ջրաղացն եւ ասէ ընդ եկեղեցին, թէ զինչ դու ասես, արդար է եւ ճշմարիտ է. բաց դու զիմ երախտիքն մի մոռանար. որ գիշեր ու ցերեկ կու աշխատիմ եւ կու դատիմ, որ կոյ ուտեն քահանաքն եւ ժողովուրդքն. եւ ապայ զան առ քեզ աղաւթել եւ երկիր պագանել Աստուծոյ:

Ցուցանէ առակս, թէ կան աշխարհի մարդիք, որ հանապազ աշխատին եւ դատին, որպէս մեղու. եւ թագաւորք եւ իշխանք եւ ամենայն մարդիք զվաստակս նոցա ուտեն եւ ապայ երթայ յեկեղեցին եւ զԱստուած աւրհնեն եւ յիշեն:

ՃԻԷ. ԵԶՆ ԵՒ ՁԻ
(127 V=131 ag)

Եզն եւ ձին խաւսեցան ընդ միմեանս. ասաց ձին ընդ եզն, թէ՝ դու ո՞վ ես կամ զի՞նչ պէտս ես. ասէ, ես ձի եմ, որ թագաւորք եւ իշխանք եւ պարոնայք կազմեն զիս ոսկով եւ արծաթով եւ բազմին 'ի վերայ իմ: Ասէ եզն. ամէն աշխարհիս շէն եմ ես, որ վաստակիմ եւ չարչարիմ եւ խոնջիմ. եւ ապայ դու եւ քու թագաւորն ուտէք. եւ ամենայն մարդ զվաստակս իմ ուտեն. եւ թէ ոչ վաստակիմ, դու եւ քու թագաւորն մեկ հետ մեռանիք. եւ դու երախտայմոռաց մի լինար:

Ցուցանէ առակս, թէ մարդ կայ, որ աշխատի քան զեզն. եւ մարդ կայ, որ հանապազ զձի հեծնի ու եւ աւեր ածէ աշխարհի. եւ թէ աշխատաւորն ոչ աշխատի, որպէս զեզն. նայ մեռանի ձին եւ հեծնող նորա:

ՃԻԸ. ԲԵՌՆԱԿԻՐ ԱՆԱՍՈՒՆ
(128 V=122 I=132 ag)

Անասուն մի բ[ե]ռնայկիր բարձեալ ունէր յինքն .Ա. հակն մահայդեղ. եւ .Ա.ն սուսեր սպանման. եւ գնացեալ էր առ նեղ տեղաց մի 'ի ճանապարհն եւ ոչ կարէր անցանել. եւ յորժամ նեղեաց զինքն, 'ի մեկ դիհէն սուսերն քոցեաց եւ 'ի մեկ դիհէն մահայդեղն հեղաւ եւ սպան զնայ:

Ցուցանէ առակս, թէ բեռնայկիրն մարդս է, որ պիտի զբարին բառնայ հանապազ 'ի յողն իւր, մինչ յաշխարհիս է. նայ մարդն յիմարեալ է 'ի ձեռն սատանայի եւ փոխանակ բարոյն զմեղքն է բարձեալ 'ի յողն իւր, որպէս սուսեր եւ մահայդեղ սպանման: Դարձեալ ցուցանէ առակս, թէ մարդն յիմարեալ է 'ի ձեռն սատան[այ]ի եւ թողեր զբարին, որ է դեղ կենաց, եւ բարձեալ ունի յողն իւր զմեղքն եւ զչարն, որ է մահայդեղ եւ սուսեր սպանման իւրոյ:

ՃԻԹ. ԵՐԿՈՒԱԿԱՆ ՄԱՆԴԻԿ
(129 V=123 I)

Մարդն 'ի վերայ աշխարհիս ունի .Ա. մանդիկ 'ի յուսն .Բ. ակնէն. զայլոց մեղքն առաջի ակն է 'ի վերայ կրծոցն եւ սրտին, որ հանապազ տեսանէ եւ բամբասէ. եւ յիւր մեղքն յետի ակն է 'ի վերայ յողին, որ ոչ տեսանէ եւ ոչ յիշէ եւ հանապազ զայլ ոք բամբասէ:

Ցուցանէ առակս, թէ ով 'ի յինքն մեղք ունի եւ զայլոց բամբասէ եւ զիւր մեղքն անտես առնէ, նայ իւր մեղաց տէրն ինքն է եւ բամբասելով առնու զայլոց մեղքն. եւ ասէ առաքեալն, թէ բամբասողք

զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն:

ՃԼ. ԽԼՈՒՐԴՆ
(130 V=124 I=133 ag)

Խլուրդն բնութիւն ունի, որ հանապազ զգետնին հողն 'ի վեր տայ եւ 'ի մեկ տեղ ոչ դադարի. ասեն, թէ ինքն գէշ հոտ ունի եւ ինքն 'ի յուր հոտոյն տեղաց 'ի տեղ փոխի. գիտէ, թէ հոտն 'ի տեղացն է. անդ եւ անդ զհողն 'ի վեր տայ. եւ գէշ հոտն առ ինքն է:

Ցուցանէ առակս, թէ կան մարդիք յաշխարհի, որ միշտ եւ հանապազ տեղաց 'ի տեղ փոփոխին եւ անհանգիստ են. եւ գէշ հոտ մեղացն անհանգիստութիւն է:

ՃԼԱ. ԱՂԱՒՆԻ
(131 V)

Աղաւնին բնութեամբ բարի է եւ միայմիտ. որ հանապազ զբուն եւ զդադարքն 'ի մեկ տեղ դնէ. եւ թէ՝ զինչ որ վնաս որ զայ իւրն, նայ ինքն զտեղն ոչ փոխէ վասն միայմտութեան, բաց թէ մահու չափ անհանգիստ պահեն, յայլ տեղ ոչ երթայ:

Ցուցանէ առակս, թէ մարդն, որ բարի է բնութեամբ, նայ գործքն չար մարդոյն նմայ անդէպ թըւի. եւ ատէ զնայ մահու չափ եւ անհանգիստ պահէ, եւ իւր չարն ոչ խայտառակի:

ՃԼԲ. ԱՆՈԽԱԿԱԼ ԽԱՉԵՂՋԵՐԱՒՈՐ ԿԵՆԴԱՆԻ
(132 V=125 I=134 ag)

Կենդանի մի կայ խիստ անոխայկալ եւ անվնաս եւ խոտ արծի. եւ մեկ եղջիւր կայ 'ի ճակատն եւ ծայրն 'ի վար է եւ ծայրն խաչայձեւ է. եւ յորժամ ծարաւի, երթայ 'ի ջուրն եւ եղջիւրովն խառնէ զծովն եւ ջուրն քաղցրանայ. եւ ըմբէ ինքն եւ զինչ որ կենդանիք կան. զի ամէն կենդանիքն նմայ հային, որ 'ի ծովն երթայ եւ զջուր խառնէ եղջիւրովն:

Ցուցանէ առակս, թէ ամենայն բարի մարդ չարութիւն ոչ ունի, որպէս այն կենդանին, եւ բարի մարդիքն, վարդապետքն, հայրապետքն, քահանայքն, ճգնաւորքն եւ ընդրեալ մարդիքն, որ ոչ ունին չարութիւն, նոքա կարող են զդառն քաղցրացուցանել եւ զչարն 'ի բարին դարձուցանել:

ՃԼԳ. ԼԾՎԱՐ ԵՒ ԱՒՁ
(133 V=126 I)

Երթար լծվարն 'ի վաստակս իւր. եւ աւձ մի սառեալ 'ի վերայ ճանապարհին. էառ եւ արկ 'ի ծոց իւր եւ ասէր, թէ յորժամ ջերնու, արձակեցից զնայ՝ վարձս համարելով. եւ յորժամ ջեռաւ, պատեցաւ զմջով լծվարին եւ ասէ ընդ լծվարին, թէ խայթեմ զքեզ, որ մեռանիս. ասէ լծվարն. զի՞նչ չար արարի քեզ. ասէ, թէ աղեկին աղեկ ոչ կայ. ասէ լծվարն. անաստուած բան մի աներ. հետ մի արիր հետ Ադամայ՝ անէծս ընկալար յԱստուծոյ, այլ մի աներ. եւ թէ անես, Բ. վկայ բերից քեզ. Քրիստոս կոյ հրամայէ, թէ .Բ. եւ երից վկայից հաստատի ամենայն բան. եւ աւձն ասաց. բեր վկայ. եւ նայ էհարց 'ի յեզն, թէ այ եզն, այս քանի տարի է, որ դու յիմ տուն ես եւ 'ի մեկ տեղ աղուհաց ենք կերեր. մեզ դատաստան արայ. եւ ասաց զպատճառն. եւ ասաց եզն. թէ աղեկոյն աղեկ կար, նայ աղեկ եզայն դանակ չէ կար. այսքանի տարի կայ, որ կոյ վարեմ եւ կոյ վաստակիմ, զհատն դու կոյտես եւ զարդն ինձի կոյ կերցընես. եւ յորժամ այլ ոչ կարեմ վաստակել, պիտի որ մորթես եւ զմիս ուտես. թող խայթէ. եւ ածէ լծվարն, թէ մեկ վկայ ալ պիտի. եւ աւձն ասաց. բեր. եւ անդ էր աղուէս մի կանկած. էհարց զպատճառն. եւ ասէ աղուէսն զաղտ 'ի մարդն, թէ ինձ .Բ. շերտ պանիր բեր. որ քեզ լաւ դատաստան անեմ. եւ ասաց լծվարն. ա՞յոյ, քեզ տկով պանիր բերեմ: Ցայն ժամ ասաց աղուվէսն ընդ աւձն, թէ ես միայկանի դատաստան ոչ առնեմ. ել 'ի ծոցուն եւ

կանկեց անդ՝ դէմ յանդիման եւ ասացէք զպատճառն. եւ ես արարից ձեզ դատաստան. եւ ել աւձն 'ի ծոցուն. եւ ասաց աղուէսն ընդ լծվարն, թէ հար մասուսովն եւ սպան զաւձն. եւ լծվարն էհար մասուսովն զաւձն եւ սպան զնայ. եւ գնաց լծվարն 'ի պանիրն 'ի բերել եւ ունէր .Բ. շուն եւ էբեր եւ էթող 'ի վերայ աղուէսուն. եւ աղուվէսն փախեալ եւ գնացեալ էմուտ 'ի ջաղաց մի, որ մարդ ոչ կար. բաց ջաղցայպան անդ էր պառկեր. եւ էր գիշեր եւ աղուէսն զմարդն ոչ ետես. զի անաւթի էր աղուէսն՝ գնայ յալուրտուն զպարտն 'ի լզել. եւ ջաղացայպան էառ 'ի յագին եւ եհար աստ եւ անդ, մինչեւ հատաւ ագին. եւ գնաց նստաւ 'ի վերայ վիմի միոյ եւ լար եւ ասէր, թէ ես ո՞վ եւ խատին ո՞վ:

Ցուցանէ առակս, թէ մարդ որ դատաւոր լինի եւ ահագի կամ զիւր արուրստն թողու եւ այլ առնէ, նայ քան զաղուէսն յանպոչ պիտի մնայ. զի ամէն մարդ զիւր արուեստն անէ, որ ուսեր է:

ՃԼԴ. ԷԾ
(134 V=127 I=135 ag)

Իշուն բնութիւն եւ սահմանք է. որ 'ի դիժար տեղ անկանի եւ կամ 'ի շաղախ խրի, այլ ան տեղովն չի գնար. կենդանիքն եւ անասունքն քան զէշն յիմար ոչ կայ եւ յարապն իշուն յիմար կասէ. եւ մարդ մարդոյ կասէ, թէ քան զէշն՝ անգէտ ես:

Ցուցանէ առակս, թէ մարդն փորձես մեկ հետ, նայ այն է, զոր տեսեր. եւ մարդն 'ի վերայ իւր բանին հարկեւոր պիտի կենայ. եւ զան բան, որ մեկ հետ փորձեր է, յալ անձն ոչ առնու. եւ թէ տանուտրութիւն եւ թէ այլ մեծութիւն է, յայլն ոչ առնու եւ թէ առնու, քան զէշն յիմար է եւ այլ անգէտ:

ՃԼԵ. ԱՆԶԳԱՄ ԿԻՆ
(135 V=128 I=136 ag)

Էր այր մի եւ ունէր կին մի անզգամ. եւ աւր մի լսեց յիմաստնոցն, թէ աղեկութիւն արայ եւ 'ի ծովն արկ եւ վատի մի մնար. եւ այր իւր սահմանք եւ սովորութիւն արաւ, որ յամէն աւր .Ա. հաց տանէր, 'ի ծովն ձգէր եւ Ա. ծովայէն գար եւ առնէր զհացն եւ տանէր իւրեանց թագաւորին. զայս արար այրն ժամանակ մի. եւ յաւուր միում ասաց ծովայենեաց թագաւորն, թէ զան մարդն 'ի յիս բերէք, որ զհացն 'ի ծովն արկանէր. որ ես աղեկին զաղեկն անեմ. եւ ել այրն ծովայենն, որ զհացն տանէր թագաւորին. եկն 'ի յան տեղն, որ մարդն զհացն բերէր. եւ յորժամ 'ի ծովն եարկ, ձայնեաց նմայ եւ ասաց. մի գնար. մեր թագաւորն ասաց, թէ 'ի յիս բեր զան մարդն. որ ես իւր աղեկոյն զաղեկն անեմ. եւ ես եմ, որ զքու հացն յամէն աւր թագաւորին տանէի. որ ուտէր. եւ ասաց եւ խրատեաց զմարդն, թէ զինչ տայ քեզ, մի առնէր. ասէ, թէ մեկ հետ բեր. որ լեզու իմ 'ի բերան քո հասցնեմ. եւ անցուց զքողն 'ի վերայ երեսաց մարդոյն եւ էառ եւ գնաց առ թագաւորն. եւ ասաց թագաւորն. ո՞վ մարդ, ոյզէ, զինչ ոյզես. որ տամ քեզ. եւ նայ ասաց. բեր զլեզու իմ 'ի բերան քո հասուցանեմ. եւ իբրեւ հասուց զլեզուն 'ի բերայն եւ յանժամ ուսաւ զամենայն կենդանեաց լեզուն եւ զգազանաց եւ զթռչնոց. եւ յորժամ ել 'ի ծովէն եւ գնաց եւ պառկեցաւ 'ի վիմի մի տակ. եւ եկեալ թռչուն մի նստաւ 'ի վերայ վիմին եւ ասէր, թէ այս մարդս ոչ գիտէ, թէ յայս վիմիս տակն ինչ կայ թաղած. եւ ասաց նմայ ծովայէն թագաւորն, թէ զքոյ բանդ մարդոյ մի ասեր, թէ չէ՝ պիտի մեռանիս: Եւ զոր լուաւ 'ի թռչունէն եւ ել էհան 'ի վիմին տակէն շատ մալ եւ տարաւ 'ի տուն իւր. եւ ետես կին իւր եւ խոշտանկեաց զայրն իւր, թէ այս ո՞ւստի է. եւ նայ երկնչէր 'ի մեռանելոյ եւ ոչ ասէր. եւ յորժամ կարի խիստ իստիպեաց անզգամ կինն այն զայրն իւր, թէ ասայ. յայն ժամ մատաղ արար այրն այն եւ հաղորդեցաւ, որ ասէր եւ մեռանէր. յայն գիշերն խօսողն .Գ. անգամ ծափ ետ եւ խաւսեցաւ. եւ շուն հաչեց եւ ասաց, թէ՝ ուրախութեամբ ծափ տաս, խաւսողն. վաղն մեր տէրն պիտի մեռանի եւ մեք անտէր տի մնանք. նայ խաւսաւղն ասաց, թէ ես ի՞նչ անեմ, թէ մեռանի. ես .Խ. կին ունիմ եւ յիմ հումքն կոյ պահեմ զամենն. եւ շուն ասաց, թէ խիստ անզգամ է. ի՞նչ անէ այրն. ասաց խաւսողն. ատոր բան խիստ հեշտ է. յերբ լուսանայ, թող երթայ կտրէ .Խ. կաղնի ջալոտ եւ ասէ ընդ կին, թէ եկ որ ասեմ քեզ զպատճառն. կին յանձն առնու եւ գայ. յորժամ .Խ. ջալոտ 'ի վրայն մանդրէ, ապայ պիտի գիտանաս զպատճառն. եւ արար այրն այնպէս. եւ յորժամ կարի զաւրութեամբ եհար զկինն .Ա. անկամ եւ կին ասաց. ինձ ոչ պիտի պատճառն այն. եւ այրն ասաց խաղեց. որ ասեմ եւ ուսուցանեմ քեզ. եւ կինն

երդումն էառ 'ի յանձն, որ ոչ հարցանէ զպատճառն, թէ ու՞ստի է:

Ցուցանէ առակս, թէ շատ մարդ կայ, որ զխորհուրդն կնոչն ասէ. նայ կին զայրն 'ի գլխոյն հանել տայ. եւ պարտէ մարդոյն եւ բազում բարութիւն առնէ կնոչն. զի մի մարմին են. բաց զսրտին խորհուրդն ոչ յայտնէ կնոչն իւր:

ՃԼԵա. 125 Բ Ասի թէ մարդ մի սովորեալ էր. որքան ապրեցաւ, զամենայն աւուրս իւր հաց մի տանէր եւ 'ի ծովն ձգէր. որ բահրիքն ուտէին. եւ յորժամ հանդերձեալ էր մեռանէր, պատվ[ի]ր[ե]ց որդոյ իւրում եւ ասէ, թէ ես յիմ կենդանութիւնս ամէն օր հաց մի տանէի ձգէի պահրեցն 'ի ծով. 'ի միտ առ. որ եւ դու քանի ապրիս, այնպէս առնես. օր մի քեզ դեմ կու գա. եւ մեռաւ այրն. իսկ որդին նմանապէս անձն էառ եւ առնէր պատվէրս հօրն բազում ժամանակս. եւ յաւուր միում կացեալ եզր ջրոյն, մինչեւ եկն բահրի մի առնուլ զհացն. եւ ասէ, թէ այս չափ ժամանակս իմ հայրս այսպիսի լաւութիւնս ձեզ արար. եւ ես կու առնեմ. դուք ի՞նչ փոխարէն պիտի առնէք կամ ե՞րբ. եւ յայնժամ ասէ պահրին այն. եկ առ իս եւ տարայց զքեզ առ հայրն իմ. զի քեզ փոխարէն հատուցէ, եւ 'ի գնալն պատվէր ետ առն այն եւ ասէ. թէ հայրն իմ բազում ոսկի, արծաթ եւ ականս պատվականս տալոց է քեզ, դու մի առնուր. այլ ասա, թէ 'ի քեզանէ զայն կու խնդրեմ. որ զճկոյթտ 'ի բերանս իմ դնես: Եւ գնացեալ առ հայրն բահրոյն՝ խնդրեաց զնոյն: Իսկ նա խոժոռեալ ասէ. դժուարինս խնդրես, որդեակ. ապա տամ վասն քո հօրն երախտեաց եւ քոյ. ապա մարդոյ թէ ասես, մեռանիս. ասէ այրն. ոչ ասեմ, այլ ամէն զօրութենէս պահեմ 'ի սրտիս: Եւ նա արկեալ զճկոյթն 'ի բերան մարդոյն արձակեաց զնա 'ի տուն իւր. եւ ելեալ այրն 'ի ծովէն 'ի դուրս փոշիմանացաւ, թէ զի՞նչ գործեցի. որ այն ամէն ոսկոյն եւ արծաթոյն եւ պատուական ականց չառի թողի, եւ դարտակ ելի, եւ այնպէս տրտմեալ գնաց նստաւ 'ի քարէատակ մի եւ 'ի տրտմութենէն քուն տարաւ պահ մի եւ զարթեալ նստաւ տարակուսեալ եւ տրտում եւ ոչ կամէր գնալ 'ի տուն իւր. եւ եկեալ յանկարծակի .Բ. ճնճղուկ նստան 'ի վերայ քարին եւ ասեն ցմիմեանս, թէ ի՞նչ խեղճ է մարդս այս. քանզի .Է. կարաս ոսկի կա այս քարիս տակն թաղած. նա չի գիտէ, որ հանէ եւ տանի 'ի տուն իւր: Իսկ նորա լուեալ հասկացաւ զլեզուս նոցա եւ ուրախացաւ եւ գնացեալ 'ի տուն իւր էառ բրիչ եւ եկեալ 'ի գիշերի գաղտ եհան զոսկին եւ տարաւ 'ի տուն իւր եւ սկսաւ փարթամանալ եւ տունս մեծամեծս շինել, ձիս եւ ջորիս եւ լուծս եզանց եւ գիհս ոչխարաց եւ այլ ամենայն ինչ, որ վայել է աշխարհասիրաց: Եւ աւուր միում ասէ եզն մի առ միւս եզն, թէ ի՞նչ առնեմ. զի անխնայ կուլծեն զիս ամէն օր եւ չեն ողորմիլ. ասէ էշն, որ մերձ էր. վաղն սուտ հիւանդ ընկիր եւ հազա՛. զի եզին հիւանդութեան նշանն հազալն է. երբ տեսանեն զայն. խղճան եւ այլ չի տանին զքեզ 'ի լծել. եւ զայս լուեալ այրն ծիծաղեցաւ եւ ասէ ցմշակն, թէ այսօր չէ վաղն այս նիշ էշն հիւանդ եզին տեղն լծէ: Իսկ մշակն վաղիւն տարեալ զէշն լծեց մինչեւ յիրիկունն. եւ յորժամ եկն 'ի տուն, ասէ էշն ցհիւանդ եզն, թէ ողորմելի եզնակ, դու ոչ գիտես, որ արտն խորհեցան, թէ այն եզն, որ հիւանդ է, վաղն մորթեմք. որ չի վատէ. լուր ինձ. կաց յոտն քո եւ առողջ կացիր եւ գնա լուծ քաշէ, որ չի զենեն զքեզ. լաւ է բանիլ քեզ քան թէ 'ի կենաց ելնել. զայս ասաց էշն. որ այլ զինքն չի տանին 'ի լուծ. զի յոյժ աշխատել էր այն օրն: Եւ զայս լուեալ այրն դարձեալ ծիծաղեցաւ. յայն ժամ ասէ ցնա կինն, թէ ո՞վ այր դու, մեք աղքատ մարդիք էաք եւ յանկարծակի հարստացաք եւ այս չափ ապրանաց եւ բարեաց տէր եղաք եւ ժամ ժամ կու կենաս դու ընդ քեզ՝ կու ծիծաղիս, ինձ է՞ր չես ասել, թէ ո՞ւստի է այս ամէնս եւ է՞ր կու ծիծաղիս: Ասէ այրն. ո՞վ կին դու, եթէ ասեմ, մեկուց կու մեռնիմ. այնոր համար չեմ ասել. իսկ կնոջն յանդգնեալ ասէ, եթէ որ ասես, չկա՞յ ճար. եւ նա ոչ կամէր ասել. բայց կինն չար նեղէր զնա եւ ասէր. պիտ որ ասես ինձ, եթէ մեռանիս ալ նա. ապա թէ ոչ՝ ես զինքս կու սպանանեմ. եւ այրն անճարեալ ասէ. ո՞վ կին, հաւատայ ինձ, որ առանց ամենայն տարակուսանաց կու մեռնիմ, թէ օր ասեմ. եւ երբ չտաս ինձ թոյլ, կաց մինչեւ .Գ. օր լուր. որ գիշեր պաշտօն պատարագ եւ մատաղ առնեմ՝ զքահանայս եւ զաղքատս կերակրեմ. ապա քեզ ասեմ եւ մեռանիմ. եւ չար կինն հազիւ անձն էառ համբերել մինչեւ .Գ. օր: Եւ այրն սկսաւ առնել զէնլիք բազում ոչխարաց եւ եզանց եւ կոչեաց զամենայն քահանայս եւ զկարգաւորս, այլ եւ զաղքատս քաղաքին. եւ յետ աղօթից եւ պաշտաման նստան 'ի ճաշ եւ մինչեւ դեռ ուտէին եւ ըմպէին եւ մարդն այն կայր 'ի սպասու եւ ունէր շան լակոտ մի, որ 'ի մէջ տանն նստեալ կայր՝ լի տրտմութեամբ եւ սգով, մինչ զի արտասուք թափէին աչացն նորա: Եւ իսկոյն յանկարծակի եկն ագաղաղն հպարտ եւ խրոխտալով եմուտ 'ի ներս եւ կայր հետ իւրն .Ի.Լ. հաւ աջմէ եւ ահեկէ. սկսաւ ասել շան լակոտն ցագաղաղն, թէ ով լիրբ եւ անաղուհաց, զի՞նչ ես խրոխտացել եւ ազգի ազգի ձայն ածես. ոչ գիտե՞ս, որ

մեր տէրն վաղն զիւր խորհուրդն կնոջ իւրոյ պիտի ասէ եւ մեռանի. եւ դու փոխանակ լալոյ ուրախ ես: Ասէ աքլորն, թէ իմ ձվերս 'ի վայր, թէ օր մեռնի. ես որ նորա ծառայ եմ .Ի.Լ. կին ունիմ եւ զափտ եմ արել զնոսա. եւ նա մինն չկարել իւր հրամանքն պահել. ասէ շան լակոտն. եւ զի՞նչ առնէ չար կնոջն: Ասէ աքլորն. երբ ելնեն մատղէն ամէնքն, թող առնու .Գ.Դ. դալար փայտ, զդուռն փակէ եւ ասէ ցկինն. եկ որ ասեմ քեզ զիմ խորհուրդս. եւ կալեալ զնա մերկացուցանէ եւ կապէ 'ի սիւն մի. եւ այնչափ ծեծէ 'ի կողոսն եւ այլ տեղիքն, որ ողջ տեղ չի մնայ. ամէնն կապուտկի. եւ ասէ, թէ անհարկի եւ չար կին, լաւ է. որ դու մեռանիս քան թէ ես. եւ հանեալ դռնէն 'ի դուրս վարէ զինքն ասելով. գնա կորիր. ես այլ կին կառնում. զքեզ չուզեմ: Եւ զայս բարի խրատ լուեալ ագաղաղէն՝ այրն այն դարձեալ ծիծաղեցաւ. եւ տեսեալ կինն պեղծ, եկն առ նա 'ի մէջ ամբոխին՝ ոչ ամաչելով 'ի մարդկանէ եւ ոչ 'ի քահանայիցն եւ ասէ ցայրն. ասա ինձ, թէ վասն է՞ր այժմ ծիծաղեցար եւ թէ ո՞ւստի հարստացեալ ես. եւ այրն աղաչէր. սակաւ մի համբերէ. թող երթան հիւրքս եւ ես քեզ ասեմ. այժմ ամօթ է առաջի նոցա ասել բան: Եւ յորժամ գնացին ամէնքն, եհան արտաքս զամէն ընտանիքն եւ փակեալ ամուր զդուռն, էառ 'ի ափ զվատ կինն ըստ խրատու ագլօրին, ջարթեց զամենայն ոսկերս եւ վարեաց 'ի բաց. իսկ կինն զղջացեալ յանկանէր ոտս նորա լալով եւ աղաչէր ասելով, թէ Աստուծոյ սիրուն համար մի ասեր ինձ բան եւ ամէն օր զիս այսպէս ծեծէ. միայն մի վարեր զիս 'ի դուրս եւ 'ի քեն 'ի բաց մի հաներ. որ չլինիմ խաղք աշխարհիս. եւ այսպէս ազատեցաւ մարդն 'ի մահուանէ խրատով ագլօրին:

Ցուցանէ, թէ մի զքո խորհուրդն մարդոյ այտներ. եւ թէ գիտես, որ զեն բերէ քեզ, կնոջդ ալ մի ասել, թէպէտ կէս մարմնոյդ է՝ թող թէ օտարաց. այս միտս ասէ Սողոմոն, թէ զխորհուրդն յայտնել առն յիմարի է գործ եւ ծածկելն՝ իմաստնոյ:

ՃԼԶ. ՍԻՐԵԼԻ
(136 V=129 I=137 ag)

Էր այր մի եւ ունէր կարի խիստ սիրոյն սիրելի մի. եւ գնաց այրն 'ի գինարբուսն 'ի մլճիս. եւ սիրելին անդ ոչ էր. եւ իբրեւ եղեւ խորին գիշեր, յիշեաց սիրելին զսիրելին իւր եւ գնաց առ սիրելին 'ի գինարբուսն 'ի մլճիսն. եւ մեծարեաց սիրելին առ ինքն եւ նստաւ. եւ անդ նոր եկեալ սիրելոյն՝ .Խ. մարդ կար՝ ամէն գաւաթ տուին. եւ սիրելին ոչ ետ. զի կարի խիստ հարբեցաւ, խնայեաց 'ի նայ. եւ յորժամ անկեալ 'ի գինոյն արբեալ, առեալ սիրելին 'ի շալակն իւր եւ երթար տանէր զնայ 'ի տուն իւր եւ ասաց, թէ դու ո՞վ ես, որ տանիս զիս. եւ նայ ասաց. զիս ոչ ճանաչե՞ս, եղբար. եւ յայնժամ գիտաց, որ սիրելին էր. յանժամ ասաց, թէ ամէն ինձ գաւաթ տուին եւ դու ոչ. սկսաւ տալ 'ի վերայ գլխին եւ ծրծեաց մինչեւ 'ի տուն. եւ սիրելին ոչ էթող մինչեւ 'ի տուն եւ պառկեցուց զնայ եւ անկողնովն ծածկեաց. եւ յերբ լուսացաւ, իմացաւ զեղեալն եւ ամաչէր եւ ասաց կնոչն. զենենք զուարակն եւ բերենք զմեր սիրելի եղբարն եւ պատուենք:

Ցուցանէ առակս, թէ մարդ .Ա. հետով կամ Բ. կամ Գ. եւ քանի սիրելին զսիրելուն զճաւրն վերձցնէ, նայ յետինն խէր պիտի լինի. եւ յորժամ գնաց առ սիրելին մեծարել 'ի տուն եւ անկաւ յոտն եւ ասաց. ո՞վ իմ եղբար, մի մեղադրեր ինձ. եւ ասաց միւս սիրելին, թէ՝ ո՞վ եղբար, համբերելով լինի, որ չարն 'ի բարին դառնայ եւ լինի զուարակն պարարակ:

ՃԼԷ. ԹԷ ՈՎ Է ԻՇԽԱՆ ԴԱՑԵԼ
(137 V=130 I)

Էր մեծ վանք մի. եւ հայր վանացն բարէկենդանին .Գ. ազգ ժողով արար եւ յետ 'ի յետ՝ տուն ծերոցն 'ի յետ եւ երիտասարդացն 'ի յետ եւ տղայոց 'ի յետ. եւ արար պատրաստութիւն եւ գնաց 'ի մէջ գիշերին եկն տեսանել, թէ զի՞նչ պակասեալ է. որ բերէ. եւ եկեալ յերդիսն ծերոցն եւ ետես. եւ գնաց 'ի բերել զպիտուս նոցա. եւ եկեալ յերդինս երիտասարդացն եւ գնաց 'ի բերել զպիտուս նոցա. եւ գնաց յերդիս ետես, զի դրեալ էին .Ա. վարդապետ 'ի տղայոցն եւ Ա. կաթողիկոս եւ Ա. եպիսկոպոս եւ Ա. երէց եւ Ա. սարկաւակ եւ այլն ժողովուրդք. եւ հայրն միտ դնէր. եւ ըմբռնեցին զմեկ աշխարհական 'ի մեղս եւ բերին առ սարկաւակն. եւ սարկաւակն ասաց, թէ երէցն աստ է եւ քան զիս մեծ է եւ ունի իշխանութիւն. առ նայ տարէք. եւ տարին. եւ երէցն ասաց, թէ եպիսկոպոսն աստ է. առ նայ տարէք. եւ տարին. եւ եպիսկոպոսն

ասաց, թէ կաթողիկոսն աստ է. առ նայ տարէք. եւ տարան. եւ կաթողիկոսն ասաց. վարդապետն աստ է. առ նայ տարէք. եւ տարան. եւ վարդապետն եդ կանոնս եւ արժանացուց ապաշխարութեամբ. եւ յորժամ զիշխանաւորքն ըմբռնեցին 'ի մեղս, ժողովուրդքն ասաց, թէ ժողովրդեան չէ պարտ, որ զիշխանաւորն դատէ. զի ասեն գիրք աստուածայինք, թէ մարդ ամենայն, որ ընդ իշխանութեան 'ի հնազանդութիւն կացցէ, մեզ ոչ է պարտ դատել. ինքն գիտէ եւ Քրիստոս:

Ցուցանէ առակս, թէ ժողովրդեան չէ պարտ զիշխանաւորն դատէ. զի ամենայն իշխանաւոր Աստուծոյ ազնիւ ծառայ է. եւ Քրիստոս հրամայէ, թէ դու ո՞վ ես, որ դատես զայլում ծառայ. եւ ամենայն գիրք աստուածայշունչք զայս ասեն:

ՃԼԸ. ԵՐԿՈՒ ԵՂԲԱՐՔ ԵՒ ԾԵՐ ԱԲԵՂԱՅ
(138 V=131 I)

Եղբարք .Բ. վիճեցան 'ի մի վանք. եւ բերին աւագ բարէկենդանին եւ հաշտեցուցին. եւ նստան ուրախութեամբ. եւ էր անդ ծեր աբեղայ մի, որ էր .Ճ. ամաց եւ ասաց, թէ այս ի՞նչ է. ասացին նմայ, թէ .Բ. եղբար խռովեալ էին. բերաք հաշտեցուցաք եւ ուրախանամք. վաղն մեծ պասն է եւ այսաւր մեծ բարէկենդան է. եւ ասաց ծեր աբեղայն, թէ տէր գիտէ, հաւատացէք ինձ, որ .Ճ. ամ է որ ոչ գիտեմ զհաշտենալն եւ զպասն:

Ցուցանէ առակս, թէ աբեղայն այն չէր կռուեալ հետ ումեք եւ հանապազ 'ի պահս էր. վասն այնորիկ ոչ զպահուց մուտն գիտէր եւ ոչ զհաշտութիւն. եւ ամենայն մարդ յառաջն պիտի հետեւի մինչեւ յաւրն մահու, որպէս ծեր աբեղայն:

ՃԼԹ. ՄԵԼԻՔ ԵՒ ԿԱՐԴԱՑՈՂ
(139 V=132 I)

Էր աշխարհայկալ մելիք մի եւ ունէր մեկ տղայ խիստ գեղեցիկ. եւ ասաց սուլտան մելիքն այն, թէ գեղեցիկ հարսն բերեմ իմ որդոյն՝ կին, որ գեղեցիկ թոռներ լինի իմ աթոռոյն ժառանգ. եւ գնաց եւ էառ գեղեցիկ աղչիկ մի՝ դուստր մեծ պարոնի ամիրայի. եւ դեռ որդի չէր եղեալ, մեռաւ որդին եւ մնաց հարսն. եւ ինքն կամեցաւ առնուլ զհարսն իւր. եւ հարցանէր 'ի կարդացողնին եւ 'ի խտտին եւ 'ի մուտառիսքն, թէ գոյ ֆաթվայ. որ առցէ զհարսն իւր. եւ ասէին, թէ ոչ. եւ նայ ոչ կամեցաւ լսել նոցա. յետոյ եկ մեկ կարդացող մի՝ իւր սիրելի եւ ասաց սուլտան մելիքին, թէ. ՀԲ. միլաթ կայ յաշխարհս եւ նոցա ամենեցուն ոչ հասանի. որ զհարսն առնուն, բաց քեզ հասանի. եւ նայ ասաց, թէ ասայ ինձ զպատճառն. թէ ամէն միլաթի ոչ հասանի եւ ինձ ընդէ՞ր հասանի. վախեմ ասել քեզ սպանանելոյ զիս. եւ նայ երդուաւ ոչ առնել չար նմայ. բաց զպա[տ]ճառն թող ասէ: Յայն ժամ ասաց կարդացողն այն առաջի հրապարակին, թէ դու յամէն միլաթէ 'ի դուրս ես եւ քաֆար եւ մնաֆըխ. եւ 'ի վերայ քո իշխանութիւն ոչ կայ. զինչ կամիս, զան առնես. եւ եկեալ սուլտայն 'ի զղջումն:

Ցուցանէ առակս, թէ մարդն, որ աշխարհի տէր լինի եւ հմքաւոր. եւ աներկուղ եւ անհաւատ լինի, նայ զինչ կամի, զան չարն գործէ. բաց պարտէ իշխանաւորաց զանպիսին յերես յերես յանդիմանել եւ նախատել:

ՃԽ. ԴՐԱՄԱԲԱՇԽ ՏԱՃԻԿ
(140 V=133 I)

Էր տաճիկ մի, որ հանապազ դրամ բաշխէր աղքատաց, թէ զԱստուծոյ անունն տուէք. որ վարձք լինի ինձ. յորժամ զԱստուծոյ անունն յիշէք, նայ Աստուած պիտի զձեզ յիշէ. եւ տարան զնայ 'ի տեսիլ եւ ասացին նմայ, թէ զչարայգործ մարդն թող 'ի չարէն դառնայ եւ ապայ զԱստուծոյ անուն յիշէ յան ժամ. եւ ապայ Աստուած զնայ պիտի յիշէ:

Ցուցանէ առակս, թէ մեղաւորն 'ի մեղաց դառնայ. եւ ապայ Աստուած աղաւթից նորա լսէ եւ այլ ոչ

յիշէ զմեղս նորա:

ՃԽԱ. ՔԱՀԱՆԱՅ ԵՒ ՂԱԴԻ
(141 V=134 I)

Էրէց մի եւ խատի մի եւ խատուն սեւ ծառայ մի երթային 'ի ճանապարհ եւ էրէցն ամենեւին ոչ խաւսէր. եւ ասաց խատին. քաշիշ, ասայ ինձ բան 'ի գրոց. ասաց երէցն. սէտի, նայ դու .Գ. հագուց ես հագեր պողպատի եւ ես մերկ եմ: Ա. զի խատի ես եւ շարաթ .Բ. զի մսըլման ես .Գ. քու իրաւն իրաւ է եւ սուտն ալ իրաւ է. եւ նայ ասաց. մի ահ կրեր. հանց բան ասէ, որ հաւանիմ. եւ երէցն ասաց. սէտի, նայ աստուած .Գ. տեղ պունիաթ ձգեց, նայ .Գ. ալ ղազալ եւ սուտ եւ մուխալըֆ գտաւ. ասաց խատին. յի՞նչ տեղ եւ յի՞նչ. ասաց երէցն .Ա. հրըշտակք ըստեղծեց, սատանայն սուտ եւ ղազալ գտաւ .Բ. զԱդամ 'ի դրախտն եդ եւ նայ զպատուիրան ոչ պահեաց, սուտ եւ ղազալ գտաւ. եւ Գ. յայս աշխարհս ձգեց պունիաթ, նայ .Գ. անգամ 'ի կռապաշտու[թիւն] անկաւ. թէպէտ ոչ կար եւ մարգարէք ոչ էին եկեալ եւ կարդացող ոչ կար, զայս աշխարհս զամէն սատանայ հեղ մի ալ 'ի կռապաշտութիւն էր ձգեալ. բաց զձեր ազգն խատին եւ մուտառիսքն պահէն 'ի ճանապարհ Աստուծոյ. եւ զմերն՝ վարդապետքն եւ եպիսկոպոսքն եւ Աւետարայն. եւ թէ ոչ կար գիրք կամ կարդացող կամ վարդապետ եւ յէլըմ կամ խատի կամ մուտառիս, հիմայ աշխարհս ամէն 'ի կռայպաշտութիւն էր անկեալ այլվի. եւ ինքն խատին խիստ հաւանեցաւ: Եւ ես ասացի, թէ ոչ ամէն մուսուլման իրաւ եւ ճշմարիտ մուսուլման է յայս ժամանակս. եւ ոչ ամենայն քրիստոնեայ՝ քրիստոն[եայ] է. եւ նայ ասաց, թէ՝ քաշիշ, զինչ ասացիր, իրաւ է:

ՃԽԲ. ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՒ ԱՅԼԱԶԳԻ, ԱՅԼ ԵՒ ԱՒՐԻՆԱԿ ՎԻՃԻ ՅԱՂԱԳՍ ՀԱՒԱՏՈՅ
(142 V=135 I)

Երկու մարդ վիճէին ճանապարհով որ երթային՝ Ա. քրիստոնեայ եւ Ա. այլազգի. եւ յորժամ յաղթեաց հայ քրիստոնեայն այլազգոյն, այլազգին ասաց. մի պատերազմիր. համբերէ. որ ես քեզ աւրինակ բան մի ասեմ. որ հաւանիս ինձ. եւ ասաց այլազգին այն, թէ՝

ԱՂՆ ԿՍԿԾԻ

Եւ Ա. մարդ մի յասդէնս աղ էր շալկեալ եւ երթար. եւ յորժամ խանջեալ աշխատեցաւ եւ ասաց. տէր Աստուած, դու ձրի տուող ես, որ տուիր ձրի զարքայութիւն Ադամայ: Աղաչեմ զքեզ արտասալից պաղատանաւք եւ խնդրեմ 'ի քէն. զոր Ադամայ տուիր, ինձ տուր, աղաչեմ զքեզ. իբրեւ զայս ասաց, եկն հրըշտակքն եւ ասաց, թէ ո՞վ մարդ, Աստուած լսեց քեզ. թող զաղն եւ եկ յարքայութիւն. եւ եղեւ այնպէս: Եւ գնաց յարքայութիւն 'ի դրախտն Ադամայ. եւ ասաց հրըշտակքն, թէ մի խաւսիր 'ի մէջ դրախտին. թէ չէ՝ կոյ հանեն զքեզ 'ի դրախտէն. եւ ետես 'ի մէջ դրախտին մեկ մարդ մի, որ ունէր .Ա. մեծ կացին եւ թողուր զմեծ եւ զգոսացեալ ծառերն եւ կտ[ր]էր զնորայտունկ մանդր ծառերն. եւ նայ ոչ համբերեաց եւ ասաց. ով մարդ, յի՞նչ թողուս զգոսացեալ ծառերն եւ կոտորես զփոքր եւ զմանդր. եւ յան ժամ ելաւ 'ի դրախտէն: Եւ այրն կրկին աղաչեաց զԱստուած տալ նմայ զդրախտն. եւ ետ նմայ զդրախտն. եւ գնացեալ էմուտ եւ տեսանէր. զի մի մարդ կար, որ ժողովէր փայտ եւ դնէր շալակ եւ ոչ կարէր տանել եւ այլ շատցնէր. եւ արար քան զտումի եւ քան զլեռ մի եւ ոչ կարէր տանել. եւ մարդն այն ոչ կարաց համբերել. ասաց նմայ, թէ՝ մարդ, զքիչն ոչ կարացեր տանել, զշատն զի՞արդ կարես տանել. եւ նոյն ժամայն ելաւ 'ի դրախտէն՝ եւ աղն 'ի շալակն. եւ այրն այն կրկին աղաչեաց զԱստուած. եւ գնաց 'ի դրախտն եւ ետես լեառն մի լուսեղէն դրախտովն եւ մէն եւ ամէն աշխարհովս իլի. եւ լծեալ կար. ՀԲ. լուծք. ՀԲ. դիհաց քարշէին. եւ այրն ոչ համբերեաց եւ ասէք. ընդէ՞ր 'ի մեկ դիհաց ոչ քարշէք. որ կարէք զլեառն շարժել. եւ ասացին նմայ, թէ ել 'ի դրախտէն: Եւ այրն այն ասաց, թէ ասացէք եւ պատմեցէք ինձ, ի՞նչ էր այն մարդն, որ զնորայտունկ ծառերն կոտորէր, եւ զայն որ զշալակն շալկէր, եւ լուսեղէն լեառն եւ ՀԲ. լուծքն:

Ցուցանէ առակս, թէ ան մարդն, որ զկացին ունէր, Գաբրիելն է, որ զմեծն թողու եւ զտղաքն տանի.

եւ այրն, որ շալակ դնէր, մեղաւորն է, որ զմեղքն ոչ կարէ տանել, նայ այլ շատցնէ. եւ լուսեղէն լեառն Աստուած է եւ ՀԲ. լուծքն. ՀԲ. միլաթն է, որ ամէն միլաթ դէմ իւր քարշէ, թէ ես եմ յառաջ եւ Աստուածն ամենեցուն է եւ անշարժ:

ՃԽԲա. 8 ag Այր մի ելանէր 'ի դժուար դար մ' 'ի վեր 'ի տօթ ժամանակի. յոյժ աշխատեցաւ եւ սկսաւ բամբասել զԱդամ եւ զԵւայ, թէ է՞ր անկայք 'ի դրախտէն անհամբերութեամբ ձերով. եւ երեւեալ հրեշտակին ասաց. թէ տանիմ զքեզ 'ի դրախտն, դու համբերե՞ս. եւ ասաց, թէ ե՞րբ լինի այդ. եւ յանկարծակի քուն 'ի վերայն անկաւ. եւ տեսեալ զինքն 'ի դրախտին ուրախացաւ. եւ ետես. զի մարդիք զտղայ ծառերն 'ի վայր տային. եւ չհամբերեաց եւ ասաց, թէ այդ ի՞նչ աներկիւղ մարդիք էք, որ զչորն եւ զգօսացածն թողեալ էք՝ եւ զտղայ եւ զմատղաշ ծառերն 'ի վայր կու տայք. որ զտղայոց մահն նշանակէ: Եւ բացեալ զաչսն ետես զինքն 'ի դարն 'ի վեր՝ եւ զաղն 'ի շալակն ջուալով եւ սկսաւ լալ: Դարձեալ ետես զհրեշտակն եւ ասաց. այլ չի խօսիմ. եւ տեսեալ զինքն 'ի դրախտին եւ տեսանէր զմարդիկք. զի զփուշ եւ զճիւղս ծառոց շալակ դնէին եւ չէին կարել շալկել՝ նա կու շատցնէին, որ զմեղս նշանակէ. որ չափ շատանայ, նա այլ գործէ. եւ չհամբերեաց եւ ասաց. ո՞վ անմիտք, թեթեւացուցէք. որ կարէք շալկել: Եւ տեսեալ զինքն այլ եւս 'ի դրախտին եւ տեսեալ վէմ մի մեծ եւ երկոտասան լուծք լծեալ 'ի նմա եւ ամէն մէկ յիւր դիմացն քարշէր. եւ վէմն չէր շարժիլ: Եւ չհամբերեաց եւ ասաց. ո՞վ անմիտք, ամէնքդ 'ի մէկ դիմաց լծեցէք. զի խախտել կարիցէք: Եւ վէմն էր ինքն Քրիստոս եւ լուծքն լծեալք են հաւատք ուղղափառաց երկոտասան ազգաց քրիստոնէից՝ իւրաքանչիւր յինքն ձգելով. եւ բացեալ զաչսն՝ ետես զինքն 'ի դարն 'ի վեր՝ եւ զաղն 'ի շալակն:

ՃԽԲբ. 164 ag Այր մի գնալով 'ի ճանապարհի հանդիպեցաւ արանց, որք զճոպանս կապեալ 'ի բուն վէմ մի. զի շարժեսցեն զվէմն եւ առ ինքեանս քարշեսցեն. բայց յամենեցունց կողմանց քարշէին, կամելով իւրաքանչիւր ոք առ ինքն քարշել եւ իւրացուցանել: Իսկ քարն ամենեւին անշարժելի մնայր եւ անխախտ: Ասէ այրն. ո՞վ մարդիկք, եթէ կամիք շարժել զդա 'ի տեղւոջէ իւրմէ, 'ի միոջէ կողմանէ քարշեցէք. զի շարժեսցի. քանզի յամենէ կողմանէ քարշելով՝ զդա շարժել անհնարին է. բայց նոքա ոչ կամեցան լսել նմա. այլ յամառեալ քարշէին ըստ սովորութեան իւրեանց. վասն որոյ քարն մնայր անշարժ:

Ցուցանէ: Վէմն է ինքն Քրիստոս ըստ Դանիէղի եւ Պօղոսի. իսկ քարշօղքն առ ինքեանս քրիստոնեայք. զի իւրաքանչիւր ոք ազգ քրիստոնէից կամի հակառակութեամբ զՔրիստոս առ ինքն քարշել, այսինքն իւրացուցանել. բայց Քրիստոս անշարժ մնայ եւ ո՛չ առ մի ոք գնայ. քանզի Քրիստոս ո՛չ կամի զհակառակութիւն եւ զընդդիմութիւն հաւատացելոց իւրոց. այլ զսէր եւ զմիաբանութիւն նոցին. որովք շարժի Քրիստոս առ նոսա:

ՃԽԳ. ՀՌՈՄԿԼԱՅԻ ՍՈՓԻ ԵՒ ԵՐԷՑ
(143 V)

Հռոմկալայի շուկային մէջն յետինք էր. եւ արուբստաւորքն շատք զբան թողեալ էին. զի յետի ժամն էր. եւ մանկայխելք երիտասարդն բանս դատարկ ասէին եւ ծիծաղէին. եւ էր անդ փերթկար մի սոփի. եւ ասէին ցնայ եւ ստիպէին. զի ծիծաղեսցի եւ կանկալ արասցէ հետ իւրեանց. եւ երէց մի անդ կանկեալ կար եւ ասաց երէցն ընդ սովին, թէ էր կանկալ չես աներ, որպէս նոքա. զի բնաւ ամենեւին ինք[ն] ոչ հայէր 'ի նոսա. յայն ժամ ասաց սոփին երիցուն, թէ 'ի մեր գիրքն գրեալ կայ. որ զմեծայմեծ ծառերոյն տակն ճիճին ուտէ, նայ ան ծառն չի ֆլեհիր. յետին 'ի տականց պիտի շրջի: Դարձեալ զառակն ինքն ասաց, թէ ամենայն դարտակ ծաղր եւ կանկալ մարդոյն խերին ճիճին է, որ զխէրն ուտէ, զինչ ճիճին զծառն. եւ հրամայէ աւետարայն, թէ ամէն դատարկ բանի համարս տալոց էք յաւուրն դատաստանին. եւ ասէ. վա՞յ ձեզ որ ծիծաղիք. զի սքացէք եւ լացէք. եւ մարդ ծիծաղածու դեւ է Գերզեսացի եւ ամենայն գիրք զծաղրն մեղք ասեն:

ՃԽԴ. ԿԱՒՇԿԱԿԱՐ ԵՒ ԱՆԱՊԱՏԱԿԱՆ
(114 V=136 I)

Կոշկար մի տաճիկ 'ի Պիր քաղաք նստէր 'ի շուկայն եւ կարէր. եւ գնացաք եւ կանկեցաք առ ինքն 'ի դուռն տուքանին. ասաց զայս բանս, թէ .Բ. եղբար կային՝ Ա. 'ի լեառն զեհետ էր եւ Ա. 'ի քաղաքն կոշկար. եւ եկեալ 'ի լեառնէն զեհետն եւ էմուտ 'ի կոշկար աղբարն եւ ետես, որ անյան կին մի, որ եկաւ մաւտ 'ի կոշկարն եւ ասաց, թէ զիմ կոշիկն մինչեւ աստ կարէ. եւ էբաց զսրունքն.եւ ասաց զեհետ աղբարն, թէ եղբար ջան, կին այլ մաւտ 'ի քեզ մի թողուր. որ չէ գայթակղիս. եւ նայ ասաց. ո՞վ եղբար, դու 'ի լեառն ես զեհէտ եւ աղաւթես, բաց յաւելի այն է. որ 'ի մէջ քաղաքի յիստակ եւ բարով կեն[այ]:

Ցուցանէ առակս, որ ասեն թէ կայ 'ի քաղաքի, որ չէ կայ յանայպատի. եւ կայ յանայպատի, որ ոչ գոյ 'ի քաղաքի. եւ 'ի մէջ քաղաքի այլ կայ բարի մարդ, որ չէ կայ յանայպատի:

ՃԽԵ. ՏԱՃԿԻ ԱՂԱՒԹՔ
(145 V=137 I)

Ասացաք. թէ տաճիկն յառաջին նամազն ոչ անէ, աստուծոյ յասի է եւ 'ի Մաքայէն որոշած է: Զ.Բ. նամազ չէ անէ, չարայգործ է եւ զաստուած ոչ յիշէ: Թէ զ.Գ. նամազն չէ անէ, յառաջնորդէն անիծած է: Թէ զ.Դ. նամազն չէ անէ, աստուած ասէ, թէ ոչ գիտեմ զձեզ: Թէ զ.Ե. չէ անէ, նայ ոչ կատարէ, զաստուած թողեր է եւ հետ սատանայի է դասեր:

ՃԽԶ. ԱՆԶԳԱՄ ՏԱՃԿՈՒՀԻ ԵՒ ՀՆԱՐԱԳԷՏ ԱՅՐՆ
(146 V=138 I)

Կին մի տաճիկ եւ անզգամ եւ էր գեղեցիկ եւ ոչ հաւանէր մարդոյ, որ առնէր. բաց կար գեղեցիկ մանուկ մի, նմայ հաւանէր. եւ նայ ոչ առնուր վասն անզգամութեան. եւ կին այն աղաչէր զայրն. եւ այրն ասաց. երդուիր ինձ, որ այլ անզգամութիւն ոչ անես. որ առնում զքեզ. եւ կին երդուաւ եւ յանձն էառ. եւ յորժամ առին մեկ զմեկ, ասէ կին ընդ այրն, թէ յամէն շաբաթ ինձ .Ա. աւր խաթունութիւն կոյ գայ. եւ դու ան աւրն պիտի համբերես: Յանժամ ասաց այրն. ես 'ի շաբաթն մեկ աւր խեւնամ Աստուծոյ համար. հանց արէ, որ 'ի յան աւրն չէ հանդիպի. եւ յաւուր միում ետես այրն զկին նստեալ 'ի վերայ խալիչային. եւ ասաց ընդ յայրն, թէ խաթունութիւնս եկաւ. յիմ հրամանքս կաց. եւ այրն ելաւ 'ի դուրս եւ եղեւ սուտ խէվ եւ դիւայհար եւ ունէր մեկ բիր 'ի յուսն եւ եկ 'ի տուն եւ եզար 'ի յան պատն եւ 'ի յան եւ գնաց դէպ 'ի կին. եւ կինն ֆիրիաթ կանչեաց, թէ ինձ խաթունութիւն ոչ պիտի եւ քեզ խեւնալ Աստուծոյ համար. եւ հնազանդեցաւ կինն այրոչ իւրոյ:

Ցուցանէ առակս, թէ շատ մարդ զանզգամ կին չարութեամբ 'ի հաւան բերէ եւ վախցնելով որհանապազ զահն 'ի վերայ պահէ:

ՃԽԷ. ՏԱՃԿԱՑ ԱՒՐԷՆՔ
(147 V=139 I)

Տաճիկ ֆախի[ր] մի զէշն փախուցեր էր եւ այլ ոչ կարէր բռնել. եւ երդումն արար 'ի վերայ կնոչ իւր, թէ .Գ. տալախ կնիկն պոչ լինի 'ի յիւրմէ, թէ զէշն բռնէ, հեծնու եւ այլ չէ իջանէ յիշուն եւ յորժամ բռնեց զէշն եւ հեծաւ եւ եկաց 'ի վերայ իշուն շատ մի եւ յեճեղեցաւ եւ քշէր զէշն եւ ինքն 'ի վերայ. եւ երթայ առ կարդացողնին, թէ ֆաթվայ տան. որ յերբ իջանես յիշուն եւ կինն ոչ թողուի. եւ ամենեքեան ասացին, թէ այդ բանիդ ոչ կայ ֆաթվայ. եւ յետոյ եկեալ մին կարդացող եւ ասաց, թէ մի տարէկուս լինիր. այտոր բան հեշտ է. գնայ քշէ զէշն 'ի ծառին տակն եւ ել յիշոյն 'ի ծառն եւ իջիր 'ի ծառէն 'ի վար:

Ցուցանէ առակս, թէ այլազգիքն առասպելք են եւ բնութեամբ զաւրինացն գործեն. քանզի աւրէնս ոչ ունին. զի անաւրէնք են եւ յամենայն աւրէնս իւրեանց զառասպելս խառնեալ ունին:

ՃԽԸ. ՃՈՒՀԻՈՅ ՏՂԱՅ
(148 V=140 I)

Ճուհուն տղայն գտաւ դեկան մի կարմիր եւ ձայնեաց մեծայձայն, թէ ես փող մի գտայ. մի մարդ մի անդ կար եւ ասաց, թէ այդ փողոյդ առ քեզ .Դ. փող եւ տուր. ասաց՝ չէ. ասաց՝ առ.Ժ. փող. ասաց՝ չէ. ասաց՝ առ .Ի. փող. ասաց՝ չէ. եւ նայ ետ եւ նայ .չէե ասաց: Եւ յորժամ թըւեցաւ ֆլորու մի փող, ասաց ճոհոյն տղայն, թէ խառընչէ քան զէշ. որ տամ. եւ նա զռաց. եւ նայ ասաց, թէ հաչէ քան զշուն. որ տամ. եւ նայ հաչեց. եւ յայնժամ ասաց ճուհոյն տղայն, թէ դու շուն եւ էշ խելաւքդ գիտէ՞ս, որ այս կարմիր դեկան է, եւ ես ո՞չ գիտեմ:

Ցուցանէ առակս, թէ 'ի մանկանց եւ 'ի տղայոց մէջն կայ, որ զմեծամեծ մարդիքն խաբեն եւ ոչ տահրկուին եւ խաբուին. եւ կան յաշխարհի մարդիք եւ մանուկ տղաք եւ ճգնաւորք, որ զսատանայ ծաղր առնեն եւ ոչ խաբուին եւ ոչ կորընչին:

ՃԽԹ. ՁԿՆԵՐԵՆԱԳԷՏ ՃՈՒՀԻ
(149 V=141 I)

Ճուհոյն հարն ձուկ էր գներ եւ տարեր էր 'ի տուն. եւ ճոհոյն մայրն 'ի յայրն ասաց, թէ ճուին հանապազ 'ի դուրս է եւ որսայ, զինչ իւրն պիտի, եւ ուտէ. եւ ձկայն մեծամեծն պահեցին 'ի փեթակն. զի հայրն եւ մայրն միայն ուտեն գաղտ. եւ զմանդրն 'ի հետ ճոհոյն կամեցան ուտել. եւ ճուհին զայն իմացաւ եւ ոչ կամեցաւ զծնողքն իւր խայտառակել. գնաց էառ զմին 'ի մանդր ձկանց, խաւսէր գաղտ ընդ ձկայն յականջն, որպէս թէ քսփստար. եւ մայրն ասաց, թէ ինչ զուրուցես 'ի հետ ձկայն. եւ նայ ասաց ձկերէն գիտեմ. ասաց. 'ի ձուկն ինչ ասացիր. ասաց ճուհին. 'ի ձուկն հարցայ, թէ զջրհեղեղին տարին գիտե՞ս թէ ոչ. ասաց մայրն, թէ ձուկն ի՞նչ ասաց. ասէ, թէ ասաց ձուկն, թէ մեք զան ժամանակն ի՞նչ գիտեմք. բայց այլ մեծայմեծ ձկունք կան 'ի գետակն եւ նոքա գիտեն. յանժամ մայրն զարմացաւ եւ ասաց. մի թէ դու ծածկայգէտ ես. եւ ել զպահաց ձկերն եբեր:

Ցուցանէ առակս, թէ մարդ քանի խիստ յաներես լինի եւ սուտ եւ խաբող, իւր ծնողացն պարտէկող պիտի լինի եւ հնազանդ եւ հլու:

ՃԽԹա. 40 C Ասեն վասն ջուհուն, թէ խարամզադ է ու բիճ. ու շատ պատմէ[ի՞ն] վասն նորայ. եւ յոյժ վիրաւորէր զծնաւղսն իւր. եւ օր մի հայր նորա գնեալ էր ձուկն փոքր եւ մեծ եւ տարաւ 'ի տունն. եւ ասէ ցկինն, թէ զմեծամեծքդ պահէ 'ի յանկիւնն. որ չիմանայ ջուհին. զի մեք մէն ուտեմք զնոսայ. եւ զմանդրն ճաշ արայ մեզ. զի մեք եւ ինքն կերիցուք. եւ պահն իմացաւ ջուհին. եւ եկեալ 'ի տունն, մինչ լուանայր ջուհու մայրն զձուկն եւ առեալ ձուկն մի անցուց 'ի յականջս նորա եւ տարաւ զբերանն 'ի խէչն. եւ մաւրն թուէր, թէ խաւսի եւ ընդ ձգանն, զոր տեսեալ մայրն ասէ, թէ ի՞նչ կուերնես, որդեակ. եւ նայ ասէ, թէ՝ խաւսիմ ընդ ձուգն. եւ մայրն ասէ ընդ որդին. ձգնէրէն գիտե՞ս. եւ ասէ՝ այո՛. ասէ մայրն. ի՞նչ խօսեցար 'ի յականջս նորա. ասէ ջուհին. հարցայ ընդ ինքեան վասն ջրհեղեղին, թէ քանի տարոյ լինի, մինչեւ Նոյ 'ի տապանն եմուտ. ասաց մայրն. ի՞նչ արար պատասխանի. ասէ ջուին. ասացին, թէ մեք տղայք ենք. յայնժամ չէաք ծնեալ. բայց կայն յանկիւնն մեծամեծ ձգունք, որ յիշեն զՅունանու փախչելն 'ի Թարսիս եւ զընկղմելն նորա 'ի ծովն. թվի, թէ նոքայ գիտեն զՆոյի նաւարկութիւն եւ թէ քանի տարի կայ նորա, զարհուրեցաւ մայրն ընդ այն բանին. որ ասէ. անհնար է, որդեակ. թէ սատանայ առանց զքեզ բան գործէ. որ դու չիմանաս, կապէ զքեզ Աստուած, այ պիղծ:

Ցուցանէ առակս զսատանայի խորայմանկութիւն. զի որպէս ջուհին խորայգէտ է, նոյնպէս եւ սատանայ. եւ պարտէ զգուշանալ 'ի նմանէ եւ խորայմանկութենէ նորա, որ անապազ ջանք նորա այն է՝ խաբել եւ խորայմանկել զորդիս մարդկան. զի այն կերակուր եւ ճաշակ նորա. եւ մեզ պատրաստ պիտի կենալ. որ չխաբիմք աղաչանօք ամենայն սրբոց:

ՃԾ. ՁՂՋԱՑԵԱԼ ՄԵՂԱՒՈՐ ԵՒ ՉԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆՆ

(150 V=142 I)

Այր մի էր բոզանոցի մշակ, որ հանապազ ուտէր եւ ըմբէր եւ պոռնկէր խիստ անառակ եւ յանյայգ. եւ զայս արար բազում ժամանակ եւ ոչ գար 'ի զղջումն. եւ Աստուած ետ նմայ ծանդր հիւանդութիւն եւ եկն 'ի զղջումն եւ ուխտեաց Աստուծոյ. թէ ողջանայ, Դ. ամ ապաշխարէ. եւ իսկոյն ողջացաւ եւ ասաց. երթաց գ.Բ. ամն կերաց եւ արբից 'ի բոզանոցն եւ զերկուսն ապաշխարեցից. եւ յորժամ զերկու ամն եկեր եւ էարբ 'ի բոզանոցն եւ խաբեաց զԱստուած եւ ասաց, թէ երկու ամն ալ շատ է. եւ էկեր մինչեւ 'ի տասն աւրն. եւ յորժամ մնաց .Ժ. աւր եւ փախեաւ մարդն այն եւ գնաց յայլ աշխարհ եւ սեւացուց զինքն, որպէս եթոպացի. եւ հիւանդացաւ եւ եկն հրըշտաքն 'ի յառնել զհոգին. եւ նայ աղաչէր զհրըշտաքն եւ պաղատէր, թէ ողորմեայ եւ զհոգիս մի առներ. զի ողջացայց եւ ապաշխարեցից. յանժամ ասաց հրըշտակքն. թէ մեկ աւր ապաշխարեալ էիր. Աստուած զքոյ մեղքն ոչ պիտի յիշէր. եւ իսպիտակերես պիտի որ տանէի զքեզ. եւ յորժամ իսպիտակերես ոչ եկիր, եկ որ տանիմ զքեզ սեւերես:

Ցուցանէ առակս, թէ արարիչն Աստուած ամենեցուն գիտակ է. զայն մեղաւոր մարդն, որ պիտ ապաշխարէ եւ դառնայ 'ի մեղաց, նայ Աստուած նմայ առողջութիւն պիտի տայ, որ ապաշխարիէ. եւ ինքն արարիչն Աստուած ասէ, թէ ես ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա 'ի չար ճանապարհէն եւ զկեալն, ասէ տէր:

ՃԾա. 39 D Այր մի էր, որ հանապազ ուտէր եւ ըմպէր եւ կատարէր զկամս մարմնոյ իւրոյ. եւ զայս արար բազում ժամանակս եւ գայր 'ի զղջումն. եւ Աստուած ետ նմայ ծանր հիւանդութիւն. եւ եկն 'ի զղջումն եւ ուխտեաց. թէ առողջանամ, Դ. ամ ապաշխարեմ. եւ ետ նմայ Աստուած առողջութիւն. եւ ասէ այրն, թէ երթամ գ.Բ. ամն ուրախանամ եւ գ.Բ. ամն ապաշխարեմ. եւ երբ եկեր եւ արբ եւ զերկու ամն եւ խաբել կամէր զամենատեսն Աստուած. մինչ որ մնաց .Ժ. օր. եւ ել գնաց յայլ երկիր եւ սեւացոյց երեսն եւ եղեւ որպէս զէթովպացի: Եւ եկն հրեշտակն խնդրել զհոգին. եւ նա ծանօթութիւն ոչ տայր եւ ասէր. ո՞վ ես դու. ոչ ճանաչեմ. ասէ հրեշտակն. եթէ ապաշխարեալ էիր երիս աւուրս, զքեզ տանէի սպիտակերես. չեկիր սպիտակերես, եկ որ տանեմ սեւերես եւ էառ զհոգին իւր:

Ցուցանէ առակս, թէ Աստուած կու խնայէ մարն (=մեղաւորն) եւ կու տայ ժամանակ ապաշխարելոյ. զի ասէ. ոչ կամիմ զմահ մեղաւորին. եւ թէ մարդն խոտորնակ ջանայ ընդդէմ եւ ոչ փոշիմանի, նա ինքն իւր անձինն կու վնասէ:

ՃԾբ. 192/183 D Հրեշտակ ասաց առ ջաղացապան մի, թէ ապաշխարէ. ԺԵ. ամ. որ արդարանաս եւ սրբիս 'ի մեղաց. զի հոգիդ պահանջեմ 'ի քեն. եւ ասէ ջաղացապանն. այդպէս առնեմ. եւ գնաց 'ի տունն եւ ասէ .Ժ. ամն ուտեմ եւ գ.Ե. ամն ապաշխարեմ. ապա ասէ. գ.ԺԱ. ամիսն ուտեմ եւ գ.Ա. ամիսն ապաշխարեմ. դարձեալ ասէ. ԻԵ. օրն ուտեմ եւ գ.Ե.ն ապաշխարեմ. Աստուած ողորմած է. այդպէս գ.ԺԵ. տարին անցուց ուտելով խմելով եւ ոչ ապաշխարեաց. ապա ասէ ջաղացապանն ընդ միտս իւր, թէ ահա գա հրեշտակն պահանջել զհոգիս. զի ոչ արարի, զոր հրամայեաց ինձ. եւ ոչ ապաշխարեցի եւ մեռանիմ մեղօք եւ լինիմ ամօթով. լաւ է, որ փախչիմ երթամ յաշխարհս մարդակերաց եւ լինիմ ըղտապան. երբ որ գա հրեշտակն, զիս որ ճանաչէ. եւ արար այնպէս. գնաց 'ի յաշխարհն այն եւ եղեւ ըղտապան. կապեաց զմազն ցիցն 'ի վեր եւ եդիր կարմիր գտակ 'ի գլուխն եւ երեսն մրով սեւացոյց եւ երթայր ընդ ճանապարհն աշխարհին այնորիկ. եւ ահա հրեշտակն մարդակերպ երեւեցաւ նմայ եւ ասէ. բարի գաս, եղբայր. եւ նա ասէ. ,Է՞շ թողուլ. յարապկերէն ասէր, թէ ի՞նչ կասես. եւ հրեշտակն թոյլ ետ նմա, որ գնաց սակաւիկ մի. ապա հրեղէն եւ հրեշտակակերպ երեւացաւ եւ հրեղէն սուրն 'ի ձեռնն. եւ ջաղացապանն զարհուրեցաւ եւ դողաց. ոսկերքն ամենայն կարկեցաւ. եւ այլ ոչ կամէր գնալ. եւ ասէ հրեշտակն ընդ ջաղացապանն, թէ ես քեզ ասացի, թէ ապաշխարէ. ԺԵ. տարի. որ արդարանաս եւ սրբիս 'ի մեղաց եւ սպիտակ երեսօք գաս յարքայութիւնն. ապա երբ որ չեկիր պարզ երեսօք 'ի յարքայութիւնն Աստուծոյ, այժմ եկ սեւ երեսօք 'ի դժոխքն:

Ցուցանէ. օրէնքն եւ մարգարէքն, առաքեալքն եւ մարտիրոսքն, հայրապետքն եւ հրեշտակքն ասեն, թէ ապաշխարեցէք եւ արդարացէք եւ եկէք 'ի յարքայութիւն եւ մի լինիք սեւերեսք, որպէս ջաղացապանն այն, որ սեւերես գնաց 'ի դժոխքն. ահա ժամանակ ընդունելի. ահա օր փրկութեան՝ ասէ. զի յորժամ

մարդ մեղօք մեռանի եւ լա, ոչ ինչ օգտի. զի Աստուած ոչ լսէ աղաչանացն. այլ այժմ լսէ, որ դեռ 'ի մարմնի եմք եւ կենդանի:

ՃԾԱ. ՀԱՅՐ ԴԱՆԻԷԼ ԵՒ ՔԱՐԱԳՈՐԾ ԵՒԼՈՒԺԻ
(151 V=143 I)

Դանիէլ սուրբ հայրն աղաւթէր 'ի լեառն մի. եւ քարայգործ մի Եւլուժի անուն կտրէր եւ շինէր յամէն աւր .Բ. քար Ա. քարին գին 'ի տուն խարճէր եւ զ.Ա. աղքատաց բաշխէր. եւ քարգործն աղաչեաց զսուրբ հայրն Դանիէլ խնդրել 'ի յԱստուծոյ տալ նմայ ըռզակ. եւ հայրն սուրբ ասէր. որդեակ, փոխանակ սրբութեան քո կամիս մեղանչել. եւ ասաց քարգործն Եւլուժի, թէ ոչ մեղանչեմ, հայր սուրբ, այլ եկեղեցի շինեցից եւ խան եւ 'ի վերայ գետոյ կարմուճ կապեցից. եւ սուրբ հայրն խնդրեաց յԱստուծոյ. եւ յորժամ եկն 'ի կտրել քարին եւ շրջեաց մի քար եւ գտաւ կարսով մի կարմիր եւ յանժամ հնարս յիմացաւ, թէ մարդ ոչ տեսանէ. գնեաց .Բ. ձի եւ էառ զկին եւ զորդիքն եւ ձգտեալ կարմիրն եւ գնաց 'ի Ստըմբաւլ եւ էառ մի ըսկուտեղ կարմիր եւ տարեալ թագաւորին. եւ թագաւորն զարմացաւ զկարմիրն եւ ասաց. զի՞նչ կոյզես, ոյզէ. որ տամ քեզ. եւ նայ էհարց 'ի սիրելի բարէկամս իւր եւ ասաց. քան զթագաւորութիւն 'ի վայր այլ ի՞նչ կայ. եւ նոքա ասեն. վազիրն է. եւ նայ գնաց խնդրեց եւ էառ. եւ եղեւ վազիր. եւ այլ ոչ յիշեաց զպատուէր սուրբ հաւրն. քանզի վազիրն քան զթագաւորն 'ի վայր էր եւ զամենայն հումք եւ հրամանք վազիրն անէր. եւ զամենայն մարդ վազիրն պիտի դատէր. եւ յորժամ բերէին առ ինքն 'ի դատաստան, զմէկն կախէր եւ զմէկն սպանէր եւ զայլն ազգի ազգի տանջէր եւ չարչարէր. եւ հայրն սուրբ ետես, զի այլ ոչ երեւէր քարգործն եւ ոչ գիտէր, թէ յուր է. եւ աղաչեաց զԱստուած. զի յայտնեսցէ նմայ, թէ յուր է. եւ յայտնեցաւ նմայ, թէ վազիր է 'ի յԸստամպաւլ: Եւ ել գնաց անյապաղ անդ եւ ետես զնայ, որպէս էրն վազիր. եւ շատ ջանաց, թէ տեսանեմ զերես նորա. եւ յորժամ հայէր յերեսս նորա, դարձուցանէր զգլուխ ձիոյն յայլ դիհ. եւ ոչ կարէր տեսանել:

Եւ եկեալ յայնայպատն իւր եւ աղաւթեաց առ Աստուած առնել զիշխանութիւնն. եւ վախճանեցաւ թագաւորն. եւ զորդին ետ զնայ 'ի բանդ եւ պահանջէր զինչս հաւրն. զի վազիր էր. եւ ամենայն ինչս թագաւորին 'ի ձեռս նորա էր. եւ քանդեաց եւ կողոպտեաց զինչս նորա. եւ եհան 'ի քաղքէն աքսորեաց. եւ յետ աւուրց ինչ եկն յառաջին տեղն 'ի քար կտրել եւ եկն հայրն Դանիէլ առ նայ. եւ եկն առ յոտս նորա անկաւ եւ խոստովանեցաւ զանցանս իւր, զոր գործեալ էր. եւ սկսաւ զառաջին գործն գործելն, որ էրն:

Ցուցանէ առակս, թէ շատ մարդ ըռզակ հանէր 'ի գլխոյն. եւ ըռզակի տէրն հանապազ 'ի հոք եւ 'ի բազմունք եւ 'ի տարայկուս է. եւ ըռզակն զտէրն տայ 'ի փորձանս ձգել:

ՃԾԲ. ԱՐՈՒԵՍՏՔ ԿՆՈՋ
(152 V=14 A)

Այր մի ելեալ շրջէր յերկրէ յերկիր. եւ զոր ինչ կին ֆէլեր այնէր, զայն գրէր 'ի թուխ[թ]. եւ շինեաց մեծ բեռնէր .Գ. եւ այլ դեռ եւս գնար ել ժողովէր թըղթով ֆէլ կնկայն, որ զմարդն խաբէր. եւ գնաց 'ի քաղաք մի էմուտ, որ կար 'ի դուռն քաղաքին կարի ֆելվոր՞ կին մի եւ ասաց ցայրն այն. բարի եկիր. եւ մեծարեաց 'ի տուն իւր եւ առեալ գնաց համարելով, թէ խումաշ եւ ոսկի եւ արծաթ շատ ունի. եւ իբրեւ երեկոյ եղեւ, ասաց կին եւ յայրն այն, թէ բեռներդ քո ի՞նչ է. զի գնեցից զպիտուս իմ. եւ նայ ասաց. ոչ ինչ ունիմ ծախու. եւ կին ասաց. ապայ այտ, զոր ունիս, ի՞նչ է: Եւ ասաց, թէ կնկայն ֆել է. զոր ինչ կնիկ ֆել է արեր, նայ շուրջ եմ եկեր եւ գրեր եւ բարձեր. եւ եկի աստ, որ այլ գրեմ. եւ կին ասաց. բարի եկիր: Եւ յանժամ կամեցաւ կին զբեռներն այրել եւ հնարս յիմացաւ. կար 'ի տուն մեծ փուռ մի, որ տանէր .Գ. բեռն թուխտ եւ կին բարկ զան վառեաց. եւ եկեալ տապակեաց ձուկն եւ եդ առեջի հուրին. եւ ինքն ել զդռներ տան ամբրացնել. զի էր .Գ. դուռն տան կնոչն. եւ զայն փակեաց. եւ կարի խիստ բարձր ձայնիւ ճնչեաց մատաթ կանչելով. եւ յանժամ դրացներ տանն եկին սուսերաւք եւ բրաւք եւ բախեցին զդուռն. եւ ասէ կինն. թէ կամիս, որ սպանանել չէ տամ զքեզ, տուր զթխտերն, որ այրեմ 'ի փուռն. եւ թէ ոչ, ասեմ. այս այրս բռնայդատեաց. եւ սպանանել տամ զքեզ. եւ նայ երետ զբեռներն 'ի կին եւ կին զ.Գ. բեռն ալ այրեաց 'ի փուռն եւ ելեալ էբաց զտան դռներն եւ ասաց, թէ քանի ամ գնացեալ կար ինձ մեկ հաւրեղբարորդի մի

եւ եկն. եւ ես ձուկ դրի ուտել նմայ. եւ փուշն 'ի փողն փակաւ եւ 'ի մեռանելոյ ճորով ազատեցաւ. եւ եկեալ տեսին. զի ձուկն կար առաջի նորա եւ գնացին:

Ցուցանէ առակս, թէ մարդ հետ ֆելվոր կնոչ հուն ոչ կարէ ելներ. որպէս ասեն գեղջուկ բառով, թէ կնկայն ֆէլն բեռներով է եւ յաղթէ մարդկան. եւ մարդ ոչ կարէ դիմանալ կնկայն ֆելին. զի ֆէլն շաթրութիւն ունի, որ զմարդ խաբէ. եւ զինչ որ իւր պիտի, նայ զան առնէ:

ՃԾԳ. ՍԱԿԱՒԱԽԱՒՍ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ՈՐԴԻՆ
(153 V=144 I)

Էր թագաւոր մի մեծ եւ ունէր որդի մի. եւ զայն որդին ոչ թողուր թագաւորն. որ երթար 'ի գինարբուս եւ 'ի մլճիս. որ շատ զրուց չէ ուսանէր եւ լինէր շատայխաւս. քանզի այն թագաւորն զշատայխաւս մարդն ատէր. եւ յորժամ մեծացաւ որդի թագաւորին, ասաց 'ի հաւատար[իմ] սիրելիս իւր. զիս խնդրէ յիմ հաւրէն եւ ինձ էրաշխաւոր լեր, որ շատ կամ քիչ ոչ խաւսիմ 'ի գինարբուսն. եւ նայ խնդրեաց եւ երաշխաւոր եկաց նորա, թէ ոչ թողում 'ի շատայխաւսութիւն. եւ առեալ տարաւ 'ի մճլիս եւ 'ի գինարբուն. եւ ժողովեաց բազում ընկերս ըստ նմանեաց որդոյ թագաւորին. եւ նստան 'ի յրմբումն գինոյ. եւ ըմբեցին զգինին եւ հարբեցան եւ սկսան յանառակ խօս եւ ընդ վար խաղանջմունս. եւ բազում աղտեղի բանս խաւսեցան. եւ տաղտկացան լսելիք որդոյ թագաւորին. եւ նայ դարձաւ առ հայրն իւր եւ երկիր էպագ թագաւորին եւ պատմեաց զանառակ խաւս նոցայ եւ հրաժարեաց 'ի յայնպիսի մճլիսէն եւ յրմբելեացն:

Ցուցանէ առակս, թէ ոչ է պարտ ամենայն մարդոյ զեխիլ եւ արբենալ եւ ընդ վար խաւղանջել զի տաղտկանայ հայրն երկնաւոր ընդ վայր խաղանջմունս եւ ընդ շատայխաւսս. որպէս Քրիստոս հրայժարեաց 'ի յանպիսի մճլիսէն եւ հրամայեաց. զուցէ ծանդրանայցեն սիրտ[ք] ձեր:

ՃԾԴ. ՁՈՒ ՉԱՐՈՒԹԵԱՆ
(154 V=145 I)

Էր այր մի, որ եղեւ սատանայի սիրելի. եւ կամեցաւ հարսանիս առնել այրն որդոյ իւրոյ. եւ գնաց ասաց սատանային, թէ Աստուծոյ համար յիմ որդոյն հարսանիսն մի գար մտնուր. որ աղմուկ չէ լինի. եւ սատանայ երդուաւ չարայչար, որ ոչ մտնէ 'ի հարսանիսն եւ եղեւ հարսանիսն կարի խիստ սիրով եւ մնաց 'ի յետի գիշերն. եւ սատանայ տրտմեցաւ եւ կարի խիստ 'ի խոր խոցեցաւ եւ հնարս իմացաւ չարութեան. էառ ձու մի եւ գնաց կանկեցաւ 'ի հարսանեացն հեռու. եւ յորժամ երթար եկ մանկայխել պատանի մի 'ի հարսանիսն. եւ սատանայ 'ի վերայ ճանապարհին կանկեալ էր. ետ ձու 'ի պատանին եւ ասաց. տար զայս ձուս. եւ եդ 'ի մէջ մճլիսին 'ի գինարբուսն. եւ ասէ, թէ մեկ բան ասեմ ձեզ ես, զան գիտացէք. եւ զայս ասաց, թէ հաւն 'ի ձրւէն է ծներ թէ ձուն 'ի հաւէն. մեկն ասաց, թէ ձուն 'ի հաւէն եւ մեկն ասաց, թէ հաւն 'ի ձուէն. եւ եղեւ մեծ խռովութիւն եւ աղմուկ եւ բազում չարիս գործեաց անդ: Եւ այրն այն գնաց առ սատանայ սիրելին եւ ասաց. ընդ է՞ր չարիս եւ աղմուկս արարեր 'ի հարսանիսն իմ. եւ նայ երդուաւ կրկին չարայչար եւ ասաց, թէ ես 'ի հարսանիսն ոչ եմ մտեալ. եւ այրն ասաց, թէ դու ոչ մտեր 'ի հարսանիսն իմ, բաց քո չարութիւն եւ շմորութիւն էմուտ եւ շատ չարիս եւ աղմուկ եւ վնաս արար:

Ցուցանէ առակս, թէ մարդ շատ կայ, որ 'ի հետ մարդոյ չար եւ աղմուկ անէ. նայ ինքն ոչ կարէ յայտնի առնել, զայլ ոք խրատէ եւ ինքն յետ կենայ. եւ յորժամ յիմանայն զչարն՝ գործեալ է եւ երթան մեղադրեն, նայ ասէ եւ երդնու, թէ ես չեմ չարին պա[տ]ճառն. եւ ինքն է:

ՃԾԵ. ԳՈՂ ԵՒ ՍԱՏԱՆԱՅ
(155 V=146 I=15 A)

Այր մի գողութիւն անէր աստ եւ անդ. բաց կարի խիստ երկնչէր 'ի բռնելոյ եւ սպանելոյ. եւ պատրաստութեամբ եւ վախելով առնէր զգողութիւն. եւ յաւուր միում արար սակաւ մի գողութիւն եւ գնաց պառկեցաւ 'ի խախուտ որմի միոյ տակ. եւ էր գիշեր. եւ եկն առ նայ սատանայ եւ ունէր 'ի հետն

իւր փոքրիկ չատար մի պարզեալ եւ ասաց նմայ. ել յատկի. զի խախուտ է որմդ՝ կամի փլչի. եւ նա ելաւ. եւ մի սատանայ այլ զորմն փլուց յետեւանց. եւ ասաց այրն այն սատանայի, թէ դու ո՞վ ես. եւ նայ ասաց, թէ սատանայ. եւ ասաց այրն այն, թէ ասեն մարդիք, թէ սատանայ մարդոյն չար առնէ. եւ դու բարի արարեր ինձ, որ հաներ յորմոյն տակէն. եւ ապայ փլաւ որմն. եւ ասաց սատան[այ], թէ դու 'ի մեր կողմանէն ես. եւ այրն ասաց վասն չատրին, թէ այտ ի՞նչ է, որ 'ի հետդ 'ի շուրջ կածես. եւ ասաց. այս չարին եւ մեղացն պարտակիչ է՝ գողութեան, շնութեան եւ այլ ամենայն չարութեան եւ մեղաց. եւ դու ընդ է՞ր վախենաս առնել գողութիւն, որ այս չատարովս պարտակեմ. յայնժամ գողն այն վստահացաւ 'ի գողութիւն եւ արար շատ գողութիւն. եւ յաւուր միում գայ սատանայ յորդորէ զմարդն գնալ 'ի պատառել զխիզնայ թագաւորին. եւ ել գողն այն եւ գնաց 'ի խիզնայն. յորժամ պատառեաց եւ էմուտ 'ի ներս, տարաւ սատանայ 'ի յետ զչարին եւ առեալ գնաց 'ի խիզնայտարն եւ թքեալ յերեսն եւ ասէ. այտպէս պահես զխիզնայ թագաւորին, որ գողն եկեալ պատառէ. եւ եկեալ ամենայնք եւ բռնեցին զգողն եւ չարչարեցին մինչեւ 'ի լուսն. եւ յորժամ լուսացաւ, տարան 'ի կախել եւ ցրցեցին մի բարձր ձող եւ կախեցին զգողն կարի խիստ բարձր. եւ եկեալ սատանայ անդ եւ այրն ետես զսատանայ եւ ասաց, թէ հասիր յաւգնութիւն. եւ ասաց սատանայ, թէ այն մարդն, որ 'ի մեր կողմն է, այդ բարձր տեղդ է նորա տեղն. եւ իբրեւ զայս ասաց սատանայ եւ անյայտ եղեւ:

Ցուցանէ առակս. թէ մարդ հետ սատանայի կամացն երթայ եւ զնորա կամքն այնէ, նայ սատանայ զնայ մեծ խատայի պիտի պահէ որպէս գեղջուկ բառով ասեն, թէ սատանայ մեկ երկու անգամ յամենայնի խալիսեց. եւ այլ սատանաքն ասացին, թէ ընդէ՞ր առնես զայդ. մի թէ մարդոյն կողմանէն ես դու. եւ ասաց, թէ մեծ խատայի եմ պահեր զմարդն զայն եւ դուք մի արտորաք եւ մի հոգաք, ասէ սատանայ:

ՃԾԶ. ԳՈՂ ԵՒ ԽՈՋԱ
(156 V=147 I)

Այր մի գող բազում գողութիւնս արար եւ եկեալ 'ի զղջումն. եւ ոչ էր թարկեր զգողութիւն եւ գնաց խոստովանեցաւ իմաստուն վարդապետի միոյ եւ ասաց. խոստովանիմ քեզ, հար սուրբ, զամենայն մեղս իմ առաջի Աստուծոյ. եւ յորժամ զգողութիւն ասաց, վարդապետն ասաց, թէ թարկեայ զգողութիւն. եւ այրն ասաց. ոչ կարեմ. եւ վարդապետն կարի իստիպեաց զայրն. զի այլ ոչ առնէ զգողութիւն. եւ այրն ոչ էառ 'ի յանձն թարկել զգողութիւն: Յան ժամ ասաց վարդապետն, թէ չես կարել թարկեր, դու զայս բանս ասայ, յեր 'ի գողութիւն երթաս. մեկ տարպայ 'ի գանձին առնելն, որ առնես եւ 'ի գնալն մինչդռ 'ի տուն ես, մեկ անկամ զԱստուած 'ի միտդ ձգէ եւ ապայ առ զգանձն եւ գնայ. եւ ասաց. ա՞յոյ, հայր սուրբ: Եւ գնաց յերդիս մեկ խոճայի եւ ուկն դնէր. եւ ասաց խոճայն ընդ կին իւր, թէ զան .Ռ. դեկայն, որ 'ի պատուհան դրի, վերուցիր պահեցիր թէ ո՞չ. եւ ասաց կին, թէ ոչ. այս մեկ գիշերս ինչ տի լինայ, վաղն պահեմ. եւ յորժամ քնացան, էջ գողն 'ի տուն եւ էառ զ.Ռ. դեկայն եւ յերթալն մինչ դեռ 'ի տուն էր, յիշեաց զպատուէր վարդապետին եւ զԱստուած մտաւքն ձգեց եւ ասաց ինքն ընդ ինքն, թէ այս բանս չէ պատեհ, որ այս գանձս 'ի յայս տանէս տանիմ. եւ դարձուց զ.ԵՃ. 'ի տեղն 'ի տեղն. եւ խոճայն լսեց, բաց 'ի վախուն ոչ խաւսեցաւ եւ էառ գողն զ. ԵՃ. եւ գնար եւ կրկին յիշեաց զպատուէր վարդապետին եւ ձգեաց զԱստուած 'ի միտս իւր. եւ դարձուց զ. ԲՃԾ. 'ի տեղն. ըստ յայսմ աւրինակի զամենայն գանձն 'ի տեղն եդ. եւ ելեալ կամէր երթալ ոչ ինչ ունելով ընդ իւր. եւ մինչ դեռ 'ի տուն էր, ձայնեաց խոճայն եւ ասաց. ո՞վ եղբար, մի գնար Աստուծոյ համար. ինձ ասէ զքոյ բանդ. եւ գողն ասաց զճշմարիտն եւ զպատուէր վարդապետին. եւ խոճայ ետ նմայ զան .Ռ. դեկայն, պատուիրեաց եւ ասաց. ատ քեզ հալալ, այլ գողութիւն մի աներ:

Ցուցանէ առակս, թէ մարդն յորժամ զմեղս իւր խոստովանի, ինքն պիտի զպատուէր խոստովանայհաւրն պահէ անպակաս. եւ յորժամ պահէ, 'ի մեղաց ազատի եւ բազում բարոյ հանդիպի, որ ակն ոչ ունի եւ աստուածային փառացն արժանի լինի:

ՃԾԷ. ՍԱՆ ԳԱԲՐԻԷԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ

(157 V=148 I)

Այր մի կար կարի խիստ աղքատ, անոք եւ անկարեւոր եւ անայցելու. եւ էր այրն այն բնութեամբ բարի եւ գործովք բարի. եւ յորժամ որդի եղեւ նմայ, առաւել աղքատութենէն մարդ չերթար 'ի տուն նորա եւ կամ կնքայիար լինար. որ այն աղքատն զտղայն կնքէր եւ 'ի սան տար: Յանժամ աղքատն այն ասաց 'ի միտս իւր, թէ վարդապետք եւ ամենայն գիրք ասեն, թէ Աստուած զաղքատն եւ զտնանկն եւ զպանդուխտքն սիրէ. եւ ելեալ գնար 'ի տանէն եւ ասէր 'ի միտս իւր. թէ ճշմարիտ է, որ Աստուած զաղքատն սիրէ, նայ ինքն հոգայ զիս: Եւ յանժամ երեւեցաւ նմայ պայծառայկերպ այր մի 'ի ճանապարհն եւ ասաց ընդ աղքատն եւ ասաց, թէ ո՞ւր երթաս. եւ իստիպեաց զաղքատն ասել զպատճառն. եւ աղքատն ասաց զճշմարիտն. եւ ասաց լուսաւոր այրն, թէ դարձիր. ես առնում 'ի սան եւ լինիմ կնքայիար քոյ տղային. եւ աղքատն ասաց, թէ ինձի արդարայդատ կնքայիայր պիտի, որ մարդ երես չէ անէ կամ աղքատ կամ հարուստ ոչ ասէ, այլ զամէն հաւասար տեսնէ, զաղքատ, զհարուստ, զթագաւոր, զպարոն, զմեծ եւ զփոքր՝ զամէն հաւասար տեսանէ. բայց ինձ ասայ, թէ դու ո՞վ ես. եւ իբրեւ կարի իստիպեաց զլուսայկերպ այրն. եւ ասաց լուսայկերպ այրն. ես եմ Գաբրիէլ հրըշտակապետն. ասաց աղքատն, թէ քան զքեզ կնքայիար պիտի իմ որդոյն. որ ոչ թագաւոր կասես եւ ոչ պարոն եւ ոչ իշխան եւ ոչ հարուստ եւ ոչ աղքատ եւ ոչ մեծ եւ ոչ փոքր. զամենեցուն հոգին հաւասար միայպէս կոյ առնես. եւ գնաց եւ եղեւ կնքայիար: Եւ յորժամ եղեւ կնքայիար, ասաց. յայսմ հետէ պիտի փարթամ եւ հարուստ լինիս. զի շատ համբերեցիր աղքատութեան եւ գոհացիր Աստուծոյ: Եւ ել յաւուր միում գնաց 'ի լեառն բերել փայտ վասն տան իւրոյ 'ի պէտս վառելոյ եւ ետես. զի գալն գիհ մի բերեալ էր եւ կերեալ մին ոչխար եւ գնացեալ. եւ տէր ոչ կար. եւ առեալ էբեր ծախեաց եւ փարթամացաւ. եւ մին աւր այլ գնաց 'ի գետն լուանալ զերեսն իւր եւ գտեալ քրձով գանձ եւ այլ փարթամացաւ. եւ մին գիշերն ննջեալ կար, ետես. զի շուն ունէր մի պարկ գանձով, 'ի մէջ մեծայգին ակունք եւ մարգարիտ, եւ նայ ձայնեաց եւ չեխ ասաց շան. եւ շուն ձգեց զպարկն եւ փախաւ. եւ գնաց այրն եւ էառ զպարկն, եւս առաւել փարթամացաւ աղքատն այն:

Ցուցանէ առակս, թէ ով աղքատութեան համբերէ եւ գոհութիւն տայ Աստուծոյ, նայ պիտի զնայ Աստուած փարթամացուցանէ կամ յայս դէնս կամ յանդէնս. որպէս զՈբ եւ զԱբրահամ եւ զալքն ամենայն, որ համբերեցին եւ գոհութիւն ետուն Աստուծոյ. եւ ասեն գեղջուկ բառով, թէ յերբ մարդոյն տոլաթն տոլաթն գայ եւ բերէ, նայ գալն գիհն բեր[է] եւ գետն զգանձն, շունն գայ եւ զպարկն բերէ. այս ան առակն է, որ ասեն:

ՃԾԸ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ԿՐԻԱՅ
(158 V)

Աղուէսն եւ ծովային կիրիայ մի եղբարք եղեն. եւ կար թզենի մի 'ի ծովեզերն. եւ ելանէր աղուէսն 'ի թզենին եւ ուտէր եւ թափէր կիրային, որ 'ի վարն ուտէր. զայս արարին բազում անգամ. եւ եղեւ հիւանդանալ տղայոց կիրային. եւ բժշկքն ասացին, թէ ատոնց աղուէսու երիկամունք պիտի. որ ուտեն եւ ողջանայն. եւ եկին կիրիան եւ աղուէսն 'ի թզենին. եւ յորժամ զթուզն կերան, ասաց կիրիայն. եկ տանիմ զքեզ առ թագաւորն մեր. զի քեզ բարի եւ աղեկութիւն առնէ, զինչ դու ինձ առնես. զայս ասաց. զի խաբեսցէ զաղուէսն. եւ աղուէսն՝ դու ջրային ես եւ ես ցամաքային. ես զի՞արդ կարեմ գալ 'ի ծովն 'ի վար. եւ կիրիայն ասաց. զայն դու մի հոգար. եկ ել 'ի վերայ իմ եւ ես տարաց զքեզ անահ եւ աներկուղ առ թագաւորն մեր. եւ աղուէսն աւատաց. եւ յորժամ գնացին, սկսաւ կիրիայն 'ի ջուրն 'ի վարն գնալ եւ աղուէսն յիմացաւ զբան. եւ ասէ. ա՜յ աներկուղ եւ անհաւատ, զճշմարիտն ասայ ինձ. այլ ճար ոչ կայ ինձ. զի ոչ կարեմ 'ի դուրս եւ ոչ 'ի ծովն 'ի ներս. ասաց կիրիայն. ասեմ զճշմարիտն. զի քոյ երիկամունքն իմ տղայոցն դեղ ասացին. զի կարի խիստ հիւանդ են. եւ աղուէսն ասաց. հազար եղուկ աներկեղ. ապայ յառաջն է՞ր ոչ ասացիր. որ զիմ երիկամունքն 'ի հետ առեալ էի. ասաց կիրիայն. ապայ 'ի յո՞ւր է. ասաց աղուէսն. ես յորժամ 'ի թզենին ելանէի, զերիկամունքս 'ի ծառն կախէի. դարձիր աներկուղ, որ երթանք առնունք եւ զանք հասանինք տղայոցն. որ մինչ դեռ կենդանի ենք. եւ աւատաց կիրիայն եւ դարձաւ. եւ յորժամ 'ի դուրս ելին, ասաց կիրիայն. արտորայ, եղբար. ասաց աղուէսն. ով քեզ հաւատայ, քու գործովն է. եւ գնաց աղուէսն:

Ցուցանէ առակս, թէ մարդն, որ զմարդն մեկ հետ խաբէ, ան բաւական է, թէ գիտէ. եւ ան բան, որ

անդէպ լինի՝ ոչ աւատալի. կիրիայն զաղուէսն 'ի յատակ ծովուն ո՞րպէս իջուցանէր կամ աղուէսն զերիկամունքն 'ի ծառն ո՞նց կախէր. մի հաւատար:

ՃԾԸա. 41 ag Ասի յառակաց, թէ ապուզէն արար թագաւորութիւն վատսուն տարի. յորժամ ծերացաւ, հանին զնա եւ բերին զայլ մանկագոյն եւ եդին իւրեանց թագաւոր: Եւ նա երթայր լալով 'ի ծովեզերն. եւ ահա պատահեցաւ նմա ծառ մի թզենի լի պտղով. եւ ելեալ 'ի ծառն բնակեցաւ. եւ ուտէր 'ի պտղոյն եւ գոհանայր զԱստուծոյ: Եկեալ առ նա մեծ կրիայ մի՝ սովորեցաւ եւ գայր ոտս ծառոյն. եւ ապուզէն ձգեր 'ի ծառոյն զթուզ. եւ նա ուտէր եւ գոհանայր զնմանէ: Եւ յետ բազում ժամանակաց ասէ կրիայն ընդ ապուզէն. արեկ. որ տանիմ զքեզ 'ի կղզին առ ազգն իմ, որ պատուեն զքեզ. եւ քո աղէկին աղէկ առնեմ. զի գոհացեալ եմ զքէն առ ազգն իմ: Եւ ապուզէն հաւատաց նմա վասն երախտեացն, զոր արարեալ էր ընդ նմա. էջ 'ի ծառէն եւ նստաւ 'ի վերայ թիկանց կիային եւ սկսաւ գնալ 'ի ծովն 'ի ներս: Եւ իբրեւ հեռացան 'ի ցամաքէն, ասէ կրիայն. գիտացիր, սիրելի եղբայր իմ կապիկ, զի կին իմ հիւանդ է. եւ ասացին բժիշկքն, թէ զկապկի սիրտն եւ զերիկամունսն եփեցէք ու զջուրն առէք. որ խմէ. որ ողջանայ. զքեզ այնոր համար կու տանիմ: Կապիկն իբրեւ լուաւ, կանչեց իւր ամէն զօրութեամբն եւ ասէ. հազար վայ զիս եւ շատ աւաղ է, որ չկայ 'ի հետս. դարձիր, եղբայր, դարձիր. որ արենտէր չլինիմ. որ առնում զսիրտն իմ եւ զերիկամունսն իմ. զի մեր սովորութիւն է, որ 'ի ծառն կախեմք, յորժամ 'ի ճանապարհ երթամք. եւ շատոց առողջութիւն է ելեալ Աստուծով: Եւ կրիայն հաւատաց ապուզնային, դարձաւ եւ գնաց 'ի ծառի տակն. եւ ապուզնայն վազեց եւ 'ի ծառն ելաւ: Եւ ասէ կրիայն. փութա՛ եւ եկ ճարտար. որ ժամանեմք հիւանդին: Ասէ կապիկն. թէ ես այլ հաւատամ քեզ եւ իջնում 'ի ծառէս, քան զէշն անմիտ լինիմ, որ զերծաւ 'ի բերանոյ առիւծոյն եւ անկաւ դարձեալ 'ի ձեռն կամաւ՝ եւ սատակեցաւ: Եւ ասէ կրիայն. դատիս յԱստուծոյ. զի սուտ ասացեր. եւ կապիկն ասէ. դու դատիս յԱստուծոյ, որ ինձ զստութիւն ուսուցեր: Եւ ասէ. վարձք է, որ ստով ապրեցայ ես, որպէս կաքաւն եւ չիտն, որք խաբեցին եւ ապրեցան:

Ցուցանէ, թէ բարեմոռացն աստուածամոռաց է. եւ թէ բարի առնես մարդոյ եւ նայ ջանայ քեզ չար առնել, դու հեռացիր 'ի նմանէ:

ՃԾԹ. ՄԵԾԱՏՈՒՆ
(159 V)

Էր մեծայտուն մի խիստ փարթամ, որ ունէր .Գ. որդի կարգած եւ ունէր շատ ոսկի եւ արծաթ եւ շատ գեղորեայք եւ ագարակ եւ շատ մլքեր ջաղացնի եւ այլ շատ մլքեր: Եւ յաւուր միում անցանէր ընդ շուկային մջովն եւ էառ գհոտ տապակի, որ է խորովու. կարի խիստ մտացն ասաց. որ 'ի հոտոյն էառ. եւ խիստ ծերացեալ էր. եւ ոչ կարաց հանդուրժել եւ քանի որ ապրեր էր, 'ի շուկային կերակրոյն չէր կերեալ. գնաց 'ի տուն եւ ետ բերել գէր գառ մի եւ ասաց յորդիքն եւ 'ի կինն եւ 'ի հարսներն զպա[տ]ճառն, որ մտացն ասաց 'ի շուկայն. եւ եդին զխորովուն վասն ծեր հաւրն իւրեանց. եւ յորժամ եփեցաւ խորովուն եւ եկն սիրելի հուր մի 'ի տուն. եւ բերին զխորովուն. եւ կերան եւ մոռացան զծեր հարն իւրեանց: Եւ յորժամ եկն ծեր մեծայտուն եւ ասաց, թէ թէզ բերէք զխորովուն. սիրտս կոյ թալկտի եւ կոյ տապի. եւ փոքր հարսն զմատն 'ի դիմացն էխած. եւ յանժամ գիտացաւ, որ մոռացեալ էին զինքն. եւ ասաց 'ի միտս իւր, թէ մինչ կենդանի եմ եւ բազում անգամ ասացի որդոց իմոց եւ կնոչս, հարսներուս, թէ ինձ համար է այս խորովուս եւ զիս մոռցան. ապայ յետ մահման իմոյ բնաւ զիս մտաւք այլ ոչ պիտի ձգեն. եւ ասաց ինքն իւրեն, թէ զինչ ունիս, վաճառեայ եւ տուր աղքատաց, որպէս աւետարան հրամայէ. եւ ունիցիս գանձ բազում 'ի յերկինս, որ գող ոչ մերձանայ եւ ոչ ցեց եւ ուտիչ ապականեն:

Ցուցանէ առակս, թէ մարդ քանի յիւր ձեռացն գայ, նայ իւր հոգոյն պէտ թող ինք[ն] անէ. թէ չէ՝ յետ իւրէն որդիքն եւ կին եւ հարսներն եւ ամենայն ժառանգորդք զմեռելն շուտ պիտի մոռանայն, որպէս ասէ Դաւիթ մարգարէն, թէ ժամանակի որպէս տացի քուն սիրելեաց իւրոց, ժառանգութիւն առն որդիք են, այն է պտուղ յորովայնի իւրոյ. եւ Քրիստոս հրամայէ, թէ վաճառեցէք զինչս ձեր եւ տուք աղքատաց. եւ որ ողորմի աղքատին, փոխ տայ Աստուծոյ եւ յԱստուծոյ առնու:

ՃԿ. ԵՐԵՔ ՈՒՂՏՔ ԵՒ ԵՐԵՔ ԱՂՈՒԵՍՔ
(160 V=52 ag)

Երէք ուղտք եւ Գ. աղուէսն եղեն եղբարք եւ գտան .Գ. հաց մաքուր. եւ ուղտքն առին զհացն եւ բարձրացուցին զգլուխս իւրեանց եւ աղաղակելով ուտէին զհացս. եւ աղուէսքն լային առ յոտս նոցա. եւ կոխեալ ըղտոցն սատակեցուցին զնոսա:

Ցուցանէ առակս, թէ մեծայտունք ծըծեն զըղուղս ժողովրդեան եւ շատ պատահի, որ աղքատն 'ի նեղեալ վիշտացն մեռանի:

ՃԿԱ. ՀՈՂԱԳՈՐԾ ԵՒ ԱՐԱԳԻԼ
(161 V=9 V=94 ag=3 A=110 B)

Այր մի հողայգործ շինեաց ականարդս բազում եւ արկ 'ի վաստակ իւր վասն թռչնոցն. եւ գային կռունքն եւ սաքն քաղէին զբակլայն եւ զսիսեռն նորա. եւ առաւաւտուն ել եւ գնաց 'ի տեսանել զականատն եւ անկեալ էին բազումք 'ի սագոց եւ 'ի կռուկուցն 'ի յորոգայթն. եւ նայ քաղեաց եւ սկսաւ կոտորել զնոսա. եւ արաքիլ մի ալ կար 'ի յականարդն եւ ասէ լալով ընդ հողայգործն. վասն որոյ աղաչեմ զքեզ. մի սպանաներ զիս. զի ես ոչ կռուկ եմ եւ ոչ սագ. ոչ սիսառն կոյ ուտեմ եւ ոչ բակլայ. այլ բարէկամ եմ քեզ եւ քաղեմ զամենայն ժժմունք յանդաստանաց քոց. եւ ասէ հողայգործն. որովհետեւ գտայ զքեզ ընդ թշնամիս իմ, ընդ նոսա մեռցիս. եւ սպան զնայ:

Ցուցանէ առակս, թէ որ բարէկամ լինի եւ աւգնական եւ միայվորի ընդ չարայգործսն, ընդ նոսին եւ տանջելոց է զնոսա Աստուած 'ի հուրն անշէջ, որպէս եւ գրեալ է, թէ զգողն եւ զգողայկիցն տանջելոց է միապէս:

ՃԿԱա. 32 C Հողայգործ ոմն իշխան ցանեաց առ գետովն բակլայ եւ սիսեռն. իսկ սաքերն եւ կռուկնին ելեալ 'ի խարձէն, որ յեզր գետոյն, քաղեալ ուտէին զամենայն. եւ իշխանին տարեալ ականատ յեզր շամբին եւ արկ որոգաթ սայգոցն. եւ նոցա ելեալ ըմբռնեցան յորոգաթն. եւ միւս աւրն 'ի ծագել արեւուն գնացին 'ի տեսանել զականատն, եւ եկեալ գտանէ զնոսայ ըմբռնեալ եւ կաղնի բրաւք սկսաւ սատակել զնոսայ առ հասարակ. եւ ահայ արագիլ մի հանդիպեցo զհետ սագերոցն յորոգաթն, եւ հողայգործն եկեալ առ նայ՝ ողորմեաց ինձ վասն Աստուծոյ. զի դու գիտես, որ ես ոչ բակլայ եմ կերել եւ ոչ սիսեռն. այլ զաւձն եւ զմուկն եւ զայլ ժիժմունքն քաղեալ եմ 'ի վաստայկոց քոց եւ սրբեմ զնայ. ասէ հողայգործն. ես ոչ գիտեմ. ընդ թշնամիս իմ գտար. վասն որոյ եւ ընդ նմայ մեռցիս. եւ սատակեաց զնոսայ:

Ըստ նմին աւրինակի առնէ Աստուած 'ի յայն կեանքն եւ յայս. քանզի ով զկախարդն սիրէ եւ զհարցուկն, ընդ նոսա տանջի. նոյնպէս եւ որ սիրէ զչարայգործս եւ կամակից լինի, ոչ է բարի եւ որ խնդրէ եւ 'ի շուրջ գայ վասն կաւատութեան, ընդ շնացողն տանջի:

ՃԿԲ. ԹԻՒՐ ԳԻՒՂ
(162 V=S. Laz. Ե. Բ.)

Այր մի երթար 'ի գիւղ մի, զոր Թիւր կոչէին. եւ մոլեալ եղեւ 'ի ճանապարհէն. դէպ եղեւ այր մի եւ ասէ ցնայ. ո՞վ եղբար, 'ի ճանապարհէդ ել. եւ ընդ որ երթաս, նայ թիւրն երթաս:

Ցուցանէ առակս, թէ մարդ, որ թողու զաւրէնքն Աստուծոյ, նայ թիւրեցաւ [յ]ուղիղ ճանապարհէն, որ առ Աստուած տանէր. եւ ընդ որ գնայ, նայ ողորմելի կենաւք մոլորի 'ի ձեռն սատանայի:

ՃԿԳ. ՆԱՊԱՍՏԱԿՈՒՆՔ ԵՒ ԳՈՐՏՈՒՆՔ

(163 V=140 D)

Նապաստակունքն ժողովեցան եւ ասեն. եկայք երթիցուք 'ի ծովն անկեալ մեռցուք ամենեքեան. զի կարի տկարք եմք եւ անզէն. եւ ամենայն կենդանիք հալածեն զմեզ. եւ 'ի գնալն նոցա տեսին զնոսա երամակ մի գորտունք եւ ճինճ բարձեալ փախեան եւ թագեան 'ի նոցանէ. եւ նոքա մխիթարեցան եւ գոհացան զԱստուծոյ, որ այլ տկարայգունք քան զինքեանս. եւ դարձան յետս:

Ցուցանէ առակս, թէ ո՞վ մարդ, մի հայիր 'ի նայ, որ բարձր է քան զքեզ, այլ յանկունս հայեաց, որ աղքատ է քան զքեզ. եւ մխիթարեաց. եւ թէ մեղաւոր ես, մի հայիր 'ի կարի արդարքն. այլ հայեաց 'ի մեծայմեղ մարդիքն եւ մխիթարեց. եւ դու դիմէ կամաւ առ Քրիստոս յուսն մեր խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ:

ՃԿԳա. 161 ag Ասի յառակաց, թէ ժողովեցան երեսուն նապաստակք. խորհուրդ արարին եւ ասացին, թէ եկայք երթամք ամէնքս միաբան անկանիմք 'ի ծովն. որ ազատիմք 'ի յայս դառն կենացս. զի կարի տկար է ստեղծեր զմեզ Աստուած. թէ գազանք են, թէ հաւք են, զմեզ ուտեն. լաւ է որ մեռանիմք, քան այս կենօքս ապրիմք: Եւ 'ի գնալն իւրեանց տեսին շատ գորտունս. եւ ճիչ բարձեալ գորտանցն փախեան եւ անկան 'ի ջուրն եւ թաքեան. եւ նապաստակքն գոհացան զԱստուծոյ. զի տկարք տեսին քան զինքեանս:

Ցուցանէ առակս, թէ մի հայիր 'ի մարդն, որ բարձր է քան զքեզ՝ եւ մխիթարեաց. եւ թէ մեղաւոր ես, մի հայիր 'ի կարի արդարն եւ անյոյս լինիր. այլ հայեաց 'ի մեծ մարդիկ եւ մխիթարիր. եւ յուսով դիմեա առ Աստուած եւ փրկիս:

ՃԿԳբ. 72 F ՆԱՊԱՍՏԱԿԱՑՆ ԵՒ ԳՈՐՏՈՒՑ

Ժողովեցան նապաստակքն եւ գորտունքն եւ ասացին. այս ի՞նչ բաղ*թ* է, որ մեք ունինք. ամենայն կենդանիք մեզ հալածիչ եւ թշնամի են. եկայք ժողուինք եւ երթանք 'ի ծովն լցվինք. եւ ժողովեցան. եւ ծերագուն մի յառաջ էրեկ եւ ասաց, թէ վաղիւն առաւօտուն երթանք. զի ամենայն ժողովին. եւ վաղիւն 'ի ցայթել արեգական *ի*լեալ էին 'ի ծովէն եւ գորտունք եւ կրիայքն 'ի յեզրն արեւիլ. եւ յորժամ իջանէին 'ի դարէն 'ի վայր տ*ի*սեալ գորտունց 'ի ծովն լցվեցան. եւ էկեալ ծերագուն մի յառաջ՝ ասաց. եղբարք, մի լցվիք 'ի ծովն. դեռ այլ կենդանի կայ, որ 'ի մեզանէ կու վախէ. եւ գնացեալ լապաստակքն խաղաղութեամբ:

Սոյնպէս են մարդի*ք*, մինչ ինքեանք *յ*այլոց իշխանութեամբ են, նոյնպէս գիտեն:

ՃԿԴ. ԿԱՊԻԿ ԵՒ ՀԱՅԵԼԻ
(164 V)

Մայմունդն կոյզէր. որ 'ի հայելին հայէր. ու 'ի ժուռ կոյ գար. նայ գնաց 'ի յարտակնոցն, 'ի վար նայեցաւ, տեսաւ զինքն ու ծիծաղեցաւ եւ ասաց, թէ այսպիսի երեսիս այսպիսի հայ[ե]լի պիտի. եւ այս վայել է ինձ:

Ցուցանէ առակս, թէ ամենայն տկար եւ անզաւր եւ գէշ մարդ զիւր չափն պիտի գետինայ (=գիտենայ), որպէս մայմունդն զիւր գեշութիւն յիմացաւ:

ՃԿԵ. ԱՂԱԻԹՔ ԱՂՔԱՏԻ
(165 V)

Այր մի աղքատ երթար 'ի քաղաք մի. 'ի ճանապարհին հիւանդացաւ եւ աղաչէր զԱստուած պատրաստել նմայ գրաստ տանել 'ի շէնն. եւ ահայ գայ ոմն չարայբարոյ՝ հարկանէր զնայ. արի յոտն, ասէ. եւ շալկէ զքուռակս. զի ոչ կարէ գալ զհետ մաւրն իւրոյ: Եւ յարեաւ եւ լար դառնայպէս. զի ոչ կարէր կանկել. եւ այրն չարայբարոյ ոչ դադարէր 'ի հարկանելոյ զնայ. եւ նայ ասէ. վա՜յ ինձ, Աստուած իմ, փոխանակ թեթեւացուցանելոյ ծանդրացուցեր զվիշտս:

Ցուցանէ առակս, թէ աղքատքն տառապին վասն չքաւորութեան եւ խնդրեն ինչք եւ ստ[աց]ուածք 'ի յԱստուծոյ. եւ թագաւորքն եւ բռնաւորքն, զինչ ունի, զան ալ կողոպտեն եւ թալնեն:

ՃԿԵԱ. 55 ag Ոմն աղքատ երթայր 'ի գիւղ մի. հիւանդացաւ 'ի ճանապարհին եւ աղաչէր զԱստուած պատրաստել նմա գրաստ, որ 'ի շէն տանին զնա: Եւ ահա գայ ոմն չարաբարոյ՝ հարկանէ զնա բրով եւ ասէ. արի յոտն եւ շալկէ զքուռակս. զի ոչ կարէ գալ 'ի հետ մօր իւրոյ: Նա յարեաւ եւ լայր. զի ոչ կարէր կանգնիլ: Եւ այրն չարաբարոյ ոչ դադարէր 'ի հարկանելոյ զնա: Եւ նա ասէ. վա՛յ ինձ, Աստուած իմ. զի փոխանակ թեթեւացուցանելոյ՝ ծանրացուցեր 'ի վերայ իմ վիշտս:

Ցուցանէ, թէ շատք աղաչեն զԱստուած եւ ակն բարւոյ ունին յԱստուծոյ եւ 'ի մարդկանէ. եւ գայ տանջանք եւ վիշտք 'ի վերայ նոցա:

ՃԿԶ. ՈՒՂՏ ԵՒ ԱՂՈՒԵՍ
(166 V)

Ուղտն եւ աղուէսն եղեն եղբարք եւ եկան 'ի գետն եւ սկսան անցանել եւ ուղտն էմուտ յառաջայգուն. եւ ասէ աղուէսն. ո՞վ եղբար, խորայգուն է գետդ թէ ոչ. ասէ ուղտն. 'ի ծունկս հասանէ. եւ ասէ աղուէսն. վա՜յ ինձ, բաց ծունկն եւ ծուկ՝ առաջի ուղտուտ եւ աղուէսուդ:

Ցուցանէ առակս, թէ մեղք կայ, որ մեղք է. եւ մեղք կայ, որ մահու չափ է. զի որք ոչ ապաշխարեն յառաջայգոյն եւ [ի] հրեղէն ծովն ընկղմին, որ ոչ գոյ հանգիս[տ]. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:

Առակաց բանքս է հրաշալի.
Երգողն է սուրբ եւ պանծալի
Ը[ա]բունեաց ը[ա]բուն բարի,
Որոյ Վարդան վերայ կոչի.
Հրեշտակաց պար յորինի,
Առաքելոց աթոռ նստի,
Եւ աներեկ աւրն որ լինի,
Մեզ բարէխաւս առ Տէր լինի:

Ա. ՄՆԱՑՈՐԴՔ ԱՌԱԿԱՑ Ի ՁԵՌԱԳՐԷՆ I

ՃԿԷ. ՄԱՆՐ ԹՌՉՈՒՆՔ ԵՒ ԱՐԱԳԻԼ
(30 I=29 S. Laz. Ե. Բ.)

Ժողովեցան մանր թռչունքն եւ աղաչեցին զարաքիլն. զն դիցեն զբոյնս իւրեանց 'ի ներքոյ բնին արաքլի. եւ եկեալ աւծքն բնակեցան 'ի խռիւսն, զոր կուտեալ էր արաքիլն 'ի բունն իւր. եւ սկսան քարոզել զնորածին ձագսն մանր թռչնոցն. եւ արաքիլն ունի սովորութիւն, որ տանի զգլուխն յետ 'ի վերայ թիկանցն եւ զկտուցն կլկլեցնէ իբրեւ զձնձղայս. եւ կարծէին մանրաձագերն, թէ ապաշօէ զմեզ. եւ ասէին առ նա, թէ շատ շնորհակալեմք քեզ. զի թէպէտ եւ աւգնել ո՛չ կարես, տրտմակից լինիս մեզ:

Նշանակէ առակս, թէ թագաւոր ոմն կամ իշխան ոչ կարէ աւգնել ժողովրդեանն եւ պահել 'ի թշնամեաց. այլ զհարկն յաւելորդ պահանջեն աղքատացն եւ ինքեանք փափկանան. նոյնպէս եւ հոգեւոր առաջնորդքն. զի խնամ ոչ տանեն հօտին եւ ոչ հոգան զբորոտն զհիւանդացեալսն մեղօք, այլ զգէրն զենեն եւ ճարպովն պարարտանան:

ՃԿԸ. ԵՐԵՔ ԵՂԲԱՐՔ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱԿՆ
(149 I=15 ag=9 E=22 F)

Թագաւոր մի մեռաւ եւ մնաց .Գ. որդի. եւ պատուական ակն մի ունէր, որ իւր թագաւորութեան գին էր, եւ վասիաթ արար, թէ ակն վիճակաւ որու անկանի, նա՛ այն որդին թագաւոր լինի եւ վաելէ. եւ կսեր որդին գողացաւ զակն. եւ յորժամ թաղեցին զթագաւորն եւ զակն այլ ո՛չ գտին եւ յոյժ տրտմութիւն էր վասն ակին. եւ ասացին իշխանքն, թէ այս անուն աշխարհս թագաւոր մի, որ իմաստուն է, նա՛ պիտի գտանէ զակն. եւ Գ. եղբայրքն գնացին ճանապարհն այն եւ հանդիպեցան ճանապարհին այն թագաւորին յոտապանին. եւ ասաց յոտապանն, թէ իսկի ուղտ չի տեսա՞ք, երթ ընդ ճանապարհին եւ գտանես. եւ նա՛ իմացեալ զպատճառն նոցա. եւ նոքա ասացին, թէ ուղտն քո, որ կորուսել ես, կաղ է. եւ Ա. եղբայրն ասաց, թէ միականի է. եւ Ա. ասաց, թէ Ա. ատամն խոռ է. եւ զարմացաւ յոտապանն, թէ դուք ուղտն չէք տեսեալ, զիա՞րդ արատն գիտէք. եւ նոքա ասացին, թէ 'ի ճանապարհին կաղ ոտն հետ չէր արեր. եւ Ա. կողմն է արածել. եւ այն դեհն որ ատամունքն խոռ էր, նա՛ զխոտն հաւասար չէր կտրեր. եւ հիացաւ յոտապանն ընդ իմաստութիւն նոցա եւ գտեալ զուղտն եւ գնացեալ 'ի քաղաքն եւ պատմեաց թագաւորին զիմաստութիւն նոցա. եւ եկին որդիքն թագաւորին 'ի քաղաքն. եւ թագաւորն ուղարկեաց նոցա խորոված ուլ մի եւ գինի եւ խապազի հաց. եւ նոքա տեսեալ ոչ կերան եւ ոչ արբին .Ա. եղբայրն ասաց, թէ խորովուէս շան հոտ կու գա՛. եւ Ա. ասաց. ձեր թագաւորն խաբազի որդի է. եւ Ա. ասաց, թէ գինէս մարդու արիւնի հոտ կու գա՛. եւ գնացեալ պատմեցին թագաւորին. եւ նա՛ զարմացաւ. եւ յետոյ հարցեալ, թէ զիա՞րդ գիտացեալ եւ գտաք. եւ նոքա ասացին, թէ շան միսն կու կոնչի եւ մարդու արիւնին փրփուրն սպիտակ կու լինի եւ հացն ամէն մարդու .Ա. հաց էր ուղարկեալ. այնու գիտացաք. եւ ասաց չաւպանն. ուլին մայրն մեռել էր եւ ուլն սովորել էր՝ քած շուն մի ծծէր. եւ հարցեալ զեգէպանն եւ ասաց, թէ 'ի կոխել հաղողին կորաւ դանակ մի 'ի մէջ նորա եւ կտրեաց զոտն կոխողին եւ բազում արիւն էր ելեալ. եւ հարցեալ զմայրն. եւ ասաց մայրն. քո հաւր ժամանակն ամենայն օր խապազ տղա մի հաց բերէ[ր] եւ ես անկա՛ ընդ նմա պոռնկութեամբ եւ դու 'ի նմանէ ծնար. եւ Գ. եղբայրն թագաւորն կոչեաց. եւ նոքա ասացին զիւրեանց գանկատն. եւ ասաց թագաւորն, թէ աղջիկ մի խաւսեցեալ երիտասարդի եւ նշան եդեալ եւ ամէնն պատրաստեալ մինչեւ 'ի պսակն եւ այլ ոմն երիտասարդ բռնութեամբ խլեաց զաղջիկն եւ տարեալ պսակեցաւ եւ արար հարսանիս եւ մտին առագաստ եւ ոչ մերձեցաւ եւ ետ տանել առաջի այրն իւր ոսկով եւ մարգարտով եւ ակամբք եւ ամենայնիւ զարդարած եւ ոչ ինչ եառ 'ի նմանէ եւ եղեն եղբայրք. եւ 'ի նոցանէ ո՞վ թվի ձեզ նսաֆով. եւ ասաց մեծ եղբայրն, թէ առաջինն. զի ասաց, թէ նորա խսմաթն էր եւ ոչ 'ի հետ գնաց. եւ ա՛սաց միջնեկն, թէ ոչ. այլ յետինն նսաֆով է. զի յորժամ կարողացաւ մինչեւ 'ի պսակն եւ յառագաստն եւ ոչ մերձեցաւ 'ի նա: Իսկ յետի եղբայրն ասաց, թէ առաւել այն էր զարմանալի, որ ոչ ինչ եառ ամենեւին յոսկոյ եւ արծաթոյ կամ ականց պատուականաց. եւ ասաց թագաւորն, թէ զակն դու ունիս. եւ նոքա յոյժ ուրախացեալ գնացին խաղաղութեամբ 'ի տունս իւրեանց:

ՃԿԸա. 115 B Ասի առակաց, թէ թագաւոր ոմն ունէր .Գ. որդիս եւ ունէր ակն մի պատուական, որ էր հաւասար թագաւորութեան իւրոյ. եւ թէ Ա. որդոյն տայր զակն, Բ. որդիքն խռովէին. եւ նա հնարեցաւ զայն ծածուկ պահել. զի մի ոք գիտասցէ. եւ յորժամ հիւանդացաւ եւ 'ի մահ մօտեցաւ, մինն յերից եղբարցն գողացաւ զայն ակն եւ պահեաց 'ի ծածուկ. զի մի ոք գիտասցէ: Իսկ յորժամ մեռաւ թագաւորն, հանապազ 'ի կռիւ կային եւ 'ի պատերազմ եղբարքն վասն անգին ակին՝ պարտաւորելով մին զմիւսն, թէ դու ունիս զակն: Եւ լուան, թէ 'ի հեռու մի դատաւոր մի կա իմաստուն, գիտուն եւ ճարտար, մի թէ նա կարէ կատարել զնոցա դատաստանն. եւ յարուցեալ միաբան սկսան գնալ առ այն դատաւորն եւ իբրեւ մերձացան 'ի քաղաքն այն, հանդիպեցաւ նոցա ըղտապան դատաւորին այնմիկ. նոցա հարցեալ, թէ ի՞նչ մարդ ես եւ կամ ո՞ւր երթաս եւ նա ասէ. ուղտ եմ կորուսել եւ 'ի խնդիր գնամ: Ասէ մինն 'ի յեղբարցն. քո ուղտն կա՞ղ է. եւ նա ասէ՝ այո. միւսն ասէ. քո ուղտն միականի՞ է. ասէ՝ այո. եւ մինն ասէ. քո ուղտն .Ա. ատամն խոռ է. ասէ ըղտապանն՝ [այո]. եւ ասէ. գնա զհետ ճանապարհիդ եւ գտանես: Յայնժամ եհարց յոտապանն ցնոսա, թէ որպէ՞ս գիտացիք զուղտիս իմոյ սղալանքն: Ասէ առաջինն. տեսի, որ զ.Գ. ոտքն սեղմ էր դրել 'ի գետնի, որ հետն կու երեւէր եւ մէկ ոտիցն, որ կաղ էր, չերեւէր. եւ այնու ճանաչեցի: Իսկ միւսն ասէ. տեսի, որ 'ի գնալն այն դիհն, որ աչքն տեսանէր, արած[ած] էր եւ կոյր աչից դիհն խոտն 'ի տեղն էր մնացել. այնու գիտացի, որ կոյր էր. եւ երրորդն ասէ. ես տեսի, որ արածած խոտն՝

խոռ ակռային տեղն փեճռած էր զխոտն. այնու գիտացի, որ խոռ էր .Ա. ատամ: Եւ զարմացաւ ըղտապանն ընդ ճարտարութիւն արանցն եւ երթալն ընդ այն ճանապարհն ըստ խրատու նոցա եգիտ զուղտն եւ դարձաւ 'ի տուն իւր եւ պատմեց դատաւորին, թէ .Գ. արք ճարտարք կու գան մօտ առ քեզ 'ի դատաստան եւ վասն մեր ըղտուն այսպիսի նշան տվին առանց տեսանելոյ. զոր ես այն նշանովն գտալ: Արդ պատրաստ կացիր, որ տխմար դատաստան չառնես եւ ծաղր լինիս 'ի նոցանէ. եւ լուալ զայն դատաւորին խորհէր, թէ որպէ՞ս դատէր զնոսա: Իսկ յորժամ եկին առ նա, ասէ ցնոսա. երիկունն առ մեզ հանկերուք եւ վաղն զձեր դատաստանն կտրեմ. եւ հրամայեաց սպասաւորացն տանիլ նոցա կիրակուր շուկայի հաց եւ խորովու եւ գինի: Եւ զայն տեսեալ եղբարցն՝ ասէ մինն, թէ ձեր դատաւորն պախալի որդի է. եւ միւսն ասէ, թէ այն խորվէդ շան հոտ կու գա. եւ Ա. ասէ, թէ այս գինիս արենահամ է. ոչ կամեցան ուտել եւ ոչ ըմպել եւ սպասաւորացն երթալ պատմեցին զայն դատաւորին զբանս երից եղբարցն:

Իսկ նա զայրացեալ կոչեաց զմայր իւր եւ ասէ. ասա ինձ զճշմարիտն, թէ ես ում որդի եմ, ապա թէ ոչ՝ սպանանեմ զքեզ. եւ նորա պատասխանեալ ասէ, թէ տարի մի քո հայրն 'ի հեծելութիւն էր գնացել եւ հացծախ տղայ մի հանապազ կու գայր եւ հաց կու բերէր 'ի դարպասս. նա սատանան զիս խաբեց հետն եւ դու 'ի նմանէ ընծայեցար: Եւ ցխորվին բերօղն հարցաւ. եւ նա ասէ. ուլին այնմիկ մայրն մեռաւ. նա սեւ քած շուն մի կայր՝ այն ուլն զայն ծծէր գիտելով, թէ իւր մայրն էր. եւ ցգինէբերն հարցեալ. եւ նա ասէ. 'ի ժամ կոխելոյն զհնձանն դանակ մի կորաւ 'ի մէջ խաղողին եւ ոչ գտին մինչեւ յոտն կոխողին մտաւ. եւ բազում արիւն ելեալ յոտիցն եւ ապա իմացեալ արգելին զարիւնն եւ գտին զդանակն: Եւ հարցին զնոսա, թէ որպէ՞ս գիտացիք, որ խապազի որդի է. եւ նա ասէ. այնու գիտացի, որ ամէն մէկիս մէկ մէկ հաց էր ղրկել. եւ ցմիւսն հարցեալ, թէ դու որպէ՞ս գիտացիր զուլն. եւ նա ասէ. այնու որ 'ի խորովելն պիտէր քրքրէր. նա երբ շան կաթն էր կերել, զէրդ շան միս ժանկռոտել էր եւ պնտել. եւ ցմիւսն հարցին, թէ դու որպէ՞ս գիտացիր, որ գինին արիւն կայր. եւ նա ասէ. վասն զի գինին յորժամ աման լնուն, փրփուրն, որ վերայ երեսին գա, ճերմակ պիտի գա. իսկ այս գինիս յորժամ 'ի լնուլն յամանն գինին փրփուրն կարմիր կանգնեցաւ 'ի վերայ երեսին. եւ լուեալ զայն դատաւորին փառս ետ իմաստութեանց տվողին մարդկան: Եւ գիշերն մինչեւ 'ի լոյս հնարէր, թէ որպէս վաղիւն դատ առնէ նոցա. եւ շինեաց սուտ պատմութիւն մի. եւ յորժամ լուսացաւ, եկին .Գ. եղբարքն եւ սկսան ասել զգանկատս իւրեանց վասն ակին, որ կորել էր 'ի մէջ նոցա: Եւ ասէ ցնոսա դատաւորն. ակին բանն հեշտ է. թող այդ 'ի տեղն կենա. ապա բան մի եղեալ է 'ի քաղաքս մեր. զայն զրուցեանք, թէ ո՞րն է ղորդ: Զի էր 'ի քաղաքիս մեր աղջիկ մի, որ խօսեցեալ էր առն միում. եւ յետո փոշիմանեալ այլ ումեմն մարդոյ տուին. եւ յորժամ գնաց աղջիկն 'ի տուն առն եւ պատմեաց առն իւրում, թէ յառաջն զիս այլ մարդոյ տվել էին եւ ծնողքս իմ փոշիմանեցան եւ քեզ տուին, յայնժամ այրն այն զարդարեալ զկինն եւ ուղարկեաց միջնորդօք յառաջինն խօսեցեալ այրն, թէ յորժամ յառաջն քեզ էր խօսեցեալ, քո է կինդ եւ քեզ եղիցի. իսկ նա տեսեալ զայնպիսի յիրաւ դատաստանն, որ այրն կնոջ արար ընդ նմա. նոյն ժամայն ինքն կրկին զարդարեց եւ ասաց, թէ յորժամ այրն քո այնպիսի նսէֆ եւ իրաւունք արար, որ առանց ուզելոյ զիւր հալալն եդիր եւ յիմ տունս ղրկեաց, յայսմ հետէ այն սէրն, որ կնութեան եւ այրութեան պիտէր լիներ եւ 'ի մեր մէջս, նա դու ինձ քուր լեր եւ ես քո եղբայր. եւ թող մեր մէջն քուր եւ եղբօր սէր լինի եւ այնպէս ուղարկեաց զնա այրն իւր: Արդ հարցանեմ զ.Գ. եղբարսդ, ասացէք մի ըստ միոջէ, թէ ո՞րն արար իրաւացի բան յերկուց յարանցն այնցանէ: Ասէ մին եղբայրն, թէ որ այրն էր կնոջն, շատ նսէֆ եւ յիրաւունք արար. որ զիւր հալալ կինն մին խօսից համար, թէ յառաջն այլ մարդոյ էր խօսեցած, եդիր եւ այն մարդոյն ուղարկեաց. եւ միւսն ասաց, թէ մէկ ալ մարդն այլ շատ մուրվաթ ունէց, որ ղալաթով զարդարեց եւ քուր անուանեալ իւր եւ յետ իւր մարդոյն ուղարկել. եւ երրորդն ասաց, թէ այն ալ շատ աջողումն է, որ երբ հանցեղ գեղեցիկ զարդարած նոր հարսն գիշերով 'ի թաղուց 'ի թաղ երթա եւ 'ի յետ գա, նա հասաս եւ կամ վնասակար մարդ 'ի դէմն չէ ելել. քաւ էլ այն քաղաքն հասաս կամ գող չէ կեցել. յայնժամ ասէ դատաւորն. զակն դու ունիս. գնայ եւ տուր 'ի յետ 'ի քո եղբարքդ. եւ գնացէք՝ խաղաղութիւն արարէք:

Ցուցանէ առակս, թէ ամէն մարդ՝ զինչ իւր բարքն սիրէ, զայն պիտի իմանա եւ զայն պիտի խօսի:

ՃԿԹ. ԵԼՉՈՒԹԻՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

(150 I=16 ag=53 F)

Աղէկսանտր թագաւորն երթայր ինքն յամենայն տեղ ելչութեան եւ օր մի գնաց 'ի Պօպլ[ի]ոս թագաւորին. եւ նա՛ աղութ թասովն այախ տայր. նա՛ զգինին խմեց եւ զայախն 'ի ծոցն եդիր. եւ նոքա ասացին, թէ է՞ր այդպէս արարեր. եւ նա՛ ասաց, թէ թագաւորին սահմանքն հանց է. եւ Պաւպլիոս հնազանդեցաւ նմա՛. եւ քոյրն Պաւպլիոսի իմաստասէր էր. ճանաչեց զԱղէկսանդր եւ ասաց, թէ արի փախիր, թէ այս պահս կու բռնեն զքեզ. եւ նա՛ հեծեալ 'ի Ցլագլուխ ձին եւ փախեաւ:

ՃՀ. ԱՆԴԱՐՁ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ
(151 I=17 ag=54 F)

Յորժամ մեռանէր Աղէկսանդր, նա՛ աւսիթ արար, թէ զիս իմ տունն տարէք եւ իմ դարպասին արջեւ եւ Ռ. մարդ մերկացուցէք եւ չուլ հագուցէք եւ Ռ. մարդ ոսկի սինով ակն եւ մարգարտով եւ Ռ. ձիոյ ագին եւ բաշն խուզեցէք եւ զէշ եւ բիշիկ, աղեղ եւ ռումպ 'ի վերայ կապեցէք եւ ՃՌ. սրաւոր յառաջ ուղարկեցէք. եւ նոքա նոյնպէս արարին՝ տարան. եւ տեսեալ կնոջն եւ մօրն ոչ արարին սուք. եւ իշխանացն հարցեալ, թէ ընդ է՞ր ոչ արարիք սուգ. ասաց մայրն, թէ իմ որդին պատուիրել էր. թէ ճար կար 'ի մահուն փրկելու, նա՛ ես ամէնքս 'ի դէմ յուղարկեցի եւ ոչ մռեց մահն եւ սուքն պիտի մռէ:

Հան[ց] գիտենանք, որ սուքն մեռելին վտանք է եւ պահողին այլ չէ աւգուտ քան զմեղքն անցել:

ՃՀԱ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԵՒ ՄԵՐԿ ԻՄԱՍՏԱՍԷՐՔ
(152 I=18 ag=55 F)

Աղէկսանդր հանդիպեցաւ աւր մի յանջրդի բնակ աշխարհիս իմաստասէրք .Բ. 'ի աշխարհէ փախուցեալք մերկ մարմնով եւ կերակուր նոցա էր կաթ եւ բրինձ. ասաց. աւթեցէք եւ դարձեալ եկէք մաւտ յիս եւ տամ ձեզ բազում ինչս. եւ ասացին իմաստասէրքն, թէ մէկ խնդիրք ունիմք, զայն կատարես, մեք հետ քեզ կու գամք. ասէ թագաւորն՝ զի՞նչ. նոքա ասեն, թէ անմահութիւն կարե՞ս տալ. ասէ թագաւորն զայրացմամբ, թէ ոչ էք իմաստասէրք. ես մարդ եմ մահկանացու եւ ոչ կարէմ տալ անմահութիւն եւ մարդս զոր ինչ ունի, զայն կարէ տալ մարդու եւ զոր չունի, զիա՞րդ կարէ տալ մարդու. եւ ասացին իմաստունքն. թէ յիրաւի գիտես, որ մահկանացու ես եւ ընդ է՞ր զաշխարհս կու աւիրես. եւ ասէ թագաւորն. ես չեմ աւիրել. Աստուած տեսաւ, որ ամենայն մարդ 'ի ճանապարհէ ելաւ եւ քան զիս այլ չկայր չար եւ վատ, նա՛ զիս 'ի ձեռն եառ եւ աշխարհս ենով կու խրատէ, որ 'ի ճանապարհ գան. եւ հաւանեալ իմաստասիրացն 'ի թագաւորէն բան եւ աւրհնեցին զԱստուած:

ՃՀԲ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԵՒ ԵՐԿԻՐ ԲԱՐՈՒԹԵԱՆ
(153 I=189 ag=56 F)

Աղէկսանդր հանդիպեալ տեղի մի հեծելօքն. եւ բերեալ նուռ մի .Ա. կտրեցին. եւ ելից զթափսին. եւ կտրեց զխաղողին վազն եւ կուժն լցեց գինով. եւ իմացեալ Աղէկսանդր՝ հարցաւ, թէ ո՞ւմ է այս տեղս. եւ ասեն, թէ Աղէկսանդրի է. եւ խորհեցաւ չարիք առնուլ եւ բարութիւնն այն խափանեցաւ եւ Դ .Ե. նուռն զթափսին այլ չէր լնուլ եւ վազն՝ զկուժն. եւ ասացին, թէ մեր թագաւորին սիրտն ծռել է հետ մեզ. եւ ճշմարիտ էր:

Բ. ՄՆԱՑՈՐԴՔ ԱՌԱԿԱՑ ՅԱՂՈՒԵՍԱԳՐՈՑ

ՃՀԳ. ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ՇՈՒՆ ԵՒ ՇՈՒՔՆ

(2 ag=61 B=7 C=7 C=34 D)

Թագաւոր մի բարի եւ բարեմիտ՝ ճաշ արարեալ յեզր գետոյն. եւ շուն մի սոված եկն առ թագաւորն. եւ նա ետ հաց մի սուրբ: Եւ առեալ շանն գնայր ընդ եզր գետոյն. ետես 'ի ջուրն զիւր շուքն իբրեւ զայլ շուն եւ զհացն 'ի բերան նորա: Եւ շունն ագահեալ մոռացաւ զհացն, որ 'ի բերանն էր. վազեաց 'ի գետն. զի առցէ զհացն 'ի միւս շանէն. եւ ո՛չ եգիտ. զի շուքն էր: Եւ զայն հացն, զոր ունէր, գետն տարաւ. եւ շունն ելեալ երթայր սովամահ:

Ցուցանէ, թէ թագաւորն Քրիստոս է եւ սովեալ շունն ազգ մարդկանէ եւ սուրբ հացն իւր շնորհն եւ պատուիրանն եւ իւր սուրբ մարմինն: Եւ սատանայ կերպարանէ առաչոք մեր առաջի զսէր աշխարհի եւ զամենայն մեղս, զագահութիւն, զարծաթասիրութիւն. եւ մեք ջանամք մեծ աշխատութեամբ զհետ փառաց եւ մեծութեան. եւ զհետ ստոց եւ անցաւորաց ջանամք. թէ եւ առնումք, մահն հանէ 'ի մէնջ. եւ մեք լինիմք ողորմելիք. զի կորուսանեմք զայս կեանս եւ զայն:

ՃՀԳա. 204/194 D Առակ շահաբեր:

'Ի յառակաց լինի պատմեալ.
Գերի շնուկ մի խիստ քաղցեալ:
Ելեալ շրջէր սովամահեալ.
Արքայական ընթրեաց [դիպեա՞լ]:
Իսկ թագաւորն զշունըն տեսեալ.
Զի սովամահ լինի եղեալ:
Վասն այնորիկ 'ի գութ շարյեալ.
Սպիտակ հաց մի նըմայ տուեալ:
Այլ գերի շունն ըզհացն առեալ.
Ուրախութեամբ ընդ գետն երթեալ:
Յանկարծակի ջուրը նայեցեալ.
Եւ 'ի գնացից զինքն արգելեալ.
Քանզի 'ի գետն շուն այլ տեսեալ.
Որ էր 'ի ստուերն իւր կերպացեալ:
Հաց 'ի բերանըն ունեցեալ
Եւ քան ըզիւրն մեծ երեւեալ:
Ագահութեամբ նա մոլորեալ.
Զստուերն որպէս զստոյգ կարծեալ:
Թողեալ զիւր հացն, 'ի գետն վազեալ՝
Թերեւս զայն մեծ լիցի կալեալ:
Իսկ նա 'ի գետն ոչ ինչ գտեալ.
Զի էր ըստուեր մերկ երեւեալ.
Նա եւ զիւր հացըն կորուսեալ.
Զայն զոր շնորհօք էր ըստացեալ:
Զոր եւ յետոյ յոյժ զըղջացեալ.
Քամահանօք զանձն իւր կոչեալ.
'Ի զղջալոյն ոչ ինչ օգտեալ.
Այլ 'ի սովոյն եղեւ մեռեալ:

205 D Մեկնութիւն առակիս:

Շունն օրինակ մարդոյ եղեալ.

Իսկ թագաւորն զԱստուած ցուցեալ:
Որ միշտ զքթով զմարդիկ խնամեալ.
Ըզհաց շնորհաց նոցա տուեալ:
Այլ զիս մարդիկք անմտացեալ.
Զսէր աշխարհիս վեր երեւեալ.
Ըստուգապէս իր կարծեալ.
Թողեալ զստոյգն ըստոյն հետեւեալ:
Վասն այսորիկ ոչ ինչ շահեալ.
Սէր աշխարհիս փութով անցեալ:
Նա եւ զբարիս տեառն կորուսեալ.
Յամենայնէ դատարկացեալ:
Ո'վ ընթերցողք իմաստնացեալք.
Զառակս 'ի միտ առէք պահեալ:
Զսէր աշխարհիս թողէք երթեալ.
Ըզհոգեւորն լերուք ասացեալ:

ՃՀԴ. ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԽՈՋ
(6 ag=158 D)

Թագաւոր մի մեծ եւ բարեմիտ ունէր խոզ մի սիրուն 'ի տան իւրում եւ խորհեցաւ մեծարել զնա եւ փառաւորել. կազմեաց նմա գինտ մի յոսկւոյ հազար դահեկանի եւ մետաքս ոսկէզօդ՝ սպիտակ բեհեզ՝ սաստիկ ծանրագին էած 'ի վերայ նորա. եւ զգինտն էած 'ի քիթն նորա. եւ նա առաւօտու ժամուն շրջէր ընդ քաղաքն եւ զամենայնն 'ի տիղմն թաւալէր եւ զգինտն ոսկի, որ կայր 'ի քիթ նորա:

Ցուցանէ: Ամենայն մեղաւորք մեղս առնեն. եւ յամենայն ժամ թաւալին 'ի տիղմն մեղաց եւ աղտեղեն զլուսափայլ պատմուճան սրբոյ աւազանին. եւ ամենայն ընդ աղբ եւ շարաւ մեղաց շփեն զգինտն սուրբ, որ 'ի միտս եւ հոգիս նոցա պատկերն սուրբ:

ՃՀԵ. ԹԱԳԱՒՈՐՆ ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ ԵՒ ՃԳՆԱՒՈՐ
(7 ag=5 F)

Թագաւորն Կոստանդիանոս 'ի բազմաց ժամանակաց ցանկացաւ տեսանել զճգնաւոր ոմն, որ է անապատական՝ եւ յոյժ անուանի եւ օրհնիլ 'ի նմանէ եւ խրատ առնուլ. եւ ո՛չ կարեր երթալ 'ի բազում զբաղանացն: Եւ օր մի յանկարծակի որսոյ պատճառաւ գնացեալ յանապատն. եւ սպասաւորք թագաւորին յառաջ ընթացեալ ազդեցին ճգնաւորին զգալուստ թագաւորին. եւ նա ելեալ աւելեաց զխցիկն եւ զաւելածն կուտեաց 'ի մէջ տանն: Եւ ինքն մերկացաւ եւ կտոր մի վալայ 'ի վերայ թիկանցն կապեաց եւ նստաւ 'ի վերայ սեմոց դրանն մերկ՝ մէկ ոտքն 'ի ներս եւ մէկ ոտքն 'ի դուրս. եւ եդ զմէկ ձեռն 'ի վերայ բերանոյն եւ զմիւսն 'ի վերայ ծածուկ մարմնոյն- Եւ եկեալ թագաւորն ետես եւ զարմացաւ եւ փութանակի յետ դարձաւ. իշխանացն հարցեալ զպատճառն շտապ դառնալոյն ասաց. թէ տասն տարի 'ի մօտն էի կացեալ, այնչափ խրատ չէի կարել ուսանիլ, որչափ այս մէկ պահս: Եւ ասացին, զի՞նչ էր խրատն ուսեալ. զի ո՛չ դու խօսեցար եւ ո՛չ նա: Եւ ասաց, թէ այն որ զաւելուքսն կուտել էր, զայս ուսուցանէ, թէ աշխարհիս ինչքն իբրեւ զայս աղբս է: Եւ այն որ մերկ էր, զվալան 'ի վերայ թիկանցն էր կապեր, զայն ուսուցանէ, թէ յաշխարհէս զայս չափ իրքս պիտի տանիմք, քանի շատ ապրիմք ու ժողովեմք: Եւ այն որ 'ի վերայ շեմոյն էր նստեալ, զայն ուսոյց, թէ մարդոյս մէկ ոտքն 'ի յայս կեանքս է եւ մէկ ոտն յայն: Եւ այն որ մէկ ձեռն 'ի վերայ բերանոյն էր եդեալ եւ զմէկ 'ի վերայ ծածուկ մարմնոյն, զայս կու նշանակէր, թէ մարդ որ ուզէ աստ առ մարդիկք պարզերես լինիլ եւ անդ առ Աստուած, թող զայս երկու դուռնս պահէ:

ՃՀԵա. 169 D Թագաւոր մի բարեմիտ եւ իմաստուն գնայր առ սուրբ հայր մի 'ի տեսութիւն. որ խրատ տայր իւր: Իսկ սուրբ հայրն յառաջ իմացաւ զգալն թագաւորին եւ չոգաւ մերկացաւ 'ի սգեստուց եւ մերկիկ եղեւ. եւ զինչ աղբ որ 'ի տունն կայր, զամէնն 'ի շեմն 'ի մօտ տարաւ, կուտեաց. եւ մէկ ոտն շեմին ներքեւն եդիր եւ զմէկն 'ի դուրս. զմէկ ձեռն 'ի վերայ ծածուկ մարմնոյն եւ զմիւսն ձեռն 'ի վերայ բերանին. եւ կտաւ մի 'ի վերայ թեւին ձգեաց եւ կանգնեցաւ. իբրեւ եկն թագաւորն, ետես սուրբ հայրն այնպէս, զարմացաւ եւ յետս դարձաւ եւ գնաց: Եւ ասեն իշխանքն եւ ճորտերն առ թագաւորն. ընդ է՞ր ոչ խօսեցար ընդ այրն այն եւ առեալ էիր զքեզ խրատ. ասէ թագաւորն. ո՛վ իշխանք, թէ ամ մի կացեալ էի աստ, այնչափ խրատ չէի առեալ, զինչ որ 'ի յայս պահս խրատեցայ. եւ ասէ թագաւորն. այն որ մերկացեալ էր, ցուցանէր, թէ մարդ որ յայս կեանքս գայ, թէ շատ ապրի եթէ քիչ՝ մերկիկ պիտի երթայ. եւ զայն կտաւն, որ 'ի յուսին վերայ կայր, զայն միայն տանի պատանք հետ իւր. եւ զաղբն որ 'ի շեմին մերձ էր դիզել, նշանակէր զաշխարհի մեծութիւնն. գանձն եւ ղումաշն զերդ զայն աղբն է, որ հետ աւելումն կերթայ եւ հեղեղին. եւ զձեռն որ 'ի վերայ բերանին էր դրել, նշանակէ, թէ զքո բերանդ եւ զլեզուդ պահէ 'ի սուտ խօսելոյ եւ 'ի բամբասելոյ եւ 'ի մատնելոյ: Քրիստոս ասաց ընդ Պիղատոսի, թէ [որ] զիս քեզ մատնեաց, նմա շատ մեղք են. եւ ամենայն չար եւ աղտեղի խօսից պահեա զլեզուդ. եւ այն որ մէկ ոտն 'ի դուրս էր շեմին, այսպէս ցուցանէ, թէ անդէնն եմ 1 դրել. եւ միւս ոտն 'ի ներքոյ շեմին ցուցանէ, թէ աստէնս եմ. եւ կայ ընդ աստէնս՝ եւ ընդ անդէնս 'ի մէջ. եւ յորժամ վերացնեմ զայս ոտս, որ 'ի ներքոյ շեմին է, նա եւ ես շուտ ելանեմ 'ի տանէս: Այսպէս համարել պարտ է՝ թէ շատ ապրիմք, հրաժարիմք եւ ելանեմք 'ի յայսմ յաշխարհէս պահ մի գիշերոյ. ասէ մարգարէն՝ զհազար ամ աչսն տեառն, որպէս օր երեկի. մերկ եկայք 'ի մօրէ եւ դարձեալ մերկ երթամք 'ի հողն:

ՃՀԶ. ՈՒԽՏԱՒՈՐ ԿԻՆ ԵՒ ԵՐԷՑ
(9 ag=4 F)

Կին մի երթայր յԵրուսաղէմ բազում զօրօք եւ բազում ընչիւք. եւ 'ի ճանապարհին հանդիպեալ յեզեր միոյ եկեղեցւոյ. եւ այն եկեղեցւոյ դուռն երկու ծառ կայր բուսած՝ մէկ 'ի յաջ դիհն եւ մէկ 'ի ձախն. եւ յանկարծակի յիրեար եկեալ համբուրեցին զիրեար: Եւ զիտացեալ, զի երէց մի կայր անդ 'ի պատարագն. եւ 'ի ,Մի ոք յերեխայիցնե համբուրեցին զիրեար: Եւ ասաց կինն յերէցն, թէ մէկ ջորեբեռն մալ քեզ՝ հանց պատարագ մի ինձ շինէ. եւ մէկ այլ օրն շինեաց եւ չհամբուրեցին զիրեար ծառքն: Եւ իմացեալ զպատճառն՝ ասաց երէցն, թէ յայն ժամու խորհուրդ անկաւ 'ի սիրտս իմ, թէ զջորին այլ պիտի տայ թէ ո՛չ: Խոստմամբ երդումն արար, թէ ջորին այլ քեզ. լուր հանց ժամ շինէ: Եւ մէկ այլ օրն շինեաց եւ ծառքն համբուրեցին զիրեար. եւ ճշմարիտ եղեալ է եւ ոչ է սուտ:

ՃՀԷ. ԽԱՉ
(11 ag=8 F)

Իշխանի միոյ որդին մեռաւ. եւ բերին զխաչն 'ի վերայ սպասաւորք խաչին. եւ յարեաւ որդի իշխանին. զի էին ընտիրք սպասաւորքն այնորիկ: Եւ եղեւ զի այլ ումեմն իշխանի որդի մեռաւ. եւ բերին ցնոյն խաչն 'ի վերայ. եւ ո՛չ յարեաւ: Եւ աղաղակէր հայր մանկանն եւ ասէր, թէ խաչս այն խաչն է եւ Աստուած այն Աստուած է. զիա՞րդ ո՛չ յարեաւ մեռեալս. Եւ հրեշտակն երեւեալ ասաց, թէ խաչս այն է եւ Աստուած այն է. բեր զայն աջն, որ բռնէ զայս խաչս:

ՃՀԸ. ՈՒՐ ԳԱՆՁՔ, ԱՆԴ ՍԻՐՏՔ
(12 ag=7 E=9 F)

'Ի բան աւետարանին, որ ասէ. ուր գանձք ձեր են, անդ եւ սիրտք ձեր եղիցին: Մեռաւ ոմն իշխան, որ ունէր բազում գանձս ոսկւոյ եւ արծաթոյ եւ յականց. եւ ո՛չ ասաց խոստովանահօրն. եւ 'ի լուանալն գտին բալանի մի յանթատակն եւ տարան առ վարդապետն. եւ բացեալ զսնդունկն՝ տեսին, զի սիրտ արիւնաթաթախ կայր 'ի վերայ ընչիցն. զի ճշմարտեաւ է:

ՃՀԹ. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԱՆԿԱՏԱՐ
(13 ag=8 E=10 F)

Եղբայր ոմն գնաց առ հայրն եւ զամենայն յանցանս իւր խոստովանեցաւ. եւ տեսեալ յանուրջս հայրն զդատաստան եդեալ. եւ այրն այն մերկ եւ մարմինն ամենայն հրալից սլաքով 'ի լի. եւ յորժամ խոստովանէր, հրեշտակն աքցանով մէկ մէկ քարշէր զսլաքսն. զամէնն քարշեալ՝ մի եւս այլ մնաց. եւ զարթեաւ հայրն եւ պատմեաց. եւ ասաց, թէ այլ մեղք է մնացեալ, որ չես ասացեալ. եւ ասէր. այո՛, օր մի զկոյր մի կատակ արարի. զի ցեխն 'ի ներս ըղորդեցի եւ զցամաքն թողի:

ՃՁ. ԵՐԿՈՒ ԱՐԴԱՐ ԵՂԲԱՐՔ Ի ՂԱԼԱԹԱՅ
(14 ag=11 F)

'Ի պատմութենէ ժամանակի ասի, թէ 'ի Ղալաթայն այր մի աղքատացաւ եւ՝ զարտ մի ունէր՝ վաճառեաց. եւ այր ոմն գնեաց զարտն զայն. եգիտ երեք կարաս ոսկի եւ յըղարկեաց առ տէր արտին եւ ասէր. եկ՝ առ զոսկին. զի վարեցից զարտս. եւ ասաց. ո՛չ է իմ, այլ քո է. եւ նա ասէր. ես զարտն եմ գնեալ. եւ վիճէին ընդ միմեանս զբարւոք մարտն. եւ ձայն եղեւ 'ի պաղատ թագաւորին. եւ թագաւորն եւ պատրիարգն եւ իշխանք քաղաքին եկին եւ տեսին ամենեքեան եւ դատաստան արարեալ՝ ետուն զմէկ կարասն յարքունիս եւ զմէկն յեկեղեցիսն եւ յաղքատս եւ զմէկն 'ի պէտս երկոցունցն. եւ ետուն զնորա դուստր ուստեր նորա եւ զարտն պռուքս. եւ սիրով միաբանեցան. եւ ցանեալ զարտն ցորեան եւ 'ի ժամանակի հնձոցն երթեալ տեսին, զի մարգարիտ էր պտղաբերեալ. եւ քաղեցին տրցակ մի եւ տարեալ 'ի Կոստանդինուպոլիս եդին 'ի յարկ թագաւորին վասն յիշելոյ. եւ գտեալ զայն յայլում ժամանակի եւ խնդիր արարեալ գտին զծեր մի պատմեալ զամենայն մի ըստ միոջէ. եւ փառս ետուն Աստուծոյ:

ՃՁԱ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԵԻ ԿՐԻԱՅ
(19 ag=57 F)

Աղէկսանդր բազում զօրօք իջեալ 'ի կղզի մի ծովուն՝ ամենեքեան կրակ վառեցին. Եւ սկսաւ կղզին 'ի շարժիլ եւ իմացեալ 'ի նաւ մտին. զի կրիա էր: Զի ասեն իմաստասէրքն, թէ յաշխարհս երեք կենդանի կայ. որ քանի շատ ապրի, մեծանայ՝ մէկ կրիայն, մէկ՝ օձն, մէկ՝ ձուկն, որ վիշապ լինի:

ՃՁԲ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԵԻ ՍՈՎ
(20 ag=58 F)

Աղէկսանդր բազում զօրօք պատահեցաւ 'ի տեղի մի եւ եղեւ ձիւն մեծ. եւ սկսան զօրքն 'ի սովու կոտորիլ. եւ ասաց թագաւորն, թէ այժմ զայժմուս զվաղիսն պարտ է հոգալ. յորժամ յաստից ազատիմք, զայլ վաղիւն հոգամք. կոտորեցէք զձիանդ եւ կերէք: Ոմանք ասեն, թէ Մահումետն է ասացեալ. վասն այնորիկ զձիու միսն կուտէ մսլման ազգն:

ՃՁԳ. ԳՈՂ ՀԱՅՐ Ի ՏԱՆՋԱՆՍ ՈՐԴԻՈՅՆ
(21 ag=40 F)

Այր մի ըմբռնեցին վասն գողութեան. երկու շաբաթ խիստ չարչարեցին՝ ո՛չ 'ի խոստ երեկ. եւ յորժամ զիւր զաւակն կախեցին եւ մէկ փայտ զարկին եւ գոչեաց հայրն եւ 'ի խոստ եկն զգողութիւնն: Եւ ասացին թէ երկու շաբաթ զքեզ չարչարեցինք եւ դու ո՛չ ասացեր. եւ վասն մէկ փայտի զաւակի քոյ վաղվաղակի ասացեր: Եւ նա ասաց, թէ իմ մարմինս յիմ ծնողացն էր, ո՛չ ցաւէր, որպէս յորժամ զիմ որդի ծեծէին.

մարմին նորա յիմ յաղեացս էր՝ խարշեցաւ աղիքս եւ ասացի:

Եւ գութ ծնողացն եւ Աստուծոյ համեմատք են. զի յորժամ ծնօղն զզաւակն ծնանի, թէ գութն չէր, յորժամ մէկ ծնօղ ծնանէր, այլ ոչ ծնանէր եւ ոչ հոգայր հեշտութեանն. ախ աւաղ ես:

ՃԶԳա. 99 D Վասն գթոյ: Ասի 'ի պատմութեանց. այր ոմն ունէր որդի մի եւ ըմբռնեցաւ 'ի գողութեան. եւ կալեալ զհայրն չարչարէին, թէ ցոյց զքո որդին. եւ ոչ եկն 'ի խօսք. եւ ապա որոնեալ գտին զորդին եւ զհայրն թողին եւ որդին չարչարէին. լայր որդին. եւ յորժամ լուաւ հայրն զլալ որդոյն, ոչ կարաց համբերել, այլ եկն անկաւ յոտքն իշխանին եւ ասաց. ես եմ արարեալ զգողութիւնս. զիս չարչարեցէք վասն դորայ. եւ հարցին զհայրն, թէ վասն է՞ր, երբ զքեզ չարչարեցաք, ոչ համբերեցեր չարչարանաց դորայ. ասէ հայրն. իմ մարմինս իմ հօրն է եւ ոչ է իմ. իսկ մարմին որդոյս իմ է. զի յինէն ծնաւ:

Ցուցանէ առակս, թէ Քրիստոս է հայր մարդկային բնութեանս. զի այնչափ սիրեաց զմարդիկ. զի Ադամ անցաւ զպատուիրանն Աստուծոյ եւ գող գտաւ օրինացն. եւ դեւքն եւ իշխանքն սատանայի կալեալ չարչարէին զԱդամ եւ զծնունդ նորա. լուաւ զձայնն լալոյ մարդկային ազգիս եւ ոչ համբերեաց 'ի բազում գթոյն, որպէս վկայէ մարգարէին՝ ասելով. որպէս գթայ հայր. եւ Գ. ազգ սէր կայ յաշխարհս. մին հօրն եւ մօրն 'ի վերայ որդոյ .Բ. զի այրն զկինն սիրէ եւ զկինն զայրն. եւ Գ. զի զաշխարհս սիրեմք. եւ 'ի զի աշխարհիս սէրն սուտ է:

ՃԶԴ. ԳԵՐԵԶՄԱՆԱԿՐԿԻՏ ԵՒ ՄԵՌԵԱԼ ԿԻՆ
(22 ag=45 F)

Մարդ մի գերեզմանակիտր. օր մի զխաթուն մի թաղեցին շատ ընչիւք. եւ 'ի գիշերին եբաց զգերեզմանն եւ մերկացոյց մինչ 'ի ներքին հանդերձն. Եւ կինն ափցի յերեսն էզարկ եւ ասաց , թէ եօթն տղայի մայր եմ եւ զարեւն յերդիքն 'ի վեր եմ տեսեալ. եւ դու չես վախիլ յԱստուծոյ, որ զիս հրապարակ կառնես: Եւ ասաց, թէ աղքատ եմ եւ ապրանք չունիմ: Եւ ասաց, թէ հետ ինձ գերեզման մի կայ՝ երեք գանգ կայ. առ եւ տարեալ ծախէ եւ քեզ ապրանք արա՛. տարաւ 'ի ծախել: Եւ առեալ սառաֆն շինեաց ոսկի շիշ՝ եւ էած 'ի մէկին ականջն, նա 'ի մէկ այլ ականջն 'ի դուրս ելաւ: Եւ մէկ ալին էած, գնաց մինչեւ 'ի կէսն: Եւ 'ի մէկ այլն էած, ամենեւին ո՛չ մտաւ. եւ զայն այլ 'ի բաց ընկէց: Եւ ասաց. ի՞նչ գին կուզես. եւ մէկին տասն հարիւր դրամ երետ. եւ ասաց զխասլիաթն, թէ այն որ շիշն 'ի մէկ ալ դիհն ելաւ, ամենեւին բանն յականջն չէ պահել՝ 'ի մէկ դիհն 'ի ներս մտել, 'ի մէկ այլն 'ի դուրս ելեր: Եւ մէկ այլ ամենեւին բանի տեղիք չէ տուել: Եւ այս մէկ ալիս գին չկայ. զինչ բարի բան լսեր է, զամէնն պահեր է. եւ այս գանգս ամէն ցաւոց դեղ է:

ՃԶԴ. 109 ag Այր ոմն գնաց 'ի հողվարքն եւ երեք գանգ էառ մարդոյ. եդ 'ի սկուտեղն եւ գնայր ընդ փողոցն 'ի ներքս եւ ձայնէր եւ ասէր. ո՞վ գնէ գանգ: Եւ ծաղր առնէին զնա եւ ասէին, թէ խեւ է. եւ տեսեալ զնա վաճառական մի եւ ասէ. բեր զգանգդ տեսանեմ: Եւ առեալ վաճառականն եւ հանեալ զմախաթն եւ հասոյց 'ի յականջն՝ եւ ո՛չ եմուտ եւ ընկեց զնա. եւ ածեալ ընդ ականջ երկրորդին եւ միւս ականջն թափանցիկ անցաւ. եւ յերրորդին ածեալ եւ ամենեւին ոչ ելանէր յականջէն մախաթն: Եւ զերրորդ գանգն խիստ սիրեաց վաճառականն եւ զերկուսն արհամարհեաց. եւ ետ բազում ոսկիս եւ գնեաց զմէկ գանգն զայն, որ մախաթն կպաւ եւ ոչ ելանէր. եւ բազում բժշկութիւն առնէր գանգն 'ի հիւանդս եւ յախտաժետս: Եւ մեկնեաց վաճառականն եւ ասէ, եթէ այս որ մախաթս չմտաւ, նայ այս նոքա են, որք ամենեւին Աստուծոյ բանքն յիւրեանց ականջն եւ լսելիս չէ մտեալ եւ ո՛չ բարիս գործեալ. այն որ Քրիստոս ասաց. որ անկաւ ապառաժին եւ 'ի չգոյէ հիւթոյ չորացաւ: Եւ այն որ ընդ մի ականջն մտաւ մախաթն եւ ընդ մէկ այլ դեհն 'ի դուրս ելաւ, նայ այս այն մարդիկքն են, որ Աստուածային բանն ընդ մէկ ականջն մտեալ է եւ ընդ մէկ այլն ելեալ. որ անկաւ եւ հեղձաւ եւ եղեւ անպտուղ: Եւ այն որ մտաւ եւ ո՛չ ել, այն մարդիկքն են, որք Աստուածային բանքն յիւրեանց լսելիքն են մտեալ եւ այլ ո՛չ ելեալ. այն որ անկաւ յերկիր բարի եւ ետ զպտուղ եւ գործեաց զարդարութիւն երեսուն, վաթսուն եւ հարիւր: Զի թէպէտ եւ մեռեալք են նոքա, ապա կենդանիք են եւ փոխեալ[ք] 'ի մահուանէ 'ի կեանս եւ 'ի խաւարէ 'ի լոյս:

ՃՁԵ. ՀԻՆԳ ԱՆԳԻՏԵԼԻ ԲԱՆ
(23 ag=28 F)

Յաշխարհիս հինգ բան 'ի մարդկանէ անգիտելի է: Մէկ՝ որ մարդ զմարդոյ խորհուրդն չի գիտել. եւ ոչ հրեշտակք եւ ոչ դեւք: Երկու՝ որ յաւուրս 'ի վաղն չգիտեմք, թէ ինչ պիտի լինի: Երեք՝ որ զինչ որ սկսնումք, չգիտեմք, թէ յինչ իրք պիտի աւարտի 'ի բարի թէ 'ի չար: Չորս՝ որ մահու օրն անգիտելի է: Հինգ՝ զկատարածի օրն չգիտեմք: Երեք իրք որ զմարդն 'ի չարէն 'ի զատ կու պահէ՝ խիղճ մտացն եւ երեսին ջուրն եւ բնական խելքն՝ իբրեւ զառաջնորդ եւ ղլավուզ է:

ՃՁԶ. ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԽԱԶՆԱԴԱՐ
(24 ag=46 F)

Թագաւոր մի յիւր խազինան հազար ակն ունէր պատուական եւ մէկն առաւել պատուական էր: Եւ ունէր միամիտ խազնադար մի. եւ օր մի խազնադարն զայն ակն փոխեց եւ թագաւորն եկեալ տեսանել զակներն եւ ետես, որ մէկ ակն փոխած էր. եւ զխազինադարն բազում ժամանակ չարչարեաց եւ 'ի խոստ ո՛չ եկաւ. եւ չեր ղիմիչ առնել. որ սպաննէր. եւ ոչ զակին թարկն տալ կարէր. եւ իմաստասէր մի ասաց. ես առնում զակն. եւ տարաւ յանգէտ մարդոյ 'ի մօտ զնդան ձգեց. եւ հարցաւ անգէտն զպատճառն. եւ ասաց. եւ նա ասաց, թէ քարին համար ինչու զնդան ես մտել. եւ ձանձրացաւ եւ ետ զակն 'ի [թագաւորն]:

ՃՁԷ. ԽԱՒՋԱՅ ԵՒ ՂԱԴԻ
(24 ag=47 F)

Խօջայ մի աղքատացաւ, ոչ արուեստ գիտէր եւ ո՛չ կարէր մուրալ, գնաց 'ի խօջայի մի մօտ եւ ասաց, թէ հազար ստակ 'ի փոխ տուր. նա չէրետ. նայեց, որ չէրետ, նա գնաց 'ի ղադին. եւ ասաց, թէ այս անուն խօճայ՝ տասն հազար ստակ պարտի ինձ. ոչ թուխթ ունիմ եւ ո՛չ վկայ. բեր որ դրստեմ. ղրկեց եւ եբեր: Եւ ասաց, թէ երեսի ջրի գինն զի՞նչ է: Ասաց ղադին. տասն հազար ստակ. ասաց, թէ երեք տարպայ զիմ երեսին ջուրն ձգել եմ. եւ ասաց ղադին, թէ տուր տասն հազար ըստակ:

ՃՁԸ. ԲԱԶՐԿԱՆ ԵՒ ԳԱՒՄԷՇ
(25 ag=50 F)

Մարդոյ մի բազրկանի զբեռներն տարան եւ աղքատացաւ եւ դռնէ 'ի դուռն կու մուրայր եւ սովորեցաւ 'ի յայն: Օր մի 'ի տեղ մի օթեցաւ եւ գօմէշ մի քենով զիւրեն ժողոված հացիկն կերաւ. եւ ելաւ զգօմէշն ջլատեց: Եւ ելեալ վաղվնէն տեսին եւ բռնեցին զմարդիկքն, թէ ով արել է. եւ եկեալ աղքատն ասաց, թէ ես եմ արել. եւ ասաց զիւրեն աղքատութեան պատճառն եւ ասաց, թէ յորժամ մուրացած հացն 'ի փորն մտաւ, այլ 'ի տուն չի պիտէր կենար եւ հալալ վաստակ առնէր, որպէս որ ես յիմ տունն չգնացի:

ՃՁԹ. ԵՐԿՈՒ ԽԱՉ
(26 ag=30 F)

Մարդ մի յԵրուսաղէմ կերթայր եւ հարիւր ֆլորի մարդոյ մի մօտ ամանաթ եդ եւ գնաց: Երբ երեկ, ասաց. տուր զիմ ամանաթն. նա ուրացաւ, թէ տուեալ եմ. եւ տարաւ յերդումն. եւ զֆլորին 'ի գաւազանին մէջն էր դրել եւ երետ զգաւազանն 'ի ֆլորուն տէրն եւ ետ զձեռն 'ի վերայ մեծ խաչին եւ երդուաւ. եւ ոչ ինչ նշան եղեւ: Եւ տրտմեցաւ այրն եւ 'ի քուն եղեւ. եւ տեսաւ յերազի. զի ասաց փոքր խաչն 'ի մեծն, թէ յէ՞ր ո՛չ պատուհասեցեր. եւ ասաց մեծ խաչն, թէ Աստուծոյ դատաստանին եմ թողեր: Եւ ասաց փոքր խաչն, թէ ի՞նչ Աստուծոյ դատաստան է, այն մարդն կու թերահաւատի. եւ զարթեաւ եւ ուրախացաւ: Եւ

ասաց, թէ արեկ 'ի փոքր խաչն երդուիր: Եւ եկեալ եդ զձեռն 'ի վերայ փոքր խաչին. եւ փակեցաւ 'ի ձեռն եւ իբրեւ զհուր վառեցաւ. եւ կանչէց, թէ հանդ՝ ֆլորին 'ի գաւազանիս մէջն է. էառ եւ ուրախացաւ:

ՃՂ. ՏԱՍՆ ԱՅՐ ԵՒ ԿԻՆ
(27 ag=171 D)

Թագաւոր մի 'ի վերայ իւրոյ աշխարհին 'ի ժուռ գայր եւ տեսանէր եւ եկն 'ի քաղաքի մի եզեր. Եւ ահա տասն այր եւ կին ունէին զհաց եւ զկաթն եւ զգինի. եւ թողեալ զանոյշ կաթն եւ զգինին եւ զհացն եւ զաղբն ուտէին եւ զգոզն խմէին. եւ թագաւորն ետես իւրեանց անմտութիւնն եւ բարկացաւ. հրամայեաց, թէ սպանէք զդոսա. եւ սպանին:

Ցուցանէ: Թագաւորն Աստուած է. եւ այնք որք զկաթն եւ զգինին եւ զհացն թողեալ էին՝ զաղբն ուտէին եւ զգոզն խմէին, նոքա են որք թողուն զսուրբ պսակն եւ զսուրբ ամուսնութիւնն եւ երթան պոռնկին եւ շնան: Եւ ամենայն որ թողու զիւր սուրբ ամուսնութիւնն եւ զպատուական անկողինն եւ երթայ յայլ կին, որ ոչ է իւրն, նոքա զերդ զայն տասն այրն եւ կինն են, որք զաղբն ուտէին եւ զգոզն խմէին: Եւ թագաւորն Աստուած է, որ յաւուր դատաստանին զպոռնիկն եւ զշնացողն ընդ մարդասպանսն եւ ընդ արիւնահեղսն տանջէ, թէ ոչ դառնան եւ ապաշխարեն. որպէս ասէ Պողոս. զշուն եւ զպոռնիկս դատէ Աստուած:

ՃՂԱ. ՍԻԻՆ
(28 ag=174 D)

Թագաւոր մի զբարձր եւ զուղորդ սիւն մի կանգնեաց եւ մարգարիտ մի գեղեցիկ եւ մեծագին 'ի վերայ սեանն եդ եւ ասէ, թէ մարդ որ ընդ այս սիւնս 'ի վեր ելանէ եւ առնու զմարգարիտն, ես տամ նմա զմարգարիտն: Եւ ժողովեցան բազում մարդիկ եւ ո՛չ կարէին ելանել ընդ սիւնն 'ի վեր: Եւ եկն այր մի եւ եխած զսրունսն եւ զանդամն եւ զձեռսն եւ զբազուկսն եւ պատառեաց. եւ արիւնն հեղաւ. եւ խածատած տեղին եղեւ զերդ սանդուխտ. եւ ձգեալ զձեռն գրկեաց զսիւնն եւ ել եւ էառ զմարգարիտն: Թագաւորն գովեաց զայրն եւ ետ նմա զմարգարիտն:

Ցուցանէ: Թագաւորն Աստուած է եւ այն սիւնն, զոր կանգնեաց մարդկան, է պատուիրանն Աստուծոյ. զի մարդիկ սակաւ պահեն զօրէնսն. որպէս մարդիկքն այնոքիկ, որք ոչ կարէին ելանել ընդ սիւնն. Եւ մարգարիտն այն է, զի Աստուած պարգեւ խոստացաւ մարդկան. որ եւ բազումք ցանկան գտանել զմարգարիտն զայն եւ ո՛չ կարեն. Բայց նոքա առնուն զմարգարիտն, որք զիւրեանց մարմինն սպանին վասն արքայութեանն Աստուծոյ՝ մարտիրոսքն եւ արդարքն, որք հեղին զարիւնս իւրեանց վասն տեառն. որպէս այրն այն որ բազում նեղութեամբ ել ընդ սիւնն եւ էառ զմարգարիտն եւ զանանց բարին:

ՃՂԲ. ԱՅԳԻ ԵՒ ԿԱՄՐՋԱԿԱՊ ԽԱՆԴԱԿ
(29 ag=14 H)

Թագաւոր մի ունէր գեղեցիկ այգի եւ յեզերն խոր խանդակ. եւ փայտիւ եւ տախտակով կամուրջ 'ի վերայ ձգած. բայց 'ի գիշերն քարշէին զկամուրջն. եւ որ 'ի գիշերն գայր, 'ի վիհն անկանէր. եւ ո՛վ 'ի ցորեկն գայր, յայգին մտանէր:

Այգին է արքայութիւնն եւ վիհն դժոխք. եւ կամուրջն բարի գործն. եւ ցորեկն այս կեանքս. իսկ գիշերն մահն. ով որ ունի զբարի գործս, նա անցանի յարքայութիւնն. եւ որ ոչ ունի, իջանէ 'ի դժոխս:

ՃՂԳ. ԵՐԵՔ ՏԵՍԻԼ ԹԱԳԱՒՈՐԻ

(30 ag)

Թագաւոր ոմն ետես տեսիլ. զի իբրեւ զանձրեւ իջանէր աղուէս: Եւ քարոզ հրամայեաց կարդալ, եթէ ոք զիմս մեկնեսցէ տեսիլ, հազար դահեկան տաց նմա. եւ լուեալ այր ոմն աղքատ եւ երթեալ ասաց. եթէ երիս աւուրս տացես ինձ ներումն, յայտնեցից: Եւ երթեալ շրջէր յանապատի խոկալով. եւ վիշապ մի տեսեալ զայր տարակուսեալ՝ ասաց. զի՞նչ ինձ տացես, եթէ զտեսիլ թագաւորին քեզ յայտնեցից: Եւ նա ասէ. զոր ինչ խոստացաւ թագաւորն, քեզ կէսն եղիցի: Եւ ասէ. երթ եւ ասա, թէ ժամանակ է այսուհետեւ, զի մարդիկք նենգաւորք եղիցին եւ խաբեբայք իբրեւ զաղուէս. եւ երթեալ ասաց. եւ հաճոյ ասացեալն թուեցաւ. զի նման այնմ իսկ էին մարդիկքն. իսկ ետ հազար խոստացեալ դահեկանսն. եւ այրն ստեաց վիշապին եւ ո՛չ դարձաւ անդրէն: Եւ զկնի դարձեալ զայլ ետես տեսիլ. զի իբրեւ զանձրեւ իջանէր ոչխար. եւ հրամայեաց կոչել զայրն. զի նման առաջնոյն մեկնեսցէ: Եւ նորա զնոյն խնդրեալ ներումն. եւ ամաչէր իբրեւ զապերախտ. եւ երթեալ առ վիշապն զանձն պարտաւորելով՝ ասաց. մեղայ քեզ. յայտնեա զերկրորդս. եւ մեկնեաց նմա ո՛չ յիշելով զյանցումն: Եւ ասաց. երթ եւ ասա, թէ ժամանակ գայ եւ եկեալ է. զի մարդիկք իբրեւ զոչխար պարզամիտք իցեն. եւ եկեալ պատմեաց: Եւ այնմ եւս հաւանեալ՝ ետ նմա հազար եւս դահեկան. եւ առեալ առն տարաւ վիշապին՝ ընդ առաջնոյն եւ ընդ վերջնոյն հազար դահեկան: Զկնի այնորիկ դարձեալ այլ եւս ետես տեսիլ. եւ ահա իբրեւ զանձրեւ իջանէր սուսեր: Եւ հրամայեաց դարձեալ զայրն կոչել. զի զայն եւս մեկնեսցէ. եւ առն զնոյն խնդրեալ ժամանակ եւ երթեալ առ վիշապն. եւ նա առ ժամայն մեկնեալ իբրեւ բարեկամի. երթ եւ ասա, թէ ժամանակ է. զի մարդիկք յարիցեն բռնաւորք եւ սուսերաւորք: Եւ զայս ուսեալ առն ասաց. ընդէ՞ր այժմ թողից վիշապիս (վեց) հազար դահեկանս եւ կամ հինգ հարիւր այլ եւս բերից. հարից զվիշապս եւ սատակեցից. եւ ջանաց հարկանել զվիշապն. եւ ո՛չ յաջողեցաւ նմա. զի խոյս ետ 'ի նմանէ վիշապն: Եւ առն զղջացեալ խորհէր, թէ չարիս գործեցի. զի թէ այլ եւս հարկ հասանիցէ, ո՞րպէս եկից առ սա: Եւ տեսեալ վիշապն զայրն ստրջացեալ՝ ասաց նմա. այր դու, մի տրտմիր. զի յանձնէ ինչ ոչ արարեր, այլ 'ի բերմանէ ժամանակի: Զի ստելն քո 'ի կեղծաւորաց ժամանակն է եւ զղջանալն եւ տալն զհազար դահեկանն 'ի միամտաց ժամանակն եւ կամիլն սպանանել 'ի բռնաւորաց ժամանակին:

Ո'չ այլ ինչ առակս ցուցանէ, բայց զժամանակին գիտել զմարդիկք եւ զզուշանալ յանձանց. զի զզանազան բերէ ժամանակս զմարդ՝ եւ երբեմն նենգաւորս եւ երբեմն պարզամիտս եւ երբեմն բռնակալս եւ նման այսորիկ այլս բազումս:

ՃՂԴ. ԿՈՒՂԲ

(44 ag)

Է գազան մի, որ ձու նորա դեղ է 'ի պէտս բժշկութեան. եւ յորժամ տեսանէ զորսորդն, զի նեղէ զնա, նա իւր ատամօքն հատանէ զձուն իւր եւ ձգէ յորսորդին եւ ինքն փախչի:

Ցուցանէ, թէ զոր ինչ սատանայ սիրէ եւ որով գայ զհետ քո, դու զայն կտրէ եւ հան 'ի քէն. որ յիւր սերմանցն չգտանի 'ի քեզ. եւ դու փախիր 'ի նմանէ բարեգործութեամբ:

ՃՂԵ. ՈՐՍՈՐԴ ԵՒ ԿՐԻԱՅ

(51 ag)

Որսորդ մի կայր յարեւմուտս եւ ետես զկրիայն յարեւելս եւ յարեաւ զնաց առնուլ զնա եւ սկսաւ յամիլ 'ի ճանապարհին յայլ գործ. եւ աշակերտք նորա փութացուցանէին. զի մի փախիցէ որսն: Եւ նա ասէ. մի վախէք. զի անմիտ է եւ ոսկրապատ՝ անզօր. ո՛չ կարէ փախչիլ. եւ յորժամ երթամք, մեր է նա:

Ցուցանէ, թէ որսորդն սատանայ է եւ կրիայն մեղաւորքն են. եւ ասէ սատանայ ընդ դեւսն իւր. մի՛ փութայք եւ ջանայք, թէ երթամք 'ի տուն կախարդաց եւ զրկողաց, շնացողաց եւ սպանողաց եւ յայլ մեղաւորաց. զի նոքա զհետ մեր են կամաւ եւ առնեն զկամս մեր. վասն նոցա մի նախատիք [իմա՛ նահատակիք]: Գնացէք 'ի սուրբ մարդիկքն եւ ընդ նոսա կռուեցարուք. զի որ առնու զբերդն եւ զքաղաքն, այն երկիր նորա է:

ՃՂԶ. ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԱՒԶ ԵՒ ՈՐԴԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ
(69 ag)

Ասի յառակաց, թէ թագաւոր մի կայր, որ ունէր իւրն սիրելի զօձ մի, որ յամէն օր կարմիր դեկան մի բերէր թագաւորին. եւ եղեւ որդի մի թագաւորին նոր ծնեալ. իսկ թագաւորն զմանուկն սնուցանէր 'ի վերայ բարձացն եւ առեալ զօձն արկանէր զպարանոցաւ մանկանն: Եւ այնպէս սովորեալ օձն եւ մանուկն խաղային 'ի միասին եւ այսպէս ժամանակս ինչ սիրով խաղային առ իրեարս: Իսկ յորժամ մեծացաւ մանուկն, կապեալ սուր ընդ մէջս իւր՝ յաւուր միում 'ի խաղալն իւրեանց հանեալ մանկանն զսուրն էհար զտուտն օձին եւ ընկէց յերկիր. Յայնժամ զայրացեալ օձին էհար զնա եւ ինքն փախեաւ. մեռաւ որդի թագաւորին. Իսկ յետ սգոյն եւ մխիթարութեան առաքեաց թագաւորն. որ գտանեն զօձն. եւ աղաչէին զնա գալ 'ի տեղի բնակութեան իւրոյ: Եւ ասէ օձն. ո՛վ բարի թագաւոր, անդէպ է ինձ գալ առ քեզ. զի քանի որ հայիս դու 'ի գերեզման որդւոյ քոյ եւ քանի որ հայիմ ես 'ի տուտնս իմ, ո՛չ սրբի մախանքն 'ի սրտից մերոց. ապայ այս բարի է, որ հեռացայ 'ի քէն:

Ցուցանէ: Ուր նախանձ եւ մախանք շարժի 'ի վերայ քո, դու փախիր անտի. եւ ապա սրբի մախանքն այն: Թէ չար ինչ առնես մարդոյ, փախիր եւ հեռացիր յաչաց նորա. եւ ապա սրբի սիրտ նորա. զի դառն ախտ է մախանքն. եւ որ կարի երկիւղած է Աստուծոյ, նա կարէ սրբել զսրտին զոխն եւ զմախանսն:

ՃՂԶա. 78 B Աւձ մի բնակէր 'ի տան թագաւորի. եւ որդի թագաւորին սովորեալ հանապազ խաղայր ընդ նմա. եւ օր մի ընդ խաղն եհար տղայն զտուտն օձին. եւ օձն եհար զնա եւ փախեաւ. եւ թագաւորին որդին առ ժամայն մեռաւ: Իսկ յետ սգոյն եւ մխիթարութեան առաքեաց թագաւորն գտանել եւ աղաչել զնա. զի եկեալ դադարեսցէ 'ի բնակութիւն իւր. եւ ասէ օձն. ո՛վ բարի թագաւորն, անդէպ է ինձ գալ առ քեզ, զի քանի որ հայիս դու 'ի գերեզման որդոյ քո եւ քանի ես հայիմ 'ի տուտս իմ, ոչ սրբի մախձանք 'ի սրտից մերոց. ապա այս բարի է, որ 'ի միմեանց հեռու կենամք:

Ցուցանէ, թէ որ նախանձ եւ ոխ շարժի 'ի վերայ քո, փախիր 'ի նմանէ եւ այլ մի հաւատար նմա. զի ոչ սրբի ոխ 'ի չար սրտէ. այլ եթէ երկիւղած մարդ լինի, մի վախեր. զի փոյթ ելանէ ոխն 'ի սրտէն:

ՃՂԶբ. 13 D Ասի 'ի յառակաց, թէ թագաւոր մի կայր. ունէր սիրելի օձ մի, որ յամէն օր կարմիր դեկան մի բերէր թագաւորին. եւ եղեւ որդի մի թագաւորին նորածնեալս. իսկ թագաւորն զմանուկն սնուցանէր 'ի վերայ բարձացն եւ առեալ զօձն արկանէր զպարանոցաւ մանկանն եւ այնպէս սովորեալ օձն եւ մանուկն խաղային միասին. եւ այնպէս ժամանակաւ ինչ սիրով խաղային առ յիրար: Իսկ յորժամ մեծացաւ մանուկն կապեալ ընդ մէ[ջ]սն իւր. եւ յաւուր միում 'ի խաղալն իւրեանց՝ հանեալ մանուկն զսուրն եհար զտուտն օձին. եւ ընկեց յերկիր. յայն ժամ զայրացեալ օձին եհար թիւնօքն զմանուկն. եւ առ ժամայն մեռաւ մանուկն. եւ ելեալ գնաց օձն յօտար երկիր: Իսկ իբրեւ եկն թագաւորն, ետես զմանուկն սեւացեալ 'ի թիւնից օձին եւ մեռեալ. եւ զտուտն օձին հատեալ եւ յերկիր ձգեալ. ասաց 'ի միտս իւր, թէ որդին իմ հատեալ է թրով զտուտն օձին. եւ օձն զայրացեալ խայծեալ է զորդին իմ, որ մեռաւ. եւ սգացեալ զորդին եւ տարեալ թաղեաց 'ի գերեզմանի. եւ ժամանակ ինչ եկաց. եւ ողորկեաց առ օձն այն խնդրակս եւ ասէ. գիտեմ. որ յառաջ իմ որդին է արարեալ զծռութիւն. նա զքո տուտն է կտրել. եւ ապա դու զնա ես խայծեր. ամենայն ինչ եղաւ՝ եղաւ. եւ զի՞նչ գնացիր. հիմայ եկ. ես եւ դու այն առաջին սիրելիքն եմք. գնանք 'ի միասին կենանք: Իսկ օձին պատասխանի տուեալ եւ ասէ. ոչ այդպէս է, այլ քանի որ ես 'ի յիմ տըտանս վերայ նայիմ եւ դու 'ի վերայ քո որդոյ գերեզմանին, նա թշնամութիւն 'ի մեր միջէն չէ վերանալ. այլ լաւ այն է, որ ես եւ դու 'ի միմեանց հեռանամք. որ այլ մեծագոյն չար չծնանի 'ի մեր մէջն:

Ցուցանէ առակս, թէ հին թշնամին նոր սիրելի չէ լինիր եւ ճար չկայ. որ այլ լինի. ով միտս ունի, իմասցի:

ՃՂԷ. ԱՐԱԳԻԼ ԵՒ ՏԱՏՐԱԿ (77 ag=80 D)

Արագիլն մեծ բռնութեամբ գայ յամուսնութիւն հրամանաւն Աստուծոյ. որ աճէ. քանզի սիրէ. որ

սուրբ մնայ. եւ տատրակն ոչ նստի յոստն կանաչ, եթէ մեռանի ընկեր նորա: Ցուցանէ օրինակս, թէ ով մարդիկ, սիրեցէք զսրբութիւն եւ զողջախոհութիւն. բայց վասն որդէծնութեան մտէք յամուսնութիւն եւ մի՛ վասն աղտեղութեան:

ՃՂԸ. ԱՐԱԳԻԼ ԵՒ ՃԱՅԵԱԿ ԵՒ ՅՈՊՈՊ
(79 ag=81 D)

Արագիլն եւ ճայեկն եւ ոպոպն զծերացեալ հայրն իւրեանց դարմանեն, սնուցանեն եւ ծառայեն. մինչեւ մանկանայ կամ մեռանի: Ցուցանէ օրինակս այս, թէ պարտէ մեծարել եւ դարմանել զծնօղս եւ հնազանդիլ, որպէս եւ Աստուած հրամայեաց՝ պատուեա զհայր քո եւ զմայր. որ զծնօղս անարգէ, զԱստուած անարգէ. եւ զինչ որ 'ի հետ ծնողաց առնեն, հետ Աստուծոյ են արարեալ:

ՃՂԸա. 97 D Վասն ծնօղասիրաց: Ասեն բնախօսքն, թէ արագիլն յորժամ ծերանայ կամ տկարանայ՝ եւ թափին թեւքն, ձագերն դնեն զհայրն եւ զմայրն 'ի բոյնն եւ կերակրեն զնոսա եւ սնուցանեն, որպէս ծնօղ զնոսա, եւ զփոխն հատուցանեն ծնօղաց. եւ ապա բառնան 'ի թեւոց իւրեանց, զի սովորեսցի թռչիլ: Նշանակէ առակս, թէ անբան թռչունք զծնօղաց փոխարէնն հատուցանեն եւ բանական մարդիկքն ծնօղաց բարոյն չար հատուցանեն. յիշոնցեն եւ ոչ հանգուցանեն. նոքա պատուհասն յԱստուծոյ առնուն, վայ է նոցա. եւ թէ զմարմնաւոր ծնօղսն պարտ է սիրել, որչափ եւս առաւել զերկնաւոր Հայրն մեր զԱստուած սիրել պարտ է եւ զպատուիրան նորա պահել. որ ատէ զհայր կամ զմայր, մահու վախճանեսցի. հոգեւոր հայրն Աստուած է եւ մարմնաւոր՝ ծնօղքն. զերկուքն սիրել պարտէ, եւ մահու վաղճանելն դժոխքն է:

ՃՂԹ. ԽՈԶ ԵՒ ԲԶԵԶ ԵՒ ԱՅԼՔՆ (92 ag)

Խոզն եւ բզեզն եւ կան այլ կենդանիք, որք աղբակերք են, եւ հոտ գարշութեան կեանք թուի նոցա: Վա՛յ ինձ. զի ցուցանէ օրինակս, թէ ամենայն մեղաւոր անզեղջ զաղր եւ զշարաւ մեղացն ուտէ եւ պարարտանայ. եւ այն քաղցր է 'ի քիմս նոցա:

Մ. ԱՐԾԱԹԱՍԷՐ ԱՅՐ (113 ag=170 D)

Այր ոմն մեծատուն ունէր բազում կաղապար ոսկի եւ արծաթ եւ տարեալ թաղեաց զինքն 'ի գետին: Եւ ծառայքն տեսին զտեղին, ուր թաղեաց. եւ 'ի գիշերի գաղտ հանին, առին եւ փախեան. եւ իմացեալ այրն, որ չկայր ոսկին եւ արծաթն. եւ սկսաւ լալ՝ փետել զմորուսն եւ վայ տայր անձինն. եւ նեղասրտեցաւ եւ կամէր չուան առնուլ եւ կախիլ: Եւ տեսեալ՝ այր մի իմաստուն ասէ. ընդ է՞ր խեղդիս: Եւ ասէ. ծառայքն իմ զոսկին եւ զարծաթն իմ գողացան եւ փախեան: Եւ ասէ իմաստունն. ո՞ր չափ էր ոսկին. եւ սալի քար կայր. եւ ցուցանէր, թէ այս չափ է՞ր. եւ այն չափ էր: Եւ առեալ իմաստունն զքարն եւ զսալն թաղեաց 'ի տեղւոջն, ուր ոսկին էր. եւ ասէ իմաստունն. ահա ոսկին քո աստ. քանզի անպէտ էր քեզ, իբրեւ զքարս զայս: Եւ բանիւս այսուիկ իմաստունն մխիթարեաց զայրն եւ թափեաց, որ ո՛չ խեղդեցաւ: Ցուցանէ. ամենայն մարդ որ զոսկին եւ զարծաթն սիրէ, նայ զերդ զայն այրն է, որ ո՛չ հոգւոյն եղեւ եւ ոչ մարմնոյն եւ փոխանակ շահոյն կամէր խեղդիլ եւ անձնամահ լինիլ. զարծաթսիրութիւն ասէ՝ արմատ է ամենայն չարեաց:

ՄԱ. ՏԱՍՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՔ (115 ag=173 D)

Եւ ահա ժողովեցան 'ի մի տեղ տասն վաճառականք եւ գնացին ընդ ճանապարհ մի եւ մտին յերկիր մի օտար. եւ յերկիրն այն էր սով եւ իժ եւ օձ եւ նեղութիւն. եւ վաճառականքն տարակուսեցան: Եւ անկաւ յետոյ նոցա հրեղէն պարիսպ. եւ ո՛չ կարէին յետս դառնալ. եւ առեալ նեղ ճանապարհ մի երթային՝ թերեւս գտանիցեն զքաղաք. զի վաճառեսցեն. եւ գնացին ամ մի մեծաւ աշխատանօք եւ ոչ գտին զշէն. եւ լալով եւ ողբալով կոծէին զանձինս իւրեանց: Եւ ահա բուսաւ նոցա թեւ մի արծուոյ. եւ նոքա ջանացին եւ զթեւ մի այլ շինեցին: Եւ հինգն 'ի նոցանէ կորեան եւ հինգն թռեան եւ վերացան. եւ տեսին գաւառ մի լուսեղէն. եւ թագաւոր քաղաքին առաքեաց առ նոսա զօրականս եւ ասէ. բարի եկիք. ահա քաղաքս առաջի ձեր. յոր տեղ կամիք դուք, 'ի հոն հանգիք: Եւ համբուրեաց թագաւորն

զվաճառականսն եւ գովեաց եւ ասէ. վաշ է ձեզ, որ ընդ նեղ ճանապարհն եկիք. Եւ մտեալ 'ի քաղաքն գտին զվաճառականսն, զորս 'ի բազում ժամանակս ցանկային. զի տեսանիցեն. եւ գտին զգանձս եւ զդիպակս եւ զկումաշն, զոր կամէին գնել. եւ ուրախացան մեծաւ ուրախութեամբ: Ցուցանէ. զի տասն վաճառականք Աղամ է եւ իւր ծնունդքն. եւ այն որ օտար երկիր եւ յիժանոց եւ 'ի սով, որ եւ արտաքսեցաք յանմահական դրախտէն եւ անկաք յայս աշխարհս, ուր կայ իժ եւ օձ, որ է սատանայ. եւ 'ի նեղութեան կամք հոգւով եւ մարմնով: Եւ այն որ թեւ արծուի բուսաւ, այն հաւատն է. որ Աստուած յերկնից յերկիր իջաւ եւ հաւատս ետ մարդկան: Եւ այն որ ջանացին եւ թեւ մի եւս ինքեանք շինեցին, այն նոքա են, որք ջանացին եւ բարի գործեցին. մէկ թեւ՝ հաւատքն. մէկ՝ բարեգործութիւնն. եւ այն հինգն որք կորեան, այն նոքա են, որ մեղս գործեցին եւ կորեան 'ի ձեռն սատանայի, որք են դասք ձախակողմանցն, որք կոչին յիմարք կուսանք: Եւ այնք որք թռեան, նոքա են, որք լացին եւ սգացին, զանձինս իւրեանց չարչարեցին վասն արքայութեանն, որք են դասք աջակողմանցն, որք կոչին իմաստունք կուսանք: Եւ այն լուսեղէն գաւառն երկնից արքայութիւնն է, քաղաքն անդրանկաց՝ վերինն Երուսաղէմ: Թագաւորն Աստուած է, եւ զօրականք հրեշտակքն. որ եւ Աստուած բազում հրեշտակս առաքէ, յորժամ մեռանի արդարն. եւ գովեն զարդարսն, որք զերկրաւոր կեանս արհամարհեցին: Եւ համբուրէ Աստուած զարդարսն եւ ասէ. վաշ է ձեզ, որ ընդ նեղ ճանապարհն եկիք, որպէս ինքն ասաց. նեղ է ճանապարհն եւ անձուկ է դուռն, որ տանի 'ի կեանսն յաւիտենից. եւ սակաւք են, որք գտանեն զնա: Նեղ ճանապարհ զչարչարանսն ասէ եւ որ նեղութեանց համբերէ. եւ այն որ գտանէ բեհեզս ծիրանիս եւ զդիպակս եւ զակունս, որ է բարեգործութիւնն, պահքն, սէրն, համբերութիւնն եւ այլ բազում: Եւ այն զի գտին զվաճառականսն, զորս 'ի բազում ժամանակս ցանկային տեսանել. որ եւ արդարքն որ չափ էին յայս կեանքս, նա ցանկային. զի տեսանիցեն զմարգարէսն եւ զառաքեալսն եւ զհայրապետսն եւ զմարտիրոս[ս]ն, որ եւ գտին զարդարսն, զորս ցանկային տեսանել: Տասն վաճառականք զտասն կուսանս ասէ: Եւ այն որ հինգն կորեան, այն զյիմար կուսանսն ասէ. եւ այն որ հինգն ապրեցան եւ թռեան, զիմաստուն կուսանսն ասէ, որք թռեան արդարութեամբ:

ՄԲ. ՔԱՂԱՔ (116 ag)

Կայր քաղաք մի. եւ կայր բազում ճանապարհ, որ երթայր 'ի քաղաքն յայն: Բազում մարդիկ գնացին. եւ մին մարդն արգիլեցաւ եւ զսօլերաց փոկերն կապէր եւ այլ ո՛չ հասաւ. եւ դուռն քաղաքին փակեցաւ՝ եւ ո՛չ կարաց մտանել: Ցուցանէ, թէ փոքր առաքինութիւն է եւ թէ մեծ՝ տանի զմարդն յարքայութիւնն. որպէս զճանապարհն այն, որ զմեծ եւ զփոքրն տանէր 'ի քաղաքն: Եւ որ ընդ աշխարհիս զբաղանսն զբաղի, 'ի մէջ մեղաց շաղախի, նա ոչ կարէ հասանիլ արդարոցն եւ մտանել 'ի քաղաքն անդրանկաց, որպէս այրն այն, որ ընդ սօլերովն եղեւ եւ ոչ էհաս ընկերացն եւ ո՛չ մտաւ 'ի քաղաքն. քանզի փակեցաւ դուռն: Նոյնպէս փակի դուռն ողորմութեան անողորմիցն եւ անդարձ մեղաւորացն յաւուրն դատաստանի, որպէս փակեցաւ յիմար կուսանացն:

ՄԳ. ՄԿՈՒՆՔ ՍՊԱՌԱԶԻՆԵԱԼՔ
(117 ag=175 D)

Մկներն ասացին ընդ իրեարս, թէ այդ է՞ր է, որ մեք ո՛չ սլեի ունիմք եւ ոչ եղջիւր. եւ կատուն զմեզ դիւրաւ կալնու: Եւ մկունքն սրեցին փայտ եւ կապեցին 'ի գլխնին. որ թէ կատուն գայ, նա մեք կռուինք. որ ո՛չ առնու զմեզ. եւ ահա եկն կատուն եւ մկունքն փախեան եւ ընդ ծակն 'ի ներս մտին. եւ այնք որք զփայտն եղջիւր էին կապել, ոչ կարացին մտանել ընդ ծակն. այլ կատուն կալաւ եւ եկէր: Ցուցանէ: Մուկն որ եղջիւր կապեաց, այն մարդիկքն են, որք պճնին եւ ծարուրվին եւ սպիտակացուցանեն զերեսս. եւ ապականին գեղեցիկ եւ այն, զոր Աստուած է ստեղծել, ո՛չ հաւանին. այլ իւրեանքն այլ գեղեցկանան եւ որոգայթին 'ի ձեռն սատանայի. որպէս որոգայթեցաւ մուկն 'ի ձեռն կատուին:

ՄԴ. ԱՒԶ ԵՒ ԾԱԿ (118 ag)

Օձն յորժամ ելանէ 'ի ծակէն եւ երթայ, ընդ որ եւ կամի, նայ հինգ ծուռ առնու՝ հինգ տեղ ծռի ինքն եւ ապա կարէ գնալ: Եւ յորժամ գայ 'ի ծակի դուռն, ըղորդի եւ ապա կարէ մտանել 'ի ծակն՝ յիւր հանգստարանն: Ցուցանէ, որ մարդն հինգ զգայարանս ունի՝ աչքն, ականջն, բերանն, ձեռքն, ոտքն. նայ

մարդ յորժամ գնայ 'ի մեղս, զհինգ զգայարանսն ծռէ՝ աչօքն չար հայի, ականջօքն չար լսէ, բերանովն չար խօսի, ձեռօքն անօրենութիւն գործէ, ոտօքն 'ի չար ճանապարհ գնայ: Եւ յորժամ մարդն գայ եկեղեցւոյ դուռն յաղօթել, նա պարտէ զհինգ զգայարանսն ղողորդել եւ 'ի չարէն կտրիլ եւ ապա յեկեղեցին մտանել եւ աղօթել, որ է մայր մեր եւ հանգստարան, եւ ապա Աստուծոյ ընդունելի լինի աղօթքն: Որպէս օձն այն թէ չողորդէ զհինգ ծուռն, նա ոչ կարէ մտանել 'ի ծակն եւ 'ի հանգստարանն, նոյնպէս մարդն թէ ոչ կտրէ զհինգ զգայարանսն 'ի չար սովորութենէն, նա ո՛չ մտանէ յարքայութիւնն Աստուծոյ: Չէ պարտ մարդոյն այնմիկ՝ որ յեկեղեցի Աստուծոյ մտանէ:

ՄԵ. ԱՒԶ ԵՒ ՀՈՏԱՒԷՏ ԾԱՂԻԿ
(119 ag=176 D)

Օձն երթայ 'ի դուր դաշտ եւ 'ի կանաչ եւ 'ի ծաղկանց մէջ եւ կանգնի 'ի վերայ տըտանն եւ իմանայ, թէ հովն յոր դիհաց գայ, եւ դէմ հովոյն կանգնի. եւ հովն զծաղկանց հոտն ընդ ինքն զարկնէ. եւ պարարտանայ 'ի հոտոյն: Եւ ծաղիկ մի կայ՝ յորժամ այն ծաղկին հոտն ընդ ինքն դիպի, նայ լուսատու մարգարիտ մի 'ի գլուխն յօրինի. եւ գիշերն ընդ որ երթայ օձն, այն լոյս է իւրն եւ լուսաւորէ մարգարիտն զօձն. եւ ցերեկն մութն: Ցուցանէ, թէ դաշտ կանաչ՝ եկեղեցի Աստուծոյ է եւ ծաղիկն պատուիրանն Աստուծոյ է, առաքելական եւ մարգարէականն: Եւ այն մեծ ծաղիկն, որ գեղեցիկ է եւ զլուսատու մարգարիտ շնորհէ, այն աւետարանն Քրիստոսի է եւ հովն Հոգին սուրբ: Եթէ ոք իմաստութեամբ երթայ յեկեղեցի Աստուծոյ եւ հաւատով մտիկ դնէ Աստուծոյ բանիցն, նայ Հոգին սուրբ անուշահոտութեամբ արբուցանէ զլսօղս: Եւ եթէ զաւետարանական բանն, հաւատով եւ սրտի մտօք առնու 'ի միտ, նա լուսատու մարգարիտ լինի անգին եւ զհոգւոյն խաւարն, որ է մեղքն, հալածէ եւ զաշխարհիս կեանքն, որ է սուտ լոյս, մութն երեւեցուցանէ:

ՄԶ. ԳՈՂ ԵՒ ՁՄԵՐՈՒԿ (120 ag=177 D)

Գող մի ձմերուկ մի գողացաւ 'ի պարտիզէն եւ կամէր կտրել: Խօսեցաւ ձմերուկն եւ ասէ. մի կտրեր զիս. զի 'ի միջի իմ Խարասցի էշ կայ՝ կաց, մինչ որ ածեմ, եւ ապա կտրէ: Եւ հաւատաց այրն՝ եւ տարեալ 'ի տունն եդ 'ի պատուհանն. եւ եկաց անդ, մինչեւ պատլեցաւ եւ պթխեցաւ եւ ելաւ նեխութիւն արտաքս. եւ ազատեցաւ 'ի գերութենէ: Ցուցանէ: Յորժամ մարդն ընկնի, պարտէ ասել զինքն՝ թագաւորի որդի եմ կամ մեծատան. որ չսպանանեն, այլ պահեն. միթէ զան զանձ տան եւ գնեն: Եւ ծառայն կամ մահով խալսի կամ փախչի եւ ազատի: ՄԷ. ՆՈՆԵՆԻ ԵՒ ՁԻԹԵՆԻ (138 ag=91 B)Նոնենին ասէր ընդ ձիթենին, թէ ես կարմիր նուռն ունիմ եւ աղէկ եմ քան զքեզ. եւ ձիթենին ասէր ընդ նոնենին, թէ ես պտղատու եմ եւ ձէթ շնորհեմ լուսատու մարդկան: Ցուցանէ նոնենին զթագաւորն եւ ձիթենին զքահանայն. քանզի թէպէտ եւ գեղեցիկ է թագաւորն, այլ ո՛չ աժէ 'ի քահանայն. քահանայն աժէ 'ի թագաւորն. զի քահանայն հալածիչ է խաւարի, որ հալածէ զխաւարն 'ի հոգւոց մարդկան:

ՄԸ. ՁՈՒԿՆ (139 ag)

Ձուկն յորժամ 'ի ջրոյն 'ի դուրս ելանէ, նա մեռանի: Ցուցանէ, թէ մարդն որ 'ի պատուիրանացն Աստուծոյ 'ի դուրս ելանէ, նա մեռանի հոգին. եւ յետ մահուն հոգին եւ մարմինն տանջի:

ՄԹ. ՁՈՒԿՆ ԵՒ ԿԱՐԹ (140 ag)

Ձուկն յորժամ 'ի կեռն գայ եւ առնու, նա մեռանի 'ի ձեռն կարթին: Ցուցանէ: Յորժամ մարդն 'ի մեղքն երթայ եւ գործէ, նա մեռանի 'ի ձեռն սատանայի, որպէս մեռանի ձուկն 'ի ձեռն կարթին:

ՄԺ. ԿՏԱԿ ՎԱՍՆ ԳԱՆՁԻ
(141 ag=2 A=108 B=2 D=4 G)

Իմաստասէր ոմն աղքատ ունէր ծոյլ որդիս. եւ 'ի ժամ մահուն կոչեաց զորդիսն եւ ասէ. ով որդեակք, բազում գանձ կայ պահեալ 'ի հարցն իմոց յայգին մեր. իսկ զտեղին ո՛չ ցուցանեմ ձեզ. այլ որ աշխատի եւ խորագոյն փորէ, նա՛ գտանէ զգանձն: Եւ յետ մահուան հօրն, սկսան որդիքն ջանալ մեծաւ աշխատութեամբ 'ի խորագոյն վարէին. եւ ամէն մէկ իւրն ջանայր. զի ինքն գտցէ զգանձն: Եւ սկսաւ

այգին աճիլ եւ զօրանալ եւ ետ բազում պտուղ եւ ելից զնոսա գանձիւ: Ցուցանէ առակս, թէ մեծ բարի է աշխատանքն եւ շատ օգուտ է՛ յայս կեանքս եւ յայն: Իսկ յոյլքն ո՛չ աստ բարի ապրին եւ ո՛չ անդ վայելեն, որպէս ասէ գիրն. յուլից եւ ծուլից փակեալ է դուռն արքայութեան: ՄԺԱ. ԱՅՐ ԵՒ ԳԱՅԼ (142 ag=4 D)Ասի յառակաց, թէ այր մի զգայլն բռնեալ էր. եւ զոտներն կապեալ եւ 'ի վերայ իշուն բարձեալ տանէր 'ի տուն. եւ մարդիկք 'ի դէմ դիպեալ ասեն, թէ այդ ի՞նչ է, որ իշոյդ ես բարձեալ: Ասէ այրն, թէ կու տանիմ 'ի տուն՝ որ կթեն եւ իմ տղայոցն բերանն թանայ: Յայնժամ ասեն արքն. ո՛վ տխմար, դա զամէն աշխարհիս կթան է հատուցեալ. զայդ կթան կու տանիս:

ՄԺԲ. ԳԱՅԼ ԵՒ ՈՉԽԱՐՔ
(143 ag=6 D)

Ասի յառակաց, թէ գայլ մի ելանէր 'ի վերայ լերին. ետես 'ի ստորոտ լերինն գեհ մի ոչխարաց. եւ ասաց. խաղաղութիւն ընդ ձեզ: Իսկ ծերագոյն խոյ մի յոչխարացն ասէ ցընկերսն, թէպէտ խաղաղութիւնս աւետարանեն, ապա դուք ամէն մէկ ձեզ ճար արարէք:

ՄԺԳ. ԻՇԱՏԷՐ ԵՒ ԳԱՅԼ
(144 ag=8 D)

Ասի յառակաց, թէ այր մի՛ զէշ իւր կորուսեալ էր եւ խիստ աղէտալի 'ի շուրջ գայր եւ խնդրէր: Եւ տեսեալ գայլուն ասէ. այր դու, զի՞նչ խնդրես: Ասէ այրն. ո՞վ գայլ, զիմ իշուկս կորուսեալ եմ եւ չեմ գտնուլ: Ասէ գայլն. ո՛վ այր, զքո էշն ես գտի: Ասէ այրն. բեր զէշն՝ որ տամ զքո գտնելէն: Ասէ գայլն. ով այր դու, զքո էշն՝ 'ի չամուռն էր անկեր եւ՝ ես երեք օր 'ի հետն եմ դատել. եւ ապա կարացի 'ի դուրս քարշել. եւ 'ի վարձին տեղն զէշն կերի. գիտէի, որ աղքատ մարդ էիր եւ ինձ վարձ չկարէիր տալ:

ՄԺԴ. ԱՅՐԻ ԵՒ ՈՐԴԻՆ
(145 ag=124 B=9 D)

Ասի յառակաց, թէ այրի ոմն ունէր տասն այծ եւ ունէր որդեակ մի. եւ որդին այն յամէն օր տանէր արածէր զայծերն. եւ մայրն յամէն օր շերեփ մի ջուր լնոյր 'ի կաթն եւ 'ի խափ տայր. եւ ասէ որդին ցմայրն իւր. թէ է՞ր առնես զայդ վնասդ, որ զջուրն 'ի կաթն լնուս եւ 'ի խափ տաս: Ասէ մայրն. որդի, մեր կաթնս քիչ է՝ այնոր համար առնեմ, թէ քիչ մի աւելի լինի մեր կաթն. որ մեզ ձմռանս թացան լինի: Իսկ յաւուր միում, մինչ դեռ արածէր մանուկն զայծիսն, փոքր մի ամպ ծնաւ յերկինքն եւ եկն անձրեւ. եւ ել հեղեղ եւ տարեալ զայծիսն ելից 'ի գետն: Իսկ մանուկն եկն յարեւու առ մայրն դատարկութեամբ եւ միայն փայտն 'ի ձեռին: Ասէ մայրն. որդի, ո՞ւր են այծքն եւ զի՞ արդ յարեւու եկիր այսօր: Ասէ որդին. մայրիկ իմ, այն շերեփ ջուրն, զոր 'ի կաթն խառնէիր եւ 'ի խապ տայիր, նա ժողովեցաւ եւ հեղեղ դարձաւ եւ եկեալ զմեր այծերն տարաւ 'ի գետն ելից: Ցուցանէ առակս, թէ Աստուծոյ դատաստանն արդար է, որ թէպէտ զկատարեալ հատուցումն զրկողացն 'ի հանդերձեալն պիտի առնէ, նա զչաշնին 'ի յայս կեանքս կու հատուցանէ: Զոր տեսեալ մարդկան հաւատան, թէ գոյ հատուցումն 'ի հանդերձեալ դատաստանին եւ առցէ իւրաքանչիւր ոք ըստ գործոց իւրոց:

ՄԺԵ. ԲԱՂԴԱԴԻ ՀԻՒՍ ԵՒ ԹԱԳԱՒՈՐ
(146 ag=126 B=11 D)

Ասի յառակաց, թէ 'ի Բաղդատ քաղաքն հիւս մի ճարտար արուեստիւ երեք ամ աշխատեալ եւ 'ի յամբրաւի կտէն սեղան մի յիրեար ձգեաց զանազան յօրինուածովք, որ ո՛չ էր տեսեալ ակն մարդոյ այնպիսի ինչ: Եւ տարեալ թագաւորի քաղաքին այնորիկ՝ կարծէր, թէ քաղաք կամ գիւղ կամ այլ ինչ պարգեւս տացէ նմա: Իսկ նորա տեսեալ զարմացաւ եւ ուրախացեալ ետ նմա հազար սպիտակս. եւ նորա առեալ զսպիտակն եւ ելեալ արտաքոյ դրանն նստաւ տրտում եւ կամէր 'ի յետ առ թագաւորն

յուղարկել. եւ մինչ դեռ տրտում նստեալ էր 'ի դրանն, եկն այր մի եւ ունէր 'ի ձեռին իւրում սալայով մի վարդ եւ տեսեալ զհիւսն տրտում՝ էհարց, թէ այրն դու, ընդ է՞ր ես տրտում եւ զի՞նչ պատճառն քո: Յայնժամ ասաց, թէ երեք տարի է, որ 'ի յամբրաւի կտէն չարչարանօք զսեղան մի շինեցի, որ 'ի հազար հիւսէն մէկն չկարէ շինել այնպէս. եւ բերի թագաւորին, թէ ինձ գիւղ կամ քաղաք մի տայ. նա զայս հազար դրամս ետ կուզեմ. որ յետ ուղարկեմ: Եւ այրն, որ զսալայովն վարդ ունէր, ասէ ցհիւսն. դու ըղորդ ես. այս թագաւորս զփէշաքարի հարկիսն չգիտէ: Ես այլ փէշաքար եմ. եւ այս չափ տարի է, յայս դուռնս կու գամ. նա ինձ իրք մի չէ տուեալ: Եւ ասէ հիւսն ցվարդաբերն. դու ի՞նչ արուեստ գիտես. եւ նա ասէ, թէ զայս սալայս ես կու զուգեմ: Իսկ հիւսանն հանեալ զուրագն 'ի գօտւոյն՝ եդ 'ի վերայ միոյ դիհաց մուրուացն սալազուգին, սրբեաց մինչեւ 'ի վայր որպէս մաքրչով. եւ նորա մտեալ առ թագաւորն այնպէս խախք դիմօք՝ տարաւ զվարդն: Ասէ թագաւորն. ով այր դու, ընդ է՞ր այդպէս խայտառակ երեսօք եկեալ ես առ իս. եւ նա ասէ. ով թագաւոր, այր մի 'ի դրունս տեսի տրտում նստեալ եւ հարցի, թէ վասն է՞ր ես տրտում. նա ասաց, թէ երեք տարի է, որ աշխատանօք 'ի յամբրաւի կտէն սեղան մի շինեցի եւ բերի թագաւորին, թէ ինձ գիւղ կամ քաղաք տայ. նա զայս հազար սպիտակս ետ. այնոր համար եմ վիրաւոր եւ կուզեմ. որ յետ ուղարկեմ: Ես ասացի, թէ ես այլ փէշաքար եմ թագաւորին. եւ թագաւորն ոչ ինչ փէշաքարի հարկիք չգիտէ. եւ էհարց, թէ զի՞նչ փէշայ գիտես. ասացի, թէ սալա եւ քթոց կու զուգեմ, նա զուրագն քաշեաց 'ի գօտւոյն, զմէկ դեհի մօրուսս այսպէս 'ի վայր էհատ: Եւ առժամայն կոչեաց զհիւսն եւ ասէ. արդարեւ դո՞ւ արարեր ուրագով զայս մարդոյ մորուսն. եւ նա ասէ. այո. եւ ասէ թագաւորն, թէ երդուիր 'ի գլխուս իմ, որ զմիւս դեհի մուրուացն այլ ածցես նոյնպէս ուրագովն. որ ես տեսանէմ. եւ եդեալ հիւսանն զուրագն 'ի վերայ միւս դեհի երեսացն էած, սրբեաց նոյնպէս: Ասէ թագաւորն, թէ նստեալ գրեցէք զգիւղն, յորում ինքնդ կայ, ինքեանն մուլք յազգաց յազգս. այնպէս արարեալ էառ զգիրն եւ դարձաւ 'ի տունն իւր: Ցուցանէ առակս, թէ որպէս աստեղք զարեգականն գեղեցկութիւն փառաւոր ցուցանեն, այսպէս եւ փանաքի արուեստք զապականութիւն մեծամեծ արուեստացն յայտնի առնեն զարուեստս իւրեանց:

ՄԺԶ. ԱՅԾ ԵՒ ԳԱՅԼ (147 ag=12 D)

Ասի յառակաց, թէ այծ մի 'ի վերայ բարձր պատին կայր նստած. եւ գայլ մի եկն նստաւ յատակս պատին. հայեցեալ ընդ նա՝ այծն ասէ. սիրտ կուզէ. որ իջնում 'ի վայր եւ եղջերովս զայն գայլին փորն պատառեմ: Յայնժամ ասէ գայլն. երանի էր իմ աչացս, որ տեսանէի, թէ այծն գայր եղջերովն՝ զիմ փորն պատառէր: Ցուցանէ առակս. թէ անիմաստ մարդն տեսանէ զինքն, կարծէ յաղթող գոլ մեծամեծաց՝ յաղթեալ 'ի ձեռս նոցա անկանի, յայնժամ երեւի տկարութիւն նորա:

ՄԺԷ. ԵՐԵՔ ԵՐԵՍԻ ՋՈՒՐ
(148 ag=128 B=14 D)

Ասի յառակաց, թէ կինմարդոյն երեք երեսի ջուր կայ. մէկ՝ կուսութեան քօղն, որ յառաջ քան զամուսնանալն 'ի մօրէն ունի եւ 'ի ժամանակ ամուսնութեանն քակի. զի յետ այնորիկ ո՛չ ասի աղջիկ՝ որ է կուսան, որ է հատեալ: Երկու երեսի ջուր կնոջն, որ մինչ դեռ զաւակ չէ ծնեալ. եւ յորժամ ծնանի զառաջին զաւակն, լուծանի կապ ծննդականութեան. եւ արձակեալ յառաջ բերէ զմանուկն. որով յայտնի հրապարակաւ 'ի լուր ամենեցուն, թէ այս անուն նորահարսն զաւակ ծնաւ: Եւ նա այնուհետեւ առանց ամօթոյ առեալ զմանուկն 'ի գիրկ եւ ելեալ նստի հրապարակս եւ բացեալ զսիրտն եւ զստինսն ջամբէ մանկանն եւ ո՛չ ամաչի: Երեք երեսի ջուր է կնոջն, քանի է առաջին մարդոյն 'ի ձեռն պսակին կապեալ. եւ յորժամ հանդիպի, զի ելցէ յառաջին յառնէն եւ լինի առն այլում, յայնժամ երեք կերպ երեսի ջուրն, որ է ամօթն, բարձաւ յայնպիսի կնոջէն: Եւ յայնմհետէ, զի այլ ո՛չ ունի երեսի ջուր, ո՛չ ամաչի յումեքէ. այլ զոր ինչ կամի եւ կարէ, անարգելաբար գործէ. վասն որոյ 'ի շունն կայ արգելք կամ ամօթ եւ յայնպիսի կինն ո՛չ: Ցուցանէ առակս, թէ բանականութեան արգելք 'ի մեղաց՝ ամօթն եւ երկիւղն է ըստ այնմ, թէ երկիւղիւ տեառն խորշի ամենայն ոք:

ՄԺԸ. ԱՅՐ ԵՒ ՀԱՐԻՒՐ ՄՈԹ ՀԱՅ

(149 ag=16 A=118 B=19 D)

Ասի յառակաց, թէ այր մի յամէն տարի հարիւր մոթ հաց վաստակէր եւ այնու զտուն իւր կառավարէր: Եւ 'ի միում տարւոջ 'ի հարիւրէն քսան պակաս հաց եղեւ. նա անդադար հոգայր եւ կոծեր զինքն, թէ այսչափ հացովս 'ի նորն զիա՞րդ կարեմք ելանել: Իսկ Աստուած յանդիմանել կամեցաւ զնա. առաքեաց զիրեշտակ իւր եւ ասաց նմա, թէ արի, երկու մոթ հաց բարձիր եւ տար կնոջ մի այրւոյ, որ ունի դուստր մի միամօր: Եւ նա բարձեալ գրաստուն՝ տարաւ առ այրի կինն, թէ զհացս զայս Աստուած առաքեաց քեզ: Եւ ասէ պառաւ կինն ցդուստր իւր. արի, որդեակ, առ զհացն, զոր տէր առաքեաց մեզ: Իսկ աղջիկն ասէ ցմայրն. ճաշոյ հաց կերեալ եմք եւ երկու բլիթ այլ կայ 'ի սապատն, որ երիկունն ուտեմք. եւ վաղուեան տէրն եւ պատրաստօղն Աստուած է. եւ ասացին մայրն եւ դուստրն ցայրն, որ զհացն էր բերեալ, թէ որդի, տար զհացդ քո այլ ումեմն աղքատի, որ զաւուրս կերակուրն չունի. այդ աւելորդ է մեզ. եւ այրն զարմացաւ ընդ մեծահաւատութիւն կանանցն այնոցիկ. ինքն յամօթ եղեւ, որ զութսուն մոթ հացն ունէր, հոգայր եւ ցաւէր, թէ 'ի նորն զիա՞րդ կարեմք ելանել: Ցուցանէ առակս, թէ որք բազում ունին եւ միշտ հոգան, թէ զիա՞րդ պիտի ապրիմք, յանդիմանին յայնցանէ, որք զաւուր կերակուրն մուրանալով գտանեն եւ միշտ գոհանան զԱստուծոյ եւ ոչ յուսահատին:

ՄԺԸԱ. 32 F Տանուտէր մի յամէն տարի .Ճ.Ծ. մոթ հաց կու լինէր եւ մէկ տարին. Ծ. եղաւ եւ խիստ տարակուսեցաւ, թէ 'ի նորն ո՞նց պիտի հասանինք. եւ էկեալ հրեշտակն ասաց. թէ կու հրամայէ Աստուած, թէ բարցիր շինիկ մի հաց եւ տար՝ 'ի յայս անուն քաղաք պառաւ մի կայ խիստ աղքատուկ. եւ կրկին վիրաւորեցաւ եւ առեալ տարաւ եւ գտաւ զպառաւն եւ ասաց, թէ Աստուած քեզ հաց է ղրկել. արի թափէ զբեռս. որ երթամ. եւ ասաց պառաւն 'ի դուստրն, թէ տես, թէ հաց կա՞յ 'ի տաշտն թէ ոչ. եւ տեսեալ ասաց, թէ աւուրս կայ եւ վաղիւն տէրն Աստուած է 'ի յամօթ այնոցիկ, որ յԱստուած չյուսայ:

ՄԺԹ. ՔԱՀԱՆԱՅ ԵՒ ՄՍԱԳՈՐԾ
(150 ag=17 A=119 B=20 D)

Ասի յառակաց, թէ աղքատ էրէց մի գնայ մօտ մսագործն, թէ ինձ սակաւ մի միս տուր՝ որ իմ տղայոցն տանիմ. որ եփեն եւ ուտեն: Իսկ մսագործն ընդ կատակս համարեալ, ետ նմա լիտր մի միս եւ ասաց, թէ իմ հօրն պատարագ արա: Եւ երիցուն ընդ արդարս համարեալ եհարց զնա, թէ քոյ հօր անունն ի՞նչ է եւ մսագործն ասաց, թէ իմ հօր անունն մկսար է, զոր ոմանք սատուրի կոճ ասեն. եւ երթեալ երիցուն 'ի տուն իւր եւ տարաւ զմիսն տղայոցն. եւ գնացեալ շինեաց զպատարագն եւ յիշեաց զմկսարն յանուանէ 'ի պատարագն եւ 'ի յազդմանէն Աստուծոյ մսագործի կոճն արմատացաւ եւ ամենայն առաստաղն խանութին պատառեալ բարձրացաւ: Իսկ խանութապանն զարհուրեալ գնաց անկաւ յոտս քահանային, թէ զո՞վ յիշեցեր 'ի պատարագն. եւ նա ասէ. զմկսար անունն, զոր դու ասացիր, թէ իմ հօր անունն մկսար է: Իսկ նորա զայս տեսեալ աղաչեաց կրկին պատարագել եւ իսկապէս զհայրն իւր յիշել: Ցուցանէ առակս, թէ մի խաբիք. զի զօրութիւնն Աստուծոյ ոչ արհամարհի եւ ո՛չ տկարանայ, այլ յամենայնի զօրաւոր եւ սքանչելագործ է Աստուած:

ՄԻ. ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ ԵՒ ԱՒՏԱՐՈՏԻ ՔԱՂԱՔ
(151 ag=7 A=120 B)

Ասի յառակաց, թէ արք երկու ընկերացեալք միմեանց եւ աղքատակերպ 'ի շուրջ գային 'ի վերայ երկրի եւ զայն ստացեալ գործ իւրեանց. եւ յաւուր միում եկին 'ի քաղաք մի. եւ կամէին մտանել 'ի նայ: Եւ եկեալ 'ի մին դուռն տեսին, զի գլուխ մարդոյ կախեալ կայր ընդ դուռն 'ի վայր. եւ ո՛չ կամեցան մտանել: Ասացին, թէ գնամք՝ ընդ միւս դուռն մտանեմք, որ գլուխ չէ կախած. եւ այնպէս զամենայն դրունս քաղաքին 'ի շուրջ եկեալ ո՛չ գտին զդուռն, որ ոչ կայր մարդոյ գլուխ կախած. եւ նաչարեալ մտին ընդ մին դուռն 'ի ներս քաղաքին: Եւ հարցեալ ընդ դռնապանն, թէ ի՞նչ պատճառ է, որ ձեր քաղաքիս յամէն դրունս մարդոյ գլուխ է կախած. եւ նոքա ասեն, թէ այդ գլխնիդ ամէնն՝ օտար եւ դարիպ մարդկաց է. եւ մինչ դեռ նոքա զպատճառն հարցանէին, էհաս հրաւիրակ 'ի թագաւորէն, որք զդարիպ մարդիկսն կոչէին.

զայն երկու մարդն այլ տարան, թէ թագաւորն կու կոչէ: Եւ յորժամ գնացին, թագաւորն մեծարեաց զնոսա եւ եդ առաջի նոցա սեղան ամենալից եւ պատուեաց զնոսա անուշահամ գինւով: Եւ եղեւ կարիս միոյն 'ի նոցանէ եւ ել արտաքս վասն կարեաց. յայնժամ ասէ թագաւորն ցայն, որ 'ի տանն էր մօտ յինքն, թէ ափսոս չէ՞, որ քո պիսի հարկեւոր մարդն հետ այնպիսի անբախտ մարդոյն շրջի եւ զքո լաւ անունդ վասն դորա վատ անուն առնել: Յայնժամ ասէ այրն. ոչ այդպէս է, որ բարի թագաւոր, այլ այն ընկերն իմ այնպիսի թագաւորի որդի է, որ ձեզ վայելէ նորա հօր փառքն եւ թագաւորութիւնն. եւ վասն Աստուծոյ սիրոյն այն ամէնին թարկն տուեալ է եւ աղքատի կերպ 'ի շուրջ կու գայ. եւ առժամայն եկն 'ի տունն այրն, որ 'ի դուրս էր: Եւ ժամ մի կացին. ել եւ միւսն 'ի դուրս 'ի պատճառս կարեաց: Եւ դարձեալ ասէ թագաւորն ցայն, որ 'ի մօտ էր, թէ կու թուի ինձ, որ հարկեւոր մարդոյ որդի ես եւ թագաւորի զարմէ ես. ի՞նչ պատեհ է, որ այդ ճմրի մարդդ հետ քեզ 'ի շուրջ գայ եւ զքո հարկեւոր անունդ աւերէ: Իսկ նա ասէ ցթագաւորն. գիտեա, զի թէ թագաւորի որդի եմ եւ թէ իշխանի եւ կամ զինչ եւ իցէ մարդոյ, իմ հօր տունն դորա հօր թափովն է շէն կացէր. եւ յԱստուծոյ 'ի վայր մեզ երախտաւոր դոցա ազգն է: Իսկ թագաւորն առժամայն ետ նոցա երկոցունցն մէկ ձի սարօքն հեծնելոյ եւ մէկ քօթալ եւ մէկ ծառայ եւ շատ արծաթ եւ ոսկի եւ ո՛չ սպան զնոսա, այլ խաղաղութեամբ ուղեւորեաց, որք գնացին զճանապարհն իւրեանց: Եւ իբրեւ հարցին ցթագաւորն, թէ ընդ է՞ր զայլ դարիպսն սպանանէիր, ասէ. վասն զի այլ դարիպ մարդ չգտայ, որ միմեանց լաւ էին ասացեալ. վասն այն սպանանէի զնոսա. եւ սոքա որ միմեանց լաւ ասացին, խլաթեցի եւ հարկեւոր ուղղոյ դրի: Ցուցանէ առակս, թէ որք զընկերս իւրեանց առաջի օտարաց չարաբանեն, ինքեանք ընդ նմին պարսաւին եւ 'ի պատուոյ եւ 'ի գլխոյն եւս ելանեն ըստ այնմ, թէ որ արհամարհէ զիւրեօք, արհամարհի եւ ինքն 'ի նմանէ. եւ որ զընկերն առաջի օտարաց բարեբանէ, ինքն գտանէ զշահն եւ զօգտութիւն եւ ապա ընկերն: ՄԻԱ. 49 F Բ. մարդ զաշխարհս 'ի շուրջ էկին եւ հանդիպեցան 'ի քաղաք մի, որ յամէն դուռն մարդ[ոյ] գլուխ էր կախած. եւ հարցին զպատճառն եւ ասցին, թէ զին[չ] աւտար մարդ 'ի յայս քաղաքս կու մտ[ն]է, զամէնն թագաւոր կու սպանանէ. եւ տարայկուսեալ մտին 'ի քաղաքն. եւ իմացեալ թագաւորն տարաւ 'ի մօտն եւ հարբեցուց. եւ մէկ ընկերն ելաւ 'ի դուրս. եւ չարայբանեց թագաւոր, թէ քեզ վատ կու ասէ քո ընկերն. եւ նայ զոհացաւ. եւ երփ մէկ այն ելաւ, նոյնպէս եւ զնայ չարայբանեց. եւ նայ եւս զոհացաւ: Եւ թագաւոր զերկուսն ղալաթեց եւ էթող: Նոյնպէս պատուելու է այն մարդն, որ զընկերն գովէ:

ՄԻԱ. ՊԱՐՏԱԿԱՆ ԱՅՐ
(152 ag=121 B=21 D)

Ասի յառակաց, թէ այր մի խիստ պարտական էր եւ ո՛չ ինչ ճար չունէր ազատելոյ եւ խիստ հոգայր եւ նեղիւր 'ի պարտատիրացն. եւ յաւուր միում ասէ մի ոմն 'ի պարտատիրացն ցնա. ես քեզ խրատ մի տամ. որ յամենեցուն պարտուցն ազատիս. ապա զիմ պարտքն վճարէ. ասէ ցնա պարտականն, թէ թող Աստուած վկայ լինի, որ զքոյն վճարեմ. լուկ ճար մի արա. որ զայլոց պարտսն վճարեմ. ասէ խրատատուն, թէ ով որ գայ 'ի քէն պարտք ուզէ, դու ասա, թէ խամ, եւ այլ ո՛չ ինչ մի ասեր: Յայնժամ պիտի առնուն զքեզ, դատաւորի մօտն տանին. դու առաջի դատաւորին այլ ոչ ինչ մի ասեր՝ բայց միայն ասա, թէ խամ: Իսկ դատաւորն պիտի ասէ, թէ այդ մարդդ խեւ է եւ յիմար. յո՞ւմմէ կուզէք զպարտսն. թողէք՝ որ գնայ յիւր բանն. եւ այնպէս պարտականն ազատեցաւ 'ի պարտուցն: Եւ եկեալ խրատատու պարտատէրն ասէ ցպարտականն. այժմ որ ազատեցար իմ խրատովն, բեր զիմ պարտսն տուր. նա նմանապէս եւ նմա ասաց՝ խամ: Իսկ նորա առեալ զնա գնաց առ դատաւոր քաղաքին. եւ սկսաւ դատաւորն հարցանել զնա, թէ այդ մարդ ասէ, թէ յիսուն կտոր լուացած հաճաղ պարտի ինձ տալ. զի՞նչ ասես, պարտիս թէ ո՛չ. եւ նա սկսաւ ըստ առաջնոյ պատասխանւոյն եւ ասաց, թէ խամ: Յայնժամ ասէ պարտատէրն ցնա. թէ լուացած չկայ, թող խամ լինի ընդ քո բանիդ. եւ այնպիսի ճարտարութեամբ էառ 'ի նմանէ զպարտսն: Ցուցանէ, թէ անիրաւութիւն առնելն ո՛չ միայն 'ի հանդերձեալ դատաստանին պիտի խայտառակի. եւ ուրացութիւնն 'ի վերայ հոգւոյն պարտք մնայ եւ ամօթն, զոր մարդկան առաջի կրէ:

ՄԻԲ. ՓՈԽ ՏԱԼ ԱՌԱՆՑ ՎԿԱՅԻ

(153 ag=122 B=22 D)

Ասի յառակաց, թէ երկու արք միմեանց յոյժ բարեկամք գնացեալ 'ի ճանապարհորդութիւն, եւ մինն զենեալ 'ի վաճառն եւ միւսն շահեալ փարթամ, դարձան եւ գային 'ի տունս իւրեանց եւ եկեալ մօտացան 'ի քաղաքն. ասէ աղքատ ընկերն ցհարուստն, թէ եղբայր, շատ բարութիւնս եւ սէր գիտեմ 'ի քէն, նա ամենեցուն գլուխն այս է, զոր խնդրեմ 'ի քէն, եւ 'ի վեր է քան զամէնն. պիտիր, որ ինձ եղբայրութիւն առնես՝ հազար սպիտակ փոխ տաս ինձ. որ այս տարի զիմ տանն եւ զիմ տղայոց պէտքն լնում. եւ յայլ տարի յայս օրս զքո դրամն վճարեմ. այնպէս հաշուեաց, թէ զիմ տղայսն 'ի գերութենէ գնես քո հոգւոյդ համար: Իսկ նորա լուեալ զայս՝ պարզմտութեամբ ետ հազար դրամն խղճալով աղքատութեան նորա. եւ ելեալ 'ի տեղւոջէն գնացին 'ի տունս իւրեանց: Եւ իբրեւ լցաւ տարէգլուխն, երթեալ տուօղ դրամին առ պարտականն եւ ասէ. տարի մի բոլոր եղեւ, հիմայ զիմ դրամն տուր՝ որ իմ տանն եւ իմ տղայոցն 'ի պէտք անցուցանեմ: Իսկ նորա պատասխանի տուեալ ասէ. ես քեզ դրամ չպարտիմ. եւ յորժամ բռնադատեաց, ասէ ցնա. եկ՝ որ երթամք 'ի դատաստան առ դատաւորն: Եւ յորժամ եկին, ասէ դատաւորն ցերկուսն. դրամն առեա՞լ ես թէ ո՛չ. եւ ցոմն, թէ վկայ եւ գիր ունի՞ս: Եւ իբրեւ գիտաց, թէ ոչ գիր կայ եւ ոչ վկայ 'ի մէջն, ասէ ցայրն, որ զդրամն էր տուեալ, թէ յայն տեղն, ուր ետուր զդրամն 'ի դայ, մարդ կա՞յր 'ի մօտն, գրաստ կա՞յր, ձի կա՞յր. ասէ տուօղ դրամին, թէ ո՛չ ինչ չկայր 'ի մօտ մեզ. 'ի վեր Աստուած էր եւ 'ի վայր մեք երկուքս: Սա ողոքելով խնդրեաց, եւ ես խղճացի եւ ետու. այժմ ուրանայ: Ասէ դատաւորն. 'ի յայն տեղն ծառ կա՞յր, թուփ կա՞յր, քար կա՞յր. ի՞նչ տեղ էր այն տեղն: Ասէ դրամի տէրն. ո՛չ ծառ կայր եւ ոչ թուփ. լոկ քարատակ մի է. նստաք անդ, համարեցի եւ ետու յինքն. եւ ելեալ եկաք 'ի միասին 'ի քաղաքն՝ դա յիւր տունն եւ ես յիմ տունն: Ասէ դատաւորն ցդրամին տէրն. կարե՞ս զքարն զայն բերել եւ կամ կոտրել 'ի յայն քարէն եւ նշան բերել: Իսկ նորա 'ի դուրս վազեալ 'ի դրամին կսկծոյն, թէ գնամ զայն քարն լծօք բերեմ կամ կոտրեմ եւ նշան բերեմ: Եւ յորժամ գնաց նա, ասէ դատաւորն ցմիւսն, որ 'ի մօտն մնաց, թէ կարէ՞ զնա շարժել 'ի տեղեացն կամ կարէ կոտրել եւ նշան բերել: Ասէ, որ ուրանայր զդրամն. թէ զհազար լուծք լծէ, չկարէ զայն քարն շարժել 'ի տեղեացն եւ թէ հազար քարգործ բերէ, չկարէ կտոր մի կոտրել. զի ապառաժ քար է: Յայնժամ դարձուցեալ զայրն 'ի յետս, որ գնայր, եւ ասէ ցուրացօղ դրամին, թէ գնա եւ տուր զիւր դրամն յինքն. զի դու եղեր վկայ, որ պարտիս. եւ այնպէս յամօթ եղեալ վճարեաց զպարտսն:

Ցուցանէ առակս, թէ դատաւորն այնպէս պարտէ լինիլ. որ 'ի դատաստան առնելն բանին ելք գտանէ. որ զիրաւունսն Աստուծոյ չթողու ըստ այնմ, որ ասէ Սաղոմոն. որ հանճարեղն իցէ, զառաջնորդութիւն:

ՄԻԳ. ՈՒԽՏ ՄԻԱՅՆԱԿԵՑԻ ԸՆԴ ՍԱՏԱՆԱՅԻ

(154 ag=123 B=23 D)

Ասի յառակաց թէ միակեց մի սատանայի ուխտ եդ. որ տարի մի 'ի պահս կենայ, թէ զնա 'ի մեծութիւն հասուցանէ. սատանայ յանձն էառ կատարել զխնդրուածս նորա. յորժամ վճարեաց զպահսն, շարժեաց զեպիսկոպոս քաղաքին, որ եդ զնա եկեղեցապան. եւ 'ի միւս տարւոջն շարժեաց, որ օրհնեաց զնա աբեղայ. եւ 'ի միւս տարւոջն եղեւ մեռանիլ եպիսկոպոսին. շարժեաց զթագաւորն եւ զքաղաքացիսն առնել իւրեանց եպիսկոպոս: Եւ յորժամ կամէր զգեստաւորիլ. զի ժամ արասցէ, եկն սատանայ ետ 'ի նա փոքրիկ չորեքաղի մի եւ ասէ. իմ ամէն լաւին փոխարէն, որ զքեզ յայդ մեծագոյն աստիճանդ հասուցի, զայս արա. առ զայդ փոքրիկ չորեքաղիդ 'ի ծոցդ դիր. եւ զգեստդ 'ի վերայ հագիր եւ յորժամ 'ի բեմն ելանես, նա մէկ մատամբդ 'ի վերայ մէկ լարին զարկ. եւ այնպէս արարեալ պատրեալ եպիսկոպոսին՝ յանկարծակի հազարք հազարաց եւ բիւրք բիւրոց տասնաղի եւ թմբկի եւ սուռնայի եւ չանկի եւ չորեքաղւոյ ձայն հնչեաց՝ 'ի մէջ եկեղեցւոյն: Զարհուրեցան թագաւորն եւ ժողովուրդն եւ ո՛չ զոք տեսանէին հարկանօղ նուագարանացն: Հրամայեաց թագաւորն բռնել զդուռն եկեղեցւոյն՝ եւ զիւրաքանչիւր ոք մերկացուցանել եւ փնդռել. եւ այնպէս արարեալ ո՛չ զոք գտին պատճառ, եւ մնաց թագաւորն եւ եպիսկոպոսն միայն. թագաւորն եւս մերկացաւ. եւ ո՛չ գտաւ առ նա ինչ. եւ յորժամ մերկացուցին զեպիսկոպոսն, գտին 'ի ծոցն զչորեքաղին այն. եւ 'ի չարչարանս արկեալ խոստովան եղեւ զուրացութիւնն եւ զդաշինս, զոր եդեալ էր ընդ սատանայի: Յայնժամ կապեցին զնա 'ի յազի ամեհի ձիոյ եւ թողին 'ի դաշտի. մանրամասնաբար կոտորեալ եղեւ մարմին նորա. եւ այնպէս աւանդեաց

զդառնացեալ հոգին 'ի ձեռն սատանայի:

Ցուցանէ առակս, թէ ով ոք սատանայի բարւոյն եւ ուխտին հաւատայ, բաժին նորա վերջն այնպէս լինելոց է:

ՄԻԴ. ԿԱԾԱՌԱՌՈՒ ԴԱՏԱՒՈՐ ԵՒ ԲՂՈՒՂ ՄԻ ԻՒՂ
(157 ag=4 A=116 B=27 D)

Ասի յառակաց, թէ այր մի գնաց առ դատաւոր քաղաքին եւ խոստացաւ, թէ քեզ բղուղ մի իւղ տամ. վաղիւն յորժամ ես եւ ոսոխն իմ առ քեզ գամք, զիս իրաւ արա 'ի դատաստանին: Եւ 'ի միւս աւուրն յորժամ եկին 'ի դատաստան, դատաւորն զիւղոյն տուօղն իրաւ արար եւ գրեաց զգիր հաստատութեան. եւ գնաց այրն, որ զիւղն խոստացաւ, ելից զբղուղ մի յարդով մինչեւ 'ի ճիտն եւ 'ի վերայ յարդին երկու եւ երեք շերեփ իւղ եդ եւ զբերան բղղին սերեկեաց եւ եբեր առ դատաւորն եւ գնաց: Եւ յետ սակաւ աւուրց ասէ դատաւորն ցսպասաւորն իւր, թէ սիրտս իւղով բրինձ կուզէ. բեր զայն մարդոյ բերած իւղն եւ բրինձ եփէ: Իսկ նա վառեալ կրակ եւ եդ զթաւայն 'ի վերայ կրակին. եբեր զիւղն յառաջ եբաց եւ էզարկ զդգալն 'ի բղուղն. նա յարդն 'ի դուրս վազեաց: Իսկ նա աղաղակեաց, թէ զբղուղն իւղով բերին, նա յարդ է դարձեալ: Ցայնժամ իմացաւ դատաւորն եւ ասաց, թէ այն մարդն զիս խաբեաց. ես հետ նորա հանեմ: Եւ յաւուր միում այն մարդն դատաւորին դռնովն անցանէր. եւ տեսեալ դատաւորին զայրն զայն՝ ասէ. ով այր դու, զքո դատաստանին գիրն, զոր այն օրն ետու՝ պակաս կայ 'ի ներս՝ բեր լնում. խեղճ ես. որ յետոյ այլ քո դաւընկերն չգայ՝ զքեզ 'ի դատաստան քարշէ եւ զքեզ ստէ: Ասէ այրն. ով դատաւոր. թէ պակաս կայ, 'ի բղուղն է. թէ չէ յիմ գիրն պակաս չկայ. եւ այնպէս յամօթ եղեւ կաշառօք դատաստան նորա:

Ցուցանէ առակս, թէ ով ոք կաշառօք դատաստան առնէ, կամ յայս կեանքս պիտի խայտառակի կամ 'ի հանդերձեալն:

ՄԻԵ. ԱՄԵՆԱՏԳԷՏ ՄԱՐԴ
(158 ag=5 A=117 B=28 D)

Ասի յառակաց, թէ թագաւոր մի կամեցաւ աշտարակ շինել. եւ քանի ցերեկն շինէին, գիշերն 'ի փուլ գայր: Եւ ժողովեալ զգիտունս իւր՝ էհարց զպատճառն. եւ նոքա ասեն. թէ կամիս, որ այլ չփլչի, դու ընտրէ տգէտ մարդ մի, որ քան զինքն տգէտ չլինի, եւ 'ի մէջ որմին դիր կենդանի եւ 'ի վեր ած. որ շէն մնայ: Ասէ թագաւորն. զայդ բանի ընտրութիւնդ այլ դուք արարէք, թէ յինչ հարաքաթ կայ 'ի տգէտ մարդն, եւ բերէք. որ տամ դնել 'ի մէջ որմին: Իսկ նոցա նստեալ 'ի միասին ընտրել, թէ յինչ տեղ գտանեն տգէտ. եւ ոմն ասաց՝ զձկնորսն գոլ տգէտ. որ հետ մարդոյ չէ նորա առնուլն եւ տալն, այլ 'ի ջուրն եւ 'ի ձկանց: Իսկ ոմանք ասացին՝ զինչպահակն, որ հետ իշուն կենայ եւ զիւր կեանքն 'ի մայրին եւ 'ի լերինն հետ գրաստուն շրջի: Ոմանք զծովավարն ասացին. իսկ ոմանք զհովիւն, որ 'ի լերինս զամառն եւ զձմեռն հետ ոչխարացն շրջի, 'ի գիւղ կամ 'ի քաղաք ոչ մտանէ. եւ հաւանեալ կամեցան բերել զհովիւն: Ցայնժամ ասէ մի ոմն 'ի նոցանէ, թէ թագաւորիս մերոյ է՛ հովիւ մի, որ 'ի լեառն է ծնեալ հետ ոչխարացն եւ անդ է սնեալ եւ զիւր ժամանակն ո՛չ 'ի գիւղ մտեալ եւ ո՛չ 'ի քաղաք. եւ յուղարկեցին տասն ձիաւոր. զի բերցեն զայրն. եւ նոքա գնացեալ գտին զհովիւն, զի կթէր զոչխարսն. եւ ողջունեալ ասեն. կոչէ զքեզ թագաւորն: Ասէ հովիւն. ես զիմ ժամանակս ո՛չ 'ի քաղաք եմ գնացեալ եւ ոչ 'ի գիւղ. զիս զիա՞րդ կոչէ. եւ նոքա ասեն պատճառանօք. ոչ գիտեմք. իսկ նորա պատուեալ զզօրականսն եւ զգառն զենեալ եւ պանիր մածուցեալ՝ ուրախացոյց զնոսա եւ երդմամբ հարցեալ զպատճառն կոչելոյն: Իսկ նոցա ասացեալ, թէ այսպիսի պատճառաւ կոչէ զքեզ. զի իմաստունք նորա ասացին, թէ մի տգէտ 'ի մարդկանէ դնեն յորմն. որ շէն մնայ: Ցայնժամ ծիծաղեցաւ հովիւն եւ ասէ. յիմարք եւ տգէտք այնք իմաստունքն են, որք զայդ ընտրութիւնդ են արարեալ: Եւ բերեալ զոչխար մի ասէ. ես ցուցից ձեզ զտգիտութիւնս իմ. եւ ասէ. ոչխարս այս երկուս գառինս ունի 'ի փորն՝ մինն էգ է եւ միւսն որձ. միոյն գլուխն սեաւ եւ միոյն սպիտակ. եւ զենեալ ոչխարն եւ հանեալ զգառինսն 'ի փորոյն. եւ էր այնպէս, որպէս ասացն: Եւ բերեալ ոչխար մի՝ ասէ. ոչխարս այս մէկ գառն ունի 'ի փորն. անձն սեաւ եւ գլուխն սպիտակ եւ ինքն որձ. եւ զենեալ՝ տեսին

այնպէս: Եւ ասէ հովիւն. զայս երկու բուն զեհս որ կայ ձեր առաջի, զամէնն գիտեմ, թէ որն է՝ որ ծնանելոյ է եւ որն է՝ որ ստերջ է եւ որն է՝ որ որձ ծնանի եւ որն է՝ որ էգ եւ որն սեաւ կամ սպիտակ կամ որն խայտախարի. ձեր գիտունքն կարեն գիտել զայս: Ասեն զօրականքն. ո՛չ ամենեւին. ասէ հովիւն. ապա գիտացիք, որ ես չեմ այն տգէտն եւ յիմարն, զոր դուք խնդրէք. այլ թէ կամիք, ես ցուցանեմ. թող թագաւորն զիւր անիս նայիպն բռնէ, թալանէ եւ զինչ ունի, զամէն առնու եւ 'ի մէջ քաղաքին 'ի հրապարակին կախէ եւ չարաչար տանջէ. որ ամէն քաղաքացիքն տեսանեն. եւ տանին՝ թաքուցանեն եւ ասեն, թէ սպանեցին. եւ երեք օր 'ի քաղաքն կանչեցնեն, թէ զինչ մարդ որ գայ, զայն նայիպի գործն 'ի յանձն առնու, նայ ապրանքն զամէն այն մարդոյն տանք, որ 'ի նորա տեղն նստի: Այն մարդն, որ զայն ամէն խաղքութիւնն տեսանէ եւ լսէ, զոր յայն նայիպին գլուխն անցուցին, եւ յառաջ գայ, թէ ես լինիմ թագաւորին նայիպ. այն մարդն է յիմար եւ տգէտ. զայն բռնեցէք՝ 'ի մէջ որմին դրէք կենդանի. որ այլ չի փլչիլ եւ 'ի շէն մնայ: Իսկ նոքա եկեալ պատմեցին թագաւորին. եւ թագաւորն արարեալ այնպէս՝ եգիտ զայր մի, որ մինչ դեռ կանչեցնէին 'ի քաղաքին, թէ ո՞վ գայ զայն նայիպին զիշխանութիւնն եւ զգործն յանձն առնու, նա զնորա ապրանքն եւ զհայրենիքն նմա տամք, յայնժամ ջրմի եւ թօնի այր մի յառաջ վազեաց եւ ասաց, թէ ես յանձն առնում զայն նայիպութիւնն. եւ հարցին ցնա, թէ տեսեր, ընդ այն նայիպին հետ ինչ արարին. նա ասէ. այո՛, տեսի. բայց ես այլ աղէկ առնեմ, որ զերդ զայն չլինիմ: Եւ նոցա առեալ վաղվաղակի տարեալ եդին կենդանի յորմն շինուածոյն. եւ հաստատուն եկաց շինուածն:

Ցուցանէ առակս, թէ ոք զընկերն տեսանէ 'ի գործ թագաւորի մեծամեծաց ձեռն անկեալ՝ եւ այնու պատճառաւն 'ի յաղքատութիւն եւ 'ի տուգանս անկեալ. եւ ինքն յանդգնեալ 'ի նոյն գործն ձեռն արկանէ, նման նմա լինիցի եւ 'ի կենացն եւս զրկեսցի:

ՄԻԶ. ԿԱԾԱՌԱՌՈՒ ՔԱՀԱՆԱՅ
(162 ag)

Ասի յառակաց, թէ 'ի տօնի զատկին եկին թռչունքն ամենայն եւ խոստովանէին ըստ օրինացն. եկին ընդ նոսա սակաւ մի եւ հողոմաղք. խոստովանէին քահանային, թէ չեմք մեղուցեալ. բայց զի որսացաք զմուկն եւ զգորտ եւ կերինք: Եւ նա մերժեաց զնոսա՝ պիղծս կոչելով. եւ նոցա երթեալ ստացան զանձս բազումս եւ մատուցին քահանային. եւ տարեալ այնու արդարացոյց զնոսա ասելով. ո՛չ գիտացիք խոստովանիլ. զի այն ձեզ թռչունք են. եւ հաղորդեաց զնոսա:

Զագահ եպիսկոպոսացն եւ քահանայից առակս նշանակէ. զի զպոռնիկս եւ զայլս մերժեն յեկեղեցւոյ եւ դարձեալ ընդունին կաշառօք:

ՄԻԷ. ԲՈՒ ԵՒ ԱՐԾՈՒԻ
(163 ag)

Ասի յառակաց, թէ բուն հրեշտակ առաքեաց առ արծուին եւ խնդրեաց զդուստր նորա հարսն եւ ասէ. դու տունջեան քաջամարտիկ ես եւ ես գիշերոյ. պատշաճ է մեզ խնամութիւն. եւ յանձն էառ տալ. եւ 'ի լինիլ հարսանեացն՝ 'ի տուէ լոյս ո՛չ կարէր տեսանել փեսայն եւ 'ի գիշերի հարսն. եւ ծաղր առնէին զնա բազէքն. եւ լուծաւ հարսանիքն:

Ցուցանէ առակս, երբ հաւատացեալ մարդ զդուստր իւր տայ այլասեռի խաւարեցելոյ 'ի լուսոյ:

Գ. ՄՆԱՑՈՐԴՔ ԱՌԱԿԱՑ Ի ՁԵՌԱԳՐԷՆ Ա

ՄԻԸ. ԻՄԱՍՏԱՍԷՐ Ի ՍԵՂԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ
(1 A=106 B=2 G)

Իմաստասէր մի կոչեցին 'ի սեղան թագաւորի ճաշակել. եւ նայ բազմեցաւ ընդ իշխանս. եւ մատռուակ ոսկէ բաժակաւ մատոյց նմա գինի. եւ նա եկաց 'ի յոտն եւ ասէ. ով բարի թագաւոր, զգինիս 'ի փառս քո ըմպեմ. եւ էհէ (=եհեղ) զգինին 'ի յերկիր: Եւ իշխանքն ծիծաղելով ասացին. յիմարեցա՞ր, ով

իմաստասէր. եւ նա ասէ. դուք էք ծիծաղելո արժանի. զի դա հեղաւ երկիր. թէ արբեալ էի, նա ինքն զիս հեղեր երկիր:

ՄԻԹ. ԱՐԾԻՒ ԵՒ ԲՈՒ
(6 A=29 D=20 G)

Ասի յառակաց, թէ գիհ մի արածէր ոչխար 'ի դաշտի մի. եւ եկեալ յանկարծակի արծիւ մի եւ էառ գառն մի 'ի գիհէ անտի եւ վերացաւ յերկինս 'ի վեր եւ գնաց. եւ մերձ գիհին նստեալ բու հաւ մի ետես առնուլ արծուին զգառն. նախանձեցաւ ընդ միտս բուն եւ ասէ. ես յաղթանդամ եմ քան զարծիւն. ընդէ՞ր որ նա գառն եհար եւ առ 'ի գիհէն եւ ես ոչ առնում. թէ նա գառն էառ, ես մաքի առնում. եւ սպառազինեալ զինքն յամենայն զօրութենէ իւրմէ պնդեաց զսիրտն եւ խոյացեալ եհար զմաքիլն 'ի վերայ բրդով ոչխարի. զի առեալ վերասցի. եւ ոչ կարաց. այլ պատատեցաւ բուրթն 'ի մաքիլքն. կախեցաւ ինքն զթիկանց ոչխարին. եւ եկեալ հովիւն բրովն ջարդեալ ոսկերս նորա սատակեցոյց զնա եւ կապեաց զոտսն, ձգեաց 'ի վերայ հովուական բրին, եդ 'ի յուսն եւ գայր 'ի տուն հետ ոչխարացն. եւ տեսեալ զայն գեղացեացն հարցին, թէ զի՞նչ է այս, որ բարձեալ բերես ուսովտ. ասէ. սա այն կենդանի է, որ յիւր միտքն արծիւ էր եւ 'ի մեր միտքս բու է:

Ցուցանէ առակս, թէ ամենայն մարդ պարտի. որ զինչ Աստուած տուեալ է, զայն բաւական համարի, եւ ոչ 'ի գեր 'ի վերոյսն ձեռնարկէ. ապա թէ ոչ՝ իբրեւ զայն բու հաւն, ծաղր լինի եւ զկեանս իւր կորուսանէ:

ՄԼ. ԳԵՂԵՑԻԿ ԿԻՆ ԵՒ ՍԵԱՒ ՈՐԴԻՆ
(18 A)

Եւ ասեն իմաստունքն, թէ կին ոմն մեծատուն եւ գեղեցիք յղացաւ յառնէ յիւրմէ եւ ծնաւ որդի սեաւ իբրեւ զհնդիկ. եւ կամէր այրն սպանանել զնա. կարծեր, թէ 'ի ծառայիցն իցէ. եւ ասեն իմաստունքն. մի սպանաներ, թէ տես՝ լի՞ցի 'ի տան քում պատկեր սեաւ. եւ զտին պատկեր մի նկարեալ սեաւ հնդիկ. եւ ասացին իմաստունքն, թէ 'ի ժամ սաղմնառութեան նկարեալ է 'ի պատկերն այն եւ յղացեալ:

ՄԼԱ. ԵՐԿՈՒ ՆԱԽԱՆՁԱԽՆԴԻՐ ԾԱՌԱՅՔ ԹԱԳԱՒՈՐԻ
(19 A)

Թագաւոր մի ոմն գիտէր զզինուորքն իւր. զի ծածուկ նախանձ ունէին ընդ միմեանս. եւ ասէ թագաւորն ընդ մինն, թէ զինչ կամիս, խնդրէ յինէն մեծութիւն. որ տամ քեզ. բայց քո ընկերին կրկին տամ քան զքոյդ. ասէ 'ի միտս իւր. թէ խնդրեմ ինձ մին բարի, նմա կրկին տա քան զիմն. եւ ասէ ցթագաւորն, թէ զիմ մին աչքս հան. որ զմիւսոյն զ.Բ.ն հանիցէ:

ՄԼԱա. 102 D ՎԱՍՆ ՆԱԽԱՆՁՈՏԱՅ Ասի 'ի պատմութեանց, թէ .Բ. զինուորք յոյժ նախանձոտ էին ընդ միմեանս եւ էին ծառայք ումեմն թագաւորի. եւ գիտէր զնախանձ նոցա թագաւորն. եւ յետ բազում խրատելոյն՝ ոչ հաշտեցան ընդ միմեանս. եւ ասաց թագաւորն. երկուքդ. ԻՌ. թանկա պարտիք ինձ. եւ հաշտիք. ձեզ թողում զպարտքն: Եւ նոքա ասեն դու սպան[ան]է զմեզ եւ կամ հրաման տուր. որ մեք զմիմեանս սպանանեմք. եւ յորժամ ետես թագաւորն զչար միտս նոցա, հրամայեաց եւ չարաչար տանջեցին զնոսա .Ե. տարի եւ առին 'ի նոցանէ. ԻՌ. թանկա. եւ ասէ թագաւոր. ոչ սպանանեմ ձեզ, այլ պարգեւք տամ եւ ազատեմ. խնդրեցէք յինէն, զինչ եւ կամիք. բայց առաջնոյն մէկ պարգեւք տամ եւ յետի խնդրողի .Բ. եւ երդուաւ նոցա. եւ նոքա զմիմեանս մեծարեցին. եւ 'ի վերայ չար նախանձուն [մէկն] ասաց թագաւորին. հան զիմ մէկ աչքն. եւ ետես թագաւորն զնախանձ նոցա եւ եհան զմէկ ակն եւ կտրեաց զմի ոտն եւ զմի ձեռն. եւ զմիւսոյն եհան զ.Բ. աչքն եւ զերկու ձեռն եւ զոտն. կտրեաց զամէն. զի այն առաւել նախանձ ունէր. զի ասէր՝ զմեզ սպանանէ: Եւ ողորմելիքն 'ի չար նախանձոյն ոչ խնդրեցին քաղաք կամ գեօղ կամ պարգեւք բարի եւ չարաչար սատակեցան:

Ցուցանէ առակս, թէ թագաւորն Աստուած հայի 'ի նախանձոտ միտս՝ 'ի մարմինս եւ 'ի հոգիս մեր.

զի մարմինն ցանկա՛ հակառակ հոգոյ՝ զմեղքն գործէ՝ եւ հոգին եւ[u] հակառակ կայ մարմնոյն զբարին գործել. եւ միտն դատաւոր է եւ ոչ տանէ ուղիղ դատաստան. եւ չար նախանձին ընդ միմեանս եւ ոչ գնան ընդ կամաց միմեանց. յորժամ հաշտ լինին, գնան. եւ թագաւորն Աստուած հրամայէ հաշտ կենալ հոգոյ եւ մարմնոյ եւ գործել բարին եւ տայ Աստուած զարքայութիւնն պարգեւք զինուորելոցն՝ յերկինս մարտիրոսաց, ճգնաւորաց եւ ամենայն սրբոց: Եւ թէ ոչ հաշտին եւ խաղաղութիւն ոչ առնեն ընդ միմեանս, բիւր քանքարոյ պարտական եմք Աստուծոյ, տանջէ զմեզ Աստուած չարաչար եւ ասէ հրեշտակացն. առէք 'ի դմանէ զքանքարդ եւ տուք [յ]այն, որ ունի զ.Ժ. եւ թէ հաշտ կենամք եւ բարի գործեմք, զպարտքն թողու մեզ, որպէս ինքն ուսոյց. ասացէք՝ հայր մեր, որ յերկինս եւ այլն". եւ թող մեզ զպարտս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց եւ այլն". զոր ասաց. էթէ ոչ թողուցուք միմեանց զյանցանս եւ ոչ հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր. յայնժամ յաղօթս կացէք, խնդրեցէք զարքայութիւնն. եւ այն ամենայն յաւելցի ձեզ. 'ի վերայ պարտուցն տայ մեզ զքաղաքն զվերինն Երուսաղէմ. եւ թէ ոչ հաշտի հոգի եւ մարմին ամենայն մարդոյ եւ ոչ գործեն բարի, այլ չար, յայնժամ ասէ Աստուած. յորժամ ոչ խնդրեցին յինէն բարի, կապեցէք՝ ասէ՝ զդոցա ոտն եւ զձեռն եւ արկէք 'ի հուրն անշէջ. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց. եւ այն է կտրել ոտիցն եւ ձեռացն եւ աչացն. զանձն տանջեն, թէ անձամբ գործեցիր չար. զհոգին, թէ միաբանեցար ընդ մարմնոյն. աչքն, թէ արատ հայեցար եւ ցանկացար. զձեռքն, թէ շօշափեցից զամենայն չար զգայարանք մարդոյ, ամենեցուն չարչարանք կայ, եւ թէ ոչ նախանձին ընդ մարդոյ եւ ոչ մարմին ընդ հոգոյն [միաբանի], յայս ամենայն չար տանջանացս ազատին, յորժամ բարի գործեն:

ՄԼԲ. ՍԱՐԴ
(20 A)

Սարդն 'ի բնութենէն հինէ զվարմն. զի որս առնէ. եւ երբեմն այն չափ հինէ, որ տկարանայ եւ մեռանի. եւ վաստակն իւր մին ճանճ է, որ բռնէ:

Նոյնպէս ագահքն կորուսանեն զհոգիս իւրեանց ժողովելով զինչս աշխարհիս, որ ճանճի միոյ նման է մաւտ [յ]երկնից արքայութիւն:

Դ. ՄՆԱՑՈՐԴՔ ԱՌԱԿԱՑ Ի ՁԵՌԱԳՐԷՆ Բ

ՄԼԳ. ԱՒՁ
(71 B)

Աւձն յորժամ ծերանայ, երթա մտանէ 'ի նեղ տեղ, տապի եւ հարու եւ նեղէ ինքն զինքն, մինչեւ [թափի] խորխ նորա եւ ինքն մանկանայ:

Ցուցանէ խորհուրդ բանիս, թէ մի անյուսիր, ով մեղաւոր. այլ հայեաց երկինս. եւ մուտ 'ի նեղութիւն, 'ի վիշտ եւ 'ի չարչարանս ապաշխարութեամբ եւ նեղէ դու զքեզ ապաշխարութեամբ եւ արտասուօք եւ թափի 'ի քէն խորխն հին չար գործոց քոց շնորհօք սուրբ հոգոյն, որպէս Դաւիթ, անառակ որդին, մաքսաւորն եւ այլք բազումք:

ՄԼԳա. 92 D ՎԱՍՆ ՊԱՀՈՑ Դարձեալ ասի 'ի բանախօս արանց, թէ օձն՝ յորժամ տկարանայ աչքն եւ վատատեսի՝ Խ. օր պահք կենայ, զեռունք ոչ ուտէ. եւ ասեն, թէ եւ ոչ հող. եւ ապա զհին մորթն թողու եւ նոր հագնի եւ աչքն 'ի լոյս գայ:

Ցուցանէ բանս, թէ պարտէ 'ի պահոցն մերկանալ զհին մորթն մեր. որ մեղքն խոստովանիլ եւ ապաշխարութեամբ, լալով եւ աղօթիւք եւ նորոգիմք բարի գործովք, զկուրացեալ աչքն հոգոց մերոց լուսաւորեմք բարութեամբ:

ՄԼԳբ. 155 D Մրժղեղն յորժամ ծերանայ եւ վատին աչք նորա, երթայ մտանէ 'ի նեղ ծակ եւ 'ի ծագել

արեգականն մինչեւ (այսպ.) լուսաւորին աչք նորա:

Ցուցանէ բանիս զօրութիւնն, թէ ով մարդ մեղաւոր, մի անյուսիր, թէ կուրացաւ եւ խաւարեցաւ ոգիդ քո մեղօք եւ անօրէնութեամբ եւ աղտեղի գործով. այլ զոջայ եւ մուտ յապաշխարութիւն եւ 'ի նեղութիւն մարմնոյ եւ հայեաց յերկինս՝ առ Քրիստոս յոյսն մեր աներկ՝ սրտի մտօք, հոգով եւ մարմնով եւ արտասուօք հայցեա՛ զխաղաղութիւն եւ զթողութիւն մեղաց քոց. յայնժամ ջնջեսցին մեղքն քո Քրիստոսի շնորհօքն եւ լուսաւորի հոգի քո կրկին լուսով սուրբ աւազանին:

ՄԼԴ. ԱՌԻԻԾ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԻ ԱՂՋԻԿ
(82 B=145 D)

Առիւծն ետես զդուստր թագաւորին. զի յոյժ գեղեցիկ էր. ցանկացաւ նմա մոլէկան ախտիւ եւ առաքեաց առ թագաւորն. զի տացէ զդուստրն իւր նմա 'ի կնութեան. ասէ թագաւորն. արժանի ես այդմ. զի թագաւոր ես կենդանեաց. ապա զդուստր իմ ոչ կարեմ տալ քեզ. զի ժանիք եւ մաքիլքդ սաստիկ ահագին է. եւ ահէ անտի նորա մեռանի դուստրն իմ. ասէ առիւծն. գամ 'ի կամս քո եւ դու հան յինէն ժանիքս եւ մաքիլքս. միայն ողորմեայ ինձ եւ տուր ինձ զդուստր քո. զի ահա եփի սիրտ իմ եւ մեռանիմ 'ի սիրոյ նորա. եւ կոչեաց զնա առ ինքն եւ քարշեաց զժանիք եւ զմագիլս նորա. նա մնաց անզէն. կապեաց զնա եւ առեալ գաւազանս բազումս սկսաւ հարկանել զնա, մինչեւ մեռաւ եւ ոչ հասաւ ցանկութեան իւրոյ:

Ցուցանէ առակս. վայ ինձ, թէ այսպէս մարդիք ամենայն, որ բորբոքին զէջ ախտիւ 'ի ցանկութիւն պոռնկութեան եւ շնութեան եւ 'ի մեղս եւ 'ի չար գործս. եւ դեւ կապեաց զմեզ մեղօք աշխարհիս. եւ հանեն անձանց մերոց զկռվոյ զէնն մեր, որ է համբերութիւն, խոնարհութիւն եւ սրբութիւն, եւ կապեալ տանին ձգեն 'ի հուր գեհեան անզերծանելի:

ՄԼԵ. ԱՂՔԱՏ ԵՒ ԵՐԷՑ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆ
(89 B)

Աղքատն 'ի գեղ մի երեկ եւ 'ի ժամատուն մտաւ. եւ էր ժամատունն բլբլակ. եւ եկն անձրեւ եւ ջրով լցվաւ. եւ աղքատն թրջեցալ եւ զի պատառատուն հանդերձ զգեցեալ էր, դողայր եւ էր ձանձրացեալ. զի յոյժ քաղցեալ էր. եւ եկն էրէցն եւ սկսաւ ասել ժամ եւ էառ զաւետարանն եւ էգիտ զայն բանն, թէ օտար էի, ժողովեցէք զիս, մերկ էի եւ զգեցուցէք զիս, քաղցեալ էի եւ կերակրեցէք զիս. եւ լսեց աղքատն եւ ուրախացաւ եւ ասէ. օտար եմ եւ ժողովեմ զիս. քաղցեալ եմ եւ կերակրեն զիս. մերկ եմ եւ զգեցուցանեն զիս. եւ արձակեաց էրէցն ժամն եւ գնաց եւ եթող զաղքատն անդ եւ ոչ տարաւ 'ի տուն. գիտէր էրէցն եւ ոչ արար. եւ ասէ աղքատն ընդ միտս իւր, թէ զայն գիրն որ կարդաց, ոչ հաւատաց, այլ սուտ համարեցաւ. եւ առեալ զաւետարանն, տարաւ 'ի ջրաժողով տեղ մի եւ եդիր 'ի ջուրն եւ քար մի 'ի վերայ. եւ եկն էրէցն եւ ոչ եգիտ զաւետարանն. ասէ աղքատն. աւետարանն ի՞նչ անես. սուտ բաներ կա մէջն. նա տարի 'ի ջուրն դրի. եւ բարկացաւ էրէցն եւ սկսաւ հարկանել զնա. եւ ասէ ցէրէցն. մի հարկաներ զիս. թէ հանց կու հաւատաս, որ աւետարան է խօսք Քրիստոսի, ընդէ՞ր ոչ կատարեցար, զոր կարդացեր. ես օտար էի եւ ոչ ժողովեցեր, մերկ էի եւ ոչ զգեցուցեր, քաղցեալ էի եւ ոչ կերակրեցեր. եւ էրէցն ամօթալից եղեւ:

Ցուցանէ, թէ ոչ է պարտ զաւետարանն Քրիստոսի սուտ համարել. այլ պարտէ հաւատալ եւ կատարել, զոր հրամայել է:

ՄԼԵա. 180 D Աղքատ մի եկեալ 'ի գեօղ մի եւ մտաւ 'ի ժամատունն պատառատուն եւ անձրեւակէզ. ջրով լցվեր էր. եւ աղքատն այն անձրեւաթաց եւ քաղցած էր. եւ պատառատուն հանդերձ էր զգեցեալ եւ յոյժ դողայր եւ ձանձրացեալ էր 'ի ճանապարհէն: Եւ եկն էրէցն սկսաւ ժամ ասել. էառ զաւետարանն եւ կարդաց զայն փոխն, որ ասէ, թէ օտար էի եւ ժողովեցէք զիս, մերկ էի եւ զգեցուցէք զիս, քաղցեալ էի եւ կերակրեցէք զիս, ծարաւ էի եւ արբուցէք զիս. լսեաց զայն աղքատն եւ ուրախացաւ. այս է՝ առակս այս 'ի վերայ իմ եղեւ. ահա փութով կու կատարի կամք իմ: Եւ արձակեաց էրէցն զժամն եւ գնաց 'ի տուն իւր

եւ եթող զաղքատն 'ի ժամատունն եւ ոչ տարաւ զնա հետ իւր եւ ոչ պէտ արար նմայ. ասէ աղքատն 'ի միտս իւր, թէ զայն աւետարանն ոչ հաւատաց, ոչ ոչ (=որ որ) կարդաց, թէ սուտ հրամայեաց (=համարեցաւ). եւ առեալ զաւետարանն եւ տարաւ 'ի ջրաժողով տեղ մի եւ եդիր 'ի ջուրն. եդ քար մի 'ի վերայ: Եւ եկն էրէցն եկեղեցին եւ ոչ եգիտ զաւետարանն. ասէ ցաղքատն. ո՞ւր է աւետարանն. ասէ աղքատն ցէրէցն. ի՞նչ կառնես զսուտ աւետարանն. ահա ես տարայ 'ի ջուր դրի. եւ էրէցն բարկացաւ եւ սկսաւ հարկանել զաղքատն. եւ ասէ աղքատն. ընդէ՞ր հարկանես զիս, անիրաւ. երբ որ կու հաւատաս, թէ Աւետարանն ճշմարիտ բան է Աստուծոյ, ընդէ՞ր ոչ արարեր զկամս նորա եւ զհրամանս Աստուծոյ ոչ կատարեցեր. զի օտար եմ եւ ոչ ժողովեցիք զիս, մերկ եմ եւ ոչ զգեցուցէք զիս, քաղցեալ եմ եւ ոչ կերակրեցիք զիս եւ այլն: Միթէ Աստուած ինչ պակասութիւն ունէր, որ իւր համար ասաց զայն. վասն կարօտելոց եւ աղքատաց համար ասաց, թէ որ 'ի փոքրականցս յայնցանէ միոյն արարէք, նա ինձ արարէք. դարձեալ՝ որ ողորմին աղքատին, փոխ տայ Աստուծոյ. եւ Յոհան Ոսկիբերանն ասէ, թէ զողորմած տէրդ Աստուած ասէի. բայց ասեմ եւ ոչ ամաչեմ. այլ դու անտես արարեր զփրկական Աւետարանին հրաման եւ ստեցեր զբանն Աստուծոյ. զայս գիտեմ, թէ որ կարդան զաւետարանն եւ հաւատան, փութով պիտի յօժար սրտիւ կատարեն զհրամայեալն: Յայնժամ էրէցն ամօթալի եղեւ եւ ոչ կարաց պատասխանի տալ աղքատին:

Արդ ոչ է պարտ զԱստուծոյ Աւետարանն սուտ համարել, այլ պարտէ հաւատալ եւ կատարել զհրամայեալսն:

ՄԼԶ. ԵՐԷՑ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ
(90 B=194/185 D)

Կայր էրէց մի 'ի գիւղ մի եւ խիստ սաղմոսասէր. եւ գեղացիքն ոչ գային 'ի ժամ. էրէցն երթայր 'ի տունս նոցա եւ ասէր, թէ 'ի ժամ եկէք. եւ նոքա ասէին, թէ գամք եւ ոչ գային եւ էրէցն օր մի սուտ խեւ եղաւ եւ զգաւ[ա]զ[ա]նն 'ի փիլոնին ծայրն ծալեց եւ 'ի վեր կալաւ եւ շուրջ գայր եւ զոռայր. եւ ասեն գեղացիքն, թէ էրէցն խեւցաւ. երթամք եւ ծիծաղիմք. ժողովեցան այր եւ կին եւ տղայ մեծ եւ փոքր եւ եկին առ էրէցն. եւ ասէ էրէցն ցժողովուրդն, թէ նստէք. եւ նստան. եւ ասէ էրէցն ցժողովուրդն. ով մոլորեալք, քանի որ սաղմոսէի եւ աղաւթէի եւ ժամ ասէի, նա սատանայ կապել էր զսիրտն ձեր եւ քարացուցել. որ դժար թուէր ձեզ ժամ գալն. եւ այժմ սատանայի ձայնն եկի[ք] շուտով լսել եւ ծիծաղել. եւ բարկացեալ էրէցն ձգեց զփիլոնն եւ գնաց 'ի գեղէն:

ՄԼԷ. ՆԱՆԻՐ ԵՒ ՓԱՌՔ
(105 B=1G)

Իմաստասէր ոմն սահմանեաց. եւ առեալ ցանէին առաջի թագաւորին սերմն խոտի մի, զոր նանիր կոչէին. զի առաւօտուն ցանէին եւ 'ի ժամ ճաշուն բուսանէր եւ ծաղկէր եւ 'ի մէջ աւուրն կապէր պտուղ եւ հասանէր եւ Թ. ժամն թափէր զպտուղն եւ 'ի մուտ արեգական չորանար խոտն նանիր:

Եւ միտք այն է, զի զայն տեսեալ թագաւորք, իշխանք եւ մեծատունք իմանան, թէ այս պ յունայն եւ սնոտի է փառք եւ մեծութիւն յանցաւորիս. եւ նանիրն թէզ կամ հէչ թարգմանի:

ՄԼԸ. ԻՄԱՍՏԱՍԷՐ
(107 B=116 D=3 G)

Իմաստասէր ոմն կոչեաց 'ի ճաշ իշխան ոմն մեծ եւ փառաւոր. զոր նա եկեալ բազմեցաւ եւ եկն նմա հազ եւ լցեալ զբերանն լի թքով եթուք յերեսս իշխանին, որ կոչեալն էր զնա. քանզի էր գիշատես եւ քօսա. իսկ այլ իշխանքն բարկացան եւ սկսան հարկանել զնա. եւ նա հեզութեամբ ասէր. մի մեղադրէք ինձ. զի ոչ գտի այլ գարշ տեղ քան զգլուխ նորա. քանզի բոլոր տունս վերուստ եւ ներքուստ եւ Դ. կողմանց օծեալ ոսկով եւ արծաթով եւ քանդեալ մարգարտով:

Ցուցանէ առակս, թէ մարդիք պարտին զհոգիս զարդարեալ ամենայն առաքինութեամբ, որ մնացական է. իսկ մարմին, տուն եւ այլ ամենայն ինչ սուտ է:

ՄԼԹ. ՈՐԴԻ ՄԵԾԱՏԱՆ
(109 B=6 G)

Իմաստասէր ոմն ետես զմեծատան որդին. զի անառակութեամբ մաշեալ էր զգանձս հօրն եւ յետոյ աղքատացեալ եւ դատարկ մնացեալ յամենայնէ՝ նստեալ յանկիւնի մի՝ ուտէր աղ եւ հաց 'ի վերայ գետնի. եւ ասէ ցնա. ով որդեակ, եթէ այդպէս պարկեշտ կեցեալ էիր դու յառաջագոյն, այժմ 'ի վերայ բարձի մեծագնոյ նստէիր եւ բազում ախորժ կերակուրս եւ խորտիկս ուտէիր եւ անուշ համ գինի ըմպէիր:

Ցուցանէ առակս, թէ բազում յիմար մարդիք, յորժամ տէր լինին ապրանաց եւ բազում ընչից, սկսանին ուտել եւ ըմպել եւ արբենալ 'ի տվէ եւ 'ի գիշերի անառակ վարիւք, պարիւք եւ քնարիւք. եւ յորժամ հատանի այն, զգենուն պատառատուն եւ մուրանան:

ՄԽ. ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՅ
(115 B)

1 Կատարեալ իմաստութիւն մարդոյն այն է՝ սիրել զԱստուած [յ]ամենայն սրտէ եւ հանճարն այն է՝ բարի առնել ամենեցուն:

2 Սրբութիւն այնէ՝ անարատ պահել զանձն 'ի մեղաց երկիւղիւն Աստուծոյ:

3 Արդարութիւն այն է՝ ուղղութեամբ կալ առ ամենայն իրս:

4 Խոնարհութիւն այն է՝ հեռանալ 'ի փառասիրութենէ:

5 Հնազանդութիւն այն է, որ հնազանդ լինի կանոնաց սրբոց երկիւղիւն Աստուծոյ եւ պատվել զամենայն մարդ մինչեւ ցօր մահուան իւրոյ:

6 Փիլոսոպայութիւն մարդոյն այն է՝ լռութեամբ կալ 'ի տեղւոջ, ուր արժան իցէ:

7 Ցքնութիւն այն է՝ աղօթք սրբութեամբ ստանալ 'ի տվէ եւ 'ի գիշերի անպաճոյճ ձեւով, անխարթախ, աննենկ մտօք, անբասիր բարուք, անպարսաւ բանիւք, անարատ վարիւք 'ի խոնարհ ունել զանձն:

Ե. ՄՆԱՑՈՐԴՔ ԱՌԱԿԱՑ Ի ՁԵՌԱԳՐԷՆ C

ՄԽԱ. ՄԵԾԱՁԳԻ ԿԻՆ Ի ՀՌԱՔԵԼ
(33 C=33 C^2)

Կայր 'ի Հռաքել քաղաք մեծազգի կին մի ծեր, իբրեւ զմայր ամենայն քաղաքաց. գնացին կանայք առ նայ 'ի քաղաքէն եւ ասեն. տեսէ՞ր. զի լուաք, եթէ բազում կանայք 'ի քաղաքէս առոգնայք արարին. եւ նա ուրախացաւ եւ ասէ ցնոսա, թէ աւրհնեալ է Աստուած, դստերք իմ. ով որ ուժիկ ունի եւ լուսիկ, ն[ա] ասէ ժամանակն. որ առուգնայք առնեն. զի ժամանակս աշնանային է եւ երկիր լցեալ է բարեաւք. եւ դուք մի համէք, թէ միտք ունէք, դստերք իմ:

Այսպէս եղեւ բարի ժամանակն, յորժամ Աստուած մարդ եղեւ եւ հրաւիրեաց զմարդիկ յերկինս. եւ բազումք 'ի մարդկանէ յարանց եւ 'ի կանանց մեռան տառապանօք եւ գնացին զհետ Յիսուսի՝ անդադար գոչէ ասելով, եթէ եկայք առ իս ամենայն աշխատեալք 'ի մեղաց եւ [մ]ի [յա]մէք. զի մահն գող է, եկեսցէ յանկարծակի եւ Սողոմոն ասէ. յիշեայ զարարիչն քո յաւուր մանկութեան. զի վասն ամենայն մեղաց քոց ածցէ քեզ Աստուած 'ի դատաստան. եւ Պուղոս ասէ. այն է բարի ժամանակն, որ փրկէ զքեզ 'ի դառն տանջանաց. զի Աստուած 'ի դատաստա՛ն յաթոռ ողորմութեան է նստեալ եւ բաշխէ ամենայն[ի] զշնորհս, որ խնդրի 'ի նմանէ. եւ դիմէն սրտի մտաւք առ նայ. վասն որոյ ասէ առաքեալն. զվերինն

խորհեցարուք, ո՛ւր Քրիստոսն յոյսն մեր, որ առնէ զհոգիս ձեր, գնացարուք առ նայ բարի գործաւք եւ ուղեղ հաւատով. զի դուք գինք այրեան նորայ էք եւ Հայր եւ Հոգի նորայ սիրէ զձեզ, եթէ հրաժարիք յամենայն պիղծ գործոց:

ՄԽԲ. ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ՁԿՈՒՆՔ
(35 C=35 C^2)

Թագաւոր մի առեալ զիշխանս իւր եւ բազումք ձկնորսք եւ երկարանօք եկեալ նստեալ 'ի յեզր ծովուն, ուր ձկունք բազում կային. սկսան ուտել եւ ըմբել եւ ցնծալ երգարանօք եւ գոչելով ասէին առ ձկունսն, եթէ ելէք 'ի ծովէդ. որ տեսանեմք եւ ուրախանամք. եւ նոքա ոչ ելան. իսկ իբրեւ երեկու եղեւ, հրամայեաց թագաւորն որսորդացն արկանել զձանձն 'ի վերայ ձկանցն, որ էին 'ի ծովն. եւ հանեալ զնոսայ արկ 'ի ցամաքն. եւ սկսեան ձկներն 'ի վեր վազել եւ խաղալ. ասէ թագաւորն. ով ողորմելիք, յորժամ կոչէի զձեզ աղայչանօք գայլ առ մեզ եւ ուրախանալ, դուք ոչ եկիք եւ խաղացիք, յորժամ ատեան էր խաղալոյ. եւ այժմ հանդիսացէ՛ք եւ խաղէք, որ չէ ձեզ օգուտ:

Վասն որոյ, ով քահանայք եւ ժողովուրդք Աստուծոյ. զի այսպէս եւ մեզ պատահեցօ եւ պատահի. քանզի թագաւորն Քրիստոս կոչէ զմեզ անդադար, եթէ եկայք առ իս եւ ելէք 'ի ծովէ մեղաց. նոյնպէս եւ առաքեալք նորայ եւ հայրապետք եւ վարդապետք եկեղեցւոյ զմեզ կոչեն եւ ասեն, թէ ողորմեցարուք անձանց մերոց եւ ելէք 'ի մեղաց ծովէ եւ լալով կոծեցարուք եւ ապաշխարեցէք զմեղս ձեր. զի այս է ժամանակ ապաշխարութեան եւ լալոյ. զի մահն գող է եւ գայ հանկարծակի եւ մեք ոչ իմանամք եւ ոչ ածեմք զմտաւ եւ ոչ դադարեմք 'ի մեղաց եւ լի մեղաւք իջանեմք 'ի դժոխս եւ 'ի հողն եւ գոչէ Գաբրիէլ յաւուրն վերջին եւ յառնեմք 'ի գերեզմանացն եւ սեւ երեսաւք առաջի թագաւորին անմահի եւ ամենայն մարդու մեղք 'ի գլուխն իւր կուտի եւ երեւի եւ յայնժամ սկսանեմք լալ եւ կոծել, յառաչել եւ վայ կարդալ 'ի վերայ անձանց մերոց, որպէս արարին յիմար կուսանքն եւ մեծատունն եւ ձախայկողմեանքն. եւ այն անշահ է եւ անօգուտ եւ ընդվայր. զի չէ ան ողորմութեան ժամանակ, այլ իրաւանց եւ արդարութեան:

ՄԽԲա. 160 D Իշխան մի գեղեցիկ էառ բազում ձկնորս[u] եւ զուռկանս եւ անուշահամ կերակուր եւ ընպելիս եւ կանայս գեղեցիկս եւ այրս փողահարս. գնաց նստաւ յեզր ծովուն. սկսաւ ուրախանալ, ուտել եւ ըմպել եւ երգել. կոչեն աղաչանօք զձկնորսքն եւ ասեն. ելէք 'ի խորոցդ եւ եկէք 'ի խաղս մեր. եւ ուրախութիւն արարէք ընդ մեզ. նոքա ոչ լուան եւ ոչ եկին: Իսկ 'ի մուտս արեւուն հրամայեաց իշխանն. զի արկցեն զուռկանն 'ի ծովն եւ ըմբռնեսցեն ձկունս. արկին եւ հանեալ բազում ձկունս 'ի ցամաք: Իսկ նոքա սկսան վազել եւ խայտալ եւ խաղալ. զի քաղէին հոգիք նոցա: Ասէ իշխանն. հանդէպ է խաղալ ձեր, ով ձկունք. զի ոչ եկիք 'ի կոչն մեր եւ ոչ ուրախացիք ընդ մեզ:

Ցուցանէ, թէ օրն ահագին սկսանին լալ եւ կոծել եւ հառաչել դասք անզեղջ մեղաւորացն. եւ ասէ Քրիստոս. յորժամ կոչեցի զձեզ առաքելօք եւ մարգարէիւք՝ եւ հայրապետօք եւ իւղաբեր սուրբ կանամբք, դուք ոչ եկիք եւ ոչ լսեցիք եւ ոչ լացիք ողբալով, երբ ժամ էր լալոյ եւ ողբալոյ. այլ [այժմ ժամ է] յիրաւանց եւ արդար դատաստանի. գնացէք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենից:

Զ. ՄՆԱՑՈՐԴՔ ԱՌԱԿԱՑ Ի ՁԵՌԱԳՐԷՆ D

ՄԽԳ. ԱՐԾՈՒԻ ԵՒ ՓԱՌՔ
(1 D)

[Աստուած]ային Սողոմոն ասէ. արագաթեւ արծուին անցանէ նմայ հողմոյ եւ երթայ առ այն, որ ետ զնա:

Իսկ սրաթեւ արծիւ եւ հողմ զփառս եւ զմեծութիւնս կոչէ, որ գայ 'ի վերայ մարդոյ յայս կեանքս.

քանզի որպէս արծիւ գայ եւ գնայ, նոյնպէս եւ հողմն փութով անցանէ եւ ոչ երեւի հետք հողմոյն եւ ոչ արծւին. քանզի անյայտ լինին: Այսպէս ամենայն մեծութիւն եւ փառք աշխարհիս, որ գայ 'ի վերայ մարդոյ 'ի սակաւ ժամանակս, անյայտ լինի եւ ոչ երեւի. զի մահն խափանէ զամենայն զթագաւորութիւն եւ զիշխանութիւն, զհարստութիւն եւ զամենայն փառս երկրաւորս. զի կայ առ մարդիկք այս ամենայն եւ նման հողմոյ արագ երթայ առ այն, որ ետ զնա. զի նա է մնացական եւ անվախճան թագաւոր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

ՄԽԴ. ԳԱՅԼ ԵՒ ՀՈՎԻՒ
(7 D)

Ասի 'ի յառակաց, թէ գայլն յայնժամ անկանի 'ի գեհն, յորժամ հովիւն զգայլուն ահն մոռանայ:

ՄԽԵ. ՐԱԽՃԱՆ ՎԱՍՆ ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐԵՑ
(15 D=31 ՄԽ. Ի ՎԱ, էջ 35)

Արք. .Բ. ընկերացեալ 'ի վա[ճա]ռաշահութեան եւ 'ի շահից գնեցին .Ը. լիտր ձէթ ամանով մի, որ .Ը. լտր անցանէր եւ 'ի ճանապարհին կամեցան բաժանել, եւ իւրաքանչիւր զիւր կէսն առնուլ եւ ուչ ունէին այլ չափ կշեռք, բայց միայն դատարկ մէկ .Գ. լտրանոց եւ մէկն .Ե. լտրանոց: Հարցանեմ, թէ որպէ՞ս էր հնար բաժանել. որ կէսն մէկին լինէր եւ կէսն մէկին:

ՊԱՏԱՍԽԱՆԻ Լից զ.Գ. լտրանոց 'ի յ.Ը. լտրանոցէն. որ մնայ 'ի տեղն .Ե. լիտր եւ դարձեալ լից զ.Գ. լտրանոցի ձէթն 'ի .Ե. լտրանոց դատարկ ամանն. դարձեալ լից յ.Ը. լտրանոցէն հետ մի այլ զ.Գ. լտրանոցն եւ լից եւ դարձեալ 'ի .Ե. լտրանոցն. որ լցուի .Բ. լիտրն. այլ եւ մնա՛ մէկ լիտր՝ յ.Բ. լտրանոցն. դարձեալ լից զ.Ե. լտրանոցն զամէնն 'ի յ.Ը. լտրանոցն. եւ դարձեալ լից զմէկ լիտրն, որ յ.Գ. լտրանոց էր մնացեալ .Ե. լտրանոց. եւ դարձեալ լից 'ի յ.Ը. լտրանոցէն յ.Գ. լտրանոցն. եւ այն .Գ. լտրանոցովն լից 'ի .Ե. լտրանոցն. որ կայր յառաջն մէկ լիտր 'ի յԸ.Դ. լիտր 'ի .Ե. լտրանոցն եւ Դ. լիտր 'ի յ.Ը. լտրանոցն եւ տուր մէկ կէսն այն ընկերին եւ մէկն այն:

ՄԽԶ. ՐԱԽՃԱՆ ՎԱՍՆ ԵՐԿՈՒ ԴՐԱԽՏԱՊԱՆԱՑ
(16+17 D=31 ՄԽ. Ի ՎԱ, էջք 35-37)

Դարձեալ բախճան ասի, թէ Բ. այր առն միում դրախտապան էին. եւ 'ի ժամանակ աշնանն, յորժամ զպտուղ ծառոցն ժողովէին, Բ. դրախտապան արանցն .Բ. անկաւ .Ա. բաժին 'ի նռնենի ծառերուն .Կ. նուռն. եւ խորհեցան 'ի միասին ծախել զ.Կ. նուռն եւ զգինն բաժանել: Իսկ յաւուր միում մի ընկերն ոչ էր 'ի տանն. եւ գնօղ եկն նռանցն. յայնժամ ընկեր, որ 'ի տան էր, վաճառեաց զ.Կ. նուռն զ.Ե. 'ի յ.Բ. դրամ, որ ժողովի .Կ. նռնէն .ԻԴ. դրամ. եւ մինչ գնաց գնօղն, եկն միւս ընկեր նռանն, որ ոչ էր 'ի մօտ. եւ ասէ. ոչ է իմ կամ. որ զ.Ե. նռան յ.Բ. դրամ տանի. թող զիմ նռներն յետ բերէ. յայնժամ ընկերն որ վաճառեալ էր, եհաս եւ յետ դարձոյց զգնօղ նռանցն եւ Բ. բաժին արարին՝ զ.Լ. նուռն ինքն էառ եւ զ.Լ. ընկերոջն ետ. եւ սա զիւր բաժինն ծախեաց. զ.Գ.ն 'ի մի դրամ վաճառեաց. գինն մին .Ժ. դրամ. եւ երկրորդին որ զերկուսն 'ի մի դրամ վաճառեաց, լինի գինն ԺԵ. դրամ. եւ այս որիշ որիշ վաճառելովս բովանդակն եղեւ. ԻԵ. դրամ:

17 D Արդ՝ հարցանելի է, թէ առաջին վաճառելովն .Ե.յ.Բ. դրամ ծախեցաւ. եւ Կ. նուռն. ԻԴ. դրամ միատեղեցաւ. եւ երկրորդ վաճառելովս այլ .Ե.ն յ.Բ. դրամ վաճառեցաւ. զի մինն զերեքն 'ի մէկ դրամ վաճառեցաւ եւ մինն զերկուքն 'ի մէկ դրամ, որ լինի .Ե.Բ. դրամ: Արդ՝ զի՞նչ է պատճառն, որ յառանջն այլ .Ե.ն .Բ. դրամ վաճառեցաւ. եւ ԻԴ. բովանդակեցաւ. դարձեալ եւ երկրորդ վաճառելովս այլ .Ե. 'ի .Բ. դրամ վաճառեցաւ. եւ սա .ԻԵ. դրամ բովանդակեցաւ:

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԶԻ նորա .Գ.ն՝ երեքն 'ի մէկ դրամ՝ Ժ. դրամ եղեւ. սորա .Ի. ին .Ժ. դրամ եղեւ 'ի նորա դէմ. իսկ Ժ. նուռն այլ Բ .Բ. լինի .Ե. դրամ. բովանդակի երկոցունցն. ԻԵ. դրամ:

ՄԽԷ. ՐԱԽՃԱՆ ՎԱՍՆ ՀԱՒՈՒՑ
(18 D=31 ՄԽ. Ի ՎԱ, էջ 37)

Ասի յիմաստնոց. առ քեզ .Ճ. տապակ եւ գնեա քեզ .Ճ. հաւ .Գ. ազգ՝ մէկն ճնճղուկ, Բ.ուքն տան հաւ, Գ. սագ. զճնճղուկն զ.Խ. 'ի մէկ տապակ, զտան հաւն զմէկն յ.Գ. տապակ. զսակն զմէկն 'ի .Ե. տապակ. եւ հանց հնարեցոյց. որ .Ճ. տապակին .Ճ. հաւ գայ, ոչ աւելի եւ ոչ պակաս:

ՊԱՏԱՍԽԱՆԻ Առ .Բ. տապակին .Խ. 'ի մէկ տապակ .Ձ. ճնճղուկ, եւ Գ. տապակին մի հաւ, որ եղաւ. ՁԱ. հաւ .Ե. տապակին: Եւ առ .ԺԹ. սագ. հնկակն, որ լինի .ՂԵ. տապակի. եւ գայ այնպէս .Ճ. տապակին .Ճ. հաւ: Միտ դիր, ով իմաստուն. զի ճարտարանաս եւ հմուտ լինիս աշխարհավարութեան:

ՄԽԸ. ՔԱՌԱՍՈՒՆ ԹԻՒՆ
(89_2 D)

Քառասուն թիւն բարի է եւ ունի մեծ խորհուրդ. քանզի մանուկն 'ի .Խ. օրն առնու հոգի բանական յորովայն մօրն եւ լինի պատկեր Աստուծոյ: Խ. օր պահեաց Մովսէս եւ Եղիայ եւ տեսին Աստուած. եւ Խ. ամ թագաւորեցին Դաւիթ եւ Սողոմոն. եւ Խ. օր պահք սահմանեցին սուրբ հայրքն. զի պահեսցուք սրբութեամբ եւ առցուք կրկին զպատկերն Աստուծոյ, զոր կորուսաք մեղօք. զի թագաւորեսցուք ընդ սուրբսն Աստուծոյ:

ՄԽԹ. ԱՆՍՈՎՈՐ ԲԱՆ ՊԱՏՃԱՌ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ
(90 D)

Ասեցի (Լսե՞ցի) 'ի բժշկական վարդապետաց, թէ շինական ոմն նստաւ յաթոռ թագաւորի եւ կերաւ 'ի պարարտ կերակրոց եւ հիւանդացաւ. զի ոչ էր սովոր. եւ բժիշքն ոչ կարէին առողջացուցանել զնա, եկն ոմն իմաստուն բժիշկ, խրատ ետ նմայ եւ ասէ. զառաջին պարկեշտութիւն ասացիր, զոր 'ի շինականութեան ունէիր. եւ նա արար այնպէս եւ ողջացաւ շուտով:

ՄԾ. ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ ԱՌԻՒԾՈՒ
(90_2 D)

Դարձեալ ասեն, թէ առիւծն յորժամ միանգամ կուշտ ուտէ, Գ. օր 'ի պահք կենայ անսուաղ. զի իմաստուն է բնութեամբ եւ պարկեշտ քան զամենայն մարդիկք, որ յօրն .Գ. անգամ կամ .Դ. անգամ ուտեն, յագին եւ խճողեն զորովայնն, մինչեւ թուխմ"յ լինին եւ գարշահոտութիւն ընդ բերանն գայ՝ եւ լինի դժոխք:

ՄԾԱ. ՄԵՂՈՒՔ
(90 D)

Դարձեալ, թէ մեղունք շատ ուտեն 'ի մեղրէն, զոր գործեն. եւ որք շատ ուտեն, սպան[ան]ին՝ 'ի դուրս ձգեն:

ՄԾԲ. ԳԼՈՍ
(90 D)

Դարձեալ ասեն, թէ է կենդանի մի, որ կոչի գլոս, եւ հանապազ 'ի պահք է եւ 'ի .Ի. օրն ուտէ սակաւ մի խոտ եւ չար գազան է եւ ոչ անասուն. բայց հրամանաւն Աստուծոյ միս ոչ ուտէ, այլ հանապազ քնի եւ յոյժ գիրանայ:

ՄԾԳ. ԾԻԾԱՂ ԶՐՈՒԱՍՏՐԻ
(91 D)

Դարձեալ ասեն իմաստունքն, թէ սահմանքն է բնութեամբ. զի մանուկն լալով ծնանի. եւ մինչ 'ի .Խ. օրն զլալն գիտէ եւ զքնելն եւ ոչ գիտէ ծիծաղիլ. եւ մի ոմն ծիծաղեցաւ, որ էր անունն Զրուաստր. եւ կատարած նորա չար եղեւ. զի դեւքն այրեցին զնա հրով:

Ցուցանէ առակս, թէ պահքն տրտմութիւն [է] յամենայն աշխարհի. որ ոչ ուրախանանք. ապա թէ ուրախանամք ուտելով 'ի ձիթոյ եւ 'ի գինոյ եւ չարիք գործելով եւ յիշունց տալով՝ այսպէս կենալով, զպահքն մեր ոչ ընդունի Աստուած՝ չարչարիմք մարմնով եւ չարդարանամք հոգով. եւ որպէս սատանայ այրի 'ի հուրն յաւիտենական:

ՄԾԴ. ՈՂՈՐՄԱԾ ՇՈՒՆ
(93 D)

ՎԱՍՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆՑ. Ասի 'ի պատմութեանց, թէ կայր պարոն մի խիստ նաքաս եւ պինտ, որ ոչ առնէր ողորմութիւն աղքատաց. եւ ունէր որսական շուն մի եւ խիստ սիրէր զնա. եւ 'ի նմին քաղաքի կայր աղքատ մի եւ ունէր շուն մի. եւ սով էր եւ ոչ կարաց պահել եւ ոչ սպանանել. եւ տարաւ կապեաց 'ի ծառ մի. որ գայլն ուտէ զնա. եւ այն պարոնի շունն գնաց գտաւ զնա. եւ յամէն օր զիւր հացի կէսն ուտէր եւ զկէսն տայր այն շանն: Աւր մի յորս եղաւ պարոնն եւ տեսաւ զիւր շունն խիստ լաղար եւ մեղադրեաց զշնապանին եւ ասաց. զինչ որ ես տվել եմ, դու ես կերել՝ շանն չես տվել. ասէ շնապանն. ես կու տամ. ապա դայ զկէսն կուտէ եւ զկէսն այլ շան կու տանի: Այն օրն փորձեաց պարոնն եւ զշան հացն ետուր. զկէսն կերաւ եւ զկէսն տարաւ այն շան, 'ի հետ գնացին տեսան: Եւ պարոն տեսաւ եւ զանողորմ վարքն փոխեաց եւ ուսաւ ողորմութիւն 'ի շանէն եւ առնէր աղքատաց:

Տես. զի անողորմ մեծատունքն 'ի շունն կու գթան եւ 'ի շունն հոգան եւ [յ]աղքատքն ոչ գթան. եւ շունքն Աստուծոյ ողորմածութիւն գիտեն եւ մարդիկք ոչ. շունքն զԱստուծոյ օրէնքն գիտեն եւ մարդիկք ոչ:

ՄԾԵ. ՍԷՐ ԴՍՏԵՐ
(94 D)

Ասի 'ի պատմութեանց, թէ թագաւոր մի բարկացաւ ումեմն իշխանի եւ արկ 'ի բանտ եւ ասաց ոչ տալ նմա կերակուր. զի 'ի սովոյ մեռցի. բայց իշխանն ունէր դուստր մի. եւ խիստ սիրէր զհայրն. եւ յահէ թագաւորին ոչ տանէր հաց. բայց կաթամբ դիեցուցանէր զհայրն. զի տղայի մայր էր եւ ապրեցուցանէր զհայրն. եւ իմացաւ թագաւորն զսէր դստերն, որ ունէր առ հայրն, եւ ազատեաց զնա:

Նշանակէ բանս, թէ որ ոք զաւակ ունի եւ յիշատակ աշխարհի, պարտէ հանապազ ողորմութիւն առնել աղքատաց եւ քահանայից ժամու եւ պատարագի. զի որ ողորմի աղքատին, փոխ տայ Աստուծոյ: Քրիստոս ասէ. եկայք աւրհնեալք Հօր իմոյ եւ այլն. զի յորժամ ողորմին աղքատաց, Աստուած հայի 'ի գութս յիշատակաց եւ ազատէ 'ի բանտէ դժոխոց: Դարձեալ զի թէ երկրաւոր թագաւորքս խղճան եւ ողորմին մահապարտեաց, ապաքէն եւս առաւել երկնաւոր թագաւոր լսէ թախանձանաց, որ վասն ննջեցելոց յետամնացքն առնեն:

ՄԾԶ. ԻՄԱՍՏՈՒՆ ԴԱՏԱՒՈՐ
(95 D)

[Զ]ԶԱՒԱԿԱՑ, ՈՐՈՑ ԱՆԿԵՂԾ ԵՆ 'Ի ՀԱՒԱՏՍ Ասի 'ի պատմութեանց, թէ էր տանուտէր մի եւ ունէր կին վատ. եւ կռուեցաւ կինն եւ ասէ. կարծես, թէ. .Գ. որդիքդ 'ի քեզանէ են. մինն է քոյն եւ երկուքն բիճ են. եւ նա էհարց, թէ ո՞րն է իմն. եւ կինն ոչ ասաց. եւ յորժամ մեռանէր հայրն, ասաց. ամենայն ինչքն իմ հարազատ որդոյ իմոյ լիցի. եւ կռուէին եղբարքն, թէ ես եմ հարազատ որդին. եւ միւսն, թէ ես եմ. եւ

գնացին առ իմաստուն դատաւոր մի. հրամայեաց դատաւորն զհայրն իւրեանց հանել 'ի գերեզմանէն եւ նետաձիգ առ[ն]ել 'ի նմայ. զոր հարկանէ զհայր եւ թափ հանէ զնետն, նայ է հարազատ որդին: Եւ Բ. որդիքն հարին զհայրն եւ ճշմարիտ որդին ոչ ձգեաց նետ, այլ քարշեաց դանակ. զի սպանցէ զեղբարքն. եւ ելաց դառն արտասուօք եւ թաղեաց զհայրն. եւ գիտացին, որ նայ էր հարազատ որդին. եւ ետուն զհայրենի ինչքն 'ի նմայ:

Այսպէս Քրիստոսի Աստուծոյ մերոյ են որդիք բազում հոգեւորք. բայց ոմանք խորթք են, որպէս անհաւատք, որ ոչ ասեն Աստուած եւ մահու չափ մեղօք գործելով զմեղս խոցոտեն զՔրիստոս, որպէս ասէ Պօղոս, թէ այնպիսիքն զՔրիստոս միւսանգամ չարչարեն եւ խաչեն. այսպիսիքս ոչ լինին ժառանգ հօրն երկնաւորի: Այլ նոքա որ սիրեն զհայր իւրեանց զՔրիստոս եւ նախանձաւոր լինին հաւատոց նորա. զի յորժամ լսեն նախատինս վասն Քրիստոսի, ոչ համբերեն նախատանաց, այլ տան զանձինս իւրեանց 'ի մահ վասն Քրիստոսի. այսպիսիքս են ժառանգորդ արքայութեան Աստուծոյ, որպէս սուրբքն ամենայն 'ի կռապաշ[տ]ից չարչարեալ մեռան:

ՄԾԷ. ԸՆՉԵՂ ԱՅՐ ԵՒ ԵՐԿՈՒ ՈՐԴԻՔՆ
(96 D)

ՎԱՍՆ ԲԱՐԻ ԵՒ ՄԻԱՄԻՑ ՄԱՐԴՈՅ. Ասի 'ի պատմութեանց. էր այր մի եւ ունէր .Բ. որդի եւ ունէր զանձս բազում. կէսն պահած եւ կէսն յայտնի էր. եւ զյայտնի զանձն բաժանեաց որդւոց իւրոց եւ զծածուկ ոչ յայտնեաց նոցա. եւ գնացեալ յօտար աշխարհ՝ աղքատացաւ կամաւ եւ եկն առ որդիսն փորձել զնոսա եւ խնդրեաց 'ի նոցանէ ողորմութիւն, եւ մինն ամենեւին ոչ գթացաւ 'ի հայրն, այլ անտես արար նախատանօք. իսկ միւսն գթացաւ 'ի հայրն եւ զոր ունէր, ետ հօրն: Եւ նա ետես զգութ որդոյն եւ ասէ. այս է հարազատ որդին իմ. եւ բացեալ զծածկեալ զանձն՝ ետ նմայ եւ զմիւսն արտաքսեաց 'ի տանէն եւ 'ի ժառանգութենէն:

Ցուցանէ բանս, թէ Աստուած, որ է ճշմարիտ ամենայն արարածոց եւ Հայր ըստ արարչութեան, ունի զանձս .Բ. ցեղ՝ մէկ զերկնից արքայութիւնն, որ ծածկեալ է 'ի մարդկանէ, եւ Բ. զաշխարհիս մեծութիւնն, որ հասարակ ամենեցուն բաշխէ, եւ ապա 'ի ձեռն աղքատաց փորձէ զճշմարիտ որդիսն խնդրելով ողորմութիւն. եւ որք ոչ առնեն ողորմութիւն, ոչ տայ Հայրն մեր Աստուած յերկնային զանձուցն զփառքն իւր. այլ որք առնեն ողորմութիւն, տայ զանձ զերկնից արքայութիւն. որպէս ասէ. եկայք աւրհնեալք հօր իմոյ. զի քաղցեա եւ ետուք ինձ. եւ զանողորմսն արտաքսէ 'ի տանէն ասելով. երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտանական: Ամէն մարդ զինքն թող ծախէ եւ աղքատի տայ. թէ յայս կեանքս վասն Աստուծոյ ծառայ լինիս այլոց, յայն կեանքն թագաւոր լինիս եւ որպէս զիրեշտակ պատուիս:

ՄԾԸ. ԻՂՁՔ ԵՐԻՑ ՈՐԴՒՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ
(98 D=27 G)

ՎԱՍՆ ԽԱՂԱՂԱՐԱՐԱՑ. Ասի 'ի պատմութեանց, թէ [էր] թագաւոր մի եւ ունէր .Գ. որդի. յաւուր միում հարցին միմեանց եւ ասեն. թէ դու անասուն լինէիր, զի՞նչ կամէիր լինել. եւ ասէ մինն. մարդ չէի, խնդրէի յԱստուծոյ. զի առիւծ լինէի. զի թագաւոր է եւ պատառէ զամենայն. եւ միւսն ասէ. խնդրէի արծիւ լինել. զի թռչնոց թագաւոր է եւ պատառէ զամենայն եւ 'ի բարձր գնայ. իսկ միւսն ասէ. ես խնդրէի աղաւնի լինել. զի անմեղ է եւ ոչ ումէք առնէ վնաս եւ էրամասէր է եւ ոչ թռչի միայն, այլ սիրէ զխաղաղութիւն: Եւ թագաւոր էր հայր նոցա՝ գաղտաբար ունկն դնէր եւ լսէր 'ի նոցանէ զայս. եւ գիտաց. զի .Բ. որդին մինն պատառօղ լինի մարդկան եւ մինն բարձրամիտ եւ հպարտ եւ պատառող: Եւ ոչ կացոյց զնոսա թագաւոր եւ գիտաց. զի միւս որդին լինի խաղաղարար. զնա կացոյց թագաւոր:

Ցուցանէ առակս, թէ զազանաբարոյքն եւ բարկացողքն եւ պատառողքն մարդկան եւ եւս իւրեանց հոգոյն ոչ թագաւորեն (այսպ.) զարքայութիւնն Աստուծոյ, այլ անմեղքն եւ խաղաղարարքն, որպէս ասէ աւետարանն. երանի հաղաղարարաց. զի նոքա որդի Աստուծոյ կոչեսցին:

ՄԾԹ. ՀԱՐՑ ՎԱՍՆ ԴԺՈԽՈՑ
(100 D)

ՎԱՍՆ ԴԺՈԽՈՑ ԴԱՌՆՈՒԹԵԱՆ. գրեալ է 'ի վարս հարանց, թէ սուրբ հայր մի ետես զմի 'ի դիւացն եւ եհարց վասն դժոխոց տանջանացն, թէ որքան դառն է չարչարանքն. եւ ասէ դեւն. անթիւ եւ անպատմելի է չարչարանքն, ո՞վ կարէ ասել. բայց Սադայէլի տեսն եւ զազիր եւ ժահահոտութիւն դժոխոցն այնպէս չար է. որ լաւ է, թէ յարեւմտից յարեւելս կրակ լինի, լաւ է յայն կրակն 'ի ներս գնալ քան թէ զդժոխոց ժահահոտութիւնն առնուլ եւ զՍադայէլի զազիր կերպարանքն տեսանել:

Ո՛հ թէ որպիսի դառն եւ չար տանջանք կայ մեղաւորաց. եւ ոչ մարդիկք զի 'ի հնա[րա]ւոր ժամանելս հնարին եւ փրկին բարի գործելով:

ՄԿ. ՍՊԱՆՈՂ
(101 D)

ՎԱՍՆ ԲԱՐԻ ՄՏԱԾՈՒԹԵԱՆՑ Ասացեալ է յիմաստնոց. թէ զոք խոցեն եւ սպան[ան]են եւ սպանողն դարձեալ հայի 'ի խոցուածն, նա կրկին անգամ բղխէ արիւն 'ի խոցուածոյն:

Ցուցանէ բանս, թէ Քրիստոս մեր խոցեցաւ եւ մեռաւ. յորժամ զխոցուած կողին իւր եւ զչարչարանքն եւ զմահն, որ վասն մեր, 'ի միտ ածեմք ջերմեռանդ սիրով, յայնժամ վերստին կաթէ արիւնն 'ի կողէն Քրիստոսի 'ի սիրտս մեր. եւ այնպէս համարիմք, թէ այսաւր նոր խոցեալ է Քրիստոս վասն մեր:

ՄԿԱ. ՎՆԱՍԱԿԱՐ ԱՆԴԱՄ
(103 D)

ՎԱՍՆ ՎՆԱՍԱԿԱՐ ԱՆԴԱՄՈՑ Եղեւ հարցումն 'ի մէջ իմաստնից, թէ որն է 'ի յանդամոց մարդկան առաւել վնասակար եւ բանպասեցին զփորն. զի ամենայն ոք վասն ուտելոյ համար աշխատի. եւ փիլիսոփայ մի ասաց, թէ քան զամենայն անդամս աչքն առաւել վնասակար է հոգոյն. զի թէ ոմն 'ի ծնէ կոյր լինի, նա ամէն ցեղ կերակրոյ եւ զսգեստոյ հաւանի, զի ոչ գիտէ զլաւն եւ զվատն եւ ոչ ցանկա՛ կարմիր սայի եւ ոչ սեւ աղլազի, զի ոչ տեսանէ զգոյնն. այլ որ աչք ունի, ոչ հաւանի ամէն ցեղ կերակրոյ եւ հանդերձի, այլ զազնիւն խնդրէ, որպէս զարդասէր կանայք որ զայլքն զարդարեալ տեսանեն եւ խնդրեն զնոյն: Եւ միտք այլ վնասակար է. զի 'ի բազում չարիս ընթանայ. ով ոք կամի որ Աստուծոյ պիտանի լինի, պահք կենայ եւ պարկեշտութիւն ընթանայ եւ պարկեշտ ուտէ եւ գինի ոչ խմէ: Եւ ցանկութիւնն այլ չար է. զի ցանկութիւն յաղթէ եւ քնոյն շատ քնիլն զմարդ ծուլացուցանէ եւ յաղօթից հանէ. զմիտք մի թողուր՝ շատ չարի հետ շրջի, զցանկութիւն բորբոքէ եւ յաղթէ զքեզ. եւ շատ ուտելն եւ աչօք արատ հայելն՝ սոքա այլ զայլ զցանկութիւն բորբոքեն:

ՄԿԲ. ԿՈՒՐԱՔԱԾ ՇՈՒՆ
(104 D)

Ասի յառակաց, թէ շունն ուսուցանեն կուրաքաշ. դնեն զչւանն 'ի ձեռն կոյր մարդոյն եւ կապեն 'ի վիզ շանն. եւ չար մարդիկք զկոյրն կատակեն եւ տնազ առնեն, ոսկր 'ի ցեխն ձգեն առաջի շանն. եւ շունն բախէ 'ի հետ ոսկրին 'ի ցեխն եւ անկանի կուրն 'ի վերայ բերանոյն 'ի մէջ գոեհի կաւին եւ շաղախի յաղբն. եւ մարդիկք ծիծաղին եւ ուրախանան 'ի վերայ նորա:

Նշանակէ առակս, զի մեղսասէր մարդոյ միտքն կոյր է եւ շուն է մարմին. ընդ որ քարշէ, հոգին 'ի հետ երթայ. եւ ոսկրն հեշտութիւն մեղաց է եւ շաղախէ զմարմինն զազիր մեղօք. եւ գնան 'ի դժոխքն, զոր սատանայ ցուցանէ մարմնոյն զմեղս գործել, եւ ծիծաղի եւ ուրախանայ 'ի վերայ մեղաւորաց:

ՄԿԳ. ԱՆՀՈԳ ՊԱՐՏԱԿԱՆ

(105 D)

ՎԱՍՆ ԱՆՀՈԳՈՒԹԵԱՆ Ասի 'ի պատմութեանց, թէ ոմն տանուտէր 'ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպօլիս անթիւ անչափ պարտական էր. եւ ոչ ոք գիտէր՝ եւ ինքն չհոգայր ամենեւին. այլ անհոգ 'ի քունէ լինէր. եւ յորժամ մեռաւ, յայտնեցաւ, թէ պարտական է. եւ լուեալ կայսերն ասաց. բերէք զանկողին նորա. զի այն զօրաւոր է եւ քուն բերէ մարդոյ. զարմանք է եւ հիացումն, թէ այնչափ պարտականի քունն ոնց կու տանի:

Ցուցանէ բանս, թէ որպէս անհոգ 'ի քուն կարէ լինել, որ բազում մեղաց պարտական է. ապա չէ զարմանք. զի ծոյլ մարդոյ միտքն կոյր լինի. եւ ծուլութեամբն ոչ ճաշակեն 'ի հոգեւոր քաղցրութենէն, որ է ապաշխարութիւն. եւ ոչ լուսաւորի միտք նոցա. եւ յաղթեալ են 'ի սատանայէ եւ իջանեն 'ի դժոխս եւ այրին 'ի հուրն յաւիտենից:

ՄԿԴ. ԽԵԼՔ ԵՒ ԳԱՆՁ
(106 D=5 G)

Ասաց իմաստուն մի, թէ ով ունի խելք, նա ունի գանձս բազումս, թէպէտ եւ աղքատ է. եւ թէ խելք եւ իմաստութիւն ոչ ունի եւ մէկ տուն ոսկի եւ արծաթ ունի, դառն աղքատ է նա. զի փութով կորուսանէ զամենայն զգանձս իւր. իսկ որ ունի իմաստութիւն, զկորուսեալ գանձն գտանէ:

ՄԿԵ. ԲԱՁՄԱՇՐՋՈՒԹԻՒՆ
(107 D)

Վեհ իմաստուն մի ասաց. եթէ ոք շրջի 'ի գաւառէ 'ի գաւառ եւ 'ի քաղաքէ 'ի քաղաք, ոչ բազում ընչից տէր լինի եւ ոչ իմաստութեան. եւ զոր ունի, զայն եւս կորուսանէ. այլ այն է բարի. զի նստի մարդ լռիկ եւ հանդարտ 'ի տանն իւրում 'ի նմին գաւառն եւ աշխատի մարմնաւոր. զի հոգին այլ ապրի եւ մարմին. այլ այս է իմաստութիւն:

ՄԿԶ ԻՄԱՍՏՈՒՆ
(108 D)

Եւ իմաստուն մի ասաց, թէ այն է իմաստուն, որ նման աղի համեմէ զամենայն մարդ եւ նման ճրագի լուսաւորէ զմերձկայքն եւ զանկեալքն 'ի մեղս հոգեւոր խրատով կանգնէ եւ զտգէտսն ուսուցանէ:

ՄԿԷ. ԳԻՏՈՒՆ
(109 D)

Իմաստուն մի ասաց, թէ ես զնա ոչ ասեմ գիտուն եւ իմաստուն, որ բազում գիրս եւ բանս 'ի միտ առեալ եւ պատմէ. այլ զնա զովեմ, որ զտգէտն ուսուցանէ եւ զխաւարեալքն 'ի մեղս լուսաւորէ եւ զբարին քարոզէ եւ զոր այլոց պատմէ, եւ ինքն զայն գործէ եւ զանձն իւր բարի օրինակ ցուցանէ մարդկան:

ՄԿԸ. ԿԱՏԱՐԵԱԼ ԳԻՏՈՒՆ
(110 D)

Այլ ոմն իմաստուն ասաց, թէ նա է գիտուն կատարեալ, որ զայն կամաւ յանձն առնու, որ յակամայ գալոց է 'ի վերայ բռնութեամբ:

Ցուցանէ բանս, թէ նա է Աստուծոյ մարդ, որ զմահն կամաւ յանձն առնու եւ սպանանէ զանձն իւր պահօք եւ աղօթիւք, տքնութեամբ եւ չարչարանօք եւ բարի գործովք կենա 'ի յայս կեանքս, 'ի յայն կեանքն զարքայութիւն ժառանգէ:

ՄԿԹ. ԿԱՏԱՐԵԱԼ ԻՄԱՍՏՈՒՆ
(110$_2$ D)

Այլ ոմն իմաստասէր գրեաց, թէ նայ է կատարեալ իմաստուն, որ ոչ մոռանայ զմահն եւ զդատաստանն Աստուծոյ:

ՄՀ. ԻՄԱՍՏՈՒՆ ՁԱՒՐԱԿԱՆ
(111 D)

Մի ոմն իմաստուն զօրական երթայր 'ի պատերազմ եւ կաղէր .Բ. ոտիւքն. եւ ոմն 'ի զօրացն ասէ ցնա. ով լալի եւ ողորմելի, ո՞ւր երթաս. զի շուտով սպանանեն զքեզ. քանզի փախչիլ ոչ կարես: Եւ նա ասէր. ով եղբար, 'ի պատերազմէ ոչ է պարտ փախչել, այլ կանգնիլ եւ կռուիլ եւ յաղթել:

Ցուցանէ բանս, թէ պարտէ համբերել եւ կռուել ընդ սատանայի եւ ընդ չար խորհուրդս նորա, զոր արկանէ 'ի սիրտս մեր. զի ամենայն չար խորհուրդ 'ի սատանայէ լինի. եւ այն է ծածուկ մարտն եւ կռիւն սատանայի ընդ մեզ. ոմանք 'ի մտաց իւրեանց ասեն, բայց առանց սատանայի ոչ լինի. եւ այն մարդն, որ կռուի ընդ չար խորհուրդն իւր, եւ ոչ յաղթի, զմարտիրոսաց առնու եւ ընդ նմին պսակի:

ՄՀԱ. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ԵՒ ԻՄԱՍՏՈՒՆ ԱՅՐ
(112 D)

Իմաստուն մի ասաց. որպէս ընթանայ եւ փութայ ճանապարհորդն 'ի տուն իւր, թէպէտ եւ հանդիպի ցանկալի սահմանաց եւ դժուարի տեղաց, նոյնպէս պարտէ մարդոյ փութալ յիմաստութիւն եւ 'ի բարի գործս. զի մահն բնակեալ է 'ի ծոցս մեր նման օձի:

ՄՀԲ. ԻՄԱՍՏՈՒՆ ԻՇԽԱՆ ԵՒ ՅԱՂԹՈՂ ԹԱԳԱՒՈՐ
(114 D)

Կայր իմաստուն մի մեծ յազգէ եւ ունէր քաղաք մի շէն բազում բարեօք լցեալ. եկն թագաւոր մի եւ աւար եհար զքաղաքն. կուտեցին առաջի նորա. ասէ թագաւորն. մի տրտմիր, ո՞վ իմաստուն. ահա զամենայն բարիք քաղաքին քո քեզ տաց. զի մինչ յայս վայելեցեր, այլ ոչ կարես վայելել: Ասէ իմաստասէրն. զբարիքդ քաղաքիս, որ տաս ինձ, ո՞ւստի է ինձ յայս. զի ես ոչ 'ի լուծ եզանց վաստակեցայ եւ ոչ յարօր եւ 'ի մաճ ոչ զերկիր բրեցի եւ տնկեցի զայգիքդ. եւ մէրկ եկինք յաշխարհս եւ մերկ գնալոց եմք յաշխարհէս. եւ աշխարհի բարիքս աստ մնայ: Եւ գովեաց զնա թագաւորն եւ զարմացաւ ընդ իմաստութեան նորա եւ ասէ. լաւ է իմաստութիւն եւ պատուական քան զգանձս ոսկոյ եւ արծաթոյ եւ քան զամենայն մեծութիւն աշխարհիս, յորժամ դատաստանն խորհի: Իմաստուն ասէ. ով թագաւոր, յիսկզբանէ աշխարհիս, սուգն եւ զտրտմութիւն եղեւ բաժին մարդկան. եւ ես ո՞րպէս ուրախանամ, զի յամուր (=յամենայն աւր) զմեղքն իմ յիշեմ եւ զարհուրիմ եւ զարմանամ զԱստուծոյ ներելն, որ կու ներէ չարեաց իմոց, եւ դողամ 'ի դատաստանէ նորա: Ապա թէ յիմար մարդ լինի, որ ոչ կարէ իմանալ զկորուստ հոգոյ իւրոյ եւ ոչ զփառք եւ զպատիւ արդարոցն իմանայ եւ ոչ զտանջանք մեղաւորացն, այնպիսին ուրախանայ յաշխարհիս:

ՄՀԳ. ՑԱՒ ԵՒ ՄԵՂՔ
(115 D)

Երեալ (գրեա՞լ) է 'ի սրբոցն, թէ ով մարդ, զմարմնաւոր ցաւն քո մի ծածկեր 'ի բժշկաց. եւ զմեղս քո մի պահեր 'ի քահանայից. ով մարդ, մի դներ հուր 'ի հանդերձի քում 'ի պահեստ կամ 'ի ծոցդ եւ զմեղս

քո մի ծածկեր 'ի սրտի քում ընդ հ[ր]ոյդ եւ իջուցաներ զնա ընդ քեզ 'ի գերեզման. զի մեղքն հուր է յաւիտենական եւ 'ի հուրն այրէ զմարդ:

ՄՀԴ. ԻՄԱՍՏՈՒՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՔ
(117 D)

Ասի յիմաստնոց, թէ իմաստուն վաճառականք յորժամ յերկնչին յաւազակաց 'ի ճանապարհին, ոչ տանեն զգանձս իւրեանց ընդ ինքեանս, այլ տան 'ի փոխս զգանձս իւրեանց [յ]այնպիսի վաճառական, որ ունին յաշխարհն իւրեանց տուն եւ գանձ, եւ առնուն 'ի նմանէ ձեռագիր եւ երթայ խաղաղութեամբ եւ տանի զձեռագիր վաճառականին եւ առնու զգանձ իւր 'ի տանէ նորա:

Արդ՝ ուսուցանէ խրատս այս զմեզ, որք ունիմք ճանապարհ երթալ 'ի կենցաղոյս այս 'ի հանդերձեալ կեանսն եւ ոչ պարտիմք զկնի տանել զմեծութիւն աշխարհիս. զի բազումք են կողոպտիչք եւ աւազակք՝ սատանայ եւ աշխարհիս հեշտութեան պատրանքն եւ մեր մարմնոյս տկարութիւն. վասն որոյ տացուք աստ 'ի փարթամ վաճառականն՝ 'ի Քրիստոս Յիսուս 'ի ձեռն աղքատաց, որ են 'ի տեղի Քրիստոսի. առցուք դապալայ եւ գիր զաւետարանն իւր, որ ասէ հարիւրապատիկ զկեանսն ժառանգեսցէ. զի խաղաղութեամբ հասցուք յերկինս, որ գանձատուն է Քրիստոսի, եւ անդ առցուք զգանձն մեր, որ է յարքայութիւնն, եւ այնպէս արարին սուրբքն ամենայն:

ՄՀԵ. ՊԱՐԳԵԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ
(118 D)

Ասի 'ի պատմութեանց, թէ ոմն եկն առ Աղէկսանդր թագաւորն. զի էր յոյժ առատ. եւ խնդրեաց 'ի նմանէ սակաւ ինչ ողորմութիւն. իսկ նա ետ նմա քաղաք մի գեղեցիկ: Եւ ասեն իշխանքն. վասն է՞ր ետուր, զի ոչ էր արժան մարդն այնպիսի քաղաքին. ասէ թագաւորն. թէպէտ նա ոչ էր արժան, բայց ինձ արժանէ զգեղեցիկ իրքն տալ. զի ես առատ եմ:

Նշանակէ խրատս, թէ ոչ է պարտ մեզ մարմնաւոր իրք խնդրել 'ի Քրիստոսէ. զի անպատեհ է. վասն այն ուսոյց մեզ աւետարանն. խնդրեցէք նախ զարքայութիւնն նորա եւ այդ ամենայն մարմնաւորքդ յաւելցին ձեզ. զի թէպէտ անարժան եմք յերկնից արքայութեանն, այլ նմա վայել է տալ մեզ զարքայութիւն. զի երկնաւոր թագաւոր է եւ ամենայն թագաւորաց առատագոյն է:

ՄՀԶ. ՀԻՆԳ ՏԵՍԻԼՔ
(119 D)

Գրեալ է 'ի վարս հարանց, թէ ետես ոմն հայր տեսիլք .Ե. մարդ 'ի զանազան գործս. զի ոմն նստեալ 'ի վերայ բարձր աշտարակի եւ բացեալ զբերանն ծծէր զհողմն եւ յորժամ ոչ յագէր, մրուահարովն հարկանէր զհողմն. զի մտցէ 'ի բերան իւր. եւ այլ ոչ եւս յագէր: Երկրորդ զոմն տեսեալ. զի նստեր 'ի վերայ ժահահոտ գբոյ եւ հոտոտէր եւ ոչ յագէր զժահահոտութենէն: Երրորդ ետես զոմն յոյժ սովեալ. ուտէր զմարմինն իւր եւ ոչ յագէր: Չորրորդ զոմն նստեալ ետես 'ի գետեզրն եւ լնոյր զբերանն իւր աւազով եւ ոչ յագէր: Հինգերորդ զոմն ետես, զի նստեալ կայր 'ի վերայ բորբոքեալ հնոցի եւ բացեալ զբերանն լնոյր զբորբոքեալ հուրն 'ի բերանն եւ ոչ յագէր:

Եւ այսոքիկ 'ի հոգեւորն իմացեալ լինին. զի յաշխարհս յայս լցեալ է .Ե. ազգ յանզգամ եւ յիմար մարդկամբք: Նախ այն որ 'ի բարձր աշտարակ էր նստեալ, ցուցանէ զամբարտաւանս, որ ջանիւ կամին ժողովել զփառս աշխարհիս եւ ոչ յագեն: Երկրորդ որ նստեալ էր 'ի վերայ ժահահոտ գբոյն, ցուցանէ զբղջախոհսն, որք ժահահոտ եւ գէջ ցանկութեամբն ոչ յագենան, որ բուրէ 'ի գբոյ դժոխոցն: Երրորդն որ ուտէր զմարմին իւր եւ ոչ յագէր, ցուցանէ զնախանձոտս, որք տեսանելով զայլոց բարիս մաշին յանձինս իւրեանց նախանձովն, որք որպէս որդ զփայտն: Չորրորդ որ ուտէր զաւազն, ցուցանէ զագահսն. որ թէպէտ ջանան յագենալ արծաթով, կաշառօք եւ տոկոսեօք, այլ ոչ կարեն: Հինգերորդ որ նստեալ էր 'ի

վերայ հնոցին, ցուցանէ զբարկացողսն, որք լնուն հրով բարկութեան զհոգիս իւրեանց եւ ոչ յազին. որք եւ յայլս թափեն զհուր բարկութեան իւրեանց:

ՄՀԶա. 15 F Հայր մի տեսիլ էտես. եւ էր այր մի 'ի վերա աշտարակի մի կանգնեալ եւ զօթոյ զբազմութիւն կու ծծէր մրվահարով. եւ այս զհպարտն կու նշանակէր: Եւ դարձեալ էտես այր մի 'ի ծովէզերն եւ զբազմութիւն աւազուն, որ 'ի բերանն կու լնուր եւ ուտէր. եւ այն կու նշանակէր զազահն: Դարձեալ տեսանէր հոր մի աղբով եւ ժահահոտութեամբ. եւ այր մի 'ի վերայ անկեալ եւ 'ի ժահահոտ[ութ]ենէն ոչ կիշտացեալ. այն նշանակէր զպոռնիկն: Դարձեալ տեսանէր այր մի, որ էր 'ի վերայ թունտրի անկեալ եւ բոցն եւ մուխն 'ի բերանն 'ի ներս կու երթայր եւ ոչ ագենայր. եւ այս զբարկցւ"ց կու նշանակէր: Դարձեալ տեսանէր այր մի, որ զթեւերուն միսն կուտէր եւ զկռներուն եւ այն կու նշանակէ զորովայնամոլն եւ զբամբասողն: Դարձեալ տեսանէր այր մի, որ տունն կու այրէր հրով եւ նայ 'ի մէջ հրոյն եւ կամէր փախչիլ եւ ազատիլ 'ի հրոյն. այն նշանակէր զծոյլն, որ 'ի մէջ հրոյ անօրէնութեան կայր եւ ոչ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ կամէր ազատիլ 'ի ծուլութենէ:

ՄՀԷ. ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴԻՔ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱԿՆ ԵՒ ԴԱՏԱՒՈՐ
(120 D)

Ասի 'ի պատմութեանց, թէ կայր թագաւոր մի եւ ունէր բազում ճոխութիւն եւ Գ. որդի [եւ] ակն մի պատուական, որ առնէր բժշկութիւն. եւ նա ետ նշան որդոց եւ ասէ, թէ յետ մահուան իմոյ, որ ունի զակս զայս, նա առնէ զթագաւորութիւնս իմ. եւ յորժամ մեռանէր ետ զակն 'ի միոյ որդոյ իւրոյ: Եւ Բ. որդիքն արարին իւրեանց ապակի ակն 'ի նմանութիւն այնմ ակին եւ եկեալ վիճէին ընդ միմեանս վասն թագաւորութեան. եւ գնացեալ առ իմաստուն դատաւոր մի առնել նոցա դատաստան. եւ նա առեալ զակն եդ 'ի վերայ հիւանդին. եւ յայտնեցաւ ճշմարտութիւնն եւ նա ետ՝ զթագաւորութիւնն այնմ որդոյն, որ ունէր զակն պատուական:

Առակս ցուցանէ զթագաւորն ամենեցուն Աստուած, որ ունի բազում որդիս ըստ արարչութեան եւ ետ զպատուական հաւատքն քրիստոնէից միայն. թէ որ ունիցի զայս, նայ է ժառանգ արքայութեան ըստ այնմ, թէ որ ոք ոչ ծնցի 'ի ջրոյ եւ 'ի հոգոյ, ոչ մտանէ յարքայութիւնն Աստուծոյ. բայց բազում մարդիկք ունին զձեւ հաւատացելոց, այլ ոչ ճշմարիտ հաւատն. քանզի այլազգ սքանչելիք ոչ լինին, բայց միայն քրիստոնէից. զի սոքա ունին զճշմարիտ ակն. զի այնով ժառանգեսցեն զհայրենի արքայութիւնն:

ՄՀԸ. ՋՈՒԱԼ ՄՆԱՑՈՐԴԱՑ ԾԱՅՐԱՏ ՍԱՂՄՈՍԱՑ
(121 D)

Ասեն, թէ հայր ոմն տեսեալ զսատանայ. զի գնայր եւ ունէր 'ի շալակն մեծ ջուալ մի լցած. եհարց ցդեւն եւ ասէ. զի՞նչ է այդ, ով ամենաչար. ասէ դեւն. այս մնացորդ ծայրատ սաղմոսն է, զոր ծոյլ կրօնաւորք թողուն եւ ես ժողովեմ. զի այսու 'ի դատաստան մտանեմ ընդ նոսա յաւուրն յաւիտենին:

ՄՀԹ. ԽԵՑԳԵՏԻՆ ԵՒ ՁԱԳՔ
(122 D)

Ասեն, թէ խեցգետ[ի]ն խրատէ[ր] զձագս 'ի յողորդ ընթանալ զճանապարհն եւ ինքն թիւր գնայր: Իսկ նոցա տեսեալ զմայրն, որպէս գնայր, նոքա այլ այնպէս գնացին. եւ մայրն սաստէր նոցա ուղորդ գնալ. եւ նոքա ասէին. որպէս դու գնաս, նոյնպէս եւ մէք:

Այսպէս առաջնորդք, որ ծուռ գնան եւ զժողովուրդն խրատեն ուղիղ ընթանալ, նոքա տեսանեն, թէ զառաջնորդն որպէս գայ, նոյնպէս եւ նոքա:

ՄԶ. ԴԵՒ ՓԱՅԻԿ ՅՈՒԼԻԱՆՈՍԻ
(123 D)

Ասի 'ի վարս հարանց, թէ դեւ մի փայիկութիւն առնէր Յուլիանոսի Ուրացողին եւ փութով հասանէր յամենայն տեղիս, ուր առաքէր: Եւ 'ի ճանապարհին կայր խրճիթ մի սուրբ հօրն, որ աղօթէր. եւ ոչ կարեր յանցանել դեւն զքսան օր. զի .Ի. օր աղօթէր անդադար զսուրբն, ոչ եկեր եւ ոչ էարբ եւ ոչ ննջեաց բնաւ. եւ դարձաւ դեւն ամօթով՝ պատմեաց Յուլիանոսի, թէ աղօթքն սուրբ արգելեաց զիս՝ եւ ոչ կարացի անցանել ընդ այն ճանապարհն:

Տես, թէ որպիսի է աղօթից զօրութիւնն. զոր մեք ծուլութեամբ անցուցանեմք զսակաւ ժամանակս, զոր ունիմք:

ՄԶա. 37 F Յերբեմն ժամանակ 'ի յաշխարհն Կիլիկեցոց համբաւ բերին, թէ Շամբցին ժողովք արարեալ եւ 'ի վերայ տեղ"ցս կու գայ: Եւ լվեալ թագաւոր եւ ասաց, թէ մարդ մի գտէք, որ .Ռ. դրամ առնու եւ երթայ եւ 'ի .Գ. օրն խապար բերէ, որ մեք այլ պատրաստութիւն առնեմք եւ 'ի դէմ երթանք. որ 'ի մեր աշխարհս չմտանէ հեծելն. եւ գտին այր մի կախարդ, որ ասաց, թէ ես երթամ եւ յ.Գ. օրն խապար բերեմ. եւ գնաց եւ 'ի .Ե.Զ. աւրն պ"յ խապար էբեր եւ ասացին, թէ յէ՞ր յուշացար. եւ ասաց, թէ 'ի .Գ. օրն 'ի յերկրէս հապայ ելայ. եւ հարցին զպատճառն. եւ ասաց, թէ աղօթիւք պարըսպեալ էր եւ 'ի տեղ մի աւեր վանք մի գտայ, որ աղօթք եւ պատարագն խափանել էր եւ անդ ելա. եւ աղին անդ մտաւ 'ի յաշխարհն եւ աւէրեց. եւ թագաւորն ուխտ էդիր, թէ 'ի դառնալ իմ 'ի հեծելէս, զայն վանքն շինեմ. զի աշխարհի պարիսպն՝ աղօթքն եւ պատարագն [է]: Եւ Շամպնի Սըսու. ԺԵ. Ի. աւուր ճանապարհ է:

Եւ աղօթքն այնչափ զօրութիւն է, որ ոչ թէ զմարմնով պատերազմն դարձուցանէ, այլ եւ զսատանայ կու սանձահարէ:

ՄԶԱ. ԵՐԿՈՒ ԿԱՆԱՅՔ ԵՒ ԿԾԻԿ ԵՒ ԴԱՏԱՒՈՐ
(125 D)

Ասի [յ]առակաց, թէ .Բ. կին վիճէին ընդ միմեանս 'ի վերայ մանածի կծկի միոյ. իւրաքանչիւր ոք [ասէր], թէ իմ է կծիկս այս. եւ երթեալ առ դատաւոր մի արդար եւ ճարտար. եւ նա եհարց ցմինն, թէ քո կծկաթոռն սեւ՞ է թէ սպիտակ. նա ասաց, թէ սեւ է. եւ մինն ասաց, թէ սպիտակ. եւ ապա զմանածն յետ քակեցին զամէնն. որ ուղիղ ասաց, նորա էր մանածն:

Ցուցանէ առակս, թէ յաւուրն դատաստանի սատանայ եւ մարդն վիճին. ասէ սատանայ, թէ ամենայն գործք քո, [որ] պատրաստեալ է քո, իմ է. ապա բան 'ի կծկաթոռն, որ է խիղճմտանք. թէ սպիտակ լինի կծկաթոռն, այսինքն խիղճ մտանաց յիստակ եւ արդար, յայնժամ երթայ [յ]արքայութիւնն. զի զամենայն գործս իւր վասն Աստուծոյ արարեալ. թէ սեւ լինի, այսինքն չար եւ խաւարային գործով հոգին, յայնժամ սատանային տարեալ զհոգի նորա՝ տանջէ 'ի դժոխս:

ՄԶԲ. ՏԽՈՒՐ ԹԱԳԱՒՈՐ
(126 D)

Ասի 'ի պատմութեանց, թէ կայր ոմն, որ բնաւ ոչ ուրախանայր. բայց արդար դատաստան առնէր: Եւ օր մի արարին ընթրիս ժողովուրդքն վասն թագաւորին, եւ բերին գուսան եւ երգեցիք. նա ոչ ուրախացաւ. եւ եղբայր թագաւորին եհարց, թէ ընդէ՞ր ոչ ուրախանաս. եւ ասէ. վաղն տաց քեզ պատասխանի: Եւ վաղիւն հրամայեաց փողահարացն փող հարկանել. եւ երկեան յոյժ. եւ ետ բերել զեղբայր իւր եւ նստոյց զնա մերկ 'ի վերայ փթած աթոռի մի եւ շեղջ կրակ 'ի ներքոյ յաթոռոյն եւ սուր մի մերկ բարակ դերձանով կախեաց 'ի վերայ գլխոյն եւ սուր մի յառաջ կողմանէ ցցեաց եւ սուր մի յետուստ կողմանէ եւ մէկ սուր յաջմէ եւ մէկ 'ի ձախմէ. եւ ետ բերել բազում գուսանս եւ երգեցիկս եւ սեղան բարելի առաջի նորա: Եւ ասէ թագաւոր ցեղբայրն իւր. ընդէ՞ր ոչ ուրախանաս. եւ նա ասէ. որպէ՞ս կարեմ ուրախանալ 'ի մէջ այսչափ նեղութեանցս. ասէ թագաւորն. նոյնպէս եւ զիս տեսանեմ ես 'ի մէջ բազում

նեղութեանց. քանզի որպէս դու վախեցար 'ի ձայնէ փողոյն իմոյ եւ զի դու ինձ ոչ ինչ ես վնասակար, նոյնպէս ես երկնչիմ 'ի յետին փողոյն ձայնէ, որ գոչէ առաջի ահեղ դատաւորին. եւ ես զիս առաջի Աստուծոյ կու թուիմ. եւ փտեալ յաթոռ իմ մարմինս է եւ սուր կախեալ 'ի գլխոյ իմոյ է դատաստանն Աստուծոյ. եւ սուր յառաջս է իմմէ յիշատակութիւն մեղաց իմոց. եւ սուր յետուստ կուսէ իմմէ յիշատակ է մահուան իմոյ. եւ սուր 'ի յաջ կուսէ է հեշտութիւն եւ մեծութիւնս աշխարհիս եւ մարմնոյս կիրքն, յորմէ երկնչիմ, գուցէ զրկիցեն զիս յերկնից թագաւորութենէն: Եւ սուրն յահեկէ է բազմութիւն մեղաց իմոց՝ զիս 'ի ձախակողմեան դասն ջանայ դասել եւ ընդ դիւացն տանջել. վասն այսորիկ զայս ամենայն զմտածելով՝ ոչ կարեմ ուրախանալ: Եւ ամենեքեան լուեալ փառս ետուն Աստուծոյ, որ այնպիսի ծառայ կայր Աստուծոյ եւ նոքա ոչ գիտէին. երանի թէ ամէն մարդ զայն ահագին ձայն փողոյն 'ի միտ ածէր, որպէս թագաւորն, եւ ոչ բնաւ ուրախանայր յայս յաշխարհս:

ՄՁԳ. ՏԻԳՐԻՍ ԵՒ ՈՐՍՈՐԴՔ ՀԱՅԵԼԵԱՒ
(128 D)

Եւ աստ գիտելի է, զի իմաստունք օրինակ բերեն ժրութեան միշտ եւ ասեն, թէ [է] գազան մի, որ կոչի տիգրիս՝ յոյժ ահագին. եւ յորժամ ձագ հանէ, գնա 'ի հեռի տեղի, գնան յորսորդքն առնուլ զձագն եւ յոյժ երկնչին 'ի նմանէ, զի պատառող է. եւ 'ի փախչելն որսորդաց դնեն 'ի ճանապարհին .Գ. տեղ հայելի. եւ յորժամ գազանն հոտովն իմանայ, որպէս զնետ ընթանայ զկնի որսորդացն. իբրեւ հասանի յառաջին հայելին, տեսանէ զպատկերն իւր 'ի մէջ հայելոյն, որպէս զձագն իւր, եւ կանգնի սակաւ հանդարտի. նոյնպէս եւ յերկրորդ եւ յերրորդ եւ յամենայ. եւ որսորդք զճանապարհն [երթան]. եւ այլ ոչ կարէ հասանել:

Նոյնպէս հոգեւորապէս տիգրիս գազանն ցուցանէ զառաքինի եւ զապաշխարողն մարդն, որ բազում հոգեւոր ձագս հանեն բարեգործութեամբ, այլ յորժամ 'ի դուրս ելանեն 'ի բունէն, նոյն ժամայն մոռանան զհոգիս իւրեանց եւ հոգան զայլ ոք եւ 'ի մեղս անկանին, եւ որսորդն սատանայ գայ եւ զամենայն բարեգործս գողանայ 'ի նոցանէ. եւ յորժամ տրտմի եւ խնդրէ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ, գնա զկնի նոցա եւ խնդրէ զձագս իւր. այլ սատանայ դնէ ընդդէմ նոցա .Գ. հայելի. որպէս ասէ Յոհան 'ի Կաթուղիկէքն երկրորդ գլուխն. ամենայն ինչ որ յաշխարհի, ցանկութիւն է մարմնոյ եւ աչաց՝ եւ ամբարտաւանութեան սրտի կենացս, որ ոչ է 'ի հօրէ, այլ յաշխարհէ աստի է. զի յորժամ զոչանայ 'ի մեղացն եւ սկսանի յապաշխարութիւն, թէ ոք պատուէ զինքն, առաւել ուտէ եւ ըմպէ եւ ուրախանայ եւ թողու զտրտմութիւն, որ է յառաջին հայելին. եւ վասն հարստութեան եւ մեծութեան յաշխարհիս, որ է .Բ. հայելին, եւ վասն փառաց եւ պատուոյ աշխարհիս, որ է .Գ. հայելին, մոռանայ գնալ 'ի խոստովանութիւն:

Արդ՝ ընդդէմ խաբէութեան սատանայի իմաստունք հնարք գտանեն. զի ասեն, թէ փայիկն 'ի փայծղանէն երակ առնու. որ սուր եւ միշտ գնան: Ծաղրն 'ի փայծեղէն լինի. ցուցանէ զուրախութիւն աշխարհիս. եւ այս փայծեղէս պարտէ երակ առնուլ. այսինքն զուրախութիւն աշխարհիս կտրել եւ Գ. ազգ հայելիս, որ է .Գ. ազգ մեծութիւն աշխարհիս, ոչ հայել. այլ զհետ սատանայի պարտէ ընթանալ խոստովանութեամբ եւ խլել զձագս բարկութեամբ 'ի նմանէ. ապա պարտէ մեզ հանապազ ժիր ընթանալ, որպէս ասէ Քրիստոս. որ համբերեսցէ իսպառ, նա՛ կեցցէ:

ՄՁԴ. ԿՈԿՈՐԴԻԼՈՍ ԵՒ ԱՒՁ
(129 D)

Եւ աստ գիտելի է. զի պարկեշտութիւն յոյժ յօգուտ է վասն հոգեւոր ընթանալոյն. եւ զայս ցուցանեմ .Բ. օրինակաւ: Նախ թէ ոք ունի այսպիսի թշնամի, որ հարկիւ հանապազ 'ի մօտն գայ եւ ոչ կարէ բժշկել, պարտէ պատրաստ կենալ 'ի կերակրոց եւ ըմպելեացն. որ դեղ չառնեն եւ սպանանեն զնա. նոյնպէս աշխարհ եւ մարմինս թշնամի է մեր եւ ոչ կայ հնար որոշիլ 'ի սոցանէ: Վասն այն պարտէ մեզ պատրաստ կենալ 'ի վատ կերակրոց, որպէս ասեն իմաստունքն, թէ է գազան մի մեծ, որ կոչի կոկորդիլոս, եւ օձ մի փոքր թշնամի է նորա. թ[է] տեսանէ գազան զօձն, նա ոտիւքն սպանանէ զնա. այլ օձն յոյժ հնարաւոր է.

գնա 'ի կանաչ մարգ եւ թագչի. եւ գազանն յոյժ սիրէ զկանաչ խոտն. եւ օձն ընդ խոտին մտանէ 'ի փորն եւ զթոյնքն հեղու եւ զաղիքն կտրատեալ սպանանէ:

Հոգեւորապէս կոկորդիլոսն ցուցանէ զսեռս մարդկան եւ զօձն սատանայ, որ մարդիկք սպանանէ այն կերակրովն, զոր սիրեն մարդիկ. անդ թաքուցանէ զինքնս ատանայ. զի թէ զփառս եւ զպատիւ սիրեն, սատանայ ծածկէ զինքն մեղօք պոռնկութեամբ. թէ զհաստատութիւն սիրեն, սատանայ ծածկէ զինքն ագահութեամբ: Դարձեալ գազան ցուցանէ զմեծատունս եւ օձն զմահ. որ յոյժ երկնչի 'ի մահուանէ եւ յայնժամ տեսանեն զմահն, յորժամ հիւանդանան, այլ բժիշկ բերեն եւ ազգի ազգի դեղս առնուն. եւ յորժամ [ող]ջանան, գիտեն, թէ 'ի մահուանէ փրկեցան եւ զմահն առ ոտն կոխեն եւ սկսանին զանազան կերակուր ուտել եւ այնչափ ուտեն, որ դարձեալ հիւանդանան. զի մահն թաքուցեալ է 'ի կերակուրն եւ սպանանէ զնոսա:

ՄԶԵ. ՓՐԿԻԼ Ի ՍԱՏԱՆԱՅԷ
(129 D)

Ապա ով ոք որ կամի 'ի սատանայէ եւ 'ի մահուանէ փրկիլ եւ յերկինս ընթանալ, պարտէ զինքն պատրաստել .Բ. օրինակաւ. զի որ կամին վազել, թէ հանդերձն երկայն է, ոչ կարէ վազել. այլ պարտէ կամ կրել կամ 'ի վեր վազել. եւ թէ մերկանայ, թէպէտ յամօթ սուր ընթանայ. որպէս քուշտիկիրքն, յորժամ գօտէմարտին, մերկանան. զի կարասցեն յաղթել. այլ նոքա որ զգեցեալ են, շուտով անկանին:

Հոգեւորապէս հանդերձն ցուցանէ զագահութիւնն, որ երկայնացեալ է եւ յամենեւին ոչ կշտանայ. եւ հանդերձս այս յոյժ արգելումն տայ ընթանալ յերկինս. վասն այն պարտէ կարճել եւ չափաւորել զինքն. ուստի արագ ընթանայ 'ի պատուիրանս Աստուծոյ:

ՄԶԶ. ԲԱՆՔ ԻՄԱՍՏՆՈՑ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ԵՒ ՍՈԿՐԱՏԱՅ
(130 D)

Այի որ թիւրեալ է բան, խոտի սխալական. եւ զոր ասէ, ոչ կատարէ ճշմարտաբան, ոչ թէ արուեստն է անկատար կամ թիւրաբան, այլ 'ի համար հաշուոյն լինին մոլորական:

Արիստոտել ասէ. 'ի կենաց աշխարհիս, որպէս 'ի սեղանոյս պարտէ [յ]առնել. ոչ քաղցեալ եւ ոչ յագեալ, ոչ ծարաւի եւ ոչ արբեալ:

Որք ['ի] հիւանդութեան զվճիռ մահու կրեն (գրեն), նմանողք իցեն այնոցիկ, որք 'ի ժամանակի նեղութեան զհարկաւոր փայտ յաղագս նաւի պատրաստեալ սկսանին:

Սոկրատէս ասէ. լաւագոյն համարեա զբարիոք մեռանելն քան զապրիլն չար:

ՄԶԷ. ՍՈՒՐԽԱՄԱՀԻ
(131 D)

Ասեն իմաստունքն, թէ կայ ազգ մի ձուկ, որ սուրխամահի կոչեն, որ ծնանի 'ի քաղցր ջուրս. եւ յորժամ մտանէ 'ի ջուրս ծովուն, ոչ կարէ աճել անդ. զի դառն է, այլ յորժամ առնու զհամ քաղցր գետոյ, որ 'ի ծով մտանեն, ելանէ 'ի ծովէն եւ գայ 'ի ջուրս գետոյն եւ անդ բազմանայ եւ աճէ:

Ցուցանէ զքրիստոնեայսն, որք ծնանին 'ի քաղցր ջուր աւազանին. թէ անկանին 'ի դառն ծով աշխարհիս, որ է մեղքն, ոչ հեշտանան եւ աճին բարի գործօք, մինչեւ ճաշակեն զքաղցրութիւն գետոց աստուածային պատուիրանացն եւ դիմեալ անդ աճեն եւ բազմանան առաքինութեամբ սնանելով 'ի յաղբերս յայս, որ յարդարեցաւ 'ի գետոյն. որ ասէ. որ ոք ծարաւիցէ, եկեսցէ առ իս եւ արբցէ:

ՄԶԸ. ՄԱՆՈՒԿ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ՁԱՒՐՔ

(132 D)

Ասի 'ի պատմութեանց, թէ 'ի քաղաքի միում թագաւորն մեռաւ եւ մնաց որդի մի թագաւորին տղայ յօրորոցին: Եւ եկեալ թշնամիքն պատերազմեցան ընդ զօրս թագաւորին յայնմիկ եւ յաղթեցին. զի ոչ էր թագաւորն ընդ նոսա. եւ յորժամ դարձեալ եկին թշնամիքն 'ի պատերազմ, մի ոմն էառ զմանուկ թագաւորին եւ տարաւ յորոցքովն, եդ 'ի մէջ զօրացն եւ դաշտի անդ եւ ասաց առ զօրսն. ահա թագաւորդ ձեր 'ի միջի ձերում. եթէ կամիք, պահեցէք զդա. եւ ապա զօրացան ամենեքեան 'ի պատերազմ եւ յաղթեցին զթշնամիքն իւրեանց:

Ցուցանէ առակս, թէ սատանայ հանապազ պատերազմէր եւ յաղթէր զմարդիկ. զի թագաւոր երկնաւոր ոչ էր ընդ նոսա: Վասն այն պծ (անպիծ) աստուածածինն զիւր միածին Որդին Աստուծոյ զՅիսուս Քրիստոս ետ 'ի մէջ նոցա յայտնի ամենեցուն: Եւ զայս կամի ցուցանել, թէ ահա թագաւորդ ձեր 'ի մէջ ձեր՝ զօրացարուք եւ յաղթեցէք. վասն այն ասաց հրեշտակ ցՈվսեփ. արի առ զմանուկն եւ զմայրն իւր եւ գնա յԵգիպտոս. զի խնդրէ Հէրովդէս կորուսանել զմանուկն. իսկ յորժամ զմանուկն Յիսուս հանապազ 'ի միտս պահեմք, սատանայ ոչ կարէ արկանել զմեզ 'ի մեղս մահուն:

ՄՁԹ. ԿԱՆԱՅՔ ԿԱԽԱՐԴՔ

(133 D)

Գրեալ է 'ի վարս հարանց, թէ 'ի ճանապարհին Հռոմայ էին բնակեալ չար կանայք կախարդք, որ փոխէին զմարդն 'ի կերպարանս անասնոց ոչ ընդ էութեան եւ ոչ բնութեան, այլ առաչօք. եւ եկն առ նոսա գեղեցիկ կին մի, որ խիստ մասխարայ էր, եւ փոխեցին զնա 'ի կերպարանս իշոյ. եւ բազում վաստակս առնէր նոցա մսխարակութեամբ. վասն զի ոչ էր կորուսեալ զիմաստութիւնն, այլ միայն լեզուն կապեալ էր. եւ գնեաց զնա պարոն մի վասն մսխարութեան. եւ պատուիրեցին, թէ ջուր մի հասցնէք զէշն, որ կու կորուսէք զդայ: Եւ օր մի արածէր էշն 'ի գետեզեր մի. եւ ննջեաց պահապան իշոյն. եւ էշն տեսեալ ընկէ՛ց զինքն 'ի գետն եւ առժամայն դարձեալ 'ի կերպարանս մարդոյ. եւ զարթուցեալ պահապան եւ հարցնէր, թէ զիմ պարոնին էշն ոչ տեսե՞ր. եւ նա ասէ. ահա ես եմ. եւ ասէ. ոչ դու. զի գեղեցիկ կտրիչ ես. ասէ. ես եմ. զի լուացայ ջրով եւ բժշկեցայ 'ի կախարդութենէ:

Առ 'ի միտս. ցուցանէ [առակս] [զ]սատանայ, որ փոխեաց զմարդիկ 'ի կերպարանս անասնոց ոչ ըստ էութեան նորա, այլ ըստ չար վարուց. զի ամբարտաւան է նման առիւծոյ եւ բղջախոհ՝ խոզի եւ այլ այսպիսիք են՝ ծառայ եւ մասխարայ: Այլ աղբեր մկրտութեան այնպէս շնորհ ունի. զի որ մկրտի սուրբ սրտիւ 'ի ջուր յանուն հօր եւ որդոյ եւ հոգոյն սրբոյ, յայնժամ խափանի ամենայն գործն սատանայի 'ի նմանէ եւ ազատի 'ի ծառայութենէ նորա:

ՄՂ. ՏԱՆՊԱՏԵՑԻ ՋՈՒԼՀԱԿ

(178 D)

[Ջ]ուլիակ մի ասաց, թէ Աստուած զմարդն թագաւոր է ստեղծեր. եւ ես այլ թագաւոր ես [յ]իմ յանձինս. եւ տուք ինձ թագ եւ իմ մասուրայքս եւ առէչս ինձ հեծելք եւ ժողովուրդ. եւ երթամ խնդրեմ հնդկաց թագաւորին դուստրն ինձ կնութիւն: Եւ գնաց առ հնդկաց թագաւորն եւ ասէ. տուր ինձ զքո դուստրն 'ի կնութիւն, եւ ասէ թագաւորն. ի՞նչ մարդ ես եւ ի՞նչ գործ ունիս. որ զիմ դուստրն խնդրես. եւ ասէ. ջուլիակ եմ. բարկացաւ եւ ասէ թագաւորն ընդ զինուորացն. տարէք եւ սպանէք զդա. եւ ասէ թագաւորն. հարցէք զայրդ, թէ ուստի իցէ. եւ հարցին ցնա. նա պատասխանի ետ եւ ասէ. յարեւելից կողմ գեղ մի կայ. անունն Տանպատ այ. ասէ թագաւորն. թողէք զդա. մի սպանանէք. քանզի յիմար է. զի յաշխարհն այն՝ ամենայն խեւ է. եւ արձակեցին զնա խաղաղութեամբ:

Ցուցանէ, թէ մարդ որ անգիտութեամբ մեղք գործէ, նա խեւ լինի եւ խեւութեամբ գործէ. նա Աստուած չի համարիր զայն ծանր մեղքն, այլ սակաւ համարի. որպէս ասաց Քրիստոս, թէ որ [ոչ] գիտէ եւ առնէ, արբցէ գան սակաւ:

ՄՂԱ. ԿՐԱԻՆԱՒՈՐ ԵՒ ԾՆԱՒՂՔ
(179 D)

Այր մի ունէր որդի մի. եւ որդին այն եղեւ կրօնաւոր եւ գնաց մտաւ ընդ ծերպով վիմի եւ աղօթէր. եւ եկեալ հայրն եւ մայրն 'ի ներքս վիմին եւ ասէին ընդ որդին. եկ առ մեզ, զոր տեսանեմք զքեզ. զի կարօտ եմք զքո տեսուն. եւ ասէ որդին, թէ ոչ տեսանէք զերեսս իմ եւ ոչ ես կարեմ տեսանել զերեսս ձեր. եւ ասեն հայրն եւ մայրն առ որդին, թէ տեսանեմք զքեզ, որ զձեռդ ընդ հետեւդ կապած եւ զմազդ ցիցն 'ի վեր եւ տանեն զքեզ 'ի հրապարակսն առաջի դատաւորին: Եւ գնացին սրտմտութեամբ յերեսաց որդոյն: Եւ անցաւ աւուրք ինչ. եւ կայր ճանապարհն, որ անցանէր ընդ վիմովն. եւ ահա գային ճանապարհորդքն. եւ աւազակքն սպանեցին զամենայն ճանապարհորդքն, որ անցանէին ընդ այն. եւ դատաւորն քաղաքին իբրեւ լուաւ, վաղվաղակի առաքեաց զինուորս, թէ տեսէք եւ գտէք զսպանողքսն. եւ եկեալ շուրջ գային զայրին զայն եւ ոչ զոք գտան, բայց միայն կրօնաւորն. կալան եւ կապեցին եւ ասեն, թէ ոչ ես դու միայնակեաց, այլ աւազակ ես եւ զվաճառականքն դու սպաներ. եւ կապեցին զձեռքն 'ի յետեւն եւ զմազն ցիցն 'ի վեր եւ ասեն, թէ բեր քեզ վկայք, թէ ոչ սպաներ զճանապարհորդքն. եւ ասէ կրօնաւորն. ոչ զոք ունիմ աստ, որ գայ վկայութիւն տա՛, բայց միայն ծառերս. եւ կրօնաւորն կսկծմամբ ասաց, թէ ով ծառք, եկէք տուք ինձ վկայութիւն, որ ես չեմ սպաներ զզօրքն. եւ առժամայն հրամանաւն Աստուծոյ ծառքն խլեցան 'ի տականց եւ վերացան ընդ օդն 'ի վեր, երթային հետ կրօնաւորին եւ իբրեւ եկին առաջի դատաւորին, պատմեցին նմա զօրքն զսքանչելիսն. զի այլ մարդ ոչ անդ գոյր առ 'ի վկայութիւն սորա. այլ հրամայեաց ծառերուն զի գան վկայութիւն տան. եւ ահա եկեալ զի վկայեսցեն. զի ոչ է դա սպանօղ զօրացն: Իբրեւ ետես դատաւորն, զարմացումն կալաւ զնայ 'ի սքանչելեացն, որ եղեւ ընդ առն կրօնաւորին, եւ արձակեաց զնա խաղաղութեամբ:

Եւ ահա կատարեցաւ անէծք ծնօղացն. վա՛յ այն մարդոյն, որ զծնօղքն արհամարհէ, եւ ով ոք զծնօղաց անէծքն առնու, նա հուրն հաւիտենական ժառանգէ:

ՄՂԲ. ՀՐԵՇՏԱԿ ԵՒ ԱՂՔԱՏ
(190/181 D)

Եկն հրեշտակ առ աղքատ մի. եւ ասէ ցնա, թէ գնա հաքիմութիւն արա. ես քեզ օգնական եմ. եւ ասէ աղքատն. որպէս գիտենամ, թէ դու ինձ օգնական ես. ասէ հրեշտակն. յորժամ 'ի վերայ հիւանդին երթաս եւ զիս տեսնուս յոտից դեհն, նա դու ասա՛. այս հիւանդս ոչ ապրի, այլ մեռանի. ապա թէ գլխոյ դէհն երեւիմ, նա ապրի. դու պէտ արա նմա: Նա՛ աղքատն արար այնպէս զաւուրս բազումս հէքիմութիւն. եւ եղեւ ինքն հիւանդացաւ. եւ հրեշտակն երեւեցաւ 'ի տակ յոտիցն իւր. եւ իմացաւ, զի պիտի մեռանէր, եւ ասէ այրն. շրջեցէք զսնարքն. եւ շրջեցին. եւ դարձեալ 'ի յոտից կողմն տեսաւ զհրեշտակն. ասէ ցնա հրեշտակն. ով յիմար աղքատ, ես քեզ ասացի՞, թէ շրջէ զսնարքդ. եւ առժամայն մեռաւ:

Ցուցանէ, թէ յորժամ մահուն օրն գայ եւ կոչնակա՛ն, նա՛ թէ շատ եւ թէ քիչ շրջէ զսնարքն, ճար չկայ. պիտի մեռանի:

ՄՂԲա. 17 G Ասի առակաց, թէ այր մի կայր [կար]ի աղքատասէր եւ աղաչէր զԱստուած տալ նմա փարթամութիւն. եւ եկեալ առ նա հրեշտակ Աստուծոյ [ասէ]. լուաւ Աստուած աղաչանաց քոց եւ տացէ քեզ այնպիսի շնորհս. զի յորժամ հիւանդի մաւտ երթաս, ես երեւիմ քեզ հիւանդին գլխոյն դիհն, նա դու ասա, թէ մի ցաւիք. հիւանդս աս լաւնալու է. եւ լինի այնպէս. թէ լինիմ ոտից դիհն, դու ասա, թէ մեռնելոյ է. եւ լինի այնպէս անպատճառ: Եւ զայս լուեալ այնպէս առնէր ամենայն հիւանդս. եւ տեսեալ քաղաքացիքն բազում ինչս եւ ստացուածս տային նմա եւ առնէր զայս 'ի բազում ժամանակս, մինչեւ զի կարի յոյժ փարթամացաւ: Եւ եղեւ յետ բազում ժամանակաց յաւուր միում ինքն հիւանդացաւ. եւ երեւեցաւ նմա հրեշտակն ոտից կողմանէն. իսկ նա ասէ ցընդանիսն, թէ փոխեցէք զբարձս եւ դիք 'ի տեղի ոտիցս. եւ յորժամ առնէին, դարձեալ երեւէր ոտից կողմն եւ այնպէս բազում անգամ շրջեաց զսնարքն 'ի ոտից կողմն. ոչ կարաց ազատիլ 'ի մահուանէն, այլ մեռաւ:

ՄՂԳ. ԲԺԻԿ ԳՈՐՏ
(191/182 D)

Գորտ մի կայր 'ի Մս[ր]ա յաշխարհն՝ 'ի չափ եզան միոյ եւ ունէր գեղեցիկ ձայն եւ քաղցր եւ ասէր, թէ խիստ աղէկ բժիշկ եմ. եւ ելաւ 'ի լեառն մի բարձր, գոչէր եւ ասէր, թէ ամենայն ցաւոց դեղ ունիմ. եւ ժողովեցան յաշխարհն ամենայն եւ ելին 'ի լեառն մեծաւ աշխատութեամբ. իբրեւ տեսին զնա. զի էր գորտ զազիր կերպարանօք եւ քարկոծ արարին զնա եւ սպանին եւ ասեն. ով պիղծ, որ դու բժիշկ ես, դու զքեզ է՞ր չես բժշկել:

Ցուցանէ, թէ պարտէ մարդոյն նախ զինքն սրբել 'ի մեղաց եւ ապա քարոզել այլոց, որպէս ասաց Քրիստոս. բժիշկ, բժշկեա զանձն քո. պարտէ զգերանն հանել յականէ իւրմէ եւ ապա ասել ընդ եղբայրն, թէ եկ որ հանեմ զչիւղն (զշիւղն) յականէ քումմէ:

ՄՂԳա. 65 F ՎԱՍՆ ԳՈՐՏԱՆ ԵՒ ԱՂՎԵՍՈՒՆ Գորտն զհաւանն եւ զմիամտանն 'ի վերայ էր կախել եւ 'ի շուրջ կու գայ[ր] եւ կասէր, թէ հաքիմ եմ եւ դապիմ եւ ամենայն ցաւոց դեղ գիտեմ: Եւ ժողվեցան առ նայ ամենայն կենդանիք 'ի բժշկութիւն եւ եկն աղուեսն եւ տեսեալ հէքն"ց եւ ասէ, թէ յետեւէտ մինչեւ 'ի գլուխտ խոց եւ բորբոս ես եւ այլոց հաքմութիւն կու արնե՞ս:

Նոյնպէս մարդ, որ զիւր արատն թողու եւ այլոց խրատ տայ:

ՄՂԴ. ՀՆԱՐՔ ՍԱՏԱՆԱՅԻ
(193/184 D)

Սատանայ առ սատանայ մի գնաց եւ ասէ. ի՞նչ ունիս պահած. եւ նա ասէ. կուժ մի մեղր ունիմ եւ դգալ մի եւ մազեղէն մի եւ սաֆարայ մի. երբ որ կամիմ զմարդ խաբել, նա կառնում մեղրէս դգալ մի եւ դնեմ մարդոյ բերանն եւ կու քաղցրանայ եւ մեղք կու գործէ, պոռնկի եւ շնա. եւ յորժամ գործէ զմեղքն, ես շուտով կու ծածկեմ մազեղինաւս զմեղքն, որ շատանայ. եւ մարդիկք ասեն, թէ զմեր չարս մեք միայն գիտեմք եւ այլ ոչ գիտէ. եւ բազում ժամանակս խաբեմ զմարդիկք. եւ յորժամ կամենամ, առնում զսաֆարաս եւ ելանեմ 'ի տան[եա]ցն եւ փչեմ եւ յանդիմանեմ զչար գործքն եւ խայտառակեմ:

Ցուցանէ, զի ոչ ինչ է 'ի ծածուկ, որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի, որ ոչ ծանիցի. ո՞ր կարէ թաքչել քաղաք, որ 'ի վերայ լերին կայցէ:

ՄՂԵ. ՊՂՊՂԱՅ
(195/186 D)

Այր ոմն մեծատուն ունէր կին մի գեղեցիկ. եւ կինն այն շնայր. եւ այրն գնաց 'ի շուկան եւ գնեաց հաւ մի 'ի հնդկաց անունն պղպղայ. եւ գիտէր հնտի լեզու. ասէ վաճառականն առ հաւն, թէ տանեմ զքեզ 'ի տուն իմ եւ զինչ կինս առնէ, դու տես. երբ որ ես գամ 'ի տուն, դու ինձ ասես: Եւ եկն մարդ մի եւ գործեաց չար. եւ յորժամ եկն վաճառականն, նա ասաց հաւն. եւ այրն բարկացաւ եւ ծեծեց զկինն. եւ յորժամ ել այրն, եւ ասէ կինն ցծառայքն, թէ ո՞վ ասաց զմեր բանն. զի այլ ոչ ոք տեսաւ այլ դուք. եւ ասեն. քաւ լիցի, տիկին. մեք չեմք ասել. այլ տեսաք, զի պղպղայն խօսէր ընդ տեառն մերում. 'ի միւս եր[ի]կունն ասէ կինն ցծառայքն, թէ առէք զսաֆորն եւ լցէք ջրով եւ առէքն զաւելն եւ [երդ]իկից զջուրն 'ի վերայ հաւի գլխոյն ցանեցէք, որ զաչքն չի բանայ եւ տեսանէ, զոր մեք գործեմք, եւ առէք թմպուկ եւ ծեծեցէք, որ ձայնն գոռայ. որ գիտենայ հաւն՝ որոտումն է եւ անձրեւ կու գայ: Եւ զայն գիշերն ողջ կերան եւ խմեցին եւ պոռնկեցան. եւ հաւն 'ի տոպտոպային ձայնէն ոչ լսեց, թէ զինչ արարին. եւ ասէ հաւն առն իւրում, թէ այս գիշերս այնչափ որոտումն կայր եւ անձեւ, որ զաչս ամենեւին ոչ կարացի բանալ. եւ մեծատունն բարկացաւ եւ ասէ. այս գիշերս պարզ էր եւ անձրեւ ոչ կայր, ով գարշելի եւ եղկելի հաւ. այդ ո՞րպիսի սուտ է. որ անձրեւ չեկաւ եւ որոտումն չկայր եւ դու ստեցեր եւ զիմ անմեղ կինս մեղապարտ արարեր. վասն այդ սուտ բանիդ մեռանիս. եւ եզարկ զհաւն 'ի գետինն. եւ առժամայն մեռաւ անմեղ հաւն 'ի ձեռն կնոջ չարութեան:

Ցուցանէ, թէ կնոջ ֆէլն շատ է. եւ սատանայի թուր է. այնով սատանայ սպանանէ զմարդիկք:

ՄՂԶ. ՍԱԿԱՒ ՄԵՂՐ ԱՂՔԱՏԻ ԵՒ ԹԱԳԱՒՈՐ
(196/187 D)

Այր ոմն աղքատ գնաց 'ի լեառն եւ կթէց սակաւիկ մեղր եւ տարաւ այն աշխարհին թագաւորին. եւ թագաւորին մուտքն ամէնն մեղր էր. եւ ոչ խոտեց զաղքատն, թէ սակաւ էր, այլ ընդունեցաւ:

Ցուցանէ. մեք զայս սակաւ բանս խօսիմք ընդ ձեզ. որ է հարուստ զերթ զթագաւոր զայս. դուք ընդունեցէք զսակաւ բանս, որ կու խոսիմ ընդ ձեզ, որպէս ընդունելի եղեւ թագաւորին զաղքատին սակաւ մեղրն:

ՄՂԷ. ՄԻԱՄԻՏ ԳՈՂՔ
(197/188 D)

Երկու գողք գնացին 'ի մեծատան միում յերդիք եւ կամէին գողանալ զինչս նորա. եւ էր լուսնկայ. եւ իմացաւ այրն, որ գողքն 'ի յերդիքն եկին. եւ ասէ կինն ցայրն, թէ ամէն գանձս եւ դրամն եւ ղումաշն ո՞ւստի է եկեր քեզ. եւ ասէ այրն. երթայի 'ի գողութիւն 'ի գիշերի մեծատանց երթիք 'ի լուսն կայ լուսոյն, որպէս որ այժմ կայ. եւ շուք լուսնկին յերդից 'ի վայր ցայթէր զերթ հիմայ. եւ ես գիրկ առնէի զլուսնկին շուքն՝ բռնէի եւ 'ի վայր կիջ"նայի (այսպ) 'ի տունն եւ բան մի կասէի. որ ինչ գեղեցիկ ղումաշ կայր 'ի տանն, նա ամէնն ինձ կերեւնար եւ առնէի 'ի շուքն կապէի եւ զիս այլ 'ի հետ ղումաշին. եւ շուքն զիս 'ի վեր կու հանէր 'ի տունսն (տանիսն). եւ այսպէս զամէնն շահեր եմ: Իբրեւ լսեցին գողքն զբանս զայս, խիստ ուրախացան եւ հաւատացին պատրողական բանիցն եւ գրկեցին զշուքն, որ 'ի վայր իջնուն, անկան եւ խելաց թափեցան. եւ այրն յարեաւ եւ եսպան զնոսա:

Ցուցանէ առակս, թէ մարդն որ գողանայ եւ սատանայական բանին հաւատայ, նա որպէս այն գողքն կորնչին. եւ պատճառն 'ի կնոջէն ելաւ, որ այն գողքն յերդից 'ի վայր անկան. կինն 'ի կողէն է եւ կողն ծուռ է եւ ինքն չար է:

ՄՂԸ. ԿԱԹ ՄԵՂՈՒ ՊԱՏՃԱՌ ՊԱՏԵՐԱԶՄԻ
(198/189 D)

Այր ոմն ունէր խանութ եւ մեղր կու ծախէր. եւ կաթեաց կաթ մի 'ի մեղրէն 'ի գետին. եւ պիծակ մի նստաւ 'ի վերայ նորա. եւ կատու վազեաց եւ էառ զպիծակն. եւ յետ նորա շուն վազեաց եւ էառ զկատուն. եւ խ[ա]նութին տէրն եզարկ զշունն եւ սպանեաց. եւ կայր այն գեղին դրացութիւն գեղ մի, որ շունն յայն գեղիցն էր. իբրեւ իմացաւ շան տէրն, եթէ խանութպանն զիւր շունն սպանեաց, յայն ժամ եկն եւ սպանէ զխանութպանն: Յետոյ յարեան .Բ. կողմանց գեղացիքն եւ արարին պատերազմ մեծ ընդ միմեանս. եւ եղեւ կոտորումն 'ի մեջ նոցա. զի մնաց երկու կողմանց մարդ մի կենդանի վասն կաթ մի մեղրի համար:

Ցուցանէ. զի ամենայն որ 'ի հետ աշխարհիս շրջի, նա որպէս այն .Բ. գեղի մարդիք վասն կաթ մի մեղրի համար մտ"ն (մարտնչին): Նոյնպէս ամենայն, որ զմեղս գործէ, նա մեռանի, որպէս մեռան այն մարդիկքն:

ՄՂԸա. 51 F Խանութպան մի մեղր կու կշռէր, կաթ մի 'ի գետինն կաթեց. նայ պիծակ մի 'ի վերայ նստաւ, կատուն 'ի խանութէն 'ի վերայ վազեց. չիպամի 'ի մէկ ալ խանութէն վազեց եւ զկատուն սպանեց: Ցայնժամ .Բ. խանութպաննի 'ի յիրար դարձան եւ բազում արեան հեղութիւն եղեւ. եւ յորժամ զպատճառն իմացան, նայ մէկ կաթն մեղր էր:

ՄՂԹ. ԹԱԳԱՒՈՐԻ ԽԵՂ ԴՈՒՍՏՐ

(200/191 D)

Գիտացէք, որդիք մարդկան, որ թէ թագաւորի դուստր լինի՝ եւ 'ի [յինքն] խեղուութիւնն ունենայ, նա ոչ ընդունին զնա եւ ոչ առնուն զինքն հարսնութիւն:

Նոյնպէս եւ մեր հոգիք հարսն են Քրիստոսի. եւ եթէ խեղուութիւն մեղաց ունենայ, նա երկնաւոր փեսայն Քրիստոս ոչ ընդունի 'ի յառագաստն:

Յ. ՄԵՂՔ
(200/191 D)

Թէ մարդուն զաչքն թրով հանեն եւ թէ ասղով՝ մէկ է. թէ զմարդն առիւծն խեղդէ եւ թէ աղուեսն՝ մէկ է. մարդ թէ 'ի ծովն ընկղմի եւ կամ 'ի գետն՝ մէկ է:

Նոյնպէս մեղքն թէ մեծ լինի եւ թէ փոքր, զմարդն 'ի տանջանքն ձգէ. զի ամենայն մեղք հաւասար կոչի:

Յա. 207/196 ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՍՓԻՒՌ ԾԱՂԿԻՆ Խնդրեա զնա, յորժամ տանուտէրն ցուլն լինի. երթ 'ի գեօղն, որ կոչի Դարունք, որ ջերմուկն է. եւ ել 'ի կատար լերինն. անդ գտանես զծաղիկն. եւ են վէմք .Գ. եւ գտանի 'ի մէջ. Գ, վիմացն: Իսկ նշանք .Գ. վիմացն այս են .Ա. չորէքկուսի է սեղան եւ տափակ. եւ տես զմէկ այլն յայլ լերին շուքն, որ յարեւմտեան կողմ կայ, զոր անուանեն Նագորդ, որ արեգակն 'ի մուտն լինի. որ յայն լերին շուքն որ տեղ որ հասանի, անդ է ծաղիկն: Այլք ասացին. թէ կամիս գտնուլ զնա, գտնեա զԲասեն բերդն, որ կոչի Խնձորէ, եւ անդ գտանի ծաէիկն: Եւ այլք ասացին, թէ գտանի 'ի Սուրմարի 'ի գեօղն, որ կոչի Ձողկերտ: Երթ փորձեա զչափ տեղի եւ գտանես զնա: Իսկ նշան ծաղկին այս է. մէկ արմատ ունի եւ արձակէ բազուկս .ԺԲ. եւ ունի ամէն .Ա. գոյն մի ծաղիկ. դուդայլ, կապուտակ եւ ծիրանի եւ շուշան եւ այլն. զի ամէն գունից զարդարեալ է համասփիւռ. իսկ ժամանակ ծաղկին այս են. 'ի հոռի ամսեան .ԻԷ. անցնի: Այլ պարտէ խնդրել զծաղիկն 'ի գիշերի. զի 'ի գիշերի պայծառագոյն երեւի յաչս խնդրողաց: Եւ երբ գտանեն զնա, պարտէ զգուշութեամբ աման ինչ 'ի վերայ գործել եւ պահել, մինչեւ գտանէ օր բարի եւ աստղաբաշխութեան արհեստն գիտենալ. որ լուսնի 'ի շնահաւոր եւ 'ի զօրաւոր պուրճն եւ անտես 'ի չար աստեղաց. նոյնպէս եւ ժամադիտակն, որ է յարեւելեան ցիցն, շնահաւոր եւ զօրաւոր լինի. եւ իւր տանուտէրն անտես 'ի չարեացն: Եւ երբ գտանես զօրն եւ զժամն, ապա հան զինքն զգուշութեամբ. որ արմատովն եւ մացառովն. որ իսկի իրք չի մնայ 'ի տեղն. զի ասացեալ են իմաստունքն, թէ զօրութիւն 'ի յայն թագչի, որ մնայ 'ի տեղն: Ապա առ զիւր ծաղիկն եւ խառնեա իւղ անուշ եւ 'ի գործ ած այս նշանովս. թէ յականջդ հասուցանես, վերնական ձայն եւ բարբառ լսես եւ հասկանաս զամենայն լեզու մարդկան եւ իմանաս զձայն անասնոց, գազանաց եւ թռչնոց: Ապա թէ յաչսդ հասուցանես, տեսանես զամենայն արարածս առաջի աչացդ: Իսկ թէ 'ի քիմսդ հասուցանես, զհոտ անոյշ 'ի յերկնից առնու[ս]: Ապա թէ 'ի լեզուդ հասուցանէս, զամենայն լեզու հասկանաս եւ բարբառէս եւ զիմաստութիւն իմաստնոց եւ զվարդապետութիւն պատմես: Ապա թէ 'ի մատունսդ հասուցանես, զամենայն արուեստս առնես: Եւ այլ բազում ինչ ասացին վասն ծաղկին զօրաւոր հրաշս մեծամեծս. բայց եւ այլք ասացին, թէ Անանիայ ասաց, թէ ես գտի զնա 'ի Ձողկերտ:

Է. ՄՆԱՑՈՐԴՔ ԱՌԱԿԱՑ Ի ՁԵՌԱԳՐԷՆ F

ՅԱ. ԳԻՆԻ
(1 F=3 E)

Թագաւոր 'ի կայր եւ մէկ որդի ունէր եւ հրաման արար նայիպնոյն, թէ յամէն օր մէկ մի զիմ օրդին 'ի պատիւ տարէք. եւ տանէին. եւ օր մի մէկ նայիպն 'ի պատիւ տար[եր] է եւ յիրիկուն տարաւ 'ի հօրն 'ի տունն եւ գնաց. եւ օրդի թագաւորին խիստ գինով էր եւ 'ի բազիայ էլաւ եւ գինին 'ի վերան շրջեցաւ եւ ընկաւ 'ի յարտաքնոցն եւ մեռաւ. եւ մէկ այլ օրն գտին մեռեալ: Եւ թագաւորն հուքմի արար, թէ զինչ որ

'ի յիմ իշխանութեանս էգի կայ, փակեցէք եւ զկարսընին կոտորեցէք. եւ արարին այնպէս:

Եւ այրի կին մի մէկ որդի ունէր եւ զիւ[ր] հնծանն եւ զգինին պահեց եւ յամէն վաղվէնէ եւ յիրիկունն 'ի վերայ հացին .Բ. թաս գինի կու տար. որ խմէր. եւ յորժամ մանուկ եղ"ւ, գիշեր մի 'ի դուրս ելաւ եւ թագաւորին առիւծն սպանեց. եւ թագաւորն վաղիւն կանչեցուց, թէ ով որ զիմ առիւծն սպանեց, թող գայ, որ իւր աղէկութիւն արնեմ. էրեկ այրի կին եւ որդին. հարցաւ թագաւոր, թէ ի՞նչ ցեղ զառիւծն սպանեցիր. եւ ասաց, թէ գիշերն 'ի դուրս էլայ եւ հանդիպեցաւ առիւծն. ես սպանի. եւ ասաց մայրն, թէ գինով եմ սնուցեալ, եւ ասաց զպատճառն: Եւ հրաման էհան թագաւոր, թէ այգի տնկեցէք, ապայ զգինին հանց խմեցէք, որ զառիւծն սպնք. չլինի, թէ յաղբընոցն մեռանիք:

ՅԲ. ՀԱՅՐ ԱՐՍԷՆ ԵՒ ՄԻԱՅՆԱԿԵԱՑ Ի ՀՈՎՈՒԱՑ
(2 F)

Հայրն Արսէն թագա[ւորա]հայր էր Թէոդոս թագաւորին եւ մեծ նայիպ. թողլ զամենայն մեծութիւնն եւ գնայ յանապատն ճգնաւորեցաւ եւ էր կուսան. եւ այնչափ ճգնութիւն ստացաւ, մինչ զի համբաւն 'ի յաշխարհս տարածեցաւ. էղեւ օր մի, զի եկն առ նայ միայնակեաց մի, որ յառաջն հովիւ էր լեալ. զի տեղեկանայր վարուց նորա: Տեսեալ զի 'ի վերայ խոտոյ նստէր եւ կերակուր նորա հաց եւ ոսպնաթան էր. եւ մի ոմն 'ի ծառայից իւց սպասաւոր էր նորա եւ զգլուխն եւ զոտն լվանայր ջրով. եւ գայթակղեալ այր էթող եւ գնաց. եւ գիտացեալ Արսէնի. զի հոգէտես էր. եւ առաքեաց եւ դարձոյց զնայ. զի մի էրթեալ զաշխարհ գայթակղեցուսցէ: Եւ ասէր Արսէն, թէ յո՞ր աշխարհէ ես, եւ զտեղին եւ զծնաւղսն եւ զկենաց նորա. եւ նա մի ըստ միոջէ պատմեաց՝ աշխարհ զԱղէքսանդրիայ եւ տեղի ագարակ մի. եւ ծնօղքն իմ, ասէ, աղքատ եւ հողագործ. եւ ես հովիւ ձմեռն սառուցեալ եւ ամառն արեգակնակէզ. եւ կերակուրն արտուճ հաց եւ կաթն. եւ մահիճք իմ աւազն եւ սնարքն իմ ցուպն: Եւ ասացեալ Արսէնի. որդեակ, հաւատայ ինձ. զի թագաւորահայր էի 'ի տան թագաւորին. եւ իմ իշխանութեամբս է[ր] աշխարհս ամենայն եւ ինձ առանձին .Ռ. ծառայ արծաթագին եւ ոսկիակազմ էրիվարօք. եւ յամենայն օր 'ի բաղանիս կու երթայի եւ զանուշահամութիւն կերակրոցն եւ զիւղոցն ո՞ կարէր պատմել եւ զհանդերձիցն զանազանութիւն, որ յոսկոյ եւ յարծաթոյ. եւ գահոյքն իմ պայծառ եւ թաղթն իմ .Գ. աստիճանաւ բարձր. եւ սպասաւորացն եւ կառցն եւ էրիվարացն ոչ գոյր թիւ. եւ յայնպիսի հեշտութեան էի եւ այժմ զամենայնն թողի: Աղաչեմ եղբայր չգայթակղիլ յիս. եւ ծառայս ոչ իշխանութեամբ եմ բերեալ, այլ ինքն իւր յօժարութեամբն է էկեալ եւ ոչ 'ի հարկէ. եւ մնաց եղբայրն անգայթակղ:

ՅԳ. ՊԵՏՐՈՍ ԱՒԱԶԱԿԱՊԵՏ
(3 F)

Էր վանք մի յԱղէկսանդրիայ կանանց եւ էր սահմանք նորա. զի 'ի գիշերի այր մարդ ոչ բնակէր անդ. եւ էր 'ի ժամանակին յայնմիկ մի աւազակապետ .Խ. ընկերօք Պետրոս անուն եւ էկեալ 'ի գիշերի 'ի դուռն վանիցն եւ թագուցեալ զընկերսն՝ խաբէութեամբ բացեալ զդուրսն եւ կամեցաւ մտանել եւ սպանանել զապաշխարող կանայսն եւ զվանսն թալանել. եւ 'ի յաստմանէ հոգոյն եղեալ սքանչելիք. զի եկեալ քերցն բերեալ ջուր եւ լվացին զգլուխն եւ զոտսն. եւ զջուրն իբրեւ զօրհնութիւն բաժանէին. եւ էր անդ ապաշխարող մի անկեալ 'ի մահիճս .Լ եւ Է. ամեայ 'ի դիւէ եւ 'ի հիւանդութենէ վշտացեալ. եւ օծին ջրովն. եւ յարեաւ ողջացեալ. եւ փառս ետուն Աստուծոյ. եւ եկեալ յզկլ[ն] յերկրպագութիւն. եւ աւազակն զոջացաւ զչարիսն, զոր առնելոց էր առ նոսա. եւ 'ի մէջ գիշերին եկեալ ընկերքն 'ի դուռն վանիցն. եւ նայ պատմեաց զեղեալ գործսն. եւ էրթեալ ընկերօքն կրօնաւորեցաւ եւ այնպիսի վարիւք հասեալ 'ի ծերութիւն եւ եղեալ ժառանգորդ երկնից արքայութեան:

ՅԴ. ՎԱՐՁՈՒՆԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ
(7 F=6 E)

Կրօնաւոր մի նստեալ դրամ կու համբ[ր]էր. եւ աղքատն մի զձեռն 'ի յառջեւ կալաւ՝ խնդրէր

ողորմութիւն. եւ նայ ափցի 'ի յերեսն էզարկ. եւ էրեւեցաւ Քրիստոս եւ ասաց, թէ հրէայքն զայտ ոչ արարին. եւ նայ նոյնժաման գնաց 'ի վարդապետի մօտ լալով խոստովանեցաւ, զոր գործեաց. եւ ասաց վարդապետին, թէ բազում անկամ կու խրատէի, թէ արծաթն կուրացուցիչ է հոգուց եւ մտաց եւ դու չէիր 'ի լսել. գնայ բաշխեայ զինչքտ աղքատաց, զոր ունիս, եւ գնայ 'ի շուրջ արեկ եւ քարով զկուրծք ծէծէ, մինչեւ ողորմի քեզ Աստուած: Եւ բազում ժամանակ 'ի շուրջ եկեալ. եւ օր մի էրեւեցաւ աստուածածինն եւ ճիւղ մի 'ի դրախտէն էրետ, թէ տար 'ի Մէսրոպ վարդապետն. որ խաչ կազմէ եւ 'ի մէջ դնէ եւ քեզ փրկութիւն լինի: Եւ այն է Վարցուն[ե]աց աստուածածինն, որ է 'ի վրաց տունն:

ՅԵ. ՄԻԱՅՆԱԿԵԱՑ ԵԻ ԹԱԳԱՒՈՐ ԾՈՎՈՒ
(12 F)

Միայնակեաց մի կամեցաւ փորձել զԱստուած, թէ զամենայն, զոր ինչ կու խնդրէ մարդ յԱստուծոյ, կու տա՞յ թէ ոչ. եւ գնացեալ առ թագաւոր մի խնդրեաց զդուստր իւր 'ի կնութիւն. եւ ասաց թագաւոր, թէ բարի է. գնայ՝ 'ի ծովուն ատակն պատուական ակ մի կայ՝ բեր. որ տամ զիմ դուստրն քեզ. եւ ասաց միակեցն. բերեմ. եւ առեալ .Բ. փարչ գնաց 'ի ծովեզրն եւ սկսաւ զջուր ծովուն կրէր 'ի յետեւ դարին. եւ տեսեալ ծովայինքն գնացին իւրեանց թագաւորին, թէ մարդ մի զծովուն ջուրն կու ցամաքեցնէ: Եւ ասաց, թէ տեսէք. թէ կամաց կու կրէ, նա կու ցամաքեցնէ. զինչ որ կուզէ, գնացէք տվէք. եւ գնացեալ հարցին, թէ ի՞նչ կուզես. եւ ասաց, թէ ակն մի կայ 'ի մէջ ծովուտ, զայն կու ուզեմ. եւ տվին .Գ. ակն զոհար. եւ նայ տարաւ առ թագաւորն. եւ ասաց թագաւորն հարսանիք պատրաստել եւ տալ զդուստրն նորա. եւ ասաց միայնակեցն, թէ դուստր քո էղիցի քոյր իմ. եւ ես զԱստուած կու փորձէի, թէ զինչ մարդն 'ի Աստուծոյ կու խնդրէ, կու տա՞յ Աստուած թէ ոչ. եւ ճշմարիտ է Աւետարան, որ զինչ որ խնդրէն յԱստուծոյ, անտարակոյս կու տայ Աստուած:

ՅԶ. ՈՐԴԻՔ ՈՒՌՆԱՅԻ
(13 F)

Մեռաւ Ուռնայ եւ մնաց .Բ. որդի եւ արտ մի իւրեանց հայրենի եւ յամէն տարի կու ցանէին եւ 'ի կալնի կէս կու առնէին եւ՝ տուն մի է[ր] իւրեանց միջնակով՝ զկէսն 'ի մէկի դիհն կու լնուին, զկէսն 'ի մէկ. երփ կու տանէին, նայ փոքր եղբայրն թի մի .Բ.ս 'ի յիր բաժնէն կու առնուր, 'ի մեծ եղբօրն 'ի դիհն կու լնուր, թէ իմ եղբայրն տղայոց տէր է եւ շատ խարճ ունի. թող նորա աւելի լինի: Նոյնպէս մեծ եղբայրն կու լնուր, թէ իմ եղբայրն հարսանիք պիտի արնէ, որ իրենն մատաթ լինի: Եւ զտանն դուռն փակեցին. եւ յորժամ կեթային, որ հաց հանէի[ն], դուռն չէր 'ի բացվիլ. եւ տեսին. զի լցվել էր եւ դռանն էր առեր. եւ ձայն ընկաւ 'ի քաղաքն եւ ժողովեցան քահանայք եւ իշխանքն եւ իմացեալ զպատճառն եւ փառս ետուն Աստուծոյ:

ՅԷ. ՏԵՍԻԼ ՎԱՍՆ ԴԺՈԽՈՑ
(14 F)

Սուրբ հայր մի 'ի դժոխոցն ահէն ոչ 'ի յաղօթք եւ ոչ 'ի սաղմոս եւ յոչ ինչ գործ չէր 'ի հանգչիլ եւ խնդիրք արար յԱստուծոյ, թէ սակաւ մի 'ի դժոխոցն ցուց ինձ եւ հրամանաւ Աստուծոյ հրեշտակ մի տարաւ 'ի դուռն դժոխոցն. եւ տեսեալ մարդ մի 'ի վերայ դռանն անկած էրեսք 'ի վեր եւ փորն ուռէցած եւ ծառ մի 'ի փորն բուսեցած յոյժ մեծ եւ յամէն ճէղ մարդ մի 'ի յոտիցն 'ի կախ եւ էրեսն 'ի վերայ բոցուն եւ կու աղաղակէին, թէ ո՞ւր ես մահ. զմահ խնդէին եւ ոչ գտանէի[ն]:

Եւ այս է միտքն, որ այն մարդն շահառու էր եւ ագահ եւ արծաթայսէր. ինքն եւ իւր նմանքն յայնպիսի տանջանս են գնալու:

ՅԸ. ՀԱՅՐ ԵԻ ԱՇԱԿԵՐՏ

(17 F)

Հայր մի շատ աշակերտ ունէր. էկաւ կրօնաւոր մի առ հայրն եւ նայ զիր աղօթանոցն եւ զիր արտուկն եւ զամէն պէտք խցին փէտատ եւ կացին եւ զայլ սպասք (այսպէս). զի մերձ վանիցն էր. եւ հայրն յոյժ կու սիրէր զեղբայրն զայն. եւ եղբայրն եղեւ յոյժ սքանչելագործ, մինչ զհիւանդս եւ զախտաժէտս աղօթիւք բժշկէր. եւ նախանձեալ հայրն ըղրկէց էրիտասարդ կրօնաւոր մի, թէ արի գնայ 'ի յանապատէս, թէ չէ գամ զխուցդ 'ի վերատ ւի լցնեմ. եւ աշակերտն զչարն խափանեաց: Բ. եւ Գ. անկամ ղրկեց, թէ գնայ պատասխանի արայ. եւ կու երթայր, թէ հայր կու հարցանէ, թէ ոնց կայս 'ի մին[ո]ւթենէ. եւ յորժամ տեսաւ հայր, թէ չէր 'ի երթալ, եւ բարկացեալ ինքն ելեալ գնայր եւ աշակերտն յառաջ"լ ասաց, թէ հայր 'ի տես կու գայ. եւ յարուցեալ էառ խունկ եւ գնաց 'ի դէմ եւ անկաւ 'ի յոտն հօրն եւ թողութիւն խնդրէր. եւ հայրն զարմացաւ. եւ զաշակերտն, որ զխաղաղութիւն սերմանեաց, էրդիր հայր եւ ինքն աշակերտեցաւ նմա:

ՅԹ. ԿՈՅՐ ԵՒ ԱՉՔԱՒՈՐ

(18 F)

'Ի յաշխարհս .Բ. աղքատ կայ. մէկն կոյր է եւ մէկն աչքաւոր. ո՞րն է խեղճ: Այն է խեղճ, որ կուրն է. եւ կուրն մեռածն է եւ աչքաւորն կենդանի է:

ՅԺ .Դ. ԱԶԳ ՄԱՐԴ

(19 F)

Ի ՀԱՐԱՆՑ ՎԱՐԻ"Ց Դ. ազգ մարդ կայ 'ի յաշխարհս .Ա. զէտ քար է եւ մէկն զէտ ջուր է. մէկն զէտ փուշ է. մէկն զէտ մոմ է. զմատանէիարն մոմն կու առնու. քարն, ջուրն կամ փուշն չեն 'ի առնուլ:

ՅԺԱ. ՊԱՐՈՆ ԵՒ ԻՇԽԱՆ

(20 F)

Պարոնին եւ իշխանին .Դ. իրք պիտոյ է. դօվլաթ եւ խելք եւ քարկուզարութիւն եւ յայտլ եւ դատաստան:

ՅԺԲ. ԱԶԳ ՊԱՀՔ

(21 F)

Դ. ազգ պա[հ]ք է. մէկ Քրիստոսի, որ Ադամայ ասաց, թէ 'ի ծառուն մի ուտեր .Ա. մարգարէիցն. Բ Մովսիսին եւ Էղիային եւ այլոցն .Ա. առաքելոցն, որ 'ի ժամ չարչարանացն Քրիստոսի սգային .Ա. հայրապետացն. Բ յիսնակսն եւ շաբաթապաքն:

ՅԺԳ. ՀԱԼԱԼ ՄԱՐԴ

(23 F=1 E)

Երիտասար[դ] մի ուխտադրեալ էր, թէ ամէնեւին հարամ չուտեմ եւ օր մի գնաց 'ի յեզր գետուն. եւ ջուրն խնձոր մի կու բերէր. եւ էառ զխնձորն կերաւ անօթէց. զի գրած է 'ի հաքմաթն, թէ յանոթեց խնձորն ուտելն զաւուրն տրտմութիւն տանի. եւ 'ի միտն անկաւ եւ գնացեալ խղճմտանօք ընդ գետն 'ի վեր գտեալ բաղչա մի եւ գիտաց, թէ 'ի յանտից էր խնձորն. եւ ասաց ցտէր նորա. արայ ողորմութիւն եւ առ զգին խնձորին կամ արայ հալալ. զի ոչ եմ կերեալ ամէնեւին հարամ. եւ ասաց տէր բուրաստանին, թէ կէսն որ իմ է, հալալ քեզ. եւ կէս իմ եղբօրն է. այնոր տէր չեմ. եւ Զ. աւուր ճանապարհ հեռի 'ի մէնջ. եւ երիտասարդին յուղի անկեալ գնաց եւ գտեալ զայրն ասաց. կամ առ գին քո կիսուն կամ հալալ արայ. եւ

ասաց այրն, թէ ոչ գին կու առնում եւ ոչ հալալ կու արնեմ. թէ կուզես, որ հալալ արնեմ, դուստր մի է ինձ՝ ոչ աչք ունի եւ ոչ ականջ եւ լեզու եւ ոչ ձեռք եւ ոչ ոտք՝ առ քեզ կին. որ հալալ արնեմ. անճարեալ առեալ զաղջիկն եւ յորժամ էմուտ ընդ նմա 'ի յառագաստ, էտես, զի ամէնեւին ողջ էր. եւ ասաց ցաներն, թէ յէ՞ր կու յայպէիր զքո դուստրն. եւ նայ ասէր, թէ ճշմարիտ է. զի քանի որ 'ի մօրէն ծնեալ է, զարեգական լոյսն 'ի յերդն 'ի վեր է տեսել եւ զօտարի զձայն չ[է] լսել եւ հետ օտարի չէ խաւսել եւ ձեռօքն զմեղք չ[է] շօշափել եւ ոտքն 'ի դուրս չէ կոխել. եւ ես զէդ զքեզ հալալ մարդ կուզէի եւ Աստուած էրետ ինձ. եւ ուրախացեալք յոյժ եւ փառս ետուն Աստուծոյ:

ՅԺԴ. ԵՐԵՔ ՈՒՂՈՐԴ ԲԱՆՔ
(24 F=2 E)

Թագաւոր մի եւ թագուհին բազում խոստամունք արարին Աստուծոյ եւ սրբոց եւ նոցա զաւակ ոչ լինէր. բայց յետ ժամանակի եղեւ արու զաւակ՝ ոչ աչք ունէր եւ ո[չ] լեզու, ոչ ոտք. եւ ժողովեցան բազում վարդապետք եւ եպիսկոպոս եւ երիցունք. եւ արար բազում զենմունք. եւ աղօթս արարեալ ոչ ողջացաւ տղայն: Եւ եկն ճգնաւորն եւ ասաց, թէ թագաւորն եւ իւր կինն եւ իւր նախ նայիպն՝ ամէն մէկ՝ մէկ բան ըղորդ խօսին, նայ տղան պիտի լաւնայ: Եւ ժողովք արար թագաւոր եւ ասաց, թէ .ԺԲ. թագաւորի վերա իշխանութիւն ունիմ. յորժամ մարդ 'ի յիս մօտ կու գայ, ես 'ի ձեռքն կու նայիմ, քանի աղքատ է. յորժամ զայս ասաց, նայ տղին աչքն բացվաւ: Ասաց կինն թագաւորին, թ[է] ես մէկ ազ[ա]տի դուստր եմ եւ Աստուած զիս մեծացուց, որ թագաւորիս կին եմ եւ յետ թագաւորիս աշխարհս 'ի յիմ իշխանութիւնս է. ես յորժամ աղէկ կտրիճ մի կու տեսնում, կու ցանկամ. որ թէ ճար լինէր, ես զթագաւորս սպանէի եւ զնայ առնէի. լուր՝ տղայն խօսեցաւ: Եւ ասաց իշխանն, թէ երկրորդ եմ թագաւորիս եւ ես աղքատ մարդ էի. եւ գրիս պատճառաւն թագաւորն զաշխարհս 'ի յիմ ձեռքս է դրել. եւ յորժամ սակաւ մի թագաւորս կու բարկանայ ինձ, ես թէ ճար լինէր, զթագաւորն սպանէի եւ զկինն առնէ[ի] եւ տղան ողջացեալ 'ի վեր վազեց եւ ճոկան եառ եւ խաղար: Եւ նոքա ուրախացան եւ փառս ետուն Աստուծոյ:

ՅԺԵ. ԵՐԿՈՒ ՍՆՏԵԿՆՈՍ
(25 F)

Երկու սիրուն սնտէկնոս կային. մէկն աղքատացաւ եւ մէկն խիստ հարուստ էր եւ շատ արդիւնք կարնէր աղքատ սնտեկնոսին: Եւ օր մի 'ի հարուստ սնտէկնոսին տունն պատիւ կայր. հարուստն 'ի դուրս ելաւ եւ աղքատն 'ի ներքեւ բարձին թուղթ մի գտաւ եւ կարդաց. նայ զինչ արդիւնք որ արել էրն, գրել էր. տեսաւ եւ խիստ վիրաւորեցաւ. յորժամ եկաւ սնտէկնոսն, ասաց, թէ ի՞նչ վիրաւոր ես. ասաց, թէ զթուղթն տեսայ եւ վիրաւորեցայ. ասաց, թէ մի վիրաւորիլ. այոր համ (=անոր համար) եմ գրել, որ յորժամ վիրաւորանք հանդիպի 'ի մեր մէջս, նայ զայս թուղթս կարդամ եւ զսէրն չաւիրեմ:

ՅԺԶ. ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ
(26 F)

Գրած է, թէ մարդ որ 'ի յիր ծնընդենէն մինչեւ 'ի յօրին"լ պսկ"ն՝ այրն եւ կինն՝ սրբութեամբ լինին եւ ատից մինչեւ 'ի յաւուրց մահ"ն, նայ իւրեանց գերեզմանին հողն նաս ու խոցի դեղ պիտի լինի եւ ամենայն ցաւոց:

ՅԺԷ. ԿԻՆ ՈՐ ՁԳԷ ՁՔԱՀԱՆԱՅ Ի ԿԱՐԳԷՆ
(27 F)

Գրած է, թէ կին որ զքահանայ 'ի կարգէն ձգէ, յորժամ մեռնի եւ 'ի գերեզման դնեն, նայ պիտի 'ի գերեզմանն էրեսք 'ի վայր դառնայ. եւ փորձած է, որ ճշմարիտ է:

ՅԺԸ. ՄԵՌԵԱԼ ԵՒ ՄՇԱԿ
(29 F)

'Ի ՀԱՐԱՆՑ ՎԱՐՈՒՑՆ Օր մի մեռել մի կու տանէին 'ի թաղումն. եւ մարդ մի 'ի յայգին մշակ ունէր եւ ասցին, թէ արեկ 'ի հետ 'ի թաղումն. եւ ասաց, թէ չեմ ատիկել: Եւ մեռելն զգլուխն 'ի վեր եկալ եւ ասաց, թէ ես այլ շատ բան ունէի. երփ գրողն էրեկ, զամէնն 'ի տեղն թողի եւ կերթամ յետոյ:

Բան ամէն 'ի տեղն պիտի մնայ. զինչ որ գործէ մարդ, զայն պիտի տանի:

ՅԺԹ. ԵՐԿԱԹԱԿԵՐ ՄՈՒԿՆ ԵՒ ՏՂԱՅԱՄԲԱՐՁ ԱՐԾԻՒ
(31 F)

Մարդ մի յԷմ գնաց եւ Ծ.Կ. քաշ երկաթ ամանաթ էդիր 'ի մարդ մի 'ի մօտ, թէ 'ի դառնալն ինձ ապր լինի: Երփ էրեկ խնդր"ց, նայ ասաց, թէ մուկն կերաւ: Նայ ասաց, թէ ե՞ղ էր, մե՞ղր էր, պա՞նիր է[ր], որ մուկն կերաւ: Եւ գնացին 'ի դատաստան. եւ ուրացաւ: Եւ երկաթին տէրն՝ օր մի այն մարդուն տղայն 'ի գիրն կու երթար՝ եւ նայ գողացաւ, որ ոչ ոք չգիտաց. եւ պ"հց. եւ այն մարդն աղէխորով 'ի շուրջ կու գայր եւ չէր 'ի գիտն"լ. եւ տեսաւ երկաթին տէրն եւ ասաց. տեսայ՝ արծիւ մի ունէր տղայ մի. եւ ասցի. ո՞ւստի է այտ տղայտ. նայ ասաց, թէ 'ի յինա քղ"քէն է, որ զերկաթն մուկն կու ուտէ. եւ ասաց. զէնէհար՝ զիմ տղայն դու ունիս. տուր՝ զքո երկաթն ես ունիմ:

ՅԻ. ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՍԱՏԱՆԱՅ
(33 F)

Վարդապետ մի .Գ. օր եւ .Գ. գիշեր քարոզ"ց վասն խոստովանութեան. եւ մէկ մարդ 'ի խոստովանութիւն չէրեկ. եւ սկսաւ լալ եւ խնդիրք արար յԱստուծոյ, թէ այս ի՞նչ պատճառ է. եւ 'ի մէկ օրն յորժամ ժողովուրդն ելաւ յէկեղեցուն, տեսաւ 'ի յանկիւնն մարդ մի կանկնած եւ ասաց. ո՞վ ես եւ ի՞նչ կու արնես 'ի հօտ. եւ ասաց, թէ 'ի քո ժողովրդենէս ամանաթ եմ առեր, բէրել եմ մի՝ յիրենք կու տամ, որ է ամօթն: Եւ ան մարդն սատանայ էր, որ 'ի ժամ մեղացն գծլոյն զամօթն կու տանի եւ 'ի խստ"վնլուն ժ"մն զամօթն 'ի վերայ կու ձգէ. որ չեն 'ի խոստ"վնիլ:

ՅԻա. 23 Ց Հայր ոմն քարոզէ՛ր ժողովրդեանն աղուհացիցն գալ. . . . . եւ ոչ գային. եւ նա յոյժ զարմանայր. օր մի տեսաւ զսատանայ յեկեղեցին եւ հարցանէր զնա՛. զի՞նչ խնդրես աստ. ասէ սատանայ. 'ի քո ժողովրդենէդ գողութիւն արեր եմ, դարձեալ զոչացեր եմ եւ ետ բերել, զոր գողացա՛. ասէ. զի՞նչ էիր գողացեա՛լ. ասէ սատանայ. յորժամ կամէին մեղք գործել, առի զամօթն 'ի նոցանէ. որ համարձակ գործեցին զմեղքն. այնժամ որ կամին խռովել, դարձեալ տամ 'ի նոսա զամօթն. զի մի. . . . . Յայնժամ գիտաց սուրբ հայրն, որ 'ի սատանայ է անամօթ մեղք գործելն եւ խռովիլն ամաչելն. եւ պատմեաց զտեսիլս զայս ժողովրդեանն. եւ ամենեքեանն խորհեցան:

ՅԻԱ. ՀՐԵԱՅ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
(34 F)

Ջհուտ մի 'ի հորն էր անկել եւ էր օրն շաբաթ. եւ էկեալ քրիստոն"յ մի, թէ բերեմ չուան եւ հանեմ զքեզ 'ի հօրուտ. եւ ասաց, թէ չեմ 'ի կամիլ. զի շաբաթ էր. էկեալ մէկ ալ օրն քրիստոն"յն 'ի ջուրն. եւ ասաց [ց]ջհուտն, թէ չեմ 'ի կամիլ. զի կիրակի էր:

Եւ մէկնութիւն սորա այս է. զի այն ջհուտն զքրիստոնայք կու նշանակէ եւ քրս"նյքն զՔրիստոս եւ ջրհօրն զգուբ մեղաց եւ անօրէնութեան եւ շաբաթն հանգիստ թարքմանի. զի մարդիք 'ի յաշխարհիս հեշտութիւն մարմնով հանգել են եւ Քրիստոս ձեռն կու տայ եւ մարդիկ ոչ կամին ելանել. եւ 'ի յայն

կեանքն կամի զերծանիլ 'ի տանջանաց եւ Աստուած ոչ տայ ձեռն. զի չէ ժամանակ, որ է կիրակի:

ՅԻԲ. Ի ԲԱՆ ՂՈՒԿԱՍՈՒ 16,3
(35 F)

Ի բան աւետարանին որ ասէ անտեսն. գիտեմ, զինչ արարից. որ հոգոյն էթող զկէսն եւ մարմնոյն 'ի հնգէն զմէկն .ՃԵ.ն զկատարելութիւն մեղացն նշանակէր. զի .Ճ. կատարեալ թիւ է. 'ի կէսն եւ կամ .Ե. էն զմէկն ոչ թէ զմեղացն թողութիւն ասէ. զի 'ի զղջանալն եւ 'ի խոստովանիլն թողվաւ մեղքն. այլ ապաշխարանացն կէսն է, որով յեկեղեցի յիշվին յամենայն աւուր: Դարձեալ յորժամ 'ի խոստովանիլն թողվի մեղքն, զի՞նչ կարօտութիւն կայ հաղորդելոյ. զի հաղորդութիւնն զմոռացածն մեղքն մաքրէ ըստ յ"մն, որ ասէ Յոհանէս 'ի Կաթուղիկէքն, թէ մարմին եւ արիւն Որդոյն Աստուծոյ սրբէ զմեզ յամենայն մեղաց մերոց:

ՅԻԳ. Ի ԲԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ 16,15
(36 F)

'Ի բանն զոր ասաց Քրիստոս Յիսուս, թէ զամենայն, զոր ինչ ունի հայր, իմ է. 'ի ճառն, որ վասն անառակ որդոյն, ասաց հայրն երկնաւոր էրէց որդոյն, թէ ամենայն, որ ինչ իմ է, այն քո է. մի թէ զհայրութիւնն այլ կու ասէր, թէ քո է. ապայ զանմեղութիւն ասաց եւ զայլն նոյնպէս եւ որդոյ ունելն բայց 'ի հայրութենէն:

ՅԻԴ. ՍՈՒԼՏԱՆ ՄԱՀՄՈՒԴ ԵՒ ԾԱՌԱՅ
(38 F)

Սուլտանի Մահմուտն ծառայ մի գնեց 'ի .ԺՌ. սպ, որ ինքն խիստ ղիմաթի եւ աղէկ սառաֆ էր. մէկ օրն ձի մի ծախ բերին, որ գինն էր .ՃՌ. ֆլօրի եւ բերին 'ի ծառայն 'ի մօտ. նայ տեսաւ եւ ասէր. աժէ, թէ իշու կաթն չէր կերել. հարցին զտէրն. նայ ասաց, թէ մայրն մեռաւ եւ մատակ էշ մի ունէաք, զայն էշն է ծծել. եւ դարձեալ օր մի 'ի Խթաու բազրկներ էկին եւ պատուական կատունի բերին. եւ էկին ղիմաթիքն եւ ընտրեցին զթանսուխ կատունին. էրեկ սուլտնա ծառայն եւ զամէնն վատ էհան եւ ասաց, թէ ամէնն խոտիտակ է եւ յամօթ արար զնոսա. եւ մէկ մի էհան ապրիշըմէ: Եւ սուլտանն էրետ 'ի ծառայն .ԲԾՌ. սոյնպէս եւ Ծ. ձի եւ Ծ. ճորտ ձիաւոր, թէ գնայ 'ի Խթա եւ վաճառ"յ եւ արեկ. եւ գնաց. եւ մարդ մի նստ"լ էր 'ի դուռն սուլտնայ, որ զինչ մարդ որ ծուռ բան կու արնէր, զայն յապլահ[ն]ին կու գրէր եւ գրեց, թէ սուլտան այլ 'ի յապլահ[ն]ին: Երփ գա՛ կարդացին զկոնդակն, նայ գրած էր սուլտանն այլ 'ի յապլահնին. եւ ասաց, թէ յէ՞ր ես գրել. նայ ասաց, թէ ծառայ էր, դու հանչաք մի ըռզակ տվիր, թէ առնու յիր աշխարհն երթայ. չէ՞ որ դու ապլահ ես, երփ այլ չգայ. ապայ թէ գայ, զնայ 'ի յապլահ[ն]ին գրենք եւ զքեզ 'ի խելօքնին:

ՅԻԵ .Դ. ԳՈՂ ԵՒ ՍՈՒԼՏԱՆ ՄԱՀՄՈՒԴ
(41 F)

Դ. մարդ նստել էին եւ հաց կու ուտէին եւ սուլտանի Մահմուտն փոխվեցաւ եւ գնաց ինքն ալ նստաւ. եւ ասցին, թէ մեք 'ի գողութիւն կու երթանք կամ արեկ 'ի հետ մեզ ու թէ չես 'ի գալ, մեք կու սպն"նենք զքեզ. ասաց, թէ կու գամ. ասցէք, թէ ի՞նչ հնար գիտէք. մէկն ասաց, թէ քանի դժար պատ է, առանց չուանի կու ելնեմ եւ 'ի լուսնկին շողն 'ի վայր 'ի տունն կու իջանեմ: Ա., թէ քանի դիժար փակ է, առանց բանալի կու բանամ: Ա., թէ քանի շատ մարդ կայ 'ի տունն, զին որ 'ի տունն ըռզակ կայ, զամէնն կու հանեմ, որ մարդ չի յիմանար: Ա., թէ քանի մութն է գիշերն, զմարդն տես" նմ, ցորեկն կու ճանաչեմ. եւ ասաց սուլտանն, թէ ես հանց հունար գիտեմ, որ յորժամ զմարդն 'ի չուանն հանեն, ես զպէխերս կու շարժեմ, նայ կու թող"ւն: Եւ 'ի յայն գիշերն զաւ"լտնյ խզինան պատառեցին եւ տարան զինչքն, պահեցին. եւ մէկ այն օրն թագաւորն ղրկեց, զինչքն էբեր եւ զգողերն. ասաց, թէ տարէք կախեցէք. եւ այն որ գիշերն

տեսնու"ր, ցէրեկն կու ճանաչէր, աս"ց. սուլտան, ոխտ է, թէ զպէխեր պիտի շարժես:

ՅԻԶ. ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴԻ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԷՐ ՎԱՐՊԵՏ
(42 F)

Զթագաւորին որդին իմաստասէր[ք] ուսուցին եւ զամէն ուսաւ. եւ տարան առ հայրն. եւ հայրն շատ արդիւնք արար վարպետին. եւ ասաց իմաստայսէրն, թէ այլ պակասութիւն կայ, թէ պիտի կայ, զայն այլ ուսուցանենք. տարաւ եւ Դ. օր 'ի տունն ձգեց եւ անօթի պահեց եւ օր մի 'ի ձիուն ջիլայուն կապեց եւ 'ի նայրանն ինչուր յիրիկունն յառջեւ ձիուն անօթի վազցուց բոկիկ եւ մերկ 'ի ցուրտ ժամանակին. եւ նայ չխօսեցաւ ամէնեւին. եւ տարաւ առ հայրն եւ ասաց, թէ կատարեալ է. որ յորժամ 'ի պարոնութիւն հասանի, ողորմի ըռահաթին:

ՅԻԷ. ՊԱՐՈՆ ԵՒ ՃՈՐՏ
(43 F)

Պարոնի մի ճորտն հարբած իր պարոնին շատ գէշ ասաց. եւ պարոն մէկ ալ օրն ձէն"ց զճորտն. եւ նայ գնաց եւ մտաւ յ.Գ. դուռն եւ տեսաւ, նայ յամէն դռան վերայ կրակ էր վառած եւ շանփուր մի կրակցւ"ցծ. եւ ճորտուն տեսեալ վախեցաւ. եւ առեալ պարոն համբուրեց եւ ասաց. մի վախեր. ով որ զգինով մարդուն խօսքն յետ ասէ, Ա. շամփուրն 'ի յաչքն, Ա. 'ի բերանն եւ Ա. 'ի յականջն:

ՅԻԸ. ԱՌԱԾ
(44 F)

Պատիւ արնէ գիհին տէրն.
Առնէ, զինչ որ կամի, ընչից տէրն.
Երթայ, ուր եւ կամի, ձիուն տէրն.
Իջնու, ուր եւ չկամի, իշուն տէրն:

ՅԻԹ. ԽԷՐ ԵՒ ՇԱՌ
(48 F)

Մարդ մի՝ եւ անունն խէր՝ ունէր փետատ մի եւ թի մի եւ փաջ մի. եւ իր գործն էր, որ զճանապարհերն կու շինէր եւ կտոր հաց կու տային ճանապարհորդքն ու կու ուտէր. եւ մարդ մի՝ եւ անունն շառ՝ նախանձեցաւ եւ ասաց, թէ ես այլ 'ի քեզ 'ի մօտ կու կենամ. եւ ասաց. խէր լինենա. եւ շառն նեղացաւ՝ ասաց, թէ երթանք 'ի շէն. եւ չգնաց խէրն. եւ օր մի զփետատն եւ զթին կոտորեց. եւ ասաց. խէր լինի. եւ զջրաման կոտ"րց. եւ երկուքն գնացին 'ի ջրհորն 'ի ջուրն եւ զխէրն 'ի ջրհորն ձգեց, 'ի տեղն էթող եւ գնաց: Եւ էկին .Բ. քաջ 'ի հօրուն բերանքն .Ա. ասաց, թէ .Գ. տարի է, որ 'ի թագաւորին դուստրն եմ մտել. մարդ լինի, որ առնու .Գ. մազ 'ի գլխուն եւ 'ի քթին առջեւն ծխեն եւ լաւնա. ասաց. Ա, թէ Է. կարաս մալ կայ 'ի յայս անուն տեղ, ես կու պահեմ: Եւ լսեց խէրն. եւ էկեալ ճանապարհորդ[ք] հանին զխէրն 'ի հօրուն. եւ գնաց լաւցուց զդուստր թագաւորին եւ էղեւ փեսայ. եւ գնաց էհան զոսկին եւ յոյժ փարթամացաւ. եւ օր մի 'ի սայրան էլաւ եւ տե[ս]աւ զշառն, ասաց զպատճառն. եւ ասաց շառն. տար զի[ս] ձքէ 'ի յայն հորն. եւ տարաւ ձգեց. եւ էկին այն .Բ. քաջն, նստան 'ի հօրուն բերանն եւ ասցին, թէ այն օրն որ զայն բանն ասցաք, նայ 'ի հորս մարդ էր կէցել եւ լսել էր եւ զդեւն էհան եւ զոսկին գտաւ. եւ նայեցան 'ի ջրհորն եւ տեսին զշառն եւ զհորն քարով լցին. եւ շառն շառով կորաւ եւ խէրն բարիոք ապրեցաւ:

ՅԼ. ՉԱՒՐՈՒԹԻՒՆ ԱՅԲԻ
(52 F)

Այսպէս ունի այբն 'ի յինքն զօրութեամբ զ.ԼԶ. գիրն. ա ունի չորս ճեղ քունճ եւ Գ. ճեղ եւ Ա. նրբայդիր, որ լինի .Ը, որ է մինչեւ 'ի .Ը՝. Ա եւ Բ եւ Գ, որ լինի .Զ.Դ, որ լինի .Ժ.Ե, որ լինի .ԺԵ. Զ, որ լինի .ԻԱ. Է, որ լինի .ԻԸ. Ը, որ լինի .ԼԶ: Սս ունի ա զ.ԼԶ. գիրն զօրութեամբ 'ի յինքն:

'Ի չորս .Ժ.էն զ.Դ. պահեց եւ զայլն արար մեզ յէրեւան.

Ամէնն են .ԾՌ. Է պակաս եւ այլն 'ի լ[ր]ման.

Կէսն է .ԺԸ. այն, որ տխմար մարդ ինքն յիմանան.

Նոքա են անգին ակունք մէկ քան զմէկ յազիզ ու յէկան:

ՅԼԱ. ԵԱԻԹՆ ՏԼԻՍՄ
(59 F=L)

Ասացել են իմաստասէրքն, թէ Է. տլիսմ կայ 'ի վերայ աշխարհիս:

Ի Ստըմբոլ քարէ մարդ էր շինած եւ զանունն ամբծախսս են դրել. որ զինչ 'ի քաղաքն անգին կումաշ լինէր, նայ է[ր] աժէցնօղն. եւ օր մի ձի մի ծախէին, որ Ռ. ֆլօրի գին կուզէին եւ զնացին յամբծախսսն. եւ ասաց, թէ այս օր աժէ եւ վաղն մէկ ֆլօրի աժէ. եւ մէկ ալ օրն սատակեցաւ եւ զսաղրին 'ի մէկ ֆլօրին ծախեցին: Իշխան մի աղքատացաւ եւ գնաց յամպծախսսն, թէ չեմ 'ի կարել մուրալ եւ բան չգիտեմ եւ 'ի սովու կու մեռնիմ, կերթամ զթագաւորին խզինան պատռեմ, թէ գան զքեզ հար"ցնեն, որ չասես: Ասաց ամբծախսսն, թէ իմ տլիսմս 'ի վերայ ճշմարտութեան է շինած. ճար չկայ, որ սուտ ասեմ. ասաց. այ ամբծախսսն, Աստուած 'ի քեզ 'ի բարեխսս. որ չասես. ասաց, թէ այտոր հնար չկայ. եւ նա էզարկ քարովն եւ զճակատն պատառեց եւ տլիսմն խափանեցաւ. եւ գնաց զթագաւորին խզինան պատառեց. եւ էկին հարցին զանբծախսսն եւ ոչ ետ պատասխանի. եւ թագաւորն բոկ էրեկ եւ ասաց. թէ չես 'ի խսսիլ, ես զիս կու սպանեմ. եւ ասաց ամբծախսսն, թէ հանց ժամանակ հասաք. որ ով զղորդն կու ասէ, զճակատն կու պատառեն:

Բ. տլիսմն, որ մարմառէ սիւն մի շինած էր, որ ինքնին 'ի շուրջ կու գայր. եւ 'ի վերայ պղընձէ պատկեր. եւ 'ի մէկ ձեռն խաչ եւ 'ի մէկն ոսկի խնծոր. եւ գրած էր 'ի վր, թէ աշխարհս իբր զխնծոր մի է 'ի ձեռին Աստուծոյ եւ թէ վասն աշխարհի եմ 'ի խաչ ելեալ:

Գ. աւդագնաց գետն, որ բարձր կամարով 'ի վէրեւ քաղաքին կու անցանէր եւ զքաղաքն կու ջրէր:

Դ. երկոտասան դարիճայ, որ 'ի վերայ պարըսպին շինած եւ յամէն դարիճի վերայ մէկ կենդանակերպ հանած էր, որ յորժամ 'ի յաւուրն մէկ ժամ կու ելանէր, Ա. կենդանայկերպն զմէկ դուռն կու դնէր եւ զմէկն կու բանայր. զաւուրն եւ զգիշերվան ժամերն նոքա կու չափէին:

Ե. տլըսմն որ սահաթ էր շինած. որ քանի յաւուրն ժամ մի ելանէր, նայ ինքն զանկակն ձայն պիտէ հանէր:

Զ. 'ի Բալպաք քաղաքն, որ պարսպին բարձրութիւն .Գ. քար է եւ դուռն մէկ քար 'ի մէկ դիհն է եւ մէկ 'ի մէկ լ"ն եւ մէկ 'ի վր:

Է. որ յէկեղեցի մի երկաթ խաչ մի յօդն խնդմնտ քարով 'ի կախ է, որ է յոյժ զարմանալի:

ՅԼԲ. ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ
(60 F)

ԱՌԱՍՊԵԼ"Ց Իմաստնացեալն յԱստուծոյ Սողոմոն խնդրեաց յԱստուծոյ, թէ հրաման տուր ինձ, որ Գ. ամիս, զինչ որ կենդանի կայ, ես կերակրեմ. եկն հրեշտակն ասաց, թէ չես բաւական, որ Գ. [օր] կերակրես. եւ հրաման ետ Աստուած. զի բազում կերակուրս 'ի մսոյ, 'ի հացոյ, 'ի խոտոյ, 'ի հնդոյ մինչեւ մեծամեծ բլրնի եդիր եւ հրամանքն Աստուծոյ արձակեցաւ եւ 'ի գալ կենդան"ցն կերակրիլ. եւ յանկարծակի ելեալ 'ի ծովէն ձուկ մի եւ 'ի յ.Գ. ժամն կերաւ զամէնն, զինչ պատրաստեալ էր Սողոմոն. եւ

հիացաւ եւ ասէր, թէ այ իմ ողորմած Աստուած, այս ի՞նչ կենդանի էր. եւ ասաց հրեշտակն, թէ ձուկ մի կայ 'ի ծովն, որ կերակուր է լեւիաթանին, եւ Գ. 'ի յասկից նորա է կերակուր: Եւ այլ կենդանիքն անօթի դարձան:

ՅԼԳ. ՆՈՅ ԵՒ ԱՒԶ ԵՒ ԾԻԾԱՌՆ
(61 F)

Յորժամ Նոյ 'ի տապանն էր, ասացել են, թէ տապանն ծակեցաւ. եւ ասաց Նոյ, թէ 'ի կենդան"ցտ ով որ կալնու զծակն, յորժամ 'ի դուրս ելանեմք, զորն 'ի կենդան[ե]ացս ուզէ, ես իրեն կերակուր տամ. եւ օձն կալաւ զծակն. եւ յորժամ ելան 'ի տապանէն, ասաց Նոյ. խնդրոյ, զորն կու խնդրես, եւ օձն ղրկեց զգոռեխն եւ ասաց, թէ տես, թէ որու արիւն անուշ է եւ ինձ ասայ. եւ գնաց զամէն կենդան"ցն տեսաւ եւ գիտաց, զի մարդոյն շլնեցն արիւն անուշ է եւ յորժամ գայր խապար բերել, ծիծառն՝ սգօն հաւ է եւ ասաց, թէ ես եւ դուն եղբայր ենք. ինձ ասայ, թէ ո՞րն է անուշ. եւ նայ ասաց, թէ մարդոյն շլնեցն. եւ ասաց, թէ զլեզուտ 'ի բերանս ած. որ տեսնում, թէ ըղորդ ես. եւ կտրեց զլեզուն 'ի տպակ եւ հասեալ օձին ասաց. զի՞նչ է. եւ սկսաւ գռեալ. եւ գիտացեալ օձին եւ փախաւ ծիծեառն. եւ օձին զհետ մտ"լ էխած զագին եւ կտ"րց. եւ մնաց ագ ծիծըռան խոռ: Եւ սատակ"լ օձն այն եղեւ տւ(՞) եւ այն է, որ խայթէ զմարդն վասն խոստման Նոյի:

ՅԼԴ. ՍԱՏԱՆԱՅ ԵՒ ԳԱԲՐԻԷԼ
(62 F)

Յորժամ անկաւ սատանայ յերկնից եւ մնաց թագն 'ի գլուխն եւ էկեալ Գաբրիէլ խաբեաց զսատանայ եւ ասաց. էջ յատակս ծովուն եւ ձուկ մի կայ 'ի ծովն եւ 'ի բերան նորա ծաղիկ մի կայ, առ եւ կեր եւ այլ 'ի քո տեղն պիտի փոխիս. եւ էդիր սատանայ զթագն 'ի յեզր ծովուն եւ իջաւ 'ի ծովն. եւ առեալ զթաքն Գաբրիէլ եւ փախեաւ յերկինքն. եւ հասեալ սատայէլի հետեւ էխած զոտիցն լերբանքն եւ անկաւ 'ի վայր. եւ ասաց Գաբրիէլ զՀայր մեր, որ յերկինքն. եւ անկաւ սատանայ եւ մնաց լերբնուցն միսն 'ի բերանն սատանայի. եւ այն է պատճառ, որ մարդոյն լերբանքն խոռ է:

ՅԼԵ. ԱՐԵՆԱԹԱԹԱԽ ԳԼՈՒԽ
(63 F)

Այր մի 'ի ճանապարհ կերթայր եւ տեսեալ գլուխ մի արենաթաթախ, զի գնայր իբրեւ զնետ. եւ ասաց. այն Աստուածն, որ զքեզ ստեղծել է, ասայ, թէ ի՞նչ կենդանի ես եւ ո՞ւր կերթաս. եւ ասաց, թէ ես չար պահն եմ. կերթամ այս անուն թագաւորի որդոյն հանդիպիմ. եւ որդի թագաւորին 'ի հետ որսոյ գնաց. եւ ձգեց ձին եւ Բ. աչքն 'ի դուրս էրեկ եւ ձին փախաւ. եւ ինքն խարխափելով գնաց 'ի յայլ աշխարհք ելաւ. եւ Է. տարի մուրացեալ եւ օր մի 'ի յաղբիւրն մի լվացվեցաւ եւ աչքն 'ի լոյս էրեկ եւ գնաց 'ի ծեր մի մօտ ասաց զպատճառն իւր. եւ ծերն առեալ տարաւ 'ի յիւր աշխարհն. եւ տեսեալ ծնօղացն ուրախացան յոյժ եւ ծերին բազում արդիւնք արարին: Եւ այն մարդն, որ զգլուխն տեսաւ, երդմնց"ւց զչարպահն եւ ասաց, թէ ի՞նձ ալ կայ չարպահ. եւ ասաց, թէ ամէն մարդոյ կայ. եւ քեզ .Գ. աւր պիտի հանդիպիմ՝ յայս անուն տարի յայս անուն շաբաթ եւ 'ի յօր: Եւ յորժամ օրն էկաւ, էառ [ոչխարի] գլուխ եւ գինի եւ այլ ապրանք. եւ գնաց մտաւ 'ի խրճիթ մի .Գ. օր եւ անդ մտեալ ուրախանայր. զի անցէ չար պահն: Եւ թագաւորն էլեալ 'ի յորս եւ չիպամի գնաց 'ի ծակն, էգիտ եւ նայ քարովն էզարկ. եւ էլեալ կաղկընծելով. եւ էկեալ զտին եւ տեսին, զի մարդու գլուխ եւ ոտվի կայր 'ի յառջեւն եւ բռնեցին տարան. զի կախեսցեն. եւ նայ ասաց, թէ .Գ. օր զսուփրան մատնէհարեցէք եւ զիս 'ի զնտան ձգեցէք եւ ապայ սպանէք. եւ արարին այնպէս եւ յետ .Գ. աւուրն տեսին, զի ոչխարի էր գլուխն եւ ոտվին. եւ իմացեալ զպատճառն զարմացան եւ ետուն փառս

Աստուծոյ:

ՅԼԶ. ԱՂՔԱՏ ԱՅՐ ԵՒ ՉԱՐԽ
(64 F)

Աղքատ մի տէսեալ զչարխն եւ ասաց. ով չարխ, քանի՞ սուս պիտի կենամ. եւ ասաց չարխն, թէ երեքշաբթի օրն ես եւ դաւլաթն պիտի յայս անուն գետի էզեր լինինք. դու զէշտ տիկ քաշէ եւ զյետի ոտվին եւ զագին թող եւ զիշուն միսն 'ի ներս լից եւ շալկէ եւ արեկ գետեզերովն անցիր. որ բաղթն զնւատարն 'ի վերայ ձգէ. որ ես զչարխն 'ի շուրջ ածեմ, որ 'ի վերայ փոխվի. եւ այնպէս արար եւ նա տարջ ար"ր:

ՅԼԷ. ԱՌԻԻԾ ԵՒ ՁԱԳՔ
(69 F)

ԱՌԻԻԾՆ ԵՒ ՀԱՐՍՆ"ՑՆ Առիւծն խնդրէր, թէ բերէք զձագ ձեր. զի ոք որ ոչ ճժտեսցէ, զայն ինձ հարսն արասցեմ. բէրեալ իւրաքանչիւր զիւր կորունն. եւ առեալ զամէն"սն սպան"լ եւ իւր ձմեռ"նազեխ արարեալ խաբել զամէնէս"ն:

Սոյնպէս են մարդիք 'ի յերկրի:

ՅԼԸ. ԿԱՊԻԿՔ ԵՒ ՈՐՍՈՐԴՔ
(73 F)

ՎԱՍՆ ԿԱՊԿԱՑՆ Սահմանք է նոցա, որ զինչ որ կու տեսանեն, զայն կու ուսանին: Որսորդք նոցա պիտի առնուն կարմիր բաբճնի փոկերով եւ տոլպնդնի եւ երթան 'ի տեղ հոր փորեն եւ ինքեանք 'ի ներս մտեն. եւ նոքա 'ի մեծ ծառերուն ծայրքն կու կենան եւ որսորդքն փաթեն զտոլպնտին 'ի գլխընին եւ զբաբուճն հագնին եւ զփոկերն կապեն. եւ մայմնդնին կու տեսնուն. եւ որսորդն երթայ 'ի հորն թաքչի. եւ գան նոքա 'ի ծառերուն 'ի վայր եւ ինքեանք առնուն փաթեն տոլպանտ եւ բաբուճ հագնին. եւ գան մարդիքն 'ի ի վերայ եւ բռնեն. զի 'ի ծառն չեն 'ի կարեր ելնել:

ՅԼԹ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ՊԱՆՐԱՑԱՆ ՄԱՐԴ
(76 F)

Տէսեալ աղուեսուն մարդ մի, որ 'ի վերայ ճանապարհին պանիր կու ցանէր. եւ ասաց աղուեսն, թէ ի՞նչ կու արնես. ասաց, թէ իմ հոգոյս վարձ կու առնեմ. ասաց աղուեսն, թէ քո հոգուտ համար կու ցանես, երանի է զքո հոգիտ. ապայ թէ իմ մորթուս համար է, նայ վայ է զքո հոգեկտ:

ՅԽ. ԱՂՈՒԵՍ ԵՒ ԱՐԱԳԻԼ
(77 F)

Աղուեսն եւ արագիլն եղբայրք եղան եւ երկուսն 'ի մէկ տեղ բուն դրին եւ ձագեր բերին. եւ երկուսն որս առնէին եւ բերէին ձագերուն. եւ աղուեսն մէկ մէկի արագլուն ձագերուն զվիզն կու ոլրէր եւ ձգեր իր ձագերուն. եւ հատուց զարագլուն ձագերն եւ ասաց արագլուն, թէ եղբայր, ձագերն կու հատնին. եւ աս[ա]ց ար"գիլն, թէ յիմո՞ց թէ 'ի քուոցն. եւ ասաց աղուեսն, թէ ինձ այլ կայ եւ քեզ այլ. ասաց արագիլն. թէ 'ի յերկանվզերո՞ւն է թէ կարճերուն. ասաց. 'ի յերկանվզերուն. ասաց արագիլ, թէ այ նենգաժոտ

աղեսուկ:

ՅԽԱ. ՁՈՒԿՆ ԹԷ ԿԱՏՈՒ
(78 F)

Մարդ մի ձուկն մի գնեց եւ 'ի տուն եբեր, որ լիտր մի էր. եւ կինն էփեց եւ հատուց. եւ երիկուն էրեկ մարդն 'ի տուն եւ ասաց, թէ բեր 'ի ձկնէն. որ ուտեմ. ասաց կինն, թէ կայտուն կերաւ. եւ առեալ զկատուն կշռեց. նայ լիտր մի էր. եւ ասաց. թէ այս կատուն է, յո՞ւր է ձուկն. եւ թէ ձուկն է, ո՞ւր է կատուն. զի սեխեխին էր կեր"ցւց"լ:

Ը. ՄՆԱՑՈՐԴՔ ԱՌԱԿԱՑ Ի ՁԵՌԱԳՐԵՆ Ց

ՅԽԲ. ԽՈԶ ԵՒ ԳԱԹԱՅ
(7 G)

Ասաց 'ի առակաց, թէ խոզն գաթայ մի գտեալ ուտէր. նայ խորիսն 'ի վայր կու թափէր եւ վասն պարանոցին միաբերութեան զի վիզն ոչ կարէր շեղել. որ զգլուխն 'ի վեր կալնուր. յայնժամ բերընցիք 'ի վեր անկեալ եւ ետես արեգակն. զի խոզն զբոլորութիւն արեգականն աչօք չէ տեսեալ: Եւ այնժամ ասաց, թէ զոր չէի կերեր, կերայ եւ զինչ չէի տեսեալ, տեսայ. զի այլ ոչ գաթայ էր կերեր եւ ոչ արեգակն տեսեր:

ՅԽԳ. ԱՅՐ ՈՐՈՅ ՉԷ ՏԵՍԵԱԼ ՈՉ ԲԱՂԱՆԻՍ ԵՒ ՈՉ ԽՈԶ
(8 G)

Ասաց 'ի առակաց, թէ զայր մի հարցին, թէ բաղնիս տեսե՞ր ես. նա ասաց, թէ մսէն այլ կերեր եմ: Դարձեալ հարցին, թէ զի՞նչ իրք կու նմանի. ասէ այրն, թէ հանց եղջիւր ունի, զինչ զխոզի: Յայնժամ ասացին ջրագայլքն, թէ այս մարդս ոչ թէ միայն բաղանիսն, այլ զխոզն չէ տեսեր:

ՅԽԴ. ԳԱՅԼ ՈՐՍՈՐԴ ԵՒ ԱՂՈՒԵՍ
(10 G)

Ասի առակաց, թէ գայլ մի վայրի պախրէն մի հետ էր արարեր, որ եղն յառաջեւն էր ձգեալ եւ այնչափ վազեցուց, որ մնաց. եւ եբեր ձոր մի ձգեց. որ պատառէր. նա աղուես մի 'ի ծակէն 'ի դուրս վազեց եւ անկաւ 'ի ջուրն եւ զփրցլիքն թափեաց եւ եկն առ գայլն եւ ասէ հէվռած. եւ ասէ՝ քեռի, ահա եկաք եւ բերաք. ասէ գայլն. ո՛վ մաշած, դու ո՞ւր էիր, երբ ես 'ի դարէն 'ի դար կու փաղցնէին. ասէ աղուէսն. արիւնդ զաչքդ ծածկեալ էր, որ 'ի յեղին սիրուն զիս չէիր տեսանել, թէ չէ տե՛ս, ինչ հալ եմ. որ այլ չափ ես այլ վազեցի 'ի դարէ 'ի դար, որ այսպէս եմ քրտներ:

ՅԽԵ. ԳԱՅԼ ՅՈՒՍՈՒՄՆ
(11 G)

Ասի առակաց, թէ գալին ձագն բռնեցին ու գրեցին գիր, թէ կարդայ: Եւ ասեն, թէ ասայ ա՛յբ. եւ նա ասէ, թէ այծ. եւ ասեն, թէ ասայ բե՛ն. եւ նա ասէ, թէ բուծ. եւ ասեն, թէ ասայ գի'մ. եւ նայ ասէ՝ գառն. եւ ասեն, թէ ասայ դա՛յ. եւ ասէ՝ դմակ. եւ ասեն՝ ասայ ե՛չ. նա ասէ. ես կու երթամ. զիհ անցաւ. այլ չեմ 'ի հասնիլ:

ՅԽԶ. ՏԱՆՈՒՏԷՐ ԵՒ ՈՐԴԻՆ
(12 G)

Ասի առակաց, թէ տանուտէր մի որդին կարգեր էր եւ դրեր էր 'ի վերայ, թէ զինչ տունն մեծ խարճ կայ, զհացն, զմսացուն, զհալաւն, զմաշկի հոգն եւ դու զայլքս ու խարճերն հոգայ ու տունս շէն կենայ, այսինքն զաղն, զձէթն, զջուրն, զսապոնն, զբաղնեցի փողն եւ զսոցին նմանն: Եւ արար մանուկն զայն ժամանակ մի, խիստ նեղացաւ. եւ յաւուր միում գնացին հայրն եւ որդին ընդ փողոցն 'ի վայր եւ տեսին, զի մարդիկ զգայլ մի կալեալ եւ զկոճն 'ի վիզն եդեալ եւ զընճռով 'ի շուրջ ածէին եւ փող առնուին. եհարց որդին զհայրն, թէ հայր, այն ի՞նչ է. ասէ հայրն. որդի, գայլ է, որ զոչխարն կու պատառէ եւ ուտէ. ասէ որդին. զայն հա՞[ն]ց կու չարչարեն եւ 'ի բաց չի՞ պիտի թողուն. ասէ հայրն. մինչ այնպիսի չարչարեն. որ ինա հաստ վիզն բարակի. եւ ասէ որդին. թէ կուզեն, որ թէզ բարակի այն գայլուն վիզն, նաղդ ու խարճերն 'ի վրան թող ձգեն. նա քան զիմ վիզն խիստ կու բարակի. ապա գիտաց հայրն. որ որդին 'ի քսուրին խարճերուն նեղացեր էր եւ կու ամաչէր հաւրն երեսն բերել:

ՅԽԷ. ՀԱՒՈՐՍ ԵՒ ԲԱԶԱ
(15 G)

Ասի առակաց, թէ հաւորս մի ակնատովն հաւեր որսայր եւ զորն կալնուր, ազատէր. եւ աւուր միում բազան անկաւ ակնատ: Իսկ նա վաղվաղակի արկ զնա 'ի դաֆասն եւ պնդեաց զդուռն. եւ ասէ բազան ցհաւորսն. ով այր, դու ընդէ՞ր զամենայն հօսն, յորժամ ըմբռնէիր, ազատէիր. եւ յորժամ զիս ըմբռնեցիր, վաղվաղակի 'ի դաֆասն ձգէցիր. ասէ հաւորսն. ով բազայ, զայլ հաւերն քեզ մատաղ առնէի. որ նոքոք զքեզ որսացի:

ՅԽԸ. ԱՅՐ ԳՆՈՂ ԵՒ ՀԱՑԾԱԽ ԵՒ ՄՍԱԳՈՐԾ
(16 G)

Ասի առակաց, թէ այր մի գնաց մաւտ խապազն, թէ հաց կու գնեմ. եւ եդ դրամն եւ կանգնեցաւ, որ տայր զհացն. նա 'ի բազմութենէ արանցն հաց գնողացն մոռացաւ զառաջին մարդոյն, թէ զդրամն առեալ էր. եւ յորժամ խնդրեաց այրն զիւր դրամին հացն, նա չերետ խապազն, թէ 'ի քեզնէ դրամ չեմ առեր: Յայնժամ գնաց այրն մաւտ 'ի մսագործն եւ շատ կանգնեցաւ 'ի դիմացն, մինչեւ բազումք գնեցին միս եւ գնացին. յորժամ գնացին այլ գնողքն, իսկ այրն կանգնեալ էր եւ ոչ գնայր, եւ ասէ մսագործն. այր, դու զի՞ կաս կանգնած. ընդէ՞ր ոչ գնաս 'ի քո բանդ. ասէ ցնա այրն. զիմ միսն ալ կշռէ, որ երթամ. եւ նա ասէ. տուր զդրամդ. որ կշռեմ. ասէ ցնա այրն. ես քան զամէն յառաջ տվի. դու մոռացար զիմն: Իսկ մսագործն հաւատաց եւ կշռեաց .Բ. դրամի միս եւ ետ ցնա. եւ նորա առեալ գնաց 'ի զատ, հայեցաւ յերկինս եւ ասէ. տէր իմ եւ Աստուած իմ, դու գիտես, որ .Բ. դրամ տվի 'ի հացծախսն. նա ուրացաւ եւ չերետ զիմ հացիկն. ես զմսագործն խաբեցի եւ .Բ. դրամի միս առի եւ ըկ չուտվի. դու արդար դատաւոր ես. առ զիմ դրամն 'ի հացծախէն եւ տուր 'ի մսագործն. որ ես անպարտ մնամ:

ՅԽԹ. ԱՂՔԱՏ ԱՅՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ
(18 G)

Ասի առակաց, թէ այր մի աղաչէր զԱստուած տալ նմա .Ճ. դրամ եւ ասաց. թէ տաս .Ճ. դրամն, նայ .Ժ. քեզ ձիթագին տամ. եւ 'ի աստմանէն Աստուծոյ 'ի միում աւուր եգիտ .Ճ. դրամ պակաս .Ժ. եւ ասէ. իմ արարիչ Աստուած, քո Ա. խելօքութիւնդ այս է, որ փէշին զքո .Ժ. դրամ ձիթագինն ես առել եւ ապա .Ճ. պակաս .Ժ. ինձ տուիր:

ՅԾ. ՊԱՏԱՀԱՐՔ ԳԱՅԼԻ

(19 G)

Ասի առակաց, թէ գալըն կալաւ 'ի գիշերի գառ մի եւ սկսաւ ուտել. եւ ասէ գառն ցգայլն. ով գայլ, լուեալ եմ 'ի հարցն իմ, թէ ազգն գայլոց գեղեցիկ փողահար լինին եւ գեղեցիկ ձայն ունին. եւ փափագ ունէի միանգամ զձեր ձայնդ լսել. երբ Աստուած զիս քեզ երեւ, նա՛ խնդրեմ 'ի քեզանէ. որ միանգամ քո փողդ հարկանես. որ լսեմ եւ կարաւտ չի մնամ եւ ապա կեր զիս. իսկ գալուն հաւատացեալ կըկզեցաւ 'ի վերայ յետ .Բ. ոտիցն եւ զ.Բ. թաթն եդեալ բերանոյն ոռնաց յերկինքն 'ի վեր. եւ լուեալ շանց զձայն գայլին բոլորեալ զզեցին. եւ 'ի սպանելոյ զերծաւ փախաւ. եւ գառն ազատեցաւ եւ խառնեցաւ 'ի գիհս:

Եւ գայլն արենաթաթախ եւ զզած գնայր 'ի լերինքն. ետես .Բ. ջոլիր վայրի ոչխարք, զի արածէին. եկին ընդ առաջ նորա .Բ. խոյ. մինն 'ի .Ա. ջոլրէն եւ մինն 'ի .Ա. ալէն եւ ասէին, թէ ով գայլ, մենք ամէն օր կու կռվինք յիրար. թէ մենք այս կողմս կու արածինք, նոքա կասեն, թէ այդ մեր իւրդն է. մենք 'ի յայդ դիհդ կու գանք արածինք եւ զաւրն 'ի բուն կռվինք: Եկ դու մեզ սինօռ կտրէ, որ ամէն մէկ իւր սինօռն արածէ ու այլ չի կռվինք. եւ յամէն ջոլրէ քեզ .Ա. շիշակ տանք. որ երթաս ուտես. իսկ գայլն զանձն էառ, սկսաւ յագին կախ ձգել եւ խազել ագովն նշան եւ սինոռ նոցա, եւ անկարծակի եկեալ խոյանն մինն 'ի .Ա. դիհէն եւ միւսն 'ի մէկ ալէն եդին եղջիւրսն կշտերոյ գայլուն եւ նեղացուցեալ կամէին պատառել զփորն գայլին եւ հազիւ զերծաւ 'ի նոցանէ:

Փախեաւ արենաթաթախ եւ չարչարած եւ քաղցած գնաց ընդ ձոր մի վար, որոյ ջաղաց մի կայր դուռն 'ի բաց. եւ կատու մի նստեալ 'ի դուռն ջաղացին լուացուէր: Եւ տեսեալ գայլուն զկատուն ասաց 'ի միտս իւր, թէ 'ի գառինն եւ ոչխարացն զրկեցայ. բարե զան կատուն. եւ նա փախաւ եւ եմուտ 'ի ջաղացքն. եւ գայլն 'ի հետ եմուտ եւ դիպաւ 'ի դուռն. եւ փակուեցաւ. եւ մնաց գալն 'ի ջաղացքն. եւ կատուն ելաւ 'ի սողն ծակն եւ փախեաւ:

Եւ ասէ գայլն ընդ ինքն, թէ ով իմար, թէ 'ի քո ազգն գուսան կամ փողահար ո՞վ էր եղել, որ դու ոռնացիր, շներն զարդեան եւ կամէին զփորն պատառել եւ այնմանէ զերծար: Եւ կամ դու ո՞ր ղատի կամ ո՞ր դատաւոր, որ վայրի ոչխարացն սինօռ կու կտրէիր. ապա թէ այն խոյանուն եղջիւրք 'ի փորդ էր փրթել. այնով ալ չի խրատուեցար. հետ կատուին ջաղացն կու մտնէիր. որ դուռն փակուէր, ընդ ո՞ր ելանէիր. թէ հիմի ջաղացապանն գայր եւ առնոյր զագիդ եւ այնչափ 'ի դիհաց դիհ քաշեր. որ ագիդ 'ի ձեռդ մնայր, նա խիստ արժանի էիր: Եւ մինչդեռ խօսքն 'ի բերանն էր, նա եկաւ ջաղացապանն եւ եդիր զդուռն 'ի հետ եւ ետես գայլն անկիւն ջաղացին. առեալ զնիգ ջաղացին եմուտ 'ի կողերն գայլին. որ ջարդեցաւ եւ այլ ոչ եգիտ հնար զերծանելոյ, 'ի ջրածակս ջաղացին կախեալ զգլուխն եւ կամէր փախչիլ. այնժամ ջաղացապանին առեալ զագին գայլին ոչ եթող փախչիլ. եւ թափուսեալ գայլոյն, թէ փախչիմ, ագին մնաց 'ի ձեռն ջաղացպանին. եւ նա անկեալ 'ի ջրտունն ել ընդ ցռուկս ջաղացին:

Փախուցեալ գնայր յարենաթաթախ եւ անցանէր ընդ անցանկ դրախտ մի, յորում նստեալ կայր դանուշման մի եւ կարդայր զխուրանն եւ անձամբն երերայր 'ի վերայ խուրանին. եհարց գայլն զթանըշմանն եւ ասէ. զի՞նչ ընթեռնուս, ով դանուշմանն. եւ ասէ. զի՞նչ ընթեռնում. 'ի հահէն հաճաթ կու խնդրեմ. եւ ասէ գայլն. ով դանուշման, թէ կուզես որ հաճաթ որ թէզ կատարի, դու արի 'ի ջաղացքն հաճաթ խնդրէ. որ դեռ խաւսքդ 'ի բերանդ է, հաճաթդ կատարի:

ՅԾԱ. ԵՐԿՈՒ ՆԿԱՐԻՉՔ

(22 G)

Գրեալ է պատմութիւնս թագաւորաց, թէ թագաւոր ոմն շինեաց գեղեցիկ դարպաս եւ կամեցաւ նկարել զնա՛ այնպիսի պատկերօք. որ այլ նման ոչ լինէր. եւ ընտրեաց .Բ. նկարիչս եւ ետ զմին որմն 'ի մին նկարիչն եւ զմիւսն 'ի մինն եւ վարագոյր կախեաց 'ի մէջն. եւ յորժամ նկարեցին զգործս իւրեանց, եկն թագաւորն. զի տեսցէ զգործս իւրեանց եւ ետես մինն. զի գեղեցիկ պատկեր նկարեալ էր. եւ հաւանեցաւ յոյժ. իսկ միւսն ոչ էր նկարեալ բնաւ. այծեալ էր զորմն յոյժ գեղեցիկ եւ կոկեալ էր յոյժ իբրեւ զհայելի: Իբրեւ ետես զթագաւորն. զի ոչ էր նկարեալ, բայց միայն կոկեալ, զարմացաւ եւ ասէ՛. դու ի՞նչ [ես] արարեալ. ասէ. ես ցուցանեմ զգործս իմ. եւ ապա 'ի վեր էառ զվարագոյրն 'ի միջոյն եւ յորժամ լոյս ծագեաց եւ լուսաւորեաց կոկած որմն, որ նկարած որմն մթացաւ. զի իբրեւ զհայելի երեւէր ամենայն

պատկերն, զոր նկարեալ էր 'ի միւս որմն. ասաց թագաւորն, թէ այս քան զայն գեղեցիկ է:

Հոգեւորապէս թագաւորն թագաւորաց է Աստուած. դարպաս շինեալ է աշխարհ .Բ. որմն .Բ. կտակարանք՝ հին եւ նոր .Բ. նկարիչ Մովսէս եւ Քրիստոս. Մովսէս նկարեաց որմն նորոյս (հնոյս). զի հին օրէնքն նովաւ տուաւ, որպէս ասէ Յոհան. այլ Քրիստոս նկարեաց որմն նորոյս. զի նոր օրէնքս նովաւ տուաւ, որպէս ասէ օրէնք. 'ի ձեռն Մովսէսի տուան շնորհք եւ ճշմարտ". եւ 'ի հին օրէնքն ազգի ազգի պատկեր հոգեւորապէս նկարեալ էին. այս ինքն զանազան առաքինութիւնք՝ 'ի յԱբրահամ նկարեցաւ պատկեր հաւատոյ, 'ի Սահակ պատկեր համբերութեան, 'ի Դաւիթ հեզութեան, 'ի Սողոմոն իմաստութեան, յԵսայի սէր. զի [վասն] Աստուծոյ սիրուն մեռաւ սղոցով. յԵրեմիայ եւ 'ի Դանիէլ կուսութիւնն: Այլ տէր մեր Յիսուս զնոր օրէնք զարդարեաց. եւ զի սուրբ աստուածածին էր սկիզբն նոր աւրինա՛ցս. եւ Որդին Աստուծոյ ընտրեալ զնա՛ իւր 'ի մայրութիւն. վասն այն մեծաւ ջանօք կամեցաւ զարդարել զնա եւ այնպէս լուսաւոր եւ կոկ կազմեաց զնա՛, որպէս ջինջ հայելի. եւ յորժամ լոյս հոգոյն սրբոյ ծագեաց 'ի սիրտս եւ յղացաւ զՈրդին Աստուծոյ, այնպէս լուսաւորեցաւ. զի ամենեքին 'ի հին աւրէնքն մութն երեւէին առաջի նորա եւ ամենայն պատկեր առաքինութեան, որ 'ի հնումն էր, պայծառացաւ 'ի նա. զի քան զԱբրահամ առաւել ունէր զհաւատս, քան զԻսահակ զհամբերութիւն, քան զԴաւիթ զհեզութիւն, քան զՍողոմոն զիմաստութիւն, քան զԵրեմիա եւ Դանիէլ զկուսութիւն: Իսկ տէր մեր Յիսուս Քրիստոս ճարտար նկարիչ ոչ նկարեաց նորա պատկեր. զի ոչ կացոյց նոր հաւատ. այլ նոյն հաւատքն է՛, զոր նահապետքն ունէին. այլ որպէս 'ի վերայ յերեսացն Մովսէսի կայր քող, նոյնպէս հաւատք սուրբ երրորդութեանն եւ Քրիստոսի մարդեղութեան որպէս քողիւ ծածկեալ էր յառաջնոցն. այլ Քրիստոս զքողն զայն եբարձ 'ի միջոյն. վասն [որոյ] յորժամ 'ի խաչին բեւեռեցաւ Քրիստոս, վարագոյր տաճարին ցելո՛յր վերուստ մինչ 'ի վա՛յր. եւ յորժամ վերացաւ քողն 'ի միջոյն, յանժամ հաւատն եւ առաքինութիւն, որ ծածկեալ էր 'ի հին աւրէնքն, ամենայն յայտնապէս երեւեցաւ 'ի սուրբ Աստուածածինն. եւ յորժամ ետես Հայր Աստուած, թէ այսպիսի գեղեցիկ էր գործն Քրիստոսի. քան զ'ի նոյն յոյժ հաճեցաւ, որ ասաց, թէ դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ:

ՅԾԲ. Դ. ԺԱՄԱՆԱԿ ՄԱՐԴՈՅ
(24 G)

Այր ոմն ունէր .Դ. է՛շ .Գ.ն. տղայ եւ ուժով եւ Ա.ն պառաւ եւ վատուժ. եւ զԳ.ն ոչ բառնայր, այլ խնամ տանէր եւ դարմանէ՛ր. իսկ պառաւ էշն ծանր բեռ բառնայր. զոր անկաւ եւ ո՛չ կարաց տանե՛լ զծանր բեռն:

Այսպէս մարդս .Դ. ժամանակ ունի՝ տղ[այ]ութեան, երիտասարդութեան, կատարեալ հասակն, ծերութիւն. այն .Գ. հասակն, որ զօրաւոր է, ոչ կամի բառնալ զբեռն ապաշխարութեան, այլ պարարէ եւ գիրացնէ զնա՛ ուտելով եւ ըմպելով. եւ զամենայն բե՛ռն ծանրութեան բառնա 'ի վերայ ծերացեալ մարմնոյն. իսկ էշն որ 'ի տղայութեան անկիրթ է բեռին, 'ի ծերութեան ո՛չ կարէ տանիլ:

ՅԾԳ. Դ. ՍԻՐԵԼԻՔ
(25 G)

Այր ոմն ունէր .Գ. սիրելի. եւ եղեւ ամբաստանութիւն առ թագաւորն. եւ գոչեաց զնա՛ եւ հրամայեաց սպանանել: Եւ նա երկուցեալ գնաց առ սիրելին առաջին եւ աղաչեաց գալ առ թագաւորն եւ աւգնել նմա՛. եւ նա՛ ոչ առ անձն. ես բազում ունիմ սիրելի առաւել քան զքեզ. բայց առնեմ ողորմութիւն՝ յորժամ տանին սպանանել, տամ քեզ անփափ կտաւ, որ կապես զաչս քո: Եւ նա տրտմեալ գնաց առ երկրորդ սիրելին եւ աղաչեաց գալ աւգնել. իսկ նա չար պատասխանի ետ եւ ասէ. զայս ողորմութիւն առնեմ առ քեզ. զի մինչ 'ի տեղի սպանման գամ: Եւ նա յոյժ տրտմեալ [գնաց առ] .Ա. երկրդ" սիրելին. իսկ նա՛ եւս չարագոյն պատասխանի ետ եւ ասէ. թէ այլ ոք չլինի, որ քեզի չանկալն ձգէ, ես ձգեմ: Եւ նա՛ գնաց որս որս առ երդ" սիրելին եւ զնա՛ պակաս քան զայլսն սիրեցեալ. եւ նա՛ քաղցր եւ գեղեցիկ պատասխանի ետ. մի երկնչիր. ես գամ զկնի քո եւ թէ մեռանելոց ես, ես մեռանիմ վասն քո. զքեզ ազատեցից. եւ գնաց առաջի թագաւորին. եւ յորժամ դատապարտեցաւ 'ի մահ, ճշմարիտ սիրելին փոխանակ նմա ետ զանձն իւր 'ի մահ եւ ազատեաց զնա:

Այսպէս հոգեւորապէս առաջի[ն] սիրելին է ինչքն. զի պատասխանէ. ես բազում ունիմ սիրելի. զի ամենեքեան սիրեն զինչս. այլ առնեմ քեզ ողորմութիւն եւ տաց քեզ պատանս, որով պատեալ իջցեն 'ի գերեզման. եւ թէ առ երրդ" երթիցես, ասասցեն ընտանիքն քո. [գնամք] մինչ 'ի գերեզմանն եւ շուտով դառնամք 'ի տունս. զի մնացեալ ինչս նորա ապշտակիցեն: Եւ առ երկ"դն գնաց, որ է սատանայ. պատրաստ է նա՛. որ ձգէ զքեզ 'ի չանկալն դժոխոց: Ով մարդ, որ խաբեցար յամենայն խաբեբայ սիրելեաց. եւ Ա. ճշմարիտ սիրելին է մնացեալ քեզ, որ է Յիսուս Քրիստոս, որ սակաւ սիրեցեր քան զամենայն. եւ նա վասն մեղաւորաց եկաց եւ մատնեաց զինքն 'ի մահ վասն փրկութեան մեղաւորաց. վասն որոյ պարտէ զամենայն սիրելի թողուլ եւ առ Քրիստոս միայն դիմել. միայն սիրել յայսմանէ երեւի, թէ յաշխարհս եւ որ ինչ յաշխարհի, ետուստ սիրելի է՛:

ՅԾԴ. ՓԻԼԻՍՈՓԱՅ ՄԱՀՈՒ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼ ԵՒ ՍԻՐԵԼԻՆ
(26 G)

Ասեն թէ փիլիսոփայ ոմն եդաւ [ի] բանտ թագաւորին. զի սպանցեն. եւ յորժամ գիտաց, թէ կամի մեռանել, խնդրեաց թագաւորն գնալ հրաման տալ իւրոյ եւ թագաւորն ետ թո՛յլ, մինչեւ էառ 'ի նմանէ. թէ առժամայն ո՛չ դարձցի, երաշխաւոր մեռցի 'ի տեղի նորա. եւ այլ փիլիսոփոս սիրելի նորա եղեւ երաշխաւոր եւ անձն էառ մեռանիլ վասն նմա՛. եւ նա գնաց 'ի տունն եւ սակաւ մի յապաղեաց քան զպայմանն. եւ բարկացեալ թագաւորն հրամայեաց զերաշխաւորն սպանանել. եւ տարան 'ի տեղի սպանմանն. եւ յորժամ վերացոյց զսուրն, եհաս փիլիսոփայն աղաղակեա՛ց. մի զդա՛, այլ զիս սպանանէք. եւ եղեւ 'ի մէջ նոցա քաղցր կռիւ. ասէ՝ ես զքեզ երաշխաւոր առի. որ թէ ես ոչ գայի, զքեզ սպանանէին. եւ արդ ես եկի, դու այժմ ազատ ես. եւ միւսն ասէ. ես երաշխաւոր եղայ քեզ եւ թէ պայման անցանես, ես մեռայց. եւ այժմ անցիր զպայմանն. ես եմ պարտական, թագաւորն եւ դու. եւ յորժամ եհաս համբաւ այս առ թագաւորն, զարմացաւ [ի] կատարեալ սէրն նոցա եւ ազատեաց զ.Բ.-սեանն 'ի մահուանէ:

Ռէ 'ի մէնջ անհաւատիցն այնպէս սէր կայր, քանի առաւել պարտէ լինել 'ի մէջ հաւատացելոց:

ՅԾԵ. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԱՍՊԱՆԻ
(29 G)

Գրեալ է. ոմն գնաց առ. . . . հայրն եւ ասէ. [զարկի] ոմն կղերիկոս. եւ նա ասէ. զարկի[ր] փայտով թէ թրո՞վ. եւ նա ասէ, թէ թրով. դարձեալ եհարց, թէ թրին բերանովն հարիր թէ կողո՞վն. ասաց՝ բերանովն. դարձեալ եհարց, թէ խոցեցիր թէ սպանե՞ր. ասաց՝ սպանի. ասաց՝ ով թշուառական, սպանանել ետեւ ասես, թէ զարկի. ո՛րչափ ծանր է սպանանել քան զարնելն:

Թ. ՄՆԱՑՈՐԴՔ ԱՌԱԿԱՅ Ի ՁԵՌԱԳՐԷՆ Հ ԸՆՏՐԱՆԱՒՔ

ՅԾԶ. ԻՇԽԱՆ ԵՒ ԱՅՐԻ
(9 H)

Իշխան մի կայր՝ յոյժ չար եւ անիրաւ: Եւ այրի կին մի կայր 'ի նոյն քաղաքի. եւ իշխանն հարկ պահանջելով նեղէր զնա. եւ կինն աղօթելով ասէր, թէ Աստուած զինքն խաղաղութեամբ պահէ: Գնացին ասացին իշխանին, թէ քո չարիդ համար աղաւթք կու առնէ: Եկն ձեռնաւորն եւ ասէ. ես քեզ լաւ չեմ արարել. դու ինձ համար է՞ր կու աղաւթես: Նայ ասաց, թէ քո հայրն վատ մարդ էր. ես անիծեցի, նա մեռաւ. դու նստար 'ի նորա տեղն այլ խիստ չար. կու վախեմ. թէ մեռանիս, նա քո որդին այլ խիստ լինի չար:

ՅԾԷ. ԳԱՆԳԱՏ ԱՆԴԱՄՈՑ
(12 Հ)

Կամէին իշխանքն սպանանել զթագաւորն իւրեանց: Մին մարդ՝ նոցա առակաբան՝ ասաց, թէ աչքն գանկատէր 'ի փորոյն, թէ զինչ որ լաւ իրք կու տեսնում, կու ասէ, թէ բեր որ ուտեմ: Եւ ականջն [թէ] լսէր զլաւ իրաց համբաւ, ասէր՝ բեր որ ուտեմ եւ մարսեմ: Եւ քիթն եւ բերանն նոյնպէս: Եւ կամէին զնայ պատառել: Պատասխանի ետ սիրտն եւ ասէ, թէ նա ձեզ սպասաւորէ, նա կու չարչարի եւ զկերակուրն հալէ՝ եւ բաժանէ աչացն եւ ականջացն եւ այլոցն. ընդէ՞ր պատառէք զնա: Եւ նոքա ամօթով կացին եւ ոչ սպանին:

ՅԾԸ. ՇԱՔԱՐ ԵՂԷԳՆ ԵՒ ԱՒԶ
(13 Հ)

Շաքար եղեգն՝ թէ Ռ. գէղ ջուր աղբահամ լինի 'ի բոլորն, նա քաղցր կու փոխէ: Եւ օձն զամենայն քաղցր եւ բարի իրք յիւր վատ թոյնքն փոխէ:

Նշանակէ զչար մարդ եւ զբարի մարդ:

ՅԾԹ. ԵԶՆ ԵՒ ԷՇ
(13₂ Հ)

Մի' լծեր զեզն ընդ իշոյ՝ եզն որոճող եւ էշն ոչ:

Նշանակէ եզն զիմաստուն քահանայ յեկեղեցի եւ էշն զտգետն. մի տար զիմաս"տին կարգ տգիտին: Դարձեալ եզն է հոգին, որ է իմաստուն, եւ էշ մարմինն՝ ցանկասէր եւ զազրագործ:

ՅԿ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱԿՆ
(15Հ=S. Laz. Բ. Դ., էջ 234)

Քանզի ընթերցեալ լինի 'ի տիեզերակալ արքաէն Աղէկսանդրու, որ 'ի միում քաղաքի յոյժ պատուեալ եւ մեծարեալ եղեւ. եւ ընդ այլ բազում ընծայքն նուիրեցին նմա ակն մի պատուական. որոյ յատկութիւնն էր այս. զի ընդ կշռելն միտէր եւ հակէր զամենայն կշռորդս իւր. իսկ եթէ արկանէին 'ի վերայ հող կամ յարդ՝ կորուսանէր զամենայն զօրութիւն իւր: Իբրեւ ընդ հիաց"մն եղեալ թագաւորն հարցանէր, թէ զի՞նչ նշանակէ իրս այս, պատասխանեցին իմաստասէրքն եւ ասացին. ակնս այս նշանակէ զանձն արքայի. զի մինչեւ կեաս՝ զօրեղ եւ գեր 'ի վերոյ ես քան զամենեսեան. բայց 'ի ժամ մահուն զամենայն զօրութիւն եւ զմեծութիւն քո ծածկեսցէ հող եւ կորուսցէ:

ՅԿԱ. ՍԻՐԱՄԱՐԳ
(16Հ)

Դարձեալ անգոսանելի է աշխարհ, որպէս սիրամարգ հաւն. յորժամ տեսանէ զգեղեցկութիւնն իւրեանց թեւոց, զուարճանա 'ի յինքն. լարէ զագին, փրէ զթեւքն՝ փքացեալ շրջի տեղաց 'ի տեղ: Իսկ յորժամ հայի յոտսն եւ տեսանէ զտգեղութիւնն իւր, խոնարհեցուցանէ զագին եւ ժողովէ զթեւքն եւ կծկի եւ կորիգլուխ քայլէ:

Այսպէս մեղաւորք եւ ամբարիշտք, որ յղփացեալ են մարմնական ընչիւքս, ոչ նկատեն եւ ոչ խոնարհին, թէ ուստի ունին. այլ զպատճառ զանձինս եւ զիմաստութիւնս իւրեանց համարին. յաղագս այնորիկ աստ եւ անդ փքացեալ խրոխտալով շրջին ըստ նմա, [թէ] շուրջանակի ամբարիշտք շրջին, եւ յետոյ ամօթ կրէ յԱստուծոյ եւ 'ի մարդկանէ:

ՅԿԲ. ՓԱՌՔ ԱՇԽԱՐՀԻՍ Ի ԴԷՄՍ ԿՆՈՋ
(17Հ)

Որպէս ոմն զինաւոր յոյժ ջերմացեալ 'ի սէր եւ 'ի փառք աշխարհիս. եւ զցայգ եւ զցերեկ 'ի հնարս մտեալ, թէ որպէս կարասցէ հասանել 'ի ծայրսն մեծութեան. զոր երեւեալ նմա 'ի յանուրջս կին մի գեղեցիկ, հարցանէր ցնա եւ ասէր. ճանաչե՞ս զիս: Եւ փոքր ինչ յետո ցուցեալ կինն զինքն զարշ եւ աղտեղի. եւ էր այնպէս զազրագոյն. որ բնաւ ոչ էր տեսեալ նմա: Եւ ասէր ցզինու"րն. իմա. զի ես եմ աշխարհս եւ փառք աշխարհիս. որ յառաջն իբրեւ վայելուչ ձեւանամ, վերջքն այս եմ, զոր հաւաստի տեսանես:

Ապա որ կամիցի ճանաչել եւ անգոսնել զաշխարհս, հայեսցի 'ի վերջք կատարածի իւրոյ. վասն զի ոչ է պարտ մարդոյ երանել զկեանս իւր մինչեւ ցվախճանն, ասէ առակախօսն Սողոմոն:

ՅԿԳ. ԱՇԽԱՐՀՍ ԵՒ ԿՈՅՐՔ
(18Հ)

Ասեն դարձեալ, թէ թագաւոր ոմն եհարց առ անապատաւոր կրօնաւոր մի, թէ որպէ՞ս տեսանես զաշխարհս. պատասխանեալ ասէ. որպէս խաբեբա ոք, որ անցանէ առաջի կուրաց բազմաց եւ ձայնէ, թէ փութով առ իս եկէք եւ լուսաւորեսջիք: Եւ նոքա կոյրք 'ի ձայն նորա դիմեալք երթան փութապէս. ոմն ընդ քար անկաւ եւ ոմն 'ի գետ անկաւ եւ ոմն 'ի խորխորատ անկեալ սատակեցան. եւ 'ի լոյս նորա ոչ ոք եհաս 'ի նոցանէ:

Ս[ոյնպէ]ս սէր աշխարհիս զբազումս առ ինքն կոչէ՝ եւ հեշտութեամբ մարմնոյս կորուսանէ:

ՅԿԴ. ԲԱԲԵԼԱՑԻՈՑ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԾԵՐ
(22 Հ)

Բաբ"լացոց թագաւորն՝ բազմութեամբ զօրացն գայր հասանէր 'ի քաղաքն եւ տեսաւ ծեր մի. զի ամբրենիս տնկէր. եւ ասէ թագաւորն. որ ծեր, զայդ ընդէ՞ր տնկես. զի 'ի .Խ. տարին ապա պտղաբերի. եւ դու այսօր եւ վաղիւն մեռանիս: Եւ նա ասէ. թագաւոր, մին մարդ տնկեալ էր, ես վայելեցի. ես տնկեմ, գայ մին մարդ այլ վայելէ: Ասէ թագաւորն. տուք նմա .Ռ. դահեկան. զի բարի եւ խէրանդէճ մարդ է: Եւ նորա առեալ գոհացաւ զԱստուծոյ: Ասէ թագաւորն. ընդէ՞ր գոհանաս. ասէ՝ գոհանամ, որ ամէն մարդ 'ի .Խ. տարին վայելէ, ես այսօր վայելեցի: Ասէ թագաւորն. դարձեալ տուք նմա .Ռ. դահեկան: Եւ նա դարձեալ գոհացաւ: Ասէ թագաւորն. դարձեալ ընդէ՞ր գոհացար: Ասէ ծերն. գոհանամ զԱստուծոյ, որ ամէն տունկ 'ի տարին մին տայ պտուղ, իմ ծառս այս օր .Բ. անգամ ետ պտուղ: Եւ յոյժ հաճեցաւ թագաւորն 'ի բանս ծերոյն եւ գովեց զստէպ պատասխանատրութիւն նորին:

ՅԿԵ. ՍՈՂՈՄՈՆ ԵՒ ԹԵՇ
(23 Հ)

Ասեն յառակս, թէ Սողոմոն հիւանդացաւ՝ կենդանիքն ամէն 'ի տես եկին. թեշն չէրեկ. ասաց մեծ եմ քան զՍողոմոն: Յետո փոշիմանացաւ եւ գնաց. ասաց Սողոմոն, թէ դո՞ւ ասել ես, թէ ես լաւ եմ քան զնա: Ասէ՝ գիտէի, թէ դու իմաստուն ես. ապա զի՞նչ առնէի. մօտ 'ի մարին նստած էի, երբ խնդրակքն եկին:

ՅԿԶ. ՍԱՓԻՐԱ ԱԿՆ
(24 Հ)

ՕՐԻՆԱԿ ՎԱՍՆ Ա"Կ: Սափիրա ակն՝ հանց խասիաթ ունի. թէ զինքն ու զմորմն 'ի մին կճուճ դնես, յայնժամ սպան[ան]է զմորմն: Եւ թէ 'ի մեռած մարդոյ բերան դնես, ական զօրութիւն երթա: Եւ թէ առ պըլօր ակն դնես, այլ յիւր զօրութիւն գայ:

Սափիրայն նշանակէ զբանն 'ի բերանս վարդապետաց եւ մորմն զմեղքն 'ի մարդիկք: Ով որ ընդունի զբանն 'ի բերանոյ վարդապետին, նա մեղքն 'ի յինքն մեռանի: Եւ թէ վարդապետն մահու չափ մեղօք է, նա զօրութիւն չունի սափիրայն 'ի բերանն. ասեն ժողովուրդն, թէ դու յառաջ զքեզ սրբէ յամենայն մեղաց եւ ապա մեզ քարոզէ:

ՅԿԷ. ՊԼԱՒՐ ԱԿՆ
(25 Հ)

ՕՐԻՆԱԿ ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Պըլօր ակն՝ նշանակէ զսուրբ Աստուածածինն, որ սուրբ եւ սպիտակ եւ ցուրտ եւ թափանցիկ: Նշանակէ սպիտակն զկուսութիւն. եւ այն զի ցուրտ է՝ նշանակէ. զի յամենայն մեղաց ցուրտ էր. եւ թափանցիկ, որպէս ապակի, եւ առաւել պըլօրն: Թէ 'ի լուսամուտ պատուհանն ջամբ դնեն, նա զլոյս թափանցիկ անցուցանէ:

Նոյնպէս կոյսն Մարիամ մաքուր էր եւ յստակ եւ սուրբ. եկն լոյսն 'ի հօրէ եւ ինն ամիս բնակեցաւ յարգանդին եւ ծնաւ մարմնով. եւ անխախտելի մնաց կուսութիւնն, որպէս լոյսն ոչ բեկանէ զակն պլօր:

Եւ վարդապետն որ մեղօք է, նա աղաչէ զսուրբ Աստուածածինն. որպէս պլօրն սափիրաին տայ զօրութիւն, նոյնպէս Աստուածածինն բարեխօսէ եւ տացէ վարդապետին մաքրութիւն. որ բանն 'ի բերանոյն ազդէ յականջս ժողովրդոց, որ մեղքն մեռանի եւ մարդն լուսաւորի հոգով եւ մարմնով:

ՅԿԸ .Գ. ԽԱՍԻԱԹ ՊԼԱՒՐԻ
(26 Հ=S. Laz. Բ. Դ., էջք 231-232)

Ասեն իմաստունք, թէ պլօր ակն .Գ. խասիաթ ունի. առաջին զլոյսն թափանցուցանէ. երկրորդ՝ թէ կին մարդոյ կաթն չլինի, նա փշրեն եւ մեղրով տան, նա կաթն բխէ. երրորդ՝ թէ մարդն ծարաւ լինի, 'ի ներքոյ լեզուին դնէ, ծարաւն անցանի:

Պլօրն նշանակէ զքահանայն, որ ինքն մաքուր պիտի եւ սուրբ. որ այլոց լոյս տա. նախ ինքն զբանն Աստուծոյ սուրբ պահէ եւ առնէ եւ ապա այլոց քարոզէ: Եւ ժողովուրդն որպէս զաբեղն, որ լուսով վառչին: Եւ մեղրն բանն է, որ քարոզէ եւ ուտեն, որպէս զկաթն ժողովուրդն: Եւ մարդիկ որ ծարաւի են աշխարհիս ագահութեամբ, նոքա լսեն զբան քարոզին. եւ ծարաւ նոցա անցանի եւ գեղեցկանան ապաշխարութեամբ:

ՅԱՒԵԼԼԻ

ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆՏՐԱՆԱՒՔ ԵՒ ԼԻՈՎ, ԱՅԼ ԵՒ ՈՐԻՇ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԻԸԲ. ԷՋՄ. 86, ԺԹ 11ա-11բ.

Մեր մեղքն է արեր զագրաւն բազայ,
Ձկտուցն սրեր պաւղպատ լամաւխտայ.
'Ի բարձր թռեր, կու կանչէ ղայ ղայ.
Հայ ղաղա որ տեղ ուր հաւ կայ:

Յոր տեղ գոյնս գոյն հաւու փետուր կայ,
Ագռաւն ժողվեր ու հագեր կապայ.
Թեւն շարեր ո կանչէ ղայ ղայ.
[Հայ ղաղա որ տեղ որ հաւ կայ]:

Ագռաւն է հազեր աթլաս ու քիմխայ.
'Ի մեջքն է կապել ոսկի հայասայ,
'Ի վերէն քարշեր կանաչ լատիֆայ.
'Ի բարձր [թռեր ու կանչէ դայ դայ]

Ագռաւն արեր զանձեղն փարսանայ
'Ի մօտ 'ի յարծիւ ւի մաւտ 'ի բազայ,
Թէ ես եմ ձեր պարոն ու ծանր ամիրայ.
'Ի բարձր [թռեր ու կանչէ դայ դայ]:

Արծիւն զէն լսեց ւանգաւ 'ի դոռսայ.
'Ի յաւդից 'ի վայր քան զչարխ 'ի ներք գայ.
Գայ բռնէ զագռաւն ու կու տայ ջաղայ.
Վա՛յ վա՛յ [հազար] յագառաւուն վերայ:

ԿԸԲ. 9 G Ասաց առակաց, թէ աղուեսն տեսեալ ակնատ լարեալ վասն աղուեսու եւ 'ի վերայ երեսին պանիրի փշրանքն ցանեալ. գնաց առ գայլն եւ ասէ. քերի', պանրի հորմ' եմ գտեալ. ես կերայ եւ յագեցայ. երթանք ցուցանեմ. որ դու այլ ուտես. եւ եկեալ գալուն ընդ նմա ետես զակնատն եւ ոչ ծանեաւ. այլ զպանիրն ետես ցրքեալ 'ի վերայ երեսին եւ վազեալ յառաջ քան զաղուեսն. զի առցէ զպանիրն. [թերի] 'ի բաց թռեալ արտակս ակնատին. իսկ աղուեսն առեալ զպանիրն եկեր եւ սկսաւ գնալ: Ասէ գայլն. ով քեռի որդի, զիս անտէր կու թողուս եւ գնաս. ասէ աղուեսն. անտէր ես եմ, որ դարն 'ի դուրս կու գնամ, թէ չէ քեզի այս պահս .+. տէր կու գայ:

ՃՀԱա. 113 D Ճարտար իմաստասէրք՝ բնակեալ էին յամրոց մի անառիկ. լուաւ Աղէքսանդր թագաւորն եւ եկն 'ի վերայ նոցա բազում զօրօք 'ի սահմանս հնդկաց. ձայնեաց առ նոսա եւ ասէ. եկայք առ իս եւ ես տամ ձեզ զամենայն, զինչ պիտոյ է. եւ նոքա յղեցին առ նա եւ ասեն եթէ կարող ես տալ մեզ անմահութիւն, զամք ըստ հրամանաց քոց: Զարմացաւ Ասէքսանդր եւ ասէ. ծանր է խնդիրքդ. ոչ կարեմ տալ. զի ես ոչ ունիմ, ձեզ ո՞ւստի տամ. ասացին իմաստունքն. երբ գիտես՝ մահկանացու ես, ընդ է՞ր աշխարհս ընդվայր եւ անօգուտ (այսպ.) եւ նեղես զաշխարհս ամենայն. եւ ամօթով դարձաւ յետս:
Ամենայն մարդ, որ ջանայ սիրել զգանձս եւ ոչ բաժանէ աղքատաց, ամօթով լինի յԱստուծոյ:

ՃՀԸա. 12 ԲԵՐԼ. 95, էջք 215-216. Այր ոմն էր յո՛յժ ագահ եւ արծաթասէր եւ անյագ. եւ ժողովեալ բազում ինչս եւ ըստացուածս եւ ոչ երբէք տայր ողորմութիւնն աղքատաց եւ կարօտելոց. դէպ եղեւ նմայ յանկարծ[ա]կի մեռանիլ. իսկ բարեմկամքն եւ ազ[գա]կանք նորա պատառեցին զյորովայն նորա. զի տեսցեն, թէ զինչ իցէ պատճառն յանկարծակի մահուան նորա, եւ տեսին. զի սիրտն նորա (այսպէս) ոչ ունէր 'ի տեղի իւր. եւ ապայ գնացին 'ի սենեակն բացին ըզսընտուկն գանձին եւ գտին զսիրտն մարդոյն 'ի մէջ սընտուկին 'ի ձեռն սայտայնայ[ի], որ 'ի կերպարանս վիշապի եղեալ նստէր եւ 'ի զանազան մասունս պատառեալ զնայ. եւ ասէ ցայնոսիկ, որք հայէին. այս ոսկի եւ արծաթ է կին սրրտին, որ վայճառեաց ինձ բարեկամն ձեր. իրաւամ[բ]ք իմ սեփայկանէ եւ զոր ինչ կամիմն, արարից զնայ:

ՄՀՁբ. 3 ԲԵՐԼ. 95, էջք 146-147. Ի (այսպէս) ետես ոմն հայր տեսիլ .Ե. մարդ անզգամ եւ սոված: Ա. ետես զոմն նստեալ 'ի վերայ բարձր աշտարակի եւ բացեալ զբերանն ծծէր զհողմն. եւ յորժամ ոչ յագէր, մրուհերովն հարկանէր զհողմն. զի մտցէ 'ի բերանն իւր. եւ այնու եւս ոչ յագէր: Բ. ետես զոմն. զի նստե"լ 'ի գետեզերն լնոյր զբերանն իւր աւազով եւ ուտէր՝ եւ ոչ յագենայր: Գ. ետես զոմն նստեալ 'ի ժահահոտ գբի. եւ հոտոտէր եւ ծրծէր զժահահոտութիւնն՝ եւ ոչ յագենայր: Դ. ետես զոմն. զի նստեալ է 'ի վերայ

հնոցի մի եւ ուտէր զբոց հնոցին. եւ ոչ յագէր: Եւ ետես զոմն. զի յոյժ էր սովեալ, ուտէր զմարմին իւր եւ ոչ յագենայր:

Այսպէս եւ հոգեւորապէս. զի աշխարհս այս լցեալ է հինգ անզգամ եւ յիմար մարդկամբք: Ա. այն որ բարձր աշտարակ է նստեալ, ցուցանէ զամբարտաւանսն, որ ջանիւ կամին ժողովել զփառս աշխարհիս՝ եւ ոչ յագին: Բ. որ ուտէր զաւազն, ցուցանէ զագահսն, որ թէպէտ ջանայ յագենալ արծաթով, կաշառօք եւ տոկոսիւք, այլ ոչ կարէ: Գ. որ նստեալ էր 'ի վերայ ժահահոտ գբին, ցուցանէ զբղջախոհսն, որք ժահահոտ եւ գէջ ցանկութեամբն ոչ յագենան, որ բուրէ 'ի գբոյ դժոխոցն: Դ. որ նստեալ էր 'ի վերայ հնոցին, ցուցանէ զբարկացողսն. որ հրով բարկութեամբ լնուն զհոգիս իւրեանց եւ ոչ յագին եւ յայլս թափեն զբարկութիւնս իւրեանց: Ե. որ ուտէր զմարմինս իւր, ցուցանէ զնախանձոտսն, որք տեսանելով զայլոց բարիս մաշին յանձինս իւրեանց եւ ուտեն զմարմինս իւրեանց:

ՄՀԹա. S. Laz. Բ.Գ, էջ 263. Քարժանկն սա-տղնէն ձագերուն խրատ կու տայր. 'ի ճանապարհն 'ի ներս ծուռ մի գնայք. որ կենդանիք զձեզ ոչ նախատեն: Ասեն. երբ դու ծուռ եւ մուռ կու գնաս, մեք շիտակ գնալն ո՞ւստի ուսանիմք:

Ժ. ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱՌԱԿՔ ՈՒՍՏԵՔ ՈՒՍՏԵՔ

ՅԿԹ. ԵՐԿՈՒ ՄՇԱԿՔ
(Կ, էջ 22ա)

Արդ՝ երկու էին մշակք 'ի միում քաղաքի. մինն սերմանեաց եւ հնձեաց սակաւ եւ անսուրբ: Իսկ միւսն հեղգացեալ բնաւ ոչ սերմանեաց եւ ոչ հնձեաց. եւ եկն սով մեծ 'ի վերայ նոցա. արդ ո՞ որ 'ի նոցանէ գտանէ կերակուր. ասէ եղբայրն. որ գործեաց զսակաւ սերմանս: Ասէ ծերն. այսպէս եւ մեք սերմանեսցուք սակաւ, թէպէտ եւ ոչ իցէ սուրբ. զի մի սով սատակեսցէ զմեզ:

ՅՀ. ՀԱՅ ԼՈՂՆՈՐԴ
(Հ, էջք ԻԸ. 9ա-բ)

Ասաց Յակոբ վարդապետն, թէ զմին հայ տղայ լօղնորդ գովեցին առ 'ի հռոմոց թագաւորին 'ի Տրապիզոն: Ասաց թագաւորն. թէ դայ մինչեւ յԸստըմբօլ լօղա, զիմ դուստ[ր]ն նմա տամ: Յանձն էառ եւ լօղաց .Ռ. միլ .Խ. աւուր ճանապարհ. գիշերն հետ ֆանառի լուսոյն գնայր. գնաց լօղալով մինչեւ 'ի Ըստնբօլ եւ դարձաւ: Նենգաւոր թագաւորն պատուէր տուե[լ] էր. թէ դառնա, նա զնաւն 'ի բալաղօ չնստուք. որ մոլորի եւ մեռանի. եւ սոյնպէս արարեալ կորուսին զնա: Եւ նաւորդքն երգս 'ի բերան առեալ ողբան զնա. արմէ՛ն արմէ՛ն գոչեն. վայ եւ եղուկ ասեն:

ՅՀԱ. ԼՈՒՍԻՆ ԵՒ ԱՐԵԳԱԿՆ
(Գ)

Լուսինն ասաց առ արեգակն, թէ քո որդին եմ ես. ի՞նչ կլինի, որ մին հանդերձ կտրես վասն իմ: Պատասխանեաց արեգակն, թէ ո՞ր հասակի շոր կտրեմ վասն քո, զի օր մի ոչ մնաս 'ի միոյ չափի:

ՅՀԲ. ՈՍԿԵԳՐԵԱԼ ՍԻՐՏ
(ԲԵՐԼ. 90, էջ 145)

[Մ]ի ոմն 'ի մարտիրոսաց չարչարէին վասն անուանն Քրիստոսի. եւ առաւել տայր զանունն

Քրիստոսի. եւ թագաւորն ասէ եւ հարցանէ զնա. զիա՞րդ որ չափ առաւել տանջիս, առաւել յիշես զանունն Քրիստոսի. եւ նա ասէ. զի գրեալ է անունն Աստուծոյ 'ի սիրտս մեր, ոչ կարեմք ուրանալ. եւ նա փութով ետ սպանանել եւ եհան զսիրտն՝ եւ ճեղքեաց. եւ ետես, զի ամենայն կողմանց սրտին գրեալ կայր անունն Քրիստոսի ոսկի գրով. եւ Քրիստոս եօթն անգամ եհեղ զարիւնն իւր. զի .Է. խնդրուածս այս գրեսցի արեամբն Քրիստոսի 'ի սիրտս մեր .Է. անգամ եհեղ զարիւնն, այսինքն 'ի թլփատութիւնքն, 'ի քրտունքն եւ .Բ. ձե"ռցն եւ .Բ. ոտիցն եւ 'ի կողէն:

ՅՀԳ. ԻՇԽԱՆ ԵՒ ՆԱԽԱԾԱԳ ՇՈՂ
(ԲԵՐԼ. 90, էջ 149)

[Թ]ագաւոր ոմն մեռեալ էր. եւ իշխանքն կամէին ինքնակամ թագաւորել. եւ եդին ուխտ 'ի մէջ իւրեանց, թէ ո՞վ այգուէ յառաջ տեսանէ զլոյս արեգականն, նա լինի թագաւոր: Եւ պատրաստեցան ամենեքեան ընդ առաւօտն տեսանել զշողն. եւ հայէին ամենայն իշխանքն ընդ արեւելս. բայց մի ոմն 'ի նոցանէ ճարտար՝ հայէր 'ի գլուխ լերին մի բարձր, որ էր դէպ 'ի յարեւմուտս. նա նախավաղ ետես քան զամենայն զլոյս արեւուն. աղաղակեաց եւ ասէ. ահա տեսի, տեսի ես. տեսէք եւ դուք ճաճանչ արեգականն. վասն որոյ նստաւ յաթոռ թագաւորութեան:

Այսպէս սուրբ Աստուածածինն նման է բարձու լերան. եւ 'ի նմա նախավաղ ծագեաց արեգակն արդարութեան եւ 'ի լոյս աստուածային եւ 'ի ճառագայթ քրիստոնէութեան 'ի նմա ազդեաց. առաջին քրիստոնեայ նա է. զի մինչ դեռ յարգանտին Քրիստոս հաւատաց սուրբ կոյսն, թէ սա է Որդին Աստուծոյ, զոր յղացեալս եմ յորովայնի իմում: Վասն այսորիկ նման է լերան սուրբ Աստուածածինն թափօրայ, որ թարքմանի լոյս. որովհետեւ այսպիսի ապաւէն կայ մեր, պարտիմք հայել 'ի լեառնս եւ տեսանել զլոյս երկնային մեք հաւատացեալքս 'ի նա. բայց անհաւատքն, որ թիկունս դարձուցանեն 'ի սրբոյ կուսէն եւ հային յարեւելս, ուր արեգակն ելանէ, այսինքն 'ի մեծութիւն եւ 'ի պայծառութիւն աշխարհիս, զլոյս ճշմարիտ հաւատոյն ոչ տեսանեն, չհասանեն յերկնից արքայութեանն:

ՅՀԴ. ՀԱԼԱԼ ԿԻՆ ԵՒ ՀԱՐԱՄ ԿԻՆ
(ԲԵՐԼ. 90, էջ 159)

Ի[՞] ասեն, թէ այր ոմն վաճառական հալալ կին ունէր եւ հարամ կին. եւ յորժամ կամէր երթալ 'ի վաճառականութիւն, գնաց առ հարամ կինն, եհարց, թէ քեզ ի՞նչ բերեմ. ասաց, թէ շատ իրք բեր, զայս իրս ու զայս. գնաց մօտ 'ի հալալ կինն, թէ քեզ ի՞նչ բերեմ. ասաց, թէ մին դեկանի խելք գնէ ու բեր. գնաց այրն եւ ապա 'ի միտ էած զպատուեր հալալ կնոջն. եհարց յայլ ոք, թէ կինն իմ ասաց, թէ ինձ դեկանի մի խելք բեր. ասէ այրն. հալալ կին ունի՞ս. ասաց՝ ունիմ. ասաց՝ յորժամ մօտենաս 'ի քաղաքն քո, թող զբեռինս քո եւ 'ի կերպ աղքատի գնա՛ մօտ 'ի հարամ կինն քո եւ ասա՛, թէ զիս ալափեցին ճանապարհին: Եւ արար այրն այնպէս. եւ յորժամ ետես հարամ կինն զնա, հալածեաց եւ 'ի տանէն 'ի դուրս արար. գնաց մօտ 'ի հալալ կինն. եւ նա տեսեալ ասէ. մի հոգալ. թող դու բարով եկիր. եւ զգեցոյց զայրն. եւ նա 'ի միտ էած, թէ այս է խելքն՝ զոր փորձեցի զկանանց հաւատս. ապա գնաց 'ի կարուանն եւ զամենայն բեռինսն անցոյց ընդ դուռն հարամ կնոջն եւ եբեր 'ի տուն հալալ կնոջն. վասն այն ասէ Սիրաք, թէ որպէս արեգակն բարձրանալով զերկիր զարդարէ, նոյնպէս կին բարի զարդարիչ է տանն իւրում:

ՅՀԵ. ԳՈՂ ԵՒ ՀԱՅԵԼԻ
(ԲԵՐԼ. 90, էջք 165-166)

[Ի]մաստունքն ասեն, թէ գող ոմն առնէր բազում գողութիւն. եւ ոչ ոք կարէր տեսանել զնա. զի ունէր առ ինքն ակն մի, որ աներեւոյթ առնէր զնա. եւ 'ի կուղպակ մի բազում անգամ մտանէր եւ գողանայր բազում ինչս եւ գանձս. եւ տեսանէին, որ գանձն պակասէր, բայց զգողն ոչ տեսանէին: Վասն այն հնար իմացան եւ արարին հայելի մի եւ եդին 'ի մօտն գանձն. եւ դարձեալ յորժամ եկն գողն, տեսեալ զպատկերս նորա 'ի հայելին եւ ձգեալ զձեռն ըմբռնեցին զնա. եւ առին զամենայն գանձն, զոր գողացեալ

էր, եւ գողն սպանին:

Արդ գողն ցուցանէ զսատանայ եւ ակն, որ աներեւոյթ առնէր զնա, է հրեշտակական բնութիւնն, որ բոլորովին անմարմին է. զի թէպէտ զրկեցաւ 'ի շնորհացն, այլ ունի զբնութիւն. զի անմարմին է. վասն այն ոչ երեւի եւ ոչ կարեն ճանաչել զնա եւ ոչ զիաբէութիւն նորա. եւ կուղպակ աշխարհս է եւ զանձն հոգիք եւ տէր զանձին Աստուած եւ յիւր զանձատունն ոչ այլ ինչ ունի պատուական քան զհոգի մարդոյն. յամենայն օր գայր սատանայ եւ գողանայր զհոգիս նահապետաց եւ այլոց եւ տանէր 'ի դժոխս. եւ ոչ տեսանէին զնա. այլ զանձն Աստուծոյ օր ըստ օրէ պակասէր. եւ հնարք արար Աստուած. զի կազմեաց զհայելի մի յապակոյ եւ յարճճոյ, այս ինքն յաստուածային բնութենէն, որ նման է յապակոյ յստակ. եւ 'ի մարդկային բն"ւէն, որ նման էր արճճի. ուստի կատարեցաւ հայելիս, որ է Յիսուս Քրիստոս Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ. եւ հայելիս այս կազմեցաւ յարգանդի կուսին ձեռամբ սուրբ հոգւոյն. եւ յորժամ հայելիս այս եդաւ աշխարհս եւ սկսաւ Քրիստոս քարոզել եւ յայտնել զամենայն մեղս եւ զառաքինութիւնս, յայտնեցաւ նենգութիւն սատանայի, որպէս ասէ Յոհաննէս 'ի կաթողիկէն. որ առնէ զմեղս, ծառայէ մեղաց եւ հայր նորա սատանայ է. զի 'ի սկզբանէ սատանայ մեղանչեցաւ. վասն այնորիկ յայտնեցաւ Որդին Աստուծոյ. զի լուծցէ զգործս սատանայի. եւ յորժամ Քրիստոս տարածեաց զձեռս իւր 'ի վերա խաչին, յայնժամ ըմբռնեցաւ սատանայ, որ էր դժոխային, եւ արտաքսեցաւ [ի] կուղպայէ աշխարհիս, որպէս ասէր Քրիստոս՝ դատաստան է. զի իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս. յորժամ ժողովս սրբոցն գողացաւ սատանայ, Քրիստոս գտաւ 'ի դժոխս եւ եհան զնոսա անտի. եւ գողն սատանայ կապեաց 'ի բանդս դժոխոցն. զի կրեսցէ յաւիտենական տանջանս. եւ փրկեցաւ ազգ մարդկան ձեռամբն Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

ՅՀԶ. ԾԱՌԱՅՔ Ի ՊԱՀՔ
(ԲԵՐԼ. 90, էջք 167-168)

Եւ օրինակ բերեն, թէ էր ոմն տանուտէր, որ ունէր բազում ընտանիք եւ ծառայք եւ սպասաւորք. եւ հրամայեաց տանուտէրն ծառայից իւրոց. զի ըստ պատշաճի ծառայեսցեն նմա. նոքա պատասխանի ետուն. թէ զմեզ 'ի պահք պահես, լաւ ծառայեմք քեզ. ապա թէ ուտեցնես եւ գիրացնես, սպանցուք զորդիս քո եւ զքեզ. որ քան ինչ ժամանակ որք պահք էին, ամենեքեան բարւոք ծառայեցին տեառն իւրեանց, բայց յետոյ ուտեցոյց զնոսա յագ. յայնժամ սպանին զորդիս նորա եւ զինքն եւս:

Տանուտէր մարդս. ծառայք եւ ընտանիք նորա ազգի ազգի անդամք, զոր ունի. որ չափ 'ի պահք են, բարւոք զգործս իւրեանց կրեն. քանզի յորժամ սիրտքն 'ի պահք է 'ի չար խորհրդոց եւ 'ի հաւանելոյ մեղացն եւ աչքն 'ի պահք յարատ հայելոյ եւ ականջն 'ի չար լսելոյ եւ բերանն յորկրամոլութենէ եւ 'ի յարբեցութենէ, յայնժամ բարւոք ծառայէն հոգւոյն. զի սիրտն խորհի զամենայն բարիս եւ խոկայ զչաչարանսն Քրիստոսի, բերանն բազում աղօթէ, աչքն բազում պատարագ տեսանէ, ականջն բազում քարոզութիւն լսէ, ձեռքն բազում ողորմութիւն առնէ. այլ յորժամ կտրեն զկտրեն զպահքն, սիրտն յագենայ չար խորհրդով, բերանն յարբեցութեամբն եւ աչքն յարատ հայելով, նա եւ այլ անդամքն յայնժամ սպանանեն զորդիս տեառն իւրեանց, այս ինքն զանազան առաքինութիւնս, որ է ծնունդ հոգւոյն. այլ եւ յետոյ զհոգին եւս սպանանեն մեղօք. այսպէս Ադամ եւ Եւայ որ չափ 'ի պահք էին 'ի դրախտին, բարւոք կատարէին զգործս իւրեանց եւ 'ի խոկումն էին զԱստուծոյ եւ հրեշտակաց. այլ յորժամ կերան 'ի պտղոյն եւ կտրեցին զպահքն, սպանին զորդիս իւրեանց, այս ինքն զմեզ, այլ եւ ինքեանս եւս սպանին հոգւով:

ՅՀԷ. ԼԵԶՈՒԱՆԻ ԿԻՆ
(5 ԲԵՐԼ. 95)

Եւ 'ի գեղի միում 'ի վերայ ճանապարհին կայր .Բ. վէմ բարձրայգոյն. հանդէմպ միմիեանց ելանէին հանապազ. եւ այն գիւղ կայր .Բ. անըզգամ լեզուանի կին. հակառակ միմեանց ելանէին հանապազօր մի 'ի վերայ վիմաց եւ կռուէին մինչեւ երեկոյ. եւ ասէին միմեանց բազում զազիր բանս եւ խայտառակութիւն. եւ անըզգամ կնոջ մէկին հարսն ունէր. եւ ասէ ընդ ըսկեսուրն, թէ այսօր ես երթամ.

քո տեղն կրռվիմ հետ կընկան. եւ ասէ ըսկեսուրն. ոչ կարես կրռուել. նա յաղթէ զքեզ. եւ ասէ հարսն. ես քան զ[ք]եզ լաւ վարպետ եմ եւ յաղթեմ զնայ. եւ ասէ սկեսուրն՝ երթ եւ գնացեալ ել 'ի վերայ վիմին. եւ եկն կինն անըզգամ ելեալ 'ի միւսն վէմին (այսպէս). եւ եկն կին անըզգամ ելեալ 'ի միւս վէմն. ասաց 'ի վերայ հարսին աշխարհիս բազում խախկութիւն եւ հարսն բնաւ չի խօսեցաւ. այնչափ վայրապար հաչեաց. սրտայբեկ եղեալ նախանձու անկեալ 'ի վայր սատակեաց: Այս է հրաման աւետարանի, որ ասէ. յաղթէ բարեաւ զչարն կամ մի կալ հակառակ չարի:

ՅՀԸ. ՀԱՅՐ ՈՐԴԻ
(22 ԲԵՐԼ. 95, էջք 223-223բ)

Այր մի կին էած որդոյ իւր. եւ որդին ամուսնացաւ ընդ կինն. երբ որ միաւորեցաւ, հիացաւ ընդ գործ ամուսնութեան եւ յաւուր միում ուրախացաւ եւ ըսկսաւ հօրն խրատ մատուցանել վասն գործոյ ամուսնութեան. եւ հայրն ասէ. ով որդեակ, ես գործով ամուսնութեան ծնայ զքեզ. նայ եւ սրբութեամբ գործէ ամուսնութիւն. եւ այտ չէ կարիք. մի խորհուրդ է այս եւ էշն, որ խղթեցաւ եւ թրքեցաւ:

ՅՀԹ. ՊԱՐՈՆ ԲՈՒՐԴԷԼ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏ
(7 S. Laz. Բ. Դ)

Վարդապետ մի գովեցին մօտ պարոն Բուրթելն, թէ յոյժ համբեր է. ասէ՝ գնացէք եւ բերէք. որ փորձեմ: Երբ 'ի դուռն երեկ, տեսաւ զնա, ասէ՝ երթ 'ի բաց, յիմար եւ շեթ. եւ նա լռութեամբ 'ի բաց գնաց: Դարձեալ ասէ. վարդապետ, եկ. վարդապետ եկ. եւ դարձեալ առ իշխանն՝ ասէ. վարդապետ, ուստի՞ գիտէիր համբերել. ասէ՝ պարոն, զայդ 'ի շանէն եմ ուսել. դեռ 'ի գրոց շատ բան գիտեմ: Եւ պարոն յոյժ սիրեաց զնա՛. փառք Աստուծոյ. ամէն:

ՅՁ. ՊԱՐՈՆ ԲՈՒՐԴԷԼ ԵՒ ՔԱՀԱՆԱՅ
(110 ՄԽ. Ի ՎԱ 31, էջ 151)

Պարոն Բուրդէլն յաւուր միում գնայր զօրօք 'ի ճանապարհ. եւ քահանայ մի հանդիպեցաւ 'ի ճանապարհին: Իջեալ 'ի ձիոյն զօրօքն հանդերձ եւ համբուրեցին զաջ քահանային. եւ նայիպն Աշիանախ անուն տրտնջեաց պարոնին. եւ պարոնն ծածուկ պատուիրեաց. զի մի՛ կնքեսցեն եւ թաղեսցեն զընտանիս նայիպին. մեռաւ որդին եւ ո՛չ թաղէին. եկն առ պարոնն եւ ասէ, թէ քահանայքն զիմ որդին չեն թաղեր. եւ նա ասէ. երթիցուք՝ ես եւ դու թաղեսցուք: Ասէ, թէ այդ անհնարին է: Դարձեալ ասէ. վասն է՞ր այն օրն տրտնջեցեր, երբ որ առանց քահանայի չեմք կարեր լինել: Վասն այսորիկ պատուել պարտէ զքահանայն ընդ Աստուած եւ ընդ մարդ, թէ մեծ եւ թէ փոքր, թէ քահանայ եւ թէ վարդապետ:

Փառք Աստուծոյ եւ Երրորդութեան:

Յառաջին ամի ամենայն ռուսաց Կայսեր Նիկողայոսի Երկրորդի 'ի հայրապետութեան ամենայն հայոց կաթողիկոսի Մկրտչի Առաջնոյ, որ Հայրիկ բարւոք ասի, յաւուրսն յորս 'ի մայրաքաղաքիս հիւրընկալիւր հովիւ սրբազնագոյն հայկազեան ազգին, 'ի թուականութեան հայոց .ՌՅԽԴ. յամսեան մարերի յանգ հանաւ տպեցումն տառիցս, որ է մասն երկրորդ, առատ ծախիւք Արեւելեան լեզուաց Բաժնի Ս. Պետերբուրգի Համալսարանի Կայսերականին եւ ջանիւք սպասաւորիս հայագիտութեան Ն. Մառի, որ եւ աղաչեմ զհանդիպողսդ տառիցս. չարեաւ մի՛ յիշէք զիս եւ ակամայ սխալանացս անմեղադիր լերուք: